



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնապրված է «Մտեղծագործական համայնքեր ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնապրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

685

82
F-60

2011



2.00\$

4

82

ԱԿ

Բ-60

ՔՐԻՍՏՈՆՈՒԹՅ

Ա 16

ՔՐԻՍՏՈՆԵՒԹՅ

ՃԱՐԱՊԱԼԻԹՈՒԹՅԱՅ,

ԱՅ ԱՇԽԱՏՀԵՍ

ՀԱՆԴԵՐՁԵԱԾ

ԵՐԵՎԱՆ ՀԵՂԻԳ ԸՐԱՎԵՐԱ

1

Հ

ՆՈՐ ԵՕՐՔ

2

Ե ՏՊԱՐԱՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ՏԵՏՐԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1865

30506-4.2

(1791
46) ✓

13406-58







ՅՈՀԱՆՆԵՍ ՊՐԵՏԵՐԻՆ ՎԱՐԴՐ

Յօհաննես Պլընիան առ դրքիւ հեղինակը խիստ նշանաւոր անձանց շատերուն պէս ստորին աստիճանի նախնիքներէ առաջ եկած էր : Եթ հայրը հասարակ թիթեղնադործ մըն էր , որ կը բնակէր Եսդղից մէջ Գիտփօրտ քաղաքին մտեւ ըը : Խայց և այնպէս բարի անունի և աղեկ մնաց տէր մարդ էր . ինչու որ թէպէտե իր զաւակը իրեն նուաստ արհեստին հետեցընելու միաբ ըրաւ , տակոյն ջնաց որ կարդալու և դրելու մէջ ալ վարժուի տղան : Ասիէ զատ հաւանական կը թուի ևս որ Պլընիանին հայրը աշխատած է կանուխ տպաւորել անոր միաբը քրիստոնէութեան սկզբունքները + ապա թէ ոչ երբոր իր տղայութեան հասակին երգում ու հայհոյութիւն ընելու կողմանէ իր լնկեցներէն աւելի յառաջադէմ եղաւ , ան նշանաւոր երանցնեն ու ան զուգում գարձնող զացումները պիտի չպատահէին իրեն՝ որոնք որ ինը կը պատմէ : “ Ըատ անդամ ” (կ'ըսէ ինք) մէկ երկու օր մեղքի մէջ անցընելս եւու իմ անկողինիս մէջ քնացած առենս մեծապէս կը չարչարուեի դեերու ու չար հոգիներու վախէն՝ որոնք կը կարծէի թէ անդադար կ'աշխատէին զիս իրենց հետ առնել տանելու ” : Այսպէս կը ստորագրէ ևս իրեն արթնութեան առենը մասնութիւններուն մէկ քա-

Նիները : “Երբոք ես ինը կամ տասը տարեկան աղել մըն էի՛ ունայնասէր ընկերներոււ հետ իմ տեսակ խաղեա րուս ու տղայական ունայնութիւններուս մէջ շատ անդամ՝ կը նուաճէի՛ ու մորովս կը տառապէի , և սակայն չէի կրնար իմ մելքերս ձգել” :

Վհա՛ ասիկայ պատուական օրինակ մըն է ամեն քրիստոնեայ ծնողբներուն , որչափ ստորին որ ըլլաց իրենց աստիճանը : “Ծնողբներ՝ կանուխս սորմեցուցէք ձեր զաւկըններուն կարդալ ու զրել , ու կանուխս վարժեցէք զանոնք քրիստոնէութեան մէջ . քանզի չէք զիտեր թէ Աստուած որչափ բարձրացընել կ'ուզէ զանոնք իրենց մեծնալուն . ոչ աւ զիտէք թէ սցագէս ընելովիսիդ որչափ օգտակար ըլլալու կը պատրաստէք զանոնք” :

Պլնիան քանի որ կը մեծնար այրութեան հասակին կը հասնէր , աւելօք կը խստանար մեղաց մէջ . և մանաւանդ ինքնինքը տուած էր ստութեան՝ անէծք կարդալու՝ երդում ընելու և Աստուծոյ անունին հայհոյելու մելութիւններուն : Բայց և այնպէս իր խղճնանքը միշտ քնացած չէր : Ըստ անդամ իր երազին մէջ կը անմնէր որ երկինքը բռնկեր է , ու հաստատութիւնը ահարկու որոտումներու ձայնով կը պատռի ու կը հայթի : Երբեմն ներկնաքը զուարձալի անդ մը կը կարծէ՞ ուր որ հեշտութեան ու զուարձութեան մէջ կ'ուրախանայ , ու յետոյ բռնէ իսկ աս երեւակայական խնջյքին մէջ կը թուելո իրեն թէ սոսկալի երկրաշարժութիւն մը կը պատռէր կը բաժնէր երկիրս , ուրիշ գուրս կ'ելքին բոցեր՝ ու սարսափելի կերպով ձիչ բարձող և անիծարանութիւն ընող մարդկացին կերպարանքներ , որոնք իր ահարեկեալ զգայարանքներուն առջևը ընդհանուր դատաստանին օրինակը կը ներկայացընէին :

Եր կենացը աս մասին մէջ նաև քանի մը անդամ հրաշալի կերպով մահուանէ աղասեցաւ , որ յետոյ ան զիպուածները իբրև ողղոմութեամիւ խառնուած պատիժ կը սեսպէր :

Վագամը մը Գլէտիօրուքաղաքին մասը Օյս գետին մէջ ինչ կաւ նաւակէ մը , ու մազ մասց որ պիտի խեղղուէր : Ուշը անգամ մը ծովը կը խեղղուէր : Ասկէ ետև օր մը ճամբան իր առջևէն իժ մը կ'անցնէր . ինք դաւազանով զարկաւ անոր , յետոյ գաւաղանովն ստիպէց որ բերանը բանայ , ու իր մասներով ը բռնեց ու դուրս քաշեց լեզուն՝ որն որ օձին խայթոցն ըլլալ կարծեց : “ Աս դործողութիւնով (կ'ըսէ ինք) թէ որ Եստուած ինծի չողորմէր , ես զիս իմ՝ յանդղնութիւնովն իմ՝ վախճանիս պիտի հասցընէր : Անկ ուրիշ նշանաւոր դէպքէ մը ազատեցաւ իր 18 տարեկան հասակին մէջ : Են ատենը Վնդղիոյ մէջ քաշարկան պատերազմ կար , ու Գլընխան զինուորներուն մէկ կարդին մէջ գրուած էր : Երբոր զինքը Լայսէսթրը պաշարմանը պիտի խրկէին՝ իր ընկերներուն մէկը ուղեց որ իր տեղը երթայ : Գլընխան հաճնեցաւ իր տեղը անոր հետ փուխել , ու աս կամաւորապէս անոր տեղն անցնողը օր մը պաշարման մէջ դիշերապահ ըլլալով հրացանով իր գլխէն դարնուեցաւ ու մեռաւ :

Աս դիպուածիս վրայ շատ չանցած Գլընխան ամնւանացաւ կին մը առաւ , որուն խոհեմ և բարեպաշտական խօսուակցութիւնները աղջու ներգործութիւն մը ունեցան իր վարքին վրայ : Տեսէք՝ որչափ աղջէկ բան է որ կանսցը կրթուած ըլլան : Վնաց որ ինք տուն տեղ ըլլալու համար բան մը չպատրաստած կամ մինչեւ անդամ անձնաւ կան պիտոյքի վերաբերեալ բան մը չունեցած ամուսնացաւ : Երբոր իր կինն ու ինք մէկտեղ եկան՝ կարասիքի վերաբերեալ պնակ մը կամ դրգալ մը չունէին (կ'ըսէ ինք) : Բայց արհեստով թիթեղնագործ ըլլալով , կը կարծուի թէ բոլոր իրեն հարկաւոր եղած աս կերպ կարասիքները շուտով շիտկած պիտի ըլլայ : Իր կնոջը բերած ըոլըր օժիտը կը բաղկանար միայն երկու հատ փորսիկ՝ Քրիստոնէական դրերէ : Բայց ասոնք հազարաւոր

առելիներէն աւելի մեծադոյն օքչնութիւն մը եղան Պլընիա-
նին . ինչու որ իր կենք զինքը համազելով անոնք կարդա-
լու , ու յաճախ խօսելով անոր հետ իր հօրը բարեպաշտու-
թեանը վրայ որ աստուածակը մարդ մըն էր , անոր միտքը
պառկեցուց անխափան եկեղեցի երթաւ , ու հետո չետքեաէ իր
մոլեկան ունակութիւնները ձգեւ :

Աս իր բարեկարդութեանը օգտակար եղաւ ևս ան յան-
դիմանութիւնը՝ որն որ ինք աս աստեններս մէկ խիստ վատ-
անուն կնիկէ մը ընդունեց : “ Անգամ ” մը երբոր դրա-
ցուց մը խանութիւնած անէջք և հայհոյութիւն կ'ընէի ,
Ը'ըսէ ինք ,) տանը կնիկը լսեց իմ՝ խօսքերս . և թէսպէս
ինք խիստ անսուակ և ամբարիշա թշուառական մըն էր ,
ըստ ինծի թէէ Քու ըրած խօսքերդ լսելով կը սարսափիմ .
դուն ամենաշաք անբարիշտ մէկն ես քու ըրած հայհոյու-
թեանդ համար՝ որ բնաւ կենացս մէջ ասոր նմանը լսած
չէի , և այդպէս ընկերութքարարին բոլոր օրատանիները պի-
տի դիմէ համաս թէ որ քեզի հետ բնկերութիւնը ընմն ” :
Աս կնիսանը յանդիմանութիւնը աղէկ անձէ մը տրուած
յանդիմանութիւնէ աւելի ազդեց Պլընիանին : Անիկայ
լսեցուց զինքը և ամշնուց : “ Ուսափ (Ը'ըսէ ինք) երբոր
ան տեղը զլուխս կախած կայններ էի , իմ՝ բոլոր սրատվն
կ'ըսէի , Խըանի թէէ հիմա պատրիկ տղեկ մը ըլլացի , որպէս
զի իմ՝ հայրս ինծի սորմիցընէր , այսպիսի չար խօսքեց չխօ-
սիլ ” :

Աս դիմուածիս վրայ շատ չանցած աղքատ մարդու մը
հետ ընկերութիւն ընել սկսեց , որն որ իր հետը կրօնքի
և Առորդ Քրոց վրայ ան կերպով կը խօսէր՝ որ իր միտքը
համազեց , ու զինքը պարտաւորեց Աստուածաշունչ կար-
դալու սկսել : Պլընիան սկսեց մեծ զուարձութիւն զպալ
անիկայ կարդալովը , և մանաւանդ անոր պատմական մա-
սերէն . քանզի առաքելոց թուղթերը տակաւին իր հաս-
կրցողութիւնէն բարձր էին : Անիկայ բոլոր իր վարքին

մէջ այնպիսի փոփոխութիւն մը պատճառեց՝ որ իր բարեկամները նոր մարդ կը սեպէին զինքը, ու իր անհնարին անառակութենէն բարոյական ու բարեպաշտական վարքի. մը դառնալո՞ն վրոյ գարմանքով կը լէնային : Ակնեցին իր վրայովը աղէկ խօսիլ, ու ինք հետեւապէս կը զուարձանար. որ բարի համարում մը ստացաւ, և իր ան ատենի կարծեօքը՝ անոնց իր վրայ բարի համարումը ունենալու արժանացաւ : “Եւ սակայն ուրիշ բան չէին (կ'ըսէ ինք,) բայց եթէ կեղծաւոր փարիսեցի մը, բոլոր իմ ըրածս հոն կը նայէր՝ որ մարդիկ բարի խօսին իմ վրաս : Աչ Քըրիստոսը զիտէի՞ ոչ Հաւատըն ու ոչ Յօնար, և ինչպէս որ հիմա աղէկ իմացած եմ, թէ որ ան ատենը մեռնէի, շատ սոսկալի եղած պիտի ըլլար իմ վիճակս” :

Ենհնարին պիտի ըլլայ մեզի աս տեղս մի ըստ միոնչեալ անոր յառաջանալուն զանազան աստիճանները մինչև որ մեր Տէր Յիսուսին մէկ լուսաւորեալ խօնարհ և զդշացող աշակերտը եղաւ : Բաւական է ըսել թէ Առորը Գրոց ընթերցմունքն ու բարեպաշտ քրիստոնէից հետ ըրած խօսակցութիւնները եղան աս իր զարմանալի փոփոխութեանը զիլսաւոր միջոցները . և թէ Սատանային բազմաթիւ և աղէտալի ու մասնաւոր փորձութիւններուն տակն ինկաւ, ու անոնց տակը շատ անգամ զրեթէ յուսահատութեան ու խելացնորութեան մէջ կ'իյնար ու անձնասպանութիւն ընել կը մտածէր : Բայց իր Երկնաւոր Տէրը ասանկով զինքը կը պատրաստէր ուրիշներուն երեւլի օգուտաներ գործելու . ու Կատուծոյ շնորհքովը ըսլոր աս փորձութիւններուն մէջն ապահովութեամբ անցաւ, ուրիշ իրեն պէս փորձութիւններուն իմաստուն վարժավեւտ ու առաջնորդ և միմիթարիչ ըլլալու համար :

Կատուածպաշտութեան մէջ իր հաստատութեանը վրայ և Առորը Գրոց ծանօթութեանն ու հրապարակաւ անոնք բացատրելու կարող ըլլալուն վրայ բաւական ապացոյցներ

ըլլալն ետև՝ Կրիստոսի Աւետարանին քարողիչ ձևունագրուեցաւ։ Վատուած ամենակարող շատ հեղ տկար և անպատճ անձը ըլլալը՝ զօրաւոր ու պատուաւոր եղող ները ամեցրնելու համար։ Ահա պյառէս եղաւ նաև աս խոնարհ թիմեղնաղործիս ալ։ «Օռառույական աշխատութենիւ ու անարդ մեղքերէն կանչուեցաւ։ Վատուծոյ մարդոց խրկած դեսպանն ըլլալու։ ու Վատուած իր դեսպանութեան պաշտօնին յարմարցուց զինքը, ու անոր պաշտօնին մէջ շատ երեկի եղաւ։

Ալլնիանիքարողութեան սկսած ժամանակը՝ Անդղիոյ մէջ խիստ մեծ քաղաքական ու եկեղեցական շինթութեան ժամանակին էր։ Արօնքի համարձակութիւնն ու խոշմնանքի ազատութիւնը սեպէ թէ անծանօթ էր ան ատենը։ Ուստի Պլնիանին քարողութիւնը հշմարտութեան թշնամիներուն դայթակղութիւնը ըլլալով՝ շատ անիբաւութեամբ բռնեցին բանաը գրին զինքը, և հմտ տաններկու տարւոյ շափ բանտարկեալ մնաց։ Աս իրեն Եղած անիբաւութիւնն ու անդութիւնը կ'երեաց թէ կ'ուղէ նշանակել՝ երբոր ինք Ունայնութեան Աշաճառանոցին մէջ Հուսալիցին վրայ եղած դտուատանը կը պատմե։

Անծ համբերութիւնով կը տաներ աս տաժանակիր կաշնաւորութեանս դժուարութիւնները՝ ինչպէս որ պյառիսի վիճակի մէջ կը վայլէ ամէն քրիստոնէի։ Հան իր ընկերուներն էին՝ ան նոյն պատճառաւը բանտարկուած քանի մը անձինք, իր քովին ուներ իր Վատուածաշունչը՝ ու նախնի մարտիրոսներուն պատճութիւնը + աստիցմէ զատ պատեհ հոթիւն ուներ նաև իր մտածմունքներուն վրայ որոճալ։ Երբեմն իր հետը բանտարկուած իր ընկերներուն կը քարողէր ալ, ու պյառէս անոնք և ինք մէկտեղ իրենց քաշած սասարիկ նեղութիւններուն մէջ օրհնեալ Աւետարանին հշմարտութիւններովին ու խոստմունքներովը կը միսիթարուելին ։

Բայց իր կալանաւորութեան ժամերը դործածելու գլխաւոր գործիքը՝ իր զբիշ էր։ Բանտին մեջն էր որ նոք ուրիշ մեծաղին Աստուածաբանական գործքերու հետ շարադրեց աս յաւեժական Վայլաբանութիւնը, որն որ հիմա թարգմանութեամբ կը մասուցանենք բանասէր և այազգիներուն։ Աս բանան էր ան Կառրայը, ուր որ ինք իր սրանչելի երազին առջի խօսքին մեջ կ'ըսէ թէ՛ Աշխարհիս անապատին մեջ պարտած առենս պառկեցայ քննանալու։ Երբոր իր զուարձալի ու հրահանգիչ երազը կը կարդանք ու կը վայելնաք, գրեթէ ուրախանալու վրայ կ'ըլլանք որ իր թշնամիները իր ազատութիւնն առին ու զինքը ստիւպեցին ձեռքը զրիշի զարնելու։

Բանտին ազատելուն պէս անմիջապէս իր բարեկամները գլէտֆօրտի մեջ տեղ մը ծախու առին ու իրեն համար եկեղեցի մը շնուցին, ուր որ ինք կանոնաւոր կերպով ամեն շարաթ կը քարոզէր զինքը մտիկ ընելու եկող բազմութեանը, առանց ոյլ ևս նեղութիւն կրելու իշխանութեան տէր եղաղներէն։ Տարին անգամ մը Լոնտոն կ'երթար, ուր որ շատ զովարանութիւն ընդունելով կը քարոզէր։ Ըատ երեկէլ անձինք յաճախ կ'երթային լսելու իր քարոզութիւնը։ Ալրուս Տ. Վնդղիոյ թագաւորը, աս երեկի անձանց մէկուն իր զարմացումը ցոյց տուաւ թէ ինչպէս ինք այնչափ մոտաց և զիտութեան տէր մարդ ըլլալով՝ թիւթեղնազործի մը շաղակիատութիւնը մտիկ ընելու կ'երթար։ Պատասխան տուաւ իրեն միւսը՝ ըսելով։ “Տէր թագաւոր, թէ որ կարող ըլլայի թիւթեղնազործին ունեցած քանքարին ատանալ, տարապայման ուրախութեամբ պիտի հրաժարէի բոլոր իմ գիտութենէս”։ Աը թուի թէ Պլնիանին քարոզութեանը մեջ յատկապէս բան մը կար որ ժողովուրդին միտքը կը յափառակէր և անոնք իրեն կը հրապուրէր։ Աը կարծուի թէ իր օրովք Վնդղիոյ մէջ ժողովուրդոց ամենէն հաճելի քարոզիչը ան էր։

Երբոք Լոնտոն կ'երթար՝ քիչ ժամանակի մէջ իր հոն ըլլալուն ծանուցումը բաւական էր հաւաքել ունկնդիրնեւ րու խուռն բազմութիւն մը : Վնդղիոյ մէջ սովորութիւնն է որ ժողովուրդը կէս օրէն մէկ ժամ կամ երկու ժամ առաջ եկեղեցի կ'երթայ + բայց Յօհաննէս Պլռնիանին քարողութիւնը մատիկ ընկելու համար սովորութենէն դուռը շատ անգամ հաղար երկու հարիւր հոգիէն աւելի կը հաւաքուէին պուածուուն արշալոյսէն առաջ , և ան ալ ձմեռ ուռան մէջ , անձրեին ու ձիւնին մէջէն քալելով :

Հետեւեալ կարճ պատմութիւնը մէկն կը ցուցընէ իր հարտարարանութիւնը իր քարողիչ ու յանձնապատասխութեան դէմ իր զգուշաւորութիւնը : Ո՞էկ օր մը երբոք ինք մասնաւոր ջերմեռանդութեամբ ու ազգուութեամբ մը քարողէր էր , եկեղեցին աւարտելէն ետեւ իր բարեկամներուն մէկ քանին իրեն եկան ու ըսին թէ՛ Ինչ անուշ քարող մը տուիր այսօր : Պլռնիան օրինաւոր անկեղծութեամբ պատասխան տուաւ թէ , “Պէտք չէր ձեզի ասիւ կայ կրկին խմ միաբար բերել + քանզի ես ամպիսնէն վար չիջած Ապատանան ինծի զրուցեց ասիկայ” :

Յօհաննէս Պլռնիան շատ հոգ ունէր հիւանդներուն ու նեղեաներուն սցցելութիւն ընկելու , ու խղճմաննքի աղաւտութեան պատճառաւ չարշարուողներուն օգնութիւն ընկելով անոնց կարեկից ըլլալու + նաև հանապադ ջանք կ'ընէր իր քրիստոնեայ եղացրներուն մէջ եղած անմիաբանութիւնները համաձայնեցընելու : Այսպէս խաղաղութիւն ընկելու պատաղած ատենն էր որ հիւանդութիւն մը եկաւ իր վրայ , ու զինքը դերեղման իջեցուց : Ո՞էկ խխտ գէշ եղանակի մը ատեն տեղ մը գնաց՝ հօր մը ու որդւոյ մը մէջ տեղը եղած խոռովութիւնը խաղաղեցընելու , որոնց հետ քիչ մը ծանօթութիւն ունէր : Աս մարդասիրական գործը յահող կերպով աւարտելով Լոնտոն դարձաւ՝ դրսւանց առողջութիւնը տեղն բլալով + բայց որովհեան սաստիկ

անձրեներու պատահէք ու բոլորովին թթվեր էք , շուտով տենդով մը բռնուեցաւ , որ տասը օրուան մէջ իր կեանքը վերջացուց Օդոստոսի 12 , 1699ին , իր 60 տարեկան հասակին մէջ :

Աս զիրքը Անդղիարէն լեզուին մէջ արդարապէս խիստ ընտիր մատենագրութիւններուն կարդը դասուած է : Ծանոյլելով կը կարդացուի ու միշտ կը կարդացուեր միւնդամայն դիանականներէ ու ռամիկներէ : Աս բանաստեղծական գործքս ճարտարութեամբ յօրինուած է , ու անոր նկարագրութիւնները և նմանութիւնները պատշաճապէս յարմարցուած են : Բոլոր պատմութիւնը այնպիսի պարզ և բնական կերպով մը շարագրուած է , որ ամենէն ռամիկ անձին ալ դիւրիմանալի է + ու անոր գեղեցիկ օրինակներով ու նմանութիւններով ցուցուած ճշմարտութիւնները խիստ ոգեշահ են , ու անմիջապէս Աստուծոյ հաշնուած : Անդղիարէն լեզուին մէջ աս զործս անհամար անդամ՝ տպագրուեցաւ , ու քաղաքավարեալ աշխարհին դրեթէ ամէն լեզուներուն թարդմանուեցաւ և ամենէն ալ միշտ ընդունուեցաւ :

Այլնիան՝ Քրիստիանոսին Խըլինային Քաղաքը ճամբորդութիւնը բոլոր ժողովոց ընդունելի ըլլաւ տեսնելով քաջալերունելով՝ երկրորդ գիրք մըն ալ աւելցուց իր առջի երազին վրայ , որուն մէջ կը ստորագրէ Քրիստիանոսին կինկան ու զաւակացը երկինքը ճամբորդութիւն ընելը , աւմուսնոյն ու հօրերնուն օրինակէն շարժելով : Աս երկրորդ մամա ալ շատ գեղեցիկ դիւտերով ու նկարագրութիւններով զարդարուած է , որ յայտնապէս կը վկայէ նոյն ճարտար զրչին դորձն ըլլաւ : Բայց իր առջի երազը ան աստիճան իմաստալից ու աղէկ յօրինուած է , որ թէ իր միտքը և թէ նիւթը չէին վերցըներ երկրորդ մաս մը աւելցընել որ յարմարագրէս բաղկատուեր առջինին հետ :

12 ՅՈՀԱՆՆԵԼՈՅ ՊԲՀՆԻԾՆԻՒՄ ԱՅԲԻՑԻ

Ա ասն որոյ աս երկրորդ մասը շատ ստորին է առջևնէն , և
ան պատճառաւը քիչ մը համառօտեցինք , թէպէտ և տեղ
տեղ կան հասուածներ որ իրենց գեղեցկութեանը յարմա-
րութեանն ու զօրութեանը պատճառաւը գրեթէ անհամեր-
մատ կոչուելու արժանաւոր են :

ՔՐԻՍՏՈՆՈՒԹՅ
ՃԱՄԲՈՐԴ ԳՈՒԹԹԻՒՆԻ
ԵՐԱՋԻ ԶԵԽՈՎ

Այսարհիս անապատին անցած ատենս մէկ տեղ մը հասայ՝ ուր որ քարայր մը * կար, և ան քարայրին մէջ պառկեցաց քնանալու, ու քնացած ատենս երազ մը տեսաց ։ Երազիս մէջ մէկը տեսայ՝ որ հնոտի լաթեր հաղած մէկ տեղ մը կայներ եր, երեսն իր տունեն դարձուցեր եր, ձեռքը գիրք մը ուներ ու կռնակը մեծ բեռ մը ։ Եսոյ ։ Կդ ։ 6 ։ Վահ ։ Ժդ ։ 33 ։ Առաջ ։ Լը ։ 4 ։ Եւ տեսայ որ գիրքը բացաւ ու սկսեց կարդալ ։ Արդացած ատենը կու լար ու կը դողար մարդը, և չգնալով աւելի ինքզինքը բռնել ողբակի աղաղակ մը փրցուց՝ ըսելով ։ “Ի՞նչ պիտի ընեմ ես” † ։ Գարդ ։ բ ։ 37 ։ Ժը ։ 30 ։

* Հեղինակը աս գիրքը գրեց Պէտքօրտի բանաբն մէջ՝ ուր որ ինքը հաւատոյ համար բանտարկուած եր ։

† Այսպէս է արթնցած մեղաւորին աղաղակը ։ որ կը տեսնէ թէ իր արդարութիւնը աղտեղի լաթերու պէս է, իր հոգին բարկութեան ու թշուառութեան ևնթակայ է մատնջենաւոր կրտսեան տակ ինկած ։ Եր մեղքին բեռը իր կռնակին վրայ դպալով օգնութիւն մը դանելու համար

Առ վիճակին մէջ մարդն իր տունը գնաց , և կրօածին չափ բնքղինքը զսպեց որ իր կինն ու զաւկըները իր նեղութիւնը շխմանան . սակայն երկար ատեն չկըցաւ լուռ մնալ , ինչու որ իր նեղութիւնը կ'աւելինար : Ուստի վերջապես իր միտքը իր կնկանն ու զաւկըներուն բացաւ , ու այսպէս սկսեց խօսիլ անոնց : Ով իմ սիրելի կինս , և զորք ով իմ որովայնիս զաւկըները , ես՝ ձեր սիրելի բարեկամը , իմ վրաս ծանրացած բեռի մը պատճառով կործանած եմ :

Երես կը դարձընէ իր տունէն՝ իր անձնն ու իր բոլոր սուստ յշակերէն ու մասոփ ակնկալութիւններէն , ու Խսուուծոյ խօսքը ձեռք կ'առնէ որ ցուցընէ իրեն թէ ձւր պէտք է դիմէլ օգնութիւն ու փրկութիւն դոնելու : Վեղաւորք որպանի որ կը կարդայ անիկայ՝ այնչափ կը համոզուի որ իր պատուական անմնահ հողին թշուառ կացութեան ու կործանեալ վիճակի մը մէջ է , ու կը կարօտի Քրիստոսի դիմել յաւխանական կենաց ու փրկութեան համար : Ապրդացած ատենը կու լոյ ու կը դուզյ , մնածելով թէ բնէ պիտի ըլլաց իրեն : Ամրդացող , արդեօք քեզի ալ այսպէս բան մը պատահէցաւ երբէք : Քու մեղքերդ երբէք տեսամբ , ու զացացի՞ր անոնց ծանրութիւնը , այնպէս որ քու հոգւոյդ անձնութեանը մէջ աղաղակէիր ըսելով , Խնչ ընեմ ես որ փրկութիմ : Յնէ որ չտեսար ու չզդացիր , ան պատուական գիրքը պիտի համարիս իրեն առասպել մը կամ պատճնաթիւն մը՝ որ ամենենին վերաբերութիւն մը չտնի քեզի . անծանօթ լեզուով մը զրուածի պէտ պիտի չհասկընաս անոր նշանակութիւնը . ինչու որ՝ դուն տակաւին մարմնաւոր ես՝ քու մեղքերուդ մէջ մեռած չարին թեկերուն մէջ պատկած՝ սուստ ապահովութեան մէջ մնացած : Բայց այն գիրքը հոգեոր է . հոգեորապէս կենդանացած հոգիները միայն կինան հասկընալ ան , որոնք որ իրենց մեղքերը զաւլով՝ կորսուելին վախնալով՝ ու դաստապարտութիւնէ զարհութելով , սկսեցին սրտանց փրկութիւն վնասել : Այս տեսակները՝ և միայն ասոնք կը սկսին Կործանման Քրաղաքէն երկնացին թագաւորութիւնը երթալու Շամիորդներ ըլլալ :

Կաև ստոյդ իմացած եմ՝ որ աս մեր քաղաքը երկինքէն իջած կրակով պիտի այրի . և անոր սուկալի կործանմանը մէջ եմ և դուն իմ կինա՝ և իմ անուշիկ զաւկըներս , թշուառաբար պիտի կորսուինք . միայն թէ կարելի է որ փախչելու ճամբայ մը դանուի՝ (որն որ գեռ ես չեմ զիւտեր ,) որով կարող ըլլանք աղասիլ* : Այս խօսքին վրայ իր ընտանիքը մեծապէս զարմացան՝ չէ թէ անոր զրուցած խօսքերուն ճշմարտութեանը հաւատալով , հապա կարծելով թէ իր մորին այլայլութիւն մը եկած է : Ուստի դիմերը մօտ ըլլալուն՝ և իրենք ալ յուսալով որ քունը իր միացը կը հանդարտէ , արարալով դինքն անկողին դրին † : Բայց զիշելն ալ ցորեկին պէս վասալի եր իրեն . անոր համար քնանալուն տեղը՝ հաւաչանքով ու արցունքով անցուց անիկայ : Այսպէս երբոր առառու եղաւ , ընտանիքն ուղեցին դիտնալ թէ թնչպէս է : Այդ պատասխան տուաւ անոնց թէ , Գեշին գէշ՝ ‡ . ու ձեռք զարկաւ նորին

* Պէտք է նկատել որ մեղքին ճշմարիտ ճանաչումը Վատուծոյ ըստածին ու Առորք Գրոց աստուածային հեղինակութեանը հաւատալին կը ծաղի : Մահն ու դատասասանը՝ խղճմանքին առջեւ կը ներկայանան , Վատուծոյ առջեւ կայնելու ահաւոր հետեանինքները այնպէս պայծառ իր առջեւը կը դրուին , որ բոլոր ուրիշ փոքրադոյն բաները՝ ան մի միայն հարկաւոր բանին հոդողութեանը մէջ կը թաղուին :

† Երբոր կը սկսինք փրկութեան համար իմաստուն ըլլաւ , մարմնաւոր յարեկամները խելացնոր կը կուն մեզ ու մեղքով հիւանդացած մեր հոգիներուն մարմնաւոր դարձան կ'ընեն :

‡ Դարձի եկողի մը մեղքին ճանաչումները չեն կրնար թօթվուիլ ու չեն կրնար բժշկուիլ բայց եթէ Կրիստոսի արխանվոր : Վեչու որ նըսափ բան որ պէտք է Վատուծոյ արդարութիւնը բաւականացընելու , նոյնչափ պէտք է նաև արթնցած խղճմանքին խազազութիւն չնորդելու :

զանոնիք յորդորելու , բայց անոնիք սկսեցին խռոանալ : “Եաւ
մուածեցին որ իրեն սասամելով ու խոժոռելով՝ իր մնաքին
հիւանդութիւնը մէկուի ընեն . երբեմն զինքը կը շախա-
տէին , երբեմն կը սաստէին , և երբեմն բոլորովին զինքը
կը ձգէին կ'երթային : Ուստի սկսեց առանձին իր սենեա-
կը մոնել անոնց համար աղօթք բնելու և անոնիք կոկծալու ,
ու նաև իր թշուառութիւնները ողբալու + ասկէ ’ի զատ
կ'երթար առանձին դաշտերուն մէջ կը պտըտէր՝ երբեմն
կարդալով և երբեմն աղօթելով , և քանի մը օր իր ժա-
մանակն այսպէս անցուց * :

* Աշխարհակը մարդոց անարդանիքը կամ բարկութիւ-
նը՝ որ խղճմուանիքով նեղութեան մէջ եղողներուն կը ցու-
ցընեն , սովորաբար պատճառ կ'ըլլայ անոնց օր՝ իրենց ան-
հանդսութիւնը կրցածնուն չսփ պահեն մինչև անդամ
իրենց մերձաւորներէն . բայց ասիկայ շուտով անհնարին
կ'ըլլայ : “Եաւ մէկ մարդ մը օր իր խանդակաթ սիրոյն
առարկաները կը տեսնէ թէ ծայրագոյն վտանգներու են-
թակայ եղած են՝ բայց չեն դիտեր իրենց վիճակը , իր բնա-
կան սիրով կը բռնագաւի ազդու օրինակներ՝ խրասներ ու
աղաջնկներ յառաջ բերել : Բայց անոնիք Աստուծոյ
խօսքին տգէտ ըլլալով ու սորմած չըլլալով իրենց վար-
քը Աստուծոյ օրէնքին հետ բարդատել , այսպէս խօսե-
րուն վասյ կը զարմանան + ու անոր տուած խրասները
բնդունելուն տեղը՝ սովորաբար յափշտակեալ մաքի կամ
յիմարութեան կ'ընծային զանոնիք + ու ինչպէս օր մարդա-
րէները՝ առաքեաներն՝ ու նոյն բնիքն Որդին Աստուծոյ Յի-
սուս իրենց ժամանակակիցներէն երազացյզ ու խելացնոր
անձինք կը համարուեին՝ նոյնապէս կը համարուի հիմակուան
հաւասացեալն ալ : Ընդհանրապէս նախ և առաջ իր
մերձաւոր աղջականները աս կարծիքը կը հաստատեն իր
վրայ , ու դանապան հնարքներ կը ճարեն իր միտքը հանդար-
տեցընելու + զեւարձութիւններ՝ բնկերութիւններ՝ ինչոյք-
ներ՝ բարեպաշտ բարեկամներէն կամ դրքերէն ևս կենալ
կը կարդադրեն . ու աս միջոցներովս շատ անդամ իրենց

Ակրծը տեսայ որ օր մը դաշտերուն մէջ պարբռելով՝ (իր սովորութեանը պէս) ձեռքին գիրը կը կարդար , և իր միտքը մեծ նեղութեան մէջ էր . ու կարդացած առնենը առջի անդամին պէս աղաղակ մը փրցուց բռելով . “ Քոնչ պէտք է ընել որ փրկուիմ ” * : “ Դարձ . ժիշ . 30 , 31 :

“ Սակա տեսայ որ մէկ կողմն ու միւս կողմը կը նայէր , որպէս թէ փախչիլ ուղելով . և սակայն հանդարտ կայ ներ էր , ինչու որ՝ (ինչպէս ես կարծեցի ,) չէր պիտի թէ մը կողմն երթաց : Այէկ մ'ալ նայեցայ՝ ու տեսայ որ մէկ կը կու զար գեալ ’ի իրեն անունը Աւետարանիչ , և ըստ . Ինչը համար կու լսա կ'ողբաս դուն : ”

Հաղատակին կը հասնին , ու մարդը սուտ խաղաղութիւնով մը հանդարտ կը մնայ : Բայց երրոր մէկը մեղքին չարութեանն ու անարդութեանը վրայ ճշմարիտ հանաչում մը կը ստանայ այսպէս միջոցները չէ թէ պիտի թեթեցընեն հազար աւելցնեն անոր նեղութիւնը , ու յետոյ ան մարդը աւելի դդացում պիտի ունենայ թէ իր անձին և թէ ուրիշներուն փրկութեանը վրայով : Սոիկայ հասարակօրէն իր մերձաւորներուն նախապաշարմնաքը կը զօրացընէ , ու խստասրառութիւն կը բերէ անոնց վրայ . ու անոնց զթութիւնը կը դառնայ վրեժինդրութեան , գէշ վարուելու , անարդութեան կամ երեսէ ձգելու : Անմիտիթար հաւատացեալ ան ատենը կը բռնադատի առանձնանալ , ու կը հանայ թեթեցընել իր ծանրաբեռնեալ միտքը Սուրբ Գիրքը կարդարվ՝ ու իր ողբայի վիճակին վրայ մտածելով , չերմուանդ աղօթքներ ընելով ևս զինքը նախատողներուն հաւմար . և այսպէս արցուցրով կը ցուցընէ ան սերմը ուրկէ անշուշտ պիտի պաղաքերի իր ասպառնի ուրախութեան հունձը :

* Հողի մը ան ատենը ճշմարտապէս կը խնդրէ իր Փրկութիւնը՝ երբոր իր սրտին մէջ կը սկսի դատապարտութենէ աղատելու համար աղաղակնել :

† “ Ակատէ աս տեղ թէ Քրիստոս հոգիներուն մէծ պիտի ու Տեսուց՝ Աւետարանիքը խրկելուն ինչ զորովու-

Պատասխան տուաւ մարդը . ՏԵՐ , և իմ ձեռքիս գիրշելն կ'իմանամ՝ որ պիտի մեռնիմ , ու անկէ ետև դատաստան պիտի երթամ . ԽԲ . ԷՇ . 27 . և կը դանեմ՝ որ առջև եմն կամք չունիմ , ու երկրորդին դիմանալու կարողութիւն չունիմ : ԵՇԱՆ . ի՛ւ . 14 :

Ան ատենը Աւետարանիչն ըստ . ԽԱՀՈՒ համար կամք չունիս մեռնելու , քանի որ աս կեանքս այսչափ չորիքներով լցուն է : Պատասխան տուաւ մարդը . Անոր համար որ կը վախնամ թէ աս իմ կոնսակիս ըեռը † զերեզմաննէն աւ խորունկ տեղ մը զիս ինցընէ , ու ես Տոմեղին անդունդը իյնամ : Խառա . Է . 33 : Եւ թէ որ՝ աէ բիմ , ես քանուը երթալու կը վախնամ , աւելի կը սոսկամ դատաստանի աւ երթալու՝ և անկէ ետև աւ դատապարտութեան . և ահա աս քաներուն մոածմնւեցները զիս կը լացրինեն :

Թաէ որ քու վիճակդ աս է , ըստ Աւետարանիչը , ինչու համար հանդարս կեցեր ես : Պատասխան տուաւ մարդը . Անոր համար , որ չեմ գիտեր թէ ուր երթամ : Ան ատենը միւսը ոլորած մազաղաթ մը տուաւ իրեն , որուն մէջ զրուած էր՝ Գալու բարկութենէն վախի՞ր : Խառա . դ . 7 :

Պուժ սէր ու հոգ ունենաւ կը ցուցընէ մեղքով կարծրացեալ ու ծանրաբեռնեալ մեղաւորներուն վլայ : Աւետարանիչը կը նշանակէ աւետարանական շորհաց ու փրկութեան ուրախարար լուրին քարողիչը :

* Լուսաւորեալ ու գիւրազգաց մեղաւորին ճշմարիս խստավանութիւնն այսպէս է :

† Երբոր Աստուծոյ Հոգին մարդուն սիրուը համոզէ իր կորուսեալ վիճակին վլայ , ան ատենը նոյն անձը մեղքին անտանելի ծանրութիւնը կը զդայ իր կոնսակը , ու կը զարհուրի Վատուծոյ բարկութենէն որ մեղքին դէմ յայտաւած է երկինքէն :

‡ Աւետարանը արթնցած մեղաւորին առանց յշակ ու

Սրբ՝ մարդը կարդաց անիկայ , և զգուշութեամբ Աւետարանիչն վրայ նայելով՝ ըստ . Ո՞ւր փախչելու . ևմ : Աւետարանիչն իր մատովը մէկ մեծկակ դաշտի մը անդիի կողմը ցուցընելով , ըստ . Աը տեսնե՞ս ան տեղի ։ Եեղ Դուռը : Աստիք . է . 13 , 14 : Ասրդը ըստ . Զէ . Ան ատենը միւսն ըստ . Աը տեսնե՞ս ան տեղի վառած ճրագը : Ասով . Ճէիթ . 105 : Բ Գլեզ . ա . 19 : Ան ալ ըստ . Աւրծնեմ թէ կը տեսնեմ : Աւետարանիչն ըստ . Աչքդ ատ ճրագին վրայ պահէ , ու շխտակ դէպ 'ի անոր զնա , և պիտի տեսնես ան դուռը . Հոն՝ երբոր անիկայ զարնես , քեզի պիտի զրուցուի թէ Բնչ ընելու ևս : Այսպէս՝ երազիս մէջ տեսայ որ մարդը սկսեց վազել : Գանձը որ ինք շատ չհեռացած իր տունէն՝ կսիկն ու իր զաւակները բանե խնմնալով սկսեցին իր ետևէն կանչել որ դառնայ . բայց մարդը մատուցները ականջներուն դրաւ . և առաջ կը վազէր ըսելով . Աեանք , կեանք , յաւիտեանկան կեանք : Վ առ . Ճէկ . 26 : Այսպէս ինքն եաբն չնայեցաւ , Շանկը : Ճէկ . 17 , հապա վազեց զնաց դէպ 'ի դաշտին մէջունեղը † :

օդնութեան բնաւ շթողուր ան թշուառ վիճակին մէջ՝ ուր որ զանիկայ կը զանէ + հապա ազատութեան ու փրկութեան համար Յիսուսը կը ցուցընէ անոր , որպէս զի իր անձնն ու իր ներսը զացացած Վատուծոյ բարկութենէն Քրիստոսի շնորհացը դիմէ , որ Եեղ Դրան օրինակով ցուցուած է :

* Աւետարանին միջոցովը միայն կը դանուի Քրիստոս ու անոր երթալու ճամբան : Աւետարանը՝ Քրիստոսի կ'ուղղէ ու Առւրը Հողին սրաբն մէջը կը ճառագայթէ , որով մեղաւորը Վատուծոյ Խօսքին մէջ կը տեսնէ զՔրիստոս :

† Երբոր մեղաւորը կորսուելն փախչելու կը սկսի , մարմնաւոր ազգականները կը չանան արդիւել զինքը . բայց խելացութիւնը մարմինին ու արիւնին յառաջ բերած

Դրացիներն ևս դուքս ելան իր վաղելը տեսնելու . Եշել . ի . 10 . և ինք որ կը վազէր , ոմանք ծաղը կ'ը-
նէին , ուրիշներն իրեն կը սպառնային , և ոմանք ետեւն
կը կանչէին որ դառնայ : Առ այսպէս ընողներուն մէջ
երկու հոգի կային , որոնք երթալ բռնութեամբ զինքը
ետ բերել վճռեցին : Մէկին անունը Պինստղլուխ , ու
միւսինը Խօսքիպառկող էր : Արդ՝ մարդը մինչև հիմա
աղեկ մը հեռացեր էր անոնցմէ , բայց սակայն անոնք մնցերա-
նին դրեր էին իր ետեւն իշխալ . և այսպէս ընելով քիչ
ատենին մէջ իրեն հասան : Ան ատենը մարդն ըստ .
Դրացիներ , ինչու համար եկաք : Պատասխան տուին
թէ , Անոր համար որ քեզ՝ ետ դառնալու համոզենք :
Բայց ան ըստ . Այդու բանն անհար է ըլլալ . դուք կը
ընակիք Արթանման քաղաքը , ուր որ ևս ալ ծներ եմ :
Աս կը տեսնեմ որ անիմայ ասանկ քաղաք մըն է . և շուտ
կամ ուշ հոն մեռնելով՝ գերեզմանէն ալ խորունկ տեղ
մը պիտի իշներ որ կրակով ու ծծումբով կ'ացրի : Ուստի
խօսք մտիք ըրէք՝ ով իմ բարի դրացիներս , ու դուք իմ
հետա ելէք * :

Կնէ , ըստ Պինստղլուխը , մեր բարեկամներն ու բա-
րիքները ետենիս ձգենք հմ !

Հրապուրական խօսքերուն դէմ ականջնիս դոցեն է , քան
թէ անոնց հետ վիճելը : Այն մեղաւորն՝ որ Տշմարտապէս
իր փրկութեանը կը բաղձայ , որչափ որ թախանձնէք
ընդունի աշխարհէն՝ այնչափ արագագոյն կը փախչի զանոնք
ըսելու :

* ՄԵղքը հանչցող ու կործանմանէ փախչող մեղաւորին
հարազատ ողին ան է՝ որ ուրախութեամբ կը յորդորէ ուրիշ
խղճալի մեղաւորներն իր հետն երթալու : Աստուծոյ
շնորհքը մէկուն սրտին մէջ սերմանուելուն՝ խկոյն կը բու-
նի , ու ընկերախրութեան պառուղ կը բերէ :

† Երբոր աս աշխարհիս սէքը սրտին մէջ կ'իշնէ , ինչ-

Այս , ըստու Տիրախանոս , (քանզի առ էր մարդուն անունը .) ինչու որ ան ձեր բոլոր ձգած բաները իմ՝ վայելելու համար խնդրած բաներուն մեկ պղտիկ մասին հետը բաղկացուելու արժանի չեն : Բ Արքան . դ . 18 : Եւթէ որ դուք իմ՝ հետո երթաք՝ ու յարատեեք , դուք աւ ինձի հետ մասնակից պիտի ըլլաք . քանզի հոն ուր որ ես կ'երթամ , բաւական կայ և կ'աւելնայ աւ : 'Լուս : Ժե . 17 : Եկեք իմ՝ հետո և իմ՝ խօսք փորձեցէք :

«Անդադունք . Տիրախանու վնասուած բաներդ ի՞նչ են , որ անոնք դանելու համար բոլոր աշխարհը կը ձգես :

Տիրախանոս . Ես անապական՝ անարատ՝ և անթառամ ժառանգութիւն մը կը վնասուամ , այսիդ . այ . 4 , որ երկինքը դանձուած է և հոն ապահով կը կենայ , Եբք . ժայ . 16 , որ սահմանուած ատենը անիկայ ջանքով ինդրողներուն արուի : Ընէ որ կ'ուզես՝ իմ՝ գրքիս մեջ անիկայ կարդա ու իմացիր թէ այսպէս է :

Ա մը , ըստու «Անսագլուխը , մեկո՞ գնա քու զրքիդ հետ * . մեր հետ ետ պիտի դառնամ թէ չէ :

Տիրախանոս . Զէ , ես պիտի չդառնամ , ինչու որ ձեռքս մանին վրայ դրի : 'Լուս : թ . 62 :

«Անդադունք . Եկոր ուրեմն Խօսքիպառկող դրացի , դառնանք մեր բնակարանն երթանք առանց ասոր + ասոր պէս հիւանդամիտ խելադարներու ընկերութիւն մը կայ , որ երբ այլանդակ բանի մը ծարը փակչին , մեկ բանին

և իցէ օրինակներ կամ փաստեր կարող չեն համոզել մարդու ըստագոյն ժառանգութիւն մը վնասուելու :

* Ընէ որ աշխարհասէք մարդոց հետ իրենց ճամկովը վիճարանիս , խարեւական փաստերով , ու արամարանութիւնով կը յոզնեցնենք քեզ : Ծայց դիք Սուրբ Գիրքն իրենց առջև ու խելոյն պիտի պապանձին + ոչ Սատանան ու ոչ անոր ձեռքովը կուրացեալները Աստուծոյ Խօսքին զօրութեանը դէմ՝ կրնան դիմանաւ :

պատճառները ցուցվնող եօթը հողին աւելի խմաստուն են իրենց աչքին առջևը :

Վեարդանքով մի խօսիր , ըստ Խօսքիակառկողը , թէ որ բարի Քրիստիանոսին ըստը Աշմարիտ է , իր վնասուած բաները մերիններէն աղէկ են . իմ սիրոս կը հակի որ իմ դրացւոյս հետն երթամբ :

Պինդութափ + Խնչ , առքեղի խելագար մըն ալ . իմ խօսք մտի կ ըրէ , ու ե'տ դարձիր . ով զիտէ թէ ասոր պէս խելագարը քեզ ուր պիտի տանի : Եչ տ դարձիր , ու խելացի եղիր * :

Քրիստիանոս . Իմ հետո եկոր՝ Խօսքիակառկող դրացի , այնպէս բաներ կան ստանալու որոնց վրայով խօսեցայ , և անոնցմէ 'ի զատ շատ ուրիշ փառաւոր բաներ ալ : Ըսէ որ ինծի չես հաւատար , աս դրբին մէջ կարդա . և ասոր մէջի զրուած բոլոր բաներուն Աշմարտովթիւնը ահա ասիւ կայ շինողին արիւնովը հաստատուած է : Եբք . թէ . 17 , 21 :

Ուրեմն՝ Պինդութալուխ դրացի , ըստ Խօսքիակառկողը , ես հիմա դրեթէ միտքս հաստատեցի . ես կը խորհիմ աս բարի մարդուն հետ երթամլ , և իմ վիճակս անոր վիճակին հետ ձգել : Բայց ով իմ բարի ընկերոս , աս բաղձալի տեղը երթալու ձամբան զիտե՞ս :

Քրիստիանոս . Եւետարանիչ անունով մէկն ինծի ցոյց տուաւ որ արտորնօք ան 'Եեղ Դուռն երթամ' որն որ մեր առջևն է . հոն ձամբուն վրայով պիտի տեղեկանանք :

Խօսքիապատուալ . Եկոր ուրեմն երթանք՝ բարի դրացիս , ու երկուքը մէկն ձամբայ ելան :

Ես ալ ետ կ'երթամ իմ տեղս , ըստ Պինդութալուխը ,

* Են որ Քրիստոսի համար աշխարհի աչքին առջևը բնաւ միմար չեղաւ , Քրիստոսի հաւատքովը փրկութեան համար տակաւին խմաստուն եղած չէ :

ես այսպէս ծուռ ճամբաց դաշտղ խելաղար մարդոց հետ
ընկերութիւն չեմ ըներ ^{*} :

Հիմա երաղիս մէջ տեսայ՝ որ երբ Գլխաղլուխը ևս
գարձաւ, Քրիստիանուն ու Խօսքիպատկողը դաշտին վրա-
յին խօսակցելով կ'երթացին, և իրենց խօսակցութիւնը
այսպէս սկսեցին :

Քրիստոֆիանուն . Եկի՞ր նայինք, Խօսքիպատկող դրացի,
Հնչպէս ես : Ուրախ եմ որ խելքոյ պառկեցաւ իմ հետ
երթալու : Տնել որ Գլխաղլուխը ան դեռ չտեսնուած
բաներուն վախն ու զօրութիւնը ինծի նման զգացած ըլլար,
այսպէս դիւրութեամբ մեզ չեր ձգեր դառնար :

Խօսքիպատկող . Եկի՞ր, Քրիստիանուն դրացիս . որով
հետեւ երկուքէս ուրիշ չիայ հոս, ըսէ ինծի թէ մեր երթա-
լու տեղին բնչ բաներ կան, և բնչպէս պիտի վայելնիք առ-
նոնք :

Քրիստոֆիանուն . Ես չեմ կրնար այնչափ իմ լեզուովս առ-
նոնց վրայ խօսիլ, որովի որ մասր կ'իմանամ . բայց
որովհետեւ դիտնաւ կը փափաքիս, իմ գըքիս մէջ կար-
դամ անոնց վրայով :

Խօսքիպատկող . Եւ կը կարծե՞ս թէ քու դրքիդ խօսքերը
անտարակոյս ճշմարիտ են [†] :

* Տե՛ս առ տեղ թէ աւետարանական ճշմարտութիւն-
ները մարմնաւոր մարդուն վրայ ի՞նչ տարբեր զօրութիւններ
ունեն : Գլխաղլուխը բոլորովինն կը մերժէ զանոնք .
Խօսքիպատկողը ուրախութեամբ մարկի կ'ընէ անոնց, ատեն
մը քիչ մը հաւատք կ'ընծայէ անոնց, ու քիչ մը տեղ
Քրիստիանունին հետ կ'ընկերանայ :

† Օքէ որ Առւրբ Կիրքը իրաւ Սսունծոյ Խօսքն է,
արեաք է որ ճշմարիտ ըլլայ ան . բայց ասիկայ ի՞նչպէս պի-
տի ստուգուի, խելացիները զօրաւոր փաստերով կը հաս-
տատեն ան՝ որոնց բոլորովինն անծանօթ են արթնցած հո-
գիներուն շատերը . Ծնչու որ Աւետարանը ըստ մեծի

Քրիստովանուն + Այս , անշուշտ + քանզի առ դիրքը շենոցը ամենենին չկընար սուտ խօսիլ : Տիր , ան + 2 :

Խօս+խպատիոլ + Ըստ աղէկ + Բօնէ են ան քաները :

Քրիստովանուն + Աեկ անվախճան թաղաւորութիւն մը կայ ժառանդելու , և յաւիտենական կեանք մը մեզի տրուելու որ յաւիտեան ան թաղաւորութեանը մէջ բնակինք : Խայ + խէ + 17 : Ըստ + ձ + 28 , 29 :

Խօս+խպատիոլ + Ըստ աղէկ + ուրիշ բօնէ կայ :

Քրիստովանուն + Փառաց թաղեր կան մեղի տրուելու , և այնպիսի հանդերձներ որ մեղ Երկնից արեգակին արևո պիտի փայլեցընեն : Է Տի + դ + 8 : Ըստ + իր + 5 : Անոնք + ժէ + 43 :

Խօս+խպատիոլ + Այս լսածները պատուական բան են , և այլ ուրիշ բնչը կան * :

մասին տղետներուն ու աղքատներուն կը քարոզուի .) և սակայն անոնք ունին Առորը Դիրքերուն ջնարտութեանը ամենեն սույզ ու խիստ համոզիչ փառուերը : Խողնուանքն վրայ ունեցած անոր իշխանութիւնն ու զօրութիւնը , անոնց վիճակին՝ վախերուն՝ կարօտութիւններուն՝ յցյերուն ու փափառներուն յարմնար դալը , իրենց սրտերէն անցած բոլոր բաներուն անվուշալ նկարագրութիւնը որ կը դանին անոր մէջ , ու իրենց վերաբերեալ բոլոր բաներուն վրայ անոր տուած լսաւաւորութիւնը , անմերժելի ապացուցութեամբ կը համոզին զանձնը թէ Աստուծոյ ներնշութեամբը տրուած է :

* Երկինքը թագաւորութեան մը կամ վերցյիշեալ բաներուն նմանցընելլ կրնայ մէկ թեթև տպաւարութիւնն մը ընել մարմնաւոր սրտին վրայ , որ կը զուարձանայ մտածելով թագերուն վրայ՝ փառաւոր հանդերձներուն նուաղաքաններու վրայ և ամեն ցաւերէ ու տրումնութիւններէ աւզատ վիճակի մը վրայ : Բայց պասպիսի անձը երկնից ջնարիս երջանկութեանը՝ պյունքն Քրիստոսի փառքը տեսնելու ու սրբութեամբ և սիրով անոր նմաննելու դաշտ վարը չունի : Անդաւորը մինչեւ որ չնորհըովլ չնորողուի՝

Վրբիսորինուն . Հոն աչ լսաց և ոչ տրամաւթիւն պիտի ըլւաց . քանզի ան տեղին Տէրը մեր աշքերէն բոլոր արցունքաները պիտի սրբէ : Եսայ . ին . 8 : Յայտ . է . 16 , 17 : ին . 4 :

Խօսնիսուն-իոդ . Եւ ի՞նչ ընկերներ պիտի ունենանք հոն :

Վրբիսորինուն . Հոն սերովը էներուն և քերովը էներուն հետ պիտի բնակինք , Եսայ . կ . 2 : ա օձես . դ . 16 : Յայտ . է . 11 , որոնք այնպիսի ստեղծուածներ են՝ որ քու աշքերդ պիտի խտաղին իրենց վրայ նայելու : Հոն նաև պիտի տեսնես հաղարաւոր և բիւրաւոր անձններ որ մեզմէ առաջ ան տեղը գացին + ասոնցմէ մէկը լինասակար չէ , հազար բոլորն աւ ընկերասէր ու սուրբ են + ամէն մէկը Սատուծց գէմը կը պտըսի , և անոր առջեր կը կայնի , յաւխտեան անոր հաճելի ըլլալով : Ուեկ խօսքով , հոն պիտի տեսնենք երեցներն իրենց ոսկեղին պսակներովը , Յայտ . դ . 4 , հոն պիտի տեսնենք սուրբ կոյսերն իրենց ոսկի քնարներովը , Յայտ . ժդ . 1-5 , հոն պիտի տեսնենք ան մարդիկը որոնք ան տեղին Տէրոջը վրայ ունեցած սերերուն համար աշխարհիս ձեռօքը կտոր կտոր ջարդուեցան , բոցերուն մէջ սյրեցան , զաղաններէն կերուեցան , ծովերուն մէջ խեղդուեցան + ամէնը աղէկ , և անմահութիւնն իբրև հանդերձ վրանին հաղած են : ի կարեն . է . 2 , 3 + 5 :

Խօսնիսուն-իոդ . Աս բաներուն լսելն անդամ բաւական է մէկուն սիրան զմայլեցընելու : Բայց ասոնք պիտի վաշելուի՞ն արդեօք : Կօնչալէս մենք պիտի ժառանգենք անոնք :

Վրբիսորինուն . Տէրը , ան քաղաքին կառավարը , աս

երկնից մէջ երջանիկ չկրնար ըլլալ թէ և հնար ըլլար իրեն հոն ըլլալ + իր երկինքը երկրիս վրայ է :

գրքին մէջ պատմեց ան . Եսուս . ծԷ . 1-3 : Յալ . կ . 37 : ը . 37 : Յայտ . իլ . 6 . 17 . որուն բովանադակութիւնն աս է որ եթէ մենք ճշմարտապէս անոնք ուղելու ըլլանք , ինք ձրի պիտի տայ մեղի :

Խօս+իուստիոն . Աս ալ աղեկ՝ իմ բարի ընկերս , ուրախ ևմ այս բաները լսելուս . առաջ եկոր , քայլերնիս շուտով առնենք * :

Քըհորդիանա . Աս իմ կանակիս բեռին պատճառաւը ուղածիս չափ շուտով չեմ կընար երթալ :

Աս միջոցիս երազիս մէջ տեսայ՝ որ իրենց աս խօսքը լնեցուցածնուն պէս , դաշտին մէջերը տղմալից փոսի մը հասան . և զգուշութիւն չընելովնին յանկարծ երկութը մէկէն ան ցեխին մէջն ինկան : Ան փոսին անունն էր Ահատութիւն : Ուստի առեն մը թապլորկեցան հօն , և վրանին բոլորովին տիղմով շաղախեցաւ . ու Կիրիստիանոս

* Տես աս տեղ ժամանակաւոր հաւատացեալին մարմնաւոր ուրախութիւնն ու մարմնաւոր մխիթարութիւնը . առեննին իր մեղքերուն բեռը զայցած չըլլալով՝ թեթեութեամբ երկար ճամբորութիւն ընկելու կը յօժարի՝ բայց չիրնար դիմանալ , Քրիստոս Տէրն մեր սցսպիսիները ապառաժ քարի կը նմաննեցընէ : Ուրախութեամբ կընդունին Վասուծոյ Խօսքը . բայց ան խօսքը իրենց սրտերուն մէջ արմատ չըւնի . առեն մը կը հաւատան , բայց փորձութեան առեն կը հեռանան : Դուք . ը . 13 : Այսպէս ըրած Խօսքիպառկողը Ահատութեան փոսին մէջ : Աս փոսը կը նշանակէ ան մեզ նեղող՝ յուսարեկ ընող՝ վախերն ու սիրակութ երկրացութիւնները , որ կը ծաղին Վասուծոյ Խօսքին հաւատը չընծայելէն՝ Վասանացին թելաղբութիւններէն՝ ու մեր ապականեալ բնութեանը Վասուծոյ պատռական խօսամունկըներուն ու յայտնեալ ճշմարտութիւններուն գէմ յառաջ բերած աշխարհային փասերէն : Վասնք են մեր մեղքերը զգալուն ստուգութեանն՝ ու մեր հաւատքին անկեղծութեանը փորձերը :

իր կունակի բեռին պատճառաւը սկսեց տիղմին մեջն ընկղմիլ * :

Խօսքիպատճեու . Ա՞հ , Կրիստիանոս դրացիս , ուր ես դուն հիմա :

Քը իսուսի առաջնորդ : Երան որ ես ալ չեմ զիտեր :

Եսոր վրայ Խօսքիպատկողը նեղացաւ , ու բարկանալով իր ընկերին ըստ . Ա՞ս էր ան երջանիկութիւնը որուն վրայով այսափ առեն ինծի կը խօսէիր : Յաէ որ մեր առջի ձամրայ ելլելը այսպէս ձախորդ է , ի՞նչ բաներ յուսալու ենք մինչև մեր ձամրուն վերջը : Ո՞ւր էր որ կեանքա չկորանցուցած մերը դուքս ելլեի . իմ տեղս դուն ժառանգէ ան պատուական երկիրը : Աս ըստելով՝ բոլոր զօրութիւնովը մէկ երկու անգամ ջանք ըրսաւ , ու տիղմին մէջն դուքս ելաւ՝ փոսին ան կողմէն որ իր տանը մօտ էր . այսպէս առաւ քալեց , ու Կրիստիանոս՝ ալ զինքը չտեսաւ † :

Աւասի Կրիստիանոս Ահատութեան փոսին մէջ թաղլ-

* Բայց Խօսքիպատկողը ի՞նչպէս կրնար այս փոսն իյնալ , որ Աստուծոյ վրայով՝ կամ անոր օրէնքին՝ կամ իր անձին՝ կամ մեղքի վրայով՝ այնպէս դադասիարներ չուներ ինչպէս որ աս զիձակին մէջ իյնողը պիտի ունենայ : Եսոր այսպէս կրնայ պատասխան տրուիլ թէ մարդիկ երրոր բարեպաշտ անձանց հետ ընկերանան ու անոնց խօսքը՝ խստովանութիւնն ու դանդասը լսեն , կամ Առորք Գրոց մէկ մասին ծանօթանան , զրեթէ միտս իրենց անձին վրայ երկիւլալն ու տրտմազին բաներ կը գտնեն : Բայց պէտք է նկատենք՝ որ թէպէտ թէթեամիտ Խօսքիպատկողը Ահատութեան փոսն ինկաւ , բայց Կրիստիանոս իր բեռին պատճառաւը խորագոյն ընկղմեցաւ :

† Հերիք չէ Խօսքիպատկող ըլլալը . ինչու որ առջի պատահած փորձութիւնը իր եռամողը ցրտացուց՝ իր ուրանութիւնը դադրեցուց՝ իր հաւատը խախտեց , ու ես դարձուց զինքը Առքանանան Կատարը :

տըկելու մինակ մնաց + բայց տակաւին կը ջանար ու կ'աշ-
խատեր փոսին ան կողմն երթալ որ տունէն հեռու և ան
*Եեղ Դրանը մօտ կ'իյնար + : Աակայն թէ և այսպէս
կ'ընէր , բայց կոնակի բեռին պատճառաւը չկրցաւ տիզմին
մէջն դուրս ելել : Այս միջոցիս երազիս մէջ տեսայ որ
մէկն եկաւ իրեն՝ Օդնական անունով † , ու հարցուց իրեն
թէ Ենչ կ'ընես հոդ :

Տէր իմ՝ ըստ Վրիստիանոս , Նշետարանիւ անունով
մէկն ինձի հրամայեց որ աս Ճամբան երթամ , ու նաև
ուղղեց զիս ան տեղի *Եեղ Դրուը երթալու , որպէս զի
գալու բարիութենէն փախչելու կարող ըլլամ : Ես ալ
որ դեպ 'ի հոն կ'երթայի , այս տեղ ինկայ :

Օժաման . Բայց ինչո՞ւ համար ոոք դնելու աստիճան-
ները չնկատեցիր ‡ :

Վրիստիանոս . Աախն այնպէս կը հալածէր զիս , որ
կարճ ճամբէն շխտակ երթալով մէջն ինկայ :

Զեռքը ինծի տուր , ըստ Օդնականը , ուստի ձեռքն
անոր տուաւ , և ան զննքը դուրս քաշեց՝ ու հաստատուն
երկրի վրայ դրաւ , և հրաման ըրաւ որ իր ճամբան երթայ :
Առաջ . Են . 2 :

* Վրիստիանոս իր նեղութեանը մէջ տակաւին կը ջա-
նայ իր տունէն հեռանաւ : Տես ճշնարասապէս մեղքերը
ճանցող մեղաւորին ու չճանցող խօսքիսպառկող հաւա-
տայցեալին մէջ եղած տարբերութիւնը + մէկն իր երեսը
Վրիստոսի կը դարձնէ յօյս և օգնութիւն դանելու հա-
մար , միւսը Աործանման Վաղարք կը փախչի հանգստու-
թիւն գտնելու համար :

† Վրիստոսի ամենակարող շնորհաց թէել՝ ողորմելի
մեղաւորները ապականութենէ ազատելու կը համարի :

‡ Ոոք դնելու աստիճանները՝ Նստուծյ մէծ և պատուա-
կան խոստմանցներն են՝ որ Հիսուս Վրիստոսի միջնորդու-
թիւնովք՝ ողորմելի կարօտեալ ու տառապեալ մեղաւորնե-
րուն արուած են :

Աս ատենը ևս Քրիստիանութ տիղմնն հանողին քովը դացի ու ըսի . Տէր իմ , որովհետեւ Կործանման Քառաբլեն Կեղ Դուռն երթալու ճամբան աս տեղեն կ'անցնի , ինչու համար աս տեղը չընուիր , որ խղճալի ճամբորդներն ապահովութեամբ երթան հոն : Եւ ան ինձի պատասխան տուաւ թէ , Աս աղմալից փոսն այնպիսի տեղ մընէ որ չիրնար չնուուիլ : Ասիկոյ ցած տեղ մընէ , ու մեղաւորին ինքզինքը դատապարտեալ ճանշալին յառաջ եկած փրփուրն ու աղտեղութիւնը միշտ հոս կը վագէ . և անոր համար կը կոչուի Ա Հատութեան Փոս : Քանզի թէ և մեղաւորը իր կորսուած վճակն իմանալով արթըննայ ալ , իր սրտին մէջ շատ վախեր և երկրայութիւններ՝ ու զարհուրելի մասածութիւններ կը ծնանին , որոնց ամենը մեկ կ'ըլլան և այս տեղս կու գտն կը լնան . և ահա աս տեղին այսպէս դէշ ըլլալուն պատճառն աս է : Ծագաւորը հաճութիւն չունի որ աս տեղը դէշ մնայ : Եսոյ . լէ . 3 , 4 : Եր գործականները ևս՝ իր Տէրութեանը կառավարներուն կարգադրութիւնով հաղար վեց հարիւր տարին հետէ աս տեղիս վաս աշխատեցան , որ ըլլայ թէ անիկոյ շոկեն նորոգեն : Եւ իմ դիացածիս նայելով՝ աս տեղը քան հազար , մանաւանդ թէ միլիոնաւոր սայլի բեռ առողջարար խրատներ կլից , որ ծագաւորին սահմաններուն ամեն կողմերէն ամեն ատեն բերուեցան , (և անոնք որ այսպիսի գործքի վարպետ են՝ կ'ըսեն թէ , Ը ատ աղէկ նիւթեր են անոնք գետինը ամուրցընելու ու աղէկընելու ,) որ ըլլայ թէ աս տեղս չնուուի . բայց դեռ ատիկայ Ա Հատութեան փոս է , և ի՞նչ որ ընեն նոյնպէս պիտի մնայ * :

* Ասիկոյ կը նշանակէ թէ մեղանչական մարդուն անկեալ ընութեանը մէջ ուրիշ բան չկայ՝ բայց երկիւղ ու յուսահատութիւն : Երբոր յոյսերնիս մեր անձերուն վրայ

ՃՇմարիստ է՝ որ Օքենսդրին հրամանաւը մինչև անդամ տիղմին մէջուեղոյ քանի մը աղեկ և հաստատուն աստիճանն անը կան ուաք դնելու . բայց այնպիսի առեններն՝ որ աս տեղոյ իր աղաւեղութիւնը աւելի կը փսխէս որ միշտ եղանակի փոփոխութիւններուն * կը պատահի , աս աստիճանները հաղիւ թէ կը տեսնուին . կամ թէ որ տեսնուին ալ մարդիկ իրենց դլխուն դառնալովը քովանց կը կոխին , ու բոլորովին տիղմին մէջ կ'իջան , թէ և հօն աստիճաններ ալ կան . սակայն անգամ մը դռնին ներս որ մտնեն՝ ալ գետինը աղեկ է † :

Եսոր վրայ երազիս մէջ տեսաց որ հիմա Խօսքիպատկողն իր տունը հասաւ : Աւստի իր գրացիններն եկան զննըը տեսնելու , որոնցմէ ոմանք զննըը խելացի կը կոչէին ետ դառնալուն համար , և ոմանք յիմար կը կոչէին ՚Քրիստիանոսին հետ զննըը վտանգի մէջ ձգելուն համար : Աւրիշելն ալ իր վախիկոտութեանը համար վրան կը խնդային՝ ըսելով . Ենտարակոյս՝ ոյսովիսի բանի մը սկսելին ետև , ես չեի ուզեր այնչափ տկար երեալ քանի մը դժուարութիւններու համար : Եյսպէս՝ Խօսքիպատկողը ամշնալով անոնց մէջ նատաւ . բայց վերջը քիչ մը համարձակութիւն առաւ , ու ասկէ ետև ամենը մէկին իրենց

դրած ըլսանք , մեր ըրած ամենէն աղեկ բանը ԱՀասութեան փոսին մէջ կը թողու մեզ :

* Եղանակի փոփոխութիւնը ան առենները կը նշանակէն երբոր մասնաւոր փորձութիւններ մեղանչական կիրքերը զրգուելով նոր բարեպաշտութեան դարձողին միտոքը կը շնորհէն :

† ՚Պուռը Յիսուս ՚Քրիստոս մեր Տէրն է : Վմենելին չենք կրնար դանել աղեկ գետին՝ կամ ապահով ոտքի վրայ կայսիւ կամ հանդիսաւ քալել , քանի որ հաւատքով ՚Քրիստոսի ժառանդութեանը չենք մտներ , ու մեր հաւատքին հիմք ՚Քրիստոսի վրայ չենք հաստատե՞ր՝ որ Յաւիտենական ԱՀին՝ ու Յաւիտենական Եպաւելն է :

գրացը դարձուցին , ու սկսեցին Կրիստիանոսին և այլ նախառությունները : Եւ այսպահ հերիք ըլլոյ Խօսքիակառակողներ վրայով :

Հիմն Կրիստիանոս մինակ լոկնիրեն որ կ'երթար՝ հեռուն մեկը տեսաւ , որ դաշտին վրայէն կ'անցնէր գեղ 'ի իրեն կու դար . և այնպէս պատահեցաւ որ մեկը մեկ կողմն՝ ու միւսը միւս կողմն երթալու համար մեկմէկու ճամբան կտրած տեղերնին իրարու հանդիպեցան : Առ պարոնին անունն էր՝ Աշխարհիկ Խմաստուն . ինքը կը ընակէր Արամաւոր Ճարտարութիւն կոչուած քաղաքը , որ Կրիստիանոսին քաղաքին Ճիշդ քովը կ'իջնար : Ուստի աս մարդը Կրիստիանոսին հանդիպելով՝ ու անոր վրայով թեթե տեղեկութիւն մը ունենալով , Օքանզի Կրիստիանոսին Առծանման Կաղաքէն ճամբայ ելլելուն համբաւու շատ տարածուեր էր՝ չե թէ թէ միայն իր բնակած քաղաքին մէջ , հազար նաև սկսեր էր ուրիշ տեղուանք ալ հառարակութեան բերնին խօսքն ըլլալ) ու նաև անոր դժուարն քալուածքը տեսնելով , և հառաջանքն ու ասոնց նման բանեցը նկատելով ինչպէս մարդ ըլլալ քիչ մը հասկընալով այսպէս սկսեց Կրիստիանոսին հետ քիչ մը խօսակցութեան մանել :

Աշխարհիկ Խմաստուն , Բարե քեզ՝ մարդ , ուր կ'երթաս այսպէս բեռնաւորուած :

Կրիստիանոս . Խրաւ որ այնպէս բեռնաւորուած , որուն պէս չեմ կարծեր թէ բնաւ բեռնաւորուած էի խեղճ ստեղծծուածս : Բայց որովհետեւ կը հարցընես ինձի՞ թէ մ. ը կ'երթամ , քեզի ըսեմ՝ տէր իմ , որ աս իմ առջևս եղած նեղ Գուռու կ'երթամ . քանզի հոն ինչպէս որ ինձի զբուցուեցաւ , այնպէս ճամբու մը պիտի դրուիմ , որ իմ ճանր բեռէս աղատիմ :

Աշխարհիկ Խմաստուն . Դուն կին ու զաւկըներ ունիս :

Կրիստիանոս . Այս ունիմ , բայց այս բեռն տակն

այնպէս կը հեծեմ՝ որ չեմ կրնար առաջուան պէս յօժաւ բոլցիւն ունենալ անոնց վրայ . ինձի չունեցածի պէս կու զան անոնք : Ա Առքին . է . 29 :

Ավարձի Խմասոտան . Ընէ որ ես քեղի խրատ տամ , ինձի մոտիկ կ'ընե՞ս :

Դիրիսորիանու . Ընէ որ աղէկ խրատ ըլլայ՝ կ'ընեմ . ինչ չու որ ես ալ աղէկ խրատի կարօտութիւն ունիմ :

Ավարձի Խմասոտան . Ուրեմն քեղ կը խրատեմ՝ որ բոլոր ջանքով արտորաս դուն քեղ քու քեռեդ աղատելու . քանզի քու միտրդ ընաւ չկրնար հանդարտիլ մինչև ան ատենը . ոչ ալ Խսուծոյ քեղի տուած բարիքներուն օդուտը կրնաս վայելել , բայց միայն ան ատենը :

Դիրիսորիանու . Ես ալ այդ բանը կը վնասուիմ . այսինքն աս ծանր բեռեն աղատ ըլլալ . բայց չեմ կրնար ինքնիրմէս անիկայ ձեռէլ , ոչ ալ մեր քաղաքին մէջ մէկը կոյ որ իմ ուսերէս կրնայ վար առնել անիկայ . ուստի ինչպէս որ քեղի ըսի , աս ճամփան կ'երթամ՝ որ իմ բեռես աղատիմ * :

Ավարձի Խմասոտան . Ո՞վ քեղի ըսաւ որ քու քեռեդ աղատելու համար աս ճամփան երթաս :

Դիրիսորիանու . Ո՞եկ մարդ մը՝ որ շատ մէծ և պատուասոր մէկն երևաց ինձի : Ոխոքս կու դոյ որ իր անունն Աւետարանիւ էր :

Ավարձի Խմասոտան . Միիծեալ ըլլայ ան մարդը իր տուած խրատին համար : Աշխարհիս մէջ ասկէ առելի վտանգաւոր և դժուարին ճամփայ մը չկայ որ քեղ մէջը դրաւ . և շատ բաներու պիտի պատահիս , թէ որ անոր խրատովն երթաս : Իուն հիմնակուընէ բանի մը պատաւ

* Եեղ Դիրանը նշմարանկը՝ կամ Դիրիսատսի ձեռքը մէղաց բեռեն աղատելու աղօս տեսութիւնը մեղաւորին մէրժել կու տայ բոլոր ուրիշ ճամփաները , ու դէպ 'ի Դիրիսատս միայն յառաջ կը քւէ զանիկայ :

հեր ես, ինչպէս որ կ'իմանամ՝ քանզի կը նայիմ՝ որ Ահատութեան փոսին ցեխը վրադ է։ բայց այդ ցեխն առ ճամբան գացողներուն պատահելու թշուառութիւններուն միայն սկիզբն է։ Իս մարկ ըրէ, ես քեզմէ ծեր եմ։ դուն քու գացած ճամբուդ մէջ պիտի պատահիս նեղութեան՝ տառապանքի՝ անօթութեան՝ վտանգի՝ մերկութեան՝ սուրբի՝ առխւծներու՝ վիշտաներու՝ խաւարի, և մէկ խօսքով՝ մահուան, և ալ ինչը ո՞ւ։ Աս բաները անտարակոյս ճշմարիտ են՝ և շատ վիշտութիւններով հաստատուած։ Եւ մէկ մարդ մը ինչը համար անզգուշութեամբ բնօքինքը պիտի կորմացընէ օտար մէկուն խօսքը բռնելով։

«Բը իսպահանու։ Խ՞նչ կ'ըսես դուն՝ պարոն, իմ կռնաւիս բեռը այդ քու բսած բաներուդ բոլորէն ալ աւելի զարհուրելի է ինձի։ Ունաւանդ ինձի կը թուի որ հոգս չէ թէ ինչ բաներու կը պատահիմ ճամբուժ մէջ, թէ որ անոնց պատահելովս իմ բերէս ալ աղատիմ*։

Աշխարհի Խմապուան։ Բայց այդ բեռը ո՞ւսկէ քու վրադ առիր։

«Բը իսպահանու։ Աս իմ ձեռքիս զիրքը կարդալով։

Աշխարհի Խմապուան։ Ես ալ այնպէս կարծեցի և քեզի ալ ուրիշ տկար մարդոց եղածին պէս եղաւ, որոնք իրենցմէ վեր եղած բաներու ձեռք զարնելով յանկարծակի շիռթութեան մէջ կ'իյնան քեզի պէս։ Այսպէս շիռթութիւնները չէ թէ միայն տղայաւմիտ կ'ընեն մարդը՝ ինչպէս որ քուկդ կը տեմնեմ թէ քեզ բռաւ, հապա նաև անկարելի բաներու ձեռք զարնել կու տան անոնց՝ այնպէս բաներ ստանալու որ իրենք ալ չեն զիտեր։

* Այսպէս է նոր բարեկարասութեան դարձող Կը իսպահներին սրտին տրամադրութիւնը։

† Աշխարհի Խմապուանը չախորժեր որ մարդիկ Սուրբ Կիրքը կարդալու ժամանակ ըլլան։

Վիրիսողիանոս . Խս իմ՝ ստանալու բանս դիտեմ , որ է իմ ծանր ընուշ աղասութիւն :

Վահարձիկ Խմառագուան . Բայց ինչո՞ւ համար աս ճամբովին աղասութիւն պիտի վնասուես , տեսնելով՝ որ պյաչափ վտանգներ կան անոր մէջ . մանաւանդ որ ես (միայն թէ որ համբերութիւն ունիս խ մամիկ ընելու ,) կրնամ քեզի ստանդուրդել քու բաղձացածդ ստանալու , առանց ան վտանգներուն՝ որոնց որ դուն պիտի պատահիս աս ճամբուն մէջ : Վանաւանդ որ դարձնան ալ պատրաստ է : “ Յան աս ալ ըսեմ , որ ան վտանգներուն տեղը՝ ապահովութեան , և բերկրութեան ալ պիտի պատահիս :

Վիրիսողիանոս . Ա' աղաւեմ , պարոն , աս դաղմնիքն ինծի մելինէ :

Վահարձիկ Խմառագուան . Ըստ աղէկ . աս մօտն եղած գեղը՝ (գեղին անունը Տարեգործութիւն է ,) աղնուական մը կը ընակի՛ որուն անունը Օրինական է . ան շատ ճարտար և աղէկ անունի տէր մարդ է , որ քուկինիդ պէս ընուները մարդոց կոնակի՛ թեթեցընելու վարպետ է . ու իմ դիտցածին՝ ննցն աս ճամբովս շատ բարիք ըրած է . ու նաև դիսէ բժշկնել անոնք որ իրենց ընուներուն պատճառաւը մոգերնունը քիչ մը խելադարութիւն եկած է :

* Վահարձիկ Խմառագուանը աւելի կ'ընտրէ Տարեգործութիւնը՝ քան զմբիսառու , որ է ան Կեղ Դուռը : Վահարձիկ մարմինին տրամաբանութիւնն է : Վարմնաւոր միտրը միշտ կը հակառակի հոգեոր ճշմարտութեան : Վաստուծոյ օրէնքին բուն մեր հնապանդութիւն ընելովն արդարանալու կարծիքը միշտ հակառակ ներգործութիւնն մը կ'ընէ մեր ներսը , Վիրիսառոի բրած հնազանդութիւնովն արդարանալու ճամբուն : Ենձնական արդարութիւնը մարմինին ցանկութիւններուն տեղի տալու չափ հակառակ է Վիրիսառոի հաւատքին : Վահմինը՝ ամեարտաւանութեան

Վնոր կրնաս դուն երթալ ինչպէս որ ըսի , և խկոյն օգնութիւնն զտնել : Եթ տունն ասկէ լման մղն մը հեռու չէ . թէ որ ինք տունը քըլայ , պատուական պատանի մը ունի որ իր որդին է Կաղաքալարութիւն անունով՝ որ զըեթէ կրնայ ծերունի ազնուականին ըրածն ընել : Քեզի ըսեմ հոն կրնաս դուն բեռէդ ազատութիւն գտնել . ու թէ որ չես ուղեր քու առաջուան ընակարանդ դառնալ , (ինչպէս որ իրաւ ես ալ չեմ ուղեր որ դառնաս ,) կրնաս քու կինդու զաւկըներդ աս գեղը բերել տալ ուր որ հիմա պարապ կեցած են տուները , և որոնց մեկը կրնաս չափաւոր զնով մը վարձքով բռնել : Աւսելիքն ալ աժան ու աղէկ է հոն . և քու կեանքդ աւելի երջանիկ ընող բանն ան է որ դուն ան աւել բարի դրացիներու հետ հաւատարմութեամբ և աղէկ կերպով պիտի ապրիս :

Վա խօսքերուն վրայ Կրիստիանոսը քիչ մը տարակուասութեան մեջ ինկաւ , բայց իսկոյն իր մոքովն որոշեց որ , եթէ աս պարոնին ըսածը ճշմարիտ է խելացութիւնն անոր խրամը բռնելն է . և ասանկով իր խօսքն այսպէս յառաջ տարաւ :

Քրիստիանոս . Տե՛ր իմ , աս բարի մարդուն տունն երթալու ձամբանն ո՞րն է :

Ավագրձէի Խմատուան . Այստեսնե՞ս սա մօտն եղած բարձր լեռը :

Քրիստիանոս . Այո , շատ աղէկ :

Ավագրձէի Խմատուան . Վա լեռանը քովէն երթալու ես , և առջի տունն որ կը հասնիս , անորն է :

Այսպէս Քրիստիանոս իր ձամբէն դարձաւ պարոն Օրինականին տունը օգնութիւն առնելու համար երթալու * .

սպիտակ դեն է , երկրորդը՝ ապստամբութեան ու անհնաշ պանդութեան սև դեն է : Տե՛ս մարմինին տրամարանութիւններուն ականչ կախելու աշաւոր հետեանքները :

* Ասիկայ թշուառ խօսորում մը եղաւ իրեն . ինչու որ

բայց ահա երբոր աղէկ մը մօտեցաւ ան լեռանը , անանկ բարձր երեցաւ անիկայ , ու նաև ճամբուն մէկ կողմէն այնպէս դուրս ցցուած էր ճամբուն վրայովը , որ Վրիստի-անոս վախցաւ առաջ երթալու՝ որ չըլայ թէ լեռն իր գլխուն վրայ իյնայ + ուստի ան տեղը լոիկ կայնեցաւ և չէր գիտեր թէ ի՞նչ ընէ : “ Աաև հիմա իր բեռն աւելի ծանր կու զար իրեն քան թէ ճամբուն մէջ եղած ատենը : Ասկէ ’ի զատ կրակի բոցեր ալ կ'ելլէին լեռնէն , Եղիշ ժիշ . 16 . 18 , որ Վրիստիանոսը վախցուցին թէ պիտի այրի + ուստի վախէն արխին քրատինք մօտաւ և կը դողար : Եցր . ժիշ . 21 : Հիմա սկսեց զդաւալ որ Աշխարհիկ Խմաստունին խրատը բռնեց + և ասոր վրայ տեսաւ որ Եւետարանիքը դէպ ’ի իրեն կու զար , ու անիկայ ալ տեսնելուն ամշնալէն կարմիրցաւ : Այսպէս Եւետարանիչը քիչ քիչ մօտեցաւ , և իրեն համնելով խոժոռած ու զարհուրելի դէմքով մը անոր վրայ նայեցաւ * , ու այսպէս սկսեց խօսիլ Վրիստիանոսին հետ :

Աւետուրանիւ . Է՞նչ կ'ընես հոս , ով Վրիստիանոս , ըստաւ : Վրիստիանոս չէր գիտեր թէ աս խօսքին ի՞նչ պատասխան տայ + ուստի պատանձած կեցաւ անոր առջելը : Ետրը Եւետարանիչը նորէն հարցուց թէ , ‘ Դուն չե՞ս ան մարդը , որ Կործանման Վրաղաքին պարապին դուրսը քեզ դտայ ’ որ կու լսցիր :

իր փրկութեանը համար Վրիստիանի կատարած գործքէն իր բարի գործքերուն ու հնազանդութեանը դարձաւ , ինչպէս որ երբեմն Գրաղատացիք ըրին : Եսայց դուն նկատէ թէ ինչ է հետեանքը + Վրիստիանոս կը վախնայ թէ Աինայ Լեռը՝ այսինքն օրէնքին բոլոր զարհուրելի անէծքները իր գլխուն վրայ պիտի իյնան : Եղիշ ժիշ . 18 :

* Եւետարանիչը Աինա Լեռանը տակը կը դտնէ Վրիստիանոսը , ու խոժոռ դէմքով կը նայի անոր : Տեսմը Եւետարանին չհնազանդելուն վախնամը :

Վիրիսագիտնութեանու . Այսի , սիրելի տէր իմ , ևս իմ ան մարդը :

Սւեկապահնիւ . Ես քեզ ան եւեղ Դաւուն երթալու ճամբուն մէջ չորի :

Այս , սիրելի տէր , ըստ Վրիսատիանու :

Սւեկապահնիւ . Ուրեմն ինչո՞ւ համար այսչափ շուտով մէկդի դարձար . քանզի դուն հիմա ան ճամբէն խոտորեր ես :

Վիրիսագիտնութեանու . Այսառութեան Փոսն անցածիս պէս ազնուականի մը պատահեցայ , որ իմ խելքս պառկեցուց թէ սա առջևս եղած զեղին մէջ մարդ . մը կընամ գտնել՝ որ կրնայ իմ բնու մէկդի առնել :

Սւեկապահնիւ . Ե՞նչպէս մարդ եր ան :

Վրիսագիտնութեանու . Ազնուականի մը պէս կ'երեւար՝ * ու շատ բաներ խօսեցաւ ինձի , և վերջապէս զիս համոզվեց . ուստի հու եկայ . բայց երբ աս լեռը տեսայ , ու անոր ի՞նչպէս ճամբուն վրայովը դուրս ցցուիլը նկատեցի , իսկոյն կանկ առի , որ չըլլայ թէ դլսուս վրայ իյնայ :

Սւեկապահնիւ . Աս ազնուականն ի՞նչ խօսեցաւ քեզի :

Վրիսագիտնութեանու . Առաջ հարցուց թէ հւը կ'երթաս + ես ալ իրեն ըսի :

Սւեկապահնիւ . Յետոյ ի՞նչ ըստ :

* Պէտք է զգուշանալ , որ մարդիկ իրենց կերպարանն քրիզ չուստենք : Արնայ ըլլալ որ հեղ զառնուկներու պէս երեւան անոնք՝ բայց իրենց լեզուին տակը խժերու թոյն ըլլայ , որով շատ հողիներ ապականեն վեսասակար մոլորու թիւններով ու չար հերետիկոսութիւններով . և ասան կով՝ Վրիսատոսէն ու միայն անոր միջնորդութեամբը եղած կատարեալ արդարութեան ու յաւիտենական կենաց յոյսէն դարձընեն , իրենց փրկութեանը համար բոլորովին կամ ըստ մասին բուն խել իրենց դորձքերուն նայելու և ապա բնիլու :

ՎՐԴԱՏԵՐԻ առաջնորդութեան մասին ։ Հարցուց թէ ընտանիք ունի՞ս ։ ևս ալ զբուցեցի իրեն ։ Իսպա իմ կրնակիս բեռքն տակն այնպէս կը հեծեմ՝ ըսի, որ չեմ կրնար առաջուան պէս յօժարութիւն ունենալանոնց վրայ ։

Աւելիութեանին ։ Աւելի ետև ի՞նչ խօսեցաւ ։

ՎՐԴԱՏԵՐԻ առաջնորդութեան մասին ։ Ինձի հրամանցեց որ բոլոր ջանքովս աշխատիմ իմ բեռէս աղաստելու ։ ևս ալ ըսի թէ իմ վնասածս ալ աղաստութիւն գտնել է ։ Ու նաև ըսի թէ աս պատճառաւան ան Կեղծ Դաւուը կ'երթամ ։ որ հոն սորպիլում թէ ինչպէս կրնամ աղաստութեան տեղը հասնիլ ։ Ուստի ըստ ինձի թէ ինք անկէ լսու և կարճ ճամբայ մը պիտի ցուցընէ ինձի ։ որուն մէջ այնչափ դժուարութիւններ չկան ինչպէս ան ճամբուն մէջ ուր որ տէր իմ ։ դուն զիս դրիբ ։ Եւ ըստ թէ աս ճամբան զիս մէկ աղնուականի մը տունը պիտի հասցընէ ։ որ շատ վարպետ է աս բեռները մէկդի առնելու ։ այսպէս ես ալ իրեն հաւատացի և ան ճամբէն աս ճամբան դարձայ ։ որ ըլլայ թէ ժամ մը առաջ իմ բեռէս աղաստիմ ։ Իսպա երրոր հոս եկոց և եղած բաները տեսայ ։ (ինչպէս որ ըսի) վտանգէն վախճաւուս կանկ առի ։ և հիմա չեմ զիտեր թէ ի՞նչ ընեմ ։

Վե ատենը Վւետարանիչն ըստ ։ Հանդարս կիցիր քիչ մը որ Վստուծոյ խօսքերը քեզի ցուցընեմ ։ Ուստի Վրինատիանոս դողլալով կայնեցաւ ։ յետոյ Վւետարանիչն ըստ ։ “Օգուշացէք քըլլայ որ մերժէք զանիկայ որ ձեզի կը խօսի ։ վասն զի թէ որ անոնք երկրի վրայ Վստուծոյ պատղամները խօսողը մերժելով չաղատեցան ։ որչափ աւելի մենք թէ որ երկինքէն խօսողէն երես դարձնենք” ։ Եբք ։ ժք ։ 25 ։ “Եւաե ըստ ։ “Վրդարը հաւատի՛ն պիտի ապրի ու թէ որ մէկը ետ քաշուի ։ իմ հողիս անոր չհաձիր” ։ Եբք ։ ժք ։ 38 ։ Եւ աս խօսքերն աս կերպով անոր վրայ դարձուց Վւետարանիչը ։ դուն ան մարդոն ես որ թշուառութեան մէջ իյնալու կը վաղես ։



Դաւն սկսեցիր Ամենաբարձրեալին խորհուրդը մերժել ,
և քու ոտքը խաղաղութեան ճամփեն ետ քաշել . մինչեւ
որ մաղ մնաց պիտի կործանէիր * :

Հիմա Քրիստիանոս մեռելի պէս անոր ուրին բնկաւ
կանչելով . Այց ինձ , քանզի կորսուցայ : Աս որ տե-
սաւ Եւետարանիչը՝ անոր աջ ձեռքեն բռնեց և ըստ .
“ Ամեն մեղքու հայհոյութիւն պիտի ներուի մարդոց ” :
Մատթ . Ժր . 31 : “ Ո՞ր ըլլար անհաւաս , հապա հա-
ւատացեալ ” : Յով . ի . 27 : Ան ատենը Քրիստիա-
նոս նորէն քիչ մը գօրացաւ , և առաջուան պէս դողալով
Եւետարանիչին առջեւ կայնեցաւ † :

Խորը Եւետարանիչն իր խօսքը յառաջ տարաւ ըսե-
լով . Օգոյշ կեցիր որ քեզի ըսելու բաներս աղելի միտք
առնես : Հիմա պիտի ցուցընեմ քեզի թէ ով էր ան որ
քեզ խարեց , և ով էր ան որուն որ քեզ խրկեց : Ան
քեզի պատահող մարդը Աշխարհիկ Խմաստուն կ'ըսուի , և
անիկայ իրաւամբ այսպէս կոչուած է . քիչ մը միայն աս
աշխարհիս վարդապետութեանը համն ունենալուն համար ,
այ Յով . դ . 5 , որ նոյն պատճառաւն ալ Բարեղործու-

* Տե՛ս թէ ո՞րքափ վտանգաւոր է արդարանալու և յա-
ւիսենական կենաց համար Քրիստոսի հաւատալին , քիչ
մը անդամ մեր զործքերուն ապահնիլու : Օգոյշ կե-
ցիր օրէնքին վարժապետութեանը համն ունենալուն համար ,
այ Յով . դ . 5 , որ նոյն պատճառաւն ալ Բարեղործու-

† “ Եկատէ մեղաւորներուն վրայ եղած աւետարանական
չնորհաց փառքը , տե՛ս Քրիստոսի պանչելի սէրը մեղաւ-
որներուն համար մեռնելով : Միարդ բեր թէ Քրիս-
տոս ի՞նչ զնով ստացաւ քու մեղքերուդ թողութիւնը , իր
ամենապատուական արխւուզը , ու ոչ թէ մեկ չնշն բա-
նով մը : Հաւատաւ անոր պանչելի սիրոյն . ուրախացիր
անոր փառաւորեալ փրկարդութեանը վրայ : Վոր
սիրոյն մէջ և անոր առջւն ապրէ քու մեղքերդ ատելով՝ ու
խօսարհ մնըով :

թեւան գեղը միշտ եկեղեցի կ'երթայ , և .քիչ մ'ալ որ ան վարդապետութիւնն ամենէն աղջկ կը սիրէ , քանզի անիւ կայ զինքը խաչէն կ'ազատէ : Գառղ . ղ . 12 : Եւ քանզի նոր աս մարմնաւոր բնաւորութեան տէրն է , անոր համար կ'ուզէ որ իմ ձամբաներս խանդարէ , թէ և անոնք ուղիղ են : Հիմա աս մարդուն տուած խրատին մեջ իրեք բան կայ , որոնք պէտք է որ բոլորովին ատես :

Եռաջին՝ Շամբեն քեզ դուրս հանելը :

Երկրորդ՝ Խաչը քեզի ձանձրալի ցոցընելու աշխատիցը²

Եղբայրող՝ միտք սարգելող մաշնուան Տառիլուան մէջ դնեւ

“Յախ . Ճ'ամբէն քեզ դուրս հանելը , և մանաւանդ
քու անոր հաճութիւն տալը պէտք է որ ատես : Կ'անզի
ասիկայ՝ Աշխարհիկ Խմաստուն մարդու մը խրատին համար
Սատուծց տուած խրատը մերժել է : Տէրը կ'ըսէ թէ ,
“Ք'անիք ըրէք որ “Յեղ Դանէն մանէք” , Ղում : Ժդ .
24 : որ իմ քեզ խրկած դուռս է ան : “Խնչու որ նեղ
է ան դուռը որ դէպ 'ի կեանիք կը տանի , և քիչոր Են
անոնք որ զանիկաց կը զանեն” : Այսու . է . 13 , 14 :

* Հողին մինչև որ մեղքին չարութիւնը չհանձնաց , ու օրինականին վարդապետութիւնը կամ արդարանալու համար բոլորովին կամ ըստ մասին բարեգործութիւններուն յուսանը ու ապահնիլը մերքէ , աւետարանական միջիւթարութիւնը չկրնար վայելը : Օգոյշ կեցիր օրինականին հետ բանի խառնութելու , որ չըլայ թէ առաջ չնորհքով արդարանալ որ սկսեցիր յետոյ գործքով արդարանալու նոյիս . ինչու որ ասիկայ չնորհքն ու գործքը մեկտեղ խառնել է , մեր անարդ անձերը բարձրացընելու ու պատռական բըհստոսն ու անոր փառաւոր արդարութիւնը անսպատիւ ընելու : Աս գարւելք սխալունքը մեծապէս տարածուած է հիմակու ատենա :

Վա անօրէն մարդը քեզ փոքրիկ կեղ Դրսնէն ու անոր երթալու ճամբէն դարձուց , ու դրեթէ կործանման հասացուց քեզ + ուրեմն անոր քեզ ճամբէն դարձընելը ատէ , և քու անձեղ ևս զգուե՞ որ անոր մակիկ ըրիր :

Երկրորդ + Խաչք քեզի ձանձրալի ցուցընելու համար իր աշխատիլը պէտք է որ ատես . քանզի դուն անիկայ Եղիսպասի դանձերէն աւելի յարդելու ես : Եթէ + ժա . 25 , 26 : Անաւանդ որ փառաց ճապաւորը քեզի զբուցեց՝ թէ ով որ իր կեանքն աղատել կ'ուզէ պիտի կորսնցընէ անիկայ : Եւ ան որ անոր ետեւէն կ'երթայ՝ ու իր հայրը , մայրը , կինը , զաւկըները , եղացըները , քցրերն ու իր կեանքն ալ չատեր , չկրնար անոր աշակերտը ըլլալ : Այսք . կ . 8 . 38 : Յովէ + ժի . 25 : Անդի . ժ . 39 : 'Կառք . ժի . 26 : Աւատի քեզի ըսեմ՝ որ եթէ մէկը աշխատի քեզ համոզելու թէ ան յաւիտենական կենաց հասցընող բանը մահուան պատճառ պիտի ըլլաց քեզի , ան վարդապետութիւնն ատելու ես :

Երրորդ + Քու ոտքերդ մահուան ճամբուն մէջ դնելն ատելու ես : Եւ աս բանիս պատճառաւուը մամուալու ես թէ քեզ որու խրկեց , և ան մարդը նրչափ անկարող է քեզ քու բեռեղ աղատելու :

Են մարդը՝ որուն որ խրկուեցար աղատութիւն գտնելու համար , Օրինական կը կոչուի , և աղախինին որդին է , որ հիմա իր զաւկըներուվը ծառայութեան մէջ է , Գառա . կ . 21-31 , ու խորհրդարար աս Անաց լեռն է որմէ վախցար թէ զիլուուդ վրայ պիտի իյնայ : Արդ՝ թէ որ նարն իր զաւկըներուվը ծառայութեան մէջ է , ի՞նչպէս կրնաս յուսալ որ անոնցմէ աղատութիւն գտնես : Աւատի աս Օրինականը կարողութիւն չունի քեզ քու բեռեղ աղատելու : Անչև հիմա անոր ձեռքովը բնաւ մէկը չկրցաւ իր բեռէն աղատիլ , ոչ ալ բնաւ հսար է որ այսպէս բան մը ըլլաց . դուք օրէնքին դործքերովը չէք կրնար արդարաւ :

նալ քանզի օրէնքին գործքերովը մէկ մարմին մը իր բեռէն չկրնար աղասիիլ : Ուստի պարս Աշխարհիկ Խմաստունն օտարական մէկն է , և պարս Օրինականը խարերայ մըն է : Եւ անոր որդին Քաղաքալարութիւնը՝ թէպէտ . և ծիծաղերես կ'երևայ , բայց ուրիշ բան չէ հապա կեղծաւոր մը , ու չկրնար քեզի օգնել : Հաւատան ինծի՞ որ աս ցնորեալ մարդոցմէն լսած բոլոր բարբանջմունքիդ մէջ ուրիշ բան չկայ՝ հապա իմ՝ դրած ճամբէս քեզ դարձնելով քու գրիկութեանէդ քեզ դաստարկ հանել է իրենց դիտաւորութիւնը : Ասկէ ետեւ Վւետարանիւը բարձր ձայնով մը աղաղակեց դէմ 'ի երկինքը , որ իր ըսածներուն հաստատութեանը համար նշան մը ցուցուի . և ասոր վրայ՝ այնպէս խօսքեր ու կրակ ելան ան լեռնէն՝ որուն տակն որ ողորմելի Կրիստիանոսը կայներ էր , որ անոր մարմիննին մազերը կայնեցուցին : Մն խօսքերն այսպէս զբուցուեցան . “ Մասնք՝ որ օրէնքին գործքերէն ևն՝ անէծքի տակ ևն . ինչու որ զրուած է թէ Միհծեալ բլայ ամէն մարդ՝ որ օրէնքին դիլքը ամէն զրուածներուն մէջ չկրնար որ զանոնք կատարէ ” * : Գառզ . դ . 10 :

Հիմա Կրիստիանոս ուրիշ բանի յօյս չունէր՝ բայց մահուան միոյն , ու սկսեց ողբայի ձայնով մը լուլ . և Աշխարհիկ Խմաստունն իր դէմն ելած ժամը կ'անիծէր , ու հազար անդամ՝ յիմար կը կոչէր ինքզինքը որ անոր խրատին ականչ դրաւ : “ Ետեւ մեծապէս կ'ամշնար , մուա-

* Օրինականութիւնն անառակութեան պէս մեծ թշնամի մըն է Կրիստոսի խաչին , ինչու որ արգելք կ'ըլլայ հոգւոյն՝ որ թողութիւն գտնելու համար Կրիստոսի արխէնին՝ ու արդարանալու համար՝ Կրիստոսի արդարութեանը դիմէ ու հաւատայ և բոլըրովին ապաւինի . անանկ որ՝ հողին գերութեան վիճակի մէջ կը պահէ , ու միաբը ամրարտաւանութիւնով կը փքացընէ . բայց անառակութիւնը խաչին վրայ նախատինք կը բերէ :

ծելով որ ան սպարոնին խօսքերը՝ որ միայն մարդինէ յառաջ և կած էին, այնչափ ուժգին ներդործած ըլլան իրեն՝ որ պատճառուն շխտակ ճամբան ձգել : Աս բաներէն ետև նորէն սկսեց Վւետարանիչին հետը խօսակցիլ ոս հետեւալ կերպով :

«Քրիստոնեան ։ Տէ՛ք իմ, ի՞՞նչ կը կարծես, արդեօք յօյս կայ ։ կընամ հիմա ետ դառնալ ու ան ։ Աեղ ՚Իուռն ելլել : Արգեօք աս իմ ըրածիս համար երեսէ պիտի չձգուի՞մ, ու ամօնթով պիտի ետ չնրկուի՞մ անկէ : Աը զոջամ որ աս մարդուն խրատին մտիկ ըրի ։ բայց արդեօք իմ մեղքիս թռողութիւն կ'ըլլայ :

Պատասխան տուաւ Վւետարանիչն ըսելով իրեն ։ Վու մեղքով շատ մեծ է, ինչու որ գուն անով երկու շարիք զործեցիր : ՚Իուռն աղջէկ ճամբան ձգեցիր, որ արզիեւալ ճամբաներուն մէջ քալեն : Աակայն և այնպէս ան դուռը կեցող մարդը կ'ընդունի քեղ, քանզի ինքը մարդոց բարիք կը կամի ։ միայն թէ զցոյլ կեցիր՝ որ նորէն ալ չխոսորիս, որ չըլլայ թէ «Ճ'ամբուն մէջ կորսուիս, երբոր անոր բարիութիւնը քիչ մը բորբոքի» : Առաջ ։ ը ։ 12 ։ Ան ատենը «Քրիստիանոս պատրաստուեցաւ ետ դառնալու, ու Վւետարանիչը զինքը պատնելէն ետև՝ երեսն ի վեր ժպանցաւ, և բարի յաջողութիւն մաղթեց : Վայպէս Կրիստիանոս սկսեց արտորնօք առաջ երթաւալ ։ ոչ ինք ճամբուն վրայ մէկուն բան մը խօսեցաւ, ոչ ալ թէ որ մէկը բան մը հարցընէր իրեն՝ պատասխան կ'ուղէր տալ : Վայաջ կ'երթար իրքն այնպէս մէկ մարդ մը որ ոտք կոխելու արդ դիլուած գետնի վրայ կը քալէ միշտ, և մէկ կերպով մը ազատ ազահով չէր կարծեր զինքը՝ մինչև որ նորէն եկաւ ան ճամբան հասաւ որն որ Վշխարհիկ Խմնատունին խրատին հետեւելով ձգեր էր : Վասնկով՝ ատենէ մը ետև ան ։ Աեղ ՚Իրանը քովին ելաւ : ՚Իրանը վրայ զրուած էր՝ «՚Իուռը զարկէր, և պիտի բայցուի ձեզի» : Առաջ ։ է ։ 7 ։

Ա ասն որոյ ՚Քրիստիանոս մէկ երկու անդամէն աւելի դուռը զարկաւ՝ * ըսելով .

Երդեօք կը բանայ դուռն ու կ'ընդուռնէ՝
Երբեմն ապատամէ՛ ու միշտ անարժան
Որ հոն անդադար իր մեծ սէրն դովի՛
Ու իր սուրբ անունն օքնէ իմ ըերանս :

Ա երջապէս մեծաբու մարդ մը դուռն եկաւ՝ որուն անունը նը խարեկամնեթիւն էր , ու հարցուց թէ ով է ան , և ուրկէ եկած է , և ի՞նչ կ'ուղէ :

՚Քցիստիանոս . Ե՛հա ողղորմելի բեռնաւորուած մեղասոր մը + որ Աործանմնն ՚Քաղաքէն եկայ , բայց Աիօն լւոր կ'երթամ՝ որ գալու բարկութենէն ազատ մնամ : Ուստի Տէր իմ , որովհետեւ տեղեկացած եմ՝ թէ հոն Երթալու ձամբան աս դոնէն է , կ'ուղիմ խմանալ թէ կը կամի՞ո զիս ներս առնել :

Հոոլոր սրտով կը կամիմ † , պատասխան տուաւ ծերունին , և ան խօսքովը դուռը բացաւ : Երբոր ՚Քրիստիանոս ներս մտնելու վրայ էր , մարդն արտորնոք քաշեց անի-

* Մէկ երկու անդամ՝ դուռը զարնելը կը նշանակէ հաւատքով յաճախ աղօթել ու աղաւել Վստուծոյ՝ որ Յիսուս ՚Քրիստոսի արիւնին միշտորդութիւնովն ողղորմի ու թողութիւն շնորհէ մեղքերուն :

† Աիրուը կոտրած մեղաւորներուն կը բացուի դուռը : Տե՛ս աս տեղ Յիսուսի սէրը՝ թէ իրեն դիմող ամէն խեղճ մեղաւորները ինչպէս յօժարութեամբ ու սրտանց կ'ընդունի : Հոդ չէ անոնց ո՞րչափ անարդ բլալը , ոչ ալ անոնց ինչ մեղքեր գործած բլալը . յօժարութեամբ կը սիրէ ու բարեղթութեամբ կ'ընդունի զանոնք , ինչու որ բարեհանութենէն ուրիշ բան չունի անոնց վրայ : Անոր համար երկնից զօքքերն իր ծննդեանը կ'երգէին “ Պարզիկներուն հաճութիւնն ” : “ Եւակ + լի + 14 :

կայ * : Վրիստիանոս հարցուց թէ , ի՞նչ կը նշանակէ
առ ըրածդր : Պատասխան տուաւ իրեն միւսը . Աս դոնէն
քիչ մը հեռում մէկ ամուր պարիսպ մը շինուած է , որուն
տէրը նէնզղերուղն է . անիէ թէ ինք և թէ իր ընկերները
առ գուռն ելլողներուն վրայ նետեր կը նետեն , որ ըլլայ թէ
ներս շմած մեռյընեն զանոնք : Ան ատենը Վրիստիա-
նոս ըսաւ . ԱՌՈՐԱԽԱՆԱՄ և կը դողամ ես . այսպէս ներս
մանելէն ետե դրանը պահապանը հարցուց իրեն՝ թէ ով-
զինքը հոն խրկեց :

Վրիստիանոս . Եւետարանիչը հրամայեց ինձի որ հոս
դամ և գուռուր զարնեմ , ինչպէս որ ըրի ալ . և ըսաւ թէ
դուն պիտի զրուցես ինձի տէր իմ , թէ ի՞նչ ընելու եմ :
Բարիկամութիւն . Վեկի բաց գուռ մը կայ քու առջեղ ,
և մէկը չկրնար զոցել անիկայ :

Վրիստիանոս . Հիմա կը սկսիմ իմ քաշածներուս պատու-
ղը քաղել :

Բարիկամութիւն . Դայց ի՞նչպէս եղաւ որ դուն մինակ
ելոր :

Վրիստիանոս . Վայր համար որ իմ դրացիներուս մէկն
ալ իր փոանզը չտեսաւ , ինչպէս որ ես իմա տեսայ :

Բարիկամութիւն . Վըդեօք անոնցմէ մէկը քու գալը
իմացմէ :

Վրիստիանոս . Այս , առաջ իմ կինս և զաւկըներս
տեսան , ու ետեւս կանչեցին որ ետ դառնամ . նաև
դրացիներէս մէկ քանին ալ կայներ ետեւս կը դոչէին ու
կը կանչելին որ դառնամ . բայց ես մատնելոս ականջներուս
դրի , և այնպէս իմ ճամբաս եկայ :

Բարիկամութիւն . Դայց անոնցմէ մէկն ետեւդ չեկամ ,
որ խելքդ պառկեցընէ քեզ ետ տանելու :

* Եւրաքանչիւը փրկեալ մեղաւոր Վրիստոսի մարդառէր
ձեռքովը կը ականջն հանուած խանձած վայտ մըն է :

ՎՐԺԻԽՊՀԻԱՆՈՒ • ԱՆՅԱ • ԱՂԲԱՏՊԼՈՒԽԱՆ ու Խօսքիապառկողը
եկան • բայց երրոր տեսան թէ չկըցան յաղթել , ԱՂԲԱ-
ՊԼՈՒԽԱԾ ծաղրաբանութեամբ ես դարձաւ , ու Խօսքիապառ-
կողը հետո քիչ մը տեղ եկաւ :

Բարդիխոմութիւն • Բայց ինչո՞ւ բոլոր ճամբան հետդ-
շեկաւ :

ՎՐԺԻԽՊՀԻԱՆՈՒ • Երաւ երկր ոքս մեկտեղ մինչեւ ԱՀատու-
թեան վուսն եկանք , և յանկարծ անոր մեջն ալ ինկանք :
Բայց ան ատենը Խօսքիապառկող զբացւոյս սիրտը կոտրե-
ցաւ , և չուզեց որ ալ աւելի յառաջ երթաց * : Ուստի
իր տանը մօտ բնիկած կողմէն նորէն գուրս ելլելով ըսա-
թէ Են պատուական երկիրն իր տեղը մինակ ես ժառան-
գեմ : Անյալես ինքն իր ճամբան զնաց , ու ես իմ ճամ-
բան եկայ , ան ԱՂԲԱՏՊԼՈՒԽԻՆ ետեէն , ու ես զէալ 'ի առ
դուռը :

Բարդիխոմութիւն • Ափսոս , խոշալի մարդ . երկնաւոր
փառքն պյաչափ քիչ յարզութիւն ունի իր քովը , որ
արժան չնեղեր քանի մը դժուարութիւններ քաշելով անի-
կայ ստանալու :

Յիրաւի Խօսքիապառկողին վրայ Ճշմարիտը խօսեցայ ,
ըստ ՎՐԺԻԽՊՀԻԱՆՈՒ • և թէ որ իմ վրայովս ալ Ճշմարիտը
խօսիմ , պիտի երեայ որ անոր և իմ մեջս մեկ զերազան-
ցութիւն մը չկայ : Երաւ ինք ես դարձաւ իր տունը
զնաց , բայց ես ալ մահուան ճամբան երթալու խոտորե-
ցայ , պարոն Աշխարհիկ Խմանուուն ըստած մեկու մը մարմ-
նաւոր խօսքերուն ականչ կախելով † :

* Անկ մարդ մը երկինք երթալու ճամբաց ելլելուն՝ կո-
րելի է որ ընկեր ունենայ , և սակայն ինք մինակ հոն երթաց :
“ Ամենչուածները շատ են , բայց ընտրուածները քիչ ” :
Առաջն . ի . 16 :

† Երբոր մեկուն սրտին մեջ Ճշմարիտ ընորհքը թագա-
ւորէ , խոնարհութեամբ բոլոր փառքը Վասուծոյ զերա-

Բարդիտաւութեան . Ե՞նչ կ'ըսես , անիկայ քեղի պատաշեցաւ . ան ուզած պիտի ըլայ որ դուն պարոն Օրինականին ձեռօքն ազատութիւն վնասուս : Վասնք երկուքն ալ խարերայ են . բայց դուն անոր խրատը բռնեցի՞ք :

«Քէտագիտանու . Այժմ բռնեցի , որչափ որ կըցայ համարձակիլ . ճամբէս դարձայ պարոն Օրինականը գտնելու , և այնչափ գացին մինչեւ որ մտածեցի թէ անոր տանը քովին մնկած լեռը դլխուս պիտի փլչէր . ուստի հոն ստիպուեցաց կանկ առնելու :

Բարդիտաւութեան . Առ լեռը շատերուն մահուան պատճառ եղաւ , և ուրիշ շատերուն ալ մահուան պատճառ պիտի բլայ . աղէկ որ անոր քեզ կտոր կտոր ջախչախուէն ազատուեցար :

«Քրիստովանու . Արդարեւ չեմ զիսեր թէ ինչ պիտի ըլւար ինծի ան տեղը , թէ որ բաղզոս բանելով տքամնութիւններուս մէջ վարանած ատենս , Վեւտարանիք նորէն չպատահէր ինծի : Բայց Սատուծոյ ողորմութիւնն էր՝ որ ան նորէն եկաւ , ապա թէ ոչ բնաւ հոս դալիք չունեի ես : Աակայն հիմնա այնպիսի մէկու մը պէս եկայ , որ իրաւ որ աւելոք արժանի էի որ ան լեռը դիս մնոցընէր , քան թէ այսպէս իմ Տէրոջս հետ խօսելով աս տեղս կանցնէի : Բայց հհ , ինչ մեծ շնորհք է աս ինծի , որ տակաւին թոյլուութիւն կայ հոս մննելու * :

Պոյն շնորհացը պիտի ընծայէ իր ուրիշներէն տարբերութիւնն մը ունենալուն համար : Վատուծոյ շնորհքը սրտին ամբարտաւանութիւնը կը սպաննէ ու մեղաւորը կը խոնարհեցընէ , և նոյն ատենը կը բարձրացընէ գիրիսատոս , ու անոր արդարութիւնովն ու փրկութիւնովը յաղթող գանուիլ կու տայ մեղաւորներուն :

* Ենորհաց ճշմարիտ դործին յայտնի նշանն ան է որ սիրան ամէն բան շնորհքին ընծայէ : Ճշմարիտ հաւատացեալը Վատուծոյ շնորհքը հաւատարմութեամբ կը գոր-

• Խարբեմութիւն . ՄԵԿ մէկու մը դէմ չեղ կենար . ամէն անոնք որ բոլոր իրենց առջի բաածներնուն եաւ հյու կու գան , բնաւ դուրս շնն ձզուիր : Յակա էլ . էլ . 37 : Ուստի՝ բարի՝ Վրիստիանոս , իմ հետո քիչ մը տեղ եկոր , ու ես քու երթալու ճամբուղ վրայով քեզ տեղեւ կացընեմ : Առջև դ նայէ , սա նեղ ճամբան կը տեսնե՞ս : Աչա ատ է քու երթալու ճամբաղ : ‘Ա, ահապետները՝ Վարդարէները՝ Վրիստոս և առաքեալներն ատ ճամբէն դացին . ու անիկայ քանոնով շինուածի պէս շիտակ է . ահա աս է քու երթալու ճամբաղ :

Դայց հոն դարձուածներ ու պատշաճներ չկա՞ն արդեօք , որոնցմով օտարական մէկն իր ճամբան կորսնցընէ * , հարցուց Վրիստիանոս :

Խարբեմութիւն . Այս , շատ ճամբաներ կան որ ասոր կը խառնուին և անոնք ծուռ են ու լայն . բայց դուն կընաս ու զիդ ճամբան ծուռէն այսպէս որոշէլ , որ ուղիղը շիտակ ու նեղ է : Վատիլ . է . 14 :

Աս խօսերուն վրայ երազիս մէջ տեսայ որ Վրիստիանոս նաև հարցուց՝ թէ արդեօք իր կոնակի բեռէն կընա՞յ թէ եւ թէցընել զինքը : Վանդի դեռ չէր ազատեր անիկ , և առանց օգնութեան ալ մէկ կերպով մը չէր կընար ազա-

ծածեմ ըսելով չպարծենար . իր ազատ կամբին կամ կամ բողութեանը բան մը չընծայեր , հապա իր կործանմանէ ազատին ու տակաւին փրկութեան ճամբուն մէջ ըլլալը բոլորովին Աւետարանական չնորհաց՝ Աստուծոյ ողորմութեանը և անոր ձրի պարզեին ու ամենակարող զօրութեանը կ'ընծայէ : Անուշ բան է մոտածել թշուառ ու անարժան մէղաւորներուն Հիսուսի ձրի պարզեած չնորհացը վրայ : Ընթերցող՝ դուն ալ այսպէս չէ՞ս դտներ :

* Վրիստիանոս կը վախնաց որ ճամբան չկորսնցընէ , ասիկայ՝ չնորհազարդ սրտի մը երջանիկ նշանն է , որ իր անձին վրայով միշտ երկիւղի մէջ է :

տիւ : Մարդը պատասխան տուաւ թէ , պաւ բեռիդ վրայով , պէտք է որ համբերես մինչև որ աղատութեան տեղը հասնիս * . քանզի հոն՝ անիկայ նորնիրեն քու կոնաւ կէդ կ'իյայ :

Ան ատենը Քրիստիանոս սկսեց մէջքն ամու ըցընել , ու իր ճամբորդութիւնն ընելու պատրաստուիլ : Այսպէս միւսն իրեն զբոցեց թէ գոնին խել մը հեռու երժաւէն ետեւ Անկնիչն տունը պիտի հասնի . պէտք է որ անոր դուռը զարնէ , ու ան պատուական բաներ պիտի ցուցընէ իրեն : Ան ատենը Քրիստիանոս Անսաս բարով ըստ իր բարեկամին , և ան ալ բարի յաջողութիւն մաղթեց իրեն :

Ուստի յառաջ զնաց ինք՝ մինչև որ Անկնիչն տուննեկաւ † , ուր որ կրկն և կրկն զարկաւ դուռը : Աշքը մէկն եկաւ դուռը , և հարցուց թէ ո՞վ է ան :

Քրիստիանոս . Տէր իմ , Ճանապարհորդ մըն եմ , որ զիս աս տանը տիրոջը մէկ բարեկամը խրկեց հոս՝ իմ օդուտիս համար . անոր համար տանտիրոջը հետ կ'ուզեմ խօսիլ :

Ուստի մարդը կանչեց տանտերը՝ որ քիչ մը ատենէն ետեւ Քրիստիանոսին եկաւ , և հարցուց անոր թէ ի՞նչ կ'ուդէ :

Տէր իմ , ըստ Քրիստիանոս , ես մէկ մարդ մըն եմ՝ որ Կործանման Քաղաքէն կու դամ ու Սիօն լեռը կ'երածամ . և աս ճամբուն զլուխն եղած դուռը կայնող մարդն ինձի ըստ որ եթէ հոս զամ , դուն ինձի այնպէս պատուական բաներ պիտի ցուցընես՝ որ անոնք ինձի օդուտ պիտի ընեն իմ ճամբորդութեանս մէջ :

* Վիայն Քրիստոնի մահովն ու արհնեովը յանցաւորութենէ ու մեղաց բեռէն աղատութիւն կը ստացուի :

† Քրիստիանոս կու դայ Անկնիչն տունը , որ կը նշանակէ Առարք Հոգին՝ Սատուծոյ Ժողովուղոյն ուսուցիչը :

Վն ատենը Վիեկիչն ըստ ։ Կերս եկոր , և քեզի օդակար եղած բաները ցուցընեմ * : Այսպէս տանուերն իր ծառային հրաման ըստ որ ճրագ մը վառէ , ու Վրիստիանոսին աշ ըստ որ իր ետեկն երթայ : Վնիկ եռեանիկայ մէկ առանձին սենեակ մը տարաւ , ու իր ծառային հրաման ըստ որ դուռ մը բանայ + ծառան երբոր դուռը բացաւ , Վրիստիանոս պատին վրայ կախուած վանմատեսիլ անձի մը պատկերը տեսաւ . ու պատկերին նկարուածքն աս կերպ էր : Աչքերն երկինքը վերցուցած , դրքերուն պատուականն իր ձեռքը , և ճշմարտութեան օրէնքն իր ջղթուեփներուն վրայ զրուած , ու երեսն աշխարհէն դարձուցած էր . այնուես էր՝ որպէս թէ մարդոյ աղջարար մըն էր , և իր գլխուն վրայովն ուկեղէն պատկ մը կախուած էր † :

Վն ատենը Վրիստիանոս հարցուց՝ թէ ի՞նչ կը նշանաւիշ ասիկայ :

Վեհիկ . Վն մարդը՝ որուն որ պատկերն է ասիկայ , հազարէն մէկն է . անիկայ կրնայ զաւակ ծնանիլ ու ծնանելէն ետե սնուցանել զանոնք :

* Վասուէծոյ Հոգին ինչպէս մարդասէր ու ինչպէս զիջանող է ողորմելի թշուառ մեղաւորներուն :

† Վեհստարանի ճշմարիտ պաշտօնեան իր աչքերը առ Վասուէծոյ կը վերցընէ օդուութիւն ու զօրութիւն զտնելու համար . իր զիտութիւնն ու պատղամաւորութիւնը Վասուէծոյ խօսքէն կ'ընդունի՝ ու ան ընդունածը հաւատարմութեամբ կը մաստակարարէ . իր սիրտն իր զործին վրաց է , անանկ որ՝ աշխարհիս ոչ պարզեներն ու ոչ սպառնալիքները կ'ազգեն իրեն . Վրիստասի սէրը՝ հոգիներուն արժեքը ու յաւիտենականութեան մեծութիւնը ճանչցած լւշլով սրտի մտօք կը յորդորէ զմարդիկ , ու կենաց պատկին յոյսը՝ բոլոր իր աշխատութիւնը կ'անուցընէ ու կը կենդանացընէ : Ով Տէր՝ քու հունձիդ մէջ այսպէս շատ մշտկներ խրկէ . ամէն :

կինք վերցուցեր է , զիրքերուն պատռականն իր ձևոքն է ,
ու ճշմարտութեան օրենքն իր շրմունքներուն վրայ դրուած
է , անիկայ քեզի կը ցուցընէ թէ իր գործն է խրթին բաւ-
ները դիմանալ և յայտնել մեղաւորներուն , ինչպէս նաև
կը տեսնես որ իրեւ աղջաբար կայներ է մարդոց : Եւ-
ան որ կը տեսնես թէ իր երեսն աշխարհէն դարձուցած ,
և ոսկեղին պատկ մը իր դլխուն վրայ կախուած է , անի-
կայ քեզի կը ցուցընէ թէ իր Տէրոջը ծառայութեանը
մէջ ունեցած սիրոյն համար աշխարհին բաները փուռ-
ու անարդ համարելով , վատահ է թէ հանդերձնալ առ-
խարհին մէջ փառքով պիտի վարձատրի : Երգ՝ ըստ
Վեկնիչը , ամենէն առաջ քեզի աս պատկերը ցուցուցի ,
քանզի ան մարդը՝ որուն որ պատկերն է աս , մի միայն է
որուն որ քու դացած տեղիդ Տէրն իշխանութիւն տուաւ-
քու համբուղ մէջ պատահելու բոլոր դժուարին տեղուան-
քը քեզի առաջնորդ ըլլալու : Ուստի աղէկ միտքդ պա-
հէ իմ քեզի ցուցուցածն՝ ու տեսածդ մի՛ մոռնար , որ չըլ-
լայ թէ քու համբուղ մէջ այնպէս մարդոց պատահին՝ որ
կեղծաւորութիւն ընեն շիտակ համբան քեզի առաջնորդե-
լու : բայց իրենց համբան շիտակ մահուան դուռը կ'իջնէ :

Վոկէ ետեւ անոր ձևոքն բռնեց՝ ու տարաւ մեծ սրահի
մը մէջ խօթեց որ փոշիով լեցուն էր , քանզի բնաւ աւել
դարնուած չէր հոն : Վսիկայ քիչ մը տեսնելին ետեւ
Վեկնիչը մէկը կանչեց որ զայ աւլէ : Հիմա մարդն աւ-
ւելու որ սկսեց , փոշին այնպէս ամպի պէս կ'ելլէր՝ որ Քը-
րիստուանու մազ մնաց պիտի խեղուուէր : Ես ատենը
Վեկնիչը հոն կայնող օրիորդի մը ըստ՝ որ քիչ մը ջուր
ըերէ ու սրահին մէջ սրսկէ . աղջիկն ասիկայ ըրածին պէս՝
դիւրութեամբ աւլուեցաւ ու մաքրուեցաւ սրահը :

Աս ի՞նչ կը նշանակէ հարցուց Քրիստիանու :

Պատասխան տուաւ Վեկնիչն ըսելով . Ես սրահը կը
նշանակէ մէկ մարդու մը սիրտը՝ որ աւետարանական քաղցր

շնորհքով բնաւ սրբացած չէ : Փոշին իր սկզբնական
մեղքն ու ներքին ապականութիւնն է որ բռլոր մարդը կը
պղծէ : Ան որ առաջ սկսեց աւլել, Օրէնքն է . բայց
ան որ ջուր բերաւ և ցանեց , Վւետարանն է : Ուստի ան
որ տեսար թէ առջինն աւլու սկսածին պէս փոշին այնպէս
տարածեցաւ սրահին մէջ որ ինք չէր կրնար մաքրել , և
դուն զբեթէ կը խեղղուեիր , աս կըցուցընէ քեզի թէ
օրէնքն իր ներգործութիւնով սիրար մեղքէ մաքրելուն
տեղը , մեղքը կը կենդանացընէ , Հառնէ . է . 9 , կը
զօրացընէ , ան Առնին . ժե . 56 , և կ'աւելլընէ հոգւոյն
մէջ : Հառնէ . է . 20 : ‘Դարձեալ ան որ տեսար թէ
օրինորդը սրահին մէջ ջուր մրսկեց՝ ու անոր վրայ դիւրու-
թեամբ մաքրուեցաւ , աս կըցուցընէ քեզի թէ երրոր
Վւետարանն իր քաղցր և պատուական զօրութիւնով
սրտին մէջ կու գայ , ան ատենը մեղքը կը տկարանայ և
կը յաղթուի , և հոգին կը մաքրուի անոր հաւատքովը , և
հետեւապէս փառաց թագաւորին բնակութեանը յարմար
տեղ մը կ'ըլլայ * : Հառնէ . ժե . 3 : Եփես . է . 26 :
Գարդ . ժե . 9 :

Վսկէ ետե նաև երազիս մէջ տեսայ որ Վեկնին անոր
մեռքէն բռնեց և մէկ պղտի սենեակ մը տարաւ , ուր որ
երկու աղայ իրենց աթոռներուն վրայ նատեր էին : Վեծին
անունն էր Վսհամբերութիւն , ու պղտիկին անունը Համ-
բերութիւն : Վսհամբերութիւնը կը թուեր որ մեծ նե-
ղութեան մէջ էր . բայց Համբերութիւնը շատ հանդարս
էր : Ուստի Կրիստիանոս հարցուց թէ , Վսհամբերու-
թիւնին նեղութեանը պատճառն ի՞նչ է : Պատասխան
տուաւ Վեկնիը . Վսնց վերակացուն իրեն ըստ որ եթէ

* Հիմա ասով դատէ դուն թէ օրէնքի[○] տակ ես , թէ
Վւետարանական շնորհաց : Վս տեղ ստորագրուածը
գտնած երբեք քու վրադ :

մինչեւ դալ տարի սպասէ , խիստ աղջկէ բաներ պիտի ունենայ , բայց ինք բոլորը հիմա կ'ուղղէ . ասկայն Համբերութիւնը կը սպասէ :

Ենկէ ետև տեսմի որ Անհամբերութիւնին քով մէկն եկաւ , ու պարկ մը ոսկի բերաւ ու անոր ոտքին տակը պարպեց . ինք անոնք առնելով ուրախացաւ և միանգամայն Համբերութիւնը ծաղը ընել սկսեց : Բայց տեսայ որ քիչ մը ատենէն ետև բոլորն ալ շասյը թեամբ վատնեց , և իրեն ուրիշ բան չմնաց՝ բայց միայն հնոտի լաթեր :

Են ատենը Կիրիստիանոս Անկնիչին ըսաւ . Վս բանը աղջկէ մը բացատրէ ինծի :

Պատասխան տուաւ Անկնիչը թէ , Վս երկու տղաքն օրինակ են . Անհամբերութիւնն աս աշխարհիս մարդոցն օրինակ է , ու Համբերութիւնը հանգերձեալ աշխարհի մարդոցը օրինակ . քանզի ինչպէս որ հոս կը տեսնես թէ Անհամբերութիւնը բոլոր բանը հիմա՝ աս տարի ունենալ կ'ուղէ , այսինքն՝ աս աշխարհիս մէջ , այնպէս աս աշխարհիս մարդիկն ալ բոլոր իրենց բարիքները հիմա ունենալ կ'ուղեն . չեն կրնար մինչեւ դալ տարի կենալ , այսինքն մինչեւ անդիի աշխարհն երթանին սպասել իրենց բարիքն ընդունելու համար : Վեհի մոփիկ կ'ընեն ան առակին՝ որ կ'ըսէ . “Չեստի եռած մէջ նուշտնը ծառակն վրայի երիւ նուշտնեն առէլի է” . քան թէ հանդերձեալ աշխարհին բարիքներուն վրայով Եղած բոլոր աստուածային վրայութիւններուն : Բայց ան որ տեսար թէ ինք շուտ մը շապալութեամբ բոլորն ալ վասնեց՝ ու հիմա իրեն բան մը չձգեց բայց հին լաթեր , աշխարհիս վերջը բոլոր ասոր պէս մարդիկներուն ալ այնպէս պիտի ըլլայ * :

* Արթինաւոր մարդիկ աւելի բան չեն ուզեր՝ բայց եթէ իրենց զգայաբանքները յաղեցընել . ասկայն վերջապէս ամէն բաները պիտի կորանցընեն՝ ու հողինին ապականեն : Բայց արդարը կ'ապօթի Յիսուսի վրայ ունեցած հաւատ-

Եսոր վրայ՝ Քրիստիանոս ըստւ։ Ես հիմա կը տեսնեմ՝ որ Համբերութիւնին ըրածը մեծ խելացութիւն է։ և ան ալ մէկ քանի պատճառներով։ մէյմը՝ որ ամենալաւ բաներուն համար կը սպառէ։ դարձեալ որ ինք իր վառքին պիտի հասնի, բայց միւսը հին լաժերէն ՚ի դատ բան մը չունի։

ՄԻՒԾԻ. Եսոնցմէ ՚ի դատ ուրիշ պատճառ մըն ալ կընայիր տալ իր խելացութեանը։ այսինքն ան որ հանգերձնաւ աշխարհի փառքը բնաւ պիտի չվերջանայ, բայց առնոք խելոյն կը կորնչին։ Եսոր համար Ենհամբերութիւնն այնչափ իրաւունք չուներ Համբերութիւնին վրայ խնդալու ինք իր բարիքներն առաջ ստանալուն համար, որչափ որ Համբերութիւնը իրաւունք պիտի ունենայ անոր վրայ խնդալու իր բարիքները վերջն ստանալուն համար։ Քանի առջնորդ պէտք է անցնի որ վերջինն անոր տեղը դայ։ բայց վերջինը բնաւ չանցնիր, ինչու որ ուրիշ բան մը չկայ անոր տեղը դալու։ Ուստի ան որ իր բաժնն առաջ ունեցաւ, հարկաւ ժամանակէ մը պիտի վատնէ անիկայ։ բայց ան որ իր բաժնը վերջը կ'առնէ, յաւիտեան պիտի վայելէ զանիկայ։ Եսոր համար է որ մեծատունին վրացով կ'ըսուի թէ, “Դուն քու կեանիքիդատենը քու բարիքներդ առիր + նոյնպէս ալ Կաղաքու շարիքներ + հիմա անիկայ հոս կը մխիթարուի, ու դուն կը տանջուի”։ “Դատ + ժղ. + 25 :

Քրիստիանոս. Ուրիմն կ'իմանամ որ հիմակուան եղած բաներուն վրայ սէր ձգելու չէ, հապա դալու բաներուն սպառելու է։”

քովն, ու դալու ուրախութիւններուն յօյտովք։ Ենոնք փառաւոր վախճանի մը պիտի համեմն + ինչու որ պիտի ընդունին իրենց հաւաքրին նպատակը՝ որ է իրենց հոգիներուն փրկութիւնը, ու փառքով մշտնջենաւորապէս զըլը բիստու վայելելը։

Արքինեւ . Ճշմարիտ խօսեցար . ինչու որ տեսնուած բաները ժամանակաւոր բաներ են , բայց չտեսնուած բաները յաւիտենական են : ի Արքնեւ . դ . 18 : Աւ թէ պիտ աս այսպիս է բայց որովհետեւ ներկայ բաներն ու մեր մարմնաւոր ախտօթակը պաշտի մօտ դրացիներ են իրարու , անոր համար շուտով կը բարեկամանան . և զարձեալ որովհետեւ հանդերձեալ բաներն ու մարմնաւոր գցացումնեւ ըլ այսպահ օտար են իրարմէ , անոր համար միշտ այսպիս հեռու կը մնան իրարմէ * : Ճառվ . է . 15-25 :

Սանցմէ եաւ երազիս մէջ տեսայ որ Վեկնիչը Քրիստիանուին ձեռքին բռնեց ու մէկ տեղ մը տարաւ , ոչ պատի մը տակ կրակ կը վառէր , ու անոր քով մէկը կայնած՝ միշտ ջուր կը թափէր վրան որ մարէ . և տակայն աւելի բարձր կ'եւլէր կրակին բոցը , և աւելի կը բորբոքէր :

*Քրիստիանոս հարցուց՝ թէ աս ի՞նչ կը նշանակէ :

Պատասխան տուաւ Վեկնիչը ու ըստ . Վս կրակը Քրիստոնէական շնորհաց զործքն է որ սրտին մէջ կը հրահրի . ան որ ջուր կը թափէ վրան անիկայ մարելու համար , Աստանան է : Բայց ան կրակը ևս տաւել վառելուն ու բորբոքելուն պատճառն ալ պիտի տեսնես : Վս ըսկը անիկայ պատին միւս կողմը տարաւ , ուր տեսաւ թէ մէկը կայներ էր իր ձեռքը եղի ամնն մը բռնած ,

* Տե՛ս աս տեղ հաւատքին պատուականութիւնն ու փառաւորութիւնը , որ ամէն բանի վրայ պատշաճաւոր արժողութիւն մը ու վայելուչ զին մը կորել կու տայ հոգւոյն . որ ժամանակաւոր ու զզալի բաներէն անդին կ'անցնի , ու փառքի և յաւիտենականութեան վրայ կը դադարի : Ասիկայ է Աստուծմէ ծնած հոգւոյն յատուկ հանգամները . արդարը հաւատքով պիտի ապրի : Եբք . ի . 4 : Ասիկայ երկրի վրայ երկնաւոր կեանք վարել է :

ուր տեղաց ծածկաբար շարունակ կրակին վրաց կը լեցը-
նէր * :

Ուստի Կրիստիանոս հարցուց՝ թէ ի՞նչ կը ցուցընէ
անիկայ :

Պատասխան տուառ Մեկնիչը . Ասիկայ Կրիստոս է .
որ միշտ իր շնորհաց եղովք սրտին մէջ արդէն սկսուած
գործը կը պահպանէ . և աս միջոցով՝ Աստանային բռ-
լոր բրած բաներուն վրայ՝ իր ժողովուրդը միշտ հաստատ
կը կենաց : Ի Արդի . ժի . 9 : Եւ ան որ տեսար թէ
մարդը պատին ետեւը կայներ էր՝ կրակը պահպանէլու հա-
մար , ասիկայ քեզի կը սորվեցընէ թէ փորձութեան մէջ
ինկող մարդուն դժուարին է տեսնել թէ Կրիստոնէական
շնորհաց գործը ինչպէս կը սնանի կը պաշտպանուի հո-
գւոյն մէջ † :

* Ոմանք ամենեին պատին ետին անցած չըլլալով շնոր-
հաց գործը հոգւցն մէջ Կրիստոսի պահելը տեսնելու ,
ուրիշ պատճառներու կ'ընծայեն աս . զորօրինակ մար-
դուն հաւատարմութեանը՝ և ուրիշ բաներու , որ կը հնա-
րէ իրենց հպարտութիւնն ու յիմարութիւնը : Ասից է
որ ադիտարար կը հաստատեն թէ շնորհաց գործը կրնաց
ունչանալ ու Կրիստոսի շնորհաց ենթակաները կորսուիլ .
Իսայց կը սխալին , բնչու որ ոչ Առորք Գլքքերը դիտեն ,
ու ոչ մեղաւորներուն վրայ Կրիստոսի սիրոյն ու շնորհացը
գորութիւնը :

† Աւելին մեղաւորը՝ որ շնորհք ընդունած է , ձեռք չու-
նի՛ շնորհաց զործն իր սրտին մէջ պահելուն մէջ : Չէ ,
չունի : Հեղինակը Առորք Գլքք լաւ տեղեկութիւն ու-
նենալով , մարդոց բրած գործին ու կարողութեանը չըն-
ծայեր ան փառքը որ կը վայրէ մայն Տէրոջը , որ է Ալֆա
և Օմեգա , Առաջին և Աերջին , մեղաւորին սրտին մէջ
իր գործն սկսող՝ յառաջ տանող՝ ու կատարող . ու անոր
գործը բնաւ չկընար չիջանիլ հոն , մինչև որ Աստանային
հուրը Կրիստոսի շնորհաց իւղին աւելի զօրութիւն չունե-
նայ : Ով ողորմելի մեղաւոր՝ հաւատան ասոր , ու սիրէ

‘Եակ տեսայ որ Վեկնիչն իր ձեռքէն բռնեց՝ ու անիկայ գեղեցիկ տեղ մը տարաւ, ուր որ մեծաշուք և հոյակապ պալատ մը շինուած էր : Քրիստիանոս մեծապէս զուարձացաւ աս պալատը տեսնելուն + ու նաև տեսաւ որ անոր վրայ քանի մը հոգի կը պտըտէին, որոնք բոլորովին ուիեթել հանդերձներով հազուած էին :

Են ատենը Քրիստիանոս հարցուց թէ, ‘Երա կընա՞նք մանել :

Աս խօսքին վրայ Վեկնիչն անոր ձեռքէն բռնեց ու դէպ 'ի պալատին դուռը տարաւ. և ահա տեսան որ դուռը շատ մարդիկ կայներ էին՝ որոնք ներս մտնել կ'ուզէին, բայց չէին համարձակեր : ‘Եակ դռնէն քիչ մը հեռու սեղանի մը առջին մէկը նստեր էր, զիբք ու կաղամար մը ունէր իր առջնը որ ներս մտնողներուն անունը զրէ : Ասկէ 'ի զատ տեսաւ որ դրանը ճամբուն վրայ շատ մը զրահաւոր մարդիկ կայներ էին դուռը պահելու, ու դիտաւորութիւննին ներս մտնել ուզողներուն վրայ ամէն վնաս ու չարիք հասցընել էր : Ճիմս Քրիստիանոս քիչ մը այլայլցաւ : Անընդ երրոր բոլոր մարդիկ՝ զինուորուած մարդիկներուն վախէն ետ քաշուեցան, Քրիստիանոս քահանիրս մէկը տեսաւ որ զրազիրին քով զնաց ըսելով, Կմ անունս զրէ տէր իմ + զրազիրն անոր անունն որ զրեց, իսկոյն մարդն իր թուրը քաշեց, ու դլուխը սաղաւարտ մը դրաւ, և դէպ 'ի դուռը վաղեց ան զինուորուած մարդոց մէջէն, որոնք սաստիկ զօրութեամբ զինքը վիրաւորեցին, բայց մարդն ամենելին չժուլինալով անհնարին սաստկութեամբ անոնց վրայ յարձակեցաւ զարնելով և կոտրելով : Այսպէս շատ վէրքեր ընդունելէն և զինքը

քու Տէրդ՝ փառաւորէ զինքը ու ուրախացիք իր վրայ . ինչու որ ինք յաւիտենական սիրով կը սիրէ, յաւիտենական փրկութիւնով կը փրկէ :

դուրսը պահելու ջանացողներուն շատերը վիրաւորելէն ևսկէ * Մատթէ . ժամ . 12 . բոլորին մէջէն իրեն ճամբայ բացաւ , ու գնաց պալատը մտաւ . ան ատենը մէկ անուշ ձայն մը լսուեցաւ ներսիններէն , այսինքն անոնցմէ որ պալատին վեց կը պարտէին՝ որոնք կ'ըսէին .

Ո՞վ քաջասիրտ մարդ , մոռի ներո՞ւ մորի ը ,
Յաւլուենական փառքը ստացիր :

Այսպէս ինք ներս մտաւ , և անոնց հաղած հանդերձներուն պէս ուսիւթեւ հանդերձներով հաղուեցաւ : Ան ատենը Քրիստիանոս խնդաց ու ըստաւ . Աարծեց թէ ևս ասոր ինչ նշանակելն ստոյդ խմացայ † :

Եւ հիմա Քրիստիանոս խնդրեց որ իր ճամփան երթայ . բայց Վեկնին ըստաւ . Չէ , կեցիր , մինչև որ քիչ մը բան աւ ցուցընեմ քեզի : Այսպէս նորէն անոր ձեռքէն բռնելով խիստ մուժ սենեակի մը մէջ խօթեց , ուր որ երկաթ վանդակի մը մէջ մարդ մը նստեր էր :

Աս մարդը խիստ տրաում մէկը կ'երեւէր , իր աչքերը գետինը անկնիք , ձեռքերն իրարու կապեր , ու սիրու կոտրածի պէս կը հառաչէր : Ուստի Քրիստիանոս հար-

* Հատ նեղութիւններով պէտք է մեզի Կատուծոյ թագաւորութիւնը մտնել : Գարդ . ժղ . 21 :

† Այսպէս ողի ու բնաւորութիւնն կ'ունենայ ան հողին՝ որ հաստատ միտքը դրած է Քրիստոս շահիւ , ու փառաց թագաւորութիւնը վայելել . բոլոր ընդդիմութիւններուն դէմ ինքն իր ճամբան հաստատուն մօքով առաջ կը քչէ ու դէպ 'ի նպատակը կը վաղէ , որ Յիսուս Քրիստոսով ընդունի իր կոչմանը վարձքը՝ ուր որ Կատուծ դիմքը կոչեց : Փետք . կ . 14 : Բաւական չհամարիր քանի մը թոյլ բաղդանքներ ու տկար յոյսեր ունենալը . ինչու որ երկնից թագաւորութիւնն ուժով կ'առնուի , և ուժով ները կը յափշտակեն գանիկայ : Մատթ . ժամ . 12 :

ցուց թէ , Կ՞նչ կը նշանակէ աս : Անկինչն ըստ որ
ինք խօսի ան մարդուն հետ * :

Ե՞ն ատենը ՞Քրիստիանոս ըստ մարդուն : Կ՞նչ ևս
դուն , ձվ մարդ : Պատասխան տուաւ մարդը թէ , Ե՞ս
ան եմ , ինչ որ ատենքը չէի † :

Քրիստիանոս + Կ՞նչ եիր դուն ատենքը :

Մարդը . Ես ատենք աղնիս և բարեբաստիկ Քրիստո-
նոց մըն եի , ‘Ղուկաս լ , 13 : թէ՛ իմ աչքիս և թէ
ուրիշներուն աչքին առջեւ . Ես ատենք իմ կարծեքրու երկա-
նային քաղաքին յարմար մեկն եի , և մընչւ անդամ մե-
ծապէս կ'ուրախանայի մտածելով թէ հոն պիտի մըտա-
նեմ’ ‡ :

Քրիստիանոս . Ըստ աղէկ . բայց ի՞նչ ևս դուն
հիմն :

Մարդը . Ես հիմա յուսահատեալ մեկն եմ , և աս
երկար վանդակին մեջ վակուած ըլլալուս պէս՝ յուսահա-

* Սատուծոյ Առոքը Հաղին կ'ուզէ որ ուրիշներուն աղե-
տալի օրինակէն խրատ առնենք մենք : Առոք համար
Առոքը Գրոց մէջ ան աշաւոր բաները կը գնէ մեր առներ՝
որ պատահեցան հաւատացեալ սեպուղներուն , որպէս զի
մեր փանագը տեսնենք , խոնարհ ու արթուն բլանք , ու
ապստամբութենէ մեզ պահելու համար Տէրոջը աղօ-
թենք :

† Վահնաստակալի փոփոխութիւն մըն է աս : Արաս-
փելով մտածէ դուն ասոր վրայ : Հաւատրով հաստա-
տուած ես՝ մի հզարտանար , հազար վախցիք :

‡ Ո՞վ բարձրամիտներ զգուցելք . նայեցէք թէ ուր
մեռք զարկաւ աս մարդը . անսէք թէ ի՞նչ կը մտածէք իր
վայսովք . նկատեցէք թէ ի՞նչ կը մտածէին ուրիշներն իր
վայսովք : Արդարեւ ինք մեծ ուրախութիւն կը զցար իր
ներսը՝ մտածելով թէ երկինք պիտի երթայ , և սակայն
յուսահատութիւնը հասաւ իր վրայ : Աւեմն արթուն
ու զցաստ ըլլանք : առ թէ՞ն . և . 6 :

տութեան մէջ վիակուած եմ : Չեմ կրնար անկէ դուրս
ելլեւ . ո՞հ , անհնար է ինծի դուրս ելլեւ * :

Վրիստիանոս . Բայց ի՞նչպէս աս վիճակին մէջն ին-
կար :

Վարդը . ։ Արժնութիւնն ու զգաստութիւնը մէկզի
ձգեցի . երասանակին իմ ցանկութիւններուս պարանոցին
վրայ ձգեցի . Վստուծոյ բարութեանն ու անոր լուսատու
խօսքին դէմ մեղանչեցի , Առորք ողին արտմեցուցի ու
ան ալ զնաց . Վատանան դրդեցի և ան ինծի եկաւ . Վս-
տուած բարկութեան շարժեցի՝ ան ալ թողուց զիս . իմ
սիրոս այնպէս կարծրացուցի որ չեմ կրնար զգնումի գալ † :

Հիմա Վրիստիանոս հարցուց Վեկնիչին թէ ասոր պէս
մարդու մը համար յոյս չկայ արդեօք : Երեն հարցուր ,
ըստ Վեկնիչը :

Են ատենը Վրիստիանոս մարդուն ըստ . Վւ յոյս չկայ՝
ու յուսահատութեան երկաթ՝ վանդակին մէջ մնալո՞ւ ես :

Վարդը . Չէ , ամենեին յոյս չկայ :

Վրիստիանոս . Ենչո՞ւ համար . Վմէնօրհնեալ Վստու-
ծոյ Արդին խիստ ողորմած է :

Վարդը . Ես անիկայ կրկին անդամ խաչը հանեցի իմ
անձիս . Երբ . ոյ . 6 . ես զինքը անարդեցի . Վաստ .
Ժթ . 14 . անոր արդարութիւնն արհամարհեցի . անոր

* Դաժոխիքէն ասդին ասկէ ահաւոր վիճակ մը չկընար ըլ-
լու : Օդոյշ կենանք ուխտադրուժ ըլլալէն : Վնդքին
սկիզբը դիտէ մարդս , բայց անոր վախճանը միայն Վս-
տուած դիտէ :

† Վսիկայ ահաւոր ազգարարութիւն մըն է քրիստոնէից :
Ով մարդիկ՝ զգոյշ կեցիք ճշմարտութեան Վստուծոյն՝ ու
իր ճշմարտութիւններուն հետ խաղալէն . ինքը նախանձու
Վստուած է . նախանձաւոր է իր պատիսին ու փառքին .
նաև մանաւանդ՝ մէր Վստուածը մաշող կրակ է : Երբ .
Ժթ . 29 :

արիւնը անսուրբ բան մը սեպեցի . ևս չորհաց կողին նախատեցի . Եբ . Ճ . 28 , 29 . ուստի ևս զիս բոլոր խոստմունքներէն դուրս ձգեցի , ու հիմա ուրիշ բան չմնար ինծի , բայց միայն սպառնալիք , սոսկալի սպառնալիք , անվրիանլի դատաստանին ու բորբոքած բարկութեանն սոսցդ սպառնալիքը , որ իրքեւ թշնամի պիտի ուսեն զիս *

Քրիստիանոս . Խնչո՞ւ համար դուն քեզ աս վիճակին բերիր :

Մարդը . Ես աշխարհին ցանկութիւններուն՝ հեշտութիւններուն ու շահերուն համար , որոնք երբոր կը վայեւէի՞ իմ անձիս կ'ըսէի որ շատ ըերկրութիւններ պիտի ունենամ : Բայց հիմա ան բաններուն ամէն մէկը իրքեւ այրում որդ մը կը խածնէ և կը կրծէ զիս :

Քրիստիանոս . Բայց հիմա չե՞ս կընար զդաւլ ու դարձի զաւ :

Մարդը . Եստուած ինծի զդաւում տալը մէկդի ձգեց : Եր խօսքն ինծի քաջալերութիւն չտար հաւատալու + մանաւանդ որ ինք զիս աս երկաժ՛ վանդակին մէջ զոցեց , ու բոլոր աշխարհի մարդիկն ալ չեն կրնար զիս դուրս հանել : Ով յաւիտենականութիւն յաւիտենականութիւն . ի՞նչ-

* Ըստերը մերամաղձուութեան ուժովը աս նոյն կծու խօսքերն իրենց վրաց կը զրեն՝ ինչպէս որ հոս զբուած են , բայց ան խօսքերն իրենց շատ քիչ կը յարմարին , որովհետեւ ճշմարիտ հաւատացնեալ են : Խնչու որ մեղքի վրայ տեսութիւն ունենալը՝ մեղքի ճանաչում ունենալը՝ ու մեղքի համար զդաւում կամ տրտմութիւն ունենալը՝ որ ասոնք ունին , հանդերձ բոլոր մեղքերէն ու Վստուծոյ բարկութենէն Քրիստոսով ազատելու փափաքով մը ճշմարտապէս կը ցուցընեն թէ սրամին մէջ Քրիստոսի շնորհաց ներդործութիւնը կայ : Բայց վկայ անոնց՝ որ իրենց կը յարմարին աս մարդուն ըստած խօսքերը :

պէս պիտի կոռւիմ ան թշուառութեանը հետ՝ որ յաւիւ
տենականութեան մէջ իմ դէմն պիտի ելլէ :

Սն ատենը Անեկնիը Քրիստիանոսին ըստ թէ , Ես
մարդուն թշուառութիւնը միաբդ թող մնայ , և մշտնչե-
նաւոր խրատ մը ըլլայ քեզի :

ՄՇ , սարապիելի բան է սովիկայ՝ ըստ Քրիստիանոս :
Եստուած ինձի օգնէ որ արթուն և զգաստ ըլլամ ; ու-
աղօթք ընեմ որ աս մարդուն թշուառութեանը պատճառէն
փախչիմ * : Տէր իմ , հիմն՝ ալ իմ ճամբաս երթալու-
ատենը չեկա՞ւ † :

ԱՆԻՖԸ . Անցի՞ր որ քեզի մէկ բան մ'ալ ցուցընեմ , և
ազա քու ճամբաղ երթաս :

Եւյապէս անոր ձեռքէն բռնեց՝ ու զինքը սենեակ մը տա-
րաւ՝ ուր որ մէկը իր անկողինէն կ'ելլէր + ու հանդերձը

* Ընթերցող՝ միշտ կարօտ ես դուն աս աղօթքը քեզի
համար ընելու : Դուն մեղաց մարմիննին մէջն ես . ամե-
նախաբերաց ու տարապայման չար սիրտ մը ունիս , ու
աշխարհիս որոգայթներուն և Ատանային խորամանելու-
թիւններուն ենթակայ ես :

† Քրիստիանոս ինչո՞ւ համար այսչափ կ'արտորար :
Խեղճ ու ողորմելի հոգին տակաւին մեղաց բեռն իր կոնակը
բարձած էր , ու ասիկայ էր որ զինքը կ'արտորցընէր :
Առողջէր խաչին համնիլ որ իր ըեռէն ազատի . բայց Առորը
չողին առաջ շատ բաներ ունէր իրեն ցուցընելու , որ ան-
կէ ետև օգտակար պիտի ըլլային իրեն : Եստուած իր
ժողովուրդը միսիթարելու համար ժամանակ մը որոշած է
իր ժողովութեան սէրը ճանցընելով անոնց . մինչեւ ան
ժամանակը Առորը չողին ատաթճան ատաթճան մեզ յա-
ռաջ կը տանի , բան մը ցուցընելն ետև ուրիշ մը մեզի
կը ցուցընէ , մինչեւ որ ան ժամանակը զայ համնի : Ապաէ
Եստուծոյ ճամբուն վրայ՝ Եստուծոյ միսիթարութիւններուն
համար : “Արդարը հաւատքով պիտի ազրի” : Եցր .
Է . 4 :

հաղած ատենը կը դողար ու կը սարսափէր . Ան ատենը Վրիսատիանոս հարցուց թէ ինչո՞ւ համար աս մարդը կը դողայ : Ուստի Վեկնիչը հրաման ըբաւ մարդուն որ իր այնպէս դողալուն պատճառը զրուցէ : Եւ մարդը սկսեց ըսել . Առ զիշեր քունիս մէջ երազ մը տեսայ , որ ահա երկնքը բոլորովին խաւարեցաւ , և այնպէս սոսկալի կերպով որուաց ու փայլատակեց՝ որ զիս մահուան դուռը հասցուց : Այսպէս երազիս մէջ վեր նայեցայ՝ ու տեսայ որ ամսպերն անսովոր կերպով մը կը վաղէին . ասոր վրայ փողի ահաւոր ձայն մը լսեցի , ու նաև մէկ մարդ մը տեսայ ամսպի մը վրայ նստած՝ ու երկնքն հաղարաւորներն իր հետն էին , որոնց ամէնը կրակի բոցի կը նմանեին . երկնքն աւ կրակի բոցի մէջ էր : Ալքը մեծ ձայն մը լսեցի որ կ'ըսէր . Եղիք՝ ով մեռելներ , ու դատաստանի եկեք : Եւ աս խօսքին վրայ քարերը պատեցան , գերեզմանները բացուեցան , ու անոնց մէջի մեռելները դուրս եկան : Ումանք շատ ուրախութիւն ունեին ու դէպ՚ի վեր կը նայէին , և ոմանք լեռներուն տակը պահուիլ կ'ուզէին : Ծեաց տեսայ՝ որ ամսպին վրայ նստող մարդը գիրքը բացաւ ու հրաման ըբաւ աշխարհի որ մօս դան * : Եւ սակայն անոր առջեւը բորբոքած սաստիկ բոցին պատճառաւը իսել մը միջոց մնաց անոնց մէջը , ինչպէս որ դատաւորն և ատեանը կայսող բանտարկեալին մէջուեղը միջոց մը կը մնայ : ան Արքն . ժէ . 51-58 : ան օմէն . դ . 16 : Ծուր . 14 , 15 :

* Դատաստանի օրուանը պատրաստուելնուս համար աւմենէն աղէկ միջոցներուն մէկն աս է , յաձախ մօսածելան օրը տալու համարիդ ծանրութեանը՝ ահարկութեանն ու ճշմարտութեանը վրայ : Աերոնիմոսին համար կ'ըսուի թէ իր մեռնելէն առաջ շատ տարբներ ինչ որ զորելու բլար , կը թուէր իրեն թէ ականջն աս ձայնը կու զար . Surgite mortui et venite ad judicium! “Եղիք մեռելներ , ու դատաստան եկեք” :

Յահ . Ե . 28 , 29 : ի Յօնես . ամ . 8 , 10 : Յայտ . ի . 11 , 14 : Եշայա . իլլ . 21 : Ուկ . Ե . 16 , 17 : Առաջ . Ե . 4 : ձ . 1 , 3 : Արար . դ . 2 , 3 : Դան . Ե . 9 , 10 : “Եակ լոեցի որ ամազին վրայ նստող մարդուն հետև եղած սպասաւորներուն աս հրամանն եղաւ . Քաղեցէք որուն ու յարդը , ու բորբոքած լիճը ձգեցէք անոնք : Արար . դ . 12 : ժկ . 30 : իդ . 30 : Արար . դ . 1 : Եւ ասոր վրայ Ճիշդ իմ կայնած տեղու անդունդին գուրը բացուեցաւ , որուն բերնէն մնում ու կրակ և սոսկալի ճայներ կ'ելլէին : “Եակ նոյն սպասաւորներուն ըսուեցաւ . “Իմ ցորենս ամերարը ժողվեցէք” . “Լուսեւ . դ . 17 : ու ասոր վրայ տեսայ որ շատերը վեր կը յափշտակուէին ու ամազերուն մէջ կը տարուէին . սակայն ևս ետ մնացի . ամ Յօնես . դ . 15 , 16 : Ուստի ևս ալ ուղեցի որ զիս ծածկեմ , բայց չկրցայ . ինչու որ ամազին վրայ նստող մարդն իր աշքերը փառ տնկեր էք . իմ մեղքերս ալ միտքս եկան , ու խղճմուանքս ամէն կողմանէ կը դատախազէք ինծի դէմ : Հունվ . լ . 14 , 15 : Ասոր վրայ քունէս արթընցայ :

Քրիստինոս . Բայց աս անսարանն ի՞նչ բան էք որ քեզ այսաւափ վախցուց :

Արարտը . Ի՞նչ կ'ըսես . կարծեցի թէ դատաստանին օրն եկեր է , ու ես պատրաստ չեմ անոր . բայց ամէն բանէն աւելի աս վախցուց զի՞ս , որ հրեշտակները շատերը ամազերուն մէջ հաւաքեցին , ու զիս ետ ձգեցին . նաև դժոխքին դուրը՝ որ իր բերանը Ճիշդ իմ կայնած տեղու բացաւ : Խղճմուանքս ալ զիս կը տանջէր * , ու կը

* Վարդուս խղճմուանքը շատ անդամ՝ կը շիոթի ու կը դողայ . բայց իր վախերն ու դողերը շուտով կ'անցնին կ'երթան , ու ճշմարիտ դարձ մը չեն պատճառեր անոր :

կարծէի որ Դաստանորը միշտ իմ վրաս կը նայէր , իր երեւ
սին վրայ բարկութեան ցոյց մը ունենալով :

Ան ատենը Մնկնիչը Կրիստիանոսին ըստ . Խմացար
առնեա առ բաները :

Կրիտութեանու . Այս իմացայ և զիս յոյսի ու վախի մէջ
ձգեցին անոնք *

ՄԵՒՆ . Աղջկե . այնպէս միարդ պահէ բոլոր բաները ,
որ քու քովէ քեղի իրրւ խթան մը ըլլան՝ քու ճամփուդ
մէջ քեզ առաջ քեւլու : Հիմա Կրիստիանոս սկսեց իր
մէջքն ամուրցնել ու իր ճամփորդութեանը պատրաս-
տուիլ : Ան ատենը Մնկնիչն ըստ . Միսիլժարիչը միշտ
քու հետդ ըլլայ՝ բարի Կրիստիանոս , ու քաղաքն երթա-
լու ճամփուն մէջ քեզ առաջնորդէ : Առասի Կրիստիա-
նոս իր ճամփան կ'երթար ու կ'երգէր :

Ես տեղ տեսայ հաղուազիւտ բաներ ,

Օռւարձալի բաներ ահաւոր բաներ .

Ու իմ ձեռնամուխ եղած դործիս մէջ ,

Օխս հաստատ պահող օդտակար բաներ :

Ուրեմնն անոնք ես խորհիմ պիտի ,

(Օտէ բնչո՞ւ համար ցուցուեցան բնծի .

Ու երախտակարտ սրտով միշտ ըլլամ ,

Ո՛վ բարի Մնկնիչ շնորհակալ քեզի :

* Օղջացած Կրիստոնեին սրտին մէջ յոյմն ու վախի
իրենց յասուկ աեղեր ունին : Վասուծոյ խոսամաննեւ-
րը Ծիսուս Կրիստոսով , կենդանի յոյսի մը զօրաւոր ու
անշարժելի հիմք կ'ըլլան . ու անոնք որ իրենց սրտերուն
խարերայութիւնը դիտեն , իրենց թշնամիներուն ոյժն ու
խորամանկութիւնը կը ճանշնան , աշխարհիս մէջ իրենց
ունեցած վիճակին բնչ որոդայթներու ենթակայ ըլլալնին
կը զգան և կը տեսնեն որ իրաւացի պատճառ . կայ մշտնիւ-
նաւորապէս զգուշնալու ու վախնալու : Վրանց սցագիւ-
սի վախի կեղծաւոր ու անհոդ կ'ըլլոյ մարդ :

Հիմա երազիս մէջ տեսայ որ Վրիմանականութիւն երթալու ճամբուն երկու կողմք պարփապ քաշած էր , և ան պարփապը կը կոչուեր Փրկութիւն : Խոսք . իջ . 1 : Ուստի ծանրաբեռնեալ Վրիմանականուն աս ճամբէն վեր կը վազէր , թէ և իր կոնակի բեռնն պատճառաւը մեծ դժուարութիւն կը քաշէր * :

Եւյազէս վազելով տեղ մը հասաւ՝ ուր որ բարձրիեկ բլուր մը կար , և ան բլուրին վայ խաչ մը տնկած էր , ու քիչ մը վար բլուրին ուսքը գերեզման մը կար : Եւ ահա երազիս մէջ տեսայ որ Վրիմանականութիւն առջևն ելածին պէս՝ իր բեռը քակուեցաւ ուսերին՝ ու իր կոնակին ինկաւ , ու սկսեց վար գլուխիլ մինչեւ որ գերեզմանին բերանն եկաւ . ան տեղ գերեզմանին մէջն ինկաւ , ու ալ չտեսայ անիկայ † :

Համար կ'ըսուի՞ Երանի՞ ան մարդուն որ միւս կը վախնայ :

* Վեզի դար վեր երեցած մեր դժուարութիւնները մեծամեծ սփոփանաց ճամբայ են : Ընոներն ան առենը խիստ ծանր կու զան՝ երբոր սփոփանները կը մօմենան :

† Վրիմանականու հաւատք ունէր . խաչին առջևն ելլելն առաջ կը հաւատար թէ Վրիմանուի արխանութիւն ազատութիւն պիսի զանէ , այսինքն մեղաց թողութիւն . բայց հիմա անոր սփոփանները դտաւ ու զգաց : Ենք հիմա հաւատքին ուրախութիւնը կը վայելէ . իր մեղքին բեռն իր խղճնակին վրային վերցաւ , և հաւատալովը՝ ամէն կերպ ուրախութիւնով ու խաղաղութիւնով լցուն է : Եղացը՝ դուն որ կը հաւատաս թէ Յիսուս Վրիմանու է մի միայն Փրկիչ , հաւատալով յառաջ զնա՝ մինչեւ որ անիկայ քու Փրկիւց ըլլալը ճանշալու միմիթարութիւնն իմանաս , ու իր արիւնովը քու մեղքերուդ թողութիւնը զգաս . քանդի երբոր Աստուած մեղ մեր յանցաւորութենէն ու բեռէն ազատէ , ուրախութիւննէ ցաթկրադունիքուն պէս կ'ըլլամիք ան առենը . բայց դուն ասիկայ չես կընար

Քրիստիանոս հիմա մեծապէս ուրախացաւ որ իր բեռէն թեթևացաւ, ու յնծալից սրաով ըստ : Խնք՝ իր ցաւերովը ինձի հանգստովթիւն շնորհէց, ու իր մահովն ալ կեանք : Հետոյ ատեն մը լոիկ կայսեցաւ որ նայի ու զարմանայ . քանզի շատ զարմանալի բան եկաւ իրեն՝ որ խաչին տեսըը զինքն այսպէս ազատէ իր բեռէն : Աւստի կրկին և կրկին անոր վրայ նայեցաւ, մինչեւ որ իր աչքերէն սկսեց արցունքը բղիմիւ ու երեսն՝ ի վար վազել : Օ՞ստ + Ժ՞ր + 10 : Արդ՝ քանի որ ինք այսպէս կայնած կու լար, երեք հատ լուսաւոր անձինք եկան իրեն, ու զինքը բարձրեցին ըսելով . Խաղաղովթիւն քեզի : Հետոյ առջնան ըստ : “Կու մեղքերդ քեզի ներուած են” . Ա՞սր + Շ + 5 + Երկրորդը զինքն իր հին լավթերէն հանուեցուց՝ և ուրիշ լավթեր հազցուց իրեն * . Օ՞ստ + Շ + 4, 5 + և երրորդը անոր ճակատին կնիք մը զարկաւ, Խփես + ա + 13, ու զմուած թուղթ մը տուաւ իրեն և ըստ որ ճամբան վազած ատենն անոր վրայ նայի, ու երկինքին դուռը համնելուն պէս ան թուղթը ներս տայ : Այսպէս անոնք իրենց ճամբան գացին . ու Քրիստիանոս ուրախովթիւնէն իրեք անգամ ցավկեց, ու առաջ կ'երթար առ երդն ըսելով :

ունենալ մինչեւ ան որոշուած ատենը . այսինքն՝ մինչեւ որ խաչին գաս, ու քու բոլոր յօյսերդ անոր վրայ դնես :

* Աս լուսաւորներն են Ամենասուրը Երրորդովթիւնը . ան և չօր Աստուծոյ Արդւցն Աստուծոյ՝ ու Առերք չուղւոյն Աստուծոյ սէրն ու շնորհքը : “Եկատէ որ երք Աստուած Քրիստոսի արիւնին միջնորդովթիւնովը մեղաւորին թողովթիւն կը շնորհէ, ան ատենը կը հագուեցընէ ևս անիկայ Քրիստոսի արդարութիւնովը : Անոնք որ կ'ուրանան թէ մարդիկ Քրիստոսի արդարութիւնովն արդարացած կը անպուին, ամեններն չեն տեսներ օրէնքին սրբութիւնն ու իրենց մերկութիւնը, ու չեն ատեն բուն իրենց արդարութեան ազատովի լավթերը :

Վինչել հոս եկայ իմ մեղքս բարձած ,
Չկար մէկը որ զիս հանգչեցընէ :
Իմ տրտմնութենէս՝ որով պաշարուած ,
Վինչել հոս եկայ , ոհի աս ի՞նչ տեղ է :

Հո՞ս պիտի իյնար կռնակիս բեռը ,
Ու հո՞ս սկսէր երջանկութիւնը .
Հո՞ս կտըրտէին ան պարանները ,
Որ կապեցին ան իմին կռնակը :

Օրհնեալ ես ով խաչ , օրհնեալ գերեզման ,
Խայց երիցս օրհնեալ Վարդըն պատուական .
Որ քուկին վրադ մեղքերուս համար ,
Խայտառակութեամբ մատնեցաւ մահուան :

Վոկէ ետե երաղիս մէջ տեսայ որ ինքը այսպէս յառաջ
զնաց՝ մինչեւ որ ճորդն իջաւ , ուր որ ճամբէն քիչ մը դուրս
իրէք հողի տեսաւ խորունկ քնացած , ու սաքերնին շղթա-
ներով կապած : Վէկուն անունն էր Վիամիտ , միւսինը՝
Շօյլ , ու երրորդինը Համեղուզն :

Վրիստիանոս անոնք աս վիճակին մէջ տեսնելով՝ դէպ 'ի
անոնց զնաց , որ ըլլայ թէ անոնք արթնցընէ . ու կանչեց
թէ , 'Խուք կայմի վրայ ննջողներուն կը նմանիք . Վո՞տէ .
իդ . 34 . քանզի ձեր տակը մեռեալ ծովնէ . մէկ ծով
մը որ յատակ չունի . ուստի արթընցէք ու մէկու եկէք
ոյր տեղնէն . ու նաև կամք բրեք , և ես ձեր շղթաները
յակելու ձեզի կ'օդնեմ * : 'Եաւ զրուցեց անոնց թէ ,
Վն առիւծի պէս մոնչողը , ալ գլուք . ե . 8 , ասկէ անցնե-
լու որ ըլլայ , անտարակոյս իր ակռաներուն որս պիտի
ըլլար դուք : Վս խօսքին վրայ անոնք իր երեսը նայեցան ,
ու սկսեցին աս կերտ պատասխան տալ † : Վիամիտն

* Ռարեալաշտ Վրիստոնէին ողին ուրիշներուն վասնողը
կ'իմանաց , և կը ջանայ ու կ'աշխատի օդնել անոնց :

† Ծնէ որ Վոտուած մէջաւորին աչքերը ըսանսյ , յորդո-

ըսաւ . Եւս վոտանդ մը չեմ տեսներ : Կօռցին ըսաւ . Վիք մըն աւ քնանանք : Եւ Յանդուզը ըսաւ . Վամկն մարդ ինքինքը թող հոգայ : Այսպէս անոնք ոլառկեցան նորէն քնանալու , ու Վրիտախանոս իր ճամբան զնայ :

Եւ սակայն մոտասանջութեան մէջ էր թէ թ'նչպէս աս վիճակին մէջն ինկած մարդիկը այսպէս ոչինչ սեպեն մէկու մը բարերարութիւնը որ աղատաբար օգնել կը կամի անոնց զիրենք արթնցընելով , իրենց իրաստ տալով , ու իրենց երկաթներէն աղատելու համար՝ իրենց օգնութեան հասնել առաջարկելով : Եւ աս մոտասանջութեան մէջ որ կ'երթար՝ երկու հողի տեսաւ՝ որ նեղ ճամբուն ճախ կողմի պատին վլոյցն անցնելով յառաջ կու դային , ու արտորնօք եկան իրեն հասան : Ասոնց մէկուն անուշը փարիսեցի էր և միւսինը Աւղծաւոր : Աւստի ըսածիս պէս՝ եկան իրեն հասան , ու Վրիտախանոս անոնց հետ պյապէս խօսակցութեան մոտաւ :

Վրիտախանոս . Պարոններ , ուրկէ՞ կու դաք , և ո՞ւր կ'երթար :

Փարիսեցի և Ավոգատոր . Մնկը Անափառութեան քաղաքը ծնած ենք , ու Ախոն լեռը կ'երթանք փառաւորուելու :

Վրիտախանոս . Ինչո՞ւ համար աս ճամբուն սկիզբն եղած դոնէն ներս չմարք : Չե՞ք դիտեր որ զրուած է թէ , “ Ան որ դոնէն չմոներ , հապա ուրիշ տեղէն կ'ելլէ , անիւ կայ դող ու աւազակ է ” : Համճ . Ժ . 1 :

Փարիսեցի և Ավոգատոր . Պատասխան տուին՝ թէ ըոլոր իրենց քաղաքացիները հեռու կը սեպեն մինչեւ դուռն երթալն ու անկէ ներս մանելը . և անոր համար իրենց սու-

բանք մը բնաւ բանի տեղ չանցնիր անոնց : Յիշէ՞ որ անոնց ամէնը չնորհքէն է : Աստուծոյ չնորհքն է որ կը կենդանացընէ՝ կը լուսաւորէ՝ կը դղձացընէ՝ կ'արդարացընէ՝ կը պահպանէ՝ կը սրբացընէ ու կը փառաւորէ :

վորական ճամբան շիտակ դալ ու պատեն անցնիլը է , ինչը պէս որ իրենք ալ այնպէս ըրած էին :

ՔՐԻՍՏՈՎԻԿԱՆ : Խայց մեր երթալու քաղաքին Տէրոջը գէմ յանցանք պիտի չնեպուի՞ , իրեն յայտնի կամքն առ կերպով աւրելը :

Փարիսից և Ալեքսանդր . Պատասխան տուին՝ թէ ասոր վայով ինք պէտք չէ որ մաստանջութիւն քաշէ . քանզի իրենց ըրածին պէս է սովորութիւնը . և թէ որ հարկաւոր ըլլայ՝ կրնան վկայութեամբ հաստատել թէ հազար տարիէն աւելի է որ իրենք առ սովորութիւնը ունին :

ՔՐԻՍՏՈՎԻԿԱՆ : Խայց առ ձեր սովորութիւնը օրէնքին առջև կրնայ արդարանալ :

Փարիսից և Ալեքսանդր . Աս մովորութիւնին հաստատութիւնը հազար տարիէն 'ի վեր ըլլալով՝ անաչառ դատաւոր մը անտարակցոյ օրինաւոր բանի տեղ պիտի ընդունի ան : Եւ մանաւանդ , ճամբուն մէջ մանելնուս ետե , որ կերպով հոն մանելնիս ի՞նչնչ հոդ է : Յաէ որ ճամբուն մէջն ենք՝ մէջն ենք . դուն ալ միայն ճամբուն մէջն ես , որ՝ ինչպէս կ'իմանանք , դունէն մաեր ես , և մենք ալ ճամբուն մէջն ենք՝ որ պատին վկայէն հոն անցանք . ուստի քու վիճակդ մերինէն աւելի ի՞նչ աղէկութիւն ունի :

ՔՐԻՍՏՈՎԻԿԱՆ : Ես իմ Տէրոջը կանոնովը կ'երթամ , դուք ձեր այլանդակ մարին հնարքովը : Աս ճամբուն Տէրը արդէն ձեղ դող համարած է . ուստի կարծեմ թէ ճամբուն վերջը հասնելնուդ՝ շիտակ մարդիկ պիտի չդանուիք դուք : Դուք ինքնիրեննուուդ ներս մտաք առանց անոր հրամանին , և ինքնիրեննուուդ դուրս պիտի ելքը առանց անոր ողորմութեանը :

Աս խօսքին երկար պատասխան չտուին , հապա ըսին որ ինք թող ինքզինքը նայի : Ան առենք տեսայ որ առանց երկար բարակ իրարու հետ խօսակցելու ամէն մարդ իր

համբան դնաց + միայն թէ առ երկու մարդիկը՝ Քրիստիանունին ըսմն որ բոլոր օքէնքներն ու կարգադրութիւնները անտարակցոյն իրենք ալ անոր պէս զգուշութեամբ կը կատարեն : Աւասի գուման ի՞նչ բանավ մեղմէ աւելի աղջկ ես՝ ըսմն, բայց միայն կռնակիդ վերարկութիւն որ մեր կարծածին նայելով՝ դրացիներուդ մէկը քեզի տուած է, քու մէրկութեանդ աճնիթը ծածկելու : *

*Քրիստիանու + Կուր գունէն ներս չմտնելուն հան օքէնքներով չեք փրկուիր : Պատշ. ի. + 16 : Եւ թէ որ կռնակի վերարկուխս վասյով իմանալ կ'ուզէք, իմ երթալու տեղիս Տէրն ինձի տուաւ, բասծնուդ պէտք անով իմ մերկութիւնն ծածկելու համար : Ես ալ անիկայ իր մարդասիրութեանն իրքն մէկ նշանը կ'ընդունիմ, որով հետեւ յառաջնանէ բան մը ըսմէի ես՝ հազար հնոտի լութեր : Ասկէ 'ի դաս ես զիս իմ համբուռ մէջ անով կը միսիթարիմ : Վ'ըսեմ իմ անձնու՝ Շնոտարակցոյն երբոր քաջարին դուռը հանիմ, անոր Տէրը զիս աղջկ պիտի հանչնայ՝ իր վերարկուն իմ կռնակս ունենալուս համար : ան վերարկուն որ ինք ձրիսպէս ինձի չնորհեց, իմ հնոտի

* Քրիստոսի արդարութեանը վառաւոր սրատնանը՝ որ հաւատացեալներուն կը պարզեսուի ու անօնց վրայ կը ծածկուի, անարդ ու քամնչըլի է անունով քրիստոնեաներուն առջնն, որոնք իրենց մերկութիւնն ու ծածկոյթի կարօտ ըլլալը չեն իմանար : Բայց խօնարհ հողիներն իրենց անոր կարօտ ըլլալը կը խոստովանին, ու անիկայ ընդուռնելուն Քրիստոս կը փառաւորին : Փարիսեցիններն ու կեղծաւորները բոլորովին անծանօթ ըլլալով իրենց անկեալ ընութեանը, նորոգութեան՝ Քրիստոսի արդարութեանը՝ կամ Արքացուցիչ և Վիսիթարիչ Հոգույն ներդործութեանը հարկաւորութիւնը չեն ակնենք + ու անոր համար Տշմարիտ քրիստոնեան ծաղը կ'ընեն, ու անոր զգացուները յափշտակեալ մոքի ու խելազարութեան կ'ընծայեն :

լալթերէս զիս մերկացուցած օրը : « Եսան հակառակ նշան մըն ալ ունիմ՝ որ դուցէ հրամանքնիդ չնկատեցիք անինից , որն որ իմ Տէրոջ մէկ մասերիմ՝ ընկերը հնո՞ դըոշմեց կռնակիէս իմ բեռու ինկած օրը : Աս ալ ձեզի ըսեմ՝ որ ան ատենը կնքած թուղթ մը տրուցաւ ինծի , որպէս զի իմ համբուս մէջ անինից կարդալով միսիթարուիմ : « Եսան հրամացուեցաւ ալ ինծի որ երկասցին դուռը հասած ատենս անինից ներս տամ , իրքեւ նշան իմ անոր ետեւն անտարակցաւ ներս մանելուս : Աարձեմ թէ դուք առ բաներուն մէկը չունիք . և անոր համար չունիք՝ որ գոնէն ներս չմը տաք :

Անոնք առ բաներուն պատասխան չտուին . միսյն իրարու նայեցան ու խնդացին † : Վակէ ետև տեսայ որ ամենն ալ առաջ գացին , բայց Կրիստոֆանոս անոնցմէ յառաջ անցաւ ու ալ չկառացաւ բայց միսյն ինքնիրենը ու ան ալ երբեմն հառաջելով ‡ ու երբեմն ուրախանալով : « Եսան շատ անդամ կը կարդար ան Լուսաւորներէն մէկուն տուած թուղթը § և անով կը միսիթարուէր :

* Առոքը Հոգւոյն միայութիւնն ու կնիքն ունեցող հոգին Կրիստոփոսի արդարութիւնավոր կը պարծենայ ալ . ինչու որ հաւատքին ուրախութիւնն առ է որ Կրիստոս Տէրը մէր արդարութիւնն է : Խըմէ . իդ . 6 : Մարդիկ պարապ տեղը ներքին միսիթարութիւններու վրայ կը խօսին , քանի որ Կրիստոփոսի արդարութեան հանդերձը կը մերժին :

† Անապարծ յիմնարները Կրիստոփոսի խօնարհ համբորդ ներուն վրայ կը խնդան :

‡ Կրիստոփանոս արդէն թողութիւն ընդունած ըլլալով՝ ինչւեւ համար կը հառաջէր : Մարդ պիստի կարծէ որ ան բոլորովին ուրախութիւն կտրած պիտի ըլլար : Վանիք սիրոյ հառաջանքներ էին՝ որ Հոգեւոր ուրախութենէ զուրկ Եղողները բան մը չեն դիտեր անոնց վրայ :

§ Վախկայ Առոքը Հոգին իր ունեցած ստուգութիւնը

Վաս միջըին երազին մէջ տեսաց որ անոնց ամենն ալ առաջ կ'երթային՝ մինչեւ որ Դմուարութեան Լեռանը ոտքն եկան * , որուն յատակն աղբիւր մը կար : Վաս նոյն տեղը ան դռնէն եկած շխտակ համբէն՝ ի զատ երկու համբայ ալ կային , որոնց մէկը ձախ ու միւսն աջ կողմքը կ'երթար լեռանը ոտքէն . բայց նեղ համբան շխտակ լեռն՝ ի վեր կ'ելլէր , ու կը կոչուէր Դմուարութիւն : Հիմա Քրիստիանոս աղբիւրը գնաց , Խոսոյ . խթ . 10 , ու անկէ ջուր խմեց ինքունիքը զովացընելու համար † . ու սկսեց լեռն՝ ի վեր ելլէլ ըսելով :

կը նշանակէն մարդուն իր հոգւոյն ընծայուած Քրիստոսի ձրի սիրոյն՝ ձրի նորհացը՝ ձրի թողութեանն՝ ու ձրի արդարութեանը վրայ :

* Քրիստիանոս Դմուարութեան Լեռը հասաւ . ասիւ կայ մարմինի ու արիննի անհաճոյ համբայ մըն է , որ մէր համբորդութեանը մէջ մեր հաւատքին անկեղծութիւնն ու մեր հոգիներուն ջանքը կը փորձէ : Քրիստիանոս դռնէն ներս մտնելին առաջ քանի մը սնդամ փորձուեցաւ : Բայց հաւատացեալը հաւատքին մէջ փոքր՝ ի շատէ հաստատուելին եաւ մեծամեծ փորձութիւններու կը պատահի : Երբոր խաչին ու գերեզմանին մտեցած ըլլանք մոտածէլու պատճառ ունինք թէ ամեն չարիքն անցան : Բայց Դմուարութեան Լեռը , Ապողղիոնին հետ պատերազմիլը , Պահուան Շուքին Չորը , Հոկայ Յուսուհատութեան ամրոցն ու Աստարզեալ Երկիրը տակաւին անտես կը մնան : Այսպէս Խրայէլացիք ուրախացան՝ երբ տեսան թէ Երիսպատացիները Ասրմիք Շօսմիւն մէջ կը խեղզուէին , ու մոքերնին չըերին իրենց անցնելու անապատը , և թէ տակաւին իրենց մեծամեծ նեղութիւններ պիտի գային :

† Վամենիմաստ ու ամենաբարին Աստուած ընդհանրապէս սովորականէն աւելի կը խրկէ անոնց իր Հոգւոյն ու շնորհաց օղնութիւնը՝ որոնք որ ինք դմուարութիւնն ու աշխատութիւն քաշէլու կը կոչէ : Քրիստոնեան Դմուարու-

Օնէ և բարձրը լ՛ռ՝ բայց ջանամ ելլել ,
Դժուազութիւնը իսծի վեշտ քըլսոյ .
«Օք կենաց ճամբան առ տեղին բլալ ,
Աը տեսնեմ Հս , ոհ , սիրալս թաղ յնծոյ :

Տրոմութիւնն ու վախն ինձմէ հեռանան ,
Եղէկ է շիտակ ճամբան երթալը .
Օնէ և դժուարին , քան թէ ծուռ ճամբան ,
Որ թէ և դիւրին բայց վայ է վերջը * :

Միւս երկուրն ալ լեռանը ոտքը հասան . բայց երրոր
տեսան թէ լեռը դար վեր ու բարձր էր , և թէ ուրիշ
երկու ճամբաներ ալ կային , ու նաև կարծելով թէ ան
երկու ճամբաներն ալ նորին ան ճամբուն կը խառնուին
ուրիշ վեր Քրիստիանու ելաւ լեռանը միւս կողմը , մաքերա-
նին հաստատեցին որ ան ճամբաներէն երթան : Հիմա
առ ճամբաներէն մէկուն անունը Ատանգ էր , ու միւսնը
Առօծանում : Աւատի մէկերնին Ատանգ կոչուած ճամբան
բռնեց , ուրիշ մէծ անուանի մը մէջ ելաւ . միւսը շիտակ
դէպ 'ի Առօծանման ճամբան բռնեց , ու աև լեռներով
շրջապատուած մէկ ընդարձակ դաշտի մը մէջ ելաւ , ուր
որ զորեցաւ ինկաւ , և ալ կըցաւ ելլել † :

Վակէ ետև Քրիստիանուն ետեւէն նայեցայ որ լեռն 'ի

թեան Լեռն ելլելու սկսելն առաջ Խրտուածոյին միսի-
թարութեանն ազգիւրին իր հոգին կը զովացընէ :

* Հաւատն ավ ճանապարհորդ քրիստոնեայ որ մէծ
բարութիւն մը մօս է քեզի , երրոր մէծ դժուարութեան
մը կը պատահիս որ անոր հետ մարտնչիս ու յաղթես :

† Աեղաւառըներն ու փարխեցիները ինչպէս որ դիւրու-
թեամբ կը մօնեն հաւատքի ճամբուն մէջ առանց ճշմար-
տապէս մեղքերնին ճանչնարու , որ աս ճանաչումը պիտի
պատճառէր իրենց Քրիստոսի դիմել որ ան Աեղ Խուռն
է , այնպէս ալ մարմինի ու արիւնի խիստ դիւրին զալու-
ճամբան կը դանեն՝ ու վերջապէս կը կորնչին :

վեր կ'ելլեր , ու տեսայ որ վազելն քալելու իջաւ , ու քալելն ձեռքերովն և ծունկերովը վեր ելլել սկսեց տեղին դար վեր ըլլալուն համար : Այդ՝ լեռանը զլուխն ելլելու ճամբուն մէջ տեղուանքը սաշարթախիս սատերով ծածկուած կուած հովանաւոր զով տեղ մը կար , որ բլուրին Տէրը յոզնած ճամբորդներուն զովանալուն համար շնոր էր : Ուստի Վրիստիանոս դէպ 'ի հոն զնայ՝ ու վար նստաւ որ հանգչի . յետոյ իր թուղթը ծոցէն հանեց ու իր միսիթարութեանը համար սկսեց կարդալ անիկայ : * Աան հիմա նորէն սկսեց նկատել ան վերաբերն կամ պատմուաննը՝ որ խաչն առջև կայնած ատենն իրեն տրուեցաւ : Այսպէս ատենն մը նորպինք զուարձացընելով վերջապէս սկսեց միափել , և անկէ խորունկ քունի մը մէջ ննկաւ , որ զրեթէ մինչև զիշեր զինքը հոն արդիլեց . ու իր քունին մէջ իր թուղթը ձեռքէն ինկաւ : * Հիմա քնացած տեղը մէկն

* Վրիստիանոս լեռն 'ի վեր ելլելուն Վրիստոսի մահացուանն ու արդարութեանը տեսութիւնովը կը զուարձանար , որ կ'իմացուի ծոյի թուղթը կարդալու հանելովը՝ ու խաչն առջևն իրեն տրուած պատմուաննին կամ վերաբերին վրայ նայելովը : Բայց՝ ափսօն , որ ան իրեն պատահածն իրեն պէս ճամբորդներուն ալ յաճախ կը պատահէի : Խոնարհութեամբ ու գոհութեամբ ան բարիքները պարզողին երկրպագութիւն ընելու տեղը՝ կը սկսինք հանգչիւ , բաւական համարելով արդէն իր տուածը : Խորնահաճութեան ու անձին արդարութեան խորհուրդներու մէջ կ'իյնանք . ու մոռնալով թէ բոլը մեր ընդունածը Տէրոջմէն է , սնապարծութեամբ մէնք մեզի կ'ընծացէնք՝ որպէս թէ յատկապէս մերն եղած ըլլային անոնք : Երրոր այսպէս մնաք մեր աչքին առջև կը բարձրանանք՝ ու կը կարծենք թէ երկնից առաջին սիրելին մնաք եւք , կը ձգենք մեր արթնութիւնը , և անհօգութեան ու մարմնաւոր վատահութեան ողի մը կ'առնենք վանիս , որ երկինքն ընդունած մեր վրայութիւնները կը նահանցընէ :

եկաւ իրեն , և դիմքն արթքնցուց՝ ըսելով . “Ո՞վ ծոյլ՝ մը ջիւնին զնա , անոր ճամբաները տես , ու խնատնէն եղիք” : Եռունի . կը . 6 : Ասով Վրիստիանոս մէկէն ’ի մէկ վեր ցաթկեց , ու արտօրաց ճամբայ ելելու , որ արագ արագ երթալով մինչև լեռանը զլուխն ելաւ * :

Վրդ՝ երրոր ինք լեռանը զլուխն ելաւ վագելով երկու հողի կու զային ուժդնութեամբ իր գեմք զաբնուելու : Անկուն անունը Ալախկոտ էր ու միւսինը Աստվածուն + : Վրիստիանոս անոնց հարցուց թէ , Գլարոններ , ի՞նչ կայ , սխալ ճամբան կը վագէք դուք : Գլատապան տուաւ Ալախկոտը՝ թէ մենք Ախօն քաղաքը կ'երթայինք՝ ու ան դժուարին ճամբէն վեր ելանք . բայց՝ քանի որ առաջ կ'երթանք , այնչափ վտանգներու կը պատահինք + անոր համար դարձանք ու նորին ետ կ'երթանք :

Ճշմարիտ է , ըստաւ Աստվածուար , քանզի ճիշդ մեր առջևը զոյդ մը առիւծ պառկեր են , որոնք չենք գիտեր քնացած են արդեօք թէ արթուն . և անտարակցոյ կը կարծենք որ եթէ անոնց բաւական մատենալու ըլլայնք , իսկոյն մեզ կտոր պիտի ընէին :

Այս ատենը ըստաւ Վրիստիանոս + Դուք զիս վախցուցիք .

* Տէրը՝ իր ժողովուրդը սիրելով թող ըստար անոնց որ մահուանքները քնանան , թէ և ձգէ որ մինչև իրենց միսթարութիւնը կորանցընելնին ննջեն . ասիկայ անոնց հոգիներուն մեծ տրտմութիւն ու նեղութիւն է :

+ Ալախկոտն ու Աստվածուար քրիստոնէական հաւատքին մեծ թշնամիներն են , ու անոր ճամբուն վասյով չար լուրեր կը բերեն : Պարի մի՛ ընէք անոնց , հազար Աստուծոյ ճշմարտութեանն ու հաւատարմութեանը նայեցէք . անոր պատուական խոստմունքներուն ապաւինեցէք , ու ձեր ոտքերը խաղաղութեան աւետարանին կօշիկները հագէք : Ո՞վ կամ ի՞նչ արդեօք պիտի վնասէ ձեզի , թէ որ դուք բարւոյն հևտեղդ ըլլաք :

բայց հւր երթամ՝ ևս ապահով մնալու . թէ որ ետ երթամ իմ՝ բուն երկիրս, անիկայ կրակով ու ծծումբով այրուելու պատրաստուած է, ու ևս անտարակոյս պիտի կորսուիմ՝ հոն : թաէ որ կրնամ՝ երկնային քաղաքն երթալ, անշառշաղական որ հոն ապահովութեան մէջ պիտի ըլլամ * : Աիրոտ առնեմ . ետ դառնալը մեռնիլ է . առաջ երթալը մեռնելու վախ է, ու անկէ անդին յաւիտենական կեանք է . ուստի ալ առաջ կ'երթամ : Այսաքէս՝ Ա ախկոտն ու կասկածոտը լեռն 'ի վար վազեցին, ու Վրիստիանոս իր ձամբան զնաց : Բայց ան մարդոցմեն լսածին վրայ նորէն մտածելով, ձեռքը ծոցը խօթեց իր թուղթը հաշնելու համար՝ † որ անիկայ կարդաց ու միսիթարուի . սաշ-

* Վրիստիանոս հոգեորական ողջամիտ առարկութիւնով՝ արսինքն մարդինին վախուն դէմ ու կասկածոտութեան և անհաւատութեան դէմ հաւատրին առարկութիւնովը վախը մէկդի կը թօթաւէ : Վինդ միշտ հաստատուն մարդարեական խօսք մը ունինք, որուն թէ որ միտք դնելու ըլլանք, աղէկ կ'ընենք : Խըրոր վասնգները ձեզ նեղը կը ձգեն՝ ու վախուերը ձեր վրա կը յարձակին, մոքերանիդ բերեք թէ գուք որունն էք ու որուն կը ծառայեք : Նայեցէք ան ձամբուն որուն մէջն էք, ու ձեր հաւատրին վախճանին, սցանեցն՝ ձեր հոգւոյն փրկութեանը : Աստուծոյ խօսքը սորվելու պարապեցէք, ու անոր հնագուն դեցէք :

† Աղօրմելի ձանապարհորդը Կասկածոտին ու Ա ախկոտին յարձակմունքը ընդունելն ետե իր թուղթը կը վնասուէ որ միսիթարուի, բայց խարուած է իր ակնկալութենէն . թուղթն իր ծոցը չէ : Վն ատենը կը զցաց իր յիմարութիւնը որով սաղարթախտ ոստերով ծածկուած հովանաւոր զով տեղը քնացեր էք : Եթ թշուառ վիճակին վրա կու լոյ կ'ողըայ, ու քայլ առ քայլ ետ կը դառնայ մինչեւ որ իր թուղթը կը զանէ : Այսաքէս կը վարուի Տերը իր ուխտազանց զաւկըներուն հետ . փրկութեան ուրախութիւններն անոնց պարզեցն առաջ իրմէն

կոյն վիճուեց ու շպառ անիկայ : Ան առենը Կրիստիանոս մեծ խոռվութեան մէջ ինկաւ , ու ինչ ընելը չեր զիւեր * + քանի իրեն միսիթարութիւն տուող բանն՝ ու իր երկնային քաղաքը մոտելու վկայականը կորսընցուցեր էր : Ուստի աս տեղ սկսեց մեծապէս շփոթիլ . վերջը միաբը եկաւ որ ընանը վրայի սաղարթախիս ոստերով ծածկուած հովանաւոր զով տեղը քնացեր էր + և ծունկի վրայ զարով իր յիմարական գործին թողովթիւն ինդրեց Վասուծմէ , ու անելէ ետեւ ետ դարձաւ իր թուղթը վիճուելու : Բայց մէջ կրնայ ըստ բաւականին ցուցընել թէ Կրիստիանոսին սիրոն ինչ . տրտմութեան մէջ էր բոլոր իր ետ զացած ատենը : Երբեմն կը հառաջէր , երբեմն կու լար , և շատ անգամ ինքնինը կը նախատէր որ այնպէս յիմարաբար քնացաւ ան տեղը որն որ միոյն ճամբորդներն իրենց յողնութենին քիչ մը հանդըլու համար շնուռած էր : Ուստի աս վիճակին մէջ ետ կ'երթար՝ զուութեամբ մէկ կողմն ու միւս կողմը նայելով ըոլոր զացած ճամբան , որ բրայ թէ իր թուղթը գտնէ , որն որ ճամբորդութեանը մէջ այնչափ անգամ իր միսիթարութիւնն եղէր էր + սյսպէս երթալով մինչեւ որ նորէն ան սաղարթախիս ոստերով ծածկուած հովանաւոր զով տեղը տեսնուեցաւ , ուր որ ինք նոտեր ու քնացեր էր : Բայց անիկայ տեսնելով իր տրտմութիւնն աւելօք շատցուց , նորէն իր միտքը ըերեւլով իր քնանալուն յանցանքը † : Ուստի սյսպէս յառաջ

հեռանալուն համար իրենց մեղացը վրայ ապաշխարութեան զցացում մը կու տայ անոնց :

* Կրիստիանոս իր թուղթին համար շփոթութեան մէջ է . ասիկայ օրինաւոր է : Յժէ որ հոգեոր կորուստ մը ունենանք՝ ու անխոռով և անհոդ բլանք անոր վրայ , գէշ նշան մըն է թէ մարմնաւոր վատահութեան ու սնուտի յուսով կ'ապրինք : Ե՛ղբարք իմ , զգ՞յշ կեցիք ասկէ :

† Կրիստոնեաց եղարք նայեցէր ձեր հողիներուն :

դնաց իր մեղաննչական քունին վրայ ողբալով և ըսելով . Այս ինձի պէս թշուառականին որ ցորեկը քնացայ , Յայտ . ի . 4 : ա թէս . ե . 6-8 , ու զժուարութեան մէջ քնացայ . և այնչափ իմ մարմինիս հաճոյքն ըրի՝ որ լուանը Տէրովը ճամբորդներուն հոգիները կազուորելու համար շնածը , ևս իմ մարմինիս հետութեանը համար գործածեցի : Օտոր աեղը որչափ քայլեր առի : Այս պէս պատահեցաւ խօրայէլին ալ . որ իրենց մեղքերուն համար Ասրմիր Կօռվուն ճամբէն ևս խրկուեցան : Տրտմութեամբ կ'անցնիմ ևս աս ճամբէն՝ որն որ եթէ ան մեղաննչական քունը ըլլար , գուցէ ուրախութեամբ պիտի անցնի : Հիմա որչափ յառաջ դացած պիտի ըլլայի իմ ճամբաս . երեք անդամ պիտի անցնիմ առկէ , որ միայն մէկ անդամն առելի անցնելու կարօտութիւն չունեի . մասնաւող որ հիմա ուշ ալ պիտի մնամ . քանզի զրեթէ օրն իրիկուն եղած է . ափանս , ի՞նչ կ'ըլլար՝ որ չքնառնացի :

Արդ՝ մինչեւ հիմա նորէն սաղարթախիտ ոստերով ծածկուած հովանաւոր զով տեղը հասաւ , ուր ատեն մը նըստաւ ու լսցաւ : Բայց վերջն Աստուծոյ նախախնամնութիւնով՝ տրտմութեան մէջ թաղուած՝ իր նատած բազմոցին տակը նայելով , հոն տեսաւ իր թուղթը . որն որ դոզալով ու արտորնոք մէկէն 'ի մէկ տռաւ ու իր ծոցը զրաւ : Բայց ո՞վ կ'անյ պատմել թէ որչափ ուրախացաւ աս մարդը երրոր նորէն իր թուղթը զտաւ : Քանզի աս թուղթն եր իր կեանքին ապահովութիւնն ու փափաքելի

* Օքուշացէք որ ձեր առջի հետութիւններուն համար լիբր չի արտմութիւններ չունենար : Բայց լսւագոյն է՝ “ Ի՞նչ խղճալի մարդ եմ ևս ” կամնչելք՝ քան մարմնաւոր վստահութեամբ ապրիլն ու հոգեոր միսիթարութիւններու վասիագունենալու կողմնակ մեռած ըլլալը :

հաւահանդիսութ հասած ատենն ընդունելի ըլլալուն նշանը : Ուստի անիկայ իր ծոցը դրաւ , փառք առւաւ . Աստուծոյ որ իր աչքը անոր բնկած տեղն ուղղեց , և ուրախութեամբ ու լարով նորէն ճամբայ ելաւ * : Բայց ի՞նչ կ'ըսես , արքափ արտօրնօք կ'ելլեր հիմա լուանը մեացած ճամբան : Եւ սակայն լուանը գլուխը չելած արկը մարք մտաւ , ու ասիկայ նորէն Կրիստիանոսին միտքը ձգեց իր ծուլութեամբ քնանալը , և այսպէս՝ նորէն սկսեց իր վրայ ողքաւ : Ով դուն մեղանչական քուն , ի՞նչպէս քու պատճառաւդ մութը զիս պիտի կոխէ իմ ճամբրորդութեանս մեջ . առ ունեց արեգակի պէտք է որ քալեմ , խաւարն իմ ոսքիս ճամբանս պիտի ծածկէ , ու ես իմ մեղանչական քունիս համար սոնացող անասուններու ճայները պիտի լսեմ : Հիմա իր միտքն եկաւ նաև ան պատճենինը՝ որ Ապակածուն ու Ալաբիկութ իրեն ըստն , թէ առիւծները տեսնելով արքափ վախցեր էին : Ուստի Կրիստիանոս նորէն ինքնիրեն ըստաւ . Սա գաղաները դիշերը կը պարսին իրենց որսերուն համար . և թէ որ մութ տեղն ինձի պատահէրու ըլլան՝ ի՞նչպէս պիտի ազատիմ անոնցմէ . ի՞նչ պէս պիտի վախչիմ անոնց ճանկերուն ներքեւ կտոր կտոր փառաւուելէն : Սա խորհրդովն առաջ զւաց իր ճամբան . բայց երբոր սցսպէս իր դժբաղու սիսալմանքին վրաց կը ցաւեր՝ աչքը վեր վերցուց , ու իր առջնը հոյակապ պարստան մը տեսաւ , որուն անունը կը կոչուեր Կմեղեցիկ . և անիկայ ճիշդ ճամբուն վրան շինուած էր † :

* Ասիկայ կը նշանակէ Աստուծոյ սիրոյն ու կարողութեանը ու Հիսուս Կրիստոսի հաւատքովը ։ ողբուով Ալբարով ուրախանալուն վրայ նոր զգացում մը ուշնաւ : Ակատէ թէ ի՞նչ ուրախութեամբ ու արտօրնօք հիմա իր ճամբան կ'երթայ աս ճանապարհորդը :

† Ասիկայ կը նշանակէ Կրիստոսի տեսանելի կամ Երեկէ լէ եկեղեցն՝ որուն ըրբառունեան կը կտորուի , ու սուրբե-



Այսպէս՝ երազիս մէջ տեսաց որ նկրը արտորաց և յաւած դնաց, որ եթէ հնար է գիշերը հոն կարենաց մնալ: Բայց շատ չպացած խիստ նեղ ձամբաց մը մտաւ, որն որ Վանապանին սենեակին մէկ ասպարեզի չափ հեռու էր + և դաշտ տեսնն զբուշութեամբ աղեկ մը դէպ 'ի իր առջնը նայելով՝ ձամբուն վըայ երկու առիւծ տեսաւ*: Հիմա կը տեսնեմ՝ ան վտանգները՝ ըստ իր մոքովը, որոնք Աստիածոսն ու Աշխակոսը ևս գարձուցին: Առիւծներն ալ կապուած էին, բայց նկր չտեսաւ շլթաները: Ուստի միւեց վախնալ, և մոտածեց որ նկրն ալ անոնց պէս ետ դառնայ: Քանիզի կարծեց թէ անտարակոյս մահը իր առջն է: Բայց պահապանը՝ որուն անունը՝ Վանապան էր †, իր տեղին տեսնելով որ Վրիստիանոսը կանկ առ

բուն հետ հազորդութիւն ընելու բարութիւնն ու միսիթաւութիւնը կը վայելէ: Դարձնաւ կրնաց նշանակել աւետարանական կարգադրութիւններուն մէջ քրիստոնեց ժողովին առանձնաշնորհութիւնները: Աս կարգադրութիւնները բլուրին Տէրոջմէն առհմանուած են իր ժողովրդոցը հանդստութեանն ու Վւետարանին ապահովութիւնները համար + օրգէս զի անոնիք միսիթարուին ու իմաստութիւն և զօրութիւն առնեն բարի պատերազմը պատերազմելու, ու իրնց ենթակայ եղած վտանգներին ու որոդպյաթներին անվնաս անցնին:

* Աս երկու առիւծները կրնան նշանակել Աստանան ու Վւետարհը որ մեզի գէմ կը մնան: բայց երկուրն ալ շլթայով կապուած են, ու առանց Վւասուծոյ թոյլուութեանը մինչեւ անդամ մէկ օղակ մը չեն կրնար առաջ խաղալ: Երբեմն մենք չենք տեսներ շլթան, ու կը վախնամը: բայց մեր պահապան Տէրոջը տուած ձայնը առէ, “Ո՞յ վախնար”:

† Վանապանը կը նշանակէ Վրիստիանի պաշտօնեան՝ որ հաղիներուն լաւութեանը համար կը հսկէ: Շամբորդակը ուրիշուն որոբին ո՞րչափ պատուական են անոնիք: “Եայէ՛ թէ

ւաւ՝ և որպէս թէ ետ դառնալ կ'ուղեր, կանչեց անոք՝ ըսելով. Այդչափ վախի՞ու ես : Մարք. դ. 40 : Մի վախնար առխճներէն քանդի անոնք ողջովով կապուած են, ու հոն գրուած են որ հաւաաք ունեցողները փորձուին, ու չունեցողները յայտնի ըլլան : Ճամբան մէջտեղէն քալէ, և քեզի վեաս մը պիտի չայ :

Են ատենը տեսայ որ առխճներէն վախնալուն դոզալով յառաջ կ'երթար . բայց զայտ չութեամբ. Դռնապանին ցոյց տուած ճամբան երթալով՝ լոեց որ կը մնաչէին անոնք, բայց իրեն վեաս մը չըրին : Են ատենը ծափ գալնելով յառաջ գնաց մինչեւ որ Դռնապանին կեցած տեղն եկաւ, ու հոն գրանն առջին կայնեցաւ :

Ենիէ ետև. Վրիստիանոս Դռնապանին ըսաւ, Տէր իմ, թշնչ տուն է աս, ու ես աս զիշեր հոս կրնա՞մ կինալ : Պատասխան տուաւ. Դռնապանը . Ես տունը ըլուրին Տէրը շինած է . ու նոր ասիկայ ճամբորդներուն քաջալերութեանն ու ազահովութանը համար շիներ է : Դռնապանը հարցուց ևս իրեն թէ ո՞ւրկէ է, և ո՞ւր կ'երթաց :

Վրիստիանոս . Ես Արծանման Վաղաքն կու դամ ու Արօն ընոր կ'երթամ : Բայց հիմա արևը մարը մուած ըլլալուն համար, թէ որ կարելի է աս զիշեր հոս մնալ կ'ուղեմ :

Դռնապանոն . Ենունդ ի՞նչն է :

Վրիստիանոս . Իմ անունս հիմա Վրիստիանոս է . բայց առաջ իմ անունս Ենունը էր * : Ես եկած եմ

ի՞նչ անուշ քաջալերութիւններ ու երջանիկ խրատներ առաւ անկիէ Ճամբապարհորդը :

* Ով իմ հողիս՝ զիտէի՞ր երրեք թէ քու անունդ առաջ աս էր : Զգացի՞ր երրեք թէ անշնորհը մեզաւորներուն առատանորհ է Տէրը : Ուրեմն քու ճամբորդութեանդ ամեն մէկ քայլին դովարանէ ձրի շնորհքն ու ան սէրը՝ որուն արժանի չէիր :

Յարելթի ցեղէն , որ Աստուած Անմին վրաններուն մէջ պիտի բնակեցընէ : Ծանոթ . թ . 27 :

* Դայց ի՞նչպէս եղաւ որ այսպէս ուշ եկար . արել մարը մտաւ :

* Բնիստիկանու . Ես ասկէ կանուխ հոս եկած պիտի ըլւ-
լցի , բայց ի՞նչ ըսեմ ինձի պէս թշուառականին , որ
ըլուրին քովն եղած սաղարթախիտ ոստերով ծածկուած
հովանաւոր զով տեղը քնացայ : Վճանալէս ետև ալ-
իրաւ շատ կանուխ կրնայի դալ հոս , բայց ափանս որ
քունիս մէջ իմ վեյցականս կորմնցուցի * , և առանց անոր
մինչև ըլուրին գլուխն եկայ : Են առենը ձեռքս ծոյս խօ-
թեցի վեյցականս հանելու և անիկայ չգտնելով ստիպուե-
ցայ սրտի կոկիծով՝ ետ դառնալ ան իմ քնացած տեղը
երթալ , ուր որ գույք անիկայ , ու հիմա եկայ հասայ
հոս :

* Դայցապան . Աղէկ . աս տեղիս օրիորդներուն մէկը
դուքս կանչեմ , որ թէ որ քու խօսքերուդ հաւնի , քեզ
ներս կ'ընդունի ընտանեաց քովը , տանը կանոններուն
համեմատ : Այսպէս Գոռնապանը որ Արթուր կը կոչուեր
զանդակ մը զարկաւ , որուն ձայնովը Խոհականութիւն
անունով ծանրաբարոյ և զեղեցիկ օրիորդ մը եկաւ տանը
դուռը , ու հարցուց՝ թէ ինչնէ համար զինքը հոն կան-
չեցին :

* Պատասխան տուաւ . Վնանապանն ըսելով . Աս մարդը
Արծանանան Վաղարքէն Արօն լուը ճամբորդութիւն կ'ընէ .
Բայց յոդնած և ուշ մնացած ըլլալով՝ ինձմէ խնդրեց թէ
արդեօք կարելի՞ է որ աս զիշեր հոս մնայ : Ես ալ իրեն

* Աղէկ պահէ քու վեյցականու . դզուացիր որ քու վես-
տահութիւնով չկորսնցընես : * Եայէ թէ ի՞նչ վնաս կը
ծաղի անկէ . անիկայ հոգին կը թողու որ ետ մնայ : Ըա-
տերը կորմնցուցին անիկայ ու բնաւ չերցան դժնել մինչև
իրենց կեանիքին վախճանը :

ըսի՝ թէ քեզ կանչեմ։ որ իր հետը խօսակցելու ետև՝ ինչպէս որ աղջկ երեայ քեզի այնպէս ընկս, ան ալ տանը կանոններուն համեմատ։

Ան ատենը Օրիորդը Վրիմանանոսին հարցուց՝ թէ ուրկէ կու զայ և ուրկէ երթայ ։ ամիկայ ալ պատահանեց անոր։ *Եակ հարցուց անոր թէ ի՞նչպէս ան ճամբուն մէջ մտաւ, և թէ ի՞նչ տեսած կամ ի՞նչ պատահած է իրեն, ան ալ պատմեց անոր։ Եւ վերջը անոր անունը հարցուց։ Ան ալ ըստ թէ իմ անունս Վրիմանանոս է, և անոր համար ըստ այսպահ փափաք ունիմ։ աս գիշեր հոս կենալու, որ կ'իմանամ թէ աս տեղը բլուրին Տէրը շնորհէ, ճամբորդներուն քաջալերութեանն ու ապահովութեանը համար։ Ասոր վրայ Օրիորդը ժապեցաւ, բայց իր աչքերն արցունքով լցուն։ և քիչ մը կենալին ետև՝ ըստ։ Երկու կամ երեք հոգի ալ կանչեմ ընտանիքին։ Այսպէս դէղ ՚ի դուռը վագեց՝ ու Խոհեմութիւնը, Խարեալաշութիւնն ու Աէրը դուրս կանչեց։ * որոնք Վրիմանանոսին հետ քիչ մըն ալ խօսակցելին ետև զինքը ներս ընդունեցին ընտանիքին մէջ, որոնցմէ շատերը տանը դրանը սեմին վրայ իր դէմն ելելով ըսին։ * Եներս մոլիք, և՛ Տէրովը օրհնեալը, աս տունը բլուրին Տէրը շնած է այսպէս ճամբորդները մարդասիրաբար ընդունելու դիտաւորութիւնով։ Ան ատենը Վրիմանանոս իր զըսիսը խոնարհեցուց ՚ի նշան նորհակալութեան, ու անոնց ետելն տունը մտաւ։ Այսպէս Վրիմանանոս երբոր ներս գնաց նստաւ, անոնք զինքը մեծարելու համար անուշ օշարակ

* Խոհեմութիւն՝ բարեպաշտութիւն ու սէր ունենալուն անոնք՝ որոնք բարեպաշտուներուն ժողովին մէջն ընդունուելու անձանց արժանաւորութիւնը քննելու սահմանուածեն։ Ու Վրիմանոսի Եկեղեցոյն ան զեղեցիկ պալատին մէջն ընդունուելու անձինքն ալ պէտք է որ ճշմարիտ հաւատացեալ, ու իրօք և արդեամբ քրիմանուայ ըլլան։

խմբուցին իրեն , և մեկտեղ սրաշեցին որ՝ մինչեւ իրիկուան կերակուը պատրաստուի , իրենցմէ ունանք առանձին խօս սակցութիւն ընեն ՚Քրիստիանոսին հետ , ժամանակին աղջկ անցընելու համար . ու դրին Խարեպաշտութիւնը Խոհեմութիւնն ու Աէրը անոր հետ խօսակցելու , որոնք այսպէս սկսեցին * :

Դարձեպաշտութիւն . Եվկո՞ նայնի՞ բարի՞ ՚Քրիստիանոս , որովհետեւ քեզի մենք այսափ սիրելի եղանք՝ քեզ աս զիշեր մեր առանք ընդունելուս , եկո՞ քու ճամբորդութեանդ մեջ քեզի պատահած բոլոր բաներուն վրայով հետզ խօսինք , զուցէ անոնցմով մեր անձերուն օգուտ կ'ընծայելք :

՚Քրիստիանոս . Ըստ աղջկ կատարեալ հաճութեամբ . և ուրախ եմ՝ որ դուք այսափ պատրաստ եք անոնք մոիկ ընելու :

Դարձեպաշտութիւն . Կ՞ո՞նչ բան եր որ նախ և առաջ քեզ շարժեց ճամբորդի կեանք մը անցընելու յանձնառու բլուսու :

՚Քրիստիանոս . Ես իմ բնիկ երկրէս ելոյ մեկ սոսկալի լուրով մը որ իմ ականջներուս հնչեց , այսինքն թէ՛ անշ հրաժարելի կործանում մը կը սպասեր ինձի՝ թէ՛ որ ևս ան իմ եղած տեղու կենացի :

Դարձեպաշտութիւն . Դայց ի՞՞նչպէս եղաւ որ աս կողմը գալու ելար քու երկրէդ :

՚Քրիստիանոս . Վաստած եր որ այսպէս տնօրինեց + քանզի ես՝ երբոր կործանելու վախին ներքեն եի , ուր երա թալս չէր զիտեր . բայց այնպէս պատահեցաւ՝ որ երբ կը դողոյի և կու լոյի , մեկն եկաւ ինձի՝ Վւետարանիչ առնունով , ու ինձի ան ՚Եղջ ՚Խուռը ըսց տուաւ , որն որ

* Երջանիկ բան է ճանապարհորդներուն իրարու հետ աղջու և փորձառական խօսակցութիւն ընելը :

ուրիշ կերպով բնաւ զանելիք չունեմ ։ և այնպէս ինք զիս
առ տունը հացընող ձամբուն մէջ բերաւ ձգեց :

Բարեկարգութեան . Խայց Անկնիչն տանը կողմէն չե-
կամք :

Քրիստիանու . Հրամերես . ու հոն այնպէս բաներ տե-
սայ՝ որոնց յիշատակը քանի որ կ'ապրիմ մորես ելլելիք
չունին . մանաւանդ երեք բանի յիշատակութիւնը . մէկ
մը թէ ի՞նչպէս Քրիստոս Աստանային հակառակ իր չնոր-
հաց դործքը սրտին մէջ կը պահպանէ . երկրորդ՝ թէ ի՞նչ-
պէս ան մարդք մեղանչեց Վասուծոյ ողորմութեանը յօյմէն
բոլորմին զրկելով զինքը . երրորդ՝ ան մարդուն երազք՝ որ
քունին մէջ դատաստանին օրն եկած հասած կարծեր էք * :

Բարեկարգութեան . Ե՞նչ կ'ըսես , իր երազք պատմեց
քեզի :

Քրիստիանու . Այս պատմեց , և խորհեցայ թէ մէկ
սոսկալի երազ մըն է ան : Անիկայ իմ սիրոս ցաւցուց
երբոր ինք կը պատմեր , բայց սակայն ուրախ եմ որ լսեցի :

Բարեկարգութեան . Անկնիչն տունը տեսած բոլը
բաներդ ասո՞նք էին :

Քրիստիանու . Ձե . զիս առաւ՝ ու մէկ տեղ մը տարա-
ուր որ հոյակապ պալատ մը ցոյց տուաւ ինծի , և ցոյցուց
թէ ի՞նչպէս անոր մէջն ընակիշներն ոսկեղարդ հանդերձնե-
րով հաղուած էին . Կան ցոյց տուաւ ինծի թէ ի՞նչպէս
մէկ՝ քաջասիրա մարդ մը եկաւ՝ և անիկայ դուրս ընելու
համար պալատին դուռը կայնող զինուորուած մարդոցը
մէջն իրեն ձամբաց բացաւ . և թէ ի՞նչպէս ինք ներս կան-

* Հօյսն ու վախը մեր ձամբորդութեան ամեն քայլա-
փոխին հետերնիս ընկերանալու է : Տերը մեղե շատ բա-
ներ կը ցուցընէ մեր ձամբուն վրայ՝ որ ուրիշներուն պատա-
հեցան , որպէս զի մեղ իշխալէն զգուշացընէ , ու իր շո-
նորհաց փառքը յացանելով իր սուրբերը պահելով՝ մեր
յոյսն ու սէրը իր վրայ կենդանացընէ : Հիսուսի նայեցէք :

չուեցաւ ու յաւբանական կեանքը ստացաւ : Խնծի թու-
եցաւ որ աս բաներն իմ՝ սիրոս կը զմայլեցունէին : Առ
բարի մարդուն տունը տարի մը կը կենացի ես, թէ որ իմ
համբուս երկայնութիւնը չփառացի :

Բարբեպալպութիւն : Ան ուրիշ ի՞նչ տեսար համբուս
վկայ :

Վիշիստիւնու : Ի՞նչ տեսայ . քիչ մ'ալ առաջ դացի,
ու մէկը տեսայ որ փայտի մը վրայ կախուած էր, ու ա-
րինները կը վաղէին . աս մարդուն երեսյթը խորյն իմ
բեռս կոնակէս վար ձգեց . քանզի ես առաջ ծանր բեռի
մը տակ կը հեծէի, բայց ան ատենը ինծմէ ինկաւ ան :
Կարկայ սրանչելի բան մըն էր ինծի, քանզի առաջ ամե-
նեին այսպէս բան մը տեսած չէի : Աս ալ ըսեմ՝ որ երր
ես կայներ զէսպ 'ի վեր կը նայէի, Ըքանզի չէի կրնար համ-
րերեւ անոր նայիլ, Երեք հատ Լուսաւորներ եկան ինծի :
Վասնց մէկը զրուցից՝ թէ իմ՝ մեղքերուս ներում տրուած
է . միւսը հնոտի լաթերէս զիս հանուեցուց՝ և աս բա-
նուած վերարկուն տուաւ ինծի որ կը տեսնես . ու երրորդը
ան նշանը զարկաւ ինծի որ կը տեսնես հակատիս վրայ, ու
աս զմայած թուղթը տուաւ ինծի : Աւ աս բանն ըսելով
Վրիստիանոս, իր ծոցէն հանեց անիկայ * :

Բարբեպալպութիւն : Բայց կարծեմ ուրիշ բաներ ալ
տեսար + այնպէս չէ :

* Ճշմարիտ ու կենդանի հաւատրին իր հոգւոյն մէջ
ըրած ներգործութեանը մէկ երջանիկ վորձն է աս՝ Սո-
տուծոյ խօսքին համեմատ, որ խիստ հարկաւոր է ամէն
քրիստոնէի : Ասոր պակասութեանը համար շատերը ոչ
ուրիշներուն և ոչ իրենց հոգւոյն օգուտ մը կ'ընեն : Ծակ
որ Վրիստիանի սէրը չնորհքն ու խաղաղութիւնը Վիսիթա-
րիչ Առորը հոգւոյն ձեռքը սրտին վրաց կարուած չըլլաց,
ըսկ զինքը դաւանիին ուրիշ բան չէ՝ բայց եթէ արտաքին
դաստարկ ձև մը :

Քրիստոնեան . Խմ քեզի զբուցած բաներս տեսած բաներու մէջ ամենէն աղեկներն եին : Եւ սակայն քանի մը ուրիշ բաներ ալ տեսայ . զոր օրինակ երեք հոգի տեսայ , այսինքն Վիամիար՝ Շօռուլութիւնն ու Յանդպնութիւնը՝ որոնք երբոր ես կու գայի , ճաքմբուն վրացին քիչ մը դուրս ոտքերնին չզթաներով կապուած պատկեր կը քնանցին + բայց ի՞նչ կը կարծես , միթէ կրցայ արթնցընել անոնք : Աոկէ ՚ի զատ Փարիսեցին ու Աեղծաւորը տեսայ որոնք դոնէն մանել չուզելով պատէն անցան ու իջան Աիօն լեռն երթալու , ինչպէս որ իրենք կը կեղծէին : Սակայն կորսուեցան շուտով , ինչպէս որ ես իրենց ըստ բայց անոնք չհաւատացին : Բայց ամէն բանէն աւելի՛ աս ըլուրէն վեր ելելը դժուարին եկաւ ինձի , և նոյնչափ դժուարին՝ առիւծներուն բերնին քովէն անցնիլ դալու . արդարեւ թէ որ ան բարի մարդը ՚Իռասպանը չըլլար՝ որ դուռը կը կայնի , չեմ զիտեր՝ կարելի՛ է որ ամէն աս բաներուն վրաց նորէն եւ դառնացի + սակայն գոհութիւն Աստուծուց որ հիմա հոս եմ , ու նորհակալ եմ ձեզի որ զիս ներս ընդունեցիք :

Հիմա կոհիմնեթիւնն արքան սեպեց քանի մը բան հարցընել իրեն , և ուղեց որ անոնց պատասխանը տայ : Խոհեմունիւն . Եցրեմն զուն քու եկած քանարիդ վրայով չե՞ս խորհիր :

Քրիստոնեան . Այս կը խորհիմ , բայց մեծապէս ամէն նալով : Ճշմարիտ է որ եթէ ես իմ եկած քաղաքիս վրայով մոտածմունքի մէջ ըլլայի՛ կրնայի պատեհութիւն ունենալ հոն դառնալու . բայց հիմա ես աղնիւ քաղաքի մը կը փափաքիմ , այսինքն երկնաւոր քաղաքի մը : Եբ . Ժամ . 15 , 16 :

Խոհեմունիւն . Կու առջի սովորական բաներուդ մէկ բանիները տակաւին քու հետդ չե՞ս կրեր :

Քրիստոնեան . Այսու . բայց մեծապէս իմ կամքիս հա-

կառակ անոնք իմ հետս կը կրեմ . մահաւանդ իմ մարմ նաւոր խորհուրդներս , որնց վրայ բոլոր իմ քաղաքացիներս ինչպէս են ալ մեծապէս կը բերկրեթիք : Բայց չի մա բոլոր ան բաները ինձի նեղութիւն են . և թէ որ կարող ըլլայի ինձի վերաբերեալ բաներն ընտրելու , աս պիտի ընտրելի՝ որ ընաւ ան բաներուն վրայ ալ չխորհիմ , սակայն երբոր լաւագոյն եղած բանն ընել կ'ուզեմ , չարագոյն բանը իմ հետս կը գտնեմ * : Հառվ . է . 15 , 21 :

Խոհեմունքնեւն . Երրեմն չե՞ս գտներ որ աս բաները իրրե թէ յաղթուած կ'ըլլան , որոնք ուրիշ ատեն քիզի մասաւանջութիւն կը պատճառեին :

Քիչիսպիհանս . Նոյն . բայց շատ քիչ անդամ . և իմ

* Քրիստիանոս կը գտնգատի իր անգամներուն մէջի օրէնքէն՝ որ իր մասցը օրէնքին դէմ զէնք վերցուցած է , որ աղաղակիւլ տուաւ առարեալին թէ և Վ'նչ խոշնալի մարդ եմ են . ո՞վ զիս պիտի աղատէ աս մահացու մարմինէն” : Վասուծոյ զաւկըներուն բոլորին ալ շատ կամ քիչ զանդան ու բեռը աս է . մեղքին մնացորդներն իրենց ամենալաւ զործերուն մէջ անդամ” և իրենց պարտաւորութիւնները յաջող կերպով կատարելնուն մէջ ալ կը խառնուին . ու շատ անդամ” ականց զերի կ'ընեն զանոնք . այնպէս որ երբոր կը կամին բարին զործել , շարք առ շնչին կը կենաց : Բայց մեղքը իր զօրութիւնը անհաւատութիւնէ կ'ընդունի : Ճ'անապարհորդը երբոր խաչը կը յիշեր , երբոր իր պատճուճանին կամ վերաբերուն՝ ու իր ծոցի թուղթին վրայ կը նայէր , ու իր երթալու երկրին՝ սյսինքն երկնաւոր աշխարհին վրայ տեսաւթեւն մը կ'ունենար , կը գտներ որ իր ապականութիւնները կերպով մը նուաճած ենն : Ով Տէր՝ աւելցուը մեր հաւատը քո՞ Խաչին վրայ թափած քանչական արիւնովդ , որպէս զի մեր հին մարդուն՝ սյսինքն մեր չար ու ապականեալ կիրքերուն խաչուիլն զգանք , ու հետզհետէ ազատինք անոր գարշելի իշխանութիւնն :

ուկեղին ժամերս են անոնք, երբոք այնպիսի բաներ կը պատահին լինի :

Խոհեմութիւնն . Արնա՞ս միաբղ քերել թէ ի՞նչ միջոցներով երբեմն քու նեղութիւններդ իրբեւ թէ յաղթուած կը գտնես :

Դիրիստիւնու . Եւյն . երբոք խաչին քովը տեսածիս վրայ մասածեմ՝ ասիկայ կը պատճառէ ան բանը . ու երբոք իմ բանուած վերարկուիս վրայ նայիմ՝ ասիկայ ալ կը պատճառէ ան . ու երբոք իմ ծոցիս ոլորած թուղթին վրայ ալ նայիմ՝ ան ալ կը պատճառէ նոյն բանը . նաև երբոք իմ խորհուրդներս իմ գնալու տեղիս վրայ դառնան ան ալ կը պատճառէ ան բանը * :

Խոհեմութիւնն . Եւ ի՞նչ բան է որ քեզ Արօն լին երթալու այսչափ կը փափաքեցընէ :

Դիրիստիւնու . Ի՞նչ պիտի ըլլայ . Հոն կը յուսամ՝ ևս ողջ տեսնել անիկայ + որ խաչին վրայ կախուած էր, և հոն կը յուսամ՝ աղատիլ ամեն ան բաններէն՝ որ մինչև ասօրս իմ ներսիդիս լինծի նեղութիւն տուող բաներ են : Ես տեղը՝ կը սեն թէ, մահ չկայ + Եսայ . ին . 8 : Յայտ + իս . 4 + և հոն ես իմ շատ փափաքած ընկերներուո հետ պիտի բնակիմ : Դիանո՞ի քեզի ճշմարիսն ըսկմ :

* Սղեկ նկատէ ասիկայ . Վրիստիսանոսին ճշմարիտ հաւաքով Վրիստոսի արիւնին միջոցովն ստացած թողութիւնը՝ Վրիստոսի արդարութիւնովն իր արդարանալը՝ Առւրը և ոգեւոյն վեայութիւնովն Վստուծոյ իրեն ցոյց տուած ձրի ու յախտնական սէրը՝ ու իր երթալու երկինքին փառքը կը զօրացընեն իր սիրտը բոլը իր ցանկութիւններուն ու ազականութիւններուն դէմ :

+ Տաւատրով՝ Վրիստոս տեսնելը հոգւոյն մէջ փափաք մը կը ծնանի զինքը փառքի մէջ տեսնելու : Իր ներողական սիրոյն դզացումը իր հետն ու իրեն նման ըլլալու փափաքիլ կու տայ մեզի :

ես անիկոյ կը սիրեմ , ինչու որ ինք իմ քեռա թեթեցուց , և անկէ ՚ի զատ իմ ներքին հիւանդութենէս ձանձարացեր եմ : «Եաւ յօժարութեամբ կը ցանկամ հոն ըլլալ ուր որ բնաւ պիտի չմեռնիմ , և ան ընկերներուն հետ գտնուել , որոնք յաւխանան կը կանչեն , Առաք Առաք Առաք :

Հիմն Աերը սկսեց խօսիլ «Քրիստիանոսին հետ՝ ու ըստաւ . Ընտանիք ունի՞ս . կարդուածն ես դուն :

«Քրիստիանոս . Այն մը ու չըս փոքրիկ զաւկըներ ու նիմ :

Աեր . Ուրեմն ինչո՞ւ համար անոնք քու հետդ չըերիք : «Քրիստիանոս սկսեց ըստ , և ըստաւ . Ո՛չ , ո՞րչափ ուղելով պիտի ընկեր ես առ բանը . բայց անոնց ամենն ալ մինչև անդամ իմ ճամփորդութիւն ընելուս բոլորովին հակառակ էին * :

Աեր . Բայց պէտք էր որ խօսէիք անոնց , և աշխատելու էիր անոնց ցուցընել հոն կենալուն վտանգը :

«Քրիստիանոս . Ըստիդ պէս ըրի , ու նաև անոնց զրուցեցի ինչ որ Եստուած ինձի ցոյց տուաւ մեր քաղաքին կործանմանը վրայ . բայց իրենց մէկ ծաղը ընող մը երեցաց , ու ինձի չհաւասացին : «Օճառ Ժիշ . 14 :

Աեր . Եստուածոյ աղաւելով ինդքեցի՞ր , որ ինք քու անոնց տուած խրատդ օքհնէ և օգտակար ընէ :

«Քրիստիանոս . Այսինքն . և ան ալ շատ յօժարութեամբ . քանզի զիսնալու ևս որ իմ կինս ու խոշալի զաւկըներս շատ սիրելի էին ինձի :

Աեր . Բայց բուն քու տրամադրիւնդ ու կործանելու

* Ճշմարիտ ճամասպարհորդին սէրը կը յայտնուի իր տուանն եղողներուն , իր անոնց համար սրտանց փափաքեւ լովի՛ ջանալովին ու աղօթելովի , որդէս զի մէկ կերպով մը համուդէ զանոնիք կործանմանէ աղաւելու , ու փրկութեան համար չիխուսի դիմելու :

զախտ իրենց զբուցեցիք + քանզի կարծեմ թէ ան կործառութիւնը ըստ բաւականին կ'երեար քեզի :

ՎԵՐԴԻԿԱԴԱՆԱ + ԱԺՆ + կրկին + և կրկին + և կրկին զբուցեցի : “Եակ կրտային վաստ տեսնել երեսէ՞ւ արցունքներէ՞ւ ու նաև մեր դլսուն դալու դատաստանին վրայով վերահասու ըլլալով դողովալէս + բայց ասոնց բոլորն աւանոնք՝ իմ հետո դալու համար հոմնոցելու բաւական չեղան :

ԱԵՐ + Բայց ի՞նչ պատճառ կրցան ցուցընել իրենց դաւ չուզելուն համար :

ՎԵՐԴԻԿԱԴԱՆԱ + Խ՞նչ պիտի ցուցընեն + իմ կինս առաշխարհը կրունցընելու կը վախնար, և զաւկըներս իրենք զիրենիք մանկութեան յիմարական բաղձանքներուն տուեր են + այսպէս մէկը մէկ կերպով ու միւսներն ուրիշ կերպով զիս ձգեցին որ այսպէս մինաւոր թափառիմ :

ԱԵՐ + Բայց չըլայ որ քու անպիտան վարքդ՝ անոնք քու հետո բերելու համար հոմնոցելու կերպով ըրած խօսքերուդ բոլորն աւ ոչինչ ըրած ըլլայ * :

ՎԵՐԴԻԿԱԴԱՆԱ + Ըժառակը ևս իմ վարքս չեմ կրնար դուզել, քանզի խղճմունքս կը վիսյէ որ չառ պակասութիւններ ունիմ անոր մէջ : “Եակ դիսեմ որ մէկ մարդ մը իր վարքով շուտով կրնաց աւրել ոչինչ ընել ան բառ

* Վ. իմ հողիս՝ խորունկ մասեէ ասիկայ + քրիստոնէին վարքն է որ աւելօք կը յաղթէ ու կը համնողէ՝ քան թէ իր խօսքը : Յաեպէտ և հըեշտակի նման խօսիս Վրիստոսի վայ՝ Աւետարանին շնորհաց վարդապետութիւններուն ու երկինքին վայ + բայց թէ որ դուն սատանայական բնաւորութիւններու կը ծառայես՝ ու մեղմնչական ցանկութիւններով ու կիրքերով կ'ասպիս, ասով դուն ուրիշներն սատուածային բաներուն դէմ պիտի խառացընես, ու անոնց Վաստածոյ ճամբաններուն մէջ յառաջանար պիտի խափանես :

նը՝ որն որ ապացոյցով կամ համեզելու խօսքերով կը ջանաց ուրիշներուն ընդունել առաջ անոնց աղեկութեանը համար : Եւ սակայն աս կրնամ ըստել որ ևս շատ զուտ չուժիւն կը բանեցընէի՝ որ չըլայ թէ անվայել զործով մը պատճառ ըլլամ անոնց՝ ճամբորդութեան ելլելու զժիկանսկելնուն : Եւ բուն աս բանին համար ինձի կ'ըստէն թէ ես չափաղանց խղճահար եմ, և (իրենց համար) ինքովնքս կ'ուրանամ ան բաներուն մեջ ուր որ իրենք չարիք մը չեն տեսներ : Սակե 'ի զատ կարծեմ թէ կընամ ըստել որ եթէ իմ վրաս տեսած բաներնին զիրենք արգիլւութ ըլլար, Վաստածոյ դէմ չմեղանչելու ու ընկերիս չինաւելու համար ըրած մեծ զգուշութիւնս պիտի արգիլեր զերենք :

ԱԵՐ • Երաւ է որ Ապեն իր եղացըն առեց, առ Յանձ . դ . 12, քանզի իր զործերը չար ենն ու եղբօրը բարի ու թէ որ քու կինդ ու զաւեկներդ աս բանին համար քեզի զժուարեցան, անոնց անով իրենք զիրենք բարւոյն հակառակ ըլլալ կը ցուցընեն . դուն քու անձդ անոնց արխւնէն, աղասեցիր : Եռվէ . դ . 19 :

ԷՐԴ՝ երաղիս մեջ տեսայ որ անոնք այսպէս կը նստէին խօսելով մինչեւ որ կերակուրը պատրաստուեցաւ, ու պատրաստուելն ետեւ ուտելու նստան * : Գանձ որ սեղանը պարարտ բաներով և զտած դինիով շոկած էր †, ու սե-

* Վահկայ կը նշանակէ Տէրունական Ընթրիքը, ուր որ քրիստոնեայք հաւատքով Քրիստոսի մարմնալը կը կերակրին, ու զմայլելով՝ սիրով և փառաբանութիւնով կը մոտածեն Յիսուսի իրենց համար ըրածին և իրենց համար ստացածին վրայ, իրենց մեջն ըլլալուն՝ ու հիմն Վաստածոյ աջ կողմը իրենց համար ինչ ընելուն վրայ : Վայովէս քը քրիստոնեայք հաւատքով անոր մարմնովը կը կերակրին, ու անով յափառնական կենաց համար կը մնանին :

† Տէրը իր ժողովոցը համար տուատ պատրաստութիւն

զանին վրայ իրենց ըուլը ըբած խօսքը րլուրին Տերոջը
վրայով էր . ինչպէս ըսկնք թէ ի՞նչ բաներ ըսկը էր ան ,
և ինչու համար ըսկը էր անոնք , և ինչու համար շնուր էր
ան տունը : Եւ իրենց ըսածներուն նայելով՝ իմացայ որ
ինք մեծ յաղթական մը եղած պիտի ըլլայ , ու մահուան
իշխանութիւնն ունեցողին հետ պատերազմած ու անիկայ
սպաննած , Եբբ . բ . 14 , 15 , ինքովնքը մեծ վասնդի
մէջ դնելով , որն որ ինծի պատճառեց աւելոք զինքը
սիրել :

Դամպի՛ ինչպէս որ անոնք ըսկն՝ և ինչպէս որ ես կը հա-
ւատամ , ըստ Վրիմանանս , ինք շատ արին թափելով
աս բանը կատարեց : Բայց իր ըրած բանին մեծ փառա-
ւորութիւնն մը տուողն աս էր՝ որ ինք իր երկրին վրայ ունե-
ցած անկեղծ սիրովն ըրաւ անիկայ : Եւ ասկէ ՚ի զատ ան-
տանը մէջն մէկ քանիները կային՝ որ ըսկն թէ , իրենք
զինքը տեսան ու հետը խօսեցան՝ անոր խաչին վրայ մեռ-
նելն ետե , ու վիայեցին՝ թէ իրենք իր շրթութիւներէն
լսեցին՝ որ ինք այնպէս կը սիրէ խեղճ ճամփորդները , որ
անոր նման արևելքէն մինչև արևմուտք գտնուիր : ՚Եաւ
իրենց ըստ բաներուն վրայ մէկ օրինակ մը տուած բերին՝
թէ ինք իր փառքէն զինքը մերկացուցեր էր որ ճամփորդնե-
րուն համար մեռնի . և թէ իրենք լսեր են իրմէ որ հաս-
տատութեամբ ըսեր է թէ ինք մինակ պիտի չընակի Արօն

մը ըրաւ անապատին մէջ , ու աւետարանական բարու-
թիւնները շատ անգամ ինջոյքի ձևով կը նկարագրուին :
(Տես Հարսանեաց ճաշին վրայով Վրիմանոսի ըստ առա-
կը :) Սատոր . իբ . 1-14 : Առ ինչոյքին կամ ճաշին
կերակուներն են՝ մեղաց թողութիւն , Առորք ։ ոգուցն
վիայութիւնը , համարձակութեամբ Վատուծոյ ներկայա-
նալ , ու անոր փառացը յուսովն ուրախանալը . բայց ամէն
բանին վեր՝ ճաշին խիստ անուշ համը Վրիմանոսի քաղցր
ներկայութիւնն է :

Եռը : Դարձեաւ ըսին՝ որ անիկայ շատ համբորդներ իւշ խաններ ըսին է, թէպէտ և անոնք ՚ի ընէ աղքատ ծնած ու իրենց սկիզբը աղբիւսն է եղեք : այ օճառք + ք + 8 : Ասով + չժգ + 7 :

Սյադէս խօսակցեցան իրարու հետ զիշերը մինչեւ ուշ առեն, և իրենց պահպանութեանը համար իրենք զիրենք իրենց Տէրոջը յանձնելն ետե հանգստանալու դացին : Ճանապարհորդը մեջ մեծ վերնաստուն մը հանեցին որուն պատուհանը դէպ ՚ի արևելք կը բացուէր : Անընատունին անունն էր Խաղաղութիւն * . հոն պառկեցաւ Կրիստիանոս մինչեւ արշալոյս, և ան առենը արթնցաւ ու սկսեց երպել .

Ո՞ւր եմ ես հիմա, ան է Հյաստուին
Ակը ու հողը համբորդաց վերայ :
Սյադէս ընել որ՝ մեղքերը ներուին,
Աւ արդեն ըլամ երկնից մօտակայ :

Սուսուն բոլորը մեկնն ելան, և քիչ մը խօսակցութիւն ալ ընելն ետե Կրիստիանոսին ըսին՝ որ համբայ չելք, մինչեւ որ ան տանը հաղուաղիւտ ըանեն իրեն ցուցընեն : Ուստի նախ և առաջ Գրատունը † տարին զինքը, ուր որ

* Խեղակորը մինչեւ որ Սոսուծոյ հետ խաղաղութիւն չըտնել ամենենին ապահով ու հանդիսաւ չքնանար : Բայց ՛Հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Սոսուծոյ հետ', ու խաղաղութիւն ունինք մեր խղճմանը ներուն հետ, ՛մեր Տէրոջը Յիսուս Կրիստոսի ձեռքով' : Հառակ + ե + 1 : Բայց Հյաստուս Կրիստոսի շորահացը վրայ հաւատք չունեցողները բոլորը օրէնքի անէծքին՝ ու մեղքին դասապարտութեանը տակն են, ու Սոսուծոյ թշնամի են :

† Գրատունը Սոսուածաշաշունչ զիրքն է + քրիստոնեան քանի որ կը յառաջանայ, առաւել քան զառաւել կը ծանօթանայ անոր . զիսաւոր նիւթը Յիսուս է, որ խօսամնշքներուն ու մարդարենթիւններուն մեջ տառաջագրուած

Խիստ հիմն պատմութիւններ ցոյց տուին իրեն • առանց մէջ՝ ինչպէս որ կը յիշեմ թէ երազիս մէջ տեսաց, բլուրին Տէրոջը աղքաբանութեան զիրքը ցոյց տուին իրեն թէ անիշոյ Հինաւուցին Որդին է ու 'ի յաւխոնից ծնած : Վասր մէջ շատ լման պատմուած էր իր ըրած բանիքը՝ ու հարիւրաւոր անձանց անունները կար, որ ան իր ծառայութեանն ընդուներ է • և թէ ինչպէս այնպիսի ընակարաններու մէջ զրեր է անոնք, որ ոչ ժամանակի երկարութիւնով ու ոչ ընութեան աղականութիւնով աւրելիք ունենի :

Վակէ ետե անոր ծառաներէն մէկ քանիներուն ըրած զարմանալի զործքերն իրեն կարդացին • զոր օրինակը թէ ինչպէս անոնք “ Յօնադաւորութիւններու յաղթեցին, արդարութիւն զործեցին, խոստմունքներու հասան, առիւծներու բերաններ զոցեցին, կրակի զօրութիւն մարեցին, սուրի բերնէ աղասեցան, տկարութենէ ուժովցան, պատերազմի մէջ զօրաւոր եղան և օստարներու բանակներ ցըռեցին ” : Խքք • ժամ • 33, 34 :

Աշքը տանը յիշատակարաններուն մէկ ուրիշ մասն ալ կարդացին իրեն, որուն մէջ կ'երեար՝ թէ իրենց Տէրը նըրափ կամք ուներ իր նորհաց մէջ ընդունիլ ամէնը և մինչեւ անդամ անոնք որ յառաջմանէ մէծ նախատինդներ հասցուցեր եին իր անձին ու իր զործքերուն : Վասր մէջ նաև շատ ուրիշ երեկի բաններու պատմութիւններ ալ կոյին, որ անոնց ամէնուն վրայով՝ Վրիստիանոս տեղեկացաւ • զոր օրինակ հիմն ու նոր բաններու պատմութիւններ՝

Է : “ Վրիստոս ” ու “ Վրիստիանի վրայ մասածութիւնը, անոր ծննդեանը՝ անձին՝ կենացը՝ զործքերուն՝ մահուանը՝ քաւութեանը՝ արդարութեանն ու վրկութեանը վրայ մասածութիւնը քրիստոնէից հոգիններուն բերկրութիւնն է : Վասր հոգեւոր մասածութեան քրիստոնեան աշխայդ չկընար ԸՆԿԱՆ :

հանդերձ մարգարեռութիւններով ու նախազուշակութիւններով, որոնք իրենց ատենին պիտի կատարուին, որ թշնամիները սարսափին ու զարմանան, և ճամբորդները մինիթարուին ու զուարձանան :

Հետևեալ օրը զինքն առին՝ ու զինարանը տարին, ուր ցոյց տուին իրեն ամէն կերպ զէնքերը որ իրենց Տէրը պատրաստեր էր ճամբորդներուն համար, ինչպէս սուր, վահան, սաղաւարտ, զրահ, ու չմաշելու հողաթափաներ * : Եւ աս տեղ տեսայ որ Տէրոջը ծառացութեանը համար այնքան մարդիկ զինուորելու համար զէնք կար, որքան որ աստղ կայ երկինքը :

* Եաւ քանի մը գործիքներ ցոյց տուին իրեն՝ որոնցմնով անոր ծառաները զարմանալի բաներ գործեր էին † : Խնչ պէս Վոլուսին զաւազանը • ան ցիցն ու ուռը որով Յայել Ախերան սպաննեց • ան սավորները՝ վողերը՝ ու ջաշերը՝ որով Գեղեռն Վաղիամն բանակը փախցուց : Յետոյ իրեն ցոյց տուին ան եղներուն խթանը՝ որով Ամանդար վեց հարիւր հոգի մեռցուց . նաև ան իշուն ծնօտի ոսկորը՝ որով Ամմիան սքանչելի կոտորած մը բրաւ : * Եաւ ան պարսն ու քարը ցոյց տուին՝ որով Դաւիթ՝ Գողիաթն սպաննեց, և ան սուրը՝ որով իրենց Տէրը անօրէնութեան Վարդը պիտի սատկեցընէ որսի ելած օրը : Ասոնցմէ 'ի

* Տէրը իր անսահման խնասութեամբը բոլոր մեր թշնամիները կը ճանչնայ, ու իր մարդասիրութեամբը պէտք եղած զրահն իր ժողովուրբին կու տայ : Ո՞հ, Բնչ ամենօրհնեալ Տէրոջ կը ծառացենք մենք :

† Ասուած տկար ու բատ ինքեան անբաւական միջոցնեն բով միշտ մեծամեծ գործքեր կատարած է : Այսպէս է հիմա ալ : Վղջմքն ու Վւետարանին քարոզութիւնը բատ ինքեան տկար միջոցներ են, բայց Աստուծոյ դրած միջոցներն են անոնք՝ և անոր համար բոլոր ընդդիմութիւններու կը յաղթեն :

շատ շատ ուրիշ պատուական բաներ ալ ցոյց առին՝ որոնց
շատ հանեցաւ Քրիստիանոս * : Ասիկայ լմնալն ետև՝
նորէն ամեն մարդ հանգստանալու դնաց :

Այսուհետեւ երազիս մէջ տեսայ՝ որ հետեւեալ առուուն
Քրիստիանոս երաւ իր ճամբան երթալու , բայց անոնք
ուղեցին որ օր մըն ալ իրենց հետք կենաց : Ու ըսին որ՝
թէ որ օրը պարզ ու պայծառ ըլլայ , պիտի ցոյց տան իրեն
ան երջանիկ լեռները՝ որոնք իր մխիթարութիւնը պիտի
աւելցնեն . քանդի անոնք իր հիմակուան կեցած տեղէն
առելի մօտ են ան իր բաղձացած քաղաքին . ուստի Քրիս-
տիանոս հաճեցաւ և մնաց : Երբոր արեւը ծագեցաւ ,
տանը տանիսը հանեցին զինքը՝ և ըսին որ դէպ 'ի հարա-
ւային կողմը նայի : Քրիստիանոս դէպ 'ի ան կողմը
նայեցաւ և ահա տեսաւ՝ որ հեռուն շատ զեղեցիկ լեռ-
նային երկիր մը կար , անտառներ՝ այդիներ՝ ամեն տեսակ
պատշներ՝ ծաղիկներ՝ աղբիւրներով և առուներով զարդա-
րուած , որոնց նայելը շատ զուարձալի էր : Եսայ . Լկ .
17 : Ան ատենը Քրիստիանոս ան երկրին անունը հար-
ցուց . և անոնք պատասխան տուին՝ թէ անիկայ լշմա-
նուելին երկիրը կ'ըսուի + ու աս րլուրին պէս ան ալ
բոլը ճամբորզներուն պատրաստուած տեղ մըն է ըսին :
Ու երբոր հոն երթաս ըսին՝ անկէ Երկնաւոր Քաղաքին
դուռը կընաս տեսնել , ինչորէս որ հոն ընակող հովիւնե-
րը ցոյց պիտի տան քեզի † :

* Աստուծոյ խօսքին մէջ պատմուած հին բաներուն վրաց
մտածելը՝ հաւատքին ուրախութիւնն ու փառքն է , յոյսը
կը կենդանացընէ , ու քրիստոնէական ասպարեզին մէջ
առաջ վազել կու տաց հոգւոյն :

† Աս ամենը ան հոգեոր ու ճշմարիտ տեսարաններուն
նկարագրութիւնն է որով Քրիստոսի տեսանելի եկեղե-
ցոյն մէջ շնորհաց խօսքին քարոզութեանը միջնորդու-
թիւնովը հոգիները կը քաջալերին :

Հիմա Կրիստիանոս մատենց որ ալ ճամբայ ելլելու առնեն է , և միւսներն ալ հաճեցան որ երթոց + բայց ըստն թէ Եկոր առաջ անդամ՝ մըն ալ զինարանն երթանք : Այսպէս ելան գայցին + ու երբոր հոն մոտա՞ Կրիստիանոսը դժմէն մինչեւ ոտքը զրահաւորեցին * , որ եթէ ճամբան իր վրայ յարձակում ըլլայ զնուած զտնուի : Ուստի Կրիստիանոս այսպէս սպառազինուած իր բարեկամներուն հետ դուրս ելաւ ու տանը դուռը զնաց ու հոն Դոնապանին հարցուց թէ արդեօք ճամբորդ անցաւ անիէ :

Այս + պատասխանեց մարդք :

Կրիստիանո . Ա'աղաւմմ քեղի՞ կը ճանշնայի՞ր անիկայ : Դոնապան . Եր անունը հարցուցի , և ինք ըստ թէ Հաւատարիմ կը կոչուի :

Կրիստիանո . Երա՞ւ , ես անիկայ կը ճանշնամ . իմ քաղաքացիս ու մօտ դրացիս է . իմ ծնած տեղէս եկած է : Երդեօք հըշտի յառաջ գացած կը կարծես անիկայ :

Դոնապան . Եսիկայ հիմա ըլուրին ստորոտը հասած է :

Կրիստիանո . Ուրեմն բարի Դոնապան , մնաս ըարով + Տէրը քու հետդ ըլլայ + և ինծի ցոյց տուած բարեւ բարութեանդ համար քու բարութիւններդ անշտի աւելցնէ † :

Դն առենը սկսեց յառաջ երթալ իր ճամբան + բայց կոհականութիւնը՝ Բարեկապաշտութիւնը՝ Աէրն ու Խոհեմութիւնը ուղեցին որ մինչեւ ըլուրին ոտքը իր հետն երթան : Այսպէս մէկտեղ սկսեցին յառաջ երթալ իրենց առջի խօսակցութիւնները կրկնելով , մինչեւ որ եկան անտեղը հասան՝ ուրիէ անդին ըլուրէն վար պիտի իշնէին :

* Աս քրիստոնէական սպառազինութեան ինչ ըլլալը տե՛ս , Եփէս + դ . 13 , եւ :

† Կրիստոնեոյք Կրիստոսի պաշտօնեանները կը սիրեն՝ ու կ'օրհնեն զանոնիք և կ'աղօթեն անոնց համար , ինչու որ Տէրը իրենց հողիններուն օգտակար ըլլած է զանոնք :

Վե ատենը Կիրիստիանոս ըստ . Խնչպէս որ վեր ելլեւը դժուարին էր , այնպէս ալ աեսածիս նայելով , վար իշնելը վտանգաւոր է : Այս , այնպէս է , ըստ Խոհեմութիւնը . քանզի մարդու մը դժուարին բան է Խոհարհութեան Չորն իջնել ինչպէս որ դուն հիմա կ'իջնես , ու ձամբուն մէջ երեք չպորիլ . անոր համար ահա մենք եկանք բլուրն 'ի վար քեզի ընկերութիւն ընելու : Ուստի Կիրիստիանոս իջնել սկսեց՝ բայց շատ դպուշնալով . սակայն մէկ քանի անդամ դլորեցաւ :

Աս միջոցիս երազիս մէջ աեսոց որ երբ Կիրիստիանոս բլուրին ստորոտը իջաւ , իր բարի ընկերներն իրեն հայ մը չիւ մը դինի՛ ու ողբոյզ մը չամիչ տուին , և անկետ իտե ինք իր ձամբան դնաց :

* Կիրիստոնեայ մը շատ մասնաւոր ու յատուկ բարութիւններ վայլելէն ետեւ վտանգի տակ է որ վբանոց ու անոց պատճառաւոր բարձրամուի : Այսպէս պատահեցաւ մինչեւ անդամ Պօղոսին . ու ան պատճառաւոր Սատանայի հրեշտակը կը չարչարեր զինքը : Է Առնե՛ . Ժը . 7 : Անը հիմակուան խառն վիճակին մէջ դիտէ Տէրը որ առէկ չէ մեղի միշտ հոգեոր ուրախութեան ընոր ընակիլ . ուստի հոգւոյն աղէկութեանը համար մարմինը պէտք է նուազիլ ու ցած պահուել , որ չուսց թէ հոգեոր հպարտութիւնն անոր վրայ աիրէ : Տէրը իր ժողովուրդը ընոն 'ի վար Խոհարհութեան Չորը կ'իջնեցընէ կամ հոգեորապէս անոնց յցսերն աղօտացընելով , կամ մարմնաւորապէս անոնց բարեկամները՝ առողջութիւնը կամ ստացուածքը իրենցմէ առնելով : Այս դէալքերուս մէջ դիւրութեամի կը զլորին անոնք . իրենց մոլութիւնները կ'արթըննան . ոչ միայն հպարտութիւնը՝ այլ անհամբերութիւնը՝ նախանձութիւնը՝ անհաւատութիւնը՝ ամրատամութիւնն ու սրտին ուրիշ զաղտնի չարութիւններն ալ երեան կ'ելլեն . Կիչերը կան որ Խոհարհութեան Չորն իջնեն՝ ու արտնջելու և դժողոհելու՝ և Աստուծոյ նախամամութեանը վրա դանդառելու մէջ չիջնան :

Բայց հիմա՝ աս Խոնարհութեան Չորբն մէջ խղճալի
Վրիստիանոսը շնորհութեան մէջ լինկաւ. • քանզի միայն
քիչ մը համբաց յառաջ որ գնաց, աեսաւ դաշտին վրայէն
որ մէկ Չարաձճի մը կու զար գէպ ՚ի իրեն. • ասոր անու-
նը Ապողղինն կ'ըսուեր : Յայց. • թ. 11 : Այս ասենը
Վրիստիանոս սկսեց վախնալ ու մտածել թէ արդեօք ևս
դասնաց, թէ եղած անդը կայնի * : Բայց անգամ մըն
ալ մտածեց որ իր կոնակը զննուած չէր. և անոր համար
խորհեցաւ որ կոնակն անոր դարձընելը աւելի պատեհու-
թիւն կու տայ անոր իր նետերովը դիւրութեամբ դինքը

* Աստանային փորձութիւնները դլմաւորաբար երկու
կերպ են : Եռաջին կերպ փորձութիւնները շատ կամ
քիչ բոլոր հաւասարացեաններուն հասարակ են : Տեղամինն
կը ջանաց անոնց վատթարութիւններն ու անհաւատու-
թիւնը արթընցընել, բայց անոնք կարող կ'ըրպան անոր
դէմ կննալու, ու Աստուծոյ ուժովը յաղթառութիւն կը
ստանան՝ թէպէտ և չէ թէ առանց վէրքեր ընդունելու :
Երկրորդ կերպ փորձութիւններն աւելի ևս զարհութելի են՝
երբոր թշնամինն սովորաբար մարմիններ կազմութեանը մէկ
տկարութիւնով բռնն իսկ մարբն կարողութիւններուն վայ
կը յարձակի ու կը թունաւորէ. երեսկայութիւնը կը
մթնցընէ ու կը շիտմէ, ու անոնք վախով կը լցընէ :
Ասոնք երբոր ուժդիմն ըլլամ դէմ կ'ենալու կարողութեանն
կը զրկին հոդին, ու շատ անգամ մինչեւ յուսահատու-
թեան կը մատեցընն : Բայց Աստուծոյ ժողովորոցը շա-
տերն աս փորձութիւններուն այնչափ անծանօթ են՝ որչափ
որ ցամացի վրայ եղողները Ավելիանոսին վրայ նաւարկողնե-
րուն վտանգներն ու նեղութիւնները չն զիտեր : Անլո-
մազնոտ անձինք Աստանային աս անգունդներէն՝ աւելի
նեղութիւն կը կրնն : Վրիստիանոսին Ապողղինն
հետ կոռւիլը առաջն կերպ փորձութիւններուն կը-
նաց մերաբերիլ . երկրորդին քանի մը օրինակնե-
րը իր Վահուան Ըուքին Չորեն անցնելուն կը տես-
նուին :

պիրաւորելու . ուստի դէմ զնել վճռեց՝ ու Եղած տեղը կայնեցաւ . քանզի՞ ինքնիրեն ըստ , թու որ կեսանքս ազատելէն ուրիշ բան աւ չըլսար խմ նպատակս , ամենէն աղէկը կայնին էր :

Այսպէս Վրիմատիանոս յառաջ զնաց , ու Ապողիոն իր դէմն ելաւ : Հիմա առ այլանդակ գալանը շատ սոսկալի տեսիլը մը ունէր . ձուկի նման թեփերով պատաժ էր , որ անոնցմավ կը հպարտանար . վիշտավի թեկեր ունէր ու արծու ուրքեր , և իր փորեն կրակ ու մուխ կ'ելլէր . ու իր բերանն առիւծի պէս էր : Երբոր եկաւ Վրիմատիանոսին հասաւ , խոժոռ դէմքով մը անոր վրայ նայեցաւ ու այսպէս սկսեց խօսիլ անոր հետ * :

Ապողիոն + Ո՞ւրկէ կու զսս , և ո՞ւր պիտի երթաս :

Վրիմատիանոս . Ես Ասրծանման Վաղաքէն կու զամ՞որ ամէն չարիքներուն տեղն է , ու Ախոն քաղաքը կ'երթամ :

Ապողիոն . Ասով կը ճանշնամ թէ զուն իմ հպատակներուն մէկն ես . քանզի բոլոր ատ երկիրը խն է , ու ես անոր իշխանն ու աստուածն եմ : Ուրեմն աս ի՞նչ է որ դուն քու թաղաւորեղ փախար : Եշէ չյուսցի որ դուն ինծի աւելի ծառայութիւն կը նաև ընել , հիմա մէկ հարուածով մը զետինը կը զարնէի քեզ :

* Թու և Աստանայ քու դէմկ ելլէ ու զարհուրելի կերպով վրադ յարձակի , մի՛ վխճանար . Հապա աս միաբդուեր՝ որ Աստանան ճանապարհորդ Վրիմատիանոսին վրայ յարձակելու թոյլաւութիւն ունենալին առաջ Տէրը զէնք պատրաստեց ու զրահաւորեց անիկայ Աստուծոյ զրահովը , որով կրցաւ դէմ կայնիլ յաղթել Աստանային՝ ու անոր բոլոր կրակոտ նետերը շինուցանել : Աստանային հետն Եղած բոլոր կոխները Տէրոջը պատերազմներն են . անոր զօրութիւնը մեզի կը հանի անիկայ յաղթելու . ուստի հաւատքին լաւ պատերազմը պատերազմ :

ՎԵՐԻՄՊԻԿԱՆԱ • Երաւ և քու սահմաններուոք մէջ ծնած եմ, բայց քեզի ծառայութիւն ընելը դժուարին է, ու այնպէս վարձք մը կու տաս որ անով մարդ չկրնար ապրիլ. ինչու որ մեղաց վարձքը մահ է • Հայով կը 23 • ուստի երրոր կատարելութեան հասայ, ուրիշ խելացի անձանց ըրածին պէս՝ նայեցայ * որ ըլլայ թէ լաւագոյն տէր մը դանեմ :

ՎԵՐՈՊՂՅՈՆ • Չկայ մէկ թաղաւոր մը որ այնպէս անհողութեամբ իր հպատակները կորսընցընէ, ոչ ալ ևս տակաւին քեզ ձեռքէ պիտի հանեմ • բայց որովհետեւ քու ըրած ծառայութեանդ ու ընդօւնած վարձքիդ վրայով գանդաս կ'ընես, դուն ևս դառնալու կամք ըրէ, ու ևս առ տեղս կը խոստանամ թէ ինչ որ մեր երկրին մէջ կայ քեզի կու տամ :

ՎԵՐԻՄՊԻԿԱՆԱ • Բայց ես ինքինքս ուրիշն մը տուի, այսինքն՝ թաղաւորաց թաղաւորին • ու ի՞նչպէս կրնամ հիմա իրաւամբ քու հետո ես երթալ :

ՎԵՐՈՊՂՅՈՆ • Եսով դուն ան առակին հակառակ՝ Արքա շարեց մեծագոյն ընտրեցիր • բայց շատ անդամ անոնք որ իրենք զիրենք անոր ծառաներն ըլլալ խոստովանեցան, քիչ մը ատենէն ետեւ անկէ ետ կեցան՝ ու նորին ինծի դարձան † :

* Եսոր բոլորը յառաջ կու գայ Վասուծոյ Խօսքին հաւասարին՝ մեղքին վատթարութեանը վրայ մորին համողուելին՝ մեղաւորին ինքինքը թշուառ վիճակի մէջ գտնելին՝ ու Վասուծոյ Որդւոյն չնորհքին ու փրկութենին : Անկ մարդ մը աս Ճշմարտութիւններուն հաւատը ընծայելուն պէս՝ սուտերուն հօրը ծառայութիւնը կը մերժէ, ու Ճշմարիտ հաւատրով Վատանային դէմ կը զննուորի . բանդի հաւատրին վատաւորութիւնն է բոլոր իր առարկութիւնները Վատաւածային Ճշմարտութենին հանել :

† Առտերուն հայրն ահաւոր Ճշմարտութիւն մը կը խօսի աս տեղս : Կ'նչ սարսափելի բան է մտածել թէ մէկ

Եկառ դուն ալ այսպէս ըրէ , ու բոլոր քու ըրածդ պիտի
ներեմ՝ քեզի :

ՔՐԻՍՏՈՒԹՅՈՒՆ • Ես խօսք տուի անոր , ու իրեն հպատա-
կելու ուխտ ըրի . ուրեմն ի՞՞նչպէս կընամ դառնալ անկէ
ու իրեն ուխտադրուժ չկախուիլ :

Սարդըն . Դուն ինձի ալ ան նոյն բանն ըրիր , և սա-
կայն ես կամք կ'ընեմ որ բոլորը մեկի ձղւմ՝ թէ որ հիմն
նորեն դառնաս ու հա երթաս :

ՔՐԻՍՏՈՒԹՅՈՒՆ • Քեզի խօսք տալս իմ գեռ կատարելու-
թեան չասած առենս եր . և անկէ ՚ի զատ , այնպէս իլ
սեպեմ որ ան օճաղաւորը՝ որուն դրօշակին առկը հիմն
կայնած եմ , կարող է զիս իմ խոստմններէս արձակել ,
ու նաև ներել ինձի որ քեզի ան խոստմններն ըրի : Եւ
մանաւանդ՝ ով ապականիչ Սպողին , Տվյարիտը խօսե-
լով , ես անոր ծառայութիւնը՝ վարձքը՝ ծառաները՝ կա-
ռավարութիւնը՝ ընկերութիւնն ու երկիրը աւելի կը սիրեմ՝
քան թէ քուեկու . ուրեմն ալ մեկդի ձղէ զիս համզելը .
ես անոր ծառան եմ , ու իրեն պիտի հետեւիմ :

Սարդըն . Երբոր սիրտդ իջնէ նորէն մոտածէ ան բա-
ներուն վրայ՝ սրոնց պիտի պատահիս քու զայած ճամբարդ
մէջ : Դուն զիտես՝ որ բատ մնձի մասին անոր ծառանե-
րուն վերջը գէշ կ'ըլլայ , քանզի անոնք ինձի և իմ ճամ-
բաներուն դէմ՝ յանցաւոր կը զանուեն : Վնոնցմէ քանի
քանի անձննը ամօթալից մահով սատկեցան : Եւ ան որ
դուն իր ծառայութիւնը իմինէս աղէկ կը սեպես , ինք ե՞րբ
իր եղած տեղը ձգեց եկաւ իրեն ծառայովներուն մեկը իմ՝
ձեռքէս ազատելու : Բայց թէ որ իս կը հարցընես՝ քանի
քանի անդամ՝ ինձի հաւատարմութեամբ ծառայողները

մարդ մը Ծիստսի ծառայ եղած ճամբայ ելէ , ու կըկին
Սատանային ծառայութեանը դառնայ . և սակայն քանի
քանիներուն այսպէս կը պատահի : Բայց իրենց վախճանը
չար է ու իրենց մահը դատապարտութեամբ ծառայողները

թէ կարողութեամբ և թէ խորամանկութեամբ ազատեցի իրմէն և իրեններէն՝ ինչպէս որ ըուլոր աշխարհ պիտէ : Եւ ահա այսպէս քեզ ալ պիտի ազատեմ ես * :

* Քը սորբիանուն . Ասոնք ազատելու համար հիմակուան իր յապազելք՝ անոնց սէրը փորձելու համար է , թէ արդեօք մինչև վերջը անոնք իրեն պիտի յարի՞ն : Եւ ան որ ըստր թէ իր ծառաներուն վերջը դէլ կ'ըլլայ , ասորիս իրենց առջին խիստ փառաւոր բան կը սեպուի : Վանդի անոնք հիմակուան ազատութեանը վրայ այնչափ յոյս չտնին . ինչու որ կը սպասեն իրենց փառացը . ու երբոր իրենց ծառաւորը իրեն ու իր հրեշտակներուն փառքով գալու ըլլայ , ան առենք անոնք պիտի ընդունին ան իրենց փառքը † :

Ապողոքն . Դուն արդէն անհաւատարիմ եղած ես իրեն ծառայութիւն ընելուու մէջ , ու ինչպէս կընաս խորհիւթէ անկէ վարձք պիտի առնես :

* Քը սորբիանուն . Խ՞նչ բանի մէջ անհաւատարիմ եղայ իրեն՝ ով Ապողոքն :

Ապողոքն . Առջի ճամբայ ելլելուզ՝ երբոր Ա Հատութեան Փոսին մէջ զրեթէ կը խեղզուեիր՝ նուանցար : Հյուռ ճամբաներ երթալու աշխատեցար քու բեռնէզ ազատելու համար , երբոր քեզի կենալ պէտք էր մինչև որ քու ծառադաւորդ վերցընէր անիսայ : Չարաչար քնացար և քու խիստ պատուական բաներդ կորմնցուցիր : Եւան առիւթ-

* Եկատէ թէ Աստանան ովքափ նուրը ճամբաներ ու խորամանկ առարկութիւններ կը բանեցընէ որ ճամբորդները Տէրոջը ճամբուն մէջ յարատենէլէն արդիլէ : Եցանի թէ Աստանային խորամանկութիւններուն անծանօթ ու անպատճառ չըլլանք :

† Ահա քեզի հաւատորին պատուական առարկութիւնը Աղեկ ըստ Պօղոս՝ թէ “ Ամէն բանին վրայ հաւատքին վահանը առէք , որով կարող պիտի ըլլաք չարին ամէն կրակոտ նետերը մարելու ” : Եկէն . դ . 16 :

ները տեսնելուդ սեպէ թէ խելքդ պառկեցաւ ևս դառնաւ-
լու : Ու երբոր քու համբուղ՝ ու լսած և տեսած բանե-
րուդ վրայով խօսելու ըլլաս , ներսանց քու բոլոր ըսած ու
ըրածներուդ մէջ սնափառութեան փափաք մը ունիս * :

Վրիմագիտուս . Բոլոր ասոնք ճշմարիտ են , և ասոնցմէ-
աւելի ուրիշներն ալ կան որ դուն ձգեցիր † . բայց ան
թագաւորը՝ որուն որ ես կը ծառացեմ ու զինքը կը պա-
տուեմ , ողորմած է ու միշտ պատրաստ է ներելու :
Բայց աս ալ մէկդի թող մնայ + աս ամէն պակասութիւն-
ները քու երկրիդ մէջ իմ վրաս եկան . Բնչու որ ան տեղ
ծծեցի ես անոնք + ու անոնց տակը հեծեցի , և դդումի եկայ ,
ու իմ թագաւորէս թողութիւն դտայ :

Են ատենը Վարդին սաստիկ սրտմտութեամին սկսեց
ըսել . Ես թշնամի եմ աստ թագաւորին . ատելի են
ինծի անոր անձը՝ օրէնքներն ու ժողովուրդը . ես դիտմամին
դուրս ելսց որ քեզ արդիլիմ :

Վրիմագիտուս . Ո՞վ Վարդղին , դպյու եղի՛ք ընելու բա-

* Սատանան արդարապէս կը կոչուի Վրիմատոսի եղբայր-
ներուն՝ դէմ չար խօսողը . Յայտ . ժի . 10 . ինչու որ
անոնց համար Վաստուծոյ առջին ու իրենց խղճմտանիներուն
չարախօսութիւն կ'ընէ : Բայց անոնք անոր յաղթեցին՝
Վրիմանուկին արիւնովը , ու իրենց վերայութեանը խօսովը .
Յայտ . ժի . 11 . թէ Վրիմատոսի արիւնովը փրկու-
թիւն դտան , այսինքն՝ մեղաց թողութիւն : Եցէն .
առ . 7 :

† Սատանային մեր վրայ զտած յանցանիները երբոր
ճշմարիտ ըլլան՝ աղէկ է որ վրանիս առնենք՝ մանաւանդ թէ
մեծցընենք ալ անոնք , որ Վրիմատոսի նորհաց առատու-
թիւնն ամէն բանէ վեր անցնի , ամենուն ձրի թողութիւն
չնորհելուն : Վայակէս մենք խօսարհեցընելով ու
Վրիմատոս բարձրացընելով՝ Սատանան չընար առիթ մը
դանել մեր վրայ , թէ և ասիկայ մեղի դէմ կատղեցընէ
զինքը :

Նիդ վրայով՝ քանզի ես արքունի ճամբային՝ այսինքն սրբութեան ճամբուն մէջն եմ՝ անոր համար դուն քեզ աղէկ նայէ :

Մն ատենը Սպողինն ճամբուն բոլոր լսնքը բռնեց իր սորբերը բանալով՝ ու ըստաւ ։ Ես աս բանին վրայ վախ մը չունիմ ։ դուն քեզ մեռնելու պատրաստէ ։ քանզի իմ տարտարոսական որջիս վրայ երդում կ'ընեմ՝ որ ալ ասկէ անդին պիտի չերթաս ։ աս տեղը ես քու հոգիդ պիտի առնեմ ։ Սո ըսելով՝ բոցի պէս վառած նետ մը նետեց անոր կուրծքին ։ Բայց Քրիստիանոս իր ձեռքը վահան * մը ուներ՝ որ ան նետին գէմ դրաւ, և այսպէս անոր տալու վեան արդիլց :

Հիմա Քրիստիանոս իր սուրը քաշեց, քանզի տեսաւ որ բան անեսնելու ժամանակին էր ։ Սպողինն ալ շուտով անոր վրայ հասաւ՝ կարկուտի պէս նետելով, որով Քրիստիանոսին դլուխը՝ մեռն ու սորը վիրաւորեց, թէ պէտ և Քրիստիանոս կրցածին չափ աշխատեցաւ անվեաս մնալու ։ Սոիկաց քիչ մը տկարացուց Քրիստիանոսը ուտափ Ծպողինն կատաղութեամբ իր գործին ետևէն եղաւ ։ ու Քրիստիանոս նորէն քաջալերութիւն առաւ՝ ու կրցածին չափ արիաբար դէմ դրաւ անոր ։ Սո սաստիկ կոխւը կէս օրէն աւելի քշեց, մինչեւ որ Քրիստիանոս սեպէ թէ բոլըրովնն կարողութենէ ինկաւ ։ Կանզի պէտք է դիտ-

* Սոիկաց հաւատքին վահանն էր, այսինքն Քրիստոսի իրեն համար ըրածին՝ Քրիստոս՝ իրեն ի՞նչ ըրալուն՝ ու իր վրայ ի՞նչ ընկլուն՝ ու իր Քրիստոսով թողութիւն՝ արդարութիւն ու սրբութիւն գտած ըլլալուն հաւատալը ։ Հաւատքին վառաւոր դաւանութիւնը Քրիստոս կը պատուէ, Սատանային բոլոր կրակու նետերը կը մերժէ ու կը չիջուցանէ, Պետրոս ասոր կը յորդորէ ըսելով ։ “Որուն (Սատանային) դէմ կեցէք հաւատքով հաստատուած” ։ ա՛ Պիտի ։ և ։ 9 :

նաս որ ՚Քրիստիանոս իր վերքերուն պատճառաւը հետզհետէ հարկաւ պիտի տկարանար :

Սպողղին աս պատեհութիւնը տեսնելով սկսեց ՚Քրիստիանոսին վրայ գալ , ու անոր հետ մարտնչելով զետինը զարկաւ անիկայ , և ասով ՚Քրիստիանոսին սուրը՝ իր ձեռքէն թռաւ : Ան ատենը ըստ Սպողղինն . և իմ քեզ յաղթեցի . և անոր վրայ սկսեց անիկայ մեռցնելու համար այնպէս ձմեւ , որ ՚Քրիստիանոս յշյոը կտրեց իր կեանքէն * : Բայց Սատուծոյ կամելովք երբոր Սպողղինն իր վերջն հարուածովին աս բարի մարդուն վերջը պիտի բերէր , ՚Քրիստիանոս արագութեամբ մը ձեռքն երկնցուց իր սուրը առնելու , և անիկայ յափշտակելով ըստաւ . “Ով իմ թշնամին՝ վրաս մի՛ խնդար . թէ և իյնամ , պիտի ելլոմ” ” . Այդ . է . 8 . և աս ըսելով սաստիկ մը վիրաւորեց անիկայ † , որով՝ իր մահացու վերքը ընդու-

* Կարելի է որ մասածենք թէ ասիկայ շատ ծանր բան մըն է . ինչո՞ւ համար քրիստոնեաց մը այսչափ սաստիկ նեղութիւն պիտի կրէ Աստանայէն : Բայց Սատուծ ինչո՞ւ համար զէնք կու առ մեղի , եթէ ոչ անով կոռւելու . ու անոր պատուականութիւնը վարձելու՝ ու անիկայ դործածենուս իր ամենակարող զօրութեանն ու անփոփոխ սիրոյն հաշակն առնելու . քանզի թէպէտե մենք տկար ենք՝ բայց ինք ամենակարող է մեղի զօրութիւն տալու . անոր համար պատուիրուած է մեղի զօրանալ Տէրովնով ու անոր զօրութեան կարողութիւնովը : Եթէ՞ . չ . 10 :

† ՚Քրիստոնէինն սուրը՝ որով իր հօգենոր թշնամին կը զարնէ , Սատուծոյ խօսքն է : Երբոր աս զէնքը չունենանք , թեքահաւատութեան որս կ'ըլլանք : Այսպէս եղաւ ՚Քրիստիանոսին՝ երբոր ինք Սպողղիննին հետ ան զարհութելի կոխւը կ'ընէր : Օմերահաւատութեան զօրութիւնովն իր սուրը ձեռքէն կտրանցուց , ու սկսեց իր կեանքէն յշյոը կտրել . բայց երբոր կրկնն իր սուրը իր ձեռքն առաւ՝ իր թշնամոյն մինչեւ սրտին թափանցեց , ու

նող մէկու մը պէս ետ քաշուեցաւ Ապողիոնն + Վրիստիանոս անիկայ տեսնելով դարձեաւ անոր վրայ յարձակեցաւ ըսելով . Ես ամեն բաներուն մէջ աւ աւելի յաղթող կ'ըլլանք անով՝ որ մեզ սիրեց * : Հառավ . Է . 37 : Ասոր վրայ Ապողիոն իր վիշապային թշերը բացաւ ու այնպէս սկսեց փախչել , որ Վրիստիանոս աւ չտեսաւ զանիկայ . Յավ . դ . 7 :

Իոլոր աս կոխին ատենը Ապողիոնին հանած աղաղակներն ու սոսկալի մանջիւնները մէկը չկրնար Երևակայել թէ որ ինքն ալ ինծի պէս տեսած ու լսած չըլլայ անոնք : Խեր վիշապի պէս կը խօսէր . և ընդհակառակն ի՞նչ հառաջանքներ ու հեծութիւններ կ'ելլէին Վրիստիանոսին սրտէն : Իոլոր ան ատենը բնաւ չտեսայ որ մէկ անգամ գոնէ հաճելի գէմք մը ցուցըներ՝ մինչեւ որ խմացաւ թէ իր երկասցրի սուրովը Ապողիոնը վիրաւորեց . ան ատենը իրաւցընէ խնդաց , ու դէմ 'ի վեր նայեցաւ † : Իսցց ամենասուկալի կոխւ մըն եր ան , որուն նմանը բնաւ տեսած չէի ես :

Վրիստիանոս կոխւը լմնալէն ետև ըսաւ . Վրոհութիւն

վերջապէս փախցուց անիկայ : Աեր քաջայալթ զօրադը լոււխն աւ երրոր Ատանային հետ պատերազմեցաւ , աս նոյն զէնքը գործածեց ու յաղթեց անոր : Ու թէ որ իրեն հետեռողները միշտ խելք ընելին ան նոյն զէնքը բանեցընելու , ամենեին անյաջող պիտի չգտնուեին :

* Այ աք առ որ՝ Տէրը լոկ դիտողի մը պէս չկայնիր նայիր մէր կոխւներուն . հապա ամեն չար օրերու ու ամեն հաւատոյ պատերազմներուն մէջ մեզ կը զօրացընէ , ու վերջապէս իր սիրովը յաղթութիւն ստացած մեզ ետ կը դարձընէ :

† Վրիստիանոս ոչ թէ մնակառ ու անձնապարձ հապա խոնարհ ու շնորհապարտ խնդումնվ խնդաց : Աեր նայեցաւ ու խնդալով իր ըրած յաղթութեանը ըոլըր փառքը Տէրովն ընծացեց :

պիտի մատուցանեմ՝ աս տեղը անոր՝ որ զիս առխճին բեր-
նեն աղատեց, անոր՝ որ Ապողիոնին դէմ ինծի օդնու-
թեան հասաւ։ Աւ ասիկայ ըրաւ՝ ըսելով։

Խմ՝ չար թշնամնցոյ զօրագլուխը,
Անծ Անեղքերուղ կործանումն ուզեց։
Անոր համար ալ աս չարաճըն։
Առուած զինուորած խմ վրաս խրկեց։

Աւ աս մոլեգնեալ դժոխայինը,
Խստա կատաղաբար զիս նեղը ձգեց։
Բայց ևս սուրովըս փախուցի զնորը,
Օչի ինծի Կիրիստոս օրհնեալ Տէրն օդնեց։

Ուստի Վատուծոյս ևս մատուցանեմ՝
Աշնաննաւոր գովարանութիւն։
Աւ իր սրբազն անուանը շնորհեմ՝
Վաղաղար բերնով փառք և դոհութիւն։

Ան առենը մեկ ձեռք մը երեցաւ իրեն կմնաց ծառին
տնը ըսեներէն քանի մը հատ բռնած, որոնք Կիրիստիանոս
առնելով կոփիին մէջը իր ընդունած վէրքերուն վրայ
դրաւ, և խկոյն բժշկուեցաւ *։ Ան նոյն տեղը նաև
նստաւ հաց ուտելու, ու քիչ մը առաջ իրեն տրուած
դինիէն խմելու + այսպէս կազզուրելով՝ իր ձամբորդու-
թեանը պատրաստուեցաւ քաշած սուրն իր ձեռքը բռնե-
լով †։ Քանզի՞ ըստ թէ, Կօնը դիսնամ, կարելի է որ

* Վատանային հետ կոռուելնուս ինչ վէրքեր որ ընդու-
նիք հոգ չէ + ինչու որ Հիմուս բոլորը կը բժշկէ : Բայց
ո՞վ պիտի բժշկէ ան վէրքերը՝ որ ու թէ չարին հետ
կոռուելնուս՝ հասկա անոր հետ միաբանելնուս իրմէն կ'ըն-
դունիք :

† Վատանային հետ կոփիւ ըսելը քրիստոնեաները կը
յոդնեցընէ՝ ու իրենց սուրը յարգել կը պատճառէ անոնց,

ուրիշ թշնամին մըն ալ ըլլայ մատը . սակայն բոլոր աս ձորին մէջ Ապողիոնէն ուրիշ թշնամին չպատահեցաւ :

Պանք որ՝ աս ձորին վերջը՝ ուրիշ մըն ալ կար՝ որ կը կոռուէր Վահուան Ծուքին Զորը * , ու ՚Բրիստիանոս հարկաւ անկէ անցնելու էր, որովհետեւ Երկնային ՚Բաղ զաքն Երթալու ճամբան անոր մ. թուեղին էր : Երդ՝ աս ձորը մէկ շատ տիրագին տեղ մըն էր : Երեմիա մարդարէն այսպէս կը ստորագրէ անիկայ . Վասպատ մը՝ ամայութեան և փոսերու Երկիր մը, չորութեան և Վահուան Ծուքին Երկիրը, Երկիր մը՝ ուսկից (՚Բրիստիանոսէն 'ի դաս) մէկը չանցաւ, և ուր մարդ չընակեցաւ † : Երեմ . Է . 6 :

Հիմա ՚Բրիստիանոս աս ձորին մէջ աւելի դժուարութիւն քաշեց քան թէ Ապողիոնին հետ կոռուած ատմնը, ինչպէս որ հետեւելք պատմութենէն պիտի տեսնես :

Ուստի Երազիս մէջ տեսայ որ Երբ ՚Բրիստիանոս Վահուան Ծուքին սահմանները մատաւ, Երկու հողի ելան իր դէմը՝ որոնք բարի Երկրին վրայով գէշ լուր ըերողներուն զաւելըններն էին, Թառաց . Ժկ . 33, ու արտորնօք ետ կ'երթային ♦ : ՚Բրիստիանոս այսպէս սկսեց խօսիլ անոնց հետ :

այնպէս որ Հոգւոյն սուրբ՝ Վասուծոյ Խօսքը ձեռքերնին բռնած Երթան :

* Վահուան Ծուքին Զորը կը նշանակէ հոգւոյն մթընաւանը ու լքանիլը :

† Երբոր Վասուծած իր Երեսը ծածկէ քրիստոնէին սըրտին այնքան մեծ դառնութիւն է ան որ ուրիշ մէկը չպիտեր :

‡ Յաճախ կը ուստահինք այսպիսիններուն, որոնք ճամշը կ'ելլեն մեղքի զգացում մը՝ ճշմարիս հաւատը մը՝ ստոյդ յօյս մը ու ՚Բրիստիանի վրայ անկեղծ սէր մը լունենալով, և ինչպէս որ իրենց դաւանութենէն պիտի դառ-

ՎՐԴԱՍՏԱՆԱԿԱՆԻ : ԱՅՀ կ'երթաք :

Պատասխան տուին թէ , Ետ ետ . և կ'ուղենք որ դուն
ալ մեղի պէս ընեն , թէ որ կեանքը կամ խաղաղութիւնը
պատուական կը սեպես :

Ի՞նչո՞ւ , ի՞նչ կայ , ըստ ՎՐԴԱՍՏԱՆԱԿԱՆԻ :

Մարդիք . Խ՞նչ պիտի ըլլայ , մենք աս համբէն կ'եր-
թայինք՝ ինչպէս որ դուն ալ կ'երթառ , և համարձակած-
նուն չափ գացինք . և իրաւցընէ սեպէ թէ ետ դառնալիք
չունէինք . քանզի թէ որ քիչ մըն ալ յառաջ գացած ըլ-
լայինք , պիտի չկընայինք աս տեղը գալ քեզի լուր բե-
րելու :

Իսյց ի՞նչ բանի պատահեցաք , հարցուց ՎՐԴԱՍՏԱՆ-
ԱԿԱՆԻ :

Մարդիք . Խ՞նչ կ'ըսես , դրեթէ Մահուան Ըստին
Չորին մէջ կը մանելինք , բայց բազզեթինիս բանելով առ-
ջևնիս նայեցանք՝ ու վասնվին մէջ չմնած տեսանք անիկայ :

Սառվ . Խոշ . 19 : Ճէ . 10 :

Իսյց ի՞նչ տեսաք , կըկին հարցուց ՎՐԴԱՍՏԱՆԱԿԱՆԻ :

Մարդիք . Խ՞նչ պիտի տեսնենք բուն ան ձորը , որ
կուպրի պէս մութէ : Այս տեղ տեսանք նաև տարսարու-
սին ուրուական երեսյթները՝ այժամարդերն ու վիշտավները .
նոյն ձորին մէջ լսեցինք նաև շարունակ հաշելու և ոռնալու
ձայներ՝ որ կը նուններ անպատճելի թշուառութեան տակ
եղած ժողովուրդի մը ձայնին , որոնք տանջանքի և շղթա-
ներու մէջ նստած էին հօն : «Եղին ձորին վրայ կ'իյնան
ևս խառնակութեան զարհուրելի ամպերը : Մահն ալ
մէշտ իր թեկերը անոր վրայ կը բանայ կը տարածէ : Երկար
ընենք , ամեն կերպով սոսկալի տեղ մըն է , և բոլորովին
անկարգ : Հօթ . դ . 5 : Ճ . 22 :

Նան , այնպէս ալ ՎՐԴԱՍՏԱՆԱԿԱՆԻ թաղաւորութեանն երթա-
լու համբուն վրայով գէշ լուր պիտի ըկրին :

Ուրեմն՝ ըստ Կիրիակիանոս, ևս ձեր ըստէն տակաւին չեմ խնամաք՝ որ իմ բաղձացած տեղիս ճամբան ասի՞կայ չէ։ Առջ. • ԽԵ. • 18, 19 : ԵՇԵ. • Բ. • 6 :

Առորդիւ. • Քու ճամբագ ան թող բլազ. մենք անիկաց մեր ճամբան բլազ չենք ուզեր :

Այսպէս իրարմէ զատուեցան, ու Կիրիակիանոս յառաջ զնաց իր ճամբան։ բայց տակաւին սուրբ քաշած իր ձեռքը բռներ էր, վախնալով՝ որ չըլայ թէ մէկն իր վրան դայ :

Ան առանք երազիս մէջ տեսայ՝ որ աս ձորին բռլը երկայնութեանը աջ կողմը մէկ խխատ խորունեկ փոս մը կար։ Սաբիկաց ան փոսն էր՝ ուր որ ամէն գարու մէջ կոյրերը կոյրերուն առաջնորդելով ինկան, և հոն ամէնն ալ թշուառ կորսուեցան։ Դարձեալ նայեցայ ու տեսայ՝ որ ձորին ճախ կողմը մէկ խխատ վասանգաւոր ցեխոտ տեղ մը կար, որուն մէջ թէ որ աղեկ մարդ մը անզամ իշխալու ըլլայ՝ յատակ չզաներ որ իր սուրբերը դնէ ու կանդնի։ Դաւիթ թագաւորը անզամ մը ան նոյն ցեխին մէջն ինկան։ և անտարակցոս պիտի ընկղմէր անոր մէջը, թէ որ Ամազուր զինքը դուրս չչաներ *։ Առջ. • կիթ. • 14 :

Աս տեղը՝ քայելու ճամբան ալ չափաղանց նեղ էր, և անոր համար բարի Կիրիակիանոսը աւելի շիոթութեան մէջ ինկան։ Կիանզի մնաթ տեղը + երբոր մէկ կողմի փոսն

* Աջ կողմի փոսը կը նշանակէ սխալ գաղափարները կամ ներքին մնալութիւնները՝ ուր որ կցըրը այսինքն հոգեոր ճշմարտութիւնները չտեսնալը կ'առաջնորդէ կոյրին՝ այսինքն անոր որ ընտ հոգեռքապէս չլուսաւորուեցան։ Զախ կողմի փոսը կը նշանակէ արտաքին մեղքերն ու չարութիւնները՝ ուր որ չտեղերը կ'իշխան։ Արկուքն ալ հաւասարապէս մնասակար ևն ճամբորդներուն, բայց Տէրը իր սուրբերուն սուրբերը պիտի պահէ :

+ Կիւրազացաց խղճմուանքը որչափ որ մեղանչական դործ-

փախչել ուզէր , միւս կողմի ցեխն մէջն իշխալու վտանդ կար : Այնակէս ալ երբոր ցեխն փախչել ուզէր՝ առանց մէծ զգուշութիւն բանեցընելու , փոսին մէջ պիտի իշխար : Խնդ այսպէս յառաջ երթալուն՝ լսեցի որ դառնապէս կը հառաջէր . քանզի վերը յիշուած վտանգներէն 'ի զատ , ճամշուն աս տեղը այնպէս մութ՝ եր՝ որ շատ անգամ երբոր իր ուարը կը վերցընէր առաջ երթալու , չէր զիտեր թէ ուր կամ ի՞նչ բանի վրայ պիտի դնէ անիկայ միւս քայլն առնելուն * :

Եւ տեսայ որ դժոխքին բերանը սեպէ թէ աս ձորին մէջն տեղը կ'իշխար , ու ան ալ ճիշդ ճամբուն քովիկն եր . Քրիստիանոս ասիկայ տեսնելով՝ Կ'ոնչ պիտի ընեմ' ևս հիմա , ըստ իր մորովը : Խոյն ու մուխն ալ շարունակ յորդութեամբ դուրս կու դար անկէ կոյժակներով և սոսակալի ձայներով . (ասոնք այնպիսի բաներ են՝ որ Քրիստիանոսին տուրը բանի տեղ չէր անցներ , բնչպէս որ առաջ Վարողիննին դէմ բանի եկաւ .) ուստի Քրիստիանոս պարտաւորեցաւ իր առողջ տեղը գնել և ուրիշ մէկ զէկը մը ձեռք առնել՝ որ կ'ըսուի Անդադար Աղօթք . Եժեւու . զ . 18 . ուստի լսեցի որ կանչեց , Ա'աղաչեմ՝ ով Տէր , փրկէ իմ անձն : Այսու . Ճժիլ . 4 : Ասանկով նույը խել մը ատեն յառաջ զնաց , բայց տակաւին բոցերը դէպ 'ի իրեն կու դային . նաև ցաւագին ձայներ ու անդին ասդին դարձուելու ձայներ լսեց , այնպէս որ՝ երբեմն կը մնածէր թէ կտոր .

քերէն՝ նոյնչափ ալ խանդարեալ գաղափարներէն կը վախնայ : Ասիկայ հոգւոյն անկեղծութիւնը կը ցուցընէ՝ թէ և մէկը մըութեան մէջ ալ կը քալէ :

* Բայց կարելի է հարցընել թէ Տէրը իր գուկըները ինչու այսպէս մութը քալելու կը թողու : Իր փառքին համար . ասիկայ անմայ՝ իր վրայ ունեցած հաւատըրը կը փորձէ , ու իրեն աղօթելու կը զրգու : բայց իր անմայ վրայի սէրն ամենեն ըսուազիր :

կտոր պիտի փառատուի , կամ փողոցներուն ցեխին պէս պիտի կոխկըռտուի : Աս սոսկալի տեսաբանը տեսաւ և աս դարհութելի ձայները լսեց՝ մինչեւ որ խել մը մղոն տեղ յառաջ գնաց + ու տեղ մը գալով՝ ուր որ կարծեց թէ կը լսէր որ գեկերու գուշնդ մը յառաջ կու գայ իր դէմն և լլելու , հոն կանկ առաւ , ու սկսեց խորունկ մնածել թէ լ'նչ ընելու է : Երբեմն կէս մը խորհեցաւ ետ դառնալ . անկէ ետեւ մնածեց որ կարելի է թէ ձորին կէս ձամբան առած է : Ասոնցմէ 'ի զատ նաև իր միտքը ըերաւ թէ ինք արդ դէն քանի քանի վտանգներու դէմ դրած է , և թէ ետ դառնալու վտանգն առաջ երթալու վտանգէն աւելի կրնայ ըլլալ : Ուստի միտքը հաստատեց յառաջ երթալ , բայց տակաւին գեկերուն ձայները կը թուէր թէ կը մօտենացին : Խայց երրոր զրեթէ անոնք բոլորովին մօտ եկած էին իրեն , բոլոր սրտով կանչեց թէ , Տէր Աստուծոյ զօրութիւնով պիտի քալեմ ես : Ան ատենը անոնք ետ կեցան ու ալ առաջ չեկան :

Դան մըն ալ կայ որ պիտի զանց չընեմ : «Եկատեցի որ խոշնալի Կրիստիանոսն այնպիսի շիոթութեան մէջ ինկեր եր՝ որ բուն իր ձայնն ալ չէր ձանշնար : Եւ աս բանը սա կերպով իմացայ : Երբոր ինք ան վառած փոսին բերանը նոր անցեր եր , չար հոգիներուն մէկը իր ետեն անցաւ՝ ու կամացուկ մը իր կոնակին մօտ եկաւ , ու փափառով շատ սոսկալի հայհոյանքներ խօսեցաւ անոր ականչն 'ի վար , որ Կրիստիանոս Համարտապէս կարծեց թէ անոնք բուն իր մոքէն յառաջ կու զան * : Ու մնածելով՝ թէ ինք հիմա

* Աստուծոյ սիրելի զաւակներէն շատերուն այսպէս կը պատահէր . Սատանալին կրակու նեսերը խիս առ խիս իրենց բոլորտիքը կու զան թռչելով : Չար ու հայհոյական խորհութղներ կը մնանն իրենց մոքերուն մէջ , որոնք շատ անդամ մեծապէս կը շփոթեն ու կը վախցընեն զանոնք՝ որովհետեւ ան ատենը թէ շնամոյն հայհոյական թէ և

լուսպէս կը հայհցի Անոր՝ որն որ առաջ այնչափ կը սիրէք, աւելի շիոթութեան մէջ բնկաւ՝ քան թէ իրեն պատահած բոլոր առջի բաներովը : Եւ առկայն թէ որ հնար ըլլար պիտի չըներ ան բանը . բաց իր ականջները բռնելու՝ կամ ան հայհցութիւններուն ուրիշ գալը զիտնալու չափ ընտրողութիւն չըներ :

Քրիստիանոս երրոր աս անմիսիթար զիհակին մէջ խել մը առեն ձամբրոդութիւն ըստաւ, կարծեց թէ իր առջեւն դացող մէկու մը ձայնը կը լոէ որ կ'ըսէք, քաշուտ և Մահուան Ծուքի Չորին մէջն ալ պարտիս, չարէն պիտի չվախնամ + վասն զի դուն (Տէ՛ր) իմ հետս ևս : Առաջ + ինչ + 4 :

Են առենը Քրիստիանոս ուրախացաւ * , ու ան ալ ապահովներուն համար :

Վրաջնինը՝ որ առկէ իմացաւ՝ թէ աս ձորին մէջ իրեն պէս մէկ քանիներ ալ կան՝ որոնք Աստուծմէ կը վախնան :

Երկրորդը՝ որ իմացաւ թէ Վասուած անոնց հետն է, թէ և ան մըն և աղետալի զիհակին մէջն են : Եւ բնչու համար Վասուած իմ հետս ալ պիտի չըլլայ՝ ըստաւ իր մորէն, թէ և ես աս տեղի եղած արդելքներուն համար չեմ կրնար խնանալ ան : Հոռ + ի՞ջ + 11 :

Երրորդը՝ որ յոյս ունեցաւ՝ որ եթէ անոնց հաննելու կարող ըլլայ, շատ չանցած լնկեր պիտի ունենայ : Ուստի այսպէս յառաջ զնաց՝ ու իրմէն առաջ Եղողին ետեւն կանչ չեց, բաց ան չեր զիտեր թէ ինչ պատասխան տայ, քանզի ինքն ալ զնարը մինակ կարծեր եր հոն : Եւ ասոր վայ շատ չանցած արշալոյն սկսեց ծագիլ, ու Քրիստիանոս

լադրութիւնները բուն իրենց խորհուրդներէն չեն կրնար որոշել :

* Առորին որ կարծառութիւնը մեծապէս կը քաջալէրէ մարդու . ինչու որ կը զանէ թէ իրմէն առաջ ուրիշները զարհութելի մութ ու ամեցի ձամբաներէ դացած են :

ան առենք ըստու + Վահուան շուքը առաւօտեան լոյսի
դարձուց : Այսօք + է + 8 :

Գամիք որ հիմա առառու ըստով դարձու ետեղ նայեցաւ շեկեթէ ևս դառնալու փափաք ունենալէն՝ հապա որ ցորեկուան լուսով տեսնէթէ թիշեն ինչ վտանգներէ անցաւ : Այսպէս աւելի կատարելապէս տեսաւ մէկ կողմին խորխորատն ու միւս կողմին ցեխը , ու նաև տեսաւ թէ ու բազմի նեղէ եր երկուքին մէջտեղն ինկած քալելու ճամբան : “Աաև տարտարոսին ուրուական երեսյթները՝ այծամարդերն ու վիշապները հիմա աղեկ մը տեսաւ , բայց բոլորն ալ հեռուեն + քանզի արշալուսւն ետեւ ալ իրեն մօտ չեկան , բայց տակասին իրեն կ'երեսցին՝ ան գրուածին պէս որ կ'ըսէ , Անիկայ խորունկ բաները խաւարէն յայտնեց , ու մահուան շուքը բյար հանեց : Հնդ + ժի . 22 :

Քրիստիանոս իր առանձնութեան ճամբուն բոլը վրտանդներէն աս ազատութիւնը գտնելով մեծապէս ուրախացաւ հիմա + քանզի թէ եպէտ և առաջ շատ կը վախնար ան վտանգներէն , բայց հիմա աւելոք յայտնի տեսաւ աշնոր + քանզի ցորեկուան լոյսն աւելի երեան հանեց անոնք իրեն : Եւ աս միջնցիս արեգակն ալ կը ծագէր , ու աս ալ մէկ ուրիշ ողորմութիւն մը եղաւ Քրիստիանոսին : Տրանզի զիանալու ևս որ թէ պէտ Վահուան Ըստովն Զորին առջի մասը վտանգաւոր տեղէ եր , տակայն աս երկրորդ մասը՝ որն որ դեռ պիտի երթար , անկէ շատ աւելի վտանգաւոր էր . ինչու որ հիմակուան իր կեցած տեղէն մինչև ձորին վերջը բոլոր ճամբան մէկ կողմէն որողայթներով՝ ծուղակներով՝ թակարգներով ու ցանցերով , ու միւս կողմէն ալ փոսերով՝ խորխորատներով՝ խորունկ խոռոչներով և դար վար տեղերով այնպէս լցուն էր , որ թէ հիմա առջի մասն անցած առենին պէս զիշեր ըլլար , թէ և հազար հոգի ալ ունենար , հաւանականարար ամենն ալ պիտի կորսնցընէր . բայց ինչպէս որ ըսի ,

Ճիշտ հիմնա արեգակը կը ծագէր : Ուստի Վրիմանոս ըստ . Անոր ճրագը իմ՝ զլիուս վրայ լցա կու տայ , ու ես խաւարի մէջ անոր լուսովը կը քալեմ : Յո՞ւ . իլջ . 3 :

Ուստի Վրիմանոս աս լոյսովը մինչև ձորին ծայրն եկաւ , ու ես հիմնա երազիս մէջ տեսայ որ ձորին ծայրը արիւն՝ ուկորներ՝ մոխիր՝ ու փառատուած մարդիններ կային մարդոց , այսինքն՝ յառաջմանէ աս ճամբէն գացող ճամբ բորդներու : Եւ երբոր խորունկ կը մոտածէի թէ ի՞նչ պիտի ըլլայ աս բաներուն պատճառը , առջևս մէկ քառանձաւ մը տեսայ , ուր որ յառաջմանէ երկու հսկայ կը բնակէին , այսինքն՝ Պատին ու Հեթանոսը . ահա անոնց իշխանութիւնովն ու բռնակալութիւնովը ան մարդիկը անողորմաբար մահուան մատնուած էին , որոնց արիւնը՝ ուկորները՝ մոխիրն ու ուրիշ մասերը հոն մնացեր էին : Աակայն Վրիմանոս աս տեղին առանց շատ վասնդ քաշելու անցաւ , որուն վրայ քիչ մը զարմացայ . բայց վերջը խնացոյ որ Հեթանոսը շատնոց մեռեր է , և միւսն ալ թէպէտ տակաւին ողջ է , բայց տարիքն առած ըլլալուն՝ ու նաև տանեն ատեն շատ սաստիկ ծեծեր ուտելուն իր յօդուածներն այնպէս թուլցեր թոռմեր են , որ հիմն ուրիշ բանի կարողութիւն չունի՝ հասպա իր քարանձաւին բերանը նստած անցյանդ ճամբորդներուն վրայ ակռաները կը կրծտեցընէ ու իր եղունգները կը կրծէ , որ չերնար անոնց քովը դալ :

Այսպէս տեսայ որ Վրիմանոս յառաջ զնաց իր ճամբ բան՝ բայց ան քարանձաւին բերանը նստալ ծերունին տեսնելուն՝ չէր զիտեր ի՞նչ խորհի անոր վրայ . մանաւանդ որ ան թէպէտ և Վրիմանոսին ետեւէն չէր կրնար երթալ , բայց իրեն կանչեց՝ ըսելով թէ , Ոինչև որ ձեզմէ ուրիշներ ալ չօյցին , դուք բնաւ շիտակ ճամբուն պիտի չզանեց : Աակայն Վրիմանոս ճայն չհանեց , և քաղցրութեամբ



մի համբերեց . ու ասանկով առանց վեասուելու անկէ անցաւ , ու ան ատենը այսպէս երգեց :

Կ՞նչ անձառելի սքանչելիք է ,
Որ ազատիմ հոս ամեն շարերէ .
Ո՞չ օրհնեալ է ան բարելար ձեռքը ,
Որ պահպանեց զիս ամեն անոնցմէ .

Խաւարին մեջի ան վտանգները ,
Անդարսմետը՝ դևերը՝ մեղքը .
Վս ձորին մեջն անցած ատենըս ,
Չորս զիս պատեցին , դրին զիս նեղը :

Ու ծուղակները՝ խորխորատները ,
Որոդայթները՝ լարուած ցանցերը ,
Խմ ճամբուս վրայ պատրաստուցան ,
Որ բռնուի ինձ նման տկարը :

Շայց որովհետեւ անոնց ամենէն ,
Վնիսսա անցայ՝ ու կապրիմ արդէն .
Յաղթութեան թաղը Հիսուս թող հազնի ,
Ծի ան փրկեց զիս բոլոր շարերէն :

Հիմա երբոր Վրիստիանոս յառաջ կ'երթար իր ճամշ-
րան՝ մեկ բարձրինեկ տեղ մը եկաւ հասաւ , որն որ դիտ-
մամի շինուած էր որ ճամբորդները իրենց առջեն եղածը
տեսնեն * : Աւստի Վրիստիանոս հոն ելաւ՝ ու դէպ ՚ի
առաջ նայելով տեսաւ որ հաւատարիմն իր ճամբորդու-
թիւնը կ'ըներ իր առջեն : Են ատենը Վրիստիանոս
բարձր ձայնով կանչեց . Ո՞վ մարդ՝ քեզի կ'ըսեմ , կեցիր
և քեզի ընկեր ըլլամ : Հաւատարիմը աս ձայնը ըսելով

* Աստուած իր ժողովուրդը կը հոդայ . իր խօսքովն ու
խօստմունքներովը՝ անոնց ճամբուն վրայ տեսարանի ու միսիւ-
թարութեան բազմաթիւ փոքրիկ ըլլուրներ շինած է , որ
զմայլելով ու զուարճանալով՝ յառաջ նային :

ետին նայեցաւ * , որուն նորէն կանչեց Քրիստիանոս . Աեցիք , կեցիք , մինչեւ զամ հանդիմ քեզի : Ասկայն Հաւատարիմը պատասխան տուաւ թէ , Չէ , և իմ կեանքիս փրկութեանը կը վազեմ , և արեան վրէժինդիբն իմ ետես է : Ծառաց լն . 12 :

Քրիստիանոս ասոր վրայ քիչ մը շարժեցաւ , ու բոլոր իր գօրութիւնը ժողվելով խեցին զնաց հասաւ Հաւատարիմին՝ ու նաև անիկայ անցաւ ալ . այսուէս յետինն առաջն եղաւ : Ան ատենը Քրիստիանոս մնափառութեամբ մը խնդաց որ իր եղօրմէն առաջ անցաւ . բայց աղեկ մը շարուշանալով իր ոսպերուն՝ յանկած դլորեցաւ ինկաւ , ու շըցաւ նորէն Ելեկ մինչեւ որ Հաւատարիմն եկաւ ու իրեն օգնեց † :

Եսկէ ետեւ երազիս մէջ տեսայ որ ասոնք սկսեցին շատ սիրով մէկտեղ յառաջ երթալ , ու անուշ խօսակցութիւններ ընկել ամեն ան բաներուն վրայ՝ որ ձամիւրդութիւններուն մէջ իրենց պատահեր էր + և առաջ Քրիստիանոսը սկսեց այսպէս :

Քրիստիանոս . Ով պատուական և սիրելի եղայր Հաւատարիմ , ու բախ եմ որ քեզի հասայ , և որ Աստուած մեր հոգինները այնպէս յարմարցուց՝ ‡ որ աս բաղձալի ձամը բուն մէջ իրրեւ ընկեր կընանք մէկտեղ քալել :

* Եղեկ է որ զգուշանանք ու հոգ տանինք թէ ի՞նչ ընկերութեան մէջ կը մտնենք : Ըստերը օդատակար ձամը բորդներու ընկերանալնուն տեղը վեասակար ուսուցիչներու յարեցան :

† Խըրբոր մասճենք թէ ուրիշը գերազանցեցինք , հոգեոր հպարտութիւնը խոկ և խոկ իր անիծեալ գլուխոր կը վերցընէ : Ան ատենը վտանդը մօտ է , իյնալը պատրաստ է մեղ խոնարհեցընելու համնք : Բուն ան մարդուն ձեռքին օդնութեանը կը կարօտինք , որմէն կը կարծէինք թէ զերազանցեցինք :

‡ Խըրկու հոգի մէկտեղ չեն կընար քալել երկնից ձամը

Հաւաքառորդիմ . Ավելի բարեկամ , ևս մասներ էի որ բուն մեր քաղաքէն քու հետո ընկերանամ , բայց դուն ինչ առաջ ճամբար ելար . ուստի ստիպուեցայ այսչափ տեղ մինակ զալ :

Վրիտագիւնուս . Ո՞րչափ առեն Աործանման Քաղաքը մնացիր ինչ ետեւ մինչև ճամբորութեան ելելուդ ու ալնը :

Հաւաքառորդիմ . Մինչև ան առենը որ ալ չկըցայ համարելու * . քանիդի խկոյն քու ճամբայ ելելէդ ետեւ մեծ շուկա մը ելաւ թէ մեր քաղաքը քիչ առենէն ետեւ երկինքէն իջած կրակով պիտի այրի մոխիր դառնայ :

Վրիտագիւնուս . Կ՞նչ կ'ըսես , քու դրացիներու այսպէս խօսեցնն :

Հաւաքառորդիմ . Այս . առեն մը ամեն մարդու ըերանն էր առ խօսը :

Վրիտագիւնուս . Կ՞նչ որանչելիք . այսպէս խօսեցան ու քենէ 'ի զատ անսնցմէ մէկը ճամբայ չելանւ ան վտանգէն փախչելու :

Հաւաքառորդիմ . Ընէզէտեւ մեծ շուկա մը կար ան տեղուանա-

բուն մէջ մինչև որ չմիաբանին թէ ողորմելի թշուառ մեզ զաւորներ են , թէ Վրիտառու պատուական Փրկիչ մին է , և թէ Երկուքն ալ միօրինակ միայն իրմէն փրկութիւն ու յախենական կեանք գտնել կը յուսակ :

* Այսպէս կ'ըլլաց բարեկացառութեան ճամբուն մէջ քաշէլ սկսող իւրաքանչիւր ճանապարհորդի : Եր պիճակին ու վտանգին վրայով Աստուծմէ ընդունած ան զօրաւոր խղճնանքին յանդիմանութիւնները հարկաւորապէս կը ստիպեն զինքը զալու բարեկութիւնն փախչիլ : Ամրէ չէ թէ իր ազատ կամքով՝ հապա Վրիտառուի զօրութիւնովը օսար ու պանդուխտ կ'ըլլաց երկրի վրայ : Աւստի ովք քրիստոնեաց , քու դեպ 'ի Աիօն ճամբորդութեան ելելուդ բոլոր փառքը Վրիտառուի ու իր ձրի շնորհացն ընծացէ :

քը՝ ինչպէս որ ըսի , բայց ես չեմ հաւատար թէ անոնք աղեկ մը ան խօսքին հաւատացին : Վրանդի խօսակցութիւննեն տարցած ատենը կը լաէի որ անոնցմէ ոմանքը ծաղը բարանութեամբ . կը խօսէին քու վրադ և քու ճամբորդութեամդ վրայ , որն որ իրենք անցյա ճամբորդութիւն կ'անուանէին : Աակայն ես հաւատացի և տակաւին կը հաւատամ որ մեր քաղաքին վերջը երկինքին իջած կրակով ու ծծումքով պիտի ըլլայ . և անոր համար ես անկէ փախաց :

Վրբիստիանոս . Անը Խօսքիսպառկող դրացւոյն վրայով բան մը չըսեցի՞ր :

Վրբիստիանոս . Այս Վրբիստիանոս . լսեցի որ քեզի ընկերացաւ մինչև որ Ա Հասութեան Շոսը հասաւ , ուր որ՝ մէկ քանիներուն ըստածին նայելով , փոսին մէջն ալ ինկաւ . բայց ինք չեր ուղեր որ փոսին մէջ իշնալը դիմոցուի . սակայն ես աղեկ զիտեմ որ ինք ան տեսակ ցեխով մը շաղախուած էր :

Վրբիստիանոս . Դրացիներն ի՞նչ ըսին իրեն :

Վրբիստիանոս . Վրանի որ ես գարձեր է շատ նախատինք կը քաշէ , ու ան ալ ամէն տեսակ մարդոցմէ . ոմանք ծաղը կ'ընենք . կը նախատեն զինքը , ու հազիւ թէ մէկը զործի մը վրայ կը դնէ զինքը : Ճիմս եօթն անդամ դէւ է քան որչափ քաղաքին չելած :

Վրբիստիանոս . Բայց ինչու համար ատ կերպովը կը վարուին իրեն հետ , քանի որ իրենք ալ անոր ձգած ճամբան բանի տեղ չեն սեպեր :

Վրբիստիանոս . Ո՞՛ կ'ըսեն թող կորսուի ատ անպիտանը . անիկայ փոփոխամբու մէկն է . ինք իր դաւանութեանը վրայ շիտակ չկեցաւ : Ես կը կարծեմ որ Կոստուած մինչև անդամ իր թշնամիները վերցուց անոր վրայ չըուկ հանելու ու անիկայ խայտառակ ընելու , ինչու որ ինք ան ճամբան երեսէ ձգեց : Երբէմ . ի՞ժ . 18 , 19 :

“Քրիստոնեանուն . Դուն ճամբայ ելլելդ առաջ իր հետը չխօսակցեցամբ :

Հաղորդութեամբ . Անդամ մը փողոցը տեսայ դինքը , բայց ինք աչքին տակէն նայելով միւս կողմը դարձաւ , իր ըրածին վրայ ամշող մէկու մը պէս + ուստի ևս ալ իր հետը չխօսեցայ * .

“Քրիստոնեանուն . Ըստ աղջի ճամբայ ելլելուս առ մարդուն վրայ յոյս ունեի . բայց հիմա կը վախնամ որ քաղաքին կործանելու ատենը ինք պիտի կորսուի : Կանզի ան ճշմարիտ առակին պէս պատահեցաւ իրեն՝ որ կ'ըսէ , թէ՞ “ Ծունը նորէն իր վախածին կը դառնայ , ու լուածուած խոզը ցեխի մէջ թապլուըկելու : Բ Պիտի + Բ . 22 :

Հաղորդութեամբ . Դում վախս ալ ան է իր վրայ , բայց ըլլալու բանին ո՞վ կրնայ դէմ կենալ :

“Քրիստոնեանուն . Խկն՛ք Եղայր Հաւատարիմ , անոր խօսը ձգենք , ու ան բաներուն վրայ խօսինք որոնք անմիշապէս մեզի կը վերաբերին : Հիմա ինձի ըսէ թէ եկած ատենդ ճամբուն վրայ ի՞նչ բաներու պատահեցար : Կանզի զիտեմ որ քանի մը բաներու պատահած ես , աս պա թէ ոչ հրաշքի տեղ դրուելու է :

Հաղորդութեամբ . Ես ան ցեխին մէջն իյնալէն ազատեցայ , որուն մէջ կ'իմանամ թէ դուն ինկար . ու առանց աս վտանգը քաշելու “ Եեղ Դուռը ելայ + . միայն թէ մէ-

* Կրիստոնի հաւատքին դարձողներուն սրտերը մինչև որ ըոլորովին չխատանան՝ ու խղճնուանդնին չնանձի՞ չնն կրնար համարձակ նայիլ Կրիստոնի աշակերտներուն երեւը , ինչու որ միշտ խոռվիթեան մէջ է մաքերնին :

+ Ապաքէն չեայ մեղաւոր մը որ գալու բարկութենէն վախչելով փրկութեան համար Կրիստոնի դիմէ , մինչև որ Առւրբ Հոգին իր մեղաւոր ըլլան ու Աստուծոյ բարեկութեանն ու կորստեան արժանաւոր ըլլան իրեն չճանչ-

կու մը պատահեցաց որ Անպարկելոյ կը կոչուեր , ու մազ մնաց որ ինձի չարութիւն մը պիտի ըներ * :

*Քրիստոնություն . Հաստ աղեկ եղեր է անոր որոգայթէն ազատիլու . Յովուէփ շատ տառապանք քաշեց անկե և քեզի պէս անկէ ազատեցաւ , բայց մադ մնաց իր կեանքը կը կորսըցըներ : ՞Օճառ . լժ . 11-13 : Ասկայն ի՞նչ ըրաւ քեզի :

*Առաջարկություն . Ձեիր կընար մորեդ անցընել , թէ որ ժորճառու մարդ մը քըլայիր թէ ի՞նչորեւ շոշոքորդող լեզու մը ունի . շատ աշխատեցաւ որ զիս իր հետը ետ դարձնէ , խստանալով որ ամէն կերպով գոհ պիտի ընէ զիս † :

*Քրիստոնություն . Ձե , սյուզէս չէ . աղեկ խղճմանքով ցընէ . և սակայն ամէնը առջի համբայ ելքելուն միօրինակ ան նոյն վշատութեանը մէջ չեն իյնար ասոնք հանչնալուն համար :

* Հաւատարիմը թէպէտ և զերծ մնաց ԱՀատութեան Փոսէն՝ ուր որ իր ուղեկիցն ինկեր էր , բայց մարմնաւոր ցանկութիւնները զինքը պաշարեցին , որոնցմէ զատ զուցէ աւ բան մը չեց որ աւելի գարանակալ ըլլաց հոգւոյն՝ խոռվութիւն տայ խղճմանքին՝ ու աւելի դժուարին ըլլաց յաղթելու : Ընդամենքն մեղաւորներուն զանազան խառնուածքներուն յարմար խայծներ կը զնէ իր կարթին . մելանաղձնուր՝ յուսահասութեան կը զրդուէ . ագահը մեծամեծ շահերու , իմաստուններն ու զիսնականները՝ հպարտութեան ու անձնաղովութեան , քաղաքամարը՝ յանձնապատահանութեան . ծոյլը՝ ան զէշ կարծիքին թէ Քրիստոսի արդարութիւննով ինք արդէն փրկուած ըլլալով բարեգործութիւն ընելու վկարօմիք :

† Վարմնաւոր ցանկութիւնները զօրաւոր չատագովութիւններ կ'ընեն ու բարի բաններ կը խոստանան : Եցանի՛ թէ աչքերնիս առ Տէր վերցընէնքը կարողութիւն ինդքելու իրմէն անոնց զէմ գնելու , ու իր պատուական խստամունքներուն նոյնէնքը՝ որ անոնցմէ վախչէլու կարենացինք :

մը քեզ դոհ բնկլու խոստմնանքը ըրած պիտի չըլլայ լիքը :

Հայոց գիտես որ ևս ամեն մարմնաւոր ու երկրաւոր բաներով դոհ ըլլալու վրայ կը խօսիմ :

Վիրապիտինոս . Փառք Կատուծց որ իրմէն ազատեցար . Տէրոջը ատելի եղողը անոր վասին մէջ պիտի իշնոյ : Առուն . ի՞ւ . 14 :

Հայոց գիտես ամենայնիւ չեմ գիտեր թէ արդեօք բոլորովին ազատե՞ր եմ իրմէն թէ չէ * :

Վիրապիտինոս . Խօնչ կ'ըսես , կարծեմ թէ դուն անոր ուղաճները կատարելու չչաձնեցար :

Հայոց գիտես . Ձէ , ես դիս իրօք չաղչեցի . քանզի հին գիրք մը միաքս եկաւ որ տեսուր եփ , որուն մէջ կ'ըսէր թէ , Անոր քայլերը Դժոխքը կը համեմն . Առուն . Է . 5 : Ուստի աչքերս գոյցեցի որ անոր երեսէն չխարուիմ : Յո՞ւ . Է՞ս . 1 : Ան ատենը ինք դիս ծաղը ընել սկսեց՝ ու ես իմ ճամբաս դացի :

Վիրապիտինոս . Ուրիշ մէկ դիպուածի մը չպատահեցար ճամբուղ վրայ :

Հայոց գիտես . Եցրոր ան լեռանը տակն եկայ՝ որ Դժուարութիւն կը կոչուի , մէկ խիստ ծերունի մարդ մը տեսոց , որ ինծի հարցուց թէ Ո՞վ ես և ո՞ւր կ'երթաս : Ես ալ իրեն ըսի որ ես Եցրենային Քաղաքը դացող ճամբ բորդ մըն եմ : Ան ատենը ծերունին ըսաւ թէ , Դիուն աղէկ տղայ մը կ'երեսաս , կ'ուզե՞ս իմ քեզի տալիք վարձքիս համար իմ հետո բնակիլ : Ես ալ ան ատենը իր անունն ու իր բնակած տեղը հարցուցի իրեն : Պատասխան

* Եցրոր մարմինը դաղսնի կերպով ցանկութեան կը հակամիտի , բարի խղճմտանքը կը տրամի : Ասիկոյ Վիրապիտինոսի - մաքրաղ արեանը մեծ արժողութիւն կ'ընծայէ , որ ատեն հողին ալ խոնարհութեան ու ինքնիրմէն դըուելու պիճակի մէջ է :

տուաւ թէ իր անունը Առաջին Եղամ է : * , ու Խարեւ
բայութեան քաղաքը կը բնակի : Եշէն . դ . 22 : Ասոր
վրայ հարցուցի իրեն թէ ինչ է իր գործը , և ինչ է իր
տալու վարձը : Պատասխան տուաւ թէ իր գործը
Ըստ բէրքութեաներ են , և իր վարձը ան է որ վերջը
ես իրեն ժառանդ պիտի ըլլամ : Եւան զարձեալ հար-
ցուցի իրեն թէ ինչ է կերպ տուն կը պահէ , և ինչ ուրիշ
սպասաւորներ ունի : Աւստի ինք ինծի ըստ թէ իր
տունն աշխարհիս բոլոր փափկութիւններովը կը կերակ-
րուի , ու իր ծառաներուն բոլորն ալ ինք ծներ է : Եսի՛
ես իրեն հարցուցի թէ քանի զաւակ ունի + պատասխան
տուաւ թէ միայն երեք աղջիկ զաւկըներ ունի , որ կը կո-
չուին Պարմայ Հանկութիւն , Աչաց Հանկութիւն , և
Անաց Ամբարտաւանութիւն . ան Յագէ . ը . 16 . և թէ որ
ուղեմ անոնց հետ կարդուիմ : Ահրօք հարցուցի թէ որ-
շափ ատեն կ'ուղէ որ հետը մնամ : ու ինքն ըստ՝ Վրչակի
որ կ'ապրի :

Դիտարքանոս . Աղէկ . վերջապէս ծերունին ու դուն
ուր վերջացուցիք բանը :

Հայութիւննմ . Ուր վերջացըներ . նախ և առաջ ես
զիս դուս որ քիշ մը հակամիտեալ եմ ան մարդուն հետ
երթալու . քանզի մտածեցի որ շատ գեղեցիկ խօսեցաւ
մարդը : Բացց երբոր իր հետը կը խօսէի իրեն ճակատը
նայելով տեսաց որ հնի զրուած էր թէ , Հին մարդը իր
գործքը մեր վասցէն հանեցէք † : Ասու . դ . 9 :

Դիտարքանոս . Ա երջէ :

* Այսինքն սկզբնական մեղքը՝ կամ մեր ներսը բնակող
վասթարութիւնը , որ ապականեց մեր բոլոր բնութիւ-
նը :

† Երանի՛ ան մարդուն՝ որ մարմինին ու արիւնին տուած
խրատը մտիկ չըներ , հապա Տերոջը գրածին կը նայի ու
անոր կը հնապանդի :

Համարեալիք . Անըլքը խսկոյն կատարելապէս իմացայ
թէ ինք ի՞նչ ալ որ ըստ , երբոր զիս իր տունը տարած
ըլլար՝ գերիի մը գրէս պիտի ծախէք զիս : Ուստի զրու-
ցեցի իրեն որ խօսքը կտրէ , քանզի ևս իր տանը դրանը
մօտենալ չեմ ուղիր : Ան տանը սկսեց նախատական
խօսքը խօսիլ ինձի , ու ըստ ինձի թէ այնպիսի մէկը
պիտի խրկէ իմ հառես որ իմ ճամբաս իմ հոգւոյս պիտի
դառնացընէ : Այսպէս ետ դարձայ ևս իր քովէն մէկողի
երթալու . բայց ձիշտ երբոր դարձայ ան տեղէն մէկողի
երթալու , ինք այնպէս սաստիկ կոմքեց զիս՝ որ կարծեցի
թէ մարմինս մէկ կտորը փրցուց իր հետը տարաւ :
Ասիկայ ինձի կանչել տուաւ՝ Ո՛չ , ի՞նչ խղճալի մարդ
եմ ևս * : Համարեալիք . Է . 24 :

Երդ՝ երբոր լեռն 'ի վեր ճամբաս կէս ըրի ետևս նայեցայ ,
ու տեսայ որ իմ հառես մէկը կու զար հովի պէս արագ
* վաղելով . ասիկայ եկաւ հասաւ ինձի ձիշտ ան տեղը , ու
որ սարարթախտ ուստեղով ծածկուած հովանաւոր դու
տեղ մը կայ :

*Քրիստիանոս . Աս ալ ձիշտ ան նոյն տեղը նստայ որ
ինքողինքս հանդէցընեմ * . բայց քունս վլաս կոխնելով ան
նոյն տեղը իմ ծոցէս ձգեցի կորսնցուցի աս թուղթը :

Հակայն՝ ազնիւ եղբայր , իս մորիկ ըրէ :
Մարդն ինձի հասածին պէս յանդիմաննեն ու պատժելը
մէկ եղաւ , ինչու որ խելոյն գետինը զարկաւ զիս ու մեռելի
պէս ձգեց : Բայց երբոր քիչ մը նորէն ես ինձի եկայ ,
հարցուցի իրեն թէ ինչու այսպէս ըրաւ ինձի : Ինքն ալ

* Քրիստոնէին վորձութիւնները երբեմն այնչափ զօ-
րաւոր են որ զրեթէ կը յաղթեն անիկայ . ու մեծ ցաւով
միայն ինքը կընայ անոնց յաղթել : Եւ աս ներքին պա-
տերազմնէ է որ Պօղոսին նման կանչել կու տայ անոր՝
“ Անչ խղճալի մարդ եմ ես . ո՞վ զիս պիտի աղատէ աս
մահացու մարմինէն :

ըսաւ թէ՝ Կյածկարար Առաջն Վրամին հակամիտելուդ համար * : Աս խօսքին վրայ ուրիշ սաստիկ հարուած մը տուաւ կուրծքիս , ուստի առջի անգամին պէս իրբե մւռեալ իր ողբին տակն ինկայ : Խըրոր կըկին ևս ինձի եկայ՝ իրեն կանչցի որ ողորմութիւն ընէ ինձի . բայց ինք ըսաւ թէ՝ Աս չեմ զիտեր ողորմութիւն ցուցընել † . ու աս ըսելով դարձեալ զետինը զարկաւ զիս : Անտարակոյս ինք իմ վախճանս պիտի բերեր . միայն թէ մ.կը անցաւ անկէ , ու իրեն հրամայեց որ զիս ձգէ :

Քըբարիանու . Ո՞վ էր ան մարդը որ հրամանն ըսաւ իրեն քեզ ձգելու :

Հաւատարիմիմ . Առջի բերանը վինքը չմանցայ . բայց

* Հաւատարիմին վրան եկողը վարը բացատրուած է թէ Վոլուէս Է կամ Նատուծոյ օրէնքը : Ո՞վ կարծեր թէ օրէնքը միայն արտաքին մեծամեծ զործքերուն կը համեմի . չէ . անիկայ մինչեւ մարքին՝ ու սրտին խորհուրդներուն կը թափանցէ : Մարդուս յցար զետինը կը կործանէ՝ ու մահուան կը դատապարտէ զանիկայ , մինչեւ անգամ միայն ծածկարար ցանկութեան հակամիտելուն համար : Նատուծոյ սուրբ օրէնքն այսպէս Շիշտ՝ այսպէս հողեաոր սյսպէս մարուը է : Ուստի ամենենին մ.կը չկընար օրէնքին իր հնապանդութիւն ընելուն վտահիլ՝ ու արդարանալու համար բուն իր արդարութեանն ապաւինիլ , բայց միայն անձնատէր փարփակցիները՝ մնապարծ յիմնըները :

† Օրէնքն ամենենին ողորմութիւն ցուցըներ իրեն դէմ յանցաւոր զանուառներուն . իր խօսքը բնաւ ցիտիսուիր , այլ միշտ կ'ըսէ “Ա Հարէ” ինձի ունեցած պարարդ” , Առաքէ , ժը . 28 , կատարեալ յատուկ՝ ու մշտնշնաւոր հնապանդութիւն . ու ասիկայ զանց ընողին վրայ իր ծանր անէծքը կը հրատարակէ առանց բացառութեան , թէ “Անիծեալ ըլլայ ամեն մարդ՝ որ օրէնքին զիրքը ամէն զրուածներուն մէջ չկենար՝ որ զանոնք կատարէ : Գառզ . դ . 10 :

քովին անցնելուն իր ձեռությունը և կողմն ծակերը տեսաց . ան առնելը ըսի թէ Կորիսց մեր Տէրը պիտի ըլլաց : Այսպէս՝ մինչեւ լեռանը դլուխն ելոյ :

Վրդիոդիանոս . Ենքու ետեւէդ համարդ մարդը Առվաշանէ : Ինք մէկը չմնայեր . ու ալ ողորմութիւն ցոցընեւ դիտէ անոնց որ իր օրէնքին գէմ յանցանք կ'ընեն :

Հաւաքառորդ . Ըստ աղջէկ դիտեմ անիկոյ . առջի անդամը չէր աս որ ինք ինծի պատահեցաւ : Եցրոր ես ապահով իմ բնակարանս կեցած էին ան էր որ ինծի եկաւու ըստ թէ իմ տունս զլուու վայ պիտի սցըէ թէ որ ես հոն նստիմ * :

Վրդիոդիանոս . Խոյց դուն Առվաշանէն զատուելէդ ետեւ ան նոյն լեռանը դլուխը կեցած տունը չտեսամբ :

Հաւաքառորդ . Ենյու . տանը քով չեկած անիկոյ տեսաց , ու առխւծներն ալ : Աակայն առխւծները կարծեմ թէ քնացած էին , ինչու որ կէս օրի տանենն էր . և որովհետեւ առջիս տակաւին կէս օր ունեի , անոր համար Պահապահնենին քովին անցյա՞ ու լեռն 'ի վար ինայ :

Վրդիոդիանոս . Ինք ճշմարիտ ըստ ինծի թէ քու անցնիլու տեսաւ . բայց երանի թէ ան տունը մտնէիր դուն , քանզի անոնք այնչափ հազուադիւտ բաներ պիտի ցուցընէին քեզի , որ հազիւ թէ մինչեւ մահուանու օրը պիտի մտնայիր անոնք . բայց կ'աղաչէմ , ըսկ' ինծի , խոնարհութեան Չորին մէջ մէկուն չպատահեցամբ :

Հաւաքառորդ . Ենյու . Տժգոհ անունով մէկու մը հանդիպեցայ որ շատ կ'ուղէր համոզել զիս իր հետը ետ դաշնալու . իր պատճառը ան էր թէ ան ձորը բոլորովին ան-

* Սի մեղաւորը որ բնաւ չզգաց օրէնքին սուկալի սպանալիքները , տակաւին իր մեղքին մէջ քնացեր է ու իր հոգւցն մէջ ապահով է , թէզէս և իրոք Աստուծոյ օրէնքին բնին բարկութեանն ու անէծքին տակն է :

պատիւ տեղ մըն է : “Եսկ ինծի զրոցեց թէ հնի եր-
թալիս ամէն իմ բարեկամներուս հաճութեանը դէմ բան
ըրած պիտի ըլլայի , ինչոքս Հարաբութեան , Համեդ-
նութեան , Խնքսահաճութեան , Աշխարհային Փառաց և
ուրիշներուն , որոնք՝ իր ըստին նայելով՝ պիտի եղեր թէ
չափազանց պիտի նեղանան , թէ որ ևս ինքովնքս խն-
թի տեղ դնելով ոյնչափ խոնարհեցընեմ որ առ ձորին
մէջն անցնիմ” * :

Քը հոգիականու . Ըստ աղեկ . ի՞նչ պատասխան տուիր
իրեն :

* Պատասխան տուիր իրեն՝ թէ բոլոր ա-
նոնք՝ որոնց անունները տուաւ , իրաւունք ունին իմ բա-
րեկամներս ըստելու , (քանզի մարմնոյ կողմանէ Հշմարա-
պէս անոնք իմ աղջականներս էին .) բայց քանի որ ձամ-
բորդութեան ելայ և՛ անոնք ուրացան զիս , ու ևս ալ
երեսէ ձգեցի զիբենք + ուստի անոնք հիմա ինծի ոյնպէս են՝
որպէս թէ բնաւ իմ ցեղիս մէջ քըլլային : “Եսկ իրեն
ըսի թէ առ ձորին վրայով ինք բոլորովն ծուռ իմացած է
բանը . քանով պատիւին առաջ խոնարհութիւն է , ու
իյնալին առաջ ամեւարտաւան ողի մը ունենալու : Ուստի
ըսի իրեն , աւելոք կ'ուզեմ առ ձորին անցնիլ երթաւ ան-

* Տես առ տեղ քրիստոնէից տարրեր փորձառութիւն-
ներն իրենց պատահած թշնամիներուն կողմանէ : Չենք
կարդար թէ Վրխատիանոս Տժգոհէն յարձակմունք մը կրեց՝
ինչոքս որ Հաւատարիմը . և սակայն Հաւատարիմը վե-
ճարանեցաւ ու յաղթեց առ թշնամոյն : Ըստ Համ-
բորդներու կը պատահի որ ուրիշներէն աւելի զոհ են իրենց
համբուն մէջ յառաջանալուն : Հաւատարին յառաջ բե-
րած փաստերը միշտ կը յաղթեն ան Տժգոհութեանը որ
կը ծաղի հպարտութենէն յանդզնութենէն ինքնահաճու-
թենէ , ու աշխարհային փառաց՝ հարստութեան ու հեշ-
տութեան փափաք ունենալին :

պատիւին՝ որ խիստ խելացիները պատիւ սեպեցին, քանի թէ ան անարդ բաներն ընտրել՝ որ նոր խիստ արժանաւոր կը սեպէ մեր սիրոյն :

Քրիստովիանոս • Աս ձորին մէջ ուրիշ բանի մը չպատաշեցմք :

Հայութագործիմ • Այսին, մէկու մը պատահեցոց որուն առունը Ամօթէ էր, բայց կարծեմ թէ իմ ճամփորդութեանս վրայ ինծի պատահած մարդիկներուն ամենէն աւելի ծուռ անուն մը ունի անիկայ : Ուրիշները՝ թէ որ քիչ մը իրենց դէմ կենացի, կը ձգէին զիս • բայց աս պինտերես Ամօթը բնաւ չեր ուղեր ձգել զիս :

Քրիստովիանոս • Խնչեւ համար, ի՞նչ ըստ քեզի .

Հայութագործիմ • Խնչ ըստ ինծի • Հաւատոքի ու կրօնքի դէմ հակառակեցաւ : Ըստ թէ մէկ մարդու մը անարդ, ցած ու նուաստ բան մըն է որ կրօնական բաները բանի տեղ դնէ . և թէ դիւրազգած խզնմունք ունենալը մարդ եղողին վայելու չէ . և մէկ մարդու մը իր խօսքերուն ու բռնած ճամբաներուն վրայ զսուցութիւն ընելը՝ այնպէս որ բնրզգենքը կապէ արդիկէ ան պանծալի աղատութենին՝ որն որ բոլոր քաջ մարդիկները կը դործածեն, զննքը բոլորին ծաղը ընել կու տայ : Խնք նաև պնդելով ըստ թէ ուժովերուն, հարուստներուն և զիսուններուն մէջն միայն քիչերը կան որ իմ կարծիքս ունենան : Եւ ան քիչեն աւ իրենց խելքը կրոնացընելն ետե է որ ոչնույն բան մը ձեռք ձգելու համար բոլոր բաները կամքովին կ'ու զնն կրօնացընել : առ Աստիճ . առ . 26 : գ . 18 : Փիլու . գ : 7-9 : Յահ . է . 48 : Ասկէ 'ի զստ հակառակութիւն ըրաւ ան մարդոցը ցած ու խօնարհ վիճակին ու կարգին վրայ աւ որոնք գլխաւորաբար իրենց ժամանակին ճամբորդներն են, և դարձեալ ամեն բնական զիսութիւններու մէջ անոնց ունեցած տղիտութեանն ու խելքի կարօտ ըլլալուն վրայ աւ : Ունաւանդ թէ իմ աս տեղս պատ-

մած բաներէս շատ առելի բաներու վրայ ալ ինծի դէմ պլանեց . ինչպէս ըստ թէ ամօթ է լարով ու ողբարով քարոզի նստիլը , ու ամօթ է հառաւելով և հեծելով տուն երժալը . ամօթ է իմ փորբիկ յանցանքներուս համար իմ ընկերէս ներում խնդրելը , կամ թէ որ մէկէն բան մը առեր եմ՝ անոր հասուցում ընելը : * Եակ ըստ թէ Եւետարանական բարեպաշտութիւնը մարդս մեծամեծներուն հետ ընկերութիւն ընկէն ետ կը ձգէ անոնց զանազան մոլութիւններուն համար , (որոնց իմը զեղցիկ անուններ կու տար ,) ու անարդ անձները պատուել ու անոնք ընդունել կու տայ անոր՝ միայն անոր համար որ անոնք իրեն կրօնակիցներն են : Եւ ասիկայ ամօթ չէ , ըստ *

* Վրիսորիոնոս . Դուն ի՞նչ ըսիր անոր :

Հաստատորիմ . Ի՞նչ ըսեմ . առաջ չէի զիտեր թէ ի՞նչ ըսեմ , մանաւանդ որ այնպէս ամըցուց զիս որ տրիւնս իմ երես ՚ի վեր վազեց . բուն աս Վմօթն իս ամչ-

* Վասուծոյ պատկերը կորոնցընեխուս ամենազօրաւոր փորձը ուրիշ բան չէ եթէ ոչ Վասուծոյ բաներուն վրայով ամշնալը , որ բնական է մեզի : Ես ամօթը մարդոցմէ ունեցած մեր վախուն հետ միանալով դրաւոր թշնամի մըն է Վասուծոյ ճշմարտութեանը , ՚Վրիսոսի փառքին ու մեր հոգւոյն հանգստութեանը : Լաւագոյն է մէկէն ՚ի մէկ մեր ցաւէն աղատիկ՝ ՚Վրիսոսի ու անոր հաւատքին վրայ մեր ունեցած դաւանութիւնը համարձակ յայտնելով , քան թէ նոյն դաւանութեան ծայրը դողալով կայնիլ միշտ վախնալով որ մեր բարի անունն ու համբաւը չկորսնցը նենք : Խնչու որ ՚Վրիսոսս ահաւոր խօսքերով կ'ըսէ՛ ՚Ով որ զիս՝ ու իմ խօսքերս դաւանիլը ամօթ կը սեպէ աս նացող ու մեղաւոր ազգիս մէջ , Որդին մարդոյ ալ անիւկայ դաւանիլը ամօթ պիտի սեպէ երբոր զոյ իր ՞օրը փառքով՛ : ՚Ոտքի ը . 38 : Ուրիշ բան է ամօթէն յարձականութը կրելը , և ուրիշ բան է անկէ յաղթուիլը :

յուց ու զրեթէ բոլորովին յաղթեց ինծի : Բայց վերջը
սկսեցի մտածել թէ ան՝ որ մարդոց առջևը բարձր սեպուած
է, Աստուծոյ առջևը պիղծ է : Դաւկ + ժկ. 15 : Դար-
ձեալ մտածեցի թէ աս Ամօթը մարդոց ինչ ըլլան ինծի
կ'ըսէ, բայց Աստուծոյ' կամ Աստուծոյ խօսքին ինչ ըլլա-
լուն վրայ ամենենին բան մը չըսէր : Դարձեալ մտածեցի
թէ դատաստանին օրը մենք աս աշխարհիս պարձենցող
հողիներուն ձեռքովը մահուան կամ կենաց վճիռը պիտի
չառնենք՝ հապա Բարձրելոյն իմաստութիւնովն ու օրէն-
քովը : Ուստի, ըսի ես ինծի, ինչ որ Աստուած կ'ըսէ
թէ աղեկ է աղեկ է, թէպէտ և աշխարհիս բոլը մարդիկն
ալ անոր դէմ ըլլան : Արդ՝ որովհետեւ Աստուած բարե-
պաշտութիւնը կ'ընտրէ, որովհետեւ Աստուած դիւրազած
խղճմաները կ'ընտրէ, որովհետեւ երկնից թագաւորու-
թեան համար իրենք զիրենք յիմար ընողները ամենէն իմաս-
տունեցն են, և որովհետեւ ան աղքատիկ մարդը որ կը
սիրէ գմբիստոս, զինքն ատող աշխարհիս մէջի ամենէն
հարուստէն ալ հարուստ է, կորսուէ ուրիմն ըսի մտօրս,
ով Ամօթ + զուն իմ փրկութեանս թշնամի մըն ես + իմ
ինքնիշխան Տէրոջս կամբին դէմ քեզի հաճութիւն տամ, +
ի՞նչպէս հապա յետոյ անոր զալուն իր երեսը նայիմ ես :
Պարէ + ը. 38 : Յօէ որ ես հիմա իր ճամկաներն ու իր
ծառաները ամօթ սեպելու ըլլամ, ի՞նչպէս կընամ օրհնու-
թիւն ընդունելու յօյս ունենալ : Բայց արդարեւ աս Ա-
մօթը շատ պինտերես անզգամ մըն էր . հազիւ կրցայ ինծի
հետ ընկերութիւն ընելն թօթվել զինքը . իրաւ որ ա-
մեննեն չէր ուզիր ձգել զիս, ու քրիստոնէութեան հետ
եղած նեղութիւններուն մէկը կամ միւսը միշտ կը փափար
ականչս 'ի վար : Աակայն վերջը իրեն զբուցեցի թէ ոչինչ
բան է ալ ասոր վրայ աշխատութիւն քաշելը . քանզի ան
բաները որոնք ինք կ'արհամարհէր, ես անոնց մէջ աւելի
փառաւորութիւն կը տեսնէի . ասանկով վերջապէս աս

Ճանձրացուցիչ անձէն առաջ անցայ ես : Ու Երբոր թօթւ վլցի դիմքը՝ ան առենը սկսեցի երգել :

Երկնային կոչման հնաղանդ մարդուն ,
Յաճախ պատահած փորձութիւնները .
Հաղմաղատիկ են ու յարմար մարմնոյն ,
Սնդադար կու դան իրենց կարգով :

Որպէս զի հիմա կամ այլ առեն մը ,
Շանեն մեղ անոնք՝ յաղթեն՝ վար ձզեն .
Սուր ժիր ըլլան թող համբորդները ,
Ու իրենք վերենք մարդու պէս ըռեն :

Վրեսագիտու . Ուրախ եմ՝ ով Եղբայրս , որ սցսպէս
քաջութեամբ դէմ կեցար աս անզցամին . քանզի՝ ինչպէս
որ ըսիր , ամենէն աւելի ալ սխալ անուն մը տրուած է
իրեն . ինչու որ ինք այնպէս պինդերես է որ ճամբանեւ-
րուն մէջ ետենուս կու դայ ու կ'աշխատի որ մեզ ըսլոր
մարդոց առջեւ ամշցընէ . այսինքն բարին ամօթ սեպել ասց
մեղի * : Իսց թէ որ ինք լիրը ըլլար՝ բնաւ չէր աշխա-
տեր իր ըրածին պէս ընելու . Ամեայն մենք իրեն դէմ

* Ամենեին մէկը չեց ճշմարտութիւնն ընդունողներուն
կամ փառաց համար ճամբայ ելլողներուն մէջ՝ որ ճամբուն
վրայ ամօթէն յարձակմունք չկը : Իսց ամօթին տեղի
տալը շատ փառքէ կը զրկէ զԲրիստոս մեր Սոսուածը՝ որ
մեղի պէս անիծեալ դժոխքի արժանաւոր մեղաւորները
չամցաւ կոչել իրեն "եղբայր" : Եթէ • ի • 11 : Իմ-
րէ • ամօթ մեզի • մեր ամօթը որ մեր մեղքն է փառք կը
սեպենք մեղի , ու նոյն առեն ամօթ կը սեպենք զԲրիստոս՝
անոր խօսքելո՞ ու անոր ճամբաները՝ որոնք մեր ամենամեծ
փառքն են : Եզ զբարք իմ , ՏԲրիստոս մեր ամենալաւ
բարեկամք դաւանենուս կողմանէ համարձակ ըլլաւ խընդ-
րենք Նոսուծմէ , որ ամօթն իր անիծեալ դլուխը ծածկէ ,
ու իրեւ մեր ամենամեծ թշնամին փախչի մենէ :

ունելը շարունակենք . քանզի բոլոր իր մեծաբանութիւնները մրայն յիմարներուն աղջութիւն կ'ընէ , և ոչ թէ ուրիշնեն : Առղունն ըստ՝ “ Խմասառուները փառք պիտի ժառանգեն , բայց յիմարներուն բարձրանալը անարդանք ողիսի ըլլայ”¹¹ : Առաջի կ' է 35 :

Համարձեմ . Արածեմ թէ Ամօթին դէմ պարտառոր ենք անկէ օգնութիւն խնդրելու՝ որ երկրիս մէջ հշմարտութեան վրայ քաջազոր ըլլանիս կ'ուղէ :

“ Բնդիսաբինանու . ՀՇմարիտ կ'ըսես . բայց ան ձորին մէջ ուրիշ մէկու մը չպատահեցա՞ր :

Համարձեմ . Չէ , չպատահեցայ . քանզի առ ձորին բոլոր մնացած ճամբան ու նաև Վահուան Ըստքին Չորր արեն բուսովն անցայ ”¹² :

“ Բնդիսաբինանու . Քու բանդ աղէկ եղեր է . իրաւ որ ինչ ծի շատ ուրիշ կերպ պատահեցաւ : Ես առ ձորին մէջ մտնելուս պէս երկար ատեն սոսկալի կոխւ մը ունեցայ չար թշնամույն՝ ան Ապողղիսնին հետ , և մտածեցի թէ իրաւ ցընէ զիս պիտի մեռցընէ , մնանաւանդ երբոր զիս զետինը զարկաւ ու իր առեկը հմլեց , այնպէս որ զրեթէ կտոր կտոր ընել կ'ուղեր զիս . քանզի իս վար զարնելուն՝ սուրս ձենք քէս թուաւ , և ինծի ըստ թէ Ալ աղատելիք չունիս . բայց ես Աստուծոյ աղաղակեցի , ու ան ինծի լոեց՝ ու բուլոր նեղութիւններէն զիս աղատեց : Անկէ ետև Վահուան Ըստքին Չորր մնայ , ու սեսէ թէ ճամբուն կէսը ըլլա չունէի : Արածեցի թէ կըկին և կըկին պիտի սպանուելի հան . բայց վերջապէս արշալոյսը ծագեց՝ ու արեն ելու , ու մնացած ճամբան շատ գիւղութիւններ ու հանգստութեամբ անցուցի :

* Հնչին բաներ են հաւատքին քավը՝ ու կը թուին թէ յիշատակուելու արժանի չեն ան փորձութիւնները , որոնց մէջ Աստուծոյ երեսն ըստը մեր վրայ կը ծագէ :

Վոկէ եռեւ երազիս մեջ տեսաց ևս՝ որ երբ անոնք յառաջ կ'երթացին , Հաւատարիմը ըստ դիպաց մեկ կողմը նայելով մարդ մը տեսաւ՝ որ Ըստախօս կ'ըսուէր , ու իրենց քովն քիչ մը հեռուէն կը քալէր . քանզի աս տեղս անոնց ամենուն ալ քալէլու համար բաւական տեղ կար * . Եսիկայ բարձրահասակ մարդ մըն եր՝ ու քիչ մը աւելի բարեձեւ կ'երթար հեռուէն քան թէ մօտէն : Հաւատարիմը աս մարդուն հետ խօսակցիլ սկսեց՝ սա հետագայ կ'երպովիս :

Հաւատարիմ . Ըստի , ան նոյն տեղը կ'երթամ : Երկնային քաղաքը կ'երթաս † :

Ըստամիտք . Այս , ան նոյն տեղը կ'երթամ :

Հաւատարիմ . Ըստ աղջկի + ուրեմն կը յուսամ թէ մենք ձեր բարի ընկերութիւնը կրտանք վայելել :

Ըստամիտք . Աստարեալ հաճութեամբ կ'ուղեմ ևս ձեր ընկերն ըլլալ :

Հաւատարիմ . Ուրեմն եկոր՝ ամենս մէկտեղ քալենք , և մեր ժամանակը օպտակար բաներու վրայով խօսակցութիւն ընելով անցընենք :

Ըստամիտք . Աղեկ բաներու վրայօք խօսակցիլը ըստ

* Վրտարին խաղաղութեան ժամանակ ամեն կերպ հաւատայեալուրը կը շատնան . ինչու որ հալածմանքը ըլլալով՝ վանին հաղած աստուածապաշտութեան կերպարանքը վանիդի մը ենթակայ չըներ զիրենք :

† Ահա քեզի Ըստախօսը՝ որ մեր օրերը գտնուած շատերուն մէկ անվճակ պատկերն է : Աւետարանական Շշմարտութիւններուն վրայ յայտնի ու պատշաճաւոր կերպով կրտան խօսիլ , բայց զուրկ են անոնց փրկարար զօրութենէն որ սրտերը կը նորոգէ , ու զիրենք Կիրիստոսի կերպարանքին կը դարձնէ : Աս կերպ անձնութ ո՞ր և իցէ խօսակցութեան կը յարմարին , բարեպաշտին հետ ծանրարայ կ'ըլլան , աշխարհասէրին հետ թէ թէ կ'ըլլան , ու ամերաշտին հետ ամրարշտութեան կը դառնան :

ընդունելի է ինձի , թէ մեր հետան եղեր է և թէ ու եցէ
ուրիշի մը հետ : և ուրախ եմ՝ որ այսպիսի բարի գործե-
րու հակամիտութիւն ունեցող անձանց պատահեցայ :
Քանզի՞ ճշմարիտը խօսելով , քիչերը կամ որ իրենց ձամ-
բորդութեանը մէջ ժամանակին աս կերպով անցընելու
հոգ կը տանին . հապա աւելօք կ'ընտրեն որ անպիտան
բաներու վրայով խօսին , և ասիկայ ինձի նեղութիւն մը
եղած է * :

Հաւաքարիմ . Երդարեւ ասիկայ այնպէս բան մըն է
տրուն վրայ ողբալ արժան է . քանզի ի՞նչ բան մարդուս
ըերնին ու լեզուին դործածութեանն այնչափ արժա-
նաւոր է երկրի վրայ , որչափ երկնից Վասուծոյն բա-
ները :

Ըստական . Օքարմանալի կերպով կը հանիմ ևս քե-
զի , քանզի քու խօսրդ բոլորովին կը համազէ մարդը . և
ասկէ ՚ի զատ ևս ալ կ'ըսեմ , թէ Կ՞նչ բան այնչափ
հաճելի , և ի՞նչ բան այնչափ օգտակար է , որչափ առ-
տուածային բաներու վրայ խօսակցութիւն ընելը : Կ՞նչ
բան այնչափ հաճելի է . այսինքն թէ որ մարդ մը հրաշալի
բաներու վրայով բերկրութիւն մը ունի : Օրինակի ա-
զադաւ , թէ որ մարդ մը իրաց պատմութեանը կամ
անոնց գաղտնի խորհուրդնին վրայով խօսիլը բերկրութիւն
մը կ'ընէ իրեն , կամ՝ թէ որ մարդ մը հրաշալերու
որանչելիքներու՝ կամ՝ նշաններու վրայ խօսիլ կը սիրէ ,
ո՞ւր պիտի դանէ այնչափ զուարձալի կերպով պատմուած-
եւ այնչափ քաջըրութեամբ դրուած բաներ՝ որչափ որ Առւրք
Գիրոց մէջ :

Հաւաքարիմ . Ճ՛շմարիտ է ատ . բացց մեր խօսակցու-

* Աեղծաւոր հաւատացեալը շատախօսութեամբ ուրիշ-
ներէն կը զանդատի , իր անձին վրայով բան մը չխօսիր :
Վյիսպէս չէ ճշմարիտ հաւատացեալը :

թեանը մէջ ոյսպիսի բաներով շահուելնիս մեր դիմաւոր պիտաւորութիւնն ըլլալու է :

Ըստունիւս . Եմ բածս ալ ատիկաց էր . քանզի ասանկ բաներու վրայով խօսիլը խխտ շահաւոր է . քանզի այսպէս ընելով շատ բաներու վրայով տեղեկութիւն կրնաց ստանալ մարդ . ինչպէս ըսե՞ցք թէ երկրաւոր բաներուն ունայնութեանն ու երկնաւոր բաներուն շահաւետութեանը վրայով : Առ ընդհանուր բանն է . բայց մամաւորապէս խօսելով՝ ասով կը սորմի մարդ վերատին ծննդեան հարկաւորութիւնը , մեր փրկութեանը համար մեր զորձքեւ բուն բաւական չըլլալը , Քրիստոսի արդարութեանը կարուութիւն ունենալը , և : Մանաւանդ որ ասով՝ այսինքն խօսակցութիւն ընելով մէկ մարդ մը կը սորմի ևս թէ Կուետարանին ան մէծ խօսամնալըներն ու միսիթարութիւններն ինչ են , ու այնպէս կը միսիթարուի : Դարձեալ ասով մէկ մարդ մը կը սորմի սխալ կարծիքները ջրել , ճշմարտութեան ջատադով ըլլալ , ու նաև աղեաները վարժել * :

Համարակալ . Խոլոր ատոնիք ճշմարիտ են , և ուրախ եմ աս բաները քինէ ընլուս :

* Ասիկաց ուղղափառ դաւանութեան բուն օրինակը չէ . բայց տես դուն որ մէկ անունով հաւատացեալ մը թութակի պէս՝ կրնաց սորմիլ ողջամիտ վարդապետութիւններու վրայով խօսիլ ու անոնց վրայ ուղիղ գատողութիւն ընել , որ ատեն սիրա չունի իրօք զանոնիք ընդունելու՝ զանոնիք սիրելու՝ ու զբալու անոնց զօրութիւնն ու ներդործութիւնը իր կիրքերուն ու վարքին վայ : Ըստերը կան որ հիմա կը դաւանին թէ Քրիստոս իրենց վարդապետն է , բայց ան հանդերձեալ աշխարհին մէջ պիտի դատապարտէ զանոնիք իրքե իրենց դատաւորը :

Համարեած • Ավանս • ասոր պակառութիւնն է պատշաճոց որ այսլամփ քիչերը կ'իմանան հաւատքին հարկաւութութիւնն ու յաւխունական կենաց համար իրենց հողբներուն մէջ Աստուծոյ շնորհաց զորքին հարկաւոր ըլլալք • միայն թէ տղիստարար օրէնքին դորժքերուն յուսալով կ'առղրին , ոշոնցման մարդ ամենեւին չկընար երկեխց թաշգաւորութիւնը ձեռք ձգել :

Համարեած • Խայց՝ թողութիւն կ'ընեք , աս բաներուն վրայով երկնաւոր դիսութիւն մը ունենալը Աստուծոյ պարզեն է • մարդկային ձարտարութիւնով կամ միայն անմանց վրայով խօսելով՝ մէկը չկընար զամանեց ստանալ :

Համարեած • Ասոնց բոլորն ալ շատ աղեկ դիտեմ ես • քանզի մէկ մարդ մը բան մը չկընար լնդունի՞լ թէ որ վերևն չտրախ իրեն • բոլորը շնորհքին է ու չէ թէ զորքին : Ասիկայ հաստատելու համար հարիւր վկայութիւն կրնայի բերել :

Համարեած • Աղեկ • հիմա ի՞նչ նիւթ ձեռք առնենք , ոչ մեր խօսակցութիւնն անոր վրայ ընենք :

Համարեած • Վնչ որ կ'ուզեմ ան • ես երկնաւոր բաներու վրայ ալ կը խօսիմ՝ երկրաւոր բաներու վրայ ալ • հաւատքի բաներու վրայ ալ արտաքին բաներու վրայ ալ • անցեալ բաներու վրայ ալ դալիք բաներու վրայ ալ • օտար բաներու վրայ ալ մեր երկրի բաներուն վրայ ալ • բաներուն էութեանը վրայ ալ պարագաներուն վրայ ալ , միայն թէ բոլոր խօսքը մը օգտին համար ըլլայ :

Հաւատքարիմը հիմա զարմանալ սկսեց • ու դէպ 'ի Վրիստիանոսին դալով՝ որ բոլոր աս ատենս լնդնիրեն կը քալը , կամաց մը ըստ անոր . Վնչ քաջ ընկեր մը վաստըկեցանք • անտարակցյս աս մարդը շատ աղեկ ձամբորդ մը պիսի ըլլայ :

Աս խօսքին վրայ Վրիստիանոս համեստաբար ժպակեցաւ :

ու բառ . Աս մարդը՝ որուն հետ դուն բռնուեցար , աս իր լեզուովք զինքը չհանցող մարդիկներէն քառան հոգին մեկնեղ կը խարէ :

Հայութաբերէմ . Ուրեմն դուն զինքը կը ճանշնան :

Վրիմանականու . Օվնքը կը ճանշնամ . անշուշտ , իրմէն աղէկ ես դիտեմ զինքը :

Հայութաբերէմ . Ա դէ ըսէ ինձի , ի՞նչ մարդ է աս :

Վրիմանականու . Եսոր անունը Ծատախօս է , ինքը մեր քաղաքը կը բնակի : Աը զարմանամ որ դուն չես ճանշնար զինքը . բայց կը մոռածեմ որ քաղաքը միծ է :

Հայութաբերէմ . Որո՞ւն տղան է , և ու՞ր կը բնակի :

Վրիմանականու . Եսիկոյ Ենուշնեղուին որդին է . ու Ծաղակիրատութեան թաղը կը բնակի , և բոլոր զինքը ճանշնողներն աղ աս անունը կու տան անոր . այսինքն Ծաղակիրատութեան թաղին Ծատախօսը : Եւ թէպէս դեղեցիկ լեզու մը ունի , բայց ինք անշահ մէկն է * :

Հայութաբերէմ . Բայց շատ աղէկ մարդ մը կ'երեսյ :

Վրիմանականու . Եւդակն է . բայց անոնց՝ որ աղէկ մը ծախօթ չեն իրեն . քանզի ինք հեռուեն շատ աղէկ կ'երեսյ , բայց մօտէն բաւական տղեղ է : Եւու անիկոյ աղէկ մարդ կ'երեսյ ըսելու իմ միտքը կը բերէ մէկ նկարչի մը դորձքին մէջ տեսածս . աս նկարչին գծած պատկերները հեռուեն շատ աղէկ կ'երեսյին , բայց խիստ մօտ որ բերուեին բոլորովին անհանց էին :

* Անզի հրամացուած չէ՝ որ մէկուն վրայ դէշ չխօսինք : Յա՞ . դ . 11 : Վրիմանականու ասով յանցաւոր չէ : Չէ . վասն զի ուր որ Եստուծոյ վատքն ու Եւետարանին պատիւը վտանդի մէջ է , ու վտանդ կոյ թէ եղայրները պիտի խարուին ըսկ շատախօս՝ անառակ՝ ու ամբարիշտ հաւատայեալէ մը , ան անդն օրինաւոր է ու բանն ըստ ինքեան կը պահանջէ որ վայելուչ եղանակաւ մը այնպիսի անձին ինչ ըստը յայտնի ծանուցանենք :

Հայոց ես կը մասածեմ որ դուն աս խօսքը միայն կատակ մը ընելու համար կը խօսիս , բանզի ժպակեցար :

Վիզիոնիանուն . թակեւտ և ժպակեցայ , բայց քան լիցի , որ աս բանին վրայ ծաղը կամ կատակ մը ընեմ ես , կամ՝ սուտ տեղը զբազարութիւն մը : Եթ վրայովու աւելի տեղեկութիւն մը տամ ես քեզի : Առ մարդը ամէն ընկերութեան և ամէն խօսքի մէջ կը մտնէ + ինչպէս որ հիմն նոր քու հետդ խօսեցաւ , այնպէս կը խօսի նաև երբոր զինետունը նստած ըլույ + և որչափ որ զինին իր դլուխը ցատկէ այնչափ աս խօսքեն իր բերնէն կ'ելլն : Վրիստանէութիւնը՝ իր սրտին կամ իր տանը և կամ իր խօսակցութեանը մէջ տեղ տունի + բոլոր իր ունեցածը լեզուին վրայ է + ու իր ըստած կրօնքը՝ անով շաղակրատութիւնընելու համար է * :

Հայութ կ'ըսես + ուրեմն մեծապէս խօսքեցայ ես աս մարդուն վրայով :

Վիզիոնիանուն . Խարուիլն ալ խօն որ է + տարակցյա մի՛ ունենար ասոր վրայ : Միտքդ բեր ան առածը որ կ'ըսէ , “Ա՛զո՞ն ու վճա ընէր” + բայց Աստուծոյ թագաւորութիւնը խօսքերով չէ , հապա զօրութիւնով : Մատին . իդ . 3 : ա՛ Առնեն . դ . 20 : Խար աղօմքը զդումին հաւատքի և վերստին ծննդեան վրայ կը խօսի , բայց միայն անոնց վրայով խօսիլ դիտէ : Ես իր ընտանեացը մէջ զանուեցայ , ու զինքը փորձեցի թէ տանը մէջ և թէ դուրսը .

* Հիմն ալ կան այսպիսի հաւատացեալներ՝ ինչպէս որ միշտ զանուած են : Այսպիսիները ամէնսապատուական քրիստոնէութիւններն իր սրտին կը վիրաւորեն՝ ու ամէն վառաւոր չշմարտութիւններն անարդանաց մէջ կը ձգեն : Եւելի վեսս կը քաշուի աստիցմէ քան թէ բոլորովին տղէաններէն ու յայտնի ամբարիշներն : Ուրեմն վախէք հեռացեք այսպիսիներէն :

ու գիտեմ որ իր վրացով իմ ըստած ճշմարիտ է : Խնդրէս
որ հաւկիթի մը ճերմուցին մէջ համ վրայ , այնպէս իր
տանը մէջ կրօնք վրայ : Աչ աղօթք կայ հօն , և ոչ մեռ-
զայ վրայ զդիռւմ ընելու նշան + ճշմարիտը անբան կենդա-
նին իր տեսակին մէջ ասկէ աղէկ ծառայութիւն կ'ընէ Աս-
տուծոյ : Տուր զինք հանցողներուն քով աղը մը նախա-
տինք մը և ամօթ մըն է բնք կրօնքի : Հառակ բ . 23 :

24 : Իր պատճառաւը հազիւ թէ աղէկ խօսք մը կը խօ-
սուի քրիստոնէութեան վրայ քաղաքին ան կողմը ուր որ
բնք կը բնակի : «Օքնքը զիտցող հասարակ անձնիքը այս-
պէս կը կոչեն անիկայ » “ Դատարկ առարկ , որունը առարկա-
նայ » : Իր խեղչ ընտանիքը այնպէս կը գտնէ զինքը :

Այնպէս կծծի այնպէս գէշեզու և այնպէս անիրաւ է իր
սպասաւորներուն , որ չեն զիտեր թէ ի՞նչ ընեն և ի՞նչ
խօսին իրեն : Իր հետը աւունաւուր ունեցողները կ'ըսեն թէ ,
Ըստ աղէկ է Ճեթանոսի հետ առուտուր ընելը քան թէ
անոր հետը + քանոյի անոնց քովը աւելի արդարութիւն կը
գտնուի : Առ Ըստախօսը (թէ որ հնար ըլլոյ) , պիտի
անցնի անոնք խարելով ու նենդելով : Ասկէ զատ իր
զաւկըներն ալ իր համբուն մէջ կը կրթէ + ու թէ որ ա-
նոնց մէկուն վրայ յիմարական երկչուութիւն մը գտնելու
ըլլոյ , Քանզի ինք զիւրազգանց խղճնուանքի մը առջի երե-
ւոցթը այսպէս կ'անուանէ) յիմար և անբան կը կոչէ զա-
նոնք , ու գործի մը չըներ , և ուրիշներուն քով չպովիր
զանոնք : Ուէ որ բնձի կը հարցընես , ևս կը կարծեմ որ
բնք իր չար վարքով շատերը գայթակղեցուց ու կործանեց ,
ու թէ որ Աստուած չարգիլէ , ուրիշ շատերուն ալ կոր-
ծանմանը պատճառ պիտի ըլլոյ *

* Ուող կարդան ասիկայ ու դողան ամեն անոնք որ լե-
ռուով միայն կը դաւանին Վրիստոսի հաւատքը , բայց
իրենց հողիներուն մէջ ընաւ չպատան Վրիստոսի սէրն ու-

Հաւատագործիք + Խղբայր իմ , ևս քեզի հաւատալու կապուած եմ՝ ոչ միայն դուն աննիկոց դիտեմ ըսելուդ . համար , հասկա անոր համար ևս՝ որ իբրև քրիստոնեայ՝ մարդոց վրացով քու դիտցածդ կը պատմես : Կիանզի ես չեմ կրնար մաքես անցընել թէ դուն աս բաները չարականութեան համար կը խօսիս , հասկա թէ անոնք ճիշտ քու ըսածիդ ովէս են :

Կիրիառիանոս . Ընէ որ ես քենէ աղէկ չհանչնացի զինքը , գուցէ իր վրայովը այնպէս պիտի խորհէի ինչպէս որ դուն առաջ խորհեցար : Խւ մանաւանդ՝ թէ որ աս պատմութիւնը միայն քրիստոնեութեան թշամի եղողներէն լսած ըլսացի , զրագարաւութիւն ըլսաւ սիթիտի խորհէի ան . որուն բարի մարդոց անունն ու գաւանութիւնը յանախ կը վիճակի չար մարդոց ըերնէն : Խայց ամեն աս բաներով՝ և մանաւանդ ասոնց ովէս շատ ուրիշ դէշ բաներով , կրնամնակ բուն իմ վիայութիւնով ալ իր յանցաւոր ըլսալը հաստատել : Վակէ զատ աղէկ մարդիկ իրենց ամբթ կը սկզբն դինքը . ոչ եղբայր կրնան կոչել ու ոչ բարեկամ . դինքը հանցաղներն իրենց մէջ անոր անունը յիշեն անդամ զիբենք կ'ամշընէ :

Խորհը : Անձի , Բնչպէս անարդութիւն կ'ընեն անոնք Աստուծոյ շնորհացը՝ Քրիստոսի մեր Տէրով՝ ու Հմանքութեան սրբազն խօսքին : Ո՞հ , Բնչ ահաւոր համար ունին տալու հանդերձնալ աշխարհին մէջ մէկ սուրբ ու սրբերը քննող Աստուծոյ մը : Ո՞վ դուք՝ Հիսուսի Տշմարիա հանապարհորդները , կարդացէք ասիկայ՝ ու փառք տուեք մեր Տէրովը որ անպատուդ հաւատրի վրայ հաստատուելո՞ւ ու Հմանքութեան վրայ կեղծաւոր շատախօսութիւն ընելո՞ւ մեղ աղասից . ու Տշմարտութիւնը կատարելապէս ձեզի հանցուց ձեր սրտերուն մէջ ընդունելու զանիկայ , ու անոր աղջու և սրբացուցիչ դօրութեանը ներքե ապրելու ու կինցաղավարելու : Ո՞վ է որ մեղ միւսներն կը տարբերէ :

Հաւատագործիք . Հիմն կը տեսնեմ որ ըսելն ու ընելը երկու բաներ են . և առեւ ես առէկ պիտի նկատեմ առաջը երութիւնը :

ՎԵՐԻՄՈՒԹԻՈՆ : Երդարեւ անոնք երկու բաներ են , և այնպէս իրարմէ տարբեր են՝ ինչպէս որ հողին ու մարմինը . Քանզի ինչպէս որ մարմինն առանց հոգւոյն մինակ մեռած դի մըն է , այնպէս աւ խօսքը՝ առանց գործքի մինակ մեռած դի մըն է : Արօնքին հողին անոր գործնական մասն է * : Սատութոյ ու Հօրը քով մաքուր ու անարատ կրօնասիրութիւնը աս է . որբերուն ու որբեարիներուն տես երթաւ իրենց նեղութեան առենք . ու անձը անարատ պահել աշխարհէն : ՀՅակ . ա . 27 . ու 22-26 : Ըստ տախուր ասոր վրայ տեղեկութիւն չունի . ինք կը կարծէ որ ըսելով ու խօսելով բարի քրիստոնեայ կ'ըլլաց մէկը , և ասանկով ինքն իր հողին կը խարէ : Լաելը ուրիշ բանի շնմանիք՝ բայց միայն սերմ ցանելու . ու միայն խօսիլը ցցց չտար թէ սրտին ու վարքին մէջ Շնմարիտ պատուկ կայ : Առորդ . ժդ . 23 : Աղէկ զիսնանք որ դատաստանին օրը մարդիկ իրենց պատուիներովը պիտի դատուին : Սն ատենը պիտի չըտուի թէ Հաւատացիք դուք , հասկա

* Շնմարիտ քրիստոնէի մը ամենէն ատոյդ նշանը գործնականն Սատուածպաշտութիւնը կը զնէ աս զրքիս հեղենակը : “ Իրենց պտուղէն պիտի ճանշնաք զանոնիք ” կ'ըսէ Տէրն մեր : Աղէկ ծառը իր տերեներուն առատորէն աճելէն՝ կամ զեղեցիկ ու չընալ ծարիկներով զարդարուած ըլլալն չճանչցուիր , հապա իր պտուղէն՝ որ ետքը կը բերէ : Խօսր պէս Վրիստոսի աշակերտն ըլլալուս նշանը ոչ թէ գրառուանց քրիստոնեայ ըլլալ դաւանելնիս կամ մեր փորձառութիւններուն վրայ զեղեցիկ պատմութիւնն մը ընելնիս է , հասկա Վրիստոսի մեղի պատուիրած բաներն ընելնիս է : “ Դաւոր իմ բարեկամներս էք ” , այսինքն՝ նշան է թէ զուք իմ բարեկամներս էք , “ թէ որ Ընելու ըլլաք ինչ որ ես ձեզի կը պատուիրեմ ” :

պիտի բառի թէ՛ Գործող էիք , թէ միայն խօսող + և անոր նայելով պիտի դատուին * : Աշխարհի վլրչը՝ մեր հունձերուն նմանցուած է . Վագիլ + ժդ . 30 . և դուն գիտես որ մարդիկ հունձի ատեն ուրիշ բանի չեն նայիր հապա պատուզի : Ասիկայ որ կը խօսիմ՝ բաեւ չեմ ուզեր թէ առանց հաւատքի գործը ընդունելի կ'ըլլայ , հապա որ ցուցընեմք քեզի թէ ան օրը առ Հատախօսին դաւանութիւնը ի՞նչպէս տկար պիտի ըլլայ :

Հաւատքի մասն ։ Ասիկայ իմ միտքս կը բերէ Վավեսին

* Անշաւորները թէպէտ և փրկուած են՝ ու իրենց մեղշերը Կրիստոսի արխիւնովը յաւիտեան լուացուած է , թէպէտ և Կրիստոսի արդարութիւնովը կատարելապէս արդարացած են , թէպէտ և Ծիսուս Կրիստոսի միջնորդութեամբը Աստուած յաւիտենական կեանքը անոնց պարզեած է , սակայն մեկը չկընար առ անդին բարութիւներուն հազորդ ըլլալ՝ բայց անոնք որ Կրիստոսի պատուական հաւատքին հազորդ եղած են : Եւ առ հաւատքը՝ որ Էստուծոյ պարզեն է , կ'ուզեմ բաեւ Էստուծոյ ընարեալ ներուն հաւատքը՝ Էստուծոյ կամեցը հնազանդութիւն ընելով ու 'ի փառս Աստուծոյ բարի պատուղ բերելով յացանի կ'ըլլայ : Երաւ է որ սուրբերը ոչ թէ իրենց գործքերուն պատճառաւը՝ կամ իրենց գործքերը արդարութեան ու փրկութեան արժանաւոր ըլլալուն պատճառաւը կ'արդարանան ու յաւիտենական կեանքը կը արուի իրենց , բայց Տէրոնք վրայ ունեցած հաւատքին իրենց գործքերով պիտի արդարանայ , որ իրենց արդարութիւնն ու փրկութիւնն է + որովհետեւ ինչպէս որ անոր հաւատալ կը դաւանին՝ այնպէս ալ անոր վրայ ունեցած իրենց սերը ցցց կու տան անոր պատուիրանքներուն հնազանդութիւն ընելով : Ուստի մեկը թող չխարէ զննքը . ինչու որ հաւատքը առանց գործքի մեռած է , ու մեռած հաւատքը ամեննեին կենդանի յօյս մը չձնանիր յարուցեալ Փրկչին վրայ , ու օդուտ մըն ալ չընծայեր երբոր ան իրբե դատաւոր երեալու ըլլայ :

ըրած ստորագրութիւնը՝ մաքուր անասուններուն վրայով : Կետք ժամ՝ ժամ՝ ը Օքին՝ ժամ՝ Մարուր անասունը կճղակարաշխ՝ կամ՝ ուսորին պշեղը բաժնուած՝ ու որոճացող պիտի ըլլայ՝ չէ թէ միայն կճղակարաշխ՝ կամ միայն որոճացող : Եւապաստակը կ'որոճայ՝ բայց անմաքուր է, ինչու որ կճղակարաշխ չէ : Ու ասիկայ ճշմարտապէս կը նմանի Ըստախօսին . ան կ'որոճայ, խոհական մարդու մը պէս խօսրին վրայ կ'որոճայ, բայց կճղակարաշխ չէ : Սյսմիքն՝ մեղաւորներուն ճամրէն չուտուիր, հապա նապաստակին պէս շան կամ արջու ուր ունի, ու անոր համար անմաքուր է :

ՎՐԻՍՏԵԱԱՆՈՒՆ . Ապրելի է որ դուն աս խօսքերուն ճշմարիստ աւետարանական նշանակութիւնը զբուցեցիր . ու մէկ բան մըն ալ ևս պիտի վրայ բերեմ : Պօղոս մէկ քանիները՝ ու մանաւանդ շատախօսներն ալ կը կոչէ ձայն տուող պղինձներ՝ կամ հեշեցող ծնծղաներ : ան Առնել . ժակ . 1-3 : Եւյանքն՝ ձայն տուող անկենդան բաներ, բնշպէս որ ինք ուրիշ տեղ մը կը բացատրէ : ան Առնել . ժակ . 7 : Ենկենդան բաներ՝ աւետարանական ճշմարիտ հաւատքն ու նորհքը չունեցող բաներ . ու հետեւապէս այնպիսի բաներ որ երկնից թագաւորութեանը մէջ կննաց զաւկըներուն մէջ դրուելու արժանաւոր չեն . թէ ալէտ և իրենց ձայնը՝ իրենց խօսակցութեանը նայելով իրը թէ հրեշտակի լեզուի կամ ձայնի պէս ըլլայ :

ՎՐԻՍՏԵԱԱՆՈՒՆ . Խրատ որ՝ նշայնչափ իր ընկերութեանը կը ցանկայի առաջ, որչափ որ հիմն ձանձրացայ անկետ . ի՞նչ ընենք իրմէն աղատելու համար :

ՎՐԻՍՏԵԱԱՆՈՒՆ . Խմ՝ խրատ բռնէ, ու քեզի ըստածիս պէս ըրէ, և պիտի գանես որ ինքն ալ շուտ մը պիտի ձանձրանայ քու ընկերութենէդ, թէ որ Կստուած իր սիրտը չարժէ կամ թէ որ անիկայ չըարձնէ :

ՎՐԻՍՏԵԱԱՆՈՒՆ . Ի՞նչ խրատ կու տաս ինծի որ ընեմ :

Նիշինքեանու . Գնաս իրեն՝ ու կրօնքին դօրութեանը վկայով Ծերմեռանդ խօսակցութեան մը մատիր իր հետը , ու պարզապէս հարցուր իրեն՝ (երբոր բնք անիկաց ընդունի , բնչալէս որ պիտի ընդունի .) թէ արգեօք իր սրտին՝ իր տանը՝ և իր կինցաղավարութեանը մէջ հաստատուած է աս բանը * :

Հաւատուարէմ . (Ե՞ս ատենը Հաւատարիմը դարձեալ դէպ՚ի յառաջ քաւեց՝ ու ըստ Հաւատախօսին .) Եկէք նայինք , ի՞նչ ըստը , ի՞նչ ըստը , ի՞նչալէս ես հիմա :

Հաւատին . Ծնորհակալութիւն քեզի , աղէկ եմ , ես կը կարծէի որ մինչև աս ատենս խել մը խօսակցութիւն ըրած պիտի ըլլայինք :

Հաւատուարէմ . Աղէկ . թէ որ կ'ուզես , հիմա սկսինք ընել . և որոնցինեան ինծի ձգեցիր ինչ ըստի վրայ խօսակցութիւն ընելիս որոշել , աս թող ըլլայ ան . Երբոր Վատուծոյ փրկարար շնորհը մարդուս սրտին մէջն ըլլայ՝ ի՞նչալէս կը ցուցընէ մերգինքը :

Հաւատին . Ուրեմն կ'իմանամ՝ որ մեր խօսակցութիւնն իրաց գօրութեանը վրայ պիտի ըլլայ : Հատ աղէկ . շատ լաւ խնդիր մըն է ատիկաց , և կը կամիմ ատոր պատասխանը տալ մեզի : Արդ՝ համառօտարար այս պէս կը պատասխանեմ : “Ասի՞ Երբոր Վատուծոյ շնորհը մարդուս սրտին մէջն ըլլայ , անիկաց սրտին մէկ մեծ բողոք մը ընել կու տայ մեղքի դէմ : Երկրորդ՝

* Վուանց ասոր ըուլորը դաստարկ կարծիք՝ լոկ ձայն ու անօդուտ դաւանութիւն են : Վարդիկ հաւատքի տեղ երկակայութիւնը՝ Վատուածպաշտութեան տեղ անոր կերպարանքը միայն վրանին կ'առնեն : Ճշմարիտ հաւատքն իր պատուղովը միշտ կը ցուցուի : Ճշմարիտ դարձի եկողը իր վարքովն ու կինցաղավարութիւնվը յացանի կ'ըլլայ : Ոի՞ խարուիք՝ Վատուած ծաղը ըլլար լեզուով՝ թէ որ սիրան ուղիղ չէ իր վրայ սիրով ու հնաղանդութիւնով :

Հայոց մէկին վրայով մտածենք : Ասքենմ թէ աւելօք պէտք էր քեզի ըսել , թէ Վասուծոյ շնորհքը ննրգինքը կը ցուցընէ հակամիտեցը նելով զհողին բռն իր մեղքէն զգուելու :

Ըստական . Խնչու համար . Բնչ տարբերութիւն կայ մեղքի դէմ բողոքելուն ու մեղքէ զգուելուն մէջ տեղը :

Հայոց մէկ կ'ըսես , շատ մեծ տարբերութիւն կայ : Ուկ մարդ մը կրնայ բողոքը ընել մեղքի դէմ ննրգինքը բարեպաշտ ցուցընելու համար . բայց չկրնար զշուիլ անկէ , եթէ ոչ Առւրբ Հոգւոյն զօրութիւնսով անիկայ ատելով : Խսեր եմ որ շատերը մեղքի դէմ կը բողոքին ամպիտնին վրայէն՝ որոնք տակաւին զանիկայ աղեկ մը իրենց սրտին՝ տանը՝ և խօսակցութեանը մէջ կը կրեն : Հոգակին տիկինը բարձր ճայնով բողոքեց մեղքի դէմ՝ որպէս թէ ինք շատ պարկեշտ մէկն էր , բայց թէպէտ և այնպէս կանչեց , սակայն իր կամքովը պղծութիւն պիտի զործէր անոր հետ : «Օհա՛տ . լիժ . 15 : Ոմանք մեղքի դէմ բողոք կ'ընեն ինչպէս որ մայր մը իր զըկի զաւկին դէմ բողոք կ'ընէ չար և անզդամ կոչելով զաւակը , ու այն բոպէին վրայինյելով անիկայ :

Ըստական . Ա'խնանամ որ խ բռնել կ'ուղես դուն :

Հայոց մէկ կ'ուղեմ : «Եւ , չէ . ես միայն բանը շիտակ կարգին դնել կ'ուղեմ : Բայց սրբն է ան երկրորդ բանը՝ որով սրտին մէջի շնորհաց զործքը ննրգինքը պիտի ցուցինէ :

Ըստական . Վեետարանական խորհուրդներուն վրայով մեծ դիտութիւն ունենալը :

Հայոց մէկ կ'ուղեմ : Ես նշանը առաջին ըլլալու էր . բայց թէ առաջին ըլլայ և թէ վերջին՝ միւսին պէս սուտ է : Քանիզի կրնայ ըլլալ որ մէկը աւետարանական խորհուրդներուն վրայով դիտութիւն՝ մեծ դիտութիւն ստանայ , և

տակաւին իր հոգւոյն մէջ շնորհաց զործ մը չունենայ * : Անաւանդ՝ թէ որ մէկը ամեն զիտութիւնը ունենայ , կարելի է որ դեռ ինք ոչինչ ըլլայ , և հետեւապէս Վատուծոյ զաւակ չըլլայ : ան Ասքնի + ժկ . 2 : « Քրիստոս չէ թէ զիտողներուն , այլ գործողներուն երանութիւն կուտայ՝ ըսելով . » Աշխաննիլի էք՝ թէ որ ասոնք կատարէք » : Սնիկայ երանութիւնը չէ թէ զիտնալուն այլ գործելուն վայ կը դնէ : Անկ մարդ մը կարելի է որ հրեշտակի նման զիտութիւն ունենայ , ու տակաւին քրիստոնեայ չըլլայ : Ուստի ասոր վրայով քու տուած նշանդ ճշմարիտ չէ : Իրաւ՝ զիտնալը շատախօսներն ու պարձեցողները կը հաշեցընէ , բայց ընելն է որ Վատուծոյ հաճելի է : Ոչ թէ սիրաը առանց զիտութեան բարի կ'ըլլայ , քանզի առանց զիտութեան ոչինչ է ան : Ուստի զիտութիւն կայ՝ զիտութիւն ալ կայ + զիտութիւն կայ որ՝ իրաց վրայ միայն կը խօսի , ու զիտութիւն կայ որ՝ հաւատքի ու սիրոյ հետ ընկերանեալով , մարդուս սրտանց Վատուծոյ կամքը կատարել կու տայ + ասոնց առջինը շատախօսներուն բանին կու դայ + բայց ճշմարիտ քրիստոնեան առանց միւսին գոհ չըլլար : » Իմաստունը ըսէ զիս , որ քու օրէնքդ պահեմ :

* Ճշիւ խօսելով՝ կեղծաւորը որչափ որ մտաւոր զիտութիւններով լցունք ըլլայ , ասաւածպաշտութեան ճշմարիտ գօրութենէն զուրկ է , ու աւետարանական խորհուրդներուն վրայով ընաւ զիտութիւն ունենալու ընդունակ չէ : Իրաւ կրնայ սորվիլ անոնց վրայով խօսիլ , ու անոնց վրայով բաղմաթիւ զաղափարներով իր զլուխը լցընել , բայց իր խօսքերուն յարմար զաղափարներ չունի : Օրինակի աղապաւ՝ 'ի ծնէ կոյրը կրնայ խօսիլ արեգակին կամ ծիածանին վրայ , ուրիշներէն լածը կրկնելով . բայց որովհետեւ ամեններն տեսած չէ զանոնք , ոչ մէկին պայծառութեանն ու ոչ միւսին զոյներուն վրայով զաղափար մը ունի :

ու բոլոր սրանով անիկայ 'ի գործ դնեմ' : Առաջ ։ ՀԺՂՅ . 34 :

Ըստպահօքս . Արկին զիս բռնել կ'ուզես դուն . ասիկայ մեր շնուռթեանը օգուտ չէ * :

Հայութեանմայն . Աղեկ . թէ որ կ'ուզես , մէկ ուրիշ նշան մը ցոյց տուր՝ թէ շնորհաց աս գործը իր եղած տեղն ի՞նչ պէս նկրպինքը ցոյց կու տայ :

Ըստպահօքս . ՋԷ՝ չեմ ուզեր . քանդի կը տեսնեմ որ պիտի չամամայնինք իրարու :

Հայութեանմայն . Յօնէ որ դուն չես ուզեր՝ կը թողնաւ որ աս քանը ևս ընեմ :

Ըստպահօքս . Ազատ ես . ուզածդ կը նասա ընել :

Հայութեանմայն . Հողւցն մեջի շնորհաց գործը ինքզինքը ցոյց կու տայ՝ անիկայ ունեցող անձին , կամ՝ անոր մօտ կեցողներուն :

Անիկայ ունեցող անձին այսպէս ցոյց կու տայ ինքզինքը : Վնոր միարը կը խօթէ իր մեղաւոր ըլլալը . մանաւանդ . թէ իր բնութեանը ապականութիւնն ու թերեհաւատութեան մեղքը կ'իմացընէ անոր , որոնց համար անտարակոյս պիտի դասապարտուի , թէ որ Յիսուս Քրիստոսի հաւատքովը Վստուծոյ ձեռքէն ողորմութիւն չգտնէ : Աս քանիքուն տեսութիւնն ու խմացումը մեղքի վրայով տրտմութիւն և ամօթ մը ունենալ կը պատճառէ ան անձին : Առաջ . լ. 18 : Երկ . լ. 19 . 19 . Հառլ . ժ. 8 : Հառլ . է . 24 : Առաջ . ժ. 16 : Գառլ . լ . 16 : Եաւ կը գտնէ որ աշխարհի Փրկիչն իր ներսիդին յայտնուած է , ու բացար-

* Ըստախօս , իրաւ է որ կը բռնուիս , բայց ասիկայ շատ օգուտ է քեղի ինչու որ քու ինչ ըլլալը անկէ քեղի կը յայտնուի : Լաւաղոյն է այսպէս՝ քան թէ սուտ յոյսեւ րով ու հոդին խարող բաներով շնութիւն ընդունելու եաւէ ըլլաս :

հակապէս հարկաւոր է անվտիոխարար անոր յարելու + անոր վրայ Փրկչին վրայով անօթութիւն և ծարաւութիւն ունենալ կը զգայ, որ այսպիսի անօթիներուն ու ծարաւուներուն խռատենաք մը եղած է : Արդ՝ Փրկչին վրայ ունեցած իր հաւատորին ուժը կամ տկարութիւնը որչափ որ է, այնչափ է իր ուրախութիւնն ու խաղաղութիւնն ալ, այնչափ է սրբութեան վրայ իր սերն ալ, այնչափ են անիկայ աւելի դիանալու ու նաև աս աշխարհին մէջ անոր ծառայելու իր բաղձանքներն ալ : Եւ թէպէտ կ'ըսեմ թէ ան չորհաց դործը բնրզբնըն այսպէս ցոյց կու տայ ան անձին, բայց միւս այն հաղիւ կ'ըլլաց որ ինք կարող ըլլաց վճռելու՝ թէ անիւ կայ. չորհաց դործն է : «Բանզի իր ապականութիւններն ու չարաւար դործածուած իր բանականութիւնը հիմա աս բանիս վրայով սիսալ դասում ընել կու տան իր մերին : Ուստի ան դործն ունեցող անձը ասոր չորհ հաց դործ ըլլալը հաստատութեամբ վճռելու կարող ըլլալն առաջ պէտք է որ կատարեալ դասողութիւն ունեցող մէկն ըլլաց : Հանձ + ժկ + 8, 9 = Գառա + ի + 15, 16 = Գարշ + ի + 12 = Մասր + ե + 6 = Յայր + իս + 6 :

Ուրիշներուն ալ սյապէս ցոյց կու տայ ինքբնըք : «Եախ» «Բրիստոսի հաւատորին յայտնի դաւանութիւնովը : Երկրորդ՝ ան դաւանութեանը համեմատ կեանք մը վարելով + այսինքն սրտի սրբութեամբ, թէ որ ընտանիք ունի ընտանեաց սրբութեամբ, ու աշխարհի մէջ կենցաղավարութեամբ սրբութեամբ, որ ընդհանրապէս կը սրբվըլնէ իրեն՝ ներառւանց իր մեղքերն և մեղքերուն պատճառաւը բնքնիրմէն ծածկաբար դշուիլ, մեղքը իր ընտանեացը մէջն ընաջինը ընել, ու աշխարհի մէջ սրբութիւնը զարդացը ընել, ոչ թէ լոկ խօսքով՝ ինչպէս որ կեղծաւոր և շատափսօս անձինք կ'ընեն, հապա հաւատորով և սիրով Աստուծոյ խօսքին գորութեանը դործնական հնաղանդութիւն

մը ցուցընկելով * : Յոթ . ինք . 5 , 6 : Առաջ . 3 . 23 :
Եղբ . ի . 43 : Արտար . ե . 8 : Հյուշ . ժղ . 15 :
Հառլ . յ . 10 : Եղբ . լղ . 25-27 : Փիլու . ա .
27 : դ . 17 : Եւ հիմա պարսն , թէ որ շնորհաց զոր-
ծին վրայով աս համառօս ստորադրութեանս դէմ առար-
կութիւն մը ունիս՝ ըրե՛ . հապա թէ ոչ՝ երկրորդ խնդիր
մը առաջարկեմ :

Ըստավետ . ԱՌ , իմ զործո հիմա հակառակիւ չէ ,
հապա ականչ դնել . ուստի ըսէ նայիմ քու երկրորդ
խնդիրդ :

Հառլութիւն . Ահա ասիկայ է ան : Ընորհաց զոր-
ծին վրայով աս ստորագրութեան առաջին մասը փորձով
քու վրադ կը գտնե՞ս : Եւ քու կեանքրդ ու կենցաղալավա-
րութիւնդ նոյնը կը վկայե՞ն , կամ թէ քու բարեպաշտու-
թիւնդ խօսքով ու լեզուով է և ոչ թէ զորճքով ու
հշմարտութիւնով : Ա'պաշեմ քեզի՞ թէ որ առոր վրայ
ինձի պատասխանելու յօժարութիւն ունիս , աւելի բան
մի ըսեր , հապա ան՝ որ դիսես թէ Վաստուած վերե՞ն Ամէն
այսինքն հշմարիտ է պիտի ըսէ , ու նաև ան՝ որուն մէջ քու
խնդմանանքդ կընայ քեզ արդարացընել . քանզի չէ թէ
ինքզնը զովոզն ընդունելի է հապա ան որ Տէրը կը զովի՞ :
Մանաւանդ մեծ շարութիւն է ըսել , թէ Ես սցագէս և
այնպէս եմ , երբոր իմ կենցաղալարութիւնս ու բալոր ըն-
կերներս կ'ըսեն թէ սուտ է :

* Ակ միայն ասիկայ է որ կը ցուցընէ թէ մնաք Կրիս-
տոսի հշմարիտ աշակերտներն ենք : թէ որ աստուած-
պաշտութեան աս գորութիւնը չունենակը՝ անուամը միայն
կենդանի ենք , բայց Վեհսարանին գորութեանը մեռած
ենք : Անձերնիդ քննեցե՞ք . ճամբաներնուդ նայեցէք :

† Վայոլէս հաւաստարմութեամբ վարուելու ենք մեր ըն-
կերներուն հետ : Եցանի թէ աւելի զործածուեր աս բան՝
թէ աշխարհի մէջ , և թէ եկեղեցւոյ մէջ : Ան ատենը

Ան առևնը Շատախօսն առաջ սկսեց կարմրիլ , բայց ինքնարք ժողովութիւնը այսպէս պատախան առւառ : Դուն հիման փորձառութեան՝ Խղճմուանքի՝ և Եստուծոյ վոս դարձուցիր խօսքը . ու խօսուած բաներն արդարացընելու համար Խրմէն վեցութիւն կը բերես : Ես չեմ յուսար որ աս տեսակ խօսակցութիւն պիտի ունենանք . ոչ ալ այս պիսի խնդիրներու պատախան տալու կը հակամիտիմ , քանզի ես դիս աս բանին պարտաւոր չեմ սեպեր՝ մինչեւ որ դուն քեզ իմ վարժապետա ըլլաւ ցուցընես : Եւ թէ որ ցուցընես ալ՝ կընամ՝ քեզ ինծի դատաւոր չընդունիլ : Բայց կ'աղաւեմ , զրուցելու կամք կ'ընե՞մ՝ թէ ինչո՞ւ այս պիսի հարցմանկներ կ'ընես ինծի * :

Համարձիմ . Անոր համար՝ որ տեսայ քեզ թէ խօսելու համարձակ ես , և կահկած ունեի թէ երեակայական գաղափարներէ 'ի զատ բան մը չունիս : Մանաւանդ՝ շխտակը խօսելով քեզի , քու վասյովդ լսեցի՝ թէ քու կրօնքդ խօսքի վրայ կը կայանայ , և թէ՝ քու կենցաղավարութիւնը սուտ է , կ'ըսեն թէ քրիստոնէից մէջ աղտ մըն ես դուն , և թէ՝ քու ամրարիստ կենցաղավարութիւնով ճշմարտութիւնը կ'անարդուի . թէ ոմանք արդէն քու չար ճամբաներով դայթակիցեցան , և թէ անով շատերն ալ կործանա-

դատարկախօսները աշխարհի մէջ պիտի ճանցուելին , ու եկեղեցին պիտի արտաքսուելին :

* Աիրարք քննող՝ հոգին փորձող՝ ու վարքը հետազօտող խօսքերը կեղծաւոր շատախօսներուն բանին չգար : Հաւատով արդարանալու վրայ ձայն մը հանե՛ ու պիտի միաւ բանին քեզի . բայց երրոր ճշոիւ խօսիս՝ թէ հաւատքը ինչպէս կ'աղցէ սրտին ու կը ներգործէ վարքին՝ որ անձնութացութեան հեազանդութիւնով մը Վրիստոսի հետեւըր , ասիկայ չեն կրնար տանիլ . քու վրադ կը նեղանան , քենէ կը փախչին , ու կը կոչեն քեզ օրինասեր :

ման վուանդին մէջ ես : Վու կրօնքդ՝ ու դինեսունը , և աղահութիւնը , պղծութիւնը , հայհցութիւնը , ստութիւնը , անպիտան ընկերութիւնը եւ , ամենը մէկտեղ կը կենան : Վու վագդ կը ճշմարտի ան առակը որ աղոռնիւ կի մը վրաց բառած է , թէ և խոլոր նիկինքուն նախաւորին է , այսպէս դուն ալ բոլոր հաւատացեալներուն նախաւորինը մըն ես :

Հապահիս : Որովհետեւ այնչափ պատրաստ ես անոր ասոր շաղակրատութիւններն առնելու և այսամի տմարդութեամբ դատողութիւն ընկլու ինչպէս որ ըբիր , ուրիշ բան չեմ կրնար ընել՝ բայց եթէ վընել որ դուն դիւրադրդիր և մելամաղձուս մարդ մըն ես , ու հետդ խօսակցութիւն ընելու անցարմար մէկը . ուստի և մնաս բարով * :

Հիմա Վրիխտխանոս մօս եկաւ և իր եղորր ըստ . Ենչպէս հանդիպելիքը քեղի ըսի . քու խօսքերդ ու անոր ցանկութիւնները չկրցան իրարու համաձայնիլ . Ենք առելի կամեցաւ քու ընկերութիւնդ ձգել քան թէ իր վարքը շտկել : Բայց ինչպէս որ ըսի , գնաց . և թող տուր որ երթաց . կորուստը ուրիշ մարդու չէ բայց անորը : Անիկայ մեզ՝ իրմէն զատուելու աշխատութենին ազատեց . ինչու որ ինք այսպէս մնալով՝ ինչպէս որ կը կարծենք թէ պիտի մնայ , մեր ընկերութեանը աղտ մը պիտի ըլլար : Ասկէ զատ առաքեալը կ'ըսէ . “ Անանկներէն մէկդիք կեցիր ” : ա՛ Տիմ . դ . 5 :

Հապահութիւն : Բայց ես ուրախ եմ որ աս կարձ խօսակցութիւնն իր հետը ըրինք . կարնելի է որ անոր վլայով կրկնն մոածէ . ինչ և իցէ ես յայտնապէս խօսեցայ իրեն ,

* Ուր որ սիրաը փառած է համոզուելն կը փախչի , հաւատարիմ խրատողէն մէկդիք կը կենաց , անիկայ կը դատապարուէ ու ինքովնիքը կ'արդարացընէ : Հաւատարիմ խրատը անհաւատարիմ հողիններուն բանին չդար :

և ասանկով՝ թէ որ կորառուի , ևս անպարտ եմ անոր աշը լիւնէն * :

Քրիստոնուս . Աղեկ ըրիք որ այսպէս յայտնապէս խօս սեցար իրեն . Հիմակուան ատենս այսպէս հաւատարմարար վարուիլ մէկու մը հետ քիչ կայ , և ասկէ է որ ճշմարտութիւնն այսամի շատերուն քթին հոտած կու գայ . Քանզի աս շատախօս յիմարներն են՝ որոնց կրօնքը միայն խօսքով է , և իրենց վարքն ապականեալ ու անարդ՝ որ բարեպաշտներուն ընկերութեանը մոտած ըլլալով աշխարհը կը խռովեցընեն , քրիստոնէութիւնը կ'արատաւորն , ու հաւատարիմ՝ անձը կը տրոմեցընեն : Երանի թէ այս պիտիներուն հետ ամէն մարդիկ քու վարուածիդ պէս վարուէին , ան ատենը անոնք կամ առէլքը իրենք զերենք ճշմարտութեան պիտի յարէին , կամ սուրբերուն ընկերութիւնը պիտի շկրնային տանիլ :

Կնապէս Շատախօսն առջի բերանը ,
Եր գետութները կը վքացընէ .
Կնապէս քաջութեամին կը խօսի յուրը ,
Եմնն իր առջին գետին կը դարնէ :

Բայց Հաւատարիմն երբոր կը սկսի ,
Արտին զործքերուն վրայով խօսիլ .
Կնքն իրեւ լուսին որ կը նուազի ,
Եւ կ'ունայնանայ , ու չուզեր խօսիլ :

Սոր պէս կ'ըլլան նաև ամէնքը ,
Արոնք չեն զիտեր սրախն զործքերը :

Ասանկով յառաջ գացին անոնք՝ ճամբրուն վրայ իրեւ տեսած բաներուն վրայ խօսակցելով . և այսպէս ան ճամ-

* Հաւատարիմն աս խօսքը նկատէ , ու աս իր օրինակին հետևէ :

բան դիւրացուցին , որ ուրիշ կերպով անտարակոյս ձանձրակի պիտի ըլլար իրենց՝ որովհետև հիմա անապատի մը մէջն կ'անցնէին * :

Երբոր զրեթէ բոլորովին զուրս ելան ան անապատէն , աւատարիմը դիակուածով մը իր եսին նայեցաւ , ու մէկը տեսաւ որ ետենուն կու դար , ու ինք կը ճանչնար զանիկայ : “Եսյէ՛ ըստ աւատարիմը իր եղբօրը , ով է անկէ եկողը : Են ատենը Քրիստիանոս ալ նայեցաւ ու ըստ : Սիրիոս իմ պատուական բարեկամն Եւետարանին է : Այժմ ; իմ ալ պատուական բարեկամն է . ան է որ զիս ան Եկեղ Դիրան ճամփան դրաւ : Ասոր վրայ Եւետարանինին իրենց հասաւ , ու այսպէս բարեեց զանոնք :

Եւետարանին . Խաղաղութիւն ձեզի ով իմ սիրելի ներս , ու խաղաղութիւնն ձեզի օգնողներուն :

Քրիստիանոս . Տարի՛ եկար , պատուական Եւետարանիւս . քու դէմքիդ տեսքը , իմ յաւիտենական բարելաւութեանս համար՝ քու ունեցած վաղեւմի մարդասիրութիւնդ ու անխոռնջ աշխատութիւնդ իմ միտքս կը բերէ :

Աղջար բարի եկար , ըստ բարի աւատարիմը . մեզի պէս ողորմելի ճամփոր չներուն որչափ բաղձակի է քու ընկերութիւնդ՝ ով քարքարարց Եւետարանիւ :

* Մնցած վորձառութեան վրայ հոգեւոր խօսակցութիւնները շատ կը զօրացընեն ու կը զոււարիթացընեն հողին : Տրտութեան անապատը շատ անդամ՝ ուրախութեան պարտէզի կը փոխեն , ու այսպէս՝ դժուարին ճամփաներէ յոդնած ճամփորդները կը հանդէցընեն : Ով քրիստունեայք , աւելի նայեցէք Քրիստոսի՝ ու աւելի խօսեցէք իրարու հետ իր ձեր վրայ ունեցած սիրոյն վրայ , ու ձեր հետը վարուելուն վրայ , հոգիններնիդ խոնարհեցընելու՝ ու գըրիստոս բարձրացընելու :

† Ճանապարհորդի ողի ունեցողին առողդ ու երջանիկ նշանն աս է . Եւետարանի պաշտօնեաներուն վրայ անկեղծ

Այս ատմենը Աւետարանիչն ըստ . Տամրեկամներ , մեր մերժին անգամ՝ իրարմէ զատուելնու ետև ի՞նչպէս եղաւ ձեր վիճակը . ի՞նչ բաներու պատահեցաք , և ի՞նչպէս կենցաղավարեցաք * :

Ուստի Կիրիարքիանուն ու Հաւատարիմը ճամբուն վրայ իրենց պատահած բոլոր բաները պատմեցին անոր . ու չնչպէս և ի՞նչ զժուարութիւնով մինչև ան տեղը հասնելին զրուցեցին :

Մեծապէս ուրախ եմ՝ ըստ Աւետարանիչը՝ չէ թէ փորձ ձութիւններու պատահելնուդ համար՝ հապա յաղթող զանուելնուդ , և մինչև աս օրս ճամբուն մէջ շարունակելնուդ համար , թէպէտ և բաղմապատիկ տկարութեամբ պաշարուած :

Ենծառապէս ուրախ եմ կ'ըսեմ՝ աս բանիս վրայ , ու ան ալ միանդամանցն ինծի համար և ձեզի համար : Ես ցանեցի՝ ու դուք հնձեցիք . և ան օրը կու դայ՝ որ առեն ցանողն ու հնձողը մէկուել պիտի ուրախանան . Ըստ :

Դ . 36 . այսինքն՝ թէ որ համբերեք առանց թուշալու , իր ժամանակին պիտի հնձէք : Գառա . դ . 9 : Պասակը առջնորդ է , և ատիկայ անեղծանելի պասկ մըն է . այն պէտ վազեցէք որ անիկայ առնեք . ա կորնը . թ . 24-27 : Էան ոմանք որ աս պասկին համար ճամբայ կ'ելլեն , ու անոր համար շատ տեղ երթալնուն ետև՝ մէկ ուրիշը կու

ու կաթողին սէր մը ունենալ , ճանշալով թէ մեր հոգիներուն օգտին նպաստամատոյց են անոնդ :

* Կիրիարքի հաւատարիմ՝ պաշտօնեաներուն զործքը ամեն ատեն պիտի ըլլայ ժողովուրդին հոգիներուն վիճակն իմանալ , ու անոնց օգտին ու լաւութեանը համար հոգալ . բայց ով աղետին , ի՞նչպէս զանցառութեան մէջ ձգուած է աս բանը : Քանի քանի անգամ՝ Կիրիարքի պաշտօնեաները ժողովուրդին տես կ'երթան , ու առանց հոգեոր խօսակցութիւն մը ընելու ետ կը դառնան :

դայ ու անիկայ անոնցմէ կ'առնել . ուրեմն ամուսը բռնեցէք ձեր ունեցածը , որ մէկը չառնել ձեր պատկը : Յայր . կ . 11 : Դուք տակաւին Աստանային հրացան հասնելու միջոցէն անցած չէք . զուք տակաւին արխն թափու չափ պատերազմն լով մնդքին զէմ չկեցաք : Արքայութիւնը միշտ թող ձեր առնեն ըլլայ , ու աներեւյթ բաներուն վրացով հաստատուն հաւատք ունեցէք : Հանդերձեալ աշխարհին ասդիմ կողմն եղած մէկ բանը ձեր ներսիդիմն թող չոփիք : Ու ամեն բանեն աւելի ազէկ նայեցէք ձեր սրտերուն ու անոր ցանկութիւններուն . քանզի անոնք ամեն բաներէն աւելի խարերայ են , ու տարապայման չար : Քայլախաղ քարի պէս ամուրցուցէք երեսնիդ . երկնից ու երկրի բոլոր կարողութիւնը ձեր կողմն ունիք * :

Վրիմանականոս չնորհակալ եղաւ իրեն՝ իր յորդորանքներուն համար . բայց նաև ըստ իրեն՝ թէ կ'ուզեն որ մնացած ձամբուն մէջ իրենց օգնութիւն ըլլալու համար քիչ մըն ալ խօսի . և մանաւանդ որ աղեկ զիսեին թէ իր մարդարէական հոգի ուներ ու իրենց կընար դրուցել իրենց պատահելու բաները , ու նաև գէմ դնելու և անոնք յաղթելու կերպը : Սո խնդիրին հաւատարիմն ալ հաճութիւն ցուցուց . ուստի այսպէս սկսեց խօսիլ Վւետարանիքը :

Վւետարանիկ . Կ'մ որդեակներս , Վւետարանին Տշմարտութեանն խօսքերուն մէջ լսած էք՝ թէ դուք չառ նեղուշ

* Ովկ օրհնեալ խօսք . որ կը քաջալերեն՝ կը զգուշացընեն ու կը յորդորեն՝ հաւատքով հաստատուն , յուսով խնդապատար , սրտերնուս վրայ հսկող , ու Տէրոջը դորձքին մէջ առաստ ըլլալու : Ասոնց ամենը միշտ հարկաւոր են ձամբորդներուն : Վրիմանոփ հաւատարիմ պաշտօնեանները խրատ կու տան : ու ձամբորդ քրիմաննեանները անոր համար անոնց չնորհակալ կ'ըլլան :

թիւններով երկնից թաղաւորութիւնը մտնելու էք . և դարձեալ թէ ամէն մէկ քաղաքի մէջ կապանքներ ու ներդութիւններ կը սպասեն ձեզի : Աւստի չէք կընար յոյս ունենալ թէ առանց այս կամային կերպ նեղութեան երկար ատեն ձեր համբան պիտի երթաք : Դուք արգէն ձեր վրայ գտաք աս վկայութիւններուն հշմարտութեանը մէկ քանի փորձերն ու ուրիշներն ալ խելոյն պիտի հետեւին : Վանզի՞ ինչպէս որ կը տեսնէք , դուք հիմա աս անապատէն զրեթէ դուրս ելած էք , ու հետեւապէս շուտով պիտի հասնիք մէկ քաղաք մը՝ որն որ շատ չանցած ձեր առջեր պիտի տեսնէք . և ան քաղաքին մէջ չարագար պիտի պաշարուիք թշնամիններով , որնք սաստիկ ջանք պիտի ընեն ձեզ սպաննելու . ու անտարակոյս գիտցէք որ մէկերնիդ կամ երկուքնիդ ալ ձեր վկայութիւնն արիւնով պիտի կնքէք * . բայց սակայն հաւատարիմ կեցէք մինչեւ 'ի մահ , ու հմագաւորը կենաց պասկը պիտի տայ ձեզի : Ան որ հմա պիտի մեռնի , թէպէտ և իր մահը ընական շըլսյ , ու իր քաշած տանջանքները զուցէ մեծ ըլլան , բայց ինք իր ընկերէն լաւ պիտի ըլլայ . չէ թէ միայն անոր համար՝ որ ինք միւսէն շուտով պիտի համնի երկնային քաղաքը , հապա անոր համար ալ որ շատ թշնամութիւններէ ազատ պիտի մնայ , որոնց որ միւսն իր մնացած համբուն մէջ պատահէլու է : Բայց երբոր քաղաքն երթաք ,

* Անց անոնց որ ձեռքերնին կը կապեն , ու հաստատուն սպահովութեամբ կը քնանան : Աը տեսնէք թէ տակաւին ինչ դժուարին զործ կայ աս համբորդներուն առջեր : Պիտոք է որ միւս յիշնիք թէ ասիկայ մեր հանդիսար չէ : Պիտոք է որ մենք մեզ առաջ քշնիք , հաւատքին լաւ պատերազմը պատերազմելու , Աստուծոյ ժողովրդոցը համար մնացած հանդիսար մտնելու ջանանք , զսուշութիւն ընելով՝ որ չըլսյ թէ Աստուծոյ շորհէն յետնեալ դտնուինք : Եշտ . դ . 1 :

և իմ առ տեղը ձեզի պատմածներս կատարուին , ան ատենը յիշեցէք ձեր բարեկամը , ու դուք ձեզ մարդու պէս բռնեցէք , ու ձեր հողիներուն պահպանութիւնը հաւատարիմ Ստեղծողին յանձնեցէք բարիք գործելով :

Վսիկէ ետի երազիս մէջ տեսայ՝ որ անարատէն դուրս ելելնուն՝ խիզըն իրենց առջևը քաղաք մը տեսան : Վաղաքին անունը Ունայնութիւն էր , ու անոր մէջ տօնավաճառ մը կ'ըստար , որ Ունայնութեան Տօնավաճառ կ'ըստէր , ու բոլոր տարին կը տեէր * : Վսիկայ Ունայնութեան Տօնավաճառ կ'ըստէր ոչ միայն Ունայնութեան քաղաքին մէջ ըլլալուն համար , հապա նաև հոն ծախուած կամ հոն եկած բոլոր բաներն ալ ունայնութիւն ըլլալուն համար , ինչպէս որ խմասունը կ'ըսէ , թէ Բոլոր գալիքը ունայնութիւն է : Ատա՞ . կը . 9 : Ժառ . ժառ .

* Հեղինակը Ունայնութեան Տօնավաճառի այլարանական ստորագրութիւնովը կը նկարագրէ աս աշխարհս իր կախարդական որողացիթներով՝ շրջբորթիչ ծիծաղներով՝ խարէական հրապրյըներովն ու սպառնական խոժոռագիմութիւններով : Ենոր աւագութիւնները՝ հարստութիւնները՝ հեշտութիւնները և ունայնութիւնները խիստ սրանչելի կերպարանքով գեղեցկազարդ պնդուած են , մեզ որսալու ու գերի ընելու : Ատամանն՝ աս աշխարհիս աստուածը՝ անդադար կը թէլազրէ մեզ , ինքզինքնիս զգալի հեշտութիւններու տալ , ու բոլորովին անոնցմով յագուրդ առնել : Եշխարհիս իշխաննը փառաց Տէրոջը վրայ ևս յարձակեցաւ՝ երրոր աս տօնավաճառէն կ'անցնէր ան , բայց բան մը չպտաւ անոր վրայ : Ենիկէ 'ի վեր բաղմապատիկ ջաները ալ ըրաւ Վրիստոնեայ անուն կրողներուն վրայ , ու խիստ շատ անդամ՝ յաջողութիւն դտաւ : Բայց Ճշմարիտ քը խստոնեայ ճանապարհորդը պիտի կարողանայ հաւատով յաղթելու : Եղրացիցը որուած թուղթին ժամ . գլուխը շատ երեւլի օրինակներ կու տայ մեզի անոնց վրայով , որոնք իրենք զիրենք երկրի վրայ օտար ու պանդուխտ սեպեցին :

8 : Տես ւ Ժառ . առ . 2-4 : Է . 11-17 : Երանյ .
իւ . 17 :

Աս տօնավաճառը նոր բացուած բան չէ , հազար հին
տաենէ ՚ի վեր հաստատուած բան մըն է : «Քեղի անոր
սկիզբը ցուցընեմ ես :

Հինգ հազար տարիիր չսի առաջ աս երկու համեստ
մարդոցը պէս ճամբորդներ կային երկնային քաղաքը ճանա-
պարհորդող . ու Շեղզերուղը՝ Ապոդդիսն ու Լէդէնը
իրենց ընկերներուն հետ մէկտեղ ան ճամբորդներուն ոտքին
շաւիդէն իմանալով թէ անոնց երկնային քաղաքն երթալու
ճամբան աս Ունայնութեան քաղաքին մէջէն կ'իշնայ , աս
տեղու տօնավաճառ մը հաստատել խորհեցան . տօնավա-
ճառ մը որուն մէջ ամէն տեսակ ունայնութիւնները ծա-
խուի , ու բոլոր տարին տեէ : Ուստի աս տօնավաճառին
մէջ ամէն աս կերպ ապրանքներ կը ծախուին . ինչպէս են
տուն , կալուածք , արհեստ , պաշտօն , պատիւ , իշխա-
նութիւն , պատուանուն , երկիր , թագաւորութիւն ,
ցանկութիւն , զուարձութիւն , և ամէն տեսակ հաճոյք՝
ինչպէս են պոռնիկ՝ կնիկ՝ երիկ՝ զաւակ՝ տէր՝ ծառայ՝ մար-
մին՝ հողի՝ արծաթ՝ ոսկի՝ մարզարիս՝ անդամանդ՝ քար , և
ի՞նչ բայ որ չծախուիր հոն :

Վստահմէ՛ ՚ի զատ աս տօնավաճառին մէջ ամէն տուն կը
տեսնուին ամէն տեսակ աչք կապող՝ խարերայ՝ զբօսանք ,
խաղ , ծաղրածու , խեղիկատակ , անզգամ , սրիկայ :

*Կաեւ հոս մէկը առանց ստակի կրնայ տեսնել անհնարին
չար զորութիւն՝ սպանութիւն՝ ընութիւն՝ սուս երդում
ընողներ :

Եւ ինչպէս որ ուրիշ սլոտիկ տօնավաճառներուն մէջ
զանազան թաղեր կամ՝ փողոցներ կան յատուկ անուննե-
րով՝ ուր որ այս ինչ և այն ինչ ապրանքը կը ծախուի ,
այսպէս հոս ալ աս տօնավաճառին ապրանքները շուտով
դանուելու համար յատուկ տեղեր՝ թաղեր՝ փողոցներ՝ կան :

Եսոր մէջն է Խրիստանացւոց թաղը , Գաղղիացւոց թաղը , Խոտալացւոց թաղը , Սպանիացւոց թաղը , Գերմանացւոց թաղը * , ուր որ զանազան ունայնութիւններ կը ծախուին : Եշ ինչպէս որ ուրիշ տօնավաճառներուն ամէն մէկին մէջ մէյմէկ տեսակ ապրանք ուրիշներէն շատ կը զանուի , այսպէս ալ աս տօնավաճառին մէջ ։ ոռվմի ապրանքն ու անոր առուտուրը շատ յաջողակ է . միայն մեր Անդղիացւոց ազգը քանի մը ուրիշ ազգերու հետ զբումնք մը ունեցան անոր ապրանքներուն վրայ ։

Արդ՝ ինչպէս որ ըսի , երկնային քաղաքն երթալու համը բան ձիւտ աս քաղաքին մէջն կ'անցնի , ուր որ աս մէջ տօնավաճառը բայցուած է . և ան' որ հոն երթալ կ'ուղէ ու աս քաղաքին չանցնիր , հարկաւ աշխարհէն դուրս ելիւլու է : այ Արձնե . ե . 10 : Խշմաններուն Խշմանը հոս եղած ատենն աս քաղաքին մէջն անցաւ գնաց իր երկիրը , ու ան ալ տօնավաճառի օր մը : Եշ ինչպէս որ կը կար-

* Պլնիան որ Անդղիացւոց համար գրեց իր գիրքը , միայն այսափ թաղեր կը թուե . բայց կարդացողը կրնայ ինքնիրմէն աւելլընել նաև Յունաց թաղը , Տաճկաց թաղը , Պարսկաց թաղը , Արաբացւոց թաղը , Հայոց թաղը , և Ուստաց թաղը :

† Կամկայ կը նշանակէ ։ ոռվմէական եկեղեցւոյն աւելլորդապատութիւնները , որոնցմավ մէկը իրեն թէ փոխանակութեամբ առուտուրի կը մտնէ ։ Աստուծոյ հետ , կարծելով թէ փրկութեան համար քանի մը ուխտ ու դաշնեներ ընելով երկինք մտնելու իրաւունքը ծախու կ'առնէ , իր բարեգործութիւններով երկինքը կը ստանայ , ու բուն իր հնազանդութիւնովն արդարութիւնը կը գնէ . բայց Նշմարտապէս ասիկայ միայն իր ամբարտաւանութիւնը կը բարձրացընէ , ու Յըրիստոսի կատարած գործն ու անոր փառքը կը նուաստացընէ : Ափսոս՝ որ աս ամբարտաւան՝ ու Սուրբ Պրքերէն դուրս եղած կարծիքները մեծապէս տիրապետած են մէջներին :

ծեմ՝ ԽԵՂՂԵՐԸՆՂ աս քաղաքին զլիսաւոր իշխանը զինքը հրաւիրեց իր ունայնութիւններէն ծախու առնելու, մասաւանդ թէ տօնավաճառին իշխանն ընկել ուզեց զանիկայ՝ թէ որ քաղաքին անցած ատենը զինքը պատռեր : Եւ մասաւանդ անիկայ այսպէս պատռաւոր մէկն ըլլալուն համար՝ ԽԵՂՂԵՐԸՆՂ փողոց փողոց պտըացուց զինքը, ու քիչ մը ատենին մէջ աշխարհի բոլոր թագաւորութիւնը ցոյց տուաւ անոր՝ որ եթէ հնար է հրապուրէ ան օրհնեալ անձը՝ որ իր ունայնութիւններէն քիչ մը բան ծախու առնէ : Խայց անիկայ ան ապրանքներուն վրայ միտք չունենալով՝ աս ունայնութիւններուն մինչև անգամ* տասկ մը չուուած՝ քաղաքը ձգեց զնայ : Արտի • դ • 8, 9 : 'Եռու • դ • 5-7 : Ուստի աս տօնավաճառը հին բան մըն էրկար ժամանակէ՛ 'ի մեր հաստատուած, և շատ մեծ :

Արդ աս ճամբորդները՝ ըսածիս պէս հարկաւ աս տօնավաճառին մէջն անցնելու էին : Ըստ աղէկ • այսպէս ըրբն անոնք + բայց ահա խելոյն տօնավաճառին մէջ մուածնուն պէս, տօնավաճառին բոլոր ժողովուրդն իրար անցան, և բուն քաղաքն ալ սեպէ թէ աղմուկի մէջ ինկաւ ասոնց վրայով : ու աս բանս քանի մը պատճառներու համար Եղաւ : Կանոնի,

*Եալս՝ Ճանապարհորդներն ան տեսակ հարուստով հազուեր էին՝ որ ան տօնավաճառին մէջ առուստուր ընողներուն բոլորին հազուստէն տարբեր էր : Ուստի բոլոր ժողովուրդը մեծապէս ապշած ասոնց վրայ կը նայէին • ոմանք կ'ըսէին թէ խեղկաստէ են անոնք, ոմանք թէ յիմար են, և ոմանք թէ օտարական մարդիկ են : Չոր • Ժի • 4 : ա՛ Արդին • դ • 9 :

Երկրորդ՝ Խաղպէս որ անոնց հազուստին պատճառաւուը զարմանքի մէջ ինկան, այնպէս ալ անոնց խօսակցութեան պատճառաւուը • քանզի քիչերը կը հասկընային անոնց ըսածը : Ասոնք 'ի բնէ Կանանու լեզուն կը խօ-

սէին * : Բայց տօնավաճառին ժողովուրդն աս աշխարհիս մարդիկներն են : Աւտի տօնավաճառին մէկ ծայրէն մինչ չեմ միւսը ասոնք անոնց և անոնք ասոնց հարթարոս կը թու են : այ Արքներ . բ . 7 , 8 :

Երրորդ՝ Բայց վաճառականները մեծասիս խայտառակ ընողն ան էր՝ որ աս համբորդները ամենենին բանի տեղ չենպեցին անոնց ապրանքները : Մինչեւ անգամ անոնց վրայ նայելու փափաք չունէին + ու թէ որ կանչուէին բան մը ծախու առնելու , ասոնք իրենց մատերն ականջներնուն զնելով կը կանչէին , Դարձներ իմ աչքերս , որ մսոտի բան չտեսնեն . Սառը . ՃՃՃ . 37 + ու դէպ՚ի վերնայելով կ'ըսէին թէ իրենց տուրեառն ու վաճառքը երկինքն է † : Փիֆու . դ . 20 , 21 :

Մէկն ալ աս մարդոցը ընթացքը ահմանելով՝ դէմեր նին ելաւ ու ծաղրաբանութեամի՞ իրենց կը զրուցէր . Կօնչ կ'ուղէք զնել : Բայց անոնք ծանրութեամբ անոր վրայ նայելով ըսին . Մէկը Ճշմարտութիւն կը զնենք ‡ . Ասամք .

* Դանան օրինակ էր երկնից + ու Դանանու լեզուն կը նշանակէ բարեպաշտական խօսակցութիւններ :

† Երեք բան կայ՝ որ աշխարհս չերնաք տանիկ՝ անոնք քրիստոնէի մը վրայ տեսնել : “Յախ՝ անոր հագուստը . այսինքն՝ Երիստոսի արդարութիւնովն արդարանալու իր դաւանութիւնը : Երկրորդ՝ իր լեզուն . այսինքն՝ ինչ որ կրթայ խօսիլ ան մեծամեծ բաներուն վրայ որ Եստուած իր հոգւցին համար ըրաւ : Երրորդ՝ իր խտրութիւնը՝ ինչ պէս որ անոնք կը կոչեն . այսինքն՝ անոնց մսոտի ու մեղան չական դործոցը չխառնուիլու : Աս պատճառաւս հաւատացնեալները՝ թէ որ իրենց դաւանութեանը մէջ հաստատ ու շխտակ կենան , զարմանքի ու ծիծաղի Ենթակայ կ'ըլլ լան . և մանաւանդ անողորմաբար քամահքուելու , ու երբեմն ծեծուելու՝ բանաբարկուելու՝ արտօրուելու՝ և մինչեւ սպաննուելու անդամ ակն ունենալու են :

‡ Կօնչ նորամշան պատասխան է աս . կօնչ կը նշանակէ աս խօսքը : Ասով ըսել կ'ուղին թէ իրենք ոչ կը

իէ + 23 : Ասիկայ պատճառ մը եղաւ ու սկսեցին ևս առաւել նախատել ան մարդիկը + ոմանք ծաղը կ'ընէին , ոմանք կը քամահրէին , ոմանք նախատանքով կը խօսէին , և ոմանք ուրիշներուն կը կանչէին որ ծեծ տան անոնց : Ա երջապէս տօնավաճառին մէջ բան աղմուկի և մեծ խոռովովթեան դարձաւ , մինչև որ բոլոր կարդը խանգարեցաւ :

* Ես միջոցին տօնավաճառին իշխանին խկոյն լուր եկաւ . ու ան շուտով իջաւ՝ և իր խխտ հաւատարիմ բարեկամ նկրէն քանի մը հոգի որոշեց որ աս մարդիկը բռնեն ու քննութիւն ընեն անոնց վայ , որոնց պատճառաւը տօնավաճառը գրեթէ տակնութայ եղած էր : Ուստի քննութեան ըերուեցան մարդիկը , ու դատաւորները հարցու-

վախնան ու ոչ կ'ամշնան խոստավանելու իրենց հոգիներուն վնատուած ան մի միայն առարկան , այսինքն Ճշմարտութիւնը : Ասով իմացիր թէ բոլոր աշխարհ որ չարութեան մէջ է , սուութիւնով կը խարուի , ու սուութուն հօրը խարեւութեանը ենթակայ եղած է : Ասոր հակառակ բոլոր Քրիստոսի հաւատացողները կ'ըսուին թէ Ճշմարտութենէն են : ան Յանձ . դ . 19 : “ Կիտեն ու կը հաւատան ան մեծ Ճշմարտութեանը ” որն որ Աստուած երկնքին խօսեցաւ , թէ “ Ասիկայ է իմ սիրելի Որդիս , որուն հաւներ եմ ” : Պատր . դ . 17 : Իրենց բոլոր յոյսերուն հիմը աս Ճշմարտութիւնն է , թէ Յիսուս Խատուծոյ Որդին է , ու մեր մի միայն Փրկիչն է . ու իրենց վնատուած մեծ առարկան առաւել քան զառաւել անոր ծանօթանալին է , որն որ կը ջանան ձեռք ձգել աշխատութեամբ՝ ջանքով ու ծախքով , բոլոր ուրիշ թերկրութիւններն ու հեշտութիւնները ուրանալով : Ասոր համար աշխարհ կ'ատէ զանոնիք , ու Աստամանն որ թշնամի է աս Ճշմարտութեանը , աշխարհ անոնց գէմը կը յարուցանէ , ինչու որ Քրիստոսի Տեառն մերոյ ըսածին պէս անոնք “ Աշխարհէ չէն , ինսոր որ ևս աշխարհէ չէմ ” : Յանձ . ժէ . 16 :

ցին թէ հւրկէ եկեր են , ուր կ'երթան , ու լ'նչ կ'ընեն
ան տեղ այսպիսի անսովոր հազուստով : Մարդիկն ալ
անոնց ըսին՝ թէ իրենք աշխարհի մէջ օտար և պանդուխա
են , ու կ'երթան իրենց բուն երկիրը՝ որ է երկնաւոր
Նրուսաղէմը : Եթէ 13-16 : Եթէ իրենք ոչ
քաղաքին մարդոցն ու ոչ վաճառականներուն պատճառ մը
տուած են զիրենք այսպիս բռնարարելու և իրենց ձամբայէն
արգիլելու , միայն թէ ան կրնայ ըլլալ պատճառը որ երբ
մէկը հարցուց իրենց թէ ինչ պիտի զնեն , իրենք պա-
տասխան տուին թէ ձշմարտութիւն պիտի զնեն : Բայց
անոնք որ զիրենք քննելու գրուած էին , չեին հաւատար
թէ ուրիշ բան ըլլան անոնք՝ այլ խենթ ու խելատ * , կամ
թէ տօնավաճառին մէջ ամէն բան տակնուվայ ընելու հա-
մար եկած մարդիկ : Ուստի բռնեցին ծնծեցին անոնք՝ ու
ցեխով շաղախեցին , ու յետոյ վանդակապատ բանտի մը
մէջ դրին , որպէս զի տօնավաճառին բռլոր մարդոցը խայ-
տառակ ըլլան :

Վրդ՝ ատեն մը հոն մնացին անոնք , ու ո և իցէ մնարդու
ծաղրաբանութեանը՝ չարութեանը և վրէժինդրութեանը
ենթակայ եղան . մինչեւ անդամ տօնավաճառին իշխանն
ալ բռլոր իրենց պատահածներուն վրայ կը խնդար : Բայց
մարդիկը համբերութիւն ընելու , ու բամբասանքի տեղ

* Յօհէ որ բան մը չունինք վրանիս որ որոշէ մեզ աշ-
խարհիս ուրիշ մարդոցմէն որ չարութեան մէջ են , ու ան
պատճառաւը կ'ատեն ու կ'անարզեն մեղ , հաստատելու
պատճառ չունինք թէ մենք Քրիստոս Հիսուսով նոր ա-
րարած եղած ենք : Յօհէ որ մենք Քրիստոսին ենք Քրիս-
տոսի համար յիմար ըլլալու ու խելացնոր համարուելու ենք
անոնցմէ որ չեն ճանշնար գըրիստոս . քանզի թէ որ կեն-
դանի ենք Քրիստոսի համար , պիտի խաչուինք աշխարհի
համար : “Ա այ ձեղի երբոր մարդիկ ձեր վրայով աղէկ
խօսին” ըստ Քրիստոս : “Ե՞ս ո դ 26 :

չըամբասելով՝ հապա անոր հակառակը օրհնելով, ու գէշ խօսքերուն գէմ բարի խօսելով, ու եղած վեստներուն տեղ մարդասիրութիւն ցուցընելով, տօնավաճառին մէջն քանի մը հողի որոնք մեացած ուրիշ մարդոցմէն աւելի խոհական և անոնցմէ պակաս նախապաշարեալ էն, սկսեցին սաստել և մեղադրել ան ցած մարդիկը իրենց ան մարդոցը բրած անբնդհատ բռնաբարութեանը համար * : Ուստի միւսները սրտմոտութեամբ անոնց վրայ յարձակեցան՝ բանտարկեալներուն նման գէշ մարդիկ սեպելով զանոնք, և ըսելով՝ թէ միւսներուն դաշնակիցները կ'երեան, և անոնց դժբաղգութեանը մամակից պիտի ըլլան :

Պատասխան տուին անոնք՝ թէ իրենց գիտցածին նայելով, անոնք հանդարտ և զգաստ մարդիկ են, ու մէկու մը վեստներու միտք չունին + և իրենց տօնավաճառին մէջ առուտուր ընտղներէն շատերը կան՝ որ առաւել ևս արժանաւոր են բանտարկուելու, քան թէ ան իրենց բռնաբարած մարդիկը : Ասանկով շատ կերպ խօսքեր անցնելին ետև իրենց մէջ (որ առեն բանտարկեալները շատ խմաստութեամբ և զգաստութեամբ կը վարուեին անոնց առջին), սկսեցին ծեծկուիլ իրաբու հետ, և մէկզմէկու վկասեցին :

* Իմա աս երկու խեղճ մարդիկը նորէն իրենց քննիչներուն առջև բերուեցան, ու հոն ամբաստանուեցան՝ թէ

* Ավագարհս սովորաբար տարբեր կարծիքներ տնի ձամուրորդ քրիստոնեաններուն վրայ : Կրիստոնէին վարքն ու կենցաղավարութիւնը քանի մը չարազործ մարդոց ծաղը բարանութիւնները կը պապանձեցընէ, ու երբեմն անոնցմէ մէկ քանիները կը շահի որ Կրիստոնի հետեին : Ով ձամբորդներ՝ զգուշցելք ձեր կեանքին՝ ձեր ընսառութեանն ու վարքին որ կը ցուցընեք աշխարհիս մարդոցը, որոնք բոլոր տարին Ունայնութեան Տօնավաճառը բաց կը պահէն :

առնալսաճառին մէջ եղած վերջին աղմուկն իրենքը յարուցած են : Այսպէս՝ չարաշար ծեծ քաշեցին անոնց , ու շղթաներով կազեցին և առնալսաճառին մէջ վեր վար պտըրտցոցին ուրիշներուն օրինակ և վախ ըրբալու համար , որ ըրլաց թէ ունակը անոնց կողմանէ խօսին՝ կամ անոնց յարին : Ասկայն և այնպէս՝ Քրիստիանուն ու Հաւատարինը աւելի իմաստութեամբ վարուեցան , ու իրենց վրաց ձգուած նախատինքն ու խայտառակութիւնը այնպէս հեղութեամբ ու համրերութեամբ ընդունեցին , որ տօնավաճառին մէջի մարդոցմէն խել մը հոգի իրենց կողմը շահեցան , (թէպէտ և մնացած ուրիշ մարդոցը հետ բաղդատելով քիչ եին անոնք) : Առ բանը միւս կողմն առաւել ևս բարկութեան մէջ ձգեց + մինչեւ որ աս երկու մարդիկն ապանել վճռեցին անոնք : Ուստի սպառնալիք մը հանեցին՝ թէ ոչ բանան ու ոչ շղթաները հերիք են անոնց . հաւաք իրենց ըրած զրկանքին համար ու տօնավաճառին մարդիկը խարենուն համար պէտք է որ մեռնին :

Մն ատենը նորէն բանառ իրկուեցան մինչեւ որ բանն աղէկ մը որոշուի : Ուստի ներս դրին զանոնք՝ և կոճղերու մէջ ամուռ մը պինդեցին :

Արդ՝ անոնք աս տեղը իրենց հաւատարիմ՝ բարեկամն Վւետարանիէն լսածնին նորէն միտքերնին բերին , ու իրենց պատահելու բաներուն վրայով անոր յառաջմանէ զրուցածներով աւելօք հաստատուեցան իրենց բռնած համը բուն ու բաշած նեղութիւններուն մէջ : Հիմն սկսեցին իրար միսիթարել և՛ թէ որուն վիճակին որ իրաց մեռնիլ , ան պիտի ունենայ լաւագոյն մասը : Խւրաքանչիւրը գաղտուեկ կը բաղձար՝ թէ ինք ան պատիւն ունենայ : Բայց սակայն իրենք դիրենք ամէն բաները կարգադրողին ամէնի մաստ անօրէնութեանը յանձնելով , մեծապէս դոհութեամբ մնացին իրենց եղած վիճակին մէջ , մինչեւ որ ուրիշ կերպով բանը որոշուի :

Գանք որ յարմար ատեն մը որոշուած ըլլալով՝ դուրս հակեցին զանոնք իրենց դատը տեսնելու, ու անոնք դատապարտելու։ Երբոր ժամանակը հասաւ թշնամիներուն առջև բերուեցան և ամբաստանուեցան։ Դատաւորին անունն էր Խշան Խարխատեաց։ Իրենց վրայ եղած ամբաստանութեան զբերն իրօք մի և նոյն էին, թէպէտ և քիչ մը տարբեր էին ձեռվլ։ Վսիկայ էր ան զբերուն մէջ պարունակուածը։ “Աս մարդիկը առուտուրին թշնամի ու խանդարիչ են + քաղաքին մէջ աղմուկ ու երկպառակութիւն ձեցին, ու իրենց ամենավենասակար կարծիքներուն դարձուցին ժողովուրդին մէկ մասը՝ մեր թագաւորին օրինացը անարդութիւն ընելու համար” * :

Վետենը Հաւատարին սկսեց պատասխան տալ, թէ ինք միայն ան բանին դէմ հակառակ կեցաւ որ ինքզինքը խիստ բարձրերէն բարձրագոյն եղողին դէմ հակառակ դրեր էր։ Ու ան որ աղմուկ յարուցանելու վրայ կը խօսիք, ևս այդպէս բան չեմ ըներ՝ ըստ, բուն ինքս խաղաղասէր մարդ ըլլալով։ Ու անոնք որ մեր կողմը դարձան, մեր համարտութիւնն ու անմեղութիւնը տեսնելով դարձան։ որոնք միայն չարագոյնէն լաւաղոյնի դարձած են։ Ու ան որ թագաւորին վրայ կը խօսիք, որովհետեւ ինք Տէնդըն բուզն է մեր Տէրոջը թշնամին, ևս բանի տեղ չեմ համարիր ու զինքը և ու բոլոր իր հրեշտակները։

* Եկեղեցւոյ հաստատութենէն ’ի վեր ամեն դարերու մէջ հալածանք որ ըլլայ, ամ պատճառառանքը կը զործածուի, Վրիստոնէութեան առաջին քարոզիչներուն վրայ զբուած ամբաստանութիւնն էր։ Վսոնք ան մարդիկն են որ աշխարհս տակնուվրայ ըրին։ Վամեն դարս մէջ բարի մարդիկ չարխօսութիւն կրելով՝ խոռվարար, ապատամբ, ընկերութեան խանդարիչ, ու Այսեր թշնամի կը չուեցան։ Եկեղեցական պատճութեան մէջ չառ այսպիսի օրինակներ կը դանենք։

Ե՞ն ատենը մունետիկ մը Ելաւ թէ անոնք որ ատեանը կայնող բանտարկեալին դէմ իրենց տէրոջը թագաւորին կողմանէ բան մը ըսելիք ունին՝ խորոյն Երեան ելլեն, ու իրենց վկայութիւնը տան : Ուստի Երեք հատ վկաներ ներս մոտան, այսինքն՝ “Ա,ախանձուը, Անապաշնն ու Մարդահանոյն : Հիմա հարցուեցաւ ասոնց՝ թէ արդեօք ատեանը կայնող բանտարկեալը կը ճանչնամն, ու անոր դէմ ի՞նչ ըսելիք ունին իրենց տէրոջը թագաւորին կողմանէ :


Ե՞ն ժամանակը “Ա,ախանձուը յառաջ եկաւ ու այսպէս սկսեց խօսիլ . Տէր իմ, ևս ան մարդը շատ ատենէ ’ի վեր կը ճանչնամ, ու աս արդարակորով ատեանին առջնը երդումով կը վկայեմ, թէ ան

Դաստիարակութիւնը — Երդում ընել տուեք իրեն :

Ուստի Երդում ընել տուին, և յետոյ ըստա . Տէր իմ, աս մարդը՝ թէ և ըստ Երեութին գովելի անուն մը ունի, բայց մեր Երկրին մէջ ամենէն անարդ մէկն է . ինք ոչ թագաւորն ու ոչ ժողովուրդը՝ ոչ օրէնքն ու ոչ սովորութիւնը կը սեպէ, հազար բոլոր կըցածը կ'ընէ որ ամէն մարդիկ իր մէկ քանի ապատամիւական գաղափարներուն դարձընէ, որոնք ինք ընդհանրապէս հաւատոյ և սրբութեան սկզբունքներ կը կոչէ : Եւ յատկապէս ևս ինքնս անդամ մը իրմէն ըսեցի որ կը հաստատէր՝ թէ Կրիստոնէութիւնն ու մեր Աւայնութեան քաղաքին սովորութիւններն ամեննեին հակառակ են իրարու, ու չեն կընար միարանիլ : Աս ըսելով՝ տէր իմ, ինք ոչ միայն մեր զովելի զործքերը մէկն կը դատապարտէ, հազար մեռ ալ որ անոնք կը գործենք :

Հիմա Դատաւորն ըստա անոր . Ուրիշ բան ալ ունի՞ս ըսելու :

“Ա,ախանձուք . Տէր իմ, շատ բաներ ալ կընայի ըսել, միայն թէ ատեանին ճանձրութիւն տալ չեմ ուզեր : Բայց



թէ որ հարկաւորի՛ միւս պարոններն իրենց վեցութիւնը տալէն ետև առոր կեանքը վերցընելու համար բան մը պահած չմնալու համար ես իրեն հակառակի իմ ունեցած վեայութիւնս կը շարունակեմ : Այսպէս հրաման եղաւ իրեն որ մէկդի կանգնի * :

Են ատենը Անապաշոր կանչեցին , ու ըսին իրեն որ ատեանը կայնող բանտարկեալին նայի : Հարցուցին ևս թէ ի՞նչ կրնայ զրուցել անոր դէմ՝ իրենց տէրոջ՝ թագաւորին կողմանէ : Յետոյ երդում ընել տուին իրեն . ու այսպէս ան սկսեց :

Անապաշոր . Տէր իմ , ես աղէկ մը ծանօթութիւն չունիմ աս մարդուն հետ , ոչ ալ կը փափաքիմ ասկէ աւելի ճանչնալ զինքը . սակայն անցեալ օր իր հետը քանի մը բան խօսելս աս զիտեմ՝ որ ինք շատ անօրէն մէկն է . քանզի ան օրը իր հետը խօսելով լսեցի իրմէն որ կ'ըսէր՝ թէ մեր կրօնքը ոչ լինէ է , ու այնպիսի կրօնք մըն է որով մէկ մարդ մը ամեննեին չերնար հաճոյանալ Աստուծոյ : Չեր տէրութիւնն աղէկ զիտէ՞ տէ՞ ր իմ , թէ աս իր զրուցածէն հարկաւ ի՞նչ կը հետեւի . այսինքն թէ մենք տակաւին պարապ տեղ պաշտօն կը մատուցանենք , ու տա-

* Եախանձութիւնը Աստանային յատուկ բնաւորութիւնն է : Բնական է ան մեղի ամեննուս ալ : Խայց աս աշխարհիս որդիքը Աստուծոյ որդւոցը վայելած հոգեւոր բարիքներուն օտար բլալով՝ ինչո՞ւ համար պիտի նախանձին անոնց վրայ : Իրենք ոչ կ'ուզեն ան բաները ոչ ալ փափաք մը ունին անոնց համար , հազար ծազը կ'ընեն ու կ'արհամարհէն զանոնք : Ասով յայտնի է Աստանային բուն իսկ ողին ու բնաւորութիւնը : Են նախանձեցաւ Քրիստոսի վրայ՝ անոր Աստուծոյ Որդին ըլլալուն համար . ու զրգուց Յուղան մասնել զանիկայ . Արեաները նախանձի համար մասնեցին զանիկայ . Այսպէ . իէ . 18 . ու նոյն իսկ ողին է որ Աստանային բոլոր որդիքը Աստուծոյ որդւոցը զէմ՝ կը զրգուէ :

կաւին մեր մեղքերուն մէջն ենք , և վերջապէս պիտի դաշտապատռինք : Եւ ահա ասիկայ է իմ ըսելիքս * :

Սոկէ ետե Վարդահաճոյին երդում ընել տուին , ու հրամայեցին որ ատեանը կայնող բանտարկեալին դէմ իրենց տէրոջը թաղաւորին կողմանէ ինչ որ զիտէ խօսի :

Վարդահաճոյ . Տէր իմ , և դուք ով պարոնայք , ես շատ ատենէ 'ի վեր աս թշուառականը դիտեմ . ու այն պիտի բաներ խօսիլը լեցի իրեն , որ արժան չէ խօսուելու : Դանոցի ինք մեր վեհափառ թաղաւորը Աէեղղերուղը ծաղը կ'ընէր , և նախատանօք կը խօսէր անոր արժանապատիւրարեկամերուն վրայ , որոնց անուններն են՝ Խշան Հին Վարդ , Խշան Վարձնաւոր Հաճութիւն , Խշան Հեշտասէր , Խշան Վնափառութիւն , Խշան Հպնեկասէր , Խշան Աղահութիւն , բոլոր մեր մնացած ազնուականներովը . ու ըստ ևս՝ որ Կթէ կարելի բլար որ ամեն մարդիկ իր միաբն ունենային , աս ազնուականներուն մէկը պիտի չմնար քաղաքին մէջ : Սոկէ 'ի զատ չվախցաձեզ ալ կշտամբէլ տէր իմ , որ հիմա իրեն դատաւոր

* Վնապաշտութիւնը կամ՝ սուտ բարեպաշտութիւնը դառնագոյն թշնամի է Վրիստոսի ճշմարտութիւններուն ու անոր աշակերտներուն : Վնապաշտին վրայութիւնը մէկ կողմանէ խօսու ճշմարիս է . քանոցի բնչպէս որ օրինականները Վրիստոսի վարդապետութեանը վրայ ըսին "Ա մարդապետ՝ աս խօսքերը զրուցելով՝ մեզ ալ վար կը զարինս" , "Եռաւ . ժամ . 45 , այսպէս ալ սուտ բարեպաշտները որոնք ծէսերու՝ արարողութիւններու ու ստուերական բաներու վրայ հաստատուած են , ոգւով չափ կը վիրաւորին անոնց վրայ որոնք հոգիով Աստուած կը պաշտենէ , Վրիստոս Յիսուսով կը պարծենան , ու մարմինի վրայ չէ պարծանքնին : Փէփու . դ . 3 : Այսպիսի վարքը անհնարին նախատինք կը թափէ մարմինաւոր մարդոց բոլոր պաշտամնէրներուն՝ վարդապետութիւններուն ու մնապաշտութիւններուն վրայ :

կարգուած էք, ամբարիշտ սրիկայ մը կոչելով ձեզ հանդերձ ուրիշ մաւրեր քակլով վրանիդ՝ որով կը շաղախեց նաև քաղաքին ազնուականներէն շատերը *

Խրբոր աս Վարդահանջն իր պատմութիւնը լինցուց՝ Դաստաւորն իր խօսքը ատեանը կայնող բանտարկեալին գարձուց՝ ըսելով • Ով ուրացող՝ հերետիկոս ու քուտէրովդ դէմ մասնութիւն ընող, լսեցի՞ր թէ աս արժանահաւատ պարոններն ինչ կը վկայեն քու վրայովք :

* Համանա ունի՞ք որ ես աւ քանի մը բան խօսիմ ինքզինքս պաշտպանելու :

Դաստաւոր • Անզգամ, դուն անզգամ, արժանի չեա աւ ապրելու, հապա խկոյն եղած տեղդ սպաննուելու : Բայց ամէն մարդ՝ քու վկայովդ ցուցուցած մեր ազնուարաբութիւնը տեսնելու համար, լսենք նայինք՝ ով անսպիսան ուրացող՝ ինչ ունի ըսելու :

* Ա,ախ՝ պարոն Ա,ախանձութին խօսածին պատախան աս կ'ըսեմ՝ թէ ես ուրիշ բան չխօսեցայ, հապա աս՝ թէ ինչ կանոն, կամ օրէնք, կամ սովորութիւն, կամ ժողովուրդ՝ որ բոլորովին հակառակ է Առառուծոյ խօսքին, նոյնը քրիստոնէութեան աւ բոլորովին հակառակ է : Յօնէ որ ծուռ բան մը խօսեցայ ասով՝ ցու-

* Ուղրմելի մեղաւորը խկոյն որ կ'ըսէ, թէ Տէք քենէ զատ ուրիշ մէկը չեմ դիմեր, ու քու անունող կը դաւանիմ, Եւսայ. իշ. 13, աշխարհիս կամակատար Վարդահանջները միշտ պատրաստ են անոր դէմը վկայելու թէ աշխարհիս իշխանին դէմ կը խօսի աս մարդը : Եւ ասիկայ բարի վկայութիւն մըն է . անիկայ ստանալու համար ապրելու՝ ու անոր պատճառաւը մեռնելու արժանաւոր բան մըն է : Յօնէ որ մնիք Քրիստոսի հշմարիստ աշակերաններն ենք, պարտաւոր Ենք իրեն ալէս վկայութիւն տալ աշխարհիս համար՝ թէ անոր գործքերը չար են, ու աշխարհը անոր պատճառաւը պիտի ատէ մեզ : Յուն. է. 7 :

ցուցե՞ք ինձի իմ սխալմունքս , ու ևս պատրաստ եմ հռա ձեր առջելը իմ խօսքս ետ առնել :

Երկրորդ՝ պարոն Անապաշտին խօսածին ու իր ինձի դէմ ըրած ամրատամութեանը վրայով կ'ըսեմ թէ ևս միայն աս ըսի , թէ Վատուած պաշտելու համար Վատուածմէ արտւած հաւատք մը պէտք է . բայց սակայն առանց Վատուածոյ կամացը աստուածային յայտնութեանը , աստուածային հաւատք չկրնար ըլլալ : Ուստի աստուածային պաշտամունքին մէջ ի՞նչ որ կը խօժուի՛ որ համաձայն չէ աստուածային յայտնութեանը , ուրիշ կերպով չկրնար ըլլալ բայց եթէ մարդկային հաւատքով , որն որ չկրնար օդտակար ըլլալ յաւիտենական կենաց :

Երրորդ՝ պարոն Արդգահանցին ըսածին վրայով՝ կ'ըսեմ թէ , (ձգելով ան խօփերը որ ըսուեցաւ թէ ծաղը ըսեր եմ և ուրիշ անոր նմանն բաներ ,) աս քաղաքին թագաւորը բոլոր իր խառնիճաղանձ ամրոխով՝ իր պաշտօնեաներով՝ որոնց անունը տուաւ աս պարոնը , աւելօք կը յարմարին դժոխքը բնակելու քան թէ աս քաղաքին ու երկրին մէջ : Եւ արդ՝ Տէրը ողորմութիւն ընէ իմ վրաս * :

Ես ատենը Դատաւորը Ճ՛ուրիին † դարձուց խօսքը

* Ասիկայ է քրիստոնեին տուած պատասխանն ու առ Վատուած ապաւինութիւնը : Երրոր նոր գիտէ թէ ամը բարիշաներուն աղիքը անողորմ են , Վատուած . ժը . 10 , զիտէ ևս թէ Վատուածոյ ողորմութիւնը մէծ է , ու Տէրոջը ճշմարտութիւնը յաւիտեան կը մնայ : Ատով . ճէ . 2 :

† Ճ՛ուրի յայ կը նշանակէ տասներկու երդուեալ դատաւորներ՝ որոնք ատենանը կայնած մոտիկ կ'ընեն յանցաւուրին դատաստամնը , ու վերջը իրենք առանձին իրենց մէջ կը սկսին քննել դատը . և մինչև աս տասներկուքը իրենց մէջ չմիաբանին բանտարկեալին յանցաւոր ըլլալուն վրայ , դատաւորը ինքնիրմէն չկրնար դատապարտել ամրատանեալը :

(որոնք բոլոր ժամանակը հոն կայսեր էին լսելու և քըն-
նելու,) ու բառ։ Ով պարոններ, կը տեսնէք աս մար-
դը՝ որուն վրայով այսափ մեծ աղմաւէ եղաւ քաղաքիս
մէջ։ Լսեցիք նաև ի՞նչ որ աս արժանահաւատ պարոն-
ներն իրեն դէմ վիսյեցին։ Լսեցիք ևս իրեն պատասխանն
ու խոստովանութիւնը։ Ուստի հիմա ձեր քաջութեանը
կ'իյնայ անիկայ կախելը կամ անոր կեանքն ազատելը։
Բայց ևս տակաւեն արժան կը սեպեմ մեր օրէնքին վրայով
ձեզի տեղեկութիւն մը տալ։

Ուծն Փարաւոնին՝ մեր թագաւորին ծառային օրովը
կանոն մը եղաւ՝ որ օտար հաւատը ունեցողները չբաղմա-
նալու ու իրմէն զօրաւոր ըրլալու համար անոնց արու դա-
ւակները դետը նետուին։ Եթից առ 22։ Կանոն մըն
ալ մէծն Արքուղողոնոսորի օրովն եղաւ՝ որ ան ալ անոր
ծառաներէն էր, թէ ով որ չիյնայ ու երկրպագութիւն
չնետէ իր ոսկի պատկերին, վառած հնոցին մէջ նետուի։
Դան։ դ. 6։ Աւրիշ կանոն մըն ալ Դարեհի օրովն
եղաւ որ, ով ատեն մը իրմէն զատ ուրիշ Աստուծոյ
մը պաշտօն մասուցանէ, առիւծներուն դուրը նետուի։
Դան։ դ. 7։ Հիմա աս ապատամը աս օրէնքներուն
սկզբունքները կոտրեց՝ ոչ թէ խորհրդով միայն որ ան ալ
անտանելի բան է, հազար նաև խօսքով ու գործով ալ
որ հարիւաւ անտանելի բան պիտի ըլլայ։ Փարաւոնին
օրէնքը չարիքն արգիլելու մոօք եղած էր՝ որ ատեն տա-
կաւին չարիք մը երեան չէր ելած, բայց հոս չարիքն
երեան ելած է։ Երկրորդին ու երրորդին նկատմամբ կը
տեսնէք որ ինք մեր կրօնքին դէմ կը հակառակի։ ու թա-
գաւորին դէմ գործած իր յանցանքին համար՝ որն որ ինք
խոստովանեցաւ, մահով մեռնելու արժանաւոր է։

Են ատենը տասներկուքները դուրս ելան, որոնց անուն-
ներն էին՝ Պարոն Ազը, Պատասխան, Պատասխան, Պարա-
սկը, Պատասխան, Պատասխան, Պատասխան, Պատասխան,

Պլ . Բարձրամիտ , Պլ . Յաշնամիտ , Պլ . Աստախոս , Պլ . Վեղթութիւն , Պլ . Լուսատեաց , և Պլ . Վնչաշտելի .
որոնց ամէն մէկը իրենց մէջ իր առանձին վճիռը զբուցեց ,
ու յետոյ բոլորը մէկէն վճռեցին որ մահապարտ հանեն
անիկայ Դատաւորին առջեր : Ու նախ և առաջ իրենց
մէջ Պլարոն Ացրը՝ որ առաջնորդնեն էր , ըստ . Ես
յայտնի կը տեսնեմ՝ որ աս մարդը հերետիկոս է : Հետ
տոյ Պլ . Վնպիտանն ըստ . Յառդ կորսուի այսպէս թշուա
ռականը երկրիս վրային : Այս , ըստ Պլ . Չարատէրը .
քանզի երեսն անդամ տեսնել չեմ ուզեր : Վսկէ ետե
Պլ . Յանկասէրն ըստ . Աիրոտ բնաւ չկրնար քաշել զին-
քը : Ու ալ ես , ըստ Պլ . Յափիկեացը . քանզի ինք
միշտ իմ բոնած ճամբաներս կը պախարակէր : Եկէք
կախել տանք , եկէք կախել տանք ատիկոյ , ըստ Պլ .
Ասմակորը : Յառտառական գծուծ մըն է , ըստ Պլ .
Բարձրամիտը : Իմ սիրտս ասոր վրայ կ'ուռի , ըստ
Պլ . Չարութիւնը : Չարազործ մէկն է , ըստ Պլ .
Աստախոսը . Կախելը պզտիկ պատիժ է իրեն , ըստ Պլ .
Վեղթութիւնը : Եկէք անոր կեանքը վերցընենք մէջտե-
զէն , ըստ Պլ . Լուսատեացը : Աւրծը Պլ . Վնչաշտե-
լին ըստ . Յնչ որ բոլոր աշխարհ ինծի տրուելու ըլլար ,
չեր կրնար իր հետը միարանիւ . ուստի Եկէք չուտով մահ
հապարտ հանենկը զանիկայ :

Ըստածնուն որէս ըրին . ու հետեւապէս իր դատապար-
տութեան վճիռն իսկոյն ելաւ՝ թէ իր կեցած տեղէն իր
եկած տեղը տարուի , ու հոն ինչպէս խիստ անողորմ մահ
մը որ կրնայ հետարուիւ , անով մեռյուի :

Ուստի դուրս հանեցին զինքը որ իրենց օրէնքին հրա-
մայածին պէս լընեն իրեն . և առաջ ծեծեցին զինքը , յե-
տոյ ասպակեցին , անկէ ետե դանակներով իր միոր խո-
ցուեցին , յետոյ քարերով քարերոծեցին + վերծը իրենց
սուրերով ծակնըկեցին , ու ամենէն ետե ցիցին կապած

սյրեցին մօխիր ըրին զինքը : Եհա սյսպէս հասաւ Հաւատարիմը իր վախճանին * :

Հիմա տեսայ՝ որ ժողովողոց բազմութեանը ևտել մէկ կառը մը և զոյդ մը ձի կայնած Հաւատարիմըն կը սպասէին , որ (իր թշնամիները զինքը սպանածին պէս) աշնոր մէջ յափշտակուեցաւ , ու փողերու ձայներով ամզերուն մէջն խելոյն վեր տարուեցաւ երկինքին դրանը խիստ մօտ համըռվը : Բայց Կրիստիանոսին քիչ մը թոյլտութիւն ըլլալով նորէն բանտը դրուեցաւ , ու ատեն մը հոն մնաց : Բայց ան որ ամեն բանները կը կառավարէ , անոնց բարկութեան զօրութիւնը իր ձեռքն ըլլալով սյնպէս կարդի դրաւ , որ Կրիստիանոս ան անգամին աշնոնց ձեռքէն փախաւ , ու իր ձամբան գնաց † : Ու երբոր կ'երթար՝ կ'երդէր ըսելով .

Ո՞վ Հաւատարիմ՝ նահատակ ընտիր ,
Որ հաւատարիմ Տեանըդդ մնացիր .
Իր սուրբ անունը խոստովաննելով ,
Իր օրհնութիւնը պիտ' առնես՝ դիացիր :

* Յնէ որ մէկը Կրիստոս Յիսուսով աստուածապաշտ կեանք մը վարէ , պէտք է հալածանք կրել , ու թշնամոյն չարութեանը մեր վրայ ըրածին համբերութեամբ տանիլ : * Եւղութիւնը փառքին ձամբան է : Յնէ որ Կրիստոսի հետ թագաւորել կ'ուղենք , իր հետը խայտառակութիւն ու նախատինը քաշելու ենք , և մինչեւ անդամ՝ թէ որ վիճակնուս իյնայ՝ մահ ալ ձաշակելու ենք :

† Ո՞սիթարական խորհրդածութիւն մըն է աս : Գործը Տերոջն է , ու ինք կարող է իր ծառաները պահպանել , ու անոնց ազատութեանը ձամբայ մը հնարել : Ո՞կ քանիները կը կանչե նեղութիւն կրելու պատիւն ունենալ , ուրիշները նոյն նեղութիւններէն կ'ազատէ : և թէպէտ անոնց թշնամիները կը կռաքին ու կը կատղին , բայց չն կրնար յաղթել անոնց :

Նըրբոր բովանդակ անհաւատները
Խրենց մնուի փափաքներովը
Պիտի լան՝ հեծեն՝ գոռան ու դոչեն՝,
Տարտարոսական վիճակին մէջը :

Ո՞վ և աւատարիմ՝ ծափաձպյն ցնեա,
Ու քու անունըդ թող անմահանց .
Զի թէպէտ անոնք քեզ սպանեցին,
Եւլ դուն տակաւին ողջ ես աներկբայ :

Գրանք որ երազիս մէջ տեսայ՝ որ Վրիստիանոս մինակ
չէր երթար իր ճամբան . քանզի մէկը կար չըռւսալլոց աւ-
նունով՝ որ (տօնավաճառին մէջ Վրիստիանոսին ու և աւ-
տատարիմին քաշան նեղութիւններուն ատենը անոնց խօս-
քերն ու կենցաղավարութիւնը տեսնելով՝ քաջալերութիւն
առած) անոր յարեցաւ, ու եղայրական ուխտի մը մննե-
լով անոր հետ, ըստ անոր թէ իրեն ընկերանաւ կ'ուզէ * :
Եյսպէս՝ մէկը մեռաւ ճշմարտութեան համար վլայցութիւն
ընելու, ու անոր մոխիրէն մէկ ուրիշն ելաւ Վրիստիանո-
սին ընկեր ըլլալու իր ճամբորդութեանը մէջ : Աս Յու-
սալլոյը ըստ նաևս Վրիստիանոսին՝ թէ տօնավաճառին
մարդիկներէն շատ ուրիշներն աւ կան որ ատենին անոնք
աւ իրենց ետեւէն պիտի դան :

Եյսպէս՝ տեսայ որ առնեք տօնավաճառէն դուրս ելլելուն
պէս խկոյն մէկու մը հասան՝ որ իրենց առջևէն կ'երթար,
ու կը կոչուէր ՞Օտոռսիրտ † : Ուստի ըսին իրեն՝ Ո՞ր

* Վարտիրոսներուն արիւնը Խկեղեցւոյ սերմն է :

† ՞Օտոռսիրտը ժամանակի ծառսցող մէկն էր, աշխար-
հային մարդ մըն էր . որ իր սիրան ամեննեին Վատուծոյ
վրայ հաստատած չէր . հապա իր խղճնուանքն իր անձին
դիւրութեանը կը յարմարցընէր : Ո՞րչափ շատերը կարե-
լի է գտնել ամէն տեղ՝ աս նոյն նմանութիւնով, որոնք
իրենց աշխարհային պատիւէն՝ շահէն ու հանգատութենէն

տեղայի եւ՝ պարոն, ու մինչև ո՞ւր պիտի երթաս առ ձամշայէն : Պատասխան տուաւ մարդը՝ թէ ինք Գեղեցկաս խօսութեան քաղաքէն ելաւ՝ ու Երկնային քաղաքը կ'երթայ, բայց իր անունը ըստ անոնց :

Գեղեցկախօսութեան քաղաքէն համ, ըստ Կրիստիանոս + հոն բարի մէկը կը բնակի՞ :

«Օստանիքոր. Այս, կը յուսամ թէ, ըստ «Օստանսիրու» :

«Քրիստոնու» + Ա'աղաւշեմ, պարոն, անունդ լ՛ուշ է :

«Օստանիքոր. Ես անծանօթ մէկն եմ քեզի, և դուն աւ ինձի : Ձեւ որ աս ճամբէն երթալու էք՝ ուրախ պիտի ըլլամ ձեզ ինձի ընկեր ունենալուս, հազար թէ չէ գոհ ըլլալու եմ :

«Քրիստոնու» + Աս Գեղեցկախօսութեան քաղաքին վրայ յով լսած եմ ես + ու ինչպէս կը յիշեմ, կ'ըսեն թէ հաւրուստ տեղ մըն է :

«Օստանիքոր. Այս, Հշմարիս կ'ըսեմ քեզի՝ թէ այն պէս է + ու ես շատ հարուստ ազգականներ ունիմ հոն :

«Քրիստոնու» + «Երբում կը չնորհէք համարձակութեանս, մի՛ են քու ազգականներդ հոն :

«Օստանիքոր. Աեղէ թէ ըոլոր քաղաքը + բայց յատկապէս Խշնան Փոփոխականը, Խշնան Պատառարոյթը, Խշնան Գեղեցկախօսը, որուն նախնիքներէն ամենէն առաջ ատ քաղաքը իր անունն ընդունած է : «Եաւ Պարոն Փաղաքը ողը, պլ + Երկուերեսէնը, պլ + Ամենքանը, ու մէր թաղին ժողովրդապէտ պլ + Երկուեղուէնը իմ մօրս

չեն ուզեր ու չեն կընար զատուիլ «Քրիստոսի սիրոյն համար : Այսպիսիները կ'ուզեն փրկուիլ բայց կ'ուզեն որ բուն իրենց ընտրած ճամբովը փրկուին, չձգելով անձնութացութեան դէմ եղած մէկ քանի գործքերն ու պարտաւորութիւնները :

խորթ եղբայրն է * . և շիտակն ըսեմ քեզի , ևս մէկ աղ ~ նուական մըն եմ . սակայն իմ պապուս հայրը միայն նու ~ ւալար էր՝ որ դէպ 'ի առաջ կը նայէր ու դէպ 'ի ետե կը բաւէր † , ու ևս ալ իմ կալուածքներուս շատերը ան նոյն կերպով ստացած եմ :

ՎՐԻՄԱՆԱԱՍՏՐ • Ապրգուած ևս դուն :

Կառասիքը . Այսին , ու իմ կինս շատ համեստ խա ~ ժժուն մըն է , համեստ կնուլ մը աղջիկ . որ ան ալ Աեղ ~ ծուալատիր տիկինն աղջիկն էր : Ուստի իմ կինս շատ Պատուաւոր ցեղէ մը եկած է . և ան աստիճանն կը թու ~ թեան հասած է , որ թագաւորին ու արքատին հետ կինս ~ ցաղավարելու կերպը զիտէ : Ճշմարիտ է որ մենք երբեմն կրօնքով կը տարբերինք խղճահար մարդիկներէն , բաց միայն երկու պղտիկ մասերու մէջ : Անչմը որ բնաւ հովին ու ջուրին հոսանքին հակառակ չենք աշխատիր : Եցի ~ բորդ՝ որ միշտ սասարիկ նախանձաւոր ենք երբոր կրօնքը իր արծաթ մուճակներովք ժուռ գայ . շատ հաճելի է մեզի փողցներուն մէջ անոր հետ քալել , թէ որ արեղակը կը ճառագայթէ ու ժողովուրդը կը զովաբանէ զանիկայ :

* Անը հեղինակը շատ յարմար պայմանական անուններ կը հասրէ : Ասանկով շատ անզամ քիչ խօսքերով շատ տեղեկութիւն կու տայ ընթերցողին :

† Անգիսացոց մէջ առակ մը կայ՝ որ կ'ըսեն . և Աեղ ~ ծաւորը կը նմանի նաւայիարի՝ որ առջին կը նայի ու դէպ 'ի ետեի կողմը թէ կը բաւէ՛ :

‡ Ճշմարիտ հաւասարցեալը աս կեղծաւորութիւնը չը ~ ներ . ճշմարտութեան չողին կ'ըսէ , “Ամէն անոնք՝ որ կ'ուղեն աստուածպաշտութեամբ առըիլ Քրիստոս Յի ~ սուսով , հալսծանք պիտի կրեն” : Ի Տիւ . կ . 12 : Ճշմարտութեան չողին սոսախօս կ'ըսենք , երբոր մեր վարքը մեխ մը ճամբու մը խօժմելով ունայնութեամբ մաս ~ ծենք թէ Քրիստոսի կը հետեխնք , և սակայն աշխարհիս

Ան ատենը՝ Վրիստիանոս քիչ մը զատուեցաւ դէպ ՚ի իր ընկերին՝ Յուսալիցին կողմը, ըսելով։ Խամ մրաքս կու գայ որ ասիկայ Գևդեցկախօսութեան քաղաքին՝ Օռուռսիրտ կոչուող մարդը պիտի ըլլայ + ու թէ որ ան է մը ընկերութեան մէջ մէկն ունինք որ բոլոր աս կողմերը բնաւ կողներուն ամենէն խորամանին է։ Ան ատենը Յուսալիցն ըստ։ Խրե՛ն հարցուք + Բնծի կը թուի որ ինք իր անունէն պէտք չէ որ ամշնայ + Ուստի Վրիստիանոս նոռըէն անոր քոյլ զնաց՝ ու ըստ։ Պարսն, հրամանքդ այն պէս կը խօսի՝ որ կ'իմացուի թէ բոլոր աշխարհի դիտցածէն աւելի բան զիտես + և թէ որ չեմ սխալիք, կարծեմ թէ քու ովլ բարձր պիտի զիտնամ + քու անունդ Գևդեցկախօսցի Պարսն + :

՝ Օռուռսիրտ + Ասիկայ իմ անունն չէ + բայց շտակը նախատական անուն մըն է որ զիս չքաշող քանի մը անձինք ինծի տուեր են + ու պէտք է որ գոհութեամբ իրքն նաւ խատինք կրեմ անիկայ, ինչպէս որ ուրիշ աղեկ մարդիկ ինէ առաջ իրենցը կրեր են +

՝ Վրիստիանոս + Բայց դուն բնաւ պատճառ չտուի՞ր մարդոց աս անունը քու վրադ դնելու +

՝ Օռուռսիրտ + Բնաւ, բնաւ + Ոխայն իմ ըրածու որով անոնց պատճառ տուի աս անունն ինծի տալու, աս էր՝ որ բաղըէս միշտ իմ դատողութիւնս ան ժամանակին ներկայ ճամբան ինչ որ էր՝ անոր կը յարմարէր, ու այնպէս կը պատահէր որ անով իմ շահս կ'աւելնար + Աակայն թէ որ աս յաջողութիւններն այսպէս ինծի կու դան, օրհնութիւն պիտի համարիմ ես անոնք + բայց անոնց պատճառաւը չարասէր անձինք նախատինքով թող չըենաւորեն զիս * +

փակած մնանք՝ որ թշնամիր է իրեն + Ասիկայ խիստ մահագուշակ ու հոգեպատիր սխալմանք մըն է +

* Վրչափ ճարտարարուհսան՝ ովքափ խարէական են այս-

ՎՐԻՄԱՆԱԿԱՆԻՒԹԵ • Խրանցընէ մտածեցի թէ դուն ան մարդն ես՝ որուն վրայով լսեր էի . ու իմ կարծիքո քեզի ըսեմ . Ես կը վախնամ որ աս անունն աւելօք կը վայէ քեզի , քան որչափ կ'ուզես որ մենք խորհինք թէ կը վայէ :

«ՕԿՈՒՄԵՆԻՐԻ • Եղէկ՝ թէ որ դուն այսպէս կը մտածես , ի՞նչ կրնամ ընել ես . դուն իս աղէկ ընկերութիւն ընող մէկն ըլլաւ պիտի գտնես , թէ որ իս քու ընկերութեանդ ընդունելու ըլլաւ :

ՎՐԻՄԱՆԱԿԱՆԻՒԹԵ • Ընէ որ մեր հետն երթալ կ'ուզես , աղէտը է որ հովին ու ջուրին հոսանքին գէյ երթաս , որն որ կարծեմ թէ քու կարծիքիդ հակառակ բան է : «Աաւ աղէտը է այնպէս խոստովանիս ճշնարարութիւնն իր աղքատութեանը մէջ ինչպէս արծաթ մուճակներով ժուռ եկած ատենը . ու անոր հետ պիտի մնաս երկաթներով կապուած ատենդ ալ ինչպէս որ դովարանութիւն ընդունելով փողցներուն մէջ անոր պտրտելու ատենը :

«ՕԿՈՒՄԵՆԻՐԻ • Պէտք չէ քեզի հրամայել կամ իշխել իմ հաւատքիս վրայ . իմ աղասութեանս ձգէ իս , ու թողարուր որ քու հետդ երթամ :

ՎՐԻՄԱՆԱԿԱՆԻՒԹԵ • Ասկէ անդին մէկ քայլ մը պիտի չերթաս , թէ որ իմ առաջարկածիս նկատմամբ չընես , ինչպէս որ մենք կ'ընենք :

Ես ատենը ՝ ՕԿՈՒՄԵՆԻՐԻ ըստ . Ես իմ հին գաղափարներս ընաւ պիտի չձգեմ , որովհետեւ անվիսաս են անոնք և օգտակար : Ընէ որ ձեր հետը չեմ կրնար երթալ պէտք է այնպէս ընեմ՝ ինչպէս որ դուք ինծի չհասած կ'ընէի , այսինքն՝ մինակ երթալ , մինչեւ որ այնպիսի մէկը

պիսի մարդոց տրամաբանութիւնները : Ա՛ղքարք իմ , զգուշացէք աս ողին ունենալէն : Ու ասոր հակառակ արթոնան կեցէք ու ջերմեռանդութեամբ աղօթեցէք որ երկմիտ չըլլար , հազար մինչեւ ՎՐԻՄԱՆԱԿԱՆԻՒԹԵ օրը անարաստ մնար :

դայ հասնի լնեմ որ ուրախ պիտի ըլլայ իս ընկեր ունենաւ լու :

Հիմա երազիս մէջ տեսայ որ Կրիստիանոսն ու Հովա-
սալիցը ձգեցին զինքը , ու անոր առջեւն հեռուեն կը քա-
լէին * . բայց մէկերնին իր ետել նայելով երեք հոգի տե-
սաւ , որ Պարոն՝ Օռուսիրտին ետևէն կու գային . ու Երրոր
եկան հասան անոր , ինք խիստ ցածէն բարեկց գանձք ,
ու անոնք ալ քաղաքամարութեամբ իր բարեն ընդունե-
ցին : Աս մարդոցը անուններն էին՝ Պլ ։ Աշխարհասէր ,
Պլ . Երծաթասէր , և Պլ . Ժլատ . ասոնց հետ առաջուց
ծանօթութիւն ունէր Պլ . Օռուսիրտը . քանզի իրենց
մանկութեանը ամենը մէկ դպրատուն կ'երթային , ու դաս
կ'առնեին Պլ . Յափշտակողէն , որ Վիւսիային կողեւ-
րը Ընչափաղցութեան սահմանին մէջ Հահասիրութեան
վահառաքարդարին վարժապետն էր : Աս վարժապետը սոր-
վեցուցէր էր անոնց յափշտակութեան արհեստը՝ կամ
բռնութեամբ , կամ խորամանկութեամբ , կամ շողքոր-
թութեամբ , կամ սուս խօսելով , կամ բարեպաշտու-
թեան կերպարանը մը վրանին առնելով . և աս չորս աղ-
նուականները իրենց վարժապետին արհեստը այնպէս ձեռք
ձգեցին , որ բուն իրենք ամէն մէկերնին կրնային այնպիսի
դպրատուն մը բանալ :

* Եկատէ թէ աս ճամբորդները ինչու դպուշութեամբ
վարուեցան աս խարերայ հաւատացեալին հետ : Չէ թէ
անխորհրդարար խալոյն զէշ կարծիք մը ունեցան անոր
վրայ . հապա երրոր անոր ինչ ըլլան աղէկ մը փորձեցին՝
ալ մէկ բոպէ մը չսպասեցին , ոյլ հաւատարմութեամբ
վարուեցան հետը , ու երկիւղածութեամբ ետ քաշուեցան
իրմէն : Աէրը մէկ լուր մը լսելուն՝ պէտք է միշտ ծանր
շարժի . բայց երրոր յայտնի կ'ըլլայ թէ մարդիկ այնպէս
չեն ինչ որ ըլլալ կը խոստովանին , պէտք է միշտ հաւա-
տարմութեամբ վարուի :

Երդ՝ ըստածիս պէս երրոր անոնք այսպէս իրար բարեւեցին , Պլ . Երծաթաթառէրը հարցուց Պլ . Շօնուսիրափին , թէ՛ Շամբուն վրան առջևուս գացողները ովկ են . քանզի Քրիստիանոսն ու Յուսալիցը տակաւին կը ահօնուէին :

Շօնուսիրափ . Օյդ մը հեռու աշխարհի մարդիկ են , որոնք իրենց կերպովը ճամբորդութիւն կ'ընեն :

Երժուանակը . Եվառն , ինչնու չկայնեցան որ իրենց բարի ընկերութիւնը վայելէինք . քանզի անոնք՝ և մենք՝ ու դուն պարո՞ն ամենքս աւ կը յուսամ որ ճամբորդութիւն կ'ընենք :

Շօնուսիրափ . Իրաւ այդպէս է . բայց աս առջևնուս դացող մարդիկը այնպէս բիրտ են՝ ու այնչափ կը սիրեն իրենց կարծիքը՝ ու այնչափ առ ոչինչ կը գրեն ուրիշեւ րուն կարծիքը , որ մէկ մարդ մը ո՞րչափ բարեպաշտ աւ ըլլայ՝ թէ որ ամեն բանի մէջ իրենց հետ մէկ ըլլար , բու լորովին դուրս կը ձգեն զանիկաց իրենց ընկերութենէն :

Ճամբար . Ետիկայ գեշ բան է . բայց կը կարդանք մէկ քանիներուն համար՝ որ չափազանց արդար են * , ու այսպէս մարդոց բրտութիւնն իրենց վրայ կը տիրէ իրենցմէ զատ բոլոր ուրիշերը դատել ու դատապարտել : Բայց աղբ , ի՞նչ և ո՞րչափ բաներով իրարմէ տարբերեցաք :

Շօնուսիրափ . Վասնք իրենց կամակոր կերպովը վճռած

* Ուշ որ քանի մը անձինք միարանին առելի բարեպաշտութիւն ունենալու , քան ո՞րչափ ժամանակին նորութիւնը կը ներէ , բիրտ ու այլանդակ ըլլալու քամահրանց տակը կ'իյնան : Ուրիշ մասի մը որչափ որ կ'ուզենաց ուրիշերէն տարբերէ , մէկը չվասանար՝ ու ասոր համար մէկը չմեղադրեր քեզ . բայց իսկցն երբոր Առուրբ Գիբը քեզի կաման կ'ընես՝ ու անոր համաձայն ապրելու դուն զքեզ կը վարժես , աշխարհի ատելութեանը ենթակայ կ'ըլլաս , ու չափազանց արդար ըլլալու աններելի մեղքովը կ'ամբաստանուիս :

Են՝ թէ իրենց պարտաւորութիւնն է ամէն եղանակի մէջ յառաջ վաղեւ իրենց ճամբան * . ու ես հովի և մակընթացութեան կը սպասեմ : Սառնք ամէն բան վասն Վասուծոյ վասնոցի մէջ կը ձգեն , ու ես ամէն պատեհութիւնները ձեռք կ'առնեմ՝ իմ կեանքս և ստացուածքս պահելու համար : Սառնք իրենց կարծիքները կը բռնեն՝ թէպէս և բոլոր մարդիկ ան կարծիքներուն դէմ ըլլան . բայց ես ճշմարտութիւնը կը պահեմ ի՞նչ բանի մէջ և որը ամանակն ու իմ ազատութիւնս կրնայ տանիլ : Վասնք կրօնասէր են՝ թէ որ կրօնքն աղքատութեան ու անարդութեան մէջ աւ ըլլայ . բայց ես՝ երբոր անիկայ արեւին ծագելուն՝ արծաթ մուճակներովը՝ ու դոլութիւն ընդունելով պարտի , կրօնասէր եմ :

Ելեարհատէր . Երաւ ես . ու ամուր բռնէ ատիկայ՝ ավ պատուական Պ . Շառուսիրտ . քանզին իմ կողմանէս յիմար կը սեպեմ ես ան մարդք՝ որ իր ունեցածը պահելու ազատութիւն ունենալով՝ այնչափ անիմաստ ըլլայ , որ կորսընցընէ դանիկայ : Օձի պէս խորագէտ ըլլանք մննք : Լաւագոյն է հունձքը ժողովնէ քանի որ արեւը կը ցալէ : Կը նայիս թէ մեղուն բոլը ձմեռն ի՞նչպէս հանգիստ կը կենայ , ու միայն ան ատենը կ'աշխատի՝ երբոր շահն ու հեշտութիւնը մէկտեղ կրնայ վայելէ : Վասուած երաբեմն անձրե կը խրիէ և երբեմն արեգակը կը ծագեցընէ . թէ որ անոնք այնպէս խելագար ըլլան որ առջննին ժամանակը ճամբորդութիւն ընեն , մնաք գեղեցիկ եղանակին երթալով՝ բաւականանանք : Տժէ որ ինձի կը հարցընես :

* Տմէպէտ և Շառուսիրտը հաւատարիմ ճամբորդներուն առջն կը պապանձի , բայց իր ողին ու բնաւրութիւնը ունեցողներուն հետ համարձակութեամբ կրնայ խօսիլ : Բալթէ , ի՞նչ անհնարին չար ու խարերայ է մարդուս սիրաբը : Ո՞վ կրնայ խնանաւ անիկայ : Ո՞չ մէկը՝ բայց միայն Վասուած սրտերուն քննողը :

ևս ան կրօնքը շատ կը սիրեմ՝ որ Վասուեծոյ մեղի պարզեւած բարութիւններով մէկտեղ կրնայ պահուիլ : Վրանդի՞ ան որ բանականութեամբ կը դատէ , կրնայ ուրիշ կերպ խորհիլ , միայն թէ Վասուեծոյ որ աս կեանքիս բարի բաները մեզի չնորհեց , կ'ուզէ որ մենք իրեն համար պահպաննեք անոնք : Արրահամբ ու Սողոմոն կրօնքի մեջ հարստացան , ու Յոր կ'ըսէ՛ թէ բարի մարդը ուսկին հողի պէս պիտի դիզէ . և ոչ թէ աս առջևէն գացող մարդոցը պէս պիտի ըլլայ՝ թէ որ անոնք քու սառրադրածիդ պէս են :

Ժաման . Արթեմի՛ թէ աս նիւթիս վրայ ամեննիս ալ միարանած ենք , և անոր համար աւելի խոսք հարկաւոր չէ անոր վրայով :

Մըտնասէր . ԶԵ . Ճշմարիտ աւելի խօսք հարկաւոր չէ աս նիւթիս վրայով . քանզի ան որ ոչ Սուրբ Գրոց և ոչ բանականութեան հաւատոք կ'ընծայէ , (և կը տեսնենք որ մենք երկուքն ալ մեր կողմն ունինք ,) ոչ իր աղաւութիւնը դիտէ ու ոչ իր աղահովութիւնը կը վնասուէ :

Կառասէր . Ե՛ղարք իմ , մենք ամենքս ճամփորդութիւն կ'ընենք ինչպէս որ կը տեսնեք . ու զէշ բաներէն աղեկ մը ետ մնալու համար , թոյլտուութիւն չնորհեցէք ինձի ձեզի աս խնդիրը առաջարկելու :

Դիցուք թէ մէկ մարդ մը թէ եկեղեցական և թէ արշեստաւոր՝ պատեհութիւն մը ունենայ իր ձեռքը՝ աս կեանքիս բարի բնելին ստանալու , և սակայն այնպէս ըլլայ՝ որ ուրիշ կերպով չկարենայ անոնք ձեռք ձեռէ , բայց եթէ զոնէ դրառանց սաստիկ նախանձաւոր ըլլաւ ցուցընելով ինքզինքը՝ կրօնքին մէկ մասին մէջը՝ որուն մէջ որ ինքզինքը չեր խառներ առաջ . հիմա ան մարդն իր վախճանին հասնելու համար աս միջոցը չըկրնար դործածել , ու տակաւին շխտակ հաւատարիմ մարդ մը ըլլաւ :

Մըտնասէր . Աը տեսնեմ քու առաջարկութեանդ վախ-

հանը +ու աս պարոններուն կամաւոր թղյլտուռալթինովը կը ջանամ պատասխան մը ներկայացընել քեզի : Եւ նախ եկեղեցականի վրայովլ քու հարցումիդ պատասխաննելու համար , դիցուք թէ եկեղեցական մը՝ արժանաւոր մարդ մը ըլլայ . բայց իր եկամուտը իմաստ քիչ ըլլայ , և իր աչքը աւելի առատ ու աւելի ճոխ եկամուտի մը ըլլայ . նաև պատեհութիւն մըն ալ ունենայ անիկայ ստանալու , սակայն այնպէս որ ինքնինքը աւելօք ուսման տալով՝ աւելի յանախ ու նախանձաւորութեամի՞ քարոզութիւն ընելով՝ և ժողովրդոց բնաւորութեանը պահանջելուն համար իր դաղափարներուն մէկ քանիները փոխելով պիտի ըլլայ , իմ կողմանէս ես պատճառ մը չեմ տեսներ թէ ինչո՞ւ համար մէկ մարդ մը չկընայ ընել ասիկայ , և մանաւանդ ասկէ աւելի շատ ուրիշ բան ալ , ու տակաւին ինք հաւատարիմ մարդ մը ըլլալ , թէ որ ինք աս բանս ընելու հրաւեր մը իմացած է իր ներսի դին : Եւ ինչո՞ւ համար .

“Աախ” որ մեծագոյն եկամուտի մը բաղձանք ունենալը օրինաւոր է , (ասոր դէմ չկեցուիր ,) որովհետեւ Աստուծոյ նախախնամութիւնը իր առջին դրաւ անիկայ . ուրիմն թէ որ ձեռնահաս է , կրնայ ստանալ անիկայ . Խղձմանիք չընելով :

Երկրորդ՝ ասկէ դատ՝ ան եկամուտին վրայովլ իր ունեցած բաղձանքը զինքը աւելի ուսումնասեր՝ աւելի նախանձաւութեամի՞ քարոզող կ'ընէ , ե՛ւ . ու այսպէս անիկայ լաւագոյն մարդ մը կ'ընէ . մանաւանդ թէ իր միտքը լաւագոյն կերպով յառաջացընել կու տայ , որ Աստուծոյ մոռացը հստաձայն է :

Երրորդ՝ իր ժողովրդոցը բնաւորութեանը հակամիտելուն վրայ՝ անոնց ծառայելու համար իր դաղափարներուն մէկ քանին ձգելով , ասիկայ կը ցուցընէ նախ՝ թէ ինք անձնուրացութեան բնաւորութիւն ունի . երկրորդ՝ թէ բարեբարոյ ու շահեցող կենցազափարութիւն մը ունի . և

ԵՐՐՈՐԴ՝ թէ ասանկով աւելի յարմար է եկեղեցական պաշտօնի :

Չորրորդ՝ ուրեմն կը հետեցընեմ թէ մէկ եկեղեցական մը որ մեծը առնելու համար պղտիկ բանը կը ձգէ , պյալէս ընելուն համար աղաչ սեպուելու չէ . հապա՞ որովհետեւ անով իր ստացուածքն ու ճշմարտութիւնը կ'աւելնայ , աւելօք իր կոչմանն ու բարիք ընելու համար իր ձեռքը տրուած պատեհութեանը հետեւով մէկը սեպուելու է :

Վանք հիմա քու առաջարկութեանդ երկրորդ մասին՝ որ կը վերաբերի արհեստաւորին , որն որ յիշեցիր : Դիցուք թէ պյալիսի մէկը միայն աղքատիկ գործ մը ունենայ աշխարհի մէջ , բայց կրօնականութեան դառնալով կարենայ իր առուտուրը ծաղկեցընել . զույշէ հարուստ կնիկ մը առնէ , կամ լաւագոյն և առջինէն աւելի յաճախորդ ունենայ իր խանութը + իմ կողմաննէս պատճառ մը չեմ տեսներ , որ օրինաւոր կերպով չկրնայ ընել : Եւ ինչո՞ւ համար :

* Կախ՝ որ կրօնական ըլլալն առաքինութիւն է , ինչ կերպով մարդ պյալէս կ'ըլլայ թող ըլլայ :

Երկրորդ՝ որ հարուստ կնիկ առնելը՝ կամ իր խանութին աւելի յաճախորդ ստանալը ապօրինաւոր չէ :

Երրորդ՝ մանաւանդ՝ որ՝ ան մարդը որ կրօնական ըլլալով աս բաներս կը ստանայ , բարին բարի եղողներէն կը ստանայ իր բարի ըլլալովը + ուստի ահա քեզի աղէկ կնիկ և աղէկ յաճախորդներ՝ և աղէկ վաստակ , և աս ամենն ալ կրօնականութիւնէ յառաջ դալով՝ որ ան ալ աղէկ է : Ուրեմն բոլոր աս բաներն ստանալու համար կրօնական ըլլալը բարի է և օգտակար * :

* Ահա քեզի աշխարհային խմաստութիւն , դժոխային տրամաբանութիւն , ու Աստանայական փիլիսոփայութիւն : Ամէն օր աս խօսքը կը լսենք արծաթառէր հաւատացեալւ :

Աս պատասխանը՝ որ Պլ ։ Արծաթառերն ըստ Պլ ։ Օռուռսիրտին հարցմանը, բոլորէն ալ մեծապէս զովաշանութիւն ընդունեց ։ ուստի վերջապէս հետեցուցին թէ խիստ օդտակար ու քաջադէպ պատասխան էր ան : Եւ որովհետեւ իրենք կարծեցին որ մէկ մարդ մը կարող չէր անոր հակառակելու, և որովհետեւ Քրիստիանուն ու Յուստիցը տակաւին այնչափ մօտ էին՝ որ եթէ կանչուելին կրնային լսել, միաբանեցան որ անոնց հասածնուն պէս իսկոյն անոնց առջել դնեն առ խնդիրը ։ մանաւանդ անոր համար՝ որ անոնք քիչ մը առաջ Պլ ։ Օռուռսիրտին հետ հակառակեր էին : Ուստի անոնց ետեւն կանչեցին, ու անոնք կանկ առեն կայնեցան մինչեւ որ միւսներն իրենց հասան : Խայց ճամբուն վրայ խորհուրդ ըրին որ չէ թէ Պլ ։ Օռուռսիրտը, հապա ծերունի Պլ ։ Աշխարհասէրը ան խնդիրն առաջարկէ անոնց ։ Բնչու որ մտածեցին թէ մանոնց անոր տալու պատասխանը պիտի ըլլայ առանց ան տարութեանը, որն որ իրենց և Պլ ։ Օռուռսիրտին մէջ ըոր բորեր էր քիչ մը առաջ՝ իրարմէ դատուելնուն :

Այսպէս իրարու հասան, ու կարճ կերպով մը իրար բարեւելնէն ետեւ, Պլ ։ Աշխարհասէրն առաջարկեց ան խնդիրը Քրիստիանուն ու իր ընկերին, և ըստ որ եթէ կրնան՝ անոր պատասխանը տան :

Կերէն, որոնք զուրկ են հառատոյ ու աստուծպաշտութեան զօրութենէն : Խայց ասոնց ամենուն հակառակ՝ Հոդին Սուրբ կը վկայէ թէ, “Վո՞ն չարութիւններուն արձաթսիրութիւնն է”, այ Տէմ + դ. + 10, ու “Վզահութիւնը կռապաշտութիւնն է” : Առշ. կ. + 5 : Անցելք ասիկայ ու գողացէք ով ազահ հաւատացեալներ : Ու դուք՝ ով Գրաբին հետեւողներ, յիշեցէք որ բարքերն իրդ արծաթասէր չըլլալ հրամայուած է ձեզի : Ե՛թ . Ժէք . 5 : Զեր Տէրը կը վկայէ թէ դուք “Զէք կրնար ծառայէլ Վասուծոյ ու մամոնայի” : “Լուսու ժդի . 13 :

Վն ատենը՝ Քրիստիանոսն ըստ . Սինէւ անդամ՝ կրօնքի
մէջ տղեկ մը եղողը ասոնց նման տասը հազար խնդիրներու
կրնայ պատասխանել : Քանզի՞ թէ որ հայի համար Քը-
րիստոսի ետևէն երթալը ապօրինաւոր է , բնչպէս որ կ'ե-
րևայ , Յոհանն . կ . 26 , որշափ ևս առաւել ապօրինաւոր է
զինքն ու կրօնքը միջոց մը ընելով աշխարհը ստանալն ու
անիկայ վայելելը : Եւ ուրիշ մեկը չենք գաներ , բայց հե-
թանոսները՝ կեղծաւորները՝ դեերն ու կախարդները՝ որ աս
կարծիքն ունին :

*Ամի՞ Հեթանոսները : Քանզի երբոր Երմովո և Աի-
քէմ Յակոբին խաշնիքն ու աղջիկը առնելու մնդելոնին
դրին՝ ու տեսան որ ուրիշ ճամբով չեն կրնար ձեռք ձգել
անոնք , հապա թշրիմատուելով , իրենց ընկերներուն ըսին .
թէ որ մենէն ամէն արուները թշրիմատուին՝ բնչպէս որ ա-
նոնք թշրիմատած են , անոնց խաշնիքն ու անոնց ստա-
ցուածքը և ամէն անոնց անսասունները մերը պիտի չըլլան :
Փնտուածնին անոնց աղջիկներն ու անոնց խաշնիքը ձեռք
ձգել եր , և անոնց կրօնքը իրեն միջոց մը դործածեցին
անոնք՝ ստանալու : Կարդա ան ըոլը պատմութիւնը :
*Օհնութ . լդ . 20-24 :

Երկրորդ՝ կեղծաւոր Փարիսեցիներն ալ աս կրօնքէն
էին : Երենց միջոցներն էին երկար աղօթքներ ընել ,
բայց իրենց նպաստակը որբեարիներուն տուներն ուտել եր ,
ու իրենց դատաստանը՝ աւելի դատապարտութիւն ընդու-
նելու արժանանաւ եղաւ . Աստուծմէ : * Դուքս . ի . 46 ,
47 :

Երրորդ՝ Յուդան՝ ան դեն ալ աս կրօնքէն եր . ինք
կրօնական եր գանձանակին համար՝ որ անոր մէջ ձգուածը
յափշտակէ . սակայն կրասուեցաւ՝ անարդուեցաւ և բուն
իսկ կորսուեան որդի եղաւ :

Չորրորդ՝ Աիմոն կախարդն ալ աս կրօնքէն եր . Քանզի
ուղեց Հողին Առորը առնել , որ անով ստակ ձեռք ձգէ ,

ու Պետրոսին բերնէն իրեն համար ելած վճիռը իր ուղածին վայելու էր : « Դարձ . լ . 19-22 :

Հինգերրդ՝ չկրնար աս ալ իմ մոքես եղել , թէ ան մարդը որ աշխարհի համար կը զործածէ կրօնքը , աշխարհի համար պիտի ձգէ անիկայ . քանզի ինչպէս որ սարց է թէ Հուղայի կրօնական ըլլալուն դիտաւորութիւնը աշխարհի վրայ էր , այնպէս ալ սարց է թէ կրօնին ու իր Ապրագապետը նոյն բանին համար ծախեց : Ուստի այսպիսի խնդիրին ստորասարար պատասխան տալը՝ ինչպէս որ կ'իւ մանամ՝ թէ դուք տուած էք , ու այնպիսի պատասխանը իրքե օրինաւոր ընդունիլը՝ հեթանոսական՝ կեղծաւորական ու զիւական բան է . ու ձեր վարձքը ձեր դորջերուն համաստ պիտի ըլլայ :

Սար վրայ կանկ առին անթարթափի իրաբու երես նայելով , բայց Վրխատիանոսին պատասխան տալու բան մը չունեն : Յուսալիցն ալ Վրխատիանոսին տուած պատասխանն ուղիղ ու բաւական սեպեց . ուստի անոնց մէջ մեծ լութիւն մը ինկաւ : Ա երջապէս զի . « Օրուուիրան ու իր բարեկամները ծանր ծանր երթալով ես մնացին , որ Վրխատիանոսն ու Յուսալիցը անցնին երթան : Են ատենը Վրխատիանոսը իր ընկերին ըստա . թէ՞ որ աս մարդիկը մարդոց խօսքին անպատասխանի կը մնան , ի՞նչ պիտի ընեն Սատուծոյ խօսքին : Եւ թէ որ հողէ ամաններուն հետ կենակցած ատեննին կը համբանան , ի՞նչ պիտի ընեն երբոր մաշող կրակի մը բոցերովը յանդիմանուեին * :

* ՏԵ՛ս թէ ի՞նչ մեծ բարութիւն մըն է Առողք Վրաց վրայ քաջ տեղեկութիւն ունենալը , ու նըշամի հարկաւոր է առաքեալին տուած յորդորանքը , թէ՝ « Վրխատիան խօսքը ձեր մէջը բնակի առատապէս » : Առա . դ . 16 : Վանդի Սատուծոյ խօսքը կենդանի է ու զօրաւոր , ու երկասպայրի սուրէն ալ սուր + ու Սատանային բոլոր նարտարարուեատ հնարքներէն՝ ու մարմնապաշտ հաւատացեալներուն *

Հիմա՞ Վրիստիանոսն ու Ծուսալիցը կրկին անոնցցեցառաջ անցան , ու սյնչափ դացին մինչեւ եկան զուարձակի դաշտի մը մէջ մտան , որ Դիւբութիւն կը կոչուեք , ուր որ շատ գոհ սրտով կը քալէին . սակայն ան դաշտը կարճ ըլլալուն՝ շտոտով անցան անկէ : Գանք որ դաշտին միւս կողմը պվտիկ բլուր մը կար Ա տատակ անունով , ու ան բլուրին վրայ արծաթի հանք մը , որ առաջուց ան ճամբան դացողներէն ունանք անոր ազնուութեանը պատճառաւը անիկայ տեսմնելու դարձան . Բայց շատ մօտ Երթալով փոստին իրենց ուսքին տակի դետինը հաստատ ըլլալուն պատճցաւ , ու իրենք սպաննուցան . ոմանց ալ անդամները կոտրտեցան , և մինչեւ իրենց մահուան օրը չկրցան նորին իրենք զիրենք գտնել :

Եւ տեսայ երազիս մէջ որ Ճամփէն քիչ մը գուրս արծաթի հանքին դիմացի կողմը Դիմասը կայներ Եր՝ աղնուականի կերպարանքով՝ Ճամփորդները կանչելու , որ Երթան ու տեսմնեն : Ուստի Վրիստիանոսին ու իր ընկերին ըստ . Ա դուք , աս կողմը դարձեք , ու ես բան մը ցուցընեմ ձեզի :

Հնարինաց խորամանկութիւններէն կ'անցնի , ու մարմինին երկրաւոր խորհուրդները մէկողի կը զատէ հոգեւոր իմաստութեանէն որ 'ի վերուստ կ'իջնէ :

* Ձեայ բան մը որ առելի վտանգաւոր ու որոգայթագիր ըլլաց հոգւոյն՝ քան որչափ աշխարհային հարատութիւնները : Վանի քանի անձննք որ ճախորդութեան ամեն փոթորիկներուն դէմը կընային անշարժ կինալ , յաջողութիւնն իրենց վրայ յորդելուն՝ յայտնապէս կորսընցուցին իրենց հաստատութիւնը : Դժուարին է հարստութիւն ունենալ՝ ու մեր սրտերն անոր վրայ չցնել . ու Վատուծոյ խօսքը կը սորմեցընէ մեզի թէ ամեն չարութիւններուն արմատը արծաթսիրութիւնն է , որուն ոմանք հետեւելով հաւատքէն խոտորեցան , ու անհամար ցաւերու մէջ ձգեցին իրենք զիրենք :

Վրիստիանոս . Խօնչ կրնաց այնչափ արժանաւոր ըլլալ
որ մեզ ձամբայէն դարձընէ :

Դիմոս . Հոս արծաթի հանք մը կայ , ու քանի մը
հոգի անոր մէջ կը փորեն դանձ հանելու . թէ որ դալու
ըլլալ , քիչ մը աշխատակրով շատ բան կրնաք հանել
ձեզի համար ։

Եկո՞ր երթանք նայինք , ըստ Յուսալիցը :

Ես չեմ երթար , ըստ Վրիստիանոս , ևս աս տեղին
վրայով՝ ու քանի քսնիներուն հոս սպաննուիլը առաջուց
լսած եմ . և ասկէ ՚ի զատ ատ դանձը անիկայ վնառողնեւ-
րուն որոդայթ մըն է , քանզի անոնք իրենց ձամբորդու-
թենէն կ'արդիլէ * :

Են ատենը Վրիստիանոս Դեմոսին կանչեց ըսելով .
Վստ տեղը վասնգաւոր չէ՝ ատիկայ շատերն իրենց ձամ-
բորդութենէն չարդիլը :

Դիմոս . Խիստ վասնգաւոր չէ . բայց անոնց միայն որ
անդքոյւնն էն : Սակայն խօսած ատենը միանդամյն կարմը-
րեցաւ ալ :

Վրիստիանոս . Են ատենը Վրիստիանոս ըստ Յուսա-
լիցն . Ըըլլայ որ մէկ քայլ մը փոխնիք , հազար յառաջ
երթանք մեր ձամբան :

Յուսալից . Ես կը վկայեմ քեզի որ Երբ Յօնուսիըուր

* Տեսանք հաւատարիմ բարեկամին արժեքը . բայց ՚ի-
շափ քիւրը այսպէս հաւատարիմնիթեամին կը վարուին ի-
րենց ըսկերներուն հետ : Հաւատացեամիւրէն ՚իշափ
քիւրը այսպիսի յորդորանքները կը վերցընեն : Խօնչ
ըսել է՝ կ'ըսեն , ատակ վաստըկելն մեզ արգիլել : Ոհ ,
՚իշափ քիւրը զիսեն թէ ազահութիւնը կրապաշ-
տութիւն է , ու միաք կը դնեն Վրիստոսի Տեսան մե-
րց կրկնն և կրկն զգուշութիւն տալուն , թէ ու ՚իա-
մեցէք և զգուշացէք աղահութենէնն” : “Ե՞ս . ժի .
15 :

հռն հասնի , թէ որ նոք մեզի պէս հըաւիրուի , պիտի դառնայ անիկայ տեսնելու :

Դիրքութիւննու . Առոր վրայ պէտք չէ տարակոյս ունենալ , քանզի իր գաղափարները հռն կ'առաջնորդեն զինքը . ու հարիւրին բնասունունը սոյց է թէ նոք հռն կը մեռնի :

Հիմա Դիմաս նորէն կանչեց՝ ըսելով . Բայց չէ՞ք ուզեր գալ ու տեսնել :

Այս առենը Դիրխտիանոս խօսութեամիւ պատասխան տուաւ ըսելով . Ով Դիմաս , դուն աս ճամբուն Տէրու զը շիտակ ճամբւաներուն թշնամիւ մըն ես , ու իր տէրութեանը դատաւորներուն մէկին արդէն դատապարտուած ես ճամբէն քուն քու խոտորելուդ համար + ի Տիմ + դ + 9 + ե ննչեմ համար կ'ուզես որ մեզ ալ նոյն դատապարտութեանը տանիս : Մանաւաննո՞ թէ որ Երբէք ճամբէն խոտորելու ըլլանք՝ անշուշտ մեր Տէրը թագաւորը պիտի խնայ , ու խոյտառակ ընէ մեզ հռն ուր որ համարձակութեամիւ կ'ուզենիք իր առջեւը կայնիլ :

Դիմաս նորէն կանչեց թէ նոքն ալ իրնց ընկերութեան մէկ անդամն է . ու թէ որ քիչ մը սպանեն , նոք ալ իրնց ուղեկից պիտի ըլլայ :

Այս առենը Դիրխտիանոս ըստ . Անունո՞ ի՞նչ է , ան նոյնը չէ՞ որով քեզ կանչեցի :

Դիմաս . Այսն իմ անունս Դիմաս է . Արքահամի՞ որդի իմ ես :

Դիրքութիւննու . Աը ճանչնամ քեզ , Գեղեղին քու ուապուդ հայրն իր , և Ծուղան քու հայրդ , ու դուն ալ սնննց ճամբուն հետուեցար . քու դործածածդդ սատանայական խարդախութիւն մըն է . քու հայրդ իրքեւ մասնիչ կախուեցաւ , ու դուն անկէ աղէկ վարձքի մը արժանաւոր չես : դ թագդ . ե . 20-27 : Առորդ . իդ . 14 , 15 : թէ . 3-5 : Եղէկ գիտցիք որ երբ թաղաւորին եր-

թանկը , աս քու ըրածդդ պիտի զբուցենք իրեն : Աս ըստ
լով անոնք իրենց ճամբան գացին :

Աս միջոցիս՝ Օռուռսիրտն ու իր ընկերները նորէն տես-
նուեցան . ու առաջին ակնարկութիւնը ընդունելուուն ան-
ցան Դեմասին քով գացին : Արդ՝ փոսին ըերնէն վար
նայելուուն մէջն իշխանին՝ կամ փորելու համար վար իշխել-
նին՝ կամ սովորաբար անոր յատակէն ելած վեասակար դու-
լորժներով խեղդուելուն առողջ չեմ դիտեր ես + բայց աս նը-
կատեցի՝ որ անոնք՝ ալ ան ճամբուն մէջ շտեմնուեցան * :

Ան ատենը՝ Քրիստիանոս երդեց այսպէս :

Օռուռսիրտն ու Դեմաս արծաթասէրը ,
Մէկմէկու հետը կը միարանին .
Մէկը կը կանչէ կը վազէ միւսը ,
Դաժանորդ ըլլալ անոր վաստակին .
Վսանկով ատենք աշխարհին մէջը ,
Կը դադրին , ու չեն յառաջեր անդին :

Արդ՝ երազիս մէջ տեսայ թէ ճամբորդները աս գաշտին
միւս կողմը մէկ տեղ մը եկան՝ ուր որ հին արձան մը
կանդնած էր ճամբուն քովիկը . ասիկայ տեսնելուուն եր-
կուքն ալ շիոթեցան անոր տարօրինակ ձեխն պատճառաւը .
քանզի այսպէս թուեցաւ իրենց՝ թէ անիկայ ատենօք կնիկ
մը եղած ըլլայ , արձանի մը ձեկ փոխուած : Ուստի աս
տեղս կանկ առնելով անթարթափ աչքով անոր վրայ կը
նայէին , բայց ատեն մը չկըցան իմանալ անոր ինչ ըլլա-
ւը : Ակրչը Յուսալիցը նկատեց որ վերը անոր դիսուն
վրայ անսավոր կերպով զրուած դիր մը կար . բայց նոք
դրոց աշակերտ ըլլալուն համար Քրիստիանոսը կանչէց՝
(որովհետեւ դիտուն մարդ էր ան ,) որ տեսնէ թէ կընայ

* Տեսամ աշխարհիկ մարդոց վախճանը , որոնք ունայ-
նութեամբ կը ջանան մամննային սէրը Քրիստոսի սիրոյն
հետ խառնել :

արդեօք անոր նշանակութիւնը իմանալ : Ուստի չՔրիստիանոս եկալ՝ ու քիչ մը ատեն գրեցը իրաբու հետ կապելէն ետեւ զտաւ որ ասիկայ էր . “Կովոբն կնիկը յիշցէք” : Եւ ասիկայ իր ընկերին կարգալէն ետեւ երկուքը մէկէն վճռեցին թէ անիկայ “Կովոբն կնիկն է որ աղի արձանի փոխուեցաւ , Առողումն ելած ատենը ընչառակը սրտով իր ետին նայելուն համար : Կանադ . ժիշ . 26 : Հիմա աս յանկարծական և զարմանալի երեսոյթը սպառձառ ըլլալով՝ աս խօսակցութիւնն սկսեցին ընել անոնք :

Քրիստիանոս . Ո՞հ , Եղայր իմ , ասիկայ յարմար երեսոյթ մըն է որ պատշաճապէս սպատահեցաւ մեզի Աստակ կոչուած ան ըլուրը անցնել տեսնելու համար “Իմաստին մեղ հրաւիրելէն ետեւ . և թէ որ իրեն ուզածին պէս ու քու ալ երթալու հակամիտելուդ պէս դացած ըլլայինք՝ Եղայր իմ , զիտցածս՝ մենք ալ մենէ ետեւ դալիքներուն տեսնելու համար պատկեր մը , տեսարան մը եղած պիտի ըլլայինք :

Յուստից . Աը ցաւիմ որ այնչափ յիմար էի , ու կը զարմանամ որ հիմա “Կովոբն կնոջը” պէս չեմ . քանզի ի՞նչ տարրերութիւն կայ անոր և իմ մեղքիս մեջ : Խնդ միայն իր ետեւը նայեցաւ , ու ես երթալու տեսնելու փափաքցաց : “Կոհութիւն ըլլաց Վասուծոյ շնորհացը , ու ես ամօթով մնամ” իմ սրտիս մեջ այսպիսի հակամիտութիւն մը ըլլալուն համար * :

* Վասուծոյ շնորհացն ահա այսպէս ներդործութիւն կ'ընէ քրիստոնեայ ճանապարհորդին սրտին մեջ : Երբոր ինք կը տեսնէ որ իր վատթար բնութիւնն ուրիշներուն գործածամէն մեկ մեղքին յօժարութիւն ունի , կը խոնարհի՝ ու կը խօսառվանի՝ որ չէ թէ բուն իր դօրութիւնովն ինք կը պահուի , ոյլ միշտ ամեն փառքը բոլոր շնորհաց Վասուծոյն կ'ընծացէ , որուն գօրութիւնովը միայն իյնալէն պա-

Վիրաբուժութեան ։ Եղեգը աս տեղը տեսածնիս մորելիս պահէնքը՝ առկէ ետև մեզի օդնութիւն ըլլալու համար ։ Աս կնիկը մէկ դատապարտութենէ ազատեցաւ, ինչու որ Ասդոմի կործանումովը չկորսուեցաւ ։ և սակայն մէկ ուրիշ մը մը կորսուեցաւ, ինչպէս որ կը տեսնենք թէ աղի արձան դարձած է ։

Յուստից ։ Ճշմարիտ է, ու ինք մեղի միանգամացն զգուշութիւն և օրինակ կրնայ ըլլալ ։ զգուշութիւն՝ որ իր մեղքէն հեռու կենանք, ու օրինակ՝ որ աս զգուշութեամբը մեղքէ հեռու չկեցողներուն վրայ ինչ դատապարտութիւն դալուն նշանը տեսնենք ։ այսպէս ալ Ասրիս՝ ՚Իւաթանը ու Արիբոնը ևս՝ իրենց մեղքերուն մէջ կորսուած երկու հարիւր յիսուն հողիներուն հետ մէկտեղ նշան մը կամ օրինակ մը եղան ուրիշներուն զցոյշ կենալու ։ Տնաւոց ժղ. 31, 32: իղ. 9, 10: Բայց ամէն բանէն աւելի մէկ բանի մը կը զարմանամ ։ այսինքն՝ թէ ՚Իւեման ու իր ընկերները ի՞նչպէս ան տեղը այնպէս վստահութեամբ կրնան կայնիլ ան գանձին սպասելու, որուն համար աս կինը միայն իր ետին նայելուն պատճառաւը (քանզի չենք կարդար թէ ինք մէկ քայլ մը ճամբէն դուրս կոխեց,) աղի արձան դարձաւ ։ մանաւանդ որ անոր վրայ եկած դատապարտութիւնը անիկայ օրինակ մը քրաւ անոնց աչքին առջել ուր որ իրենք կեցեր են, քանզի հնար չէ որ աչքերնին վերցուցածնուն պէս չտեսնեն անիկայ ։

Վիրաբուժութեան ։ Օչարմանալու արժանաւոր բան մըն է, ու կը ցուցընէ թէ իրենց սրտերը աս մասին ամուրցած են ։ և չեմ դիտեր թէ որու այնչափ պատշաճաբար նման ցընեմ անոնք, որչափ անոնց՝ որ բռնուած ու դատաւորին

հուած է: “Հաւատարով հաստատուեցար, մի՛ հպարտանար, հապա վախցի՛ր” : Հառակ + Ժան + 20 :

առջին կայնած առեննին ալ իրենց քովք կեցողներուն ճոյը կը պարպեն , կամ կախաղանին տակը կախուելու տարսած տեղերնին քաակահատութիւն կ'ընեն : Սոդոմի ժողովուոց համար կ'ըստութէ խիստ չար ու մեղաւոր էին , ինչու որ Տէրովը առջին մեղք գործեցին + այսինքն իր աշքին առջին և անոնց ցուցուցած մարդասիրութեանը վրայ . քանիդի Սոդոմի երկիրը Տէրովը դրախտին պէս էր : Կօնք + ժկ . 10-13 : Ուստի աս բանը ևս տառեւլ՝ ի նախանձ շարժեց Տէրը , ու անոնց պատուհանը անսր երկանուար կրակին կրցածին չափ սաստկացու :

Եւ արժանի է իրաւամբ հետեւցընել թէ այսպիսի օրիւնակները տեսնելով՝ և մանաւանդ թէ իրենց զառւշանալուն համար անոնք միշտ իրենց աչքին առջին ունենալով մեղանցողները սաստկացոյն պատուհաներու արժանի պիտի ըլլան :

Յառապէջ + Անտարակոյս ըստածդ Ճշմարիս է . բայց ինչ ողորմութիւն է որ ոչ դուն , և մանաւանդ թէ ոչ ալ ևս ինքնա այսպիսի օրինակ եղանք : Վոիկայ կը սորվեցընէ մեզի գոհաննալ Աստուծմէ , անոր երեսէն վախնալ , և միշտ Կովտին կինը յիշել :

Վոկէ ետե տեսաց որ անոնք իրենց Ճամբան երթալով մէկ դուարձալի դեստի մը հասան * , որն որ Կաւիթ թա-

* Վս Ճամբորդները վաստակի համար շիտակ Ճամբայէն խոտորելու փորձութեանը զէմ որ դրին , առատաղոյն հոգեւոր միսիթարութիւններ չնորհուեցաւ իրենց : Մարք . ժ . 23-30 : Ճամբապարհորդներն աս տեղս զուարձալի դես մը եկան , ուրիէ խմելով իրենց յոդնած հոդինները կազուորեցին : Վս զետը Վստուծոյ սիրոյն խորին ու անսահման Ովիիանուն է : Վս զետին առուներն են թողութիւն , ազատութիւն , որդեղբութիւն , արդարութիւն , որբութիւն , աղօթից ունենողբութիւն , աստուածային բոլոր նախախմանամութիւններուն բարութիւնները , ու երկ-

գաւորը կը կոչէր “Վասուծոյ Գևեռը” : բայց Յովհաննես՝
“Աւնաց ջուրի գետ” կոչց անիկայ : Ասով : կէ . 9 :
Յայտ . իր . 1 : Եշիլ . խէ . 1-9 : Համար իրենց համ-
րան ձից աս գետին քովիկը կ’իյնար . ուստի Կրիստիա-
նոս ու իր ընկերը մեծ հաճութեամբ կը քալէին հոս . նաև
գետին ջուրին խմեցին ալ որ իրենց յոդնած անձերուն հա-
ճելի էր և կաղզուրիւ : Վակէ ՚ի զատ աս գետին երկու
եղերքը կանանչ ծառեր կային՝ որոնք ամեն տեսակ պտուղ-
ներ կը բերէին . ու անսնց տերեներէն կերան՝ որ արդի-
ւն շատակերութենէ պատճառած դժուարամարութիւնն
ու ուրիշ ախտերը , որոնք սովորաբար անսնց կը պատահին՝
ոչ ճամփորդութեամբ իրենց արիւնը կը բորբոքին : Գե-
տին երկու կողմը կանանչ մարդագետին ալ կար՝ զարմա-
նալի կերպով գեղեցիկացուցուած՝ շուշան ծաղիկներով , ու
բոլը տարին կանանչ կը մնար : Աս մարդագետինն
վայ ճամփորդները պառկեցան քնացան , որովհետեւ աս
տեղս ապահովութեամբ կրնային պառկիլ : Ասով . իր .
2 : Եսայ . ժդ . 30 : Երբոր արթնցան՝ կրկին ժող-
վլցին ծառերուն սպառովներէն , ու կրկին խմեցին գետին
ջուրէն , և յետոյ կրկին պառկեցան քնանալու : Այսպէս

նից մէջ յաւխտենական յազմութիւն : Իսկ աս առու-
ներուն անցած ճամբան է Յիսուս Քրիստոս Տէրն մեր :
Հաւատացեալներն անով ամեն հոգեոր օրհնութիւններով
կ’օրհնուին , ու Վասուծոյ սէրը և անոր բոլոր պտուղները
Հոգւոյն Արքոյ հաղորդութեամբը կը վայելն : Վասու-
ծոյ զաւկըներն աս գետին եղերքը քալիլով՝ աւետարանա-
կան խոստմունքներուն պատռական պտուղովը կը կերտե-
րին , ու ան խոստմունքներովը զանուած ներկոց նորհքնե-
րուն վայելութիւնն ու ապառնի խփառքին ակնկալութենը
իրենց հողիներն իրեւ թէ ճարպով ու պարաբռութիւնով
կը լցցընէ : Հոս կը զանէ յոդնածը հանդառառութիւն ,
ուխտագրուժը դարձ , ու սպառը միմիթարութիւն :

անցուցին քանի մը որ և քանի մը դիւնք + ու յետոյ առ
երգն երգեցին :

Ես առուներուն յատակ ջուրերը ,
Կայեցէք ինչպէս հանդարս կը հռուն ,
Որ ճամբորդներուն ճամբանուն մէջը ,
Միիթարութիւն որտի ընծայեն :

Են կանաչաղեղ դաշարիները ,
Բաց իրենց առած անուշ հոտերէն ,
Ճաղմաժիւ բարեաց առատ զանձերը ,
Չըի կ'ընծայեն անոնց որ հոս են :

Ու ան որ դիտէ թէ աս ծառերը ,
Կնչ բարի պտուղ՝ տերե կը բերեն .
Խալոյն կը ծախէ իր ունեցածը ,
Որ ծախու առնէ աս դաշոք իրեն :

Երբոր նորէն ճամբայ ելլել յօժարեցան (քանզի դեռ
իրենց ճամբուն վերջը չէին հասած,) կերան ու խմեցին ,
և ճամբայ ելան * :

Հիմա երազիս մէջ տեսայ որ շատ ճամբայ չդաշած
գետն ու ճամբան առնն մը իրարմէ զատաւեցան , որուն
վրայ քիչ չարտմեցան ճամբորդները + սակայն ճամբէն

* Տէրը ճամբուն վրայ կազզութելու ժամանակներ կռւ
տայ իր ժողովողոցը . բայց հարկ է անոնց որ յիշեն թէ
տակաւին իրենց ճամբորդութեանը վախճանին հասած չն ,
ու վունդի աղցեցութենէն դուրս չն : Վազքէն անոնք
առաւել ևս զգուշանալու են այսպիսի առենները . ինչու
որ Վատանան զանոնք կը դիտէ , ու անոնց արտօնութիւննե
ներուն կը նախանձի : Ինչպէս որ աւազակը՝ աղքատիկ
մարդն անվնաս կը թողու անցնիլ բայց հետերնին զանձ
ունեցողներուն վրայ կը յարձակի , այսպէս ալ Վատանան
երբոր ճամբորդները միսիթարութիւնով լեցուն կը գտնէ
դարանակալ կ'ըլլոյ ծուռ ճամբու մը հրապութելու զա-
նոնք , որ վրանին յարձակելով զիրենք կողոպտէ :

դուրս ելլելու ալ չհամարձակեցան : Գրանք որ գետեն
անդին ճամբան խորառութորս էր , ու իրենց ոտքերը ճամ-
բորդութիւններնուն պատճառաւը կը ցաւելին . ասանկով
ճամբորդներուն սիրտը նեղացաւ ճամբուն դժուարու-
թենէն : Տեսաց իս . 4 : Անոր համար քանի որ յա-
ռաջ կ'երթային՝ լուազոյն ճամբու մը կը բաղձային * :

* Հաւատացեալները հնազանդութեան ճամբուն մէջ
քայլած ատեննին ալ կարելի է որ զրկուին ան միսիթարու-
թիւններէն որ կը ճաշակեին . ու թէ որ աս փորձութեանը
հետ ժամանակաւոր կորուսաներ ալ ունենան , ինչպէս
աղքատութիւն հիւանդութիւն բարեկամներու տմարդու-
թիւն կամ աշխարհի դէւ վարմունքը , կարելի է որ մե-
ծապէս լրանին . ու Աստանան կարենայ մասնաւոր պա-
տեհութիւն մը ունենալ տժգոհութեան՝ երկմառութեան՝
նախանձութեան կամ ադահութեան մէջ ձգելու զանոնք :
Ասանկով անոնք աւելի հակամիտած ըլլալով լաւազոյն
ճանապարհի մը բաղձալու՝ քան թէ հաւատքներնուն ու
համբերութիւններնուն առաւելութեանը համար ջերմե-
ռանդութեամբ աղօթելու , կը դրդուն ճամբայ մը գտնել
որով կարենան նեղութենէ աղատի՛ ու զիրենք յոդնեցընող
դժուարութիւնը վրաներնեն թօթվել . ու շատ շանցնիք
ժամանակաւոր հանգստութեան միջոց մը կ'ելլէ իրենց առ-
ջին : Հնազանդութեան ճամբան դժուարին ըլլալով՝
ծուռ ճամբայ մը կ'ելլէ առջևնին , որ կը թուի թէ նոյն
ճամբան կը հանէ զիրենք . բայց թէ որ անոնք ասանկով
ճամբեն դուրս ելլեն , թէ և ցանկ մը կամ պատ մը չքա-
կին , բայց զոնէ սանդուխէ մը անցնելու կը պարաւորին :
Ասուծոյ պատուիրանները սրբութեան ու ապահովու-
թեան ճամբան ցոյց կու տան . բայց անոնց անվորէպ ուղղու-
թիւնէն խոտորիլը կրնայ երբեմն անվասա երեալ , ու բա-
նին պարագաները կարելի է որ երեան թէ անոր կը հրա-
ւիրեն : Վարդիկ կ'երեւակայցէն թէ այս ինչ կամ այն ինչ
բանը Վասուածակոյս կողմանէ ձեռնատութիւն մըն է որ
հանգստութիւն կու տայ յագնածին . ու կը կարծեն թէ
իրենց տրուած պատուիրանքը քիչ մը ընդարձակօրէն

Սրդ՝ իրենցմէ քիչ մը առաջ ճամբուն ձախ կողմէ մարդարկադետին մը կար, ու մեկ սանդուխ մը՝ հոն անցնելու . և ան մարդագետինը կը կոչուէք՝ Կառւոճամբու Վարդագետին : Են ատենը Վրիստիանոս իր ընկերին ըստ . թէ՛ որ աս մարդագետինը մեր ճամբուն վրայ կ'իյնայ , եկոր հոն անցնինք : Ըստոյ Բնիք սանդուխը տեսնելու դնաց , և ահա ցանկին միւս կողմը ճամբուն քովովը շուիզ մը կար * : Վարդագետինը ճամբան աս է . եկո՞ր բարի Յուսալից , եկո՞ր ան կողմը անցնինք :

Յուսալից . Տայց թէ որ աս շաւիզը մեզ ճամբէն դուրս հանելու ըլլայ՝ ի՞նչ ընենք :

Ստիկայ հաւանական բան չէ , ըստ միւսը , նայէ դուրս սի ճամբուն քալիկէն չէ՞րթար : Այսպէս Յուսալիցը իր

կընայ մեկնուիլ , թէ խոհեմութիւն դործածուելու է , և թէ պղտիկ բաներու վրայ խղճահարութիւն ընելը օրինասիրութեան ու առելորդապաշտութեան նշան մին է : Այսպէս՝ Տէրոջմէն խրատ ուղելնուն տեղը բուն իրենց հասկըցածին վրայ հաստատուելով՝ ու իրենց սրտերուն ապաւինելով , փորձողին ականջ կը դնեն : Աւ աս ալ անսովոր բան մը չէ որ լսուադոյն փորձառութեան տէր եղող ու ազէկ համարում ունեցող քրիստոնեաներն անգամ երրենն համբակներուն սխալ կ'առաջնորդեն , հնազանդութեան ուղիղ զեկն խոտորեցընելով զանոնք . ինըու որ Տէրը անոնք իրենք իրենց կը ժմողու՝ իրենց յանձնապատճենութիւնը նուաճելու , ու զանոնք բոլորովն իրմէն կախեալ պահելու համար . և ասանկով նոր բարեպաշտութեան դարձողներուն կը սորմեցընէ որ մարդու մը առելի չհետեւին բայց միայն որչափ որ ան Վրիստոսի կը հետեւի :

* Հնազանդութեան ճամբէն առջի խոտորումները գուցէ միայն պղտիկ բաներ երեան . բայց քիչ ճամբան կը ծոխ , ու մենք շուտով կը մոլորինք մինչև որ անկարող ըլլանք մենք մենէ դառնալու : Են որ պղտիկ բաներն առ ոչնչէ կը համարի , քիչ քիչ պիտի իյնայ :

լնկերէն համոզուելով անոր ետևէն սանդուխէն անցաւ : Երբոր երկուքն ալ անցան ու շաւիդին մեջ մտան , շատ դիւրին գտան անիկայ իրենց ուղերուն . և միանդամայն դեպ 'ի առջևնին նայելով մարդ մը տեսան որ իրենց պէս կը քայէր , ու իր անունը Համանապատան էր . ուստի անոր ետևէն կանչեցին ու հարցուցին թէ ան ճամբան ուր կ'ելլէ : Պատասխան տուաւ թէ Երկնային դուռը : Տես սմբ , ըստ Քրիստիանոս , ես ալ այսպէս չբայ^Չ քեզի . ասով կը տեսնես որ կարծիքնիս շխտակ է : Վայպէս առնոք անոր ետևէն դացին , ու ան անոնց առջևէն : Բայց ահա զիշերը վրայ եկաւ , ու շատ մըջնեց + այնպէս որ եւ տեր եղողները առջևէն դացողը չին տեսներ :

* Վեխոհեմութիւն ըրած պիտի բլլար Աստանան՝ թէ որ հաւատացեալները առջի բերան մեծամեծ մեղքերու հրապուրէր , որոնց դէմ կը կենան անոնց սրտերը . աս պատճառաւ բազմապատիկ կեղծաւորութիւններով կը ձանայ կ'աշխատի դարձրնել զանոնիք սյնափիսի զովելի երևոյթ ունեցող մոլորւթիւններու . որ կը ժուռն թէ չար համարում մը կամ գէշ վախճան մը չունին : Բայց խրաբան չիւր սխալ քայլափոխ աւելի փորձութիւններու ճամբայ կը բանայ , ունոր մնդքեր ըստ երևութին հարկաւոր կը ցուցընէ : Ու թէ որ ամենափոքր ըանի մը մէջ ամենափոքր պատուէր մը մարմնաւոր շարժառիթներէ կամնուորապէս կոտրուի , աս յանցանքին մեջ այնպէս ինքնակամութիւն՝ անհաւատութիւն՝ ապերախտութիւն ու աշխարհային կը ռապաշտութիւն կայ , որ անտարակրոյ հաւատացեալը մէծամեծ յանդիմանութիւններու ու տաստիկ պատիթներու տակ կը ձգէ : Հանզանդութեան ճամբէն խոստրողին համարձակութիւններ կ'աւելնայ ; ուստ կրօնասէր ձևացողներուն օրինակովէ ալ որոնց վրայ ինք դուցէ չափէն աւելի աղէկ կարծիք մը ունեցած է անոնց հետ առջի անգամ տեսութեան մօննելուն . քանզի աս մարդիկը շատ անգամ խիստ զօրաւոր քաջալերութիւն կը ցուցընն՝ ու կը համարձակին Քրիստոսի պատուէրները կոտրելու , կեղծաւու-

Ուստի առջեկն գացողը (Հանձնապատճան անունով՝¹) իր առջեկի ճամբան շտեսնելով խորունկ փոսի մը մէջ ինչ կաւ , որն որ ան երկիրներուն տէրը դիտմամբ շինած էր հոն՝ մնափառ յիմարները անով որսալու համար + ու իյնալով կտոր կտոր եղաւ * : Եսայ + թ + 16 :

Մըր՝ Վրիստիանոսն ու իր ընկերը անոր իյնալը լսեցին + ուստի գացին որ բանին ինչ ըլլալն իմանան՝ բայց պատասխան տուող չկար , հասկա միայն հեծութիւն մը կը լսէին : Ան ատենը Հյուսալիցն ըստ . Ո՞ւր ենք մնաք հիմա : Եսոր վրայ իր ընկերը լւեց՝ կասկածելով թէ ինք շիտակ ճամբեկն դուրս հանեց անիկայ : Եւ հիմա սկսեց զարհուրելի կերպով մը անձրեւել ու որոտաւ և փայլատակել , ու սաստկութեամբ կը բարձրանար ջուրը † :

թելով՝ թէ անոր ձրի շնորհքին պատիւ ընծայելնուն , ու իրենց ազատութիւնն ու արտօնութիւնը ճանշալուն համար է որ այսպիս կ'ընեն : Բայց մթութիւնը շուտով պիտի շրջապատէ ամէն անոնք՝ որոնք այսպիսի առաջնորդներու ետեւ կ'երթան , ու անհնարին նեղութիւններն ու վտանդները շիտակ իրենց բռնած ճամբուն վրայ պիտի իյնան :

* Աս դիսուածը կրնայ ցուցընեւ ան փրկաւեա ներզործութիւնները որ երբեմն յանցաւոր հաւատացեալներուն վրայ կը ծնանին մնափառ կեղծաւորի մը զարհուրելի մահութիւր , որուն չափէն աւելի ունկնդիր եղած են իրենք : Բայց Տէրը իր ծառաները մէկ կերպով մը կ'ապատէ յանձնապատճանութեան ժամանակաւոր բռնութենէն , որ առեն յանդզնարար մեղանչողները յուսահասութեան ու մթութեան խորխորատին մէջ կը կորսուին :

† Եստուծոյ սուրբ օրէնքը ամէն յանցաւորները կը դատապարտէ . ուստի երբոր քրիստոնեան կամառորապէս մեղչի մը մէջ իյնայ , շատ անգամ կ'ըրյաց որ վախնայ թէ իր հաւատորը մեռած է , թէ ինք տակաւին օրէնքին տակն է , ու թէ իր վազրին ողէս իր անձն ալ անոր արդար դատապարտութեանը ենթակայ եղած է : Այսպէս իբրև թէ նորէն ետ կը

Են առենը Հուսալիցը ինքնիրենը կը հառավէր ըսելով .
Երանի թէ ևս իմ ձամբաս յառաջանայի :

Վրբիստիանոս . Ո՞վ կընար մորեն անցընել թէ առ ձամբ
բան շիտակ ձամբէն դուրս պիտի տանի մեզ :

Յուսումֆա . Ես առջի անգամին կասկած ունեցայ առ
բանին վրայ , ու անոր համար հեղութեամբ մը իմացուցի
քեզի : Տե՛ւ որ դուն ինձմէ տարօք չըլսայիր՝ բացէ 'ի բաց
պիտի խօսէի քեզի :

Վրբիստիանոս . Պատուական եղբայր , մի՛ նեղանար +
կը ցաւիմ որ քեզ ձամբէն դուրս հանեցի , և քեզ այսպիւ
սի վերահաս վոանգի մէջ ձգեցի : Վաղաչեմ , ե՛ղբայր ,
ներէ ինծի : Ես աս բանը գէշ մորով մը չըրի * :

Յուսումֆա . Միսիթարութիւն ունեցիր , ե զբայր իմ ,
քանզի ես կը ներեմ քեզի , ու հաւատան ես որ ասիկայ մեր
աղէկութեանը համար պիտի ըլլայ :

Վրբիստիանոս . Փառք Վասուծոյ որ զթած եղբայր մը
ունիմ իմ հետու + բայց պէտք չէ որ հոս կայնինք + եկոր
հանանք կրկին ետ երթալու :

Յուսումֆա . Բայց՝ պատուական եղբայր , ես առջեկէն
երթամ :

Երերուի Բնք Ալնա լեռանը փոթորիկներուն՝ որոտմանն ու
փայլատակելուն :

* Եայէ որ ինչպէս քրիստոնեաներն իրարու օդնական
կ'ըլլան՝ այնպէս ալ գորաւոր մոլորու թիւններով մէկզմէկու
վնասակար ըլլալու ենթակայ են : Բայց նկատէ թէ շր-
նորհքն ինչ կ'ընէ + յանցաւորը կը խոնարհեցընէ , հո-
գույն խոստովանել կու տայ իր յանցանքը՝ ու կը տրամացը-
նէ իր թշուառութիւններուն վրայ : Աս աեղ անոնք ոչ
թէ իրար կը նախատեն , հապա սիրով իրարու կարեկից
կ'ըլլան , ու մէկզմէկու վրայ իրենց անձերուն պէս հոդ կը
տանին : Ո՞վ պրանչելի շնորհք և ճշմարտութիւն՝ որ
Քիսուս Վրիստասի ձեռքովն եկաւ + ինչպէս անիկայ սիրոյն
հաղորդութիւնովը հոգիները մէկզմէկու կը կապակցէ :

Վրիմատիոնս . Ձեւ , թէ որ կը կամիս թող տուր որ առաջ ես երթամ , որ եթէ վասնդ մը իսյ , առաջ ես աշնոր մէշն իշնամ , քանզի իմ պատճառաւս մննք երկուքս ալ ճամբէն գուրս ելանք :

Յուսովք . Ձեւ , առաջ դուն երթալու չես , քանզի քու միտքը ամփոխեալ ըլլալով կարելի է որ քեզ կրկին ճամբէն դուրս հանէ : Ան ատենը իրենց քաջալերու թեանը համար մէկու մը * ձայնը լսեցին որ կ'ըսէք . Աիրագ մեծ ճամբուն՝ քու գացած շաւիղիդ դիր , եւս դարձիր : Երեմ . լա . 21 : Բայց հիմա ջուրերը շատ յորդեր են , և ան պատճառաւը ետ դառնալու ճամբան շատ վտանգաւոր էր : (Ան ատենը իմ միտքս եկաւ թէ աւելօք դիւրին է ճամբէն դուրս ելլել երբոր անոր մէշն ենք , քան թէ ճամբան մանել՝ երբոր անիէ դուրս ելած ենք :) Եւ սակայն համարձակեցան ետ երթալ . բայց այնպէս մութիւն էր՝ ու այնպէս սաստիկ կ'անձրեւէր , որ իրենց ետ գառնալուն՝ լնը կամ տասն անողամ՝ մազ մնաց պիտի խեղդուէին † :

* Ասիկայ Վրիմատոս է . Վրիմատոսի պատուական անձը , Վրիմատոսի փառաւոր գործը , Վրիմատոսի կատարեալ փրակութիւնը . ինքն է ճանապարհը՝ մի միայն ճանապարհը՝ արդարութեան ու սրբութեան արբունի ճանապարհը :

† Կարելի է որ մատածուի թէ փորձառու քրիստոնեաց մը մեղքի մը մէջ իշնալէն ետե՝ երբոր ճանչնայ անիկայ , քիչ դժուարութիւն պիտի գտնէ իր պարտաւորութեանը դառնալու ու իր խաղաղութիւնը դանելու : Բայց կամառարապէս զործուած մեղքը որչափ պղտիկ ալ երևայ առջի բերան , երբոր յետոյ անոր վրայ նայուի՝ անհնարին ապերախտութեան ու ծանր ապատամբութեան դործ մը կ'երեւայ ան , այնպէս որ՝ այնպիսի մթութիւն մը կը ձգէ հոգւոյն վրայ՝ ու այնպիսի յանցաւորութիւն մը խղճմանաքին վրայ , որ շատ անզամ կը պատճառէ մարդուն կառկածիւ թէ ստութեամբ բռնած ըլլայ բոլոր իր կրօնքը :

Խռ բոլոր իրենց ըրած ջանքովը չկրցան ան զիշերը սանդուխին համնիլ : Աւստի վերջապէս մէկ պատիկ ծածկուած տեղի մը տակ դադարելով՝ մինչեւ արշալուսին ծագելուն ան տեղ նստան + տակայն յոդնած ըլլալնուն պատճառաւը քուներնին տարաւ * : Գանձ որ ան իրենց պատճառաւը կուներնին տարաւ :

Կատուծոյ կարող ձեռքին ատելը մենք զմեղ խոնարհեցը-
նելու , զիսնալով թէ մենք մենէ ոչինչ ենք : Ասիկայ
քրիստոնէին կծու խօսք խօսիլ կու տայ , որ ատեն որ ա-
նիկայ ուրիշներուն վրայ անձնապարծութիւններ կը տեսնէ :
Պօղոս շատ անդամ աս կերպով կը խօսի՝ Վրիստոսի փա-
ռացը սաստիկ նախանձաւորութիւն ու անոր ճշմարտու-
թեանը վրայ աղջու սէր մը ունենալուն :

նովը քաջապինդ զրահաւորուած չըլսյի : Վանաւանդ որ այսպէս ըրած ըլլալով ալ դժուար բան մը ըլլալ գտայ մարդու պէս վարուիլը : Աւել չըխտեր թէ ի՞նչ բաներ կ'ըման մեղի աս կուիլն մէջ , բայց միայն ան՝ որ բուն ինք կուիլն մէջ գտնուած է * :

Ծուռացք . Խրաւ ես + բայց կը տեսնես որ անոնք վախան , երբոր միայն կարծեցին թէ Անծանորհը ձանձուն մըայ է :

Վիճակինուն . Շշմարխտ է + շատ անդամ վախան իշխնք ալ իրենց տէրն ալ երբոր Անծանորհը միայն դիմքը երեցըներ . և ասոր վրայ զարմանալու չէ , բնըու որ ան օնադաւորին քաջամարտիկ զօրականն է : Բայց կը կարծեմ որ դուն օներահաւատին ու օնադաւորին քաջամարտիկ զօրականն մէջտեղը տարրերութիւն մը կը գնես : Օնադաւորին բոլոր հաստակները իր քաջամարտիկ զօրքերը չեն կրնար ըլլալ , և ալ անոր պէս կրնան պատերազմիւ երբոր փորձուին : Վտածելու վայելուէ բան է որ պղտիկ տղիկ մը Գողիաթին հետ կուուելու ելլէ ինչպէս որ Դաւիթ ըրաւ , կամ մէկ հնձղուկ մը եղի չափ ոյժ ու-

* Ո՞վ կրնայ հաստատ կենալ փորձութեան չար օրը որ ատեն Ա ատարաբութիւնը՝ Կասկածուութիւնն ու խողձահարութիւնը իրենց իշխանին Սատանային զօրութիւնով դրդուած անոր վրայ յարձակին : Արդարեւ նչոք , բայց եթէ ան՝ որ Աստուծոյ ամբողջ զէնքերովը զիշտուուած է . և մինչեւ անդամ ան ատենն ալ այսպիսի դժուարյին թշնամիներուն զօրութեանը դէմ՝ պատերազմիլը դժուարին պատերազմ մըն է քրիստոնէին : Բայց աս է մեր պարծանքը . “Տէրը մեր տեղը պիտի պատերազմիր , ու մէնք պիտի լուռ կենանք” + պէտք է որ լուռ կենանք մեր անձին պարծանք մը ընծայելու կողմանէ , զիտնալով որ մեր բուն թշնամիները մեր անձերն են , և թէ աւելք կը յաղթենք ամեն ասանց՝ միայն Վնով որ մեզ սիրեց : Հասկ . լ . 37 :

Նենայ : Ամանք դօրաւոր են՝ ոմանք տկար + ոմանք շատ հաւատք ունին՝ ոմանք քիչ + աս մարդը տկար մէկն էր, և անոր համար աղէկ դէմ շըրաւ :

Յուստիքց . Երանի՛ թէ Անծանորհն ըլլար անոնց բոնածը :

Վրիտոփիոնու . Տօէ որ ինք ըլլար, կարելի է որ շատ դժուարութիւն պիտի քաշէր : «Բանզի պէտք է որ քեզի ըսեմ , որ թէպէտ Անծանորհը աղէկ վարպէտ է իր զէն-քերը բանեցընելու , և քանի որ իր սուրովը հեռու կը պահէ անոնք՝ աղէկ բան տեսած է և աղէկ բան կընայ տես-նել , բայց թէ որ անոնք իրեն մօտ գտն , մինչեւ անդամ՝ Ալատարութիւնը՝ Կամկածոսութիւնը և կամ միւսը , շատ հաւանական է որ գետինը պիտի զարնեն զինքը : Եւ երբոր մէկ մարդ մը գետին իյնայ , ի՞նչ կընայ ընել :

Ով որ Անծանորհին երեսը աղէկ մը կընայի , պիտի տեսնէ ան վէրքերուն և կտրածներուն նշանները , որոնք յայտնի ապացոյց պիտի ըլլան իմ ըսածիս : Վակէ զար-մանալին քեզի ըսեմ , անդամ մը ևս լսեցի որ կ'ըսէր , (և ան ալ կուին մէջ ,) Անչեւ անդամ կեանքին ալ յոյսեր-նիս կտրեցինք : Աս շարաճճի սրիկաներն ու իրենց ընկեր-ները ինչպէս հեծել ու ողբալ և աղաղակել տուին Դաւ-

* Ով «Բրիստուի հօտին գառնուեկները , աղէկ միտքեր-նիդ առեք ասիկայ դուք՝ որ քիչ զիտութիւն ունիք , ու հաւատքնիդ տկար է : Սմեննին մի՛ կարծէք թէ Սու-տուած՝ որուն որ կը հաւատաք , ու Փրկիչը՝ որուն որ կը հետեւիք , խատասիրս տեր մը ըլլայ՝ որ ձեր կարողութենէն աւելի բան ինդրէ ձենէ : Երբոր ինք ձենէ ծառայութիւն մը կը խնդրէ , զօրութիւն ինսդրեցէք իրմէն : «Բրիստո-սէն յուսացէք բոլոր զօրութիւնն ու կարողութիւնը՝ ամեն բարի զործքերուն համար + որչափ որ իրմէն ընդունիք՝ այնչափ իրմալ պիտի անիք , ու անձերնիդ իրեն պիտի ընծայէք :

ւիթին : « Աաև Եման Եղբահացին , Առով + ձը + ու Եղեկիա ալ որոնք թէպէտ և իրենց օրովը քաջ զօրաւ կաններ էին , սակայն պարտաւորեցան բոլոր զօրութէամբ աշխատիլ , երրոր անոնք իրենց վրայ յարձակեցան . և իրենց ան քաջութիւնովն ալ տակաւին շատ ծեծ կերան աւ նոնցմէ : Անդամ մը գիտրոս ալ ուղեց երթալ փորձ ընել թէ ինչ կրնայ ընել . սակայն թէպէտ և ունոնք իրեն համար առաքելոց իշխանն է կ'ըսեն , բայց անոնք այնպէս վիճեցան իր հետը՝ որ վերջապէս չնչին աղջիկէ մը վախցուցին զինքը :

Ապէտ 'ի դատ' իրենց թագաւորը իրենց սուլելու ձայնը լսելու չափ մօտ է + ան ձայններնին լսելու չափ բնաւ չհեռանար : Եւ թէ որ երբէք բաներնին գէշ երթայ , ինը թէ որ կարելի է , կու դայ անոնց օգնելու : Անոր կը վայելէ Նեխաթանին վրայով ըսուածը . թէ « Վնոր վրայ յարձակողին սուրը չդիմնանար , ոչ ալ նիզակը զեղարդը ու զրահը : Երկաթը յաբողի պէս է անոր առջնը , ու պղինձը փտած վայտի պէս : Աղեղին նետը զանիկոյ լիախացըներ . պարսպարերը անոր գէմ մղեղի կը դառնան : Պահակները շիւղերու տեղ կը սեպէ + տէղին հօձալը ծառը կ'ընէ » : ՀՅու . խա . 26-29 : Ուստի մէկ մարդ մը ի՞նչ կրնայ ընել ան ատենը : Ճշմարիտ է՝ որ եթէ մէկ մարդ մը Յորին ըսած ձին ունենայ՝ ու վարպետութիւն և քաջութիւն ունենայ անոր վրայ հեծնելու , նշանաւոր բաներ կրնայ ընել : « Քանզի անիկայ « և ովիտի մէջ գետինը կը փորէ , ու իր զօրութէամբը կը դուարձանայ . սպառագէնը դիմաւորելու կ'ելլէ . երկիւզը ծաղը կ'ընէ , բանէ մը չվախնար , ու սուրին երեսէն չդառնար : « Աետերը անոր վրայ կը սուլեն , նաև վայըուն նիզակը ու գեղարդը + կատաղութէամբ . ու բարկութէամբ գետինը կը կըլէ , ու փողին ձայնը լսելուն՝ չկրնար ինքզինքը զսպէլ » : ՀՅու . լժէ . 21-24 :

Բայց մենք՝ հետեւակ մարդիկ՝ ամենելին չվասփաքինք թշնամնոյ մը գէմն ելելու, ոչ աւ պարծենանք թէ մենք լաւաղոյն կրնայինք բան տեսնել երբոր ուրիշներուն յաղ-թուիլը լսենք, ոչ աւ մեր քաջութեանը վրայ մտածելով ուրախանանք • քանզի սովորաբար այսպիսիներուն բանը խիստ գէլ կ'ըլլայ երբոր փորձուին * : “Եայէ՛ Պնտրոսը որն որ առաջ յիշեցի • ինք մեծաբանութիւն կ'ընէր • այն՝ կը հպարտանար • ու ինչպէս որ իր փառամուլ միտքը խօսել կու տար իրեն՝ լաւաղոյն բան պիտի տեսնէր ու բու-լոր մարդոցմէ աւելի պիտի դիմանար իր Ալարդապետին համար • բայց ով այնչափ նուաճեցաւ ու յաղթուեցաւ աս չարաճախներէն՝ որչափ որ ինք :

Ուստի երբոր կը լսենք թէ Յաաղաւորին շխտակ համ-բուն վրայ այսպիսի գողութիւններ կ'ըլլան, երկու բան կը վայլէ մեզի ընել :

“Եայն՝ սպառապինուած դուրս ելել, և անպատճառ վա-հան մը առնել հետերնիս • վասն զի՞ արդարե՛ թէ որ ա-նիկայ պահաս ըլլայ, թշնամին ամենելին չվախնար մենէ : Վնոր համար ան որ աս բաներուն մեջ վարպետ եր՝ ըստ, և Ամէն բանին վրայ Հաւատրին վահանը առէք, որով կարող պիտի ըլլաք չարին ամէն կրակոտ նետերը մարե-լու” : Երկու դ. 16 :

Երկրորդ՝ աղէկ է ևս որ Յաաղաւորին մեզ պաշտպանող

* Անը հաւատակից ընկերներուն իյնալը արժան չէ որ մեզ հպարտութեամբ փքացընէ, կամ մեզի պատճառէ խորհիլ՝ որ եթէ մենք անոնց տեղն ըլլայինք, լաւաղոյն պիտի փարուէինք : Քանզի չնք դիտեր թէ Ա ասոա-սրտութիւնը՝ Ասկածոսոսութիւնն ու Խոշնահարութիւնը ինչպէս ըւտով մեր ներսի դին զլուխ պիտի վերցընէին, մեր վրայ պիտի յարձակէին, ու մեր մխիթարութիւննե-րէն մեզ պիտի մերկացընէին՝ ու մեր ուրախութիւնները կողուալուէին :

առաջնորդ մը ուղենք + մանաւանդ թէ խնդրենք որ ինք
մեր հետը դայ : Ասիկայ ուրախացուց Դաւիթը երբոր
ինք Մահուան Ծուքին Չոբին մէջն էր + ու Մովես աւե-
լը ուղեց իր եղած տեղը մեռնիլ, քան թէ մէկ քայլ մը
առաջ երթաւ առանց իր Աստուծոյն : Եփս + լդ + 15 :
Ով եղբայր իմ, թէ որ ան մեր հետը երթաւ հաճի, աւ
ի՞նչ վախ ունինք հաղարաւոր թշնամիներէն՝ որոնք մեր
գէմը պիտի ելին : Ատալ + գ + 5-8 : իէ + 1-3 : Բայց
առանց անոր ամեննեին բան մը չենք կրնար ընել* : Յովհ +
ժէ + 5 :

Իմ մասին՝ ասկէ առաջ ևս ինքնս աս պատերազմնն մէջ
գտնուեցայ + և թէպէտ Ամենաբարուոյն բարերարութիւ-
նովը ողջ մնացի՛ ինչպէս որ կը տեսնես, բայց իմ քաջու-
թեանն վրայ չեմ կրնար պարծենաւ : Ուրախ պիտի ըլ-
լամ՝ թէ որ մէյմըն աւ այսպիտի դիպուածի մը չպատա-
հիմ + թէպէտ և կը վախնամ՝ որ տակաւին բոլոր վտանգ-
ներէն աղատած չենք : Բայց որովհետեւ առիւծն ու արձը
դեռ զիս չփառատեցին, կը յուսամ՝ որ Աստուծած և և իցէ
անթլիատ Փղղոսացի՛ աւ պիտի աղատէ զիս :

Ու ասոր վրայ Կրիստիանոս մկնեց երգել.

Ով խողալի օճերահաւասա՞ աւազակայ մէջ ինկար,
Վեզ բռնեցին հանուեցուցին՝ մերի և թշումո դուն եղար,

* Բայց նրանի հակառակ է ասոր՝ իրենք զիրենք ձանա-
պարհորդ խոստովանողներէն ումնաց ընթացքն ու վարքը,
որոնք կամաւորապէս ու աղատաբար Աստանային սահմա-
նին մէջ կը պտըտին, ու մարմնաւոր բերկրութիւններով
և մեղանչական գրօսանիներով իրենց հաճոյքը կը կատա-
րեն : Այսպիսիները պարզինաց խօսքով յայտնի կը ցու-
ցընեն թէ Աստուծոյ ներկայութեանը չեն փափաքիր, հա-
պա անոր իրենցմէ հեռանալուն + բայց մէկ օր մը պիտի
դայ՝ որ այսպէս բաներուն համար արսափելի մնածու-
թիւններու մէջ պիտի ձգէ իրենց մազերը :

Միաք բեր թէ ով որ հաւասար ու շատցընէ հաւատքը ,
Հազարները պիտի յաղթէ , թէ ոչ հազիւ երեքը :

Այսպէս անոնք յառաջ կ'երթացին՝ ու Տգիտութիւնն
անոնց ետևէն կ'երթար : Եւ այնչափ դացին՝ մինչև որ
տեղ մը եկան ուր որ ուրիշ ճամբայ մը կը խառնուէր իւ-
րենց ճամբուն . ու կը թուէր թէ իրենց երթալու ճամ-
բուն պէս շխտակ կ'իյնար * . աս տեղս չէին դիտեր թէ
երկու ճամբուն որը բռննն , քանզի երկուքն ալ իրենց
առջեւը շխտակ կ'երեւէին . վասն որոյ լոիկ կայնեցան հոն
որ մտածեն : Եւ երբոր ճամբուն վրայով կը մտածէին ,
մարդ մը սև մարմնով բայց շատ ձերմակ հանդերձ հագած
իրենց եկաւ , ու հարցուց թէ ինչքւ հոն կայներ են :
Պատասխան տուին՝ թէ իրենք Նրկնային Քաղաքը կ'եր-
թան , բայց չեն դիտեր թէ աս ճամբաներուն որը բռննն :
Խմ ետևէ ս եկէք՝ ըստու մարդը , իմ զացած տեղս ալ ան-
է : Այսպէս ասոնք անոր ետևէն դացին ան ճամբէն՝ որ
նոյն տեղը իրենց ճամբուն կը խառնուէր , որն որ իրենց
երթալու բաղձացած քաղաքէն քիչ քիչ այնպէս դարձուց
զիրենք , որ քիչ ատենին մէջ երեսնին բոլորովին դարձաւ
անկէ . բայց սակայն իրենք տակաւին անոր ետևէն կ'եր-
թացին : Բայց շատ չանցած յանկարծ անիկայ անոնց եր-
կուքն ալ որոպայթի մը մէջ ձգեց , որուն մէջ երկուքը
այնպէս խառնուեցան որոպայթին հետ , որ ինչ ընելիքնին
չէին դիտեր † . ան միջոցին ան ձերմակ հանդերձը սև մարդ

* Աս ճամբան՝ որ շխտակ ճամբուն պէս ուղիղ կ'երեար ,
կը ցուցընէ աւետարանական պարզ ճանապարհէն գովելի
երեսիթ ունեցող ու սակաւ առ սակաւ խոտորող ընթացք-
ները , թէ վարդապետութեամբ և թէ դործքով :

† Օգուշանալ պէտք է մեղի սպիտակ դեէն՝ սեէն դպու-
շանալու չափ . ինչու որ ինքը Սատանան ալ լուսաւոր
հրեշտակի կերպարանք վրան կ'առնէ , ու իր պաշտօնեաւ

դուն կոնակէն ինկաւ : Վե ատենը տեսան իրենց հւը ըլ-
լալը • ուստի ատեն մը աղաղակելով մնացին հռն , քանզի
իրենք զիրենք չէին կրնար հանել անկէ :

Են ատենը Վրխատիանուն բաւ իր ընկերին . Հիմա ևս
զիս սխալմունքի մէջ կը տեսնեմ : Չէ՞որ Հովհեները պա-
տուիրեցին մեզի Ծողոքորդողէն զայց կենալ : Է Ասրակ :
Ժամանակ՝ 13, 14 :

Յառագիտական կամքուն վրայով ստորագրու-
թիւն մըն ալ տուին մեզի , որ աւելի ստուգութեամբ
դանենք անիկայ . բայց մենք անիկայ կարդալու մոռցանք ,
ու մենք չենացանք բռնաւորին ճամքէն : Այսպէս անոնք
որոգայթին մէջ իրենք իրենց վրայ սուդ ընելով մնացին :
Աերջը լուսաւոր մը տեսան որ դէպ 'ի իրենց կու դար , ու
բարակ չուաններէ խարազան մը ունէք իր ձեռքը * : Խըր-

ներն ալ արդարութեան պաշտօնեաներուն կը նմանին . Է
Ասրակ : Ժամանակի մողակալի մեղաւորները զեղեցիկ
կարծիքի մը մէջ կը ձգեն թէ՝ արդարութիւն գործած են ,
մեծ յառաջադիմութիւն ըրած են ու մեծ ժառանգութիւն-
ներու հասած են , և մինչեւ անգամ թէ իրենք իրենց մէ-
կատարեալ են , մեղքէ ազատ են , միայն սիրով լցուած
են , եւ : Վառնը են ճերմակ հանդերձ հաղած սե մար-
դիկը :

* Վս լուսաւորը կը ցուցընէ ան հեղահամբոյր Տէրը՝ Աս-
տուծոյ Առւրը Հողին , Վրխատոսի ժողովրդոցը առաջ-
նորդն ու պահապանը : Խըրոր անոնք կը մնլորին ու կը
խոտորին Յիսուսէն՝ որ է ճանապարհը , ու կը դառնան
իրմէն՝ որ է ճշմարտութիւնը , Առւրը Հողին իր տուած
խըրատին՝ ու մեղքը ճանեցընելու գաւազանովը կու դայ , որ
Հողիները իրենք զիրենք արդարացընող հպարտութեանն
ու յիմարութեանը համար ծեծելով Վրխատոսի դարձընէ ,
բոլորովին անոր յուսալու՝ միայն անոր ապաւինելու , ու
քաղցր ընկերութեամբ անոր հետ քայիելու :

որ իրենց եղած տեղն եկաւ ան , հարցուց անոնց թէ ուրիշ եկան , և ի՞նչ կ'ընեն հոն : Պատասխան տուին աշնոր՝ Աննք ողբրմելի ճամբորդներ Ենք որ Ախօն լեռը կ'երթայինք , բայց ճամբաներնես դուրս ելանք ճերմակներ հագած մե մարդու մը առաջնորդութիւնովը , որ մեզի ըստ թէ Խմ ետեւէս եկեք , ես ալ հոն կ'երթամ : Ան ատենը խարազանին տէրն ըստ . Ասիկայ Ըողոքորդողն է , սուտ առարքեալ մը , որ ինքզինքը լուսաւոր հրեշտակի մը կ'երպարակը խօթեց : Այսպէս ինք ան որոդայթը պատեց , ու մարդիկը դուրս հանեց : Յետոյ ըստ անոնց . Ետեւէս եկեք , որ ձեզ նորեն ձեր ճամբուն դնեմ : Այսպէս ետ տարաւ գանոնք ան ճամբան՝ որն որ ձեր էին Ըողոքորդողին հետեւելու համար : Ան ատենը հարցուց անոնց ըստը . Ո՞ւր պատկեցաք դուք երեկ զիշեք : Պատասխան տուին , թէ Հովհաններուն քովք՝ Օռուարձակի Լեռներուն վրայ : Յետոյ հարցուց անոնց՝ թէ Հովհաններէն ճամբուն ստորագրութիւնը չափօք : Պատասխան տուին , Այս : Բայց երբոր ճամբուն վրայով տարակոյս ունեիք՝ չհանեցի՞ք ու չկարդացի՞ք ձեր զիրը , ըստ : Պատասխան տուին թէ Չե : Հարցուց Լուսաւորը Ինչու : Բայն իրենք , Առացանք : Ասկէ զատ հարցուց ես , Հովհանները չափապեցի՞ն ձեզի Ըողոքորդողին դդոյլ կենալու : Այս , բայց չկարծեցինք որ աս անուշեղու մարդը անիկայ էր ըսին :

Ան ատենը երազիս մէջ տեսայ որ համան ըրաւ անոնց որ պատկին + ու երբոր պատկեցան՝ աղէկ մը ծեծեց անոնք , որ սորվեցընէ անոնց ան ճամբան՝ որուն մէջ պէտք է քալին . ի Անոց + դ . 25 , 27 . ու երբոր կը ծեծէք զանոնք , կ'ըսէք . Ես՝ անոնք որ կը սիրեմ , կը խրատեմ . ուստի նախանձաւոր եղիք , ու ապավարէ : Յայտ + դ . 19 : Ասիկայ լմնալուն՝ հրաման ըրաւ անոնց իրենց ճամբան երթալ , ու Հովհաններուն իրենց ապապրած ուրիշ

բաներուն ալ աղէկ զգուշանալ : Այսպէս անոնք չնորհակալ եղան իրեն՝ ըրըր իր մարդասիրութեանը համար , ու սկսեցին շխտակ ճամբառն մեջ հանդարտութեամբ առաջ երթալ ու երգել :

Երդ դուք որ ճամբառն մեջ կը քալէք ,
Ճամբէն ելլողին վիճակը տեսէք ,
Մնելանելի ցանցի մեջ ինկան ,
Ինչու որ բարի խրատը մնոցան .
Եւ թէակէտ մերջը անկէ դուրս ելան ,
Բայց կը տեսմէք որ սասարիկ ծեծ կերան .
Ուստի ասիկայ միտքերնիդ առէք ,
Ու ճամբառուդ մեջ միշտ զցոյշ կեցէք :

Հիմա ատենէ մը ետե հեռուէն մէկը տեսան՝ որ կամաց կամաց ու մինաւոր կու դար արքունի ճամբայէն իրենց դէմն ելլելու : Ան ատենը Կրիստիանոս ըստ իր ընկերին . Վհամ մարդ մը կայ՝ իր կոնսակը Ալիօնին դարձուցած , ու կու դայ դէմերնիս ելլելու :

Յառաջ . Աը տեսմէմ զբնոքք . Էկոր հիմա մենք մեղի զգուշութիւն ընենք , որ չըլայ թէ ան ալ շողորորդող մը ըլլայ : Այսպէս անիկայ հետոցիտէ մօտեցաւ ու վերջապէս եկաւ հասաւ անոնց : Իր անունն էր՝ Անաստուած , ու հարցուց անոնց թէ նըր կ'երթան :

Կրիստիանոս . Աիօն ընոք կ'երթանք մենք :

Ան ատենը Անաստուածն սկսեց բարձրաձայն խնդալ :

Կրիստիանոս . Կնէ կը նշանակէ ատ քու խնդալ :

Անաստուած . Անոք համար կը ինդամ որ կը տեսմէմ թէ ինչ տղէտ մարդիկ եք դուք , որ այսպէս դժուարին ճամբորդութիւն մը վրանիդ առեր եք , ու հաւանականաբար ձեռքերնիդ ուրիշ բան պիտի չսնցնի բայց հոդ տարած բաներնուդ համար քաշած աշխատութիւննիդ :

Կրիստիանոս . Ինչո՞ւ այդպէս կ'ըսես , մարդ , կը կարծէս որ պիտի չընդունուի՞նք :

Վաստակուածք . Ընդունուիլ . բոլոր աշխարհիս մէջ
այնպէս տեղ մը չեայ՝ որուն վրայ որ դուք կ'երազեք :

Քրիստիանոս . Բայց հանդերձեալ աշխարհին մէջ
կայ :

Վաստակուածք . Երբոր ես իմ երկրիս մէջ իմ ընակա-
րանս էի , աս ձեր հաւատածին պէս լսեցի , ու լսելով
համբայ ելայ տեսնելու . և աս քանի տարի է որ ան քա-
ղաքը կը վնտուէի , բայց աւելի բան մը չպայց քան որչափ
առջի օրը որ համբայ ելայ : Ժառ . ժ . 15 :

Քրիստիանոս . Անդ լսեցինք ալ հաւատացինք ալ թէ
պյապէս մէկ տեղ մը կայ :

Վաստակուածք . Ես ալ իմ տունս եղած ատենս թէ որ
չհաւատացի՝ պյապէս տեղ չէի դար վնտուելու . բայց բան
մը չպանելով , (որ մինչեւ հիմա պիտի գտնէի ես թէ որ
պյապիսի տեղ մը զանուելու բլար , քանզի ես ձենէ հեռ
ուու դացի անիկայ վնտուելու ,) նորէն ես կ'երթամ , ու
պիտի նայիմ ես զիս հանգստացընել ան բաներով որ ա-
ռաջ ես ան յոյսերուն համար մէկդի ձգեցի , որոնք որ հի-
մա կը տեսնեմ թէ չկան :

Քրիստիանոս . (Այս ատենը Քրիստիանոս իր ընկերին
Հուսալիցին ըսաւ .) Ճշմարի՞տ է արդեօք ինչ որ աս մար-
դը կ'ըսէ :

Քուսալիք . Օգոյշ կեցիր , ասիկայ շողորորդողներուն
մէկն է : Ախարդ բեր թէ արդէն անգամ մը քանիի ե-
ղաւ մեզի աս տեսակ մարդոց ականջ դնելնիս * : Ի՞նչ ,

* Տեսէք թէ ի՞նչպէս զանազան թշնամիներով շրջապա-
տած ենք : Ըստորորդողէն ազատնենուն պէս՝ յայսնի
անաստուած ու ցովիակեաց ծաղրաբանի մը պատահեցան ,
որ իրաւ ինք համբորդութեան ելեր էր՝ ու կը պարծենար
ալ որ անոնցմէ շատ հեռու դացեր էր , բայց ահա ամէն բա-
նէն երես գարձուցեր էր . և թէպէտ քանի տարի ինք Ախօն
Լեռը վնտուեր էր , սակայն հիմա կը ցուցընէ որ ոչ հա-

Ոիօն 1 եռ չկայ : Օշուաբճալի 1 եռներէն չտեսմնք անքաղաքին դուռը : Կաև մենք հիմա հաւատորիլ քալելու չե՞նք : Ի Արքալ . ե . 7 : Քալէ յառաջ երթանք , չըլլայ որ խարազանով մարդը կրկին մեղի հասնի : Դուն պարտաւոր եիր աս բանին վեց ինծի մեկ դաս մը սորվեցը նել : Ե՛զբայր իմ , դադարէ կ'ըսեմ անոր ականջ դնելէն , ու մեր հոդիներուն փրկուելուն հաւատանք մենք : Աբբ . յ . 39 :

Վրիստիանոս : Ե՛զբայր իմ , չէ թէ մեր հաւատորին Ճշմարտութեանը վրայ ես ինքնս տարակցոյ ունենալուս համար աս խնդիրը քրի քեզի , հապա քեզ փորձելու՝ և քու սրտիդ անխարդախութեանը պտուղը քինէ քաղելու համար : Դոկ աս մարդուն վրայով՝ զիտեմ ես որ ինք աս աշխարհիս աստուծմէն կուրացած է : Անէք մեր համբան երթանք , զիտնալով որ մենք ան Ճշմարտութեանը վրայ հաւատոր ունինք , ու Ա Ամէն ասութիւն Ճշմարտութենէ չէ : ա՛ Յանձ . ի . 21 :

Յուստիք . Ուրախ եմ ես հիմա Աստուծոյ փառաց յուսով :

Այսպէս անոնք մեկը դարձան ան մարդէն , և ան անոնց վրայ խնդալով իր համբան դնաց :

Ասկէ ետեւ երազիս մէջ տեսայ որ անոնք յառաջ դացին՝ մինչեւ որ մեկ երկիր մը եկան , որուն օդը բնականաբար քուն կը բերէր մարդուն , թէ որ անոր սովորած չէր : Ու աս տեղը Յուստիքը քունը կոխելով սկսեց թուլալ ծանրընալ . վասն որոյ Վրիստիանոսին ըսաւ . Ես հիմա

ւատը ունի և ո՛չ յօյս , հապա ամեն բան խարէութիւն համարելով կը ծաղրաբանէ : Ասիկայ մորէ անցընելն անդամ սարսափելի բան է : Աստուծոյ ի՛նչ յատուկ ողորմութիւնն է որ մեկը հաւատորի ու յարատեռութեան մէջ պահուի , և ուրացողներուն ծաղրաբանութիւնը բանի տեղ չհամարի :

կը սկսիմ այնպիսի քուն ունենալ , որ հազիւ թէ կրնամ՝ աչքերս բաց բռնել . Եկոր պառկինք հոս , ու թեթև քուն մը առնենք :

«Բրիտանոս . Քառ լիցի , որ ըսլայ թէ քնանալով՝ ալ չարթընանք :

Յուստից . Խնչու համար , և դրայր իմ , աշխատող մարդուն անոյշ է քունը . կարելի է որ կազդուրինք թէ որ թեթև քուն մը առնենք :

«Բրիտանոս . Միարդ չես բերեր որ Հովիւներուն մէ կը մեզի ապազրեց որ Ամիսարդեալ Երկրէն զգուշանանք : Խնք աս խօսքով մեզի ըսել կ'ուզեր որ քնանալն զգոյշ կենանք . ուրեմն չքնանանք ինչպէս ուրիշները , հապա արթուն ու զգասա ըլլանք * : ան թափ . և . 6 :

Յուստից . Ալ խօսակովանիմ որ յանցաւոր եմ . ու թէ որ ևս մինակ ըլլայի , քնանալով մահուան վտանգին մէջ պիտի իյնայի . Ալ տեսնեմ որ խմատունին ըսածը ճշմարդան է , թէ Երկուքը մէկն աղէկ է : Ճառ . դ . 9 : Վինչ աս տեղս քու բնծի ընկեր ըլլալզ Աստուծմէ ողորմութիւն մը եղաւ . ու դուն քու աշխատութեանդ համար աղէկ վարձը մը պիտի առնես :

Սրդ՝ ուրեմն քուներնիս կոխելը աս տեղս արդիւլու համար , աղէկ խօսակցութիւն մը ձեռք առնենք , ըսաւ «Բրիտանոս :

Դոլոր սրտովս , ըսաւ միւսոք :

«Բրիտանոս . Ո՞ւրկէ սկսինք :

Յուստից . Ուրկէ որ Աստուծած սկսեց մեզի : Բայց թէ որ կ'ուզես դուն կը սկսի՞ս :

* «Բրիտանոնեայ եղայր , զգնյշ կեցիր Ամիսարդեալ Երկրին վրայ քնանալն : Երբոր ամէն բան դիւրին շիտակ ու աղէկ կը յառաջանայ , հոգիներնիս կը պառկին կը քնանան : Աստուծոյ խօսքին մէջ շատ զգուշութիւններ կը արտաբն մեղի հոգեսոր թմբութեան դէմ :

• ՎՐԵԿԱՊՀԱՆՈՒ • ՎՐԵՎԻ առաջ աս երդը պիտի երգեմ :

Երբ սուրբերը քունով թմրին թող աս տեղ գան լսելու ,
օմէ ի՞նչպէս աս ճամբորոշները կը խօսակցին իրարու .
Ճապա իրենք աս երկուքէն խոհեմարար թող սովորին ,
Բաց և արթուն պահել իրենց քնով թմրած աչքերնին ,
օմէ որ աղէկ կառավարուի ընկերութիւնը որբոց ,
օմէ իրենք արթուն կը պահէ ընդդէմ բռնութեան գժոխոց :

Եետոյ Վրիստիանոս սկսեց , ու ըստա . ՎՐԵՎԻ խնորի
մը պիտի հարցընեմ : ՎՇՆՉՊԷՏ եղաւ որ նախ և առաջ
միտքդ դրիր աս քու հիմակուան ընթացքդ բռնել :

Յուստովց . Ըսել կ'ուզեմ՝ թէ ի՞նչպէս եղաւ՝ առաջ
իմ հոգւոյս բարելաւութիւնը վինտուելու :

• ՎՐԵԿԱՊՀԱՆՈՒ • Այս , աս կ'ուզեմ ըսել :

Յուստովց . Երկար ատեն մնացի ևս մեր վաճառանոցին
մէջ տեսնուած ու ծախուած բաներուն զուարձութեանը
մէջ , որոնք այնպիսի բաներ են՝ որ կը հաւատամ՝ որ
եթէ ևս տակաւին անոնցմով մնացած ըլլայի , հիմա աւ
նոնք կորստեան ու կործանման մէջ զիս թաղած պիտի ըլլ
ային :

• ՎՐԵԿԱՊՀԱՆՈՒ • ՎՇՆՉ բաներ են անոնք :

Յուստովց . Վշաարհիս բոլոր զանձերն ու հարստու-
թիւնները : Կատ կը զուարձանայի ևս զեղսութիւնով՝
անտակութիւնով՝ արբեցութիւնով՝ հայհցութիւնով՝
ստութիւնով՝ անմաքրութիւնով՝ Աիրակին չլիշելով՝ և
ամէն ան բաներն ընելով՝ որոնք հողին կորսընցընելու
պատճառ կ'ըլլան : Բայց աստուածային բաները լսելով
ու անոնց վրայ մնածելով՝ որոնք շիտակը քենէ լսեցի
ի՞նչպէս նաև սիրելի Ճաւատարիմէն ալ , որ Ունայնու-
թեան Տօնավաճառին մէջ իր հաւատին ու առաքինի կին-
ցաղավարութեանը համար սպաննուեցաւ , վիրջապէս
տեսայ որ աս բաներուն վերջը մահ է , ու աս բանե-
րուն համար Կատուծոյ բարկութիւնը կու դայ անհնազան-

դութեան որդւոց վրայ : Հոռով . կ . 21-33 : Եղիս . է . 6 :

Վրիսոգիանոս . Եւ ան ատենը իսկոյն կատարելապէս խելքող պառկեցամբ պառը :

Յուսուցիք . Ձե՛ւ . չէի յօժարեր իսկոյն ձանշնալ ոչ մեղքին գեշութիւնն ու ոչ անիկայ ընելուն համար ետեւէն եկող դատապարտութիւնը . բայց երրոր առաջ իմ միաբա սկսեց սարսիւլ Վատուծոյ Խոպավը , կը ջանայի անոր լուսին դէմ աչքերս դոցել :

Վրիսոգիանոս . Բայց ի՞նչ էր պատճառը որ Վատուծոյ օրհնեալ հոգւոյն քու վրադ ըրած առաջն ներգործութիւններն այսպէս բանեցուցիր դուն :

Յուսուցիք . Պատճառներն ասոնք էին : « Ամի՞ չէի գիտեր թէ ասիկայ Վատուծոյ իմ՝ հոգւոց վրայ ըրած դործն է : Խնաւ մնոքէս չէի անցուցած թէ Վատուծած առաջ մեղառորին դարձը կը սկսի մեղքին վրայով արթնութիւններ տալով անոր : Երկրորդ՝ մեղքը տակաւին շատ անուշ էր իմ մարմնոյս , ու յօժար չէի անիկայ ձղելու : Երբ բորդ՝ չէի գիտեր թէ ի՞նչպէս իմ առջի բարեկամներէս զատուիմ , անոնց ընկերութիւնն ու դործքերը շատ բաղձալի էին ինծի : Չորրորդ՝ ան ժամերը՝ երրոր իմ մեղառոր ըլլալուս ձանաչումը կու դար վրաս , այնպէս ձանձրալի և այնպէս սիրս դողացընող ժամեր էին , որ մինչև անդամ իմ սրտիս մէջ անոնց յիշատակութիւնն ընելն ալ չէի կընար տանիլ :

Վրիսոգիանոս . Ուրեմն՝ ինչպէս որ կ'երեսյ , երբեմն երբեմն քու սրտիդ նեղութիւններէն կ'աղատէիր :

Յուսուցիք . Այսու անշուշտ . բայց նորէն անիկայ իմ միաբա կու դար + և ան ատենը առաջուան պէս՝ մանաւանդ թէ անկէ ալ զէլ կ'ըլլայի :

Վրիսոգիանոս . Խնչու համար , ի՞նչ էր որ քու մեղքերդ կըկին քու միաբա կը բերէր :

Յուստակից . Ըստ բաներ . ինչպէս՝

Ե . թռէ որ ճամբան ճշմարիս հաւատացեալի մը պատահէի , կամ՝

Ի . թռէ որ մէկուն Վասուածաշունչ կարդալը լսէի , կամ՝

Պ . թռէ որ գլուխս ցաւելու սկսէր , կամ՝

Դ . թռէ որ դրացիներուս մէկուն հիւանդ ըլլալը լսէի , կամ՝

Ե . թռէ որ մեռելի մը համար զարնուած զանդակին ճայնն առնելի * , կամ՝

Զ . թռէ որ իմ մեռնիլս մտածէի , կամ՝

Լ . թռէ որ լսէի թէ յանկարծակի մահ պատահեր է ուրիշներուն :

Բ . Բայց մանաւանդ երբոր իմ վրայովս մտածէի թէ շուտով դաստատանի երթալու եմ :

Վրիստիանոս . Եւ միշտ դիւրութեամի՞ կրթնայի՞ ը խըդը մտանքին խայթոցէն ազատիլ , երբոր աս կերպերուն մէկու վը անիկայ քեզ կը խայթէր :

Յուստակից . Ձէ , բնաւ . քանդի ան ատենը ամուր մը ձեռոր կը զարնելին անոնք իմ խղճմանիքիս + և ան ատենը թէ որ միայն մորքս անցընէի մեղքին դառնալ , (թէպէտ միուքս անոր դէմ դարձած էր ,) կը կնապատիկ տանջանք կ'ըլլար ինծի ան :

Վրիստիանոս . Ուրեմն ի՞ չ կ'ընէիր ան ատենը :

Յուստակից . Ալ մոտածէի թէ պէտք է իմ վարքս շոկէլ . հապա թէ չէ կ'ըսէի մորքս , անշուշտ պիտի դաստապարտուիմ :

Վրիստիանոս . Եւ չանք ըրի՞ անիկայ շոկէլու :

* Վահիկայ Վնդղիոյ մէկ սովորութիւն մըն է , որ երբոր մէկը մեռնելու ըլլայ , յատուկ եղանակով զանդակ կը զարնուի :

Յառասովց . Այսուհետեւ ու փախայ ալ ոչ միայն մեղքերէն՝ հակա մեղանչական ընկերութենէ ևս , ու ես զիս քրիստոնէական պարտաւորութիւնները կատարելու տուի . զոր օղինակ՝ աղօթելու , կարդալու , մեղքի համար լալու , իմ ընկերիս՝ իրաւը խօսելու , և : Աս բաներն ըրբ՝ հանդերձ շատ ուրիշ բաներով , որոնք երկար կ'ըլլան աս տեղապատմելու :

Քրիստիանու . Եւ ան ատենը դուն քեզ աղէկ ըլլալ կարծեցի՞ր :

Յառասովց . Այսուհետեւ մը , բայց վերջը ինքողինքս բարեկարգելու համար բոլոր ըրածներուու հակառակ իմ նեղութիւնս կրկին գլորելով վրաս եկաւ :

Քրիստիանու . Խօնալէս պատահեցաւ ատիկայ , ալ դուն բարեկարգուած ըլլալով :

Յառասովց . Ըստ բաներ կային որ անիկայ իմ վրաս ընթին , մանաւանդ հետևեալներուն նման խօսքերը : “Անք բոլոր արդարութիւնները դաշտանի լաթին պէս է” : Եսույ . կդ . 6 : “Անք օրէնքին դորձքերէն չկրնար արդարանալ” : Գառալ . բ . 16 : “Եջրոր բոլոր ձեզի հրամայուած բաները ընէք , ընէք թէ Անք անպիտան ծառաներ ենք” : “Եսու . ժէ . 10 : Եւ ուրիշ ասոր նման շատ խօսքեր : Ասկէ սկսեցի ես ինձի այսպէս խորհիլ : Տնէ որ բոլոր իմ արդարութիւններս դաշտանի լաթին պէս է , թէ որ օրէնքին դորձքերէն մարդ չարդարանար , ու թէ որ ամէն բանն ընենուս ետեւ տակաւին անպիտան ենք , ապա ուրեմն յիմարութիւն է օրէնքին միջոցովը երկինք երթալու յուսալը : Եւաև այսպէս ալ մնածեցի : Տնէ որ մէկ մարդ մը հարիւր սկի պարաք ընէ վաճառականին , ու անկէ ետեւ ինչ որ առնէ բոլոր իր առածին ստակը հատուցանէ . բայց տակաւին թէ որ իր հին պարտքը առանց սրբուելու կը կենայ տումարին մէջ , վաճառականը անոր համար կընայ դատաստանի կանչել .

անիկայ՝ ու բանտը դնել տալ, մինչեւ որ իր պարագը վշարէ :

ՎՐԵՍՏԱՆՈՒՄԻՒՄ • Ըստ աղէկ՝ և ասիկայ՝ դուն ի՞նչպէս քու վրաբ յարմարցուցիր :

Յուստություն • Ինչպէս և ինծի այսպէս խորհեցայ : Ես իմ մեղքերովմ Նոտուծոյ յիշատակարանին մէջ շատ պարտաւոր զրուած եմ, և իմ հիմակուան ինքզինքս բարեկարգելս պիտի չվճարէ առ պարագը : Ա ան օրոյ ամէն իմ հիմակուան դիս ուղղելուս վրայ՝ տակաւին պիտի մտածեմ, թէ ի՞նչպէս պիտի ազատիմ ես ան դատապարտութենէն որուն տակը ես զիս ձգեցի իմ առջի մեղքերովմ :

ՎՐԵՍՏԱՆՈՒՄԻՒՄ • Ըստ զեղեցիկ յարմարութիւն • բայց կ'աղաւեմ, շարունակէ քու խօսքդ :

Յուստություն • Ոչի ուրիշ բան մըն ալ որ իմ վլըջն ըրած ուղղութիւններէս մինչեւ հիմա միշտ ինծի նեղութիւն կուտայ, ասիկայ է, որ եթէ իմ հիմակուան ըրած զործքերս զգուշութեամբ նկատեմ, տակաւին կը տեսնեմ՝ որ մեղքը իմ ամենալաւ դործքերուս մէջ ինքզինքը կը խառնէ + այնպէս որ հիմա ստիպուած եմ հետեցընել թէ իմ անձիս և պարտաւորութեանցս վրայ ունեցած իմ առջի յիմարական կարծիքներովս ալ մէկ օրուան մէջ բաւական մեղք դործած եմ զիս դժոխք խրկելու, թէ և իմ առջի վարքս անմեղ ալ եղած ըլլայ :

ՎՐԵՍՏԱՆՈՒՄԻՒՄ • Եւ ան ատենը ի՞նչ ըրիր :

Յուստություն • Ի՞նչ ընեմ • Բ'նչ ընելս չէի գիտեր մինչեւ որ իմ միաբան բացի Հաւատարիմին + ինչու որ աղէկ ծանօթ էինք իրարու : Եւ ան ինծի ըստ՝ թէ մինչեւ որ ձեռք չձգեմ այնպիսի մէկ մարդու մը արդարութիւնը՝ որ ընտանեղանչեց, և իմն և ոչ բոլոր աս մեղաւոր աշխարհի արդարութիւնը կարող է զիս փրկել :

ՎՐԵՍՏԱՆՈՒՄԻՒՄ • Եւ կարծեցի՞ր որ ան հշմարիս կը խօսէր :

Յուսուցիք . Նըրբոր ըուն իմ ըրած ուղղութիւններուս հաւեած ու անոնցմանվ բաւականացած ըլլայի՝ ու ան ատենը ան այսպէս ըսած ըլլար ինծի , յիմար պիտի կոչէի զինքն իր քաշած աշխատանքին համար : Ի՞այց հիմն որ կը տեսանեմ իմ անձիս տկարութիւնն ու իմ ամենալաւ գործքեւ բուս հետ յարող մեղքը , ստիպուած եմ իր կարծիքը ընդունիլ :

Քրիստիանոս . Ի՞այց երրոր ինք քեզի առաջ իմացուց ասիկայ՝ հաւատացի՞ր թէ կը զանուի այսպիսի մարդ մը որուն համար արդարապէս ըսուի թէ ընաւ չմեղանչեց :

Յուսուցիք . Պէտք է խոստովանիմ՝ թէ առջի բերանը օտարուաի բան մը թուեցաւ ինծի ան խօսքը : Ի՞այց իր հետ քիչ մըն ալ խօսակցութիւն և ընկերութիւն ընելէն ետե կատարելապէս հաւատացի :

Քրիստիանոս . Ու հարցուցի՞ր իրեն թէ ովլ է ան մարդ ու , և ի՞նչպէս արդարանալու ևս անով :

Յուսուցիք . Այս . և ինք ըսաւ ինծի թէ Տէր Յիսուսն է , որ Աստուծոյ աջ կողմը կը նստի : Նըր . ժ . 12 : Նւ այսպէս ըսաւ , Դուն պէտք է որ անով արդարանաս , այսինքն՝ հաւատացի ան բաներուն ինչ որ ան իր մարմինին օրերը ըսաւ , ու փայտեն կախուած ժամանակը քաշեց : Հառնչ . դ . 5 : Ասու . ա . 14 : ա Գլետ . ա . 18 , 19 : Հարցուցի իրեն և՛ թէ աստ մարդուն արդարութիւնը ի՞նչպէս կրնայ ան գորութիւնն ունենալ , որ Աստուծոյ առջին մէկ ուրիշը արդարացընէ : Ինքն ալ ինծի ըսաւ թէ անիկայ կարող Աստուած է , և բոլոր ըրածները՝ ու մինչեւ անդամ՝ մահուամին մեռնիլը չէ թէ իրեն համար ըսաւ՝ հասպա ինծի համար . ու անոր ըրածները՝ և անոնց արժ անաւորութիւնը ինծի պիտի համարուի ; թէ որ ես իրեն հաւատամ :

Քրիստիանոս . Եշ ի՞նչ ըրիր դուն ան ատենը :

Յուսուցիք . Հառնչալու դէմ իմ ընդդիմութիւններս

յառաջ բերի . քանզի կը կարծէի թէ ան պիտի չկամնաց զիս փրկելու :

Վրիստիանու . Եւ ատենը ի՞նչ ըստ քեզի Հաւատարիմը :

Յառաջ . Ըստ ինձի թէ Անոր դիմէ ու ան'ս : Ես ալ ըսի թէ յանդնութիւն է ատ բանը : Ան ըստ , Չէ , ինչու որ հրաւիրուած ես իրեն երթալու : Վատի . Ժա . 28 : Անկէ ետև Ծիստւի հրաւիրանաց զիրքը տուաւ ինձի որ քաջալերէ զիս աւելի համարձակութեամիւ երթալու . և ան զրքին վրայով ըստ թէ անոր ամեն մէկ յովոր ու նշանագիրը երկինքէն ու երկրէն ալ հաստատ է : Վատի . իր . 35 : Ան ատենը հարցուցի իրեն՝ թէ երբոր երթամ՝ ի՞նչ պէտք է որ ընեմ . և ինձի ըստ թէ ծնկան վրայ գալով բոլոր իմ սրտովս ու հոգւովս աղաւելու եմ Հօրը՝ որ անիկոյ յայտնէ ինձի : Առաջ . զէ . 6 : Գառու . դ . 10 : Երեմ . իիժ . 12 , 13 : Անկէ ետև իրեն հարցուցի եւ՝ թէ ի՞նչպէս աղաւելու եմ անոր + ու ան ըստ , զնամ , և պիտի զանեն զինքը նորհաց աթոռին վրայ , ուր որ բոլոր տարին կը նատի ներում և թողութիւն տալու անոնց որ իրեն կ'երթան : Երբ . դ . 16 : Ըսի իրեն՝ թէ երբոր երթամ , չեմ զիտեր ի՞նչ ըսեմ . ու ան ինձի ապազրեց որ այսպէս ըսեմ : “ Աստուած , ողորմէ ինձի մեղաւորիս , ու նորհէ որ Ծիստւ Քրիստոսը ճանչնամ ” , և անոր հաւատամ . քանզի կը տեսնեմ որ եթէ անոր արդարութիւնը չըլլայ , կամ թէ ես ան արդարութեանը վրայ հաւատը չունենամ , բոլորովին կորտւած եմ * :

* Աղէկ նկատէ ասիկայ՝ և դըայր : Խնդինքը ճանչցող մեղաւորին զիսաւորաբար վնասուածը արդարութիւն է : Խնդ իր վրայ չունի անիկայ . և ասիկայ զիտէ ինք : Աւ բիմն մէր պիտի զանուիք : Վիսյն Քրիստոսի վրայ : Ասիկայ Աստուածմէ յայտնուած ճշմարտութիւն մըն է . ու

Ով Տէր , լսեցի որ դուն ողոբմած Եստուած ես , ու այնպէս սահմանեցիր որ քու Որդիիդ Ծիսուս Վրիստոսը աշխարհի Փրկիչն ըլլաց . ու նաև կ'ուզես ինձի պէս խեղճ մեղաւորներուն շնորհել անիկայ : Ես ալ Ճշմարտապէս մեղաւոր եմ : Աշան որոյ՝ Տէր , աս պատեհութիւնը ձե՛ռ առ , ու քու շնորհքդ մեծցներ իմ հոգւոյս փրկութեամբը , քու Որդւոյդ Ծիսուս Վրիստոսի միջնորդութիւնով : Ամեն :

Վրիստիոդիսուս . Եւ քեզի հրամայուածին պէս ըրի՞ք :

Յուստոֆիք . Այս , կրկն , և կրկն , և կրկն :

Վրիստիոդիսուս . Ու Հայրը յայտնեց քեզի Որդին :

Յուստոֆիք . Ոչ , ոչ առաջին՝ ոչ երկրորդ՝ ոչ երրորդ՝ ոչ չորրորդ՝ ոչ հինգերորդ՝ և ոչ ալ վեցերորդ՝ անկամին * :

Վրիստիոդիսուս . Եօնչ ըրիք ան առենը :

Յուստոֆիք . Եօնչ ընեմ , ինչ ընելիքս չեի զիաեր :

Վրիստիոդիսուս . Աղօթքը ձգելու մոտածմունքներ չունեցածը :

Յուստոֆիք . Այս՝ քանի մը հարխոր անդամ ատ մոտածմունքն ըրի :

առանց հաւատալու ասոր՝ ամեն մեղաւոր պիտի կորսուի : Ոտածէ թէ քու հոգւոյդ կորսուեանը պատճառ պիտի ըլլաս , թէ որ Վրիստոսի արդարութիւնը մերժես , ու շաւատաս թէ նոյն արդարութիւնովն է որ Եստուած ամբարիշաները կ'արդարացընէ առանց զործքի : Ով խստասիրո՞ւ ու դուք ձեզ արդարացընող մեղաւորներ , արդարութենէ չեռու եք դուք : Խմացե՛ք ասիկայ՝ ու զարհուրեցէք :

* Ով գաւորը երբոր նախ կը սկսի վնասուել Տէրը , իբ սրտին մէջ շատ մեծ վախկոտութիւնն կը ծնանի : Բայց Վրիստոսի հաւատարիմ՝ խոստմունքը ունի ան , թէ Փնտուեցէք ու տիւի դանեք : Կառաջ . Ժամ . 9 .

ՎՐԱՏՈՒՏԵՐԱՊՈՒՏԻՆ : Եշ ի՞՞նչ էր պատճառը որ չձգեցիր ան : Յուսովից . Հաւատացի թէ ինծի ըսուածը չըմարիս էր , այսինքն՝ թէ առանց աս Քրիստոսին արդարութեանը բոլոր աշխարհ կարող չէր զիս փրկելու . և անոր համար՝ ես ինծի ըսի , թէ որ ազօթքը ձգեմ՝ անշուշտ պիտի մեռնիմ . Բայց թէ որ պիտի մեռնիմ՝ չնորհաց աթոռին առջելը մեռնիմ : Ու ասով իմ միաբան եկաւ աս խօսքը . “ Ծնէ որ ուշանայ , անոր սպասէ ” . Քանզի անշուշտ պիտի դայ , ես պիտի չմնայ ” : Այք . բ . 3 : Այսպէս ազօթքը հանապազրողեցի , մինչեւ որ Հայրը իր Որդին յայնեց ինծի :

ՎՐԱՏՈՒՏԵՐԱՊՈՒՏԻՆ : Եշ ի՞՞նչպէս ինք յայտնուեցաւ քեզի : Յուսովից . Մարմնաւոր աչքով ես զինք չտեսայ , հասուա հոգւոյ աչքով . Երկու . ա . 18 , 19 . և այսպէս եւզաւ անիկայ : Ուկ օր մը շատ տրտում էի , որուն պէս կարծեմ թէ կեսնիքիս մէջ ուրիշ անդամ բնաւ տրտման չէի . և աս տրտմութիւնը իմ մեղքերուս գէշութիւնն ուժեծութիւնը նորէն տեսնելէս եղաւ : Եշ ան ատենը ուշրիշ բանի ակնկալութիւն չունէի հազար գժոխիքի ու իմ հոգւոյս յաւիսենական դատապարտութեանը . և ահա յանկարծ՝ ինծի թոււեցաւ թէ տեսայ Տէր Յիսուսը որ երակինքն վար կը նայէր իմ վրաս ու կ'ըսէր , “ Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսին , ու պիտի փրկուիս ” : Գառն . Ժղ . 31 :

Բայց ես պատասխան տուի թէ Տէր , ես մեծ շատ մեծ մեղաւոր եմ . ու ան ըսաւ , “ Իմ չնորհքս հերիք է քեզի ” : բ Առննլ , ժի . 9 : Ան ատենը ըսի , Բայց ով Տէր , ի՞նչ է հաւատալը : Ու յետոյ աս խօսքն որ կ'ըսէ “ Ան որ ինծի կու դայ ” Երբէք չանօթենար , ու ան որ ինծի կը հաւատայ՝ չծարուիր ” , Յովէ . ղ . 35 , տեսայ՝ թէ հաւատալն ու անոր երթալը մէկ բան է . և թէ ան որ կ'երթայ , այսինքն՝ իր սրտովը և յօժարութիւնեւ-

բովք ՚Քրիստոսով եղած փրկութեանը ետեկն կը վագէ ,
անիկայ ճշմարտապէս կը հաւատայ ՚Քրիստոսի : Այս ա-
տենը աչքերս լցցան , ու հարցուցի ես , Բայց ով Տէր
ինձի պէս մեծ մեղաւոր մը իրաւ կընաց ընդունելի ըլլաւ
քեզի , և փրկութել քեզմով : Ու լսեցի որ կ'ըսէր , “Այ
որ ինձի կու դայ , բնաւ դուրս չեմ հաներ” : Հօնմ . դ .
36 : Եւ ես ըսի . Բայց ով Տէր , իմ քեզի դալու ա-
տենս ի՞նչպէս մասածութիւն պէտք է ունենամ քու վրայովք ,
որ իմ հաւատքս շխատի հաստատուած ըլլայ քու վրադ :
Կնքն ալ ըսաւ , “՚Քրիստոս Յիսուս աշխարհը եկաւ
մեղաւորները փրկելու” : ա Տէմ . ա . 14 : “Օրէն-
քին վախճանը ՚Քրիստոս է ամեն հաւատացեալի արդաւ-
րութեան համար” : Հառնկ . ժ . 4 : Եւ գլ . դ .
“Որ մեր յանցանացը համար մատնուեցաւ , և մեզ ար-
դարացընելու համար յարութիւն առաւ” : Հառնկ . դ .
25 : “Որ մեզ սիրեց , ու մեզ մեր մեղքերն լուաց” :
Յայդ . ա . 5 : “Կնքն է Յիշխորդ Սասուծոյ և մեր մե-
ջը” : ա Տէմ . ը . 5 : “Կնքը միշտ կենդանի է մեզի
համար բարեխօս ըլլալու” : Երբ . է . 25 : Սսոնց ա-
մենէն ես քաղեցի թէ իր անձովը արդարութիւն պէտք է
որ փնտուեմ , և իր արիւնովը իմ մեղքերուս թողութիւն
դանեմ . թէ ինք իր Հօրը օրէնքին հնագանդելով և
անոր պատիմք քաշելու հպատակելով ինչ որ ըրաւ՝ իրեն
համար չէր , համար ասիկայ չնորհակալութեամբ ընդունե-
լու հոգւոց փրկութեանը համար : Եւ ան ատենը սիրոս
ուրախութեամբ՝ և աչքերս արցունքով լցուեցան , ու զգա-
ցումներս յորդեցան ան սիրովք՝ որ Յիսուս ՚Քրիստոսի ա-
նունին ժողովրդեանն ու համբուն վրայ էր :

՚Քրիստիանու . Կոիկայ արդարե ՚Քրիստոսի քու հոգւոյդ
ըրած յայտնութիւնն էր . բայց մասնաւորապէս պատմէ
ինձի թէ ասիկայ ի՞նչ զօրութիւն ունեցաւ քու կիրքե-
րուդ վրայ :

Յուստից • Ասիկայ ինձի ահանել առւաւ թէ բոլոր աշխարհս իր ամեն ունեցած արդարութիւնովն ալ դատապարտութեան վլնակի մը մէջ է : Ասիկայ ինձի ահանել առւաւ թէ Հայոք Սատուած թէպէտ և արդար է , կրնոյ արդարապէս արդարացընել իրն դիմող մեղաւորը : Ասիկայ մեծապէս ամշուց զիս իմ առջի վարքիս անարդութեանը վրայ , ու խայնեցուց զիս իմ տղիտութիւնս ինձի խնացընելուլ . քանզի ասկէ տուած ամենուին իմ սրտիս մէջ ուրիշ մէկ խորհուրդ մը չնոտա որ Ծիսուս Քրիստոսի գերազանցութիւնը այսափ ցուցընէր : Ասիկայ սուրբ վարքը ինձի սիրցուց , ու Ծիսուս Քրիստոսի անունին փառացն ու պատուցն համար բան մը ընելու փափառ տուաւ մանաւանդ թէ մոտածեցի որ եթէ ես հիմա իմ մարմինիս մէջ հաղար քաշ արիւն ունենացի , բոլորը կը ռնայի թափել Տէր Ծիսուսի համար * :

* Քրիստոսի հաւատալը Սատուծոյ վրայով նոր ծանօթութիւն մը կու տայ հոգւոյն + Քրիստոսի՝ արդար Սատուած և միանգամացն Որկիւ ըլլալուն զաղափարը կ'ընծայէ անոր : Աս հաւատքը մէկ քաղըր տրտմաւթիւն մը կը պատճառէ մէր մեղքերուն վրայ , և մանաւանդ մէր ներուած մեղքերուն վրայ : Եմմանուէլին անձին ու պաշտօններուն անզուղական գեղեցկութիւնը մեզի կը ցուցընէ , ու սրբութեան սիրով՝ ու կենաց և մահուան մէջ զինքը փառաւորելու մեծափափաք տենջով մեզ կը չցընէ : Ով որ աս նշանները իր ներսի դին ըլլալ կը զգայ , թէպէտ և նուազ չափով մը , կրնոյ հաւատալ թէ իր հաւատքը անկեղծ է , ու ինք մահէն կեանքի անցած է : Բայց թողինանաց՝ որ թէպէտ Տէրը իր բոլոր ժողովրդոցը մի և նոյն ձմնաբառութիւնները կը ծանուցանէ , և սակայն անոնց ամենը՝ միայն մէկ եղանակաւ մը չառաջնորդեր ձմնաբառութեան ։ Համերը Սատուծոյ շնորհքովն ու Քրիստոսի միջնորդութեամբը՝ անոր ողորմաւթիւնով աներկեան յշրի մը հասած ըլլալով՝ ու հաւատքով անոր սիրոյն մէջ արմատացած ու հաւատառուած ըլլալով , իրնոց Երբ ու ինչ-

Վոկէ եռե երազիս մեջ տևաց որ Յուսալիցը ետքն նաշեցաւ՝ ու տեսաւ որ Տղիսութիւնը կու գար, որն որ իւրենք ետենին ձգեր էին: Եւ ըստ Քրիստիանութիւն: Տես հրչափ հեռուն՝ մեր ետեր կը տնտընայ ան տղան: Կրիստիանութիւն: Երաւ ես: կը տեսնեմ զինքը: Բնը մեր ընկերութեանը վրայ փոյթ չունի:

Յուսալից: Բայց կարծեմ որ եթէ ինք մինչև հոս մեր հետը քալէր, վեսա մը պիտի չկըրէր անկէ:

Քրիստիանութիւն: Ճշնարիտ է աս: բայց կը հաւասարյը նեմ քեզ որ Բնը ուրիշ կերպ կը մտածէ:

Յուսալից: Այս, այդպէս պիտի ըլլայ: բայց այսու առենային եկո՛ր իրեն սպասենք: Եւ այնպէս ըրին:

Ա երջը Քրիստիանու ըստ անոր: Երանջ եկոր մարդ, ինչո՞ւ այդչափ ետ մնացիր:

Տէխոսութիւն: Ես շատ աւելօք դուարձութիւն կը քառ պէմ առանձին քալելով քան թէ ընկերութեամբ: միայն թէ որ խիստ ըստ ընկերութիւն մը գտնեմ: կ'ուզեմ:

Ես առենք Քրիստիանու Յուսալիցին կամաց մը ըստ: Կիեզի լըսի՞ որ Բնը մեր ընկերութեանը վրայ փոյթ չունի: Բայց և այնպէս եկո՛ր քովին երթանք, ու աս առանձութեան անապատիս մեջ ժամանակը խօսակցութեամբ անցընենք: Ա երջը իր խօսքը Տղիսութիւնին դարձնելով՝ ըստ: Եկո՞նացինե՞ ինչպէս ես: ի՞նչպէս է հիմն ըստը Վասուծոյ և քու հոգւոյդ մէջ:

Տէխոսութիւն: Աբ յուսամ որ աղէկ է: քանզի միշտ բարի մտածմններով լցուան եմ, որոնք իմ միտքս կու զան ճամբուս մեջ զիս միսիթարելու: *

պէս դարձի դալերնուն վրայ այսպիսի պատմութիւն մը չեն կընար ընմել, ինչպէս որ հոս Յուսալիցը կ'ընէ:

* Տղիսութիւնը իր քյոյն ու միսիթարութիւնը իր բարի խորհուրդներուն վրայ հաստատած էր, բայց բոլորովին զուրկ էր բարի խորհուրդներին մը ընծայած խաղաղութեան:

ՎՐԵՒՄՈՒՅՆԱՆԱԿԱՆԻ ։ ԱՌԱՋԱՀԵՄ բուե մեղին լ'անչ բարի մատած մասնելու ։

ՏՀԻՊՈՒՅՆԻ ։ Խ'ԱՆ, Վասուծոյ ու երկնից վրայ կը մտածեմ ։

ՎՐԵՒՄՈՒՅՆԱՆԱԿԱՆԻ ։ ԱՌԱՋԱՀԵՄ կ'ընեն դեերն ու դատապարտեալ հողիներն ալ ։

ՏՀԻՊՈՒՅՆԻ ։ Բայց ես անսնց վրայ կը մտածեմ ու անսնց կը ժամարիմ ալ ։

ՎՐԵՒՄՈՒՅՆԱՆԱԿԱՆԻ ։ ԱՌԱՋԱՀԵՄ կ'ընեն շատերն ալ որ հաւանականարար բնաւ պիտի չըրթան հօն ։ “ՕՇՈՂԲՆ հողին կը յանիսյ, ու բան մը չունի” ։ Առաք ։ Ժդ ։ 4 ։

ՏՀԻՊՈՒՅՆԻ ։ Բայց ես անսնց վրայ կը մտածեմ ու անսնց համար ամեն բան կը ձգեմ ալ ։

ՎՐԵՒՄՈՒՅՆԱՆԱԿԱՆԻ ։ Վառոր վրայ տարակոյս ունիմ ։ ինչու որ շատ զժուարին բան է ամեն բան ձգելը ։ այն, զժուարագոյն բան մըն է ան քան որչափ շատերը կը կարծեն ։ Բայց ինչու կամ ինչո՞վ հաճողուած ես դուն թէ ամեն բան ձգած ես Վասուծոյ ու երկնից համար ։

ՏՀԻՊՈՒՅՆԻ ։ Իմ սիրոս այսալէս կը վկայէ ինձի ։

ՎՐԵՒՄՈՒՅՆԱՆԱԿԱՆԻ ։ Իմաստանը կ'ըսէ թէ, “Իր սրտին ապաբնողը անմիտ է” ։ Առաք ։ իը ։ 26 ։

ՏՀԻՊՈՒՅՆԻ ։ Վարիկոյ չար սրտի վրայով ըստւած է ։ բայց իմն բարի սիրոտ է ։

Օրինասէր փարիսեցւոյն երջանկութիւնը միայն իր անձէն կը ծագի ։ բայց Ճմարիս քրիստոնէին երջանկութիւնը միայն ՎՐԵՒՄՈՒՅՆԻ հաւատալըն յառաջ կու դայ ։ Վուա ջնը իր փրկութեանը բոլոր ակնկալութիւնները իր մըսաքին գլացումներէն կը հանէ, իր ըրածներէն կամ բաշածներէն կը հետեցընէ ։ բայց միւսը իր ասրառնի երջանկութեանը բոլոր յայները ՎՐԵՒՄՈՒՅՆԻ բրիստուի բաշածնին վրայ կը հաստատէ, միայն իր Փրկիւրի ու բախսանալով, ու իր մարմնոյն չվատահանալով ։

Քրիստոնեանու . Բայց ի՞նչպէս կրնաս ցուցընել առիկայ :
Տէկոտաբէտն . Երկնացին յայսերով զիս կը միմիթարէ
ան :

Քրիստոնեանու . Առիկայ կարելի է որ անոր խարեւայու-
թիւնովն ըլլայ . քանզի մեկ մարդուն սիրաը կրնայ միսի-
թարել դնիքը բանի մը յուսով՝ որ ինք ամեննին պիտի
չկրնայ ստանալ :

Տէկոտաբէտն . Բայց իմ սիրաս ու վարքս մեկտեղ կը
համաձայնին . և ան պատճառաւ իմ յոյսս հաստատուն է :

Քրիստոնեանու . Ո՞վ քեզի ըստ թէ քու սիրող ու
վարդ . մեկտեղ կը համաձայնին :

Տէկոտաբէտն . Իմ սիրաս ինծի սյսպէս կ'ըսէ :

Քրիստոնեանու . Քու սիրող քեզի սյսպէս կ'ըսէ հա :
Հարցներ իմ կողակցին ու նայինք կը վկայէ՛ թէ ևս զող
եմ : Աս բանիս վրայով թէ որ Վատուծոյ Խօսքը վկայու-
թիւն չընէ , ուրիշ վկայութիւն բանի տեղ չանցնիր :

Տէկոտաբէտն . Բայց բարի սիրտ չէ՞ ան որ բարի խոր-
հուրդներ ունի . ու բարի վարք չէ՞ ան որ Վատուծոյ պա-
տուիրանքներուն կը համաձայնի : բայց ուրիշ բան է
Տըմարտապէս աս բաներն ունենալը , և ուրիշ բան է միսյն
այնպէս համարելը :

Տէկոտաբէտն . Աղէ ըսէ , Թը խորհուրդները կը սեպես
որ բարի են . և Թը վարքը կը սեպես թէ Վատուծոյ պա-
տուիրանքներուն համաձայն է :

Քրիստոնեանու . Այս և այլ կերպ բարի խորհուրդներ
կան . կան որ մեր վկայովն են , կան որ Վատուծոյ , կան
որ Քրիստոսիր , և կան որ ուղիւշ բաներու վրայով :

Տէկոտաբէտն . Արժաք են մեր վկայովն եղած բարի խոր-
հուրդներ :

ՎՐԻԱՏԵՎՆԱԼՈՒ · Անոնք որ Վասուծոյ Խօսքին համաձայն
Են :

ՏՀԻՄՈՒԹԵԱՆ · Աջը կը համաձայնին Վասուծոյ Խօսքին՝
մեր վրայովք ունեցած մեր խորհուրդները :

ՎՐԻԱՏԵՎՆԱԼՈՒ · Են առենք՝ երբոր մենք մեր անձին վրայ
ան նոյն դատաստանը կ'ընենք, որն որ Վասուծոյ Խօսքը
կ'ընէ : Ըստած բացատրելու համար՝ Վասուծոյ Խօսքը
բնական զինամելի մէջ եղած անձանց համար կ'ըսէ թէ
Վրդար մը չկայ՝ ոչ մէկ հաս մը • աղեկութիւն ընող մը
չկայ : Հառմէջ • դ • 10, 12 : Եւ դարձեալ կ'ըսէ Վ-
մէն մարդուն սրտին խորհուրդները չար են : Կօննոք • դ.
5 : Եւ դարձեալ Վարդուն սրտին խորհուրդը իր ման-
կութենեն չար է : Կօննոք • ը • 21 : Ուրեմն երբոր
սյապէս կը խորհինք մեր վրայով՝ անիկոց զգալով, ան ա-
ռենք մեր խորհուրդները բարի են • ինչու որ Վասուծոյ
Խօսքին համաձայն Են :

ՏՀԻՄՈՒԹԵԱՆ · Ես բնաւ չեմ կրնար հաւատալ թէ իմ
սիրոս ոյնապէս գէշ է * :

ՎՐԻԱՏԵՎՆԱԼՈՒ · Վար համար բնաւ մէկ բարի խորհուրդ
մը ունեցած չես քու վրայովք քու կեանիքիդ մէջ † : Բայց

* Ենականապէս մէկը չկրնար հաւատալ թէ իր սիրոս
գէշ է : Բայց ասիկայ ստոյգ նշան մըն է թէ երկնից լրյուք
սրտին վրայ ծագած չէ, ու անոր տարապայման չարու-
թիւնը յայտնի ըրած չէ : Ասկէ է որ տգէտ հաւատա-
ցեանները իրենց անձին մէջը բարի ըլլարու կարծիքով չա-
րաւար կը խարուին, ու թողութիւն դանելու համար բու-
լորմին Վրիատոսի ըրած քաւութեանը ապաւինելէն՝ և
արդարանալու համար միայն անոր արդարութեանը յուսա-
լէն ետ կը մնան :

† Ենաւ չենք սկսիր բարի խորհուրդ մը ունենալ մինչեւ
որ չկրսինք մենք մեր վրայ գէշ խորհիլ, ու ճշմարտապէս
ինձնալ մեր վերջին աստիճանի չարութիւնը, ինչպէս որ
Վասուծոյ Խօսքը կը վրոյէ մեր վրայ :

թեղ տուր որ իմ խօսքս առաջ տանիմ : Խնչպէս որ Վասուծոյ խօսքը մեր սրտերը կը դատէ , այնպէս ալ մեր համբաները կը դատէ . և երբոր մեր սրտերուն ու համբաներուն խորհուրդները կը համաձայնին ան դատաստանին որն որ Վասուծոյ խօսքը երկարանշիւրին վրայ կ'ընէ , ան ատենը երկարանշիւր խորհուրդներն ալ բարի են , որովհետեւ Վասուծոյ խօսքին համաձայն են :

Տէկոտիկան . Դացատրէ ինձի քու միւսքոր :

Քրիստինոս . Ըամ աղեկ . Վասուծոյ խօսքը կ'ըսէ՞ թէ մարդոց համբաները ծուռ համբաներ են . բարի չեն , հասկա չար . կ'ըսէ թէ բնապկանարար բարի համբայն դուրս են անմեր՝ որ խաղաղութեան համբան չեն հանչնար : Առաջ . Ճիե՞ . 5 : Երամ . բ . 15 : Հառամ . կ . 17 : Արդ երբոր մեկը սյապէս կը խորհի իր համբաներուն վրայով , կ'ուղեմ ըսել՝ երբոր զգալով և խոնարհ սրտով սյապէս կը խորհի , ան ատենը ինք իր համբաներուն վրայով բարի խորհուրդներ ունի . ինչու որ իր խորհուրդները հիմն Վասուծոյ խօսքին դատաստանին հետ համաձայն են :

Տէկոտիկան . Արմէնք են Վասուծոյ վրայով եղած բարի խորհուրդները :

Քրիստինոս . Ճ'իստ ինչպէս որ առաջ մեր վրայով ունեցած խորհուրդներնուա համար ըսի , երբոր Վասուծոյ վրայով մեր խորհուրդները համաձայն են անոր՝ ինչ որ Վասուծոյ խօսքը կ'ըսէ իրեն համար . սյսինքն երբոր իր էութեանը և ստորոգելիքներուն վրայ այնպէս կը խորհինք ինչպէս որ Վասուծոյ խօսքը սորմեցուց , որուն վրայ հիմն չեմ կընար երկար խօսիլ : Դարձեալ ան ատենը շիտակ խորհուրդներ կ'ունենանք Վասուծոյ վրայով՝ երբոր կը մասածենք թէ ինք ըսւաղոյն զիտէ մեզ՝ քան որչափ մենք զմեզ զիտենք , և մեր վրայ մեղք կը տեսնէ երբոր և ուր որ մենք մեղք մը չենք տեսներ վրանիս . երբոր կը մասածենք

թէ մեր ներքին խորհուրդները դիմեց, և թէ մեր սիրուր իր բոլոր ծածուկ խորհուրդներով անոր աչքերուն առջին միշտ բաց է. նաև երբոր կը մնածենք թէ բոլոր մեր արդարութիւնը զգուելի է անոր առջին, և անոր համար չկրնար տանիւլ՝ մեղ տեսնել որ իր առջին կը կայսենք՝ որ և իցէ չափով ասպաւնելով մինչեւ անդամ մեր ամենաշատ զորքերուն :

Տէ՛սութիւն . Աը կարծե՞ս դուն որ ևս այնպէս յինար բլամ՝ որ մնածեմ թէ Վասուած ինձմէ աւելի չկրնար տեսնել . կամ թէ մինչեւ անդամ իմ ամենալաւ զորքերովս Վասուածոյ առջին ելլելու ուղեմ :

Վրիսութիւննու . Հապա դուն ի՞նչպէս կը մնածես առ նիւթիս վրայ :

Տէ՛սութիւն . Արք խօսրով , կը մնածեմ թէ արդարանալու համար պէտք է որ Վրիսութիւննուի հաւատամ :

Վրիսութիւննու . Կ'նչպէս կը մնածես թէ Վրիսութիւննուի հաւատալու ևս երբոր չես տեսներ քու իրեն ունեցած կարօտութիւնդ : “Իուն ոչ քու սկզբնական և ոչ ներդործական մեղքերդ կը տեսնես . հապա այնպիսի կարծիք մը ունիս քու վրայովդ և քու ըրածիդ վրայով , որ յայտնաւ պէս կը ցուցընէ քեզ այնպիսի մեկն ըլլալ որ բնաւ տեսած չեմ” Վասուածոյ առջին քեզ արդարացընելու համար Վրիսութիւննու արդարութեանը հարկաւորութիւնը : Աւրիմն ի՞նչ պէս կ'ըսես թէ Վրիսութիւննուի կը հաւատամ* :

* Վհա աս տեղու կը տեսնենք թէ մարդուս իր արդար բլամու կարծիքը ի՞նչպէս բնականարար կը կուրացընէ իր աչքերն ու կ'արդիիւ իր սիրուր հաւատալու թէ Վրիսութիւննու արդարութիւնը միայն կ'արդարացընէ մեղաւորը Վասուածոյ առջին . և սակայն այսպէս շատերը կան որ կը խօսին Վրիսութիւննուի հաւատալու վրայ , բայց իրենց հաւատը միայն երազ է : Վրիսութիւննուի արդարութեանը չեն հաւատար , հապա կը կարծեն թէ մեկ կերպով մը արդէն ունին կամ

Տէկոտելիւն . Ամեն առ ըստածներուդ ըստ բաւականին ըստ կը հաւատամ ես :

Վրիտուիստուն . Խօնչպէս կը հաւատաս :

Տէկոտելիւն . Աը հաւատամ թէ Վրիտոս մնջաւոր ներուն համար մեռաւ . և թէ Աստուծոյ առջն պիտի արդարանամ անէծքէ , իր օրէնքին ըրած իմ հնագանդութիւնս՝ իր շնորհքովն ընդունելով : Ասմ թէ այսպէս + Վրիտոս իմ բարեզործութիւններս որ բարեպաշտական գործքեր են՝ իր արդեանցը զօրութիւնովը ընդունելի կ'ընէ իր չօրը , և այսպէս պիտի արդարանամ * :

Վրիտուիստուն . “Եւրէ ինծի քու հաւատքիդ աս դաւանութեանը պատասխանը տալ :

Ա . Այլ ընդ այլոյ հաւատքով մը կը հաւատաս դուն + ինչու որ Աստուծոյ խօսին մէջ աս հաւատքը մէկ տեղ մը նշանակուած չէ :

Ի . Սուտ հաւատքով մը կը հաւատաս դուն . ինչու որ աս քու հաւատքդ Վրիտոսի արդարութենին արդարանալդ կ'առնէ , ու անիկայ քուկինիդ կ'ընծայէ :

Գ . Աս հաւատքը Վրիտոս քու անձիդ արդարացընողը չնկեր հապա քու գործքերուդ , և քու գործքերուդ պատճառաւը քու անձիդ՝ որ սուտ է :

Դ . Աշան որոյ աս հաւատքը խարեւայ է , մանաւանդ

պիտի ստանան արդարութիւն մը որ յատկապէս իրենցն է : Ափանս , ի՞նչ արասափելի խարէութիւն է աս՝ որով շատերը կը խարուին :

* Տղիտութիւնին խօսքը ձիշտ յարմար կու դայ քրիստոնեան կոչուողներէն շատերուն վարդապետութեանը , ուրոնք բանիւ չեն ուրանար Փրկչին արդարութիւնը , բայց իրենց ըրածները անոր հետ խառնելով կ'ուշացընեն անոր զօրութիւնը : “ թէ որ շնորհքով , ուրեմն ալ գործքեւըն չէ + ապա թէ ոչ՝ շնորհքը ալ շնորհք չըլլար ” :

թէ այնպիսի հաւատքը մը՝ որ Ամենակալ Տէրովը օրը բարեկութեան տակ պիտի ձգէ քեզ + քանզի ճշմարիտ արդարացուցիչ հաւատքը՝ հոգին իր կորուսեալ վիճակը օրէնքին միջոցովը զգացածի պէս ՚Քրիստոսի արդարութեանը դիմել կու տայ ապատանարան գտնելու + բայց աս իր արդարութիւնը չէ թէ շնորհաց դործ մըն է որով իւր քեզ արդարացընելու համար քու բարեկործութիւնդ ընդունելի կ'ընէ Վասուծոյ, հապա իր անձնական հնազանդութիւնն է օրէնքին, մեզի համար ընելով և քաշելով ան բաները որ մեր ձեռքերէն կը պահանջուէին + ճշմարիտ հաւատքը աս արդարութիւնը կ'ընդունի՛ որուն հովանաւորութեանը տակը հոգին պաշտպանուելով, և անով Վասուծոյ առջին անարատ կայնելով՝ ընդունելի կ'ըլլայ, ու գատապարտութենէ կ'աղասի * :

Տէկոտութեան : Ե՞նչ, կ'ուզես որ մնաք ան բանին ապահնինքը որն որ ՚Քրիստոս առանց մեզի ինք իր անձնամբը դործեց : Աս կարծիքը մեր ցանկութիւններուն երասանակը կ'արձրիէ, ու թող կու տայ մեզի որ ուզածնուռ պէս ապրինք + քանզի ի՞նչ հոգ է ինչպէս ապրելի՞ թէ որ կրնանք ամէն բաներէն արդարանալ ՚Քրիստոսի արդարութիւնովը՝ միայն անոր հաւատալով† :

* Վս չորս պատասխանները շատ առէկ կը յայտնեն ու մասին վրայ եղած յանդգնական և խիստ վտանգաւոր մոլորութիւնը : “Ամանապէս կը ցուցընեն թէ ի՞նչ է ճշմարիտ հաւատքին բնութիւնը, ու Վասուծոյ առջին արդարանաւը և ընդունելի ըլլալու համար անոր հաստատած մի միայն հիմքը : Ով ընթերցող՝ քու պատուական հոգւոյդ համար զգուշացի քու դրած հիմուդ + նոյե՛ որ քու անձիդ վրայ բան մը չընես, հապա բոյըը Վասուծոյ դրած հաստատուն հիմքն, այսինքն՝ իր սիրելի Որդւոյն ու անոր կատարեալ արդարութեանը վրայ :

† Ըստրհաց վարդապետութիւնները ամէն դարերու մէջ

մի ըստով անունու Տղիսութիւն է , և քու անունդ ի՞նչպէս որ է դուն ալ այսպէս ես . և մինչև ան-
գամ աս քու պատասխանու կը ցուցընէ ի՞նչ որ ես ըսի :
Տղէտ ես դուն արդարացուցիչ արդարութեան , և նոյն-
պէս աղէտ ես անոր հաւատալով քու հողիդ փրկելու Առ-
առածոյ ծանր բարկութեանէն : Մանաւանդ թէ Վրիստոսի
աս արդարութեանը ապաւնող փրկարար հաւատքին ճշշ-
մարիս զօրութիւններուն ալ աղէտ ես , որ է սիրաը խո-
նարհեցընել և Առառածոյ ընծայել Վրիստոսի միջնորդու-
թիւնունը , անոր անունը խօսքը՝ ձամիւաներն ու ժողո-
վուրդը սիրել , և չէ թէ ի՞նչպէս որ դուն տղիստարար
հիմն ըսիր :

Յուսուլց + Հարցուը իրեն թէ Վրիստոս ընաւերելքը
յայտնուեցաւ իրեն երկինքնէն * :

անընդունելի եղան , կարծուելով թէ անառակութեան
դուռ կը բանան անոնք : Բայց աս հակառակութեանս
առաքեալու թող պատասխան տաց : “ Առառածոյ փրկա-
րար չնորհքը ! ” , կ’ըսէ , “ բոլը մարդոց երեցաւ . որ մեզ
կը խրամէ՛ որ ամէարշանութիւնը ու աշխարհային ցանկու-
թիւնները ուրանոնք . և զաստութիւնով ու արդարու-
թիւնով և բարեպաշտութիւնով ապրինք աս աշխարհին
մէջ ” : Տիու . ը . 11 , 12 : Երբոր աս չնորհքը պայ-
ծառապէս յայտնուի մարին մէջ ու անկեզծութեամբ ըն-
դունելի ըլլաց սրտին մէջ , ազատութիւն չտար մեզի մեր
ցանկացածին պէս ապրելու ի՞նչպէս որ Տղիսութիւնը աս
ուելը կը կարծէ . ոյլ բոլըորովին հակառակը կ’ըսէ : Աըս-
րութեան ամէն սղարտաւորութիւնները՝ որոնք որ ուրիշ
կերպով ձանձրակի՞ և մանաւանդ թէ անդորժածելի պիտի
ըլլացին , դիւրին և զուարձալի կ’ըսէ :

* Վարժմաւոր մարդը արտառոց բան կը համարի ասիւ-
կոյ . բայց հոգեւոր մարդը ասոր երջանկութիւնը կը ճանչ-
նաց , ու ասոր միսիթարութիւնովը կը ցնծաց : ‘ Կառուա-
րին խնդիր մըն է աս . ի՞նչ կընանք իմանալ ասով :
Հատարակոյ ի՞նչ որ Պօղոս կ’իմանալ երեր ըսաւ , թէ

Տէկոտութիւն . Ենչ . դուն տեսիլք տեսմաղ մարդ մըն
ես՝ հա : Ես կը կարծեմ թէ ինչ որ դուք երկուքդ եւ
ձեզի պէս բռլըր ուրիշները կ'ըսն , միայն ցնորեալ մարեւ .
բռ ծնունդ են :

Յուսուցիք . Ենչ կ'ըսնե՞ մարդ . Վրիստոս այնպէս
ծածկուած է Սատուծոյ մէջ բռլըր մարմնաւոր բնական իւ-
մացումներէն , որ չկը ճշգիւ ճանչնալ զինքը ,
մընչեւ որ և այցն Սատուած անիկայ անոր չյայտնէ :

Տէկոտութիւն . Սարիկայ ձեր հաւատքն է , բայց իմ չէ .
և սակայն չեմ տարակուափր որ իմն ալ ձերինին պէս լու-
է , թէպէս և ես իմ դըսում մէջ ձեզի չափ օտարութի խոր-
հուրդներ չունիմ :

Վրիստուանս . ‘Եւրի՛ ինծի մէկ խօսք մը խօսիլ : Գլուխը
չէր քեզի աս նիւթիս վրայով այսպէս արհամարհանօք խօ-
սիլ . քանզի համարձակութեամբ կը հաստատեմ ևս՝ ինչ
պէս որ իմ բարի ընկերս բառ , թէ մէկ մարդ մը չկընար
զիսնալ Ծիսու Վրիստոսը , բայց եթէ և օրը յայտնու-
թիւնովը . մանաւանդ թէ հաւատքը ևս՝ որ անով հոգին
Վրիստոսի կը յարի , թէ որ ուզիզ ըլլայ , Սատուծոյ կա-
րող զօրութեանը յատուկ յաջողութեամբը պէտք է ա-
ռաջ եկած բլաւ . Ուստի . ժամ . 27 : Եցէն . ամ . 17-19 .

‘Սատուած ուզեց ինծի իր Որդին յայտնել’ . Գտայ . ամ .
16 . այսինքն՝ թէ Վրիստոսի վրայ ու անոր ձեռքովիլ եղած
փրկութեանը վրայ այնպէս ներքին հոգեոր’ ու հաւատի
տեսութիւն . ու ծանօթութիւն ունեցաւ , որ իր սիրուը
զանիկայ ընդունեց՝ իր հոգին անոր յարեցաւ՝ իր անձը ա-
նով ուրախացաւ՝ ու իմը բռլըրովին անոր սիրոյն մէջ ըն-
կըզմացաւ . այնպէս որ իր հոգւոյն ուրախութեանը մէջ
կ'աղաղակէր , Սարիկայ է իմ սիրելիս՝ իմ բարեկամն , իմ
Փրկիչա՞ իմ Սատուածն՝ ու իմ փրկութիւնս : Վրիստոսի
վրայ ձիշտ և հաւատութի կերպով բան մը չենք դիտեր մենք
մինչեւ որ ինք հանձի մեզի յայտնել զինքը : Ուստի . ժամ .
27 :

և աս հաւատքին զործողութեանը վասցով կարծեմ թէ
աղետ ես դուն՝ ով սղորմելի Տղիսութիւն : Ուրեմն
արթընցիր՝ տե՛ս քու թշուառութիւնդ, ու Տէր Յիսուսի
գիմէ : ու անոր արդարութիւնովը՝ որ Աստուծոյ արդարու-
թիւնն է, (Քանզի ինք Աստուծ է, Կ դատապարտութեան
պիտի փրկութիւն * :

Տէֆոռունիւն : Դուք շուտով կ'երթաք, ես ձեր հետը
չեմ կրնար քալել : առաջ անցէք դուք, ու ես ետեւն
կու գամ՝ † :

Ան ատենը միւսները ըսին :

Վինչել Ե՞րբ՝ ով Տղիսութիւն, յիմարաբոր կը քալես,
Ու տան անդամ քեզի տրուած բարի խրատը զանց կ'ը-
նես :

Ու որ այսպէս յամառելով դեռ անիկայ դուն մերժես,
Դու ըրածիդ չարութիւնը շուտով պիտի միաք առնես :

Յիշը ով մարդ՝ իր ատենին, ու խնարհէ մի՛ վախնար,
Լաւ ընդունուած բարի խրատը՝ փրկութիւն է, 'ի միա առ.
Հայց թէ որ գեռ յարատենս անարգել զայն անդադար,
Քեզի ըսնիք՝ Տղիսութիւն, կը կորաւիս չարաչար :

Վեկէ ետեւ Կրիստիանոս խօսքը բր ընկերին դարձընե-

* Աստարելապէս արթընցած չէ ան մեղաւորը՝ որ չը-
աեւներ Կրիստոսի արդարութեանը կարօտ բրալը : Ու
աւ կենդանացած է ան՝ որ չղիմեր առ Կրիստոս՝ իրքե-
սրէնքին վախճանը, որով ամեն հաւատացողները պիտի
արդարանան : + առէմ : Ժ : 4 :

† Աեղծաւոր աղեանները հոգեւոր ճամկորդներուն հետ
ուղեկցութիւն չեն կրնար ընել, ու չեն կրնար սիրել ան
զարդարեառութիւնը թէ արդարանալու և փրկուելու հա-
մար մի միայն Կրիստոսի պէտք է նայիլ, թէ մեղաւորը
ամեննեն բան մը չէ, և թէ իր ըրածներովը չիրնար փառք
մը ստանալ իրէն :

լով ըստ : Եկո՞ր նայինք , ով բարի Հռուսալից , կ'իմա՞ն որ դուն ու ես նորէն մենք մեղի պիտի քալե՛մք :

Այսպէս երազիս մեջ տեսայ որ անոնք արագ արագ առ չեւն կ'երթային , ու Տղիսութիւնը կաղը՝ ի կաղը ետեւ նուն կը քալը : Այս ատենը Քրիստիանոս իր ընկերին ըստ . Ըստ կը մեղքընամ աս խեղչ մարդը . անտարակոյս վերծը գէշ պիտի ըլլայ իրեն :

Յոստով . Աւազ . մեր քաղաքը ասոր վիճակին մեջն եղող շատերը կան . ամենող ընտանիքներ , մանաւանդ թէ ամենող թաղեր , և ամենն ալ բարի մարդիկ կարծուած էն : Աւ թէ որ մեր կողմերը պատափ շատերը կան , որ չափ շատ կը կարծես թէ ըլլալու է հոն՝ ուր որ ինք ծընած է :

Քրիստիանոս . Երացցնէ , Աստուծոյ Խօսքը կ'ըսէ թէ , անսոց աչքերը կուրցուց որ չտեսնեն , եւ : Յոհան . Ժի . 40 :

Տայց դուն հիմա որ մենք մեզի ենք , ի՞նչ կը խորհիս ոյսպիսի մարդոց վայով : Աը կարծե՞ս որ բնաւ պիտի չըլլայ թէ մեղքերնին ճանշնան , ու հետեւապէս վախնան թէ իրենց վիճակը վուանգաւոր է :

Յոստով . Աս ինդիրին պատասխանը դուն քեզի տուր , ինչու որ դուն ինձմէ տարօք մարդ ես :

Քրիստիանոս . Ուրեմն ես կ'ըսեմ՝ թէ երբեմն (ի՞նչ պէս որ ես կը կարծեմ) կրնայ ըլլալ . բայց իրենք բնականարար տղէտ ըլլալով չեն հասկընար թէ պիտիս իրենց

* Տղիսութիւնը փրկութեան վրայով ան նոյն մարմառ ուր դաղափարներն ուներ՝ որոնցման որ ծնած էր , մրայն թէ սորվեր էր ճարտարարուեատ փիլիսոփայութեամբ դարդարել զանոնք : Վաճն գարերու մեջ այսպիսի կեղծաւորներ շատ կը դանուին : Տայց ի՞նչ ողորմութիւն է անոնցմէ աղաս մնալը , հոգեսրապէս ըւռաւորուած ու Յիսուսով եղած ճշմարտութիւնը սորված ըլլալը :

մեղքերը ճանչնալնին իրենց աղէկութեանը կ'օգնէ . և առնոր համար յուսահասութեամբ կը նային խափանել անիւ կայ , և յանդպնաբար կը շարունակեն իրենց սրաերուն ճապիովը իրենք զիրենք շողորորդել :

Յուստից . Ես կը հաւասամ՝ ինչպէս որ դուն կ'ըստու , թէ վախը շատ կ'օգնէ մարդոց աղէկութեանը՝ ու անոնց շակուելուն՝ իրենց ճամբորդութեան սկզբնաւորութեանը :

Տիրիստիոնու . Ենտարակոյս այնպէս կ'ընէ , թէ որ շիտակ վախ ըլլոյ . ինչու որ այսպէս կ'ըսէ խօսքը . Տերոջը վախը իմաստութեան սկզբան է : Յու . իը . 28 : Սահմ . Ճման . 10 : Աստի . ամ . 7 : թէ . 10 :

Յուստից . Ե՞նչպէս կը ստորագրես դուն շիտակ վախը :

Տիրիստիոնու . Ճ'մարիս կամ շիտակ վախը երեք բաշնով կը յայտնուի :

* Եախ՝ իր ծագմամբը . ինչու որ կը սրատձառի մեղքին Փրկարար ճանաշումնն :

Երկրորդ՝ հոգին կը ստիպէ ամուր բռնելու գլուխառափրկութեան համար :

Երրորդ՝ հոգւոյն մեջ մեծ յարդութիւն կը ծնանի և կը հանապաղորդէ Եստուծոյ վրայ անոր խօսքին և ճամբանեւ բուն վրայ . զայց պահելով և վախցընելով զանիկայ աջ կամ ձախ կողմը դառնալու անոնցմէ մել ուրիշ բանի մը որ կընայ անպատիւ բնել զԵստուած , աւրել իր խաղաղութիւնը , տրամեցընել Առերք Հոգին , կամ թշնամոյն սրատձառ տալ նախատանօք խօսելու :

Յուստից . Եղեկ խօսեցար . կը հաւասամ՝ թէ ճշմարիս է ըսածդդ : Ճիմս մենք Աստարդեալ Երկրէն բոլովին անորին անցմանը :

Տիրիստիոնու . Ինչու . ճանճրութիւնն տուաւ քեզի աս խօսակցութիւնը :

Յուստից . Խրառ որ չէ , բայց կ'ուզէի զիանալ թէ և ենք ենք :

Քրիստոնանս . Նրկու մղոնէն աւելի ճամբայ չունինք հիմա անոր վրայ քալելու : Բայց մեր նիւթին դառնանք մնաք : Երդ՝ տղէտ մարդիկը չեն դիտեր թէ այսպիսի ճանաչումները որ ձեռնառ կ'ըլլան զիրենք վախի մէջ ձգելու , իրենց աղեկութեանը համար են . և անոր համար կը նային որ խափաննն դանոնք :

Յուստից . Խնչալես կը նային խափաննել :

Քրիստոնանս : աս . Աը մոտածեն թէ ան վախերը դեռ կը պատճառէ , թէպէտ և ճշմարտապէս Վատուած է անոնք պատճառողը . և այսպէս մոտածելով հակառակ կը կենան անոնց իրեւ այնպիսի բաներու . որ ուզգակի իրենց կործանմանը կ'օգնէ : ը . Աը մոտածեն ևս թէ աս վախերը իրենց հաւատքը եղծանելու կ'օգնեն , (որ ատեն՝ ափանս իրենց՝ ողորմելի՛ մարդիկ , որ ամենեն հաւատք չունին ,) և անոր համար իրենց սրտերը կը կարծրացընեն անոնց դէմ : դ : Աը կարծեն թէ պէտք չէ իրենց վախնալ . և անոր համար իրենց վախերուն հակառակ յանդղնաբար կը համարձակին . դ : Աը տեսնեն որ ան վախերը իրենց անպիսան հին անձնական արդարութիւնը իրենցմէ վերցընելու կ'օգնեն , և անոր համար բոլոր իրենց կարողութիւնովը դէմ կը կենան անոնց :

Յուստից . Վառը վրայով քիչ մը բան զիտեմ ես , քանզի ինքզինքս ճանչնալէս առաջ ինձի ալ այսպէս կ'ըլլար * :

* Վղէկ է որ մաքերնիս բերենք թէ մեր բնական վիճակին մէջ բոլորովին տղէտ ենք մնաք , որպէս զի ասիկայ մեր սրտերը խոնարհեցընէ ու շնորհակալ բլբալ տայ մեզի Վատուածմէ որ տարբերեց մեզ ուրիշներէն , ու մեզ զթութեան շարժէ անոնց վրայ որոնք կը քալեն մարմնաւոր բնութեան ամբարտաւանութիւնովը անձին արդարութեամբ ու յանձնապաստանութիւնու :

Վիրքատիանոս . Աղեկ՝ ալ հիմա մեր Տզիառութիւն բարեւ իսոմը ձգենք , և ուրիշ օգտակար խնդիր մը ձեռք առնենք :

Յուստափյան . Խոլոր սրտովք . բայց կրկին դուն պիտի սկսիմ :

Վիրքատիանոս . Ըստ աղեկ . տասը տարւոյ չափ առաջ մեր կողմերը բնակող Ժամանակաւոր անունով մէկը կը ճանենամս , որ ան ատենը կրօնքի մէջ յառաջաղէմ մարդ մըն էր :

Յուստափյան . Աը Ճանչնամ , անշուշտ . կը բնակեր Ասպաշնորհ ըսուած քաղաքը , որ Խարի վարժունքի քաղաքէն երկու մզոնի չափ հեռու է , ու կը կենար Յափինաղ արձ անուն մէկու մը քովի գուռը :

Վիրքատիանոս . Ծխտակ է . բայց անոր հետ մէկ ծածկոյթի մը տակ կը բնակեր + առ մարդը անդամ մը շատ արթը ընցաւ . կարծեմ թէ ան ատենը իր մեղքերուն և առ նոնց արժանաւոր եղած վարձքերուն վրայով տեսութիւն մը ունեցաւ :

Յուստափյան . Ես ալ քու մոքէդ եմ + քանզի իմ տունս իրմէն երեք մզոնի չափ հեռու չըլլալով շատ անդամ ինձի կու դար , և ան ալ շատ լացով : Ես Ճշմարտապէս կը մեղքընայի մարդը , և ըոլըրտին անցոյս չէի իր վրայով + բայց հոս կը տեսնենք որ չէ թէ ամէն մէկը որ կը կանչէ Տէ՛ր Տէ՛ր , պիտի վրկուի :

Վիրքատիանոս . Ենդամ մը ըստու թէ միտքը հաստատած է Ճամբորգութեան երթալ , ինչպէս որ հիմա մենք + բայց յանկարծ Խնդրափրկիչ անուն մէկու մը ծանօթացաւ , ու անկէ ետեւ օտար մը եղաւ ինձի :

Յուստափյան . Հիմա՝ որովհետեւ անոր վրայ կը խօսինք , եկոր անոր և անոր պէս ուրիշներուն յանկարծ ուխտադրութ ըլլալուն պատճառը քիչ մը վնասուենք :

Վիրքատիանոս . Կարկաց շատ օգտակար կընայ ըլլալ . բայց դուն սկսէ ան :

Յառասունքն իմ դատմամբս շըրս սպառձառ ունի
ան :

այ . Ծնակվետ և սցսպիսի մարդոց խղճնոտանկները արթը ըն-
ցած են , բայց տակաւին իրենց միտքերը նորոգուած չեն .
ուստի երբոր մեղքին զօրութիւնը մէկդի կ'երթոց , ան որ
զիրենք կրօնասէր ըլլալու գրգռեց՝ կը դադարի + անոր հա-
մար իրենք բնականաբար իրենց հին ճամբուն կրկին կը
դառնան . Ճիշտ ինչպէս որ կը տեսնենք թէ իր կերածովք
հիւանդացած շունը քանի որ հիւանդութիւնն իր վրան կը
տիրէ բոլորը կը փսխէ դուրս կը հանէ . հիմա չէ թէ շունը
ասիկայ ազատամութեամբ մը կ'ընէ , (թէ որ շունը
միար ունի կրնանք ըսել ,) հապա անոր համար որ հիւան-
դութիւնը իր ստանիրսը կը նեղէ . բայց երբոր հիւանդու-
թիւնն անցնի , և այնպէս ստամբուը հանգստանայ , իր
փափաքը փսխածէն ամենելին արդիլուած չըլլալով , կը
դառնայ բոլորը կը լսիք : Եշւ այսպէս ճշմարիտ է ան
գրուածը , թէ “Ըսւնը նորէն իր փսխածին կը դառ-
նայ” : Ի Պէտք . ը . 22 : Այսպէս միայն դժոխքի տան-
չանքներուն վախուն զօրութիւնովը երկնից վրայ փափաքը
մը ունենալով , երբոր իրենց դժոխքի զգացումն ու դա-
տապարութեան փախը կը պաղի ու կը ցրտանայ , իրենց՝
երկնից ու փրկութեան փափաքներն ալ կը պաղին : Ասան-
կով վերջապէս կ'ըլլայ՝ որ երբ իրենց յանցաւորութեան
ճանաչումն ու վախը կ'երթայ , երկնից ու երջանկութեան
վրայով իրենց փափաքները կը մեռնին , ու իրենց առջի
ճամբան կը դառնան * :

* Աեղծառոր հաւատացեալներուն զինակին ճշմարիտ
ստորագրութիւնն է աս : Աս տեղս կը տեսնենք շատերուն
իրնալուն պատճառը : Ասկէ ունանք պատեհութիւնն մը
ձեռք կ'առնեն Աստուծոյ սուրբերուն յաւիտենական փա-
ռացը յարատելու վարդապետութիւնն ուրանալու :
Բայց այսպէս ընելովին իրենց սրտերուն ամբարտաւանու-

Ք . Մեկ ուրիշ պատճառն ալ աս է որ ծառայական վախերը կը ամիրապետն իրենց վրայ . հիմն իմ խօսք ան վախերուն վրայ է , որ մարդոցմէ ունին . ու ան վախերն ամամար պիտի կործանին : Առաջ . իլթ . 25 : Ուստի թէպէտ և կ'երեւայ որ երկնից վրայ փափար մը ունին քանի որ դժոխքի բողերուն ձայնը ականջներնուն մօտ է , և սակայն ատ վախը քիչ մը անցածին պէտ ուրիշ խորհրդակառ կը դառնան . այսինքն՝ թէ աղէկ է խորագէտ ըլլալ . և ունեցածնուն բոլորը կորսընցընելու՝ կամ զո՞նէ իրենք զիրենք անխորշելի և անհարկաւոր նեղութիւններու մէջ ձգելու վտանգին չվաղել . և այսպէս նորին աշխարհի բաներուն ձեռք կը զարնեն :

Ք . Աստուածապաշտութեան կյորդ եղած ամօթն ալ իրենց ձամբուն վրայ խոշընդու մըն է . հաբարտ ու զոռոզ են , ու աստուածապաշտութիւնը իրենց աչքին առջին նուաստ ու արհամարհելի քան մըն է . ուստի դժոխքին ու զալու բարկութեան վրայով իրենց ձանաշումը կորսնցըն նելունը՝ կրկնին իրենց առջի ձամբուն կը դառնան :

Ք . Անդքին ձանաշումը և յաւիտենական սարսափին մատածութիւնը նեղութիւն կու տան իրենց . չն ուզեր տեսնել իրենց թշուառութիւնը գեռ անոր չհասած . թէ պէտ և կարելի է թէ անոր առաջին տեսութիւնը՝ թէ որ զանիկայ ընդունիլ ուզեն , կարենար զիրենք հոն դիմել տալ . ուր որ արդարները կը դիմեն ու ապահով են . բայց որովհետեւ մեղքի ու տանջանքի խորհուրդներէն կը փախչին , ինչպէս որ առաջ նշանակեցի , անոր համար երբոք անդամ մը Աստուծոյ բարկութեանն ու ահաւորութեանը

թիւնն ու Աստուծոյ խօսքին տղէտ ըլլանին կը յայտնեն . միանդամայն Աստուծոյ խոստմունքները տկարացընելով , ու իր շնորհաց Աւետարանը շաղիարփութիւն մը ըլլալ յուցընելով :

վասոյւլ իրենց արթնութիւններէն կ'ազատին , ուրախութեամբ կը սկսին իրենց սրտերը խստացընել , և այնպէս համբաներ կ'ընտրեն որ առաւել քան զառաւել կը խօստացընէ զիրենիք :

ՎՐԱՏՈՒԾԿԱԱՆՈՒՄ . Իւաւական մօտեցար դուն բանին , բայց ամենուն արմատն է իրենց մորին ու կամքին մէջ ժողովսութիւն մը ունենալու պակասութիւնը : Եւ անոր համար կը նմանին անոնք դատաւորին առջնն կայսող չարագործին , որ կը դուզ և կը սարսափի , և կը թուի թէ բոլոր սըրտանց կ'ապաշխարէ , բայց ամենուն արմատը պատճոյ կախաղանի պարանին վախն է . ոչ թէ ըրած չարագործութիւնը կ'ատէ , ինչպէս որ յայտնի է . քանզի թողուտուր զինքը որ իր ազատութիւնն ունենայ , ու պիտի ըլլայ դող մը , և այնպէս տակառին չարագործ մարդ մը . բայց ասոր հակառակ թէ որ իր միտքը փոխուէր , ուրիշ կերպ պիտի ըլլար ինք :

ՅՇՊԱՊԵՑ . Ես հիմա անոնց ետ դառնալուն պատճառաները ցոյց տուիքէզի . կ'ուղեղս դուն ալ անոնց ետ դառնալուն միջոցները ցուցընել ինձի :

ՎՐԱՏՈՒԾԿԱԱՆՈՒՄ . Յօժար կամօք կ'ուղեմ :

Ա . Իրենց մորինը բոլոր կը ցածնուն չափ կը հեռացընին զլատուած՝ մաշն ու հանդերձեալ դատաստանը յիշէլն :

Ի . Ենկէ ետեւ կամաց կամաց մէկդի կը ձգեն իրենց առանձին պարտաւորութիւնները , ինչպէս ծածուկ աղօթքը ընելը , ցանկութիւններնին սամձահարելը , հսկելը , մեղաց համար տրոտմիլը , և ասոնց նման բաները :

Դ . Եյնուհետեւ աշխոյժ և ջերմեռանդ քրիստոնեաներուն ընկերութենէն կը փախչին :

Դ . Յետոյ կը ցրտանան իրենց յայտնի պարտաւորութիւններէն , ինչպէս Աստուծոյ Խօսքը ընելն՝ կարդալն՝ բարեզաշտական խօսքերէն , և ասոնց նմաններէն :

Է . Վն ատենը կը սկսին պարեագաշոն անձանց վրայ ստունայարար պակասութիւններ գտնել , որպէս զի (առող վրայ նկատած քանի մը տկարութիւններնուն պատճառաւը) կը սկսի պախարակելով մեկդի ձգեն * :

Ղ . Վակէ ետե կը սկսին մարմնաւոր՝ ցոփակեաց և անստակ մարդոց իրենք զիրենք յարել , և անոնց հետ ընկերանաւը :

Է . Ջետոյ գաղտուկ տեղը մարմնաւոր և անստակ խօսակցութիւններ ընել կը սկսին . և կ'ուրախանան թէ որ պարկեշտ համարուած անձանց մեկուն վրայ այսպիսի բաներ տեսնեն , որպէս զի իրենք անոնց օրինակով աւելի համարձակութեամբ կարենան ընել անիկայ :

Ղ . Վակէ ետե կը սկսին մանը մեղքերուն հետ յայտնապէս խաղաւը :

Է . Եւ վերջապէս խստանալով իրենք զիրենք եղածնուն պէս կը ցուցընեն : Վայպէս նորեն թշրւառութեան անգունդին մէջն իյնալով՝ մշտնչնաւորապէս կը կորսուին իրենց խարեւութիւններով , թէ որ Վատուծոյ հրաշալի շնորհը շխափանէ անիկայ † :

* Հաւատացեալ մը երրոր ինքզինքը խոնարհեցընելուու իր պակսութիւններուն վրայ լալու տեղը ուրիշներուն պակսութիւններն ու մեղքերը տեսնելու և խստութեամբ դատելու ողի մը կը ցուցընէ , դէւ նշան մըն է :

† Տես թէ ննչպէս կամաց կամաց՝ քայլ առ քայլ ետ կը դառնան ու խստադրուժները : Կրենց ու խստադրուժութիւնը առաջ սրտենուն մէջ կը սկսի թերահաւաատութեամբ , և յետոյ վարքելնուն մէջ վախճան կ'առնէ յայտնի մեղշքերով : Խնչնէ համար հրամայուած է արևարհիս մէրը մէրժել , ինչնէ համար ագահութիւնը կրապաշտութիւն կը կոչուի : Վնոր համար՝ որ ինչ որ սիրար Վատուծմէ կը դարձընէ ու անոր հետը սերա հաղորդութիւն ունենալին կ'արգիլէ , բնականարար անոր դէմ ու խստադրուժքը լուսու կը հակամիտէ : Օգուշացէք ձեր սրտերուն ու

Արդ՝ երազիս մէջ տեսայ որ ճանապարհորդները մընչեւ հիմա Ատխարդեալ Երկրէն անցեր էին , ու կը մանելին Բնէս * կոչուած Երկիրը , Խառաջ . կի՞ . 4-12 , որուն օդը շատ անուշ էր , և հաճելի • իրենց ճամբան ալ շիտակ անոր մէջն իշխալուն՝ ատեն մը իրենք զիրենք կազուորեցին հոն : Մանաւանդ աս տեղու միշտ մտիկ կ'ընելին թռչուններուն երգելը՝ ու ամէն օր կը տեսնելին զետնին երեսը ծաղկեներուն երեալը , ու կը լսէին տատրակին ձայնը երկրին մէջը : Խրէ . ի . 10-12 : Աս երկրին մէջ արեգակը զիշեր ցորեկ կը ծագէր . անոր համար Մահուան Ըուրբին Զորէն անդին կ'իշեար , ու Հակոյ Հուսահատութիւննին իշխանութենէն դուրս էր , ոչ ալ Երկրայութեան Նմոցը աս տեղէս կը տեսնուեք : Աս տեղէն ճանապարհորդները իրենց Երժեալու քաղաքը կրնացին տեսնել . ու նաև հոս անոր մէկ քանի բնակիչներուն պատահեցան . քանզի աս երկրին մէջ սովորաբար Լուսաւոր էակներ կը պարտեին , ինչու որ ասիկայ երկինքին ոսհմանակից էր : Աս տեղ Հարսին ու Փեսային մէջ եղած պայմանը նորոգուած էր . մանաւանդ թէ , հոս՝ ինչպէս

յօժարութիւններուն : Հանապազօք հնազանդեցէք անպատուիրանին որ կ'րաէ . “ Ամէն զգուշութիւնով քուսիրտ պահէ , քանզի կենաց աղբիւները անկէ է ” : Խառաջ . ի . 23 : Յօնէ որ մէկդի ձգէք արթնութիւնը անտարակոյս սաստիկ պիտի ցաւիք երկրի վրայ մեղքին զգացումնիք , կամ դժոխքին մէջ անոր անէծքովը : “ Եայէցէք թէ ինչպէս զգուշութեամբ պիտի քալէք , չէ թէ անմիտներու պէս , հազար խմաստուններու պէս . ժամանակը ծախու առէք , ինչու որ օքերս չար են ” : Խիւն . է . 15 , 16 :

* Երբայցերէն Վաստածաշունչին Խառաջ . կի՞ . ըրբորդ համարին մէջ կ'ըսուի՛ “ Ու քու երկիրդ ուշաց պէտուլու կամ (Խւլս) պիտի ըսուի՛ ” , որ կը նշանակէ Նմուսնացիւն :

որ վեռան ուրախ կ'ըլլայ հարսին վրայ , այնպէս աւ իրենց Վասուածը ուրախ կ'ըլլասը անոնց վրայ : Աս տեղու իրենք ցորենոյ և զինուոյ կարօսութիւն չունեին . և աս տեղու առասութեամբ կը գտնեին ինչ որ իրենց բոլոր ճամփորդութեանը մէջ կը վնասուեին . Աս տեղու կը լսեին քաղաքէն և կած ձայները՝ ան բարձր ձայները , որ կ'ըսէր . Աիսնի աղջկանը ըսէք . Ահա քու Փրկիչը կու զայ . ահա անոր վարձրը իր հետու է : Աս տեղու ան երկրին բոլոր ընակիւնները կը կոչեին զանոնք՝ Առոր ժողովուրդ . Տէրո՞ւ փըրածնիւրիլ :

* Երջանիկ ճանապարհորդները պէտք է շնորհաւորենք որ հիմա ապահովութեամբ անցած էին Կախարդեալ Երկրէն , ու նոր ասհման մը կը մասնեին զուարձութիւններու , որ կը կոչուեիր Ըելա , այսինքն Վմաւանացհալ : Աս տեղու անոնք Տիրխատոսի՛ իր հարսին վրայ ունեցած սիրոյն ամենաբաղձալի յայտնութիւնները վայելցին , ու անոր մէջ բաժին ունենալին հաստատապէս զգացին : Աս երկրին օդը անուշ էր ու հաճելի . այսինքն՝ մեղքէն ու Վասանացէն զոլորչեքներ չեին ելլեր իրենց հոգիներուն լուսաւորութիւնը խաւարեցընելու՝ աղջմքին քաղցր ժամերուն մէջ : Աս տեղու թռչուններուն երդը անդադար կը ըսուեր . այսինքն՝ շնորհակալութեան ու հոգեոր քաղցրածայնը երգեր անդադար կը մաստուցուեին իրենց Աստուծոյն ու Փրկչին : «Չաղիկները երկրին վրայ ամեն օր կը տեսնուեին . այսինքն իրենց սրտին ատեն մը ամոււէ և անբեր անդաստանին մէջ շնորհաց սերմերը Արդարութեան Արեգակն կենանացուցիչ ճառագայթիւններովք կը բուսնեին ու զեղեցիկ ծաղիկներ կը բանային : Տատրակին ձայնը երկրին մէջ կը լսուեր . այսինքն երկնաւոր աղաւնուցին Աստուծոյ Առոր Հոգւուցին ու բախարար խոստմունքները իրենց հոգիներուն կու զար : Աս զուարձալի երկրին մէջ փառաւորեալ Աքեղակին Արդարութեան բոլոր երկրաւութիւններուն կը բայց յութիւններու ու վախերու ամպերը փարասելով զօրացուցիչ պայծառութեամբ իրենց հոգիներուն վրայ կը ծա-

Հիմա երբոր իրենք աս երկրին մէջ կը քալէին , աւելի ուրախութիւն ունէին քան որշափ ան տեղուանքը որ իրենց երթալու թաղաւորութեանը սահմանէն աւելի հեռու էր . և աւելք Քաղաքին մօտենալով , աւելի կատարեալ կը տեսնէին զանիկց : Մարգարիտով ու պատուական քարերով շնուրած էր ան , և անոր փողոցներուն յատակը ոսկի էր . այնպէս որ Քաղաքին բնական փառացն ու արեգակին անոր վրայ ծագած ճառագայթներուն ցոլացմանը պատճառաւը , Քրիստիանոս իր փափաքէն հիւանդացաւ : Յուսալիցն ալ ան նոյն հիւանդութեամբը քանի մը անդամ բռնուեցաւ . անոր համար անոնք աս տեղու կեցան մնացին , ու իրենց տառապանքին պատճառաւը կը

գեր : Ես տեղու հաւատրով հաղորդութիւն ունէին հրեշտակաց անհամար բնկերութեանը հետ , ու իրենց գարձին սկզբնաւորութեան ատենը եղած ամուսնական ուխտը նորոգուեցաւ ու հաստատուեցաւ իրենց սրտերնուն ուրախութիւնը աւելցրնելով : Ա երջապես՝ Քրիստոս ու իրմով եղած պատուական խոստմանըները իրենց կերակուրն ու բմբելիքը եղան , այնպէս որ անոր տանը պարարտութիւններովը առաստապէս յագեցան , ու անոր հաճութիւնները զետի պէս խմեցին : Ճշմարիտ է որ Կոստածոյ ժողովրդոց բոլորը այսպիսի մեծ շնորհքներու չեն պատահիր իրենց ճամփորդութեան վերջի տարիները , ու շատ պատճառներ կրնան ցուցուիլ անոնց ըզգատաչելուն . բայց՝ ով ընթերցող , թէ որ կը փափաքիս ասքու վերջին օրերդ հեւլայի մէջ անցրնել , զիսցիր որ հնագանդութեան ճամփան է որ կը տանի ապահովութեան՝ ու հանգստութեան : Վիար դիր ճամփուն ստորագրութեանը՝ այսինքն Առոր Գրքին . ժրացի՞ր քու կոչումն ու ընտրութիւնդ հաստատ պահելու . և հսկէ աշխատէ ու աղօթէ բարի խղճնուանք մը ունենալու առ Կոստուած և առ մարդիկ . ան ատենը աղելի պատճառ պիտի ունենաս յուսալու թէ աս երջանիկ ճամփորդներուն վայելածը զուն ալ պիտի վայելէս :

կանչելին թէ , “ Յօնէ որ իմ սիրականս գտնէք , անոր պատմէք որ ես սիրով հիւսնդացած կը նուազիմ ” * : Երբ + է . 8 *

Իսյց քիշ մը զօրու թիւն առնելով՝ ու իրենց հիւսնդութիւնը կրելու աւելի կարող ըստալով , յառաջ դացին իրենց համբան ու հետզհետէ աւելի մօտ եկան , ուր որ կային պարտէղներ՝ այդիներ ու ծաղկոցներ , և անոնց դռները շխտակ համբուն վրայ կը բացուէին : Արդ՝ երբոր անոնդ աս տեղուանիքն եկան , տեսան որ ահա պարտիզաւանը համբորդները անոր ըսին : Աս զեղցիկ այդիներն ու պարտէղները որեւնն են : Պատասխան տուաւ , թէ թագաւորինն են , ու հոս տընկուած են անոնդ յատկապէս իր զուարձութեանն ու նաև համբորդներուն կազզուրուելուն համար : Այսպէս պարտիզանը այդիներուն մէջ տարաւ զանոնդ , ու ըսաւ որ անոր ախորժահամ բերքերով իրենք զիրենք զովացընն : Ան նաև ցյց տուաւ անոնց թագաւորին պտըտելու համբաներն ու սաղարթախիտ ոստերով ծածկուած հովանաւոր զով տեղերը՝ ուր որ ինք շատ անդամ զուարձութեամբ կ'երթար : և հոս անոնդ մնացին ու քնացան :

Պահնք որ երազիս մէջ նկատեցի որ անոնդ հիմա աւելի

* Երջանիկ հոդիները որչափ որ երկնացին նպատակին կը մօտենան , այնչափ կը զանեն որ իրենց իղձերը աւելի կ'ընդարձակին՝ իրենց յօժարութիւնները աւելի հոգեօր կ'ըլլան , ու իրենց հոդիները աւելի կը փափարին վայելել զբրիստոս իր թագաւորութեանը մէջ : “ Եւսնաւոր ըան մըն է թէ Դաւթի Աազմոններուն առջի մասերը խոստովանութիւններով՝ բողոքներով՝ երկիւղներով՝ ու նեղութեան և տառապանաց պրտեռանդ աղաղակներով լցուն են : բայց գեպ ’ի մերջը մօտենալուն հետզհետէ վատահութեան՝ երախտազիսութեան և ուրախութեան կը զառնան , ու անխառն փառաբանութեան և գոհութեան նրգերով կը վերջանան :

կը խօսելին իրենց քունին մէջ քան որչափ երբէք խօսեցան իրենց բոլոր ճամբորդութեանը մէջ , և ասոր վրայ զարմանքի մը մէջ իշխալով՝ պարտիզանն ըստ ինձի . Ենչու համար կը զարմանաս աս բանիս վրայ . աս այդիներուն խաղողներուն պառողին բնութիւնն է այնպիսի անուշութեամբ վար երթալ , որ քնացողներուն ըթուուկները կը խօսեցընէ * : Եթէ . է . 9 :

Վայպէս տեսայ որ երբ անոնք արթնցան , իրենք զերենք պատրաստեցին Քաղաքն ելելու : Բայց ինչպէս որ ըսի՞ արեդակին ճառագայթներուն քաղաքին վրայ ցոլացումը , (որովհետեւ քաղաքը դուռ ուիկի էր , Յայտ . ին . 18 ,) այնչափ կարդէ դուրս պայծառափայլ էր , որ տակաւին բաց երեսով չէին կրնար նայիլ անոր , հապա դործիքի մը միջնոցվը՝ որ աս դիտմամբ չինուած էր : Է կոտրէ . դ . 18 : Ուստի տեսայ որ առաջ երթալնուն երկու մարդու պատահեցան ուիրոյ պէս փայլուն հանդերձներով , ու իրենց երեսներն ալ լոյսի պէս կը վայլէին :

Աս մարդիկը հարցուցին ճամբորդներուն թէ ուրիշ եկան , ու անոնք ալ եկած տեղերնին ըսին անոնց : Հարցուցին ևս թէ զիշերները ուր իջան . ինչ դժուարութիւններու և վտանգներու , ինչ միսիթարութիւններու և զուարձութիւններու պատահեցան ճամբուն մէջ , ու անոնք ալ պատմեցին անոնց : Ան առնելը ան իրենց պատահած մարդիկն ըսին իրենց , թէ՛ Միայն երկու դժուա-

* Հաւիտենական Աւելարանին զինին հաւատացելոց ըթուուկները կը խօսեցընէ , որոնք Տէրոջմով կը հանգաւանան . Վրիստոսի ու իր շնորհաց փառարանութիւնը երդել , ու Խստուծոյ իրենց համար ըրած մեծամեծ բաները յացանի բնել կու առյ անոնց : Ու ան հոգիները՝ որոնք առատօրէն կը խմեն աս բաժակը , շատ յաձախ կը փառաւորին զըթիսասո ու կը բարձրացընեն անոր շնորհին մեծութիւնը :

բութիւններու ալ պիտի պատահիք դուք , ու անկե ևսե քաղաքն մէջն էք * :

Քրիստիանոս և իր ըսկերը ան առևնը խնդրեցին ան մարդոցմէն որ իրենց հետն երթան . անոնք ալ իրենց ըսին թէ՛ կու զանք : Խայց՝ ըսին , դուք անիկայ բուն ձեր հաւասարովը պէտք է ստանաք : Այսպէս երազիս մէջ տեսոյ որ անոնք մէկտեղ տուած դացին , մինչեւ որ ան տեղու եկան ուրիշ դուռը կը տեսնուիք :

Սսկե զատ տեսայ ևս որ իրենց ու դրանը մէջտեղը դետ մը կար , բայց անոր վրայէն անցնելու կամուրջ չկար + ու զետն ալ շատ խորունկ էք : Ուստի ճանապարհորդները աս գետը տեսնելուուն մեծապէս խոռվեցան . բայց իրենց հետ զացող մարդիկն ըսին , թէ՛ զիւաք է դեմին մէջն անցնիք , եթէ ոչ չէք իրնար դուռը համար + :

Ան առևնը ճանապարհորդներն սկսեցին հարցուփորձ

* Հօնչ Են աս երկու դժուարութիւնները . մէկը դըրա սուանց մահ՝ ու միւսը ներսուանց թերահաւատութիւն է : Սս վերջնիս պատճառաւան առաջնորդ դժուարին կու դայ մեղի : Խզարք խմ՝ ջերմեռանդ սրախու խնդրենք ունենալ զօրաւոր հաւատք մը , աշխարհի յաղթող՝ մէդքը նուանող՝ ու մահը նկուն բնող հաւատք մը , թէ՛ իեանք երնուս մէջ և թէ մահուան առեննիս : Յիսուս Ամրդա սպես , միայն խօսք մը ըսէ , ու մեր թերահաւատութիւնը պիտի փախչի , մեր հաւատքը պիտի զօրանայ , ու մեր յոյսը պիտի հաստատուի :

+ Հիմա ճանապարհորդները պիտի համշխապին իրենց վերջն թշնամոյն որ է մահը , ու պիտի մարտնչին անոր հետ : Եցրոր անիկայ իրենց առջնոն երեայ՝ իրենց վախերը կ'արթենան : Խայց պիտք է անցնին : Ուստի հօնչ բանի վրայ պիտի ուղղեն իրենց աշքերը . իրենց անձի՞ն կամ իրենց ըրածի՞ն վրայ : Չե՛ : Ոխայն ան նոյն Յիսուսին որ մեզի համար մահը յաղթեց , ու կարող է մեր վրայի մահուան վախին ալ յաղթել :

Ընել թէ արդեօք ուրիշ ճամբայ մը մկանը Երթաւու : Վասր պատասխան տուին միւսներն՝ ըսելով . Վայ , բայց աշխարհի սկիզբէն հետէ երկու մարդոցմէ՝ այսինքն Ենուքէն ու Խղխայէն զատ մեկու մը թոյլտուութիւն չեղաւ ան ճամբէն անցնելու , ոչ ալ մինչև վերջն փողը հնչելուն պիտի ըլլայ : Ուստի ճամբորդները՝ մանաւանդ Վրիտիանոս սկսեց իր մասցը մէջ յուսաբեկիլ , ու ասուին անդին կը նայէր , բայց մէկ ճամբայ մը չէին կը նար գտնել որով կարող ըլլային ան գետը անցնելէն աղատելու : Վն ատենը հարցուցին մարդոցը թէ արդեօք ջուրը ամեն տեղ մի և նոյն խորութիւնն ունի : Պատասխան տուին թէ՞ Չէ . սակայն և այնպէս մենք աս մասին չենք կը նար օգնութիւն ընել ձեզի : Վանզի՞ ըսին Լուսաւորները , ձեր ան տեղի օնադառորմն վրայ ունեցած հաւատուուդ նացելով աւելի խորունկ կամ աւելի ծանծաղ պիտի դանելու անիկայ * :

Ասկէ ետեւ անոնք իրենք զիրենք պատրաստեցին ջուրը մտնելու . ու մտնելով Վրիտիանոս սկսեց ընկղմիլ , ու իր բարի ընկերին Յուսալիցին կանչելով կ'ըսէր . “ Ճեղեղները զիս պատրեցին անոր ամեն կոհակները ու ալիքները իմ վրայէս կ'անցնին ” † : Առո՞ . խի . 7 : Յո՞ . ի . 3 :

* Վրիտառնեայք իրենց վերջն թշնամին մահը կը յաղթեն՝ իրենց հաւատքով , ու Վասուծոյ Պառին արիւնով . այսինքն հաւատքով Որկչին չարչարանքներուն ապաւինելով : Ու իրենց հաւատքը նըսափ տկար կամ նըսափ զօշաւոր ըլլայ անոր վրայ՝ որ իր անձին մէջ մահը յաղթեց , ոյն չափով իրենց յաղթութիւնը սակաւ կամ աւելի կ'ըրմայ : Բայց Վրիտառոսի նորհքովը ամենաստկար քրիստոնան մահուան գետին ապահովութեամբ պիտի անցնի , թէ և զօրաւորին չափ հանդսուութեամբ չանցնի :

† Վրիտիանոս թէկալէտ և աւելի փորձառու ու հաստատուն հաւատացձաւէ , բայց մահուան մօտենալուն աւելի

Աս առենքը միւսն ըստ . Աւրամի եղիք՝ Եղայը իմ ,
ևս դասց յատակը , ու աղէկ է ան : Ու Քրիստիանոս
ըստ . Ո՛հ , բարեկամ՝ իմ , մահուան ցաւերը իմ չորս
կողման պատեցին . պիտի չտեսնեմ ևս ան երկիրը որ կաթ
ու մեղք կը բղիք : Աս խօսքն վրայ մնջ մժութիւն մը
ու սարսափ մը ինկաւ Քրիստիանոսին վրայ , այսպէս որ
իր առջեւ չեր կրնար տեսնել : Աս տեղս ինք նաև մնջաւ
պէս կորանցուց իր զգացութիւնները . այսպէս որ՝ ոչ կը

ամրոխած ու ահարեկած ցուցուած է հոս : Ասիկայ շխտակ
դիտաւորութեամի՞ այսպէս ցուցուած է չը թէ որ միշտ այս-
տիւ կը պատահի բանը , հապա որ երբեմն այսպէս կ'ըւ-
լոյ : Եցրոր Տէրը այսպէս կը կարգադրէ , անտարկոյս
կենդանի մնացովներուն խրառուելուն համար է ան : Աս-
տուածապաշտ քրիստոնէի մը վրայ նացելուն՝ զրեթէ կը
կարծենք թէ 'ի բնեւ արժանաւորութիւն մը ուներ ինք , ու
կը յուսանիք թէ հանգստութեամբ վախճաննելու արժանա-
ւոր էր : Բայց Տէրը մեղաւոր մարդուն պարտականու-
թիւն չունի : Ամենէն աղէկ անձնոր իրենց ներաը բաւա-
կան պղծութիւններ ունին զիբենք վախցընելու , թէ որ
իրենց հաւատքին պայցծառութիւնը ամպով մժնասց , ու
թշամին մօսենաց : Այսովհաբ օրինակներով կը սորմինք
թէ մեր մահուան ժաման մեր յցյուր ամէն բաներէն մէկդի
վերցընելով՝ Յիսուսի արեանն ու արդարութեանը՝ ու իր
խոսամնանքները կատարելու իր հաւատարիմ ըլլաւուն վրայ
պէտք է հաստատենք : Եւ թէպէտ մնանելու . հաւատա-
ցեալը կարելի է որ մժութեան պատահի իր ճամբուն վրայ ,
բայց սովորաբար ան մժութիւնը կը փարատի , ու իր
մէկնելն առաջ լոյսը վերստին կը ծագէ : Ով Տէր՝ քու
պատուական խոսամնանքներուդ վրայ հաստատէ մեր հա-
ւատըրը , թէ որ քու օրէնեալ կամքդ ըլլայ , որպէս զի
մեր երեկոյեան արել մարը մնանելու ատենը պայծառ ըլլայ .
ասպա թէ ոչնէ մեղի որ ըսենք՝ Քու կամքդ ըլլայ :
Եցրոր մեր մարդիններն ու մեր սրանքը կը տկարանան ,
ուուն մեր սրանքուն զօրութիւն ու մեր յաւխտենական բա-
ժներ Եղիք + ամէն : Այսով + հի + 26 :

Նար յիշել և մէ կարգաւ խօսիլ ան անուշիկ միսիթարութիւններուն մէկուն վրայով՝ որոնց որ նոք իր համբորդութեանը մէջ պատահեցաւ . Հասդա ըոլոր իր խօսած բառերը տակաւին կը ցուցընեին թէ նոք մորի սարսափ ու սրտաղողեր ունի թէ ան զետին մէջ պիտի կորսուի , ու բնաւ պիտի չհամնի ան դռնէն ներս մոնելու : Աս տեղս ինչպէս որ քովը կայնողները կ'իմանային , նաև շատ վատի մուծմուշըներու մէջ նիկաւ ան մեղքերուն վրայով՝ որ նոք գործեր էր թէ համբորդութեան սկսելն առաջ և թէ անկէ ետեւ : Աը նկատուեր ևս թէ առ աչօք տեսիլքներու և չար ողիներու երևոյթով կը տանջուեր . քանզի միշտ և յաճախ այսպէս կը ցուցըներ նոք իր խօսքերով :

Ա ասն որոյ Յուսալիցը շատ աշխատութիւն կը կրեր աս տեղս իր եղբօրը զլուինը չուրեն վեր պահելու . մանաւանդ որ երբեմն բոլորովին Վրիստիանոս կ'ընկղմէր , ու յետոյ շատ շանցած կրկին վեր կ'եւլէր կիսամեռ : Յուսալիցը կը չանար ևս միսիթարել զանիկայ ըսելով . Ե՛ղայր՝ կը տեսնեմ դուռը , ու մեզ ընդունելու համար անոր քովը կայնող մարդիկը . բայց Վրիստիանոս պատասխան կու տար , թէ Դուն ես , դուն ես ան որուն համար անոնք կը սպասեն . քանի որ ես քեզ զիացայ դուն յուսալից էիր : Դուն աւ այնպէս էիր , ըստ նոք Վրիստիանոսին : Ա՛հ , Ե՛ղայր , ըստ Վրիստիանոս , անտարակցս թէ որ ես շխտակ ըլայի , ան հիմն ինձի օգնելու պիտի ելլէր . բայց իմ մեղքերուս համար նոք որոզայթի բերաւ , ու ձգեց զիս : Ան ատենը Յուսալիցն ըստաւ . Ե՛ղայր իմ , դուն բոլորովին մոռցար ան խօսքը որ ամբարիչու մարդոց համար ըսուած է , թէ և Իրենց մահուան ժամանակն աւ ցաւեր չըւնին . անոնք մարդոց նեղութեանը մէջ չեն , և ուրիշ մարդոց հետ չեն տանջուիր" * : Առաջ . հի . 4 ,

* Ակադ. չէ որ մէկ անձի մը վիճակը իր մահուանը եղաւ

5 : Աս նեղութիւններն ու տանջանքները որ դուն աս ջուրերուն մէջ կը քաշես , նշան չեն թէ Կատուած քեզ եւ բեսէ ձգեց + հապա անոնք խրկուած են քեզ փորձելու թէ արդեօք քու միաբդ պիտի բերե՞ս ան բանները որ մինչեւ հիմա իր բարութենեն ընդունեցիր , ու քու նեղութիւններուդ մէջ իրեն պիտի ապաւինի՞ս * :

Են ասենը երազիս մէջ տեսայ որ Քրիստիանոս սկսեց մասհութեան մէջ ըլլալ : Յուսալիցն ալ աս խօսքս ըստ իրեն . Ուրախացի՞ր , Յիսուս Քրիստոս քեզ կը բժշկէ † : Եւ ասոր վրայ Քրիստիանոս բարձր ձայնով մը

Նակեն դատենք : Աեղծաւորները կարելի է որ խաղաղ մահով մը մեռնին յաւխենական կենաց յուսովը , ու վերջը իրենց յցյսեն զրկուին : Տզիսութիւնը շուտով անցաւ զետէ՞ն՝ Քրիստիանոսին և Յուսալիցին քաշած դժուարութիւններուն կեսը չքաշած : Ունայնացյանին նաւակով վը գետէն անցաւ + բայց երրոր երկնային քաղաքը մանելու յուսով սկսեց դուռը զարնել՝ ընդունելութիւն չգտաւ : Ա կայական չըներ , և անոր համար չկրցաւ ներս քաղաքը մանել : Եսոր հակառակ ճշմարիտ քրիստոնենին արեգակը երբեմն կ'երևայ թէ խաւարած մարը կը մանէ , և սա կայն մշտնջնաւոր օրուան մը պայծառութիւնով կը ծաղի՞ն որոր հորիզոն մը լուսաւորելու , ու ալ բնաւ մարը չմանելու : Ուրեմն բան մը իր ժամանակէն առաջ չդաւանիք :

* Երրոր հիւանդի մը կամ հոգեվարի մը տես կ'երաժառ , չմոռնաս Կատուծոյ խօսքը քու հետդ ունենալու քու սրտիդ ու քու բերնիդ մէջ : Մասվ միայն կրնաս յուսալ թէ Կատուծոյ օրհնութիւնը հիւանդին կամ հոգեվարին հոգւոյն պիտի դայ + քանզի սկիզբը՝ Կատուծոյ խօսքիդ հաւատըը եկաւ , ու անով հաւատըը կը դորանց վերջը + և Կատուածաշունչ գրոց բովանդակութիւնը Յիսուս է :

† Յիսուս Քրիստոս է արդարեւ Ալֆա և Օմեգա , առաջին և վերջին , մեր յցյսին սկիզբն ու վախճանը : Կրմով կը

աղաղակեց՝ ըսելով . Ահ , կրկն կը տեսնեմ զինքը , ու
ինձի կը լսէ . Երբոր չուրերէն անցնիս՝ ևս քեզի հետ պի-
տի ըլլամ . ու գետերը քեզ պիտի չորխնն : Եսայ .
խէ . Զ : Ան ատենը երկուքն ալ քաջալերեցան , ու ան-
կէ ետե թշնամին քարի պէս լուռ մնաց , մինչեւ անոնց
անդիի կողմն անցնիլը : Ուստի Քրիստիանոս խաղոյն գե-
տին յատակը գտաւ որ վրան կայնի , ու այնպէս հանդի-
պեցաւ որ գետին մնացած մասը ծանծաղ էր : Այսպէս
անոնք անդիի կողմն անցան :

Արդ՝ անդիի կողմի գետեղերքը տեսան դարձեալ ան-
երկու Լուսաւոր Մարդիկը , որոնք իրենց կը սպասէին
հան : Ուստի գետէն դուրս ելած ըլլալով Լուսաւորները
բարեկցին զանոնք՝ ըսելով . Անք սպասաւորութիւն ը-
նող հողիներ ենք , որ նրկուած ենք փրկութեան ժառան-
գորդներուն սպասաւորելու : Աբբ . ա . 14 : Այսպէս
անոնք առաջ դացին դէպ 'ի դուռը :

սկսինք ու կը վերջացընենք մեր քրիստոնէական համբոր-
դութիւնը . ու մեր ամէն նեղութիւններն ու փորձութիւն-
ները մեծարարրա կ'աղաղակեն ու քաջացայտ կը ցուցը-
նեն մեղի մեր Տէրոջը ան ճշմարիտ խօսքը , թէ “ Առանց
ինձի բան մը չէք կրնար ընել ” : Յուն . ԺԷ . 5 :

* Քրիստիանոս թէպէտ և մեծ նեղութեան մէջ էր ,
բայց իր բոլոր թէրահաւատական երկրացութիւններէն ա-
զատեցաւ Քրիստոսի խոստմանքին հաւատալով : Քրիս-
տոսի հաւատալը միայն կարող է մեր վախերը հանդար-
տեցընել ու մեր մահուան ցաւերը թէթեցընել : Ծէ
որ հաւատանք թէ Յիսուս մնուաւ ու յարեաւ , մահը կը
կորսիցընէ իր տալու սարսափը , կը փոխէ իր խոժոռ
դէքը . ինդում երեսով մը սիրոյ պատղամաւոր կու-
գայ : Քանզի՞ թէպէտ և մահուան խայթոցը մեղմն է:
ու մեղմին զօրութիւնը օրէնքը , բայց Յիսուս օրէնքին
անէծքէն զնից մեզ՝ ինք մեզի համար անէծք ըլլալով , և
հետեւապէս մահէն առաւ անոր խայթոցը :

Հիմաս պէտք է դիտնամ՝ որ Կաղաքը բարձր լեռան մը վրայ կեցած էր . բայց ճամփորդները դիւրութեամբ կ'եւը չեն աս լեռնէն վեր , ինչու որ աս երկու Լուսաւորները քովերնին էին իրենց թեւերէն բռնելով դեպ 'ի վեր տանեւլու զանոնիք * , նաև իրենց մահկանացու հանգերձն ալ եւ տեսնին ձգեր էին դետին մեջ . քանզի թէպէտ անոնք ան հանգերձներովը հոն մասն , բայց առանց անոնց անիկ դուրս ելան : Աս պատճառաւ աւելի դիւրութեամբ և արագութեամիւ վեր կ'եւը ին աս տեղին , թէպէտ և քաղաքին հիմը ամսիկրէն ալ բարձր էր : Ուստի անոնք օդին սահմաններէն վըր կ'եւը էին , անուշ խօսքեր ընկելով իրենց երթարու տաեննին , միսիթարուելով՝ որ անվտանգ անցան դետին , և այսպէս փառաւոր ընկերներ ունեցան իրենց օդնելու :

Խոկ ան խօսակցութիւնը որ Լուսաւորներուն հետն ըրին , ան տեղին փառքին վրայ էր , որոնք իրենց պատճեցին թէ անոր փառքն ու դեղէցութիւնը անձառելի է : Ճ'ան է ըսին անոնք՝ Աիօն լեռը , երկնաւոր Նըրուսաղէմը , ըխրաւոր հրեշտակաց ժողովը , արդարներուն հո-

զոհութիւն Վատուծոյ որ մեզի յաղթութիւն կու տայ , Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի ձեռօքը :

* Հրեշտակները որ անողու անողաղար փրկութեան ժառանգներուն կը սպասաւորնն՝ անոնց կենդանութեանը , իրենց պահպանական հոգովութիւնը չեն ձգեր անոնց մահուան ատենը : Վառնց մահուան անկողինին բոլորսիքը կը պատին , ու պատրաստ են անոնց զատուելու հողին ընդունելու՝ ու իրենց թեւերուն վրայ առնելով դանոնք օդին սահմաններէն (չոր հողիներէն ազատ) Վատուծոյ պըրախտը տանելու : Հրեշտակաց Վատուծը Յիսուս ալ պատրաստ կը կայնի զգուանօք ընդունելու ան հողիները իր գիրկը , ու փառաց աթոռի վրայ բաղմեցընելու զանոնք իր աջ կողմը :

զիները որ կատարուեր են : Եշբ . ժբ . 22 , 23 : Հիմա դուք կ'երթաք՝ ըսին անոնք Աստուծոյ դրախաը , ու որ պիտի տեսնեք կենաց ծառը , և պիտի ուտեք անոր չխամրացող պատուղները : Եւ երբոր հոն երթաք ձերմակ հանդերձներ պիտի տրուին ձեզի . ու ձեր պարտիլը և խօսակցիլը օճագաւորին հետ պիտի ըլլայ ամեն օր , նաև ըուլը յաւիտենականութեան օրերը : Յայտ . ի . 7 : դ . 4 , 5 : իբ . 4 , 5 : Ան տեղը աւ պիտի շտեմենէք այնպէս բաներ՝ որոնք վարի սահմանին մէջ երկրի վրայ եղած ատեննիդ տեսաք . այսինքն՝ տրտմութիւն , հիւանդութիւն , նեղութիւն , և մահ . քանդի առջի բաները անցան : Յայտ . իա . 4 : Հիմա դուք կ'երթաք Արքահամբին՝ Խասհակլին՝ ու Յակոբին՝ և մարդարէներուն , որոնք որ Աստուած դալու շարիքներէն փրկեց , ու հիմա անոնք հանդիսան են , ու ամեն մէկը արդարութեամի կը քալէ :

Ան առենք մարդիկը հարցուցին , թէ՛ Անոք ան առ-րը տեղը ի՞նչ պէտք է ընենք : Որոնց պատասխան տրուեցաւ , թէ՛ Կառք ան տեղ բոլոր ձեր աշխատանքին հանգստութիւնը պիտի ընդունիք , ու բոլոր ձեր տրտմութիւններուն տեղը ուրախութիւն պիտի ունենաք : Ձեր սերմանածը պիտի հնձէք . այսինքն՝ համբուն վրայ օճագաւորին համար ձեր քաշածներուն՝ արցունքներուն՝ և աղօթքներուն պառուղը : Գրառ . դ . 8 : Ան տեղ գուք ուկեղէն թագեր պիտի հագնիք , ու Ամենասուրբին տեսութիւնը մշտնջենաւորապէս պիտի վայելէք . քանդի հոն պիտի տեսնեք գուք զինքը՝ ինչպէս որ է : ա Յանձ . դ . 2 : Ան տեղ նաև հանասպազ պիտի ծառայէք անոր՝ փառարանութիւնով , ցնծութիւնով ու շնորհակալութիւնով , որուն որ երկրի վրայ կը ծառայէիք՝ թէպէտ և շատ զժուարութեամի ձեր մարմնոյն տեղարութեանը պատճառառ : Ան տեղ պիտի զմայլին ձեր աչքերը Ամենակարողը տեսնելով , ու ձեր ականջները՝ անոր հաճոյական ձայնը լսելով :

տեղ պիտի վայելէք դարձեաւ մեր բարեկամները՝ որոնք ձենէ առաջ հոն զայցին + և նոյն տեղը ու բախութեամբ պիտի ընդունիք ամեն անոնք որ ձենէ ետեւ ան սուրբ տեղը կուղան : Ան տեղը ևս պիտի հագութիք փառքով ու պատուով , ու պիտի զարդարութիք այնպիսի կազմածքներով՝ որ փառաց թագաւորին հետ հեծելութեան ելլելու պիտի յարմարիք : Երբոր ինք փողի ձայնով ամզերուն մեջ իրիւ թէ հովի թեւրուն վայ դայ՝ դուք աւ իր հետը պիտի գալը + ու երբոր ինք դատաստանի աթոռուը նատի՝ դուք աւ իր քովը պիտի նատիք : “Եա մանաւանդ՝ երբոր ինք չարագործներուն վճիռը կտրեն թէ հրեշտակ եղեր են թէ մարդիկ , դուք աւ ան վճիռը կտրելուն մեջ մասնակցութիւն պիտի ունենաք , որովհետեւ անոնք իրեն և ձեր թշնամիներն ենն : “Եան երբոր ինք կրկին Վաղաքը դառնայ , դուք աւ վորդի ձայնով պիտի երթաք , և միշտ իր հետն ըլլաք : ան թժուն + դ . 13 : Յառակ . 14 , 15 : Դան . է . 9 , 10 : ան Ասրակ . դ . 2 , 3 :

Եղող՝ երբոր անոնք այսպէս դէպ՝ ի դուռը կը մօտենային , ահա երկնային զօրաց զինուորութիւն մը դուրս ելաւ ասոնց դէմը ելլելու + ու միւս երկու Լուսաւորիներն ասոնց ըսին . Ասոնք են ան մարդիկը՝ որ մեր Տէրը սիրեցին՝ երբոր իրենք աշխարհի վրայ էին , ու իր սուրբ անուանը համար ամեն բան ձգեցին . և ինք մեզ իրկեց ասոնք բերելու , ու մենք իրենց բաղձացած ճամփորդութեանը մեջ մինչեւ աս տեղս բերենք զիրենք , որպէս զի ներս մնանն և իրենց Փրկիչը ու բախութեամբ դէմ առ դէմ տեսնն : Ան աւ տենք երկնային զօրքերը մեծամայն ցնծութեամբ դռչեցին ըսելու . “Երանելի են անոնք որ Վառնուկին հարսաւնեացը ընթրիքին կանցուած են” : Յայտ + ժիշ . 9 : Աս միջօցիս նաև դուրս ելան անոնք դիմաւորելու թագաւորին վոոլ հնչեցընողներուն մեկ քանիները՝ ձերմակ ու պայծառափայլ հանդերձներ հաղուած , որոնք քաղցրա-

Նուադ բարձրաձայն աղաղակներով մինչև անդամ՝ երկնից արձագանք հանել կու տասյին իրենց ձայնով : Աս վորդ հնչեցը նողները բարեհցին գընքիստիսուն ու իր ընկերը տասը հազար անգամ՝ նարեաւ եկաք աշխարհէն ըսելով անռնց : և ասիկայ ըրբն ցնծութիւնով ու վորդ ձայնով :

Վարիկայ ընկելուն ետե ամէն կողմէն շրջապատեցին զանոնիք : ոմանք առջենուն կ'երթային , ոմանք ետենուն , ոմանք աջ կողմերուն և ոմանք ձախ կողմերուն , (իբրթէ վերին սահմաններուն մէջ անոնք սպահպանելու համար ,) շարունակ երդելով ճամփուն վրայ քաղցրանուագ աղաղակով և բարձրաձայն եղանակով : այնպէս որ անտեսարանը սյնապէս կու դար անիկայ տեսնելու կարող եղողին՝ որպէս թէ բուն երկինքը վար իջած եր զանոնք դիմաւորելու : Ուստի այսապէս ամէնը մէկտեղ առաջ դային . և երթալու ատենինին աս վորդսհարները տաեն ատեն ցնծալից ձայններով և իրենց նուագարաններուն հետ նայուածքներով և շարժուածքներով տակաւին կ'ակնարիկէին Վրիտախանուին և իր ընկերին՝ թէ ո՛րչափ սիրով ընդունած էին զերինք իրենց ընկերութեանը մէջ , և ո՛րչափ ուրախութեամբ եկած էին զերինք գիմառութեանը : Եւ հիմա աս երկու մարդիկը տակաւին երկինքը չեկած իրքեւ թէ հոն եղածի պէս հրեշտակներուն տեսութեամբն ու անռնց քաղցրանուագ եղանակները լոելով զմնցլեցան : Աս տեղունակ բուն Վրաղարը աչքերնուն առջեւ յայտնի կ'երեար , ու իրենց կը թուելը թէ անոր բոլոր զանդակներուն հնչուիլը կը լսեն՝ իրենց հոն մանելը բարեկելու : Բայց ամէն բանէն աւելի ան եռանդուն և ցնծալից մոտածմունքները՝ որ այսպիսի ընկերներու հետ իրենց ան տեղը բնակելուն վրայ ունէին , և ան ալ յաւիտեանս յաւիտենից՝ անպատմելի էին . և ո՞ր լցու կամ դրիչ կրնայ բացարել անռնց վասուառութիւնը : Այսպէս անոնք ելան՝ վեր Վրաղարին Պառուը :

Սրբ երբոր պրանը առջին եկան , անոր վրայ ուկեղին զբերալ գրուած էր :

“ Երանելին ին անոն՝ որ անոր պատրուիրանենիցը իւ իւսուարին . անոնի իշխանութեան ունին իւնոց նառեն ուսութան , և դամերին ներս տաղաւոր հանձելու : ” Յայտ . իլ . 14 :

Վոկէ ետև երազիս մէջ տեսայ որ Լուսաւորիները իրենց ըսին որ գուռը զարնեն . և երբոր ասիկայ ըրին՝ գրանը վրային քանի մը անձինք նայեցան , որոնք էին կշովք , Անվական , ու Եղիա , և՛ : Լուսաւորիներն ալ անոնց ըսին , թէ Աս ճամբորդները Աործանման Վաղաքէն եկած են , աս տեղիս Ձագաւորին վրայ իրենց ունեցած սիրոյն համար : Ան ատենը ճամբորդները իրենց Ակայականնեւ ըսին որ սկիզբն ընդունենք էին . և անոնք Ձագաւորին տարուեցան՝ որ երբոր կարդաց անոնք՝ ըստա . Ո՞ւր են ան մարդիկը : Գլատասիան արուեցաւ իրին , թէ Դիրանը դուրսի դին կայներ են : Ան ատենը Ձագաւորը հրաման ըրաւ գուռը բանալու , որ Ճշմարտութիւն պահող արդարները ներս մտնեն : Եսայ . իլ . 2 * :

* Ո՞վ են աս արդարները : Ո՞վ պիտի ըստան . իրենց անձերը արդարացընող փարիսեցիները կ'ըսեն թէ իրենք են , որ իրենց բարի և արդար գործքերուց իրենք զիրենք ուրիշներէն տարրեր կը սկսին , ու ասանելով Վատուեց առջին արդարացած : Որինց համար պիտի հրամայէ Տէրը որ փառաց գուռը բացուի , բայց եթէ աս բարի արդար ժողովուրդին համար : Խայց Գիւտրոս մեզի կ'ըսէն թէ արդար ժողովուրդը սեփհական ժողովուրդ մընէ , աշխարհիս մնացածներէն զատուած , տարրեր սերմէ ու սերունդէ առաջ եկած , առ Գիւտ . ի . 9 , 10 , որոնք իրենց վրայ արդարութիւն չեն տեսներ , այլ խոնարհ և նուևաս են իրենց աչքերուն առջեւը . Ճշմարտութեան խօսքով ծնած ու Ճշմարտութեան գողին նորոգուած Հիսուսի Ճշմարտութիւնը կ'ընդունին ու կը սիրին : Վնով կը փառաւորին ու անոր արդարութիւնով կը օրարծենան , քանոյի

Արդ աեսայ երազիս մէջ որ երկու մարդիկը գոնեն ներս
մտան . ու ահա՝ մտածնուն պէս այլակերպեցան , ու այն-
պէս հանդերձ վրանին հագան որ ոսկոյ պէս կը փայլէր :
Ասյին ևս որ քնարներով ու թաղերով իրենց դէմն ելան ,
ու անոնք անոնց տուին . քնարները՝ անոնցմավ գովարա-
նութիւն ընելու , ու թաղերը՝ պատույ նշան ըլլալու :
Ենկէ ետե երազիս մէջ լսեցի որ Կաղաքին բռլոր զանդակ-
ները զարնուցան ուրախութեան համար , ու անոնց ը-
սուեցաւ . “ Անէք ձեր Տէրոջը ուրախութեանը մէջ ” :
Ասոր . իէ . 23 : Լսեցի ևս որ ան մարդիկն ալ բարձր
ձայնով կը դուչին ըսելով . “ Ամոռոյն վրայ նատողին և
Գառնուկին՝ օրնութիւն ու պատիւ և փառք ու զօրու-
թիւն յաւիտեանս յաւիտենից ” : Յայտ . ե . 13 :

Երդ՝ մարդիկը ներս առնելու համար դռները բացուե-
լուն պէս , անոնց ետեկն ներս նայեցայ , և ահա արեգակի
պէս կը ճառագայթէր քաղաքը . փողոյներն ալ ոսկով
յատակած էր , և անոնց մէջ կը պատըսէին շատ մարդիկ
դլուիներնին թաղ դրած , ու ձեռքերնին արմաւենի ու

անով եղած են իրենք Աստուծոյ արդարութիւն . անոր
արդարութիւնն է իրենց փրկութեան պատմուանը , ու
Աստուծոյ արքայութիւնը իրենց իրաւունքը : Աս Ճշմար-
տութիւնով կը պահուին , աս Ճշմարտութիւնով իրենց
կեանին ու ընթացքը կը կարգադրեն , և աս Ճշմարտու-
թիւնը ամուր կը բռնեն իրենց կեանիքն մէջ ու կը պահեն
իրենց մահուանը : Եւ այսպէս Ճշմարտութեան հաւատըն
մէջ ապրելով ու մեռնելով՝ Պօղոսի հետ կը համարձակին
ըսել . Հաւատքը պահեցի , ու ասկէ ետե կայ կը մնայ
ինձի արդարութեան պասկը , որն որ Յիսուս գառնակա-
կիծ ցաւերով ինձի համար ստացաւ ու ձրիապէս պիտի
չնորհէ ինձի ան օրը : Ի Տիմ . դ . 7 . Ավ Տէր՝ իմ
հաւատքս թող մօտեցընէ ան տեսարանը ու իմ յշս թող
փափաքի ան ժամանւն որ պիտի ըսես . Ատիք քու Տէրոջը
ուրախութեանը մէջ :

նաև ոսկեղեն քնար բռնած , անով փառարանութիւն երդելու : Այսին հոն նաև անոնցմէ ալ որ թեև եր ունեն , ու ամենը միարան անդադար կը դռչեն ըսկլով , Առւրբ՝ Առւրբ է Տէրը : Ասկէ ետև դռները դրցեցին , ովն որ երբ տեսայ , փափառեցայ որ ես ինքնս ալ անոնց մէջն ըլլայի :

Հիմա երբոր ամեն աս բաներուն վրայ կը մտածէի , զլուխս դարձուցի ետիս նայելու , ու տեսայ որ Տղիսութիւնը Գևորին եղերքն եկեր էր . բայց ինք շուտով դիմացն անցաւ , և ան ալ միւս երկու մարդոցը քաշան դժուարութեանը կէսը չփաշելով : Քանզի այնպէս պատահէցաւ որ ան ատենը ան նոյն տեղը Ունայնայցոս անունով նաւագար մը կար որ իր նաւակովը դիմոցը անցուց դանիկայ * . այսպէս ինքն ալ միւս տեսածներուս պէս բլուրն 'ի վեր Քաղաքին Դուռն ելաւ + միայն թէ ինք մինակ եկաւ հոն , ու ամեննեին քաջալերութիւն տուող մշկը չպատահէցաւ իրեն : Երբոր այսպէս Դրանը առջն ելաւ՝ անոր վրայի դրուածքին նայեցաւ ու սկսեց զարնել , կարծելով թէ շուտով թոյլտութիւն պիտի բայց իրեն ներս մտնելու . բայց դրանը վրայն նայող մարդիկը հար-

* Ընդունայն յոյսը միշտ յիմարներուն սրտին մէջ կը բնակի , ու միշտ պատրաստ է տգետներուն օգնելու : Տղիսութիւնը իր վտանգին մէջ անոր կարօտացաւ ու զտաւ զանիկայ : Վսիկաց իր կեանքին մէջ իր ընկերն էր , ու պիտի չձգեր զինքը իր մահուան ժամուն : Աը տեսնեք որ Տղիսութիւնը իր մահուանը ոչ է կնճիմներ ուներ , ոչ վախեր՝ երկրայութիւններ՝ ու տրտմութիւններ , և ոչ թշնամիէ երկիւղ , հասպա ամեն բան հանդարտ ու խաղաղ էր . Ունայնայցոսը իր նաւագարն էր , ու ինք՝ ինչպէս որ կ'ըսուի՝ զառնուկի մը պէս մեռաւ : Բայց այսպիսի զառները՝ թէ որ տեսնեին Ունայնայցոսը զիրենք գետէն անցընելն ետև իրենց պատահելիքը , առիւծի պէս պիտի զուլին :

ցուցին իրնն , թէ Ո՞Չ երկէ կու զաս դռւն , և ի՞նչ կ'ուշ դես : Գլատասիսն տուաւ մարդը . Ես օժագաւորին առջեւ կերայ ու խմեցի , ու անիկայ մեր վորոցներուն մէջ կը սորվեցըներ : Կու : Ժդ . 26 : Են ատենը անոնք անոր Ա կայականն ուղեցին , որ ներս երթան օժագաւորին ցուցընեն անիկայ . այսպէս ինք ձեռքը ծոցը խօժեց ու կը վնասէր , բայց բան մը չպատաւ : Են ատենը միւսներն ըսին . Ա կայական չունի՞ս + բայց մարդը ամենին մէկ խօսք մը պատասխան չտուաւ : Ուստի զացին օժագաւորին պատմեցին , բայց ան չուղեց վար իջնել անիկայ տեսնելու , հապա Քրիստիանուն ու Հյուսալիցը քաղաքը տառնող ան երկու Լուսաւորներուն հրաման ըրաւա՞որ որ դուրս ելլն բռնեն Տղիսութիւնը ու անիկայ ձեռքերէն ու ոտքերէն կապէն ու մէկդի տանին : Ուստի վերուցին զանիկայ ու ողին մէջէն տարին ան Դառնուը որ բլուրին մէկ կողմը տեսներ էի , ու հոն անիկայ ներս դրին : Են ատենը խմացայ թէ ինչպէս որ Ասրծանման Քրաղաքէն , այնպէս ալ մինչեւ անդամ երկինքին դռնէն դժոխքը ճամբայ կար : Այսպէս քունէս արթընցայ , ու ահա երազ է եղեք տեսսածու :

ՃԵՄՔ ԲՐԴԻ ԱՏԹԵԼԵ

ՄԵՍՆ ԵՐԿՐՈՒԴ

ՔՐԵՍՏՈՆԵՒԹԻՒՆ

ՃԵՄԲՈՇԴԱՌԹՈՒԹՅՈՒՆ

Առաջ ընթերեր :

Ասկէ առաջ՝ Կրիստիանոս Հանապարհորդին ու դէպ 'ի Երկնային Կաղաքը անոր ըրած վտանգաւոր Համբորդութեանը վրայով իմ տեսած երազս ձեզի պատմելը՝ ինձի հաճելի էր, ու ձեզի ալ շահեկան : Ան ատենը ըսի ձեզի նաև ի՞նչ որ իր կնկանն ու զաւկըներուն վրայով տեսեր էի, և թէ ի՞նչպէս դժկամանկ էին անոնք իր հետը համբորդութեան ելլելու . այնպէս որ ինք պարտաւորեր էր առանց անոնց իր համբան երթալու . ինչու որ ինք չհամարձակեցաւ իր անձը կործանման վտանգին ներքելը ձգել, որն որ կը վախնաշ թէ Ասրծանման Կաղաքը մնալովը պիտի դար . անոր համար՝ ձգեց զանոնք ու մեկնեցաւ զնաց, ինչպէս որ ան ատենը ձեզի պատմեցի :

Երդ՝ եղաւ որ բաղմապատիկ գործառնութիւններով մեծապէս արդիլուեցայ ու ետ մնացի իմ սովորական համբորդութիւններս ընել դէպ 'ի ան կողմերը՝ ուսկէ որ ինքն ելլաւ, ու անանկով մինչեւ հիմա պատեհութիւն մը չըցայ ունենալ այլ ևս հարցուփորձ ընել անոնց վրայով՝ որոնք որ ինք ետին ձգեց, որպէս զի կարող ըլլացի անոնց վրայով

լուր մը տալ ձեզի : Բայց մօտերս ան կողմը գործ մը պատահած ըլլալով , նորէն դեպ ՚ի հոն իջայ . ու այն տեղն մղնի մը շափ հեռու՝ անտառի մը մէջ ընելով իմ իջևանս , երբոր քնացայ՝ նորէն երաղ մը տեսաց :

Եշ ահա երազիս մէջ կը տեսնէի որ ծերունի մարդ մը եկաւ հասաւ ան տեղ՝ ուր որ ես սպանիեր եի . և որովհետեւ ինք քիչ մը տեղ իմ ճամփորդութիւն ըրած ճանապարհէս սիստի երթար , ինծի այնպէս թժուեցաւ թէ ելայ ու իր հետը դացի : Աւատի երբոր մէկտեղ կը քալեինք , ճանապարհորդներուն սովորութեանը պէտ՝ ինծի այնպէս եկաւ իսկական խօսակցութեան մը մատանք , ու եղաւ որ մեր խօսակցութիւնը ՚Քրիստիանոսին ու իր ճամփորդութիւններուն վրայ դարձաւ ըստ դիսաց . քանզի այսպէս սկսեցի խօսակցիւ ծերունի մարդուն հետ :

Ոլմրոն , ըսի իրեն , ի՞նչ քաղաք է աս՝ որ վարը մեր ճամփուն ձախի կողմը կ'իյնաց :

Պատասխան տուաւ պարոն Ուշիմութիւնը . (քանզի աս եր անոր անունը .) Աստիկայ է Ասրծանման ՚Քաղաքը , որ բազմամարդ տեղ մըն է . բայց շատ ցած վիճակի տեր ու ծոյլ ժողովուրդ մը ունի :

Եշ ալ կը կարծէի թէ ատիկոյ ան քաղաքն է ըսի իրեն . ես ինքնու ատենոք անկեւ անցայ . և անոր համար դիսեմ թէ անոր վրայով քու ըսածդ ճշմարիս է :

Ուշիմութիւն . Զարիկն աւելի ճշմարիս է . երանի թէ կարելի ըլլար անոր մէջ բնակողներուն վրայ ճշմարտապէս բարի խօսիւ :

Ալմրոն՝ ըսի , ես կ'իմանամ որ դուն բարեմիս մարդ մըն ես , ու կը հաճիս լսել ու խօսիւ ինչ որ բարի է : Երդու դեօք չպեցի՞ր ինչ որ պատահեցաւ ատեն մը առաջ առ քաղաքիս մէջն մէկ մարդու մը՝ որուն անունը ՚Քրիստիանոս էր , որ վեր դէպ ՚ի բարձրագոյն սահմանները երթալու համար ճամփորդութեան ելաւ :

Ուշինութեան . Այս լսեցի . ու լսեցի ևս ան պիշտերը՝
նեղութիւնները՝ պատերազմները՝ գերութիւնները՝ աղաւ-
զակները՝ հեծութիւնները՝ սարսափներն ու վախերը՝ որոնց
ինք պատահեցաւ , և որոնք քաշեց աս ճամբորդութեանը
մէջ : Վակէ 'ի զատ պէտք է որ ըսեմ քեզի՛ թէ բոլոր
մեր երկիրը անոր համբաւովը լեցաւ . շատ քիչ տուներ
կան որ լսեցին անոր վրայովն ու անոր ըրածները՝ և իր
ճամբորդութեանը պատմութիւնը չինտուեցին ու չստա-
ցան . ու սեպէ թէ կրնամ ըսել՝ որ իր քաշած վտանգները
պատճառ . եղան որ շատերը զովն իր բոնած ճամբաները .
քանզի թէ պէտք և ինք հոս եղած ատենը ամեն մարդու բե-
րանը իրը յիմար մէկն էր , բայց հիմա որ ինք զնաց՝ ա-
մենն աւ մեծապէս կը զովարաննեն զինքը : Խնչու որ կ'ը-
տուի թէ ինք փառաւորապէս կ'ապրի իր եղած տեղը . ու
շատերը կան՝ որ թէ պէտք մոքերնին հաստատած են իրենք
զիրենք բնաւ անոր պէտ վտանգներու ներքեւ չձգել , բայց
իրենց բերանը կը ջոստի անոր ստացած բարիքներուն
վրայ *

Իրաւ ճշմարիտ է ինչպէս որ կը խորհին՝ որ ան հիմա
իր եղած տեղը շատ աղէկ կ'ապրի ըսի անոր : Խնչու որ
ինք հիմա Անաց Վղբիւրին քով կ'ապրի , ու բոլոր իր ու-
նեցածը՝ առանց աշխատանքի ու առանց տրամութեան ու-
նի , որովհետեւ անոր հետ տրամութիւն խառնուած չէ :
Բայց կ'աղաւեմ , ժողովուրդը ի՞նչ կը խօսի անոր վրայ :

Ուշինութեան . Ժողովուրդը պանչելի բաներ կը խօսի
անոր վրայ . ոմանց կ'ըսեն՝ թէ ան հիմա ճերմակներ հա-
գած կը պարսի , Յայտ . է . 4 , թէ իր վիզը ոսկի մա-

* Վշխարհիս մարդիկը երբեմն ամենաչար անուններով
կը վատահամբաւեն հաւատացեալները՝ անոնց կինդանու-
թեանը , ու սուրբերու կարդը կը դասեն զանոնք՝ մեռնել-
նուն ետե :

Նեակ մը ունի , թէ իր գլուխը մարդարտաշար ուկի թագ
մը ունի . ուրիշները կ'ըսնն թէ իր ճամբորդութեանը
մէջ երբեմն իրեն տեսնուող լուսաւորները իր ընկերներն
եղեր են , ու թէ ինք իր եղած տեղը այնպէս լնտանեցած
է անօնց հետ՝ ինչպէս որ հոս մէկ դրացին միւսին հետ
կ'ընտանենայ : Ասկէ 'ի զատ՝ առանց երկրայութեան կը
հաստատեն՝ անոր վրայով՝ թէ իր եղած տեղին Յագաւորը
պալատին մէջ արդեն շատ հյակապ ու զուարձալի ընաւ-
կարան մը ընծացեր է իրեն , ու թէ ինք անոր հետ կ'ու-
տէ , կը խմէ , կը խօսի , կը պտըտի , ու անոր քաղցր
դէմքը կը տեսնէ ու անոր մէրը կը վայելէ որ հոն ամե-
նուն դաստաւորն է : «Օտք + դ + Ղ : Ղում + ժդ + 14 ,
15 : «Ամե ոմնակը կը յուսան թէ իր Յագաւորը՝ ան
երկրին Տէրը , շատ շմնցած աս կողմերս պիտի դայ , ու
պիտի իմանայ պատճառը՝ թէ որ կրնան պատճառ մը տալ ,
թէ ինչու համար իր ընկերները այնչափ շնչին բանի տեղ
դրին ու այնչափ արհամարհեցին զինքը , երբոր իմացան
թէ ինք ճամբորդ պիտի ըլլար : Յաւուր + 14 , 15 : «Քան-
դի կ'ըսնն թէ ինք հիմա այնչափ իր Յագաւորին աչքը
մտած է * , և իր Տէրը այնչափ վատացած է «Քրիստիանո-
սին ճամբորդութեան ելած ատենը անոր վրայ ձգուած նա-
խատինքներուն համար , որ բոլորը իրեն եղած պիտի մե-
ակ + Ղում + ժդ + 16 + ու ասոր վրայ զարմանալու չէ .
ինչու որ իր Յագաւորին վրայ ունեցած սիրոյն համար եղ
որ ինք այնպիսի վատանդներու մէջ ձգեց իր անձը † :

* «Քրիստոնէին Յագաւորը քրիստոնէին կողմը կ'ըւ-
լայ : » Ով ճանապարհորդ եղբայր , քու սրտիդ տախտա-
կին վրայ զրե՞ , ու քու ճամբորդութեանդ ամէն մէկ քայ-
լափոխին կարդա ասիկայ :

† Աղէկ նկատէ ասիկայ : Վհօդուտ է մեր ըրած դաւա-
նութիւնը՝ թէ որ անոր հիմը «Քրիստոսի մէրը չէ : Առանց
անոր սիրոյն ամէն բան ոչինչ է :

Համարձակութեամբ՝ կ'ըսեմ՝ թէ ուրախ եմ ասոր վրայ, բսի մարդուն։ Ուրախ եմ ան խեղչ մարդուն կողմանէ, անոր համար՝ որ ինք հիմն իր աշխատութենէն հանդէցաւ ու անոր համար՝ որ իր արցունքներուն պառագ ուրախութեամբ կը քաղէ, ու անոր համար՝ որ իր թժնամիներուն զենքին զօրութենէն անդին անցաւ, ու իր ասելիները չեն կրնար համնիլ իրեն։ Յայտ + ժդ + 13։ Ստուգ + Ճիշ + 5, 6։ Ուրախ եմ նաև՝ որ աս բաներուն լուրը աս երկրիս մէջ տարածուեցաւ։ Ով գիտէ, կրնայ ըլլալ որ ասիկայ աղէկ ազգուութիւն մը ընէ անոնց վրայ՝ որ անոր ետեր մնացած են։ Խայց քանի որ միտքա է կ'ազաւչեմ՝ որ ըսե՞ս պարո՞ն, թէ բան մը կը լսե՞ս իր կնկան ու դաւկըներուն վրայ։ Խո՛ջ անձինք + արդեօք ի՞նչ կ'ընեն անոնք։

Ուսւկունիան + Ո՞վ + Քրիստինէն ու իր տղաջրը։ Ա'երեայ թէ անոնք ալ ան նոյն յաջողութիւնը պիտի զանեն՝ որն որ Քրիստիանոս ինքը դառաւ + ինչու որ թէ ովէտ և առաջ ըոլորը յիմարութիւն ըրին, ու ամեննին չեն ուզեր համոզուիլ Քրիստիանոսի՝ ոչ անոր արցունքը ներէն ու ոչ ալ աղաւանքներէն, բայց ետքի խորհուրդներնին զարմանալի ներգործութիւն մը ըրաւ իրենց վրայ։ ասանիով՝ ժողվրտուեցան, ու իրենք ալ անոր ետելն զայցին *։

* Այրելի երկան մը ու դորովագութ հօր մը յորդուրանքներն ու բոլոր սիրալիր առաջարկութիւնները կարելի է որ զօրութիւն մը չունենան առ այժմ։ բայց երբոր Տէրը իր կարող զօրութիւնովը սիրուը շարժէ, ան ատենը փրկարար զօրութիւնը անոնց կը յայտնուի։ Խայց և այնպէս մենք մեր պարտաւորութիւնը զանց չընենք՝ այլ ժողութեամբ կատարենք զանիկայ, ու անկէ յառաջ զայլու բարի վախճանը Աստուծոյ ձրի նորհացը ձըւնուք։

Ըստ լաւ, շմարաւ. կանչեցի ես. բայց՝ ի՞նչ. կնիվն ու աղաքը՝ ու բոլորը գացի[○]ն :

Ուշմութեան. Ճշմարիտ է որ գացին. կրնամ ես աս բանին պատմութիւնը քեզի ընել, ինչու որ նոյն ատենը հոն էի ես, ու բոլոր բանին վրայ կատարեալ տեղեկութիւն ունեիմ :

Ուրեմն կընամ աս լուրը տարածել իրեն ճշմարիտ. ըստ իրեն :

Ուշմութեան. Մի վախնար համարձակ հաստատելու անիկայ. քեզի ըստ որ բոլորն ալ ճամբորդութեան ելան. տիկինն ալ ու իր չորս աղաքն ալ : Եւ որովհետեւ իմ մը ճամբայ մէկտեղ երթալու ենք՝ ինչպէս որ կ'իմանամ, բոլոր բանին վրայով քեզի տեղեկութիւն մը պիտի տամ :

Առաջիստինէն՝ (քանզի աս էր անոր անունը ան օրէն ետեւ որ իր զաւկըներուն հետ ճանապարհորդի մը կեանք վարելու սկսեց,) իր էրիկը դետէն անցնելէն ետեւ * ու ալ որ չէր կընար լսել անոր վրայով, սկսեց իր մորին մէջ աղջու խորհրդածութիւններ ունենալ : “Եամի ե. առաջ որ իր էրիկը կորսընցուց, և ան առնչութեան սիրելի կապը բոլորովին կտրեցաւ իրենց մէջն : Քանզի դիտես՝ ըստ ինձի մարդը, որ բնութիւնը բազմապատիկ ծանր խորհրդականներուն կորստեանը յիշատակութիւնովը : Ուստի աղդականներուն կորստեանը հիշատակութիւնովը : Ուստի ասիկայ իր էրկանը համար շատ արցունք թափել տուաւ իրեն : Բայց բոլորը աս չեղաւ. * Արիստինէ սկսեց ինքն իրեն մոտածել ևս՝ թէ արդեօք իր էրկանը հետ անպատշաճ վարմունք ունենալը չէ[○]ր մէկ սկամառուը որ ալ անիկայ չեղցաւ տեսնել, և աս կերպովս անիկայ իրմէն հեռացաւ : Ու ասոր վրայ խուռն բազմութեամբ իր մորին մէջ լցուեցան բոլոր իր տմարդի՝ անբանական ու ամբա-



ըիշտ վարմնւնքները՝ որ իր սիրելի ամուսնոյն ցուցուցած էր, որոնք նաև իր խղճմտանքին վրայ դիզուեցան, ու յանցաւորութիւնով զինքը բեռնաւորեցին : “Ամանապէս իր սիրու շատ կոտրեցաւ՝ լիշելով իր էրկանը անդադար հեծութիւնները, աղիողորմ արցունքներն ու իր անձին վրայ ողբաշները . և թէ ի՞նչպէս իր սիրու կարծրացուցեր էր անոր աղաւանքներուն ու սիրալիր յորդորանկներուն գէմ, երբոր կը համոզէր զինքն ու իր տղաքը որ իր հետն երթան : Մանաւանդ թէ ի՞նչ որ Կրիստիանոս ըսեր էր իրեն ու ի՞նչ որ ըլմեր էր իր առջևը բոլոր ան միջոցին մէջ որ իր բեռը կունակէն կախուած էր, բոլորն ալ կայծակի պէս իր վրայ կը դառնային, ու իր սիրու կը փառատէին . ամենէն առելի՛ մեծապէս կը հնչէին իր ականջներուն անոր ան ցաւապին աղաղակը, թէ “Կ՞նչ պէտք է ընել, որ փրկուիմ” * : Գարծ . ժկ . 30 :

Ուստի իր տղոցն ըսաւ . Տըղաք, մենք ամեննիս ալ կործանած ենք : Ես իմ մեղացս սպատճառաւը ձեր հայրը կորսընցուցի, ու ձեռքէ ելաւ : Ես կ'ուղէր որ մեզ ալ իր հետն առնէ, բայց ես ինքնս չուզեցի երթաւը ու ձեզ ալ չժժողուցի : Եսոր վրայ բոլոր տղաքը սկսեցին լաւ, ու կը կանչէին թէ Հօրելնուս ետեւէն կ'երթանք : Երանի թէ (կ'ըսէր Կրիստինէ) մեր վիճակին ինկած ըլլար անոր հետն երթալը . ան ատենը մեր բանն աղէկ պիտի ըլլար, քան որչափ որ հիմա ըլլալը հաւանականէ : Ինչու որ՝ թէպէտ և առաջ յիմարաբար կը կարծէի

* Տես մասն Ա . երես 13-18 : Ենոնք որ իրենց աստուածապաշտ աղցականներուն ու բարեկամներուն հետ անդժութեամբ և տմարդութեամբ կը վարուին՝ անոնց կրօնքին պատճառաւը՝ տես թէ ի՞նչ վախճանի պիտի գան, իրենց հողւղին մէջ ի՞նչ պիտի զգան, ու ի՞նչպէս տրտմութեամբ պիտի հեծեն երբոր Տէրը անոնց համար ապաշնաւրութիւն կինարաբար պիտի գան :

թէ ձեր հօրը նեղութիւնները մէկ ցնորեալ երեակայութէնէ մը կը ծագէին՝ կամ թէ ինք մելամաղնային այլանդակ խորհուրդներով լուսած էր, բայց հիմա իմ մաքէս շելլեր որ անոնք ուրիշ պատճառէ ծաղած էին, այսինքն՝ թէ կենաց լոյն իրեն արուած էր * . Յանձն ը 12 + որուն օդնականութիւննով կարծեմ թէ ինք ազատեցաւ մահուան որոգայթներէն : Այսու ժդ 17 : Ան ատենը ամթեն աւ կրկին սկսեցին լու, ու կանչել + Ո՛հ, վայ ան օրուանը † :

* ետևեալ գիշերը Վրիստինէ երազ մը տեսաւ + ու կը թուեր իրեն՝ թէ ահա մեծ զիբք մը բացուեցաւ իր առջեր, որուն մէջ բոլոր իր վարքք զրուած էր + ու այնպէս կու դար իրեն թէ իր յանցանքները շատ աղետալի կերպով կը նայէին իր վրայ : Ան ատենը բարձր ձայնով կանչեց իր քունին մէջ, թէ “Վասուած” ողորմէ ինծի

* Օարմանք է որ կենդանացած ու լուսաւորուած մեղալորը յիմար և մելամաղնու կոչուի իր մերձաւորներէն՝ որոնք տակաւին իրենց մեղացը մէջ մեռած են : Ջ՛լ + բնական է անոնց մեզ յիմար ու խենթ կոչել + բայց մենք զիտենք թէ Հմարտապէս իրենք են յիմարները : Վանդի երբոր Տէրը կը հաճի թէրահաւատութեան քօղը անոնց սրտին վրայէն վերցընել՝ ու տղիսութեան կճեղները աչքերուն վրայէն թափել, ան ատենը Վրիստինէին հետ պիտի խոստովանին անոնք թէ կենաց լոյսը արդարներուն արուած է :

† Աս տեղու յայտնի կ'երեայ որ հեղինակին դիտաւորութիւնն է բարեկաստ ծնողքները քաջալերել, որ իրենց զաւկըներուն հոգեսոր բարելաւութեանը համար բոլոր միջնուները յարատենութեամբ՝ ի զործ դժեն, մինչև անդամ երբոր շեն տեսներ անոնցմէ յառաջացած օգուարը : Ըառ անդամ կ'ըլլայ որ հաւատացեալին իր զաւկըներուն համար բրած խնդիրքները իր մահուանէն ետև կը կատարուին :

մեղաւորիս" ։ "Ղուկաս" քառական 13 ։ ու իր փոքրիկ դաւկը ները իր ձայնը լսեցին :

Վակէ ետև այնպէս կը թուէր իրեն թէ իր անկողինին քովը երկու հատ խիստ գարշելի անձնիք կայներ էին ու կ'ըսէին Խօնչ պիտի ընկնք առ կոնկը ։ ինչու որ թէ արաթընայ ու թէ քնանայ ողորմնւթեան համար կ'աղաղակէ ։ թէ որ ձգենք զինք որ սկսածին պէս յառաջ երթայ , պիտի կորսընցընենք զինքը ինչպէս որ իր երիկը կորսընցուցինք : Ուստի ո՞ր և իցէ ճամբով ջանալու ենք որ իր միտքը դարձընենք գալու աշխարհին բաներուն վկայ խորակէն ։ եթէ ոչ բոլոր աշխարհ բան մը չկրնար ընել , հապա ինք ճամբորդ պիտի ըլլայ * :

Ես միջոցիս Քրիստինէ արթընցաւ քրտինքի մէջ թաղուած ու իր վրայ գող մը կար . բայց ատենէ մը ետև կրկին իր քունը տարաւ : Ու կը թուէր իրեն թէ իր երիկը Քրիստիանուը տեսաւ , որ երջանիկ աեղ մը բազմաթիւ անմնահներու մէջն էր՝ ձեռքը քնար մը բռնած , ու կայներ կը նուազէր ան քնարը Անկու մը առջեր՝ որ աթոռի մը վրայ նոտած էր , ու իր գլխուն բոլորտիքը ծխածան ունէր : Տեսաւ ևս՝ որ իրը թէ իր գլուխն ու իր

* Արթընցած մեղսուորին առաջն աղաղակը ասիկայ է .
** Ստուած՝ ողորմէ ինձի մեղաւորին" : Խակոյն երրոր մեղաւորին աչքը կը բացուի իր կործանած ու անցոյն վիճաւ կը տեսնելու՝ ու քորմնւթեան համար առ Ստուած գոչելու , առ աշխարհին աստուածը՝ որ մինչև հիմա անոր աչքը կուրցուցիր էր ու յանդզնութիւնով սիրաը ապահովութեան մէջ պահեր էր , հիմա կը սկսի արդեւք ըլլալ որ մեղաւորը չնորհաց աթոռին ողորմնւթեան Աստուածոյն՝ ու կորսուածներուն Փրկչին չգիմէ : Սատանան դիմութեամբ ետ չկենար իր որսէն : Բայց Յիսուս՝ ան գօրը՝ որ ամենակարող զօրութիւնով ու յաւիտենական սիրով զինուորուած է , պիտի յաղթէ ու դուրս ձգէ զանիկայ :

երեսը դէմպ 'ի գետինը քառագաւորին ուղըլ խոնարհեցուց
ըսկըլ . Արտի մոտք շնորհակալ ևմ Տէրոջը ու իմ օնա-
գաւորին զիս աս տեղ բերելուն համար : Են ատենը բո-
լորակը կայսողներուն բազմութիւնը ցնծութեան ձայնե-
րով երգեցին՝ ու իրենց քնարներով կրնուագէին . բայց
կենդանի մարդ կարող չէր համելուալ անոնց ըսածը , բայց
'ի Քրիստիանոսէն . ու իր ընկերներէն :

Հետեւեալ առունե երրոր Քրիստինէ արթընցաւ՝ ա-
զօթք ըրաւ առ Վասուած՝ ու ատեն մը իր զաւկըներուն
հետ որ խօսեցաւ , մէկը իր դուռը սաստիկ մը զարկաւ ,
որուն Քրիստինէ ըսաւ . թէ՞ որ Վասուածոյ անունավը կու-
գաս , մոտի ը ներս : Պատասխան տուաւ մարդը ու ը-
սաւ Վամին . ու ներս մուաւ և բարեկց անիկայ՝ ըսելով .
Խաղաղութիւն աս տանս : Ասիկայ կատարելն ետե-
ըսաւ . Քրիստինէ , զիսե՞ս թէ ինչո՞ւ համար եկայ ես :
Են ատենը Քրիստինէ ամշնալուն կարմիրեցաւ ու կը դո-
ւար . իր սիրան ալ սկսեց ջերմեռանդ փափաքներով ցան-
կալ՝ որ գիտնայ թէ ՞ուրկէ եկեր է ան , ու ի՞նչ պատզամ-
բերեր է իրեն : Ու հիւրն ըսաւ իրեն . Խմ անունս
Գաղտնիք է * , ու կը բնակիմ անոնց հետ՝ որ վերերն են :
Խմ եղած տեղու կը խօսուի՝ թէ դուն հոն երթալու բաղ-
ձանք մը ունիս եղէր . նաև կը խօսուի՝ թէ դուն կը ձանչ-
նաս հիմա ան չարիքը որն որ յառաջմանէ քու երկանդ
հացցուցիք , անոր բռնած ճամբաներուն դէմ՝ քու սիրող
կարծրացընելով , ու աս տղաքը իրենց տղիսութեանը
մէջ պահելով : Քրիստինէ , Վամինզորմը խրկեց զիս որ
քեզի զրուցեմ՝ թէ ինք ներող Վասուած է , ու մեղաց
թողութիւն շնորհելը իր բերկութիւնն է † : ԱՌուզէ ևս

* Գաղտնիք՝ կ'երեւայ թէ կը նշանակէ Վասուածոյ Առւրու-
ժողին , որ լուելայն կը վարժէ հաւասացեալը :

† Ախիթարիէ Առւրու Հողին երրոր մեղաւորի մը իր

որ գիտնաս՝ թէ իր առջելը երթալու ու իր սեղանը նստելու կը հրաւիրէ քեզ, ու պիտի կերակրէ քեզ իր տանը պարարտութիւնով՝ ու քու հօրդ Հակոբին ժառանգութիւնովիլը : Հան է Կրիստիանոս՝ ան որ քու էրիկը էր, իր բազմաթիւ շնկերներուն հետ, որ կը նայի միշտ ան երեսին՝ որ կենդանութիւն կ'ընծայէ նայողներուն + ու անոնց ամենը ուրախ պիտի ըլլամն՝ երբոր լսեն քու Հօրդ սեմին վրայ կովելու քու ոտքերուդ ձայնը :

Կրիստինէ ասոր վրայ մեծապէս կը պատկառէր, ու իր զլուխը դէպ 'ի գետինը կը խոնարհեցընէր : Բայց իր հիւրը իր խօսքն առաջ տարաւ՝ ըսելով . Կրիստինէ, քեզի զիր մըն ալ կայ, որ քու էրկանդ ծառադաւորէն բերեր եմ : Ուստի ինք առաւ անիկայ՝ ու բացաւ + բացց անիկայ անուշահոտ խոզի պէս հոտ մը կը բռորէր : Եթէ . առ + 3 : Կաև ոսկեղջէն զբերով զբուած էր ան : Կրին մէջ պարունակուած խօսքը աս էր, թէ ծառադաւորը կ'ուղէ՝ որ իր էրկանը ըրածին պէս ընէ . ինչու որ անոր քաշ զարն երթալու՝ ու յաւիտեան ուրախութեամբ անոր առաջնը բնակելու ճամբան ան է : Կրիստինէ բոլորովին նուածեցաւ ասով, ու բարձր ձայնով կանչեց իր հիւրին . Տէր իմ, կը կամննամս քու հետդ տանիլ զիս ու իմ զաւակներս, որ մենք ես երթանք ու ծառադաւորին երկրպաշութիւն ընենք :

Պատասխան տուաւ Հիւրը . Կրիստինէ, լեզնն անուշն առաջ է . նեղութիւններով պէտք է որ մանես Երկնային Կաղաքը, ինչպէս որ քենէ առաջ գացողը մըտաւ : Ասան որոյ խրատ կու տամբ քեզի որ քու էրկանդ

վիճակը ճանչցընէ, կը կենդանացընէ ու կը միսիթարէ ևս անոր սիրութ ան բերկրապատար աւետիսովիր, թէ Վատուծոյ Գրատին արիւնովը ձրի ու կատարեալ թողութիւն շնորհուած է իր մեղացը :

Վրիստինութիւն պէս ընես : Պնամ ան տեղի է Արդ Դաւոր՝ դաշտին անդիի կողմէն . քանզի անմկայ ան ձամբուն դրւութիւն է ուրիշ պիտի վեր ելիս դռւն . ու քեզի բարեցածողութիւն կը մաղթեմ : “Աաև կը խրառեմ քեզ որ աս զիրը ծոցդ դնես , որ անոր մէջնը դռւն քեզի ու զաւկըներուդ կարգաս , մինչեւ որ բերնանց սորպիթ անիկայ . քանզի անիկայ ան երգերուն մէկն է , որ դռւն պէտք է երգես , քանի որ աս քու պանդխոտութեանց մէջն ես . Ատով . Ճժիշ . 54 . Նաև միւս դռւոր համարընուդ ասիկայ պէտք է որ ներս տաս *

Հիմա երազիս մէջ տեսայ որ ծերունին աս պատմութեանն ինձի ընելուն՝ իր սիրութ շատ շարժած կ'երեւէր : Ու դարձեալ իր խօսքը յառաջ տանելով՝ ըստ , Վայէս Վրիստինէ իր տղաքը կանչեց , ու աս կերպովս սկսեց խօսիւնանց . Խմ տղաքս , ես աս օրերս մեծ մոտանչութեան մէջ ինկայ ձեր հօրը մահուանը վրայօք՝ ինչպէս որ դուք ալ կ'իմանաք , թէպէտե անոր երջանիկ ըլլալուն վրայօվ ընաւ տարակրյս չունիմ . ինչու որ ես հիմա կը հաւատամ թէ ան աղէկ վիճակի մէջ է : Վակէ՛ի զատ մեծապէս խռոված եմ՝ մասածելով իմ վիճակս ու ձերի նը , որ ճշնարստապէս կը հաւատամ թէ՛ի ընէ թշուառ :

* Վրիստոս Տէրն մեր կ'ըսէ . “Նըրոր միսիթարիէ Սուրբ Հոգին դայ՝ անիկայ ինձի համար պիտի վկայէ” . Յոմէ . ԺԷ . 26 . և թէ՛ “Նըրոր ինքը ճշնարսութեան Հոգին դայ , ամէն ճշնարսութեան պիտի առաջնորդէ ձեզի , ու դալիքները ձեզի պիտի պատմէ” : Յոմէ . ԺԿ . 13 : Իր մեղքերուն վրայ համոզուած մեղաւորը ասոր բռւրը փորձով ճշնարխտ ըլլաւ կը դանէ : Հոգին ինչպէս որ Վրիստոսի համար կը վկայէ , այնպէս ալ մեղաւորին հողին Վրիստոսի կ'առաջնորդէ , որ անիկայ ըլլայ անոր մի միայն յցրոք արգարութիւնն ու զօրութիւնը : Վայէս պէս Հոգին կը վառաւորէ դ'Վրիստոս :

պիճակը մըն է ան : « Եաւ ձեզ հօրը նեղութեանը մէջ անոր հետ իմ՝ ըբած կենցաղավարութիւնս խղճմանքիս ծանր բեռ մըն է : Բնչու որ ևս իմ՝ սիրտս ալ խառացուցի անոր դէմ ու ձերն ալ , ու մերժեցի իր հետը ճամբորդութեան երժաւալ :

Աս բաներուն մատածմունքը վաղաղակի պիտի մեռցընէր զիս հիմա՝ թէ որ երէկ զիշերուան տեսած երազը ու առ հիւրին աս առառուան ինձի տուած քաջալերութիւնը չըլլ լսյին : Խկէք զնւկըներս , ժողվառունք ու երթանք ան դուռը՝ որ Նրկնային Քաղաքը կը տանի , որպէս զի կարենանք տեսնել ձեր հայրը , ու խաղաղութեամբ իր հետն ու իր ընկերներուն հետ բնակինք ան երկրին օրէնքներուն համեմատ :

Ան ատենը իր զաւկըներուն աչքերէն արցունվներն սկսեցին վաղեւ իրենց ուրախութենէն՝ որ իրենց մօրը սիրաը հակամիտած էր աս բանս ընելու : Աւախի իրենց հիւրը հրաժարական ողջոյնը տալով զնաց , ու իրենք սկսեցին ճամբար ելլելու պատրաստուիլ :

Բայց անոնք երթալու համար այսպէս զբաղած ըլլալ նուն՝ Քրիստինէին դբացիներէն երկու կնիկ եկան իր տունը՝ ու դուռը զարկին : Քրիստինէ առաջին ըստին պէս՝ ըստ անոնց . թէ որ Կատուծոյ անունովը կու գաք , մաէք ներս : Վերկները աս խօսին վրայ ապշած մնացին . ինչու որ աս կերպ խօսք ըստ չէին , ու Քրիստինէին ըերնէն ելլեւ չէին զիտեր * : Վնչ և իցէ ներս մնան , բայց

* Ո՞վ ընթերցող՝ աս տեղս կանկ առ ու քննէ՛ . թէ որ քու առջի բարեկամներդ ու մարմնոյ կողմանէ ծանօթներդ քու խօսքիու ու կենցաղավարութեանդ մէջ ընսու տարրերութիւն մը չգտան , թէ որ անոնք տակաւին քեզի կը հաւնին ու քու բոնած ճամբարդ կը գովեն , ուրեմն ի՞նչ պատճառ ունիս դուն զքեզ ճանապարհոցդ կարծելու : Թէ որ սիրտը սակաւ ինչ ծանօթանայ Տէրոջը՝ լեզուն

ահա դտան որ անիկայ իր տունէն երթալու կը պատրաս-
տուել :

Ուստի սկսեցին խօսիլ ու ըսկլ . Դրացի , կ'աղաւենք՝
ի՞նչ միտք ունիս որ կը ժողվառուիս :

Դրիստինէ պատահան տուաւ ու ըսաւ անոնց մեծին
որուն անունն էր Երկշուան Տիկին . Ճամբորդութեան եր-
թալու կը պատրաստուիմ :

Ես Երկշուան անոր աղջիկն էր՝ որ Դժուարութեան լե-
ռանը վրայ Դրիստիանոսին դէմն ելաւ , ու առիւծներին
վախուն անիկայ յորդորեց ես դառնալու :

Երիշոյ . Աղջ , ի՞նչ ձամբորդութեան :

Դրիստինէ . Դա՞ բարի երկանս ետեւէն երթալու : Ու
աս խօսին ըսելով սկսեց լալ :

Երիշոյ . Աը յուսամ թէ չը բարի՝ դրացի . կ'աղա-
չեմ՝ քու խղճալի զաւկըներուդ սիրուն ինքզինքդ այսպէս
անմուարար մի՛ կորսընցըներ :

Դրիստինէ . Խ՞նչ կ'ըսես , զաւկըներս ալ հետս պիտի
երթան . մէկը ըուզեր ես մնալ :

Երիշոյ . Զարմաները պաշարած է զիս թէ ի՞նչ բան
կամ ովզ առաջնորդեց քեզի աս միտքն ընելու :

Դրիստինէ . Ո՛հ , դըրացիս , թէ որ իմ զգացածիս
չափ ուն ալ զայիր , չեմ տարակուսիր որ դուն ալ իմ
հետս պիտի երթայիր :

Երիշոյ . Ո՛հ , ի՞նչ նոր զիտութիւն ստացար դուն ,
որ այսպէս քու միտքդ քու բարեկամներէդ կը դարձընէ ,
ու քեզի կը թելաղըէ երթալ մարդ զգիտեր թէ ուր :

Պատասխան տուաւ . Դրիստինէ . Դա երկանս ինձմե-
ղատուելէն բայց մանաւանդ անոր զետը անցնելն հետէ

պիտի յայտնէ անիկայ , ու մարմնապաշտ և ամբարիշտ ան-
ձինք պիտի ծաղը ընեն ու անարդէն քեզ անոր համար :
Ասիկայ միշտ ձշմարիս է :

մեծապէս վշտացած եմ՝ ևս : Խայց ամենէն աւելի նեղութիւն տուողը՝ իր նեղութեանը ատեն իւր հետը իմ խիստ վարմունքը է : * Եսկէ ՚ի զատ ինք ինչպէս որ իր ան ատենը՝ ես ալ հիմա այնպէս եմ՝ բան մը իմ սիրոս չհանդարտեցըներ՝ բայց միայն ճամբորդութեան ելելը : Եցեկ զիշեր երազիս մէջ տեսաց զինքը : Խրանի թէ իմ հոգիս իր հետն ըլլար : Ինք ան երկրին օճագաւորին առջն կը կենաց, անոր հետը կը նստի ու կ'ուտէ՝ անոր սեղանը՝ անձանէրուն հետ ընկեր եղած է : ու տուն մը տրուած է իրեն բնակելու՝ որուն քով երկրիս վրայի ամենալաւ պաշտը միայն աղբանոց մը կը թուի ինծի : ը Արդին՝ եւ : 1-4 : Պալատին Տէրը մարդ ալ խրկեց ինծի՝ ու խօսք կու տայ զիս ընդունելու թէ որ իրեն երթամ : Եր խրոկած պատգամաւորը հիմա հոս էր, ու նամակ մը բերաւ ինծի՝ որ երթալու կը հրաւիրէ զիս : Ես ըսելով քաշեց հանեց նամակը, ու կարդաց և ըստ անոնց + հիմա ի՞նչ ըսելիք ունիք ասոր :

Խրիզու . Ե՞ս + ի՞նչ յիմարութիւն է որ քու երկանդ ու քու վրադ եկաւ, որ դուք զձեղ այսպիսի դժուարութիւններու մէջ ձգէք : Եղէկ զիտեմ՝ որ լսած ես՝ թէ ի՞նչ պատահեցաւ քու երկանդ իր ճամբուն վրայ իր առաջին, քայլափոխին, ինչպէս որ մեր դրացի Պարոն Պինտադլուխը կրնայ տակաւին միայել, որովհետեւ ինք անոր հետ զնաց + ու անկէ ՚ի զատ Պարոն խօսքիպակողն ալ, մինչեւ որ խելացի մարդոց պէս վախցան՝ ալ աւելի յառաջ երթալու : Լսեցինք ևս կրկին և կրկին ինչպէս առիւծներուն՝ Վագողինին՝ Մահուան Շուքին և շատ ուրիշ բաներու պատահեցաւ : Ու ալ պէտք է քու մարդ ելել ան վոանդը՝ որուն պատահեցաւ Ունայնութեան Տօնավաճառին մէջ : Կանզի ինք երիկ մարդ ըլլալով այսչափ դժուարութիւն որ կրեց, ի՞նչ կընաս ընել դուն՝ որ խեղջ կնիկ մըն ես : Մտածէ ևս որ աս չորս անուշիկ դառ-

նուկները քու զաւելքներդ են, քու մարմինդ ու քու ուկաներդ : Ուստի թէ և քեզ կորանցընելու շափ պիտի յանդպնիս ալ, բայց դռնէ քու զաւելքներուն սիրուն եկո՞ք քու տեղդ կեցիր :

Բայց Կրիստոնէ ըստ անոր + ԱՌ փորձեր զիս՝ ով իմ դրացիս, ես հիմա ձեռքս մեծ պատեհութիւն մը ունիմ անուվ շահելու + ու չափազանց յիմար պիտի ըլլամ՝ թէ որ սա պատեհութիւնս 'ի գործ զնելու սիրու չընեմ : Եւ անձեր ըստած նեղութիւններուն վրացով՝ որոնց կ'երեսց թէ պիտի պատահիմ համբուն մէջ, անոնք այնչափ հեռու են ինձի սրտաբեկութիւն մը ըլլալին՝ որ կը ցուցընեն թէ իմ ըստած համբաս շխտակ է : Ա զին անուշեն առաջ պէտք է գալ, ու ատիկայ անուշը առաւել ես պիտի անուշը նէ : Ա ասն որց դուք որ Աստուծոյ անունովը չեկաք իմ տունս՝ ինչպէս որ ըսի, կ'աղաւեմ՝ որ երթար՝ ու ալ անհանգիստ ընեւք զիս * :

Են առևնու Նրկչուը կշամբելով զանիկայ՝ ըստ իր ընկերին + Ակնիր Գիմութիւն դրացիս, զինքն իր կամբին ձղնուք, որովհետեւ ինք մեր խրանն ու մեր ընկերութիւնը կ'անարգէ : Բայց Գիմութիւնը կանկ առաւ, ու չը կընար միարանիլ իր դրացոցն ըստին + և ատիկայ երկու պատճառաւ : « Ասիս որ իր սիրու կը մորմոքէր Կրիստոնէին վրայ + ուստի իր մորքն կ'ըսէր՝ թաէ որ իմ դրացիս 'ի հարկէ երթայ պիտի, քիչ մը համբայ իր հետն եր-

* Ը խտակն աս է : Ազէ կ Տէրոջը անունովը համարձակիլ ու նուաճել զանոնք, որոնք կ'ուզեն դարձընել մեզ Աստուծածանօթութեան համբային : Ո վ ճանապարհորդներ՝ զգուշացելք մարմնապաշտին հետ խօսակցելին : Հանապազ մարքերնիդ պահեցէք որ դուք այնպիսի ընութիւն մը ունիք՝ որ անոնց զայլախաղէն ու պողպատէն թափած կայծերը դիւրաւ կը ըսնէ, ու վրանուդ արեթը միւս պատրաստ է բանկելու :

թամ՝ ու օդնութիւնը ընեմ՝ իրեն : Արկրորդ՝ որ իր սիրառը կը մորմոքէր բուն իր հոգւոյն վրայ . ինչու որ Կիրիատինեն ըստածները քիչ մը իր մլտքը համոզեցին : Ուստի իր մորին մէջ կ'ըսէր դարձեալ Վահրիատինեն հետ նորէն պիտի խօսիմ՝ ես . ու թէ որ իր ըստածին մէջ ձշմարտութիւն ու կեանք գտնեմ , բոլոր սրտովս ես լնինս ալ իր հետը պիտի երթամ : Ուստի Գիմութիւնն սկսեց սյուպէս պատասխան տալ իր Խըկըստ դրացւոյն :

Գիմութիւն . Գրացի , արդարե քու հետդ եկայ ես Կիրիատինեն տեսնելու առ առառու , բայց որովհետեւ մնիք իր վերջին հրաժարական ողջոյնը կու տայ իր երկրին ինչպէս որ կը տեսնես , կը խորհիմ որ աս գեղեցիկ առաւելուու քիչ մը իր հետն երթամ , ու իր ճամփուն վրայ իրեն օդնութիւնը ընեմ : Սակայն իր երկրորդ պատճառը չզբուցեց անոր , հապա իրեն պահեց :

Երիշտ . Աը տեսնեմ որ դուն ալ միաք ունիս յիմար ըլլալու . բայց ատեն չանցուցած զպուշտթիւնը ըրէ , ու խելացի եղիր . երբոր վտանգէն դուրս ենք՝ դուրս ենք անկէ , բայց անդամ մը որ մէջը մասնենք՝ ալ մէջն ենք :

Ուստի Խըկըստ Տիեզնն իր տունը դարձաւ , ու Կիրիատինեն իր ճամփորդութիւնն ընելու ելաւ * : Բայց Խըկըստը իր տունը հասնելուն մարդ կը խրկէ որ իր դրացինե-

* Վա տեղս կը տեսնենք որ Կիրիատոսի Տեառն մերոյ խօսքը կը ձշմարտի , թէ “Անկը պիտի առնուի , ու մէկալը ձգուի” : Պատր . իդ . 41 : Գիմութիւնը կանչընեցաւ , ու Խըկըստը ձգուեցաւ : Աը թուի թէ դիպուածով ու պատահմանի է որ մէկը ձշմարտութեան կը ծանօթանայ , բայց այնպէս չէ : Աստուածային Ընտրութիւնն է որ ամէն բան կը կարգադրէ , ու իր ձրի շնորհքն է որ ամէն բան կը կառավարէ , “Ամէն բան Աստուծմէ է . որ մեզ իրեն հետ հաշոեցուց Յիսուս Կիրիատոսի ձեռքով” : Բ. Առներ . կ . 18 :

բռն մէկ քանին կանչեն . այսինքն՝ Տիկին Շղիկի աչքը , Տիկին Անմիտը , Տիկին թաթեամիտն ու Տիկին Աչքնչ գիտցողը : Ու երբոք անոնք իր տունն եկան՝ բերանը կը բանայ պատմել անոնց Քրիստինէին ու անոր միտքը դպած ճամբորդութեանը վրայով . ու այսպէս կը սկսի ընել իր պատմութիւնը :

Երիշտ . 'Կրացիներ' , աս առառու շատ ընկերք չունեանալուս համար՝ Քրիստինէն տեսնելու դայի . ու երբոք դրանն առջել հասայ՝ զարկի դուռը , ինչպէս որ դիտեք թէ սովորութիւն է : Ու ինք ներսէն ձայն տուաւ՝ թաւ որ Աստուծոյ անունովը կու դաք , մակ'ք ներս : Ուստի ներս մասյ՝ բան մը չկասկածելով . բայց երբոք ներս դայի , տեսաց որ կը պատրաստուեր քաղաքէն ելլելու , ինքն ալ՝ իր դաւկըներն ալ : Ա ան որոյ հարցուցի իրեն թէ ի՞նչ մարով աս բանս կ'ընէ . ու ինք կարճ խօսքով ինծի զրուցեց՝ թէ ճամբորդութեան ելլել է իր միաքը , ինչպէս որ իր երիկն ելաւ : Երաղ մըն ալ տեսեր է որ պատմեց ինծի , ու ըստ ևս թէ իր երկանը եղած երկրին թագաւորը հոն երթալու համար հրաւիրանաց նամակ մը խրկեր է իրեն :

Ե՞ն ատենը խօսեցաւ Տիկին Աչքնչ գիտցողն ու ըստ . Եւ ի՞նչ , պիտի երթամյ արդեօք :

Երիշտ . Այս , ի՞նչ որ ըլլաց պիտի երթաց . քանզի երբոք ես կը չանացի համոզել զինքը որ եղած տեղը կենաց՝ ցուցընելով իրեն իմ մեծ պատճառը՝ (որ է ճամբուն վրայ իրեն պատահելու բազմաթիւ նեղութիւնները ,) ինք բուն խել անիկայ մեծ առիթ կ'ըներ իրեն՝ իր ճամբուն մէջ զինքը յառաջ տանելու : Քանզի աս խօսքը զրուցեց ինծի . Լեզն անուշեն առաջ կու դայ . մանաւանդ որ անիկայ անուշը առաւել ես կ'անուշընէ :

Չղեմ առէ . Այս , ի՞նչ ըսեմ աս կոյր ու յիմար կնկանը . իր երկանը քաշած նեղութիւնները խրատ չե՞ն ըլլար

իրեն . ևս իմ կողմանէս կը տեսնեմ՝ որ եթէ ան կը կին հոս բլար , զոհ սրատով պիտի հանգիստ կ'ենար , ու ոչնչէ բանի համար բնաւ այնչափ վտանգներու դէմ՝ պիտի չել ւեր :

Պատաժիսան տուաւ նաև Տիկին Վնամբան ըսելով . Օչող կորսուին քաղաքէն այսպիսի խելացնոր յիմարները . ևս իմ կողմանէս կ'ըսեմ՝ որ աղէկ ազատեցանք իրմին . թէ որ աս մարտը իր եղած տեղը կենար , ով պիտի հանգիստ մնար իր քայլք . ինչու որ կամ արտում պիտի մնար , կամ ըսու պիտի կենար , և կամ այնպիսի բաներու վրայ պիտի խօսեր որ խելացի մէկը չերնար վերցընել : Անոր համար՝ ևս իմ կողմանէս ամեննեին չեմ ցաւիր իր երթաւուն վրայ . թէ աղ տուր երթաց՝ ու իր տեղն աղէկը դայ . քանի որ աս այլանդակ յիմարները կը կենան , աշխարհա աղէկ ըլլալիք չունի * :

Վասնցմէ ետև օճախթեամիստ սկսեց խօսիլ աս կերպովս . Եկէք աս կերպ խօսքերը մէկորի ձեւեցէք : Երեկ ևս Տիկին Վաղարիեշտին տունն էի , ուր որ աղէկ ուրախութիւն ունեինք : «Քանոյի ով կը կարծէք թէ կար հան . ևս կայի» Տիկին Վարմանսէքը և երեք չորս ուրիշներ , Պարոն Շամբուշին՝ Տիկին Վղուեղութիւնին՝ ու քանի մը ուրիշներուն հետ . հնու ունեինք երաժշտութիւն ու կաքաւ , ու հեշտութիւնիս լեցընելու համար բոլոր ուրիշ հարկաւոր բաները : Ու համարձակ կ'ըսեմ՝ որ Տիկին Վաղար-

* Խնկէն այսպիսի մարմանապաշտ թշուառները ի՞նչպէս կը խաղան իրենց դատապարտութեանը հետ , Վատուծոյ պատուական ճշմարտութիւնները անարզելով , ու անզը սիրելին ընտրած ու կանչած ժողովուրդը կշտամբելով : Խայց ինչպէս որ յառաջմանէ մարմիննէն ծնածը կը հալածէր ան որ Ճողիկն ծնած էր , այնպէս է հիմա ալ՝ ու այնպէս պիտի ըլլայ մշտնշնաւորապէս , քանի որ կնոջը սերունդն ու օձին սերունդը երկրիս վրայ են :

կեշոր սրանուցելին բարեսանունդ՝ ազնուական կին մըն է , ու Պարոն Շամբուշը նոյնպէս գեղեցիկ անձ մըն է :

Գանձ որ Վրիմանէն մինչև հրմա ճամբայ ելեր էր , ու Գլժութիւնն իր հետք գացեր էր . ու երբոր կ'երթային իր զաւկըներն ալ հոն հետերնին ըլլալով Վրիմանէն սկսեց խօսիլ ու ըսել . Գլժութիւն , չորհակալ եմ քենէ , ու չեի յուսար որ դուն իմ հետ գոնեն դուրս ոտք կոխեց իմ ճամբուս մէջ քիչ մը բնծի ընկերանալու :

Պատահան տուաւ նորահաս Գլժութիւնը՝ քանզի տակաւին մատաղ օրիորդ մըն էր , և ըստ . Ընէ որ կարծէի

* Աս խօսակցութիւնը՝ յիշուած անուններովն ու տռաշարկութիւններովն կը ցուցընէ թէ բնդհանրապէս ի՞նչ անսակ անձննք են անոնք որ Վասուծմէ վախցողներն ու իրենց հողիններուն փրկութեանը չանացողները կ'արհամարհնն , ու ի՞նչ սկզբունքներէ կիրքերէ ու վարմունքներէ այսպիսի հակառակութիւնները կը ծաղին : Վմինավատ անունի տէր մարդիկ՝ որոնք իրենց կեանքին մէջ բնաւ չորշցան կամ՝ ի դործ չցրին ճշմարտութիւնը , շատ անդամ բարեպաշտ անձանց դործքերուն ու գաղափարներուն վրաց դաստորոշութիւն կ'ընն , ու ամենազգաւար վիճարանութիւնները ամեննեին առանց տարակուսնլու կ'որոշն , որպէս թէ բնական աղջկութեամբ ամենաանուրը նիւթերու ծանօթացած են , ու մարդուս որտին զաղանիքներուն տեղեկացած են : Աս յանձնապատանները սկետք էր որ մասնէին թէ ովք որ ալ ուղիղ ըլլայ՝ իրենք սխալած են . թէ որ և իցէ կրօնք իրենց յացանի ամրարշտութենէն ու անառակութենէն գէշ չկրնար ըլլալ . և թէ պէտք է իրենց որ իրենց եղորը աչքին վիւզ հանելու ջանալնէն առ ուաշ բան խոկ իրենց աչքերուն գերանը հանեն : Հաւատացեանները ևս՝ այսպիսի անձանց նախամաբնիքներովն ու կշտամբանքներովն իրենք զիրենք անհանգիստ ընելու չեն , հասպա պէտք է տրիբն անոնց համար աղօթել , իրքն թէ առելոք իրենց կարեկցութեանը արժանաւոր են անոնք՝ քան թէ իրենց առելութեանը :

որ իմ քու հետ երթալս օդոտակար պիտի ըլլար , ալ բնաւ պիտի քաղաքին մօտ չերթայի :

Գլուխութիւն , ըստ Քրիստինէ , և կոր ինծի հետ ընկն քրեղիր + աղէկ գիտեմ թէ մեր ճամբորդութեան վախանն ինչ պիտի ըլլայ . իմ երիկս այնպէս տեղ մըն է ուրկէ բնաւ պիտի չելլոր թէ և ըոլոր Ապանիական հանքերուն մէջի ոսկիները տային : Առ դուն ալ պիտի չըլլորժուիս , թէ և միայն իմ հրաւիրելով կ'երթաս հոն : Յօաղառութ որ ինծի ու իմ զաւկըներուս համար մարդ խրկեց , այն պիտի մէկն է որուն բերկութիւնը զթութիւն ընելն է : Ասկէ ՚ի զատ թէ որ կ'ուզէս , վարձքով կը բռնեմ քեզ , ու իմ հետս կ'երթաս իրքն իմ սպասաւորս : Առ սակայն մէջենիս ամեն բան հասարակաց կ'ընենք . միայն թէ կ'ուշեմ որ հետս զատ *

Գլուխութիւն . Բայց ի՞նպէս զիտնամ որ ևս ալ պիտի ընդունուիմ : Յօնէ որ աս յոյսը այնպիսի մէկն մըն ունենայի որ աղէկ գիտնար , ամեննեին պիտի չերկմանէն հասա պիտի երթայի , օդնութիւն գանելով Անկէ որ կրնայ օդնել , որ ձափի ալ ճանձրամի ըլլար ճամբան † :

Քրիստինէ . Աիրելլէ * Գլուխութիւն , քեզի ըսմմ ևս թէ բնչ պիտի ընես : Այնչեւ Կեղ Պատոր իմ հետս եկոք , ու հոն քու վրայովդ հարցուվորձ ընեմ ևս + ու թէ որ հոն

* Այսպէս է անկեղծ ճամբորդներուն ճշմարիտ ողին , որ իրենց պատուական պատառը չեն ուզեր մինակ ուտել : Կը փափաքին որ ուրիշներն ալ ճանչնան ամենապատուական Փրկիչը , ու իրենց հետ անոնք ալ անոր աշակերտ ըլլան :

† Յժեալէտ և Քրիստինէ յայնապէս տեսաւ ու խնցաւ որ ինը Աստուծմէ կանչուած է , բայց Գլուխութիւնը չտեսաւ + անոր համար տարակուսութեան մէջ էր ինը : Այսպէս կ'ըլլայ նաև շատերուն իրենց ճամբորդութեանը առջի սկզբնաւորդութիւնը :

քաջալերութիւն մը չգտնես , ան ատենը իմ՝ միտքս ալ կը հաճի որ քու տեղդ պառնաս : “Եաւ կը վճարեմ քեզի քու վարձքու քու մարդասիրութեանդ փոխարէն , որ ցոյց տուիր ինծի ու իմ՝ զաւկըներուս” մեր ձամբուն մէջ մեղի ընկերութիւն ընելուի :

Գրիտուիւն . Ուրեմն կ'երթամ՝ հոն՝ ու ինչ որ հետեւ անիկայ պիտի ընդունիմ . ու Տէրը շնորհէ որ այնպիսի վիճակ իշխայ ինծի հոն՝ ինչպէս որ Երկնից օմադաւորը կը կամի * :

Հիմա Վրիստինէ ուրախացաւ իր սրտին մէջ՝ ոչ միայն ընկեր մը ունենալուն համար , հապա որ աս խղճալի օրիւ որդը համոզեց ալ որ իր անձին փրկութեանը վրայ սէր ձղէ : Այսպէս ’ի միասին յառաջ կ'երթային անոնք , ու Գրթութիւնը կու լար : “Վրիստինէ ըստ անոր . Խնչու համար այսպէս կու լամ՝ քոյց իմ՝ :

Գրիտուիւն . Ամփո՞ս . ով պիտի ըստ պատշաճի մոտածէ տակաւին մեր յանցաւոր քաղաքին մէջ մնացած իմ՝ ողջը մելի աղջականներուս վիճակը՝ ու պիտի չլայ : Ու իմ ներդութիւնս աւելի ծանրացընողը ան է՝ որ ոչ խրատիչ մը ունին , և ոչ մէկը՝ որ գալիքը իրենց զրուցէ † :

* Ահա Աստուծմէ վարժուած սրտի մը պատուական յայտնութիւնը : “Եկատէ որ հոս Կրթութիւնը ոչ իր անձին և ոչ իր ընկեր բանին վրայ յայսը կը զնէ . հապա ամէնը ասոր կը վերածէ՝ ամէնը ասոր վրայ կը ձղէ , այսինքն Երկնից օմագաւորին սրտին սիրոյն վրայ : Ընթերցնդ եղայր , աս վիճակովը զոհ կընան ըլլալ : Արնաս ըոլորը Վրիստոսի սիրոյն վրայ ձղել , ու անոր սիրոյն վրայ հաստատել . թէ որ կընաս ուրեմն փառաւորէ անոր սիրելի անունը , որ ձանապարհորդի սիրտ մը տուաւ քեզի :

† Երբոր մէր հոդիներուն արժողութիւնն ու Վրիստոսի փրկութեանը պատուականութիւնը զիսենք , ու մէր անձերուն վրայ և մէր մեղքերուն համար կու լանք և կ'ողբանք ,

ԿՅԵՐԵՆՈՒԹՅԵՒՆ : ՃԱՄԲՈՐԴՅԱՆԵՐԸ ԵՐՈՂՐՈՎՈՒՆ գույժ ու գորով կը կարին . ու դուն քու բարեկամներուդէ համար կու լսա , ինչպէս որ իմ՝ բարի ԿԾՈՒՍՏԻԱՆՈՍՍ իս ձգելուն՝ ինծի համար լացաւ՝ որ ևս իրեն մտիկ ընել չէի ուղեր . բայց անոր ու մեր Տէրը անոր արցունքները իր տկին մէջ ժողվեց , ու հիմա դուն ու եօն և իմ՝ աս անուշիկ զաւկըներս անոնց արդ դիւնքն ու պառուղը կը քաղենք : Գիւթութիւնն , կը յու սամ՝ որ քու աս արցունքներդ պիտի չկորառուին . ինչու որ Շմարտութիւնն ըսաւ , “ Անոնք որ արցունքով կը ցանեն , ցնծութիւնով պիտի հնձնն ” : Եւ դարձեալ “ Ան որ լալով կ'երթայ ցանելու սերմը տանելով , անշուշտ ցնծութեամբ ետ պիտի դառնայ իր ցորենի խուրձերը բերելով ” : Սառչ . Ճի՞շ . 5 , 6 :

Ան ատենը Գիթութիւնն սկսեց երդել .

Ամենօրհնեալ Տէրն ինձ առաջնորդէ ,
Ճնէ որ իր օրհնեալ հաճութիւնն ուղէ .
Ու զիս իր դուռը՝ իրեն զաւիթը՝
Իրեն սրբութեան լեռը թող հանէ :

Եւ ինչ որ իշխայ իմին վկանակիս ,
Տէրը չժողու ինծի տկարիս
Մոլորիւ դառնաւալ իր ձրի շնորհքէն ;
Ու իր սուրբ համբէն ուր որ դքաւ զիս :

Եւ ինքը ժողիլ թող իմիններս ,
Որոնք ձգեցի իմին ետելս .
Ու Տէր , տուր անոնց որ քեզի դառնան
Դրուր սրտէ , ու քուկող ըլլան :

Արդ՝ իմ ծերունի բարեկամա իր խօսքը առաջ տանելով

ընական է մեզի լալ և ողբաւալ մարմարոց կողմանէ մեր սիրելի աղջականներուն վրայ ալ՝ որ չկորառուին , ու անոնց փրկութեանը ևս փափաքիլ :

ըստ . Տայց երբոր ՚Վրիստինէ Ահասովթեան Փոսն * եւ կաւ հասաւ , սկսեց կանկ առնել հոն . ինչու որ կ'ըսէք՝ Վսիկայ է ան տեղը ուր որ իմ սիրական երիկս մազ մնաց ցեխով պիտի խեղղուեք : Խմացաւ ևս որ ճամբորդներուն համար աս տեղը աղեկցընելու թագաւորին հրամանին վրաց տակաւին առջնեն աւելի գէւ էր ան : Աս ալ ան ատենը հարցուցի անոր թէ արդեօք ճշմարի՞տ է աս . ու բարի ծեռունին ըստ . Այս , բոլորին ճշմարիտ է . քանդի շատերը կան որ իրենք զիրենք կը ցուցընեն թէ թագաւորին զործաւորներն են , ու կ'ըսեն թէ թագաւորին արքունի ճամբաները նորոգելու համար կ'աշխատին , բայց քարին տեղը տիղմ ու ազը կը ըերեն , ու շնելուն տեղը կ'աւերեն † : Աւստի աս տեղը ՚Վրիստինէ իր տղոցը հետ կանկ առաւ : Տայց Գթութիւնն ըստ . Ակնք դիմադրաւ ըլլանք , միայն թէ զգուշութիւն ընենք : Ան ատենը աղեկ նայեցան իրենց քայլափոխերուն , ու շատ դժուարութիւն քաշելով միւս կողմն անցան :

Եւ սակայն ՚Վրիստինէ քիչ մնաց անոր մէջ պիտի լինար , և ան ալ չէ թէ մէկ կամ երկու անդամ : Հիմնական իսկական միւս կողմն անցան :

* Տե՛ս մասն Ե . 26-28 :

† Սամկայ սուտ վարդապետներուն ճշմարիտ ստորագրութիւնն է : ՚Վրիստոս Տէրն մեր սյավիսիները կը կոչէ՝ “Այս առաջնորդներ” : Մատթ . իկ . 24 : Եւ ի՞նչ բան կրնայ լաւագոյն կամ առաւել յայտնի ցուցընել անոնց կուրութիւնը՝ քան որչափ արթընցած մեղաւորները ՚Վրիստոսի առաջնորդելուն տեղը ՚Վրիստոսին զանանք դարձընելին : ՚Վանդի երբոր կը քարոզեն ողորմելի ու խղճանանքէն դատապարտուած մեղաւորին՝ որ դիտէ թէ Վստուծոյ օրէնքը կոտրած է , թէ Վստուծոյ ընդունելի ըլլալու միջոցները բարեղործութիւնն է . ասիկայ մեր հեղինակին ստորագրածին պէս փրկութեան ճամբան նորոգելնուն տեղը անիկայ աւրել չէ :

թէ մէկ խօսք մը կը ըսկն՝ որ կ'ըսէր իրենց . “ Երանի՝ անոր՝ որ կը հաւատայ թէ պիտի կատարուի ան բաներ՝ որ Տերոջմէ ըստեցաւ իրեն ” : “ Վո՞ւ , առ . 45 :

Մն ատենը կրկնն յառաջ դացին . ու Գլժութիւնը կ'ըսէր Կրիստոնէն . Յօնէ որ ևս քեզի պէս յուսալու իւրաւունք ունենայի թէ ան “ Աւել Դուռը սիրալիր ընդունելութիւն պիտի գանեմ ” , կարծիմ թէ ոչ ԱՀասութեան Ժառ մը զիս պիտի վախցընէր :

Պատասխան տուաւ միւսն ու բաւ . “ Դուն քու վէրդու զիտես՝ ու ես իմ , ով իմ ընտիր բարեկամն , ամենին աւ մեր ճամբուն վերջը Հասած՝ բաւական յանցանք պիտի ունենանք : Կրանզի մենքը որ այսպիսի պատուական փառքեր ստանալու միաք ունինք՝ որոնց համար ուրիշերը այնշափ կը նախանձնին մեզի , ուրիշ բանի չենք կրնար յուսալ բայց թէ բազմապատիկ վախերու ու որոդայթներու պիտի պատահինք , ու մեզ ատաղները կըցածնուն չափ տառապանք ու նեղութիւն պիտի յարուցանեն մեր վրաց :

Եւ հիմա Պարոն Աւշիմութիւնը ձգեց զիս ինքնիրենս երազելու : Աւստի կը թոււեր ինձի թէ կը տեսնէի որ Կրիստոնէն ու Գլժութիւնը և տղաքը ամենը մէկտեղ դէպ ’ի դուռը կ'ելլէին * . ու երբոր հոն հասան՝ սկսեցին համառօտ հարցուվորձ մը ընել մէջերնին , թէ ի՞նչպէս զարնեն դուռը ու ի՞նչ ըսեն անիկայ բացողնին : Ու վճնեցին որ մեծերնին Կրիստոնէն ըլլալուն ի՞նք զարնէ դուռը՝ մասնելու համար , ու ի՞նք խօսի դուռը բացողնին՝ միւսներուն համար : Այսպէս Կրիստոնէ սկսեց զարնել ու իր խոջալի երկանը պէս կրկնն զարկաւ անիւ-

* Մն որ Կրիստոսի Ծեառն մերոյ իր վրայովն ըսած Խօսքը կը յիշէ թէ “ Ես եմ ոչխարներուն դուռը . թէ որ մէկը ինձմէ ներս մասնէ պիտի փրկուի ” , պիտի իմանայ ան բաղդր և բարեհաճոյ վարդապետութիւնը՝ որ “ Աւել Դուռը ” կը նշանակէ :

կայ : Խայց ներսէն մէկը ձայն տուլուն տեղը՝ ամենուն
ալ կը թուեր թէ կը լսեին որ շուն մը կը հաջեր իրենց
վրայ + շուն մը՝ ու խիստ մեծ շուն մը + ասիկայ մեծապէս
վախցուց կնիկներն ու տղաքը * : Ասոր վրայ առեն մը
չամարձակեցան՝ ալ դուռը զարնելու , վախնալով՝ որ
չըլլայ թէ շունը վրանին ցաթէիկ : Ասոն որոյ հիմա մե-
ծապէս խռովիցան իրենց մարքենուն մէջ , ու ի՞նչ ընկըլին
չէին դիսեր . ծէ դուռը զարնելու կը համարձակեն՝ շու-
նին վախն , ու ճէ ետ դառնալու կը համարձակեն՝ Դըռ-
նապանին վախն՝ որ չըլլայ թէ իրենց ետ երթալը տեսնէ
ու իրենց բարկանայ + վերջապէս մասածեցին որ կրկին զար-
նեն անիկայ , ու առջնէն առելի ուժով զարկին : Այ
տահնը Դըռնապանն ըստ , Ո՞վ է ան : Այսպէս շունը
հաջելին գագրեցաւ , ու Դըռնապանը դուռը բացաւ ա-
նոնց :

Այս տահնը Վրիստինէ խոնարհ յարդութիւն մը մատու-
ցանելով ըստ . Տէր իմ , մի՛ բարկանար քու աղախին-
ներուդ՝ որ քու արքայական դուռդ զարկիլոք : Ասոր վրայ
Դըռնապանն ըստ . Ո՞ւրկիէ կու դար դուք + և ի՞նչ կ'ու-
ղէք տահնալ :

Ալատախան տուաւ Վրիստինէ , Ո՞հնք Վրիստիանոսին
եկած տեղին եկանք , և նոյն խել անոր զիստաւորութիւնու-
վը + այսինքն՝ որ եթէ ձևդի հաճոյ կը թուի , մարդասի-
բարար թոյլ տաք մեղի մանել աս դռնէն ան ճամփան՝ որ
Խրկնային Քաղաքը կը տանի : Եւ աս ալ ըսեմ՝ Տէր
իմ , որ ես Վրիստինէն եմ՝ որ տահնօք Վրիստիանոսին
կինն էի , որ ան հիմա վեր հասած է :

* Դուռը զարնելը կը նշանակէ Ասուծոյ շնորհաց ա-
թուին առջել աղօթել : Խակ շունը՝ որ աս պատճառաւը
ողորմելի ճամբորդներուն դէմ կը հաչեր , կը նշանակէ ա-
զօթու հոգիներուն դէմ թշնամոյն ըրած հակառակու-
թիւնները :

Դանապանը աս խօսքին վրայ զարմանեց մը յուղընելով
ըստ : Ե՞նչ պահնչելիք , ան՝ որ քիչ մը առաջ ճամ՝
բորդութեան կեանքը կ'արհամարհէր , հիմա ի՞նք ճամ՝
բորդ է եղեր : Ե՞ն ատենը Վրիստինէ իր գլուխը խոնարհ
հեցուց՝ և ըստ : Այս ու այնպէս եղան աս իմ անուշեկ
դառնուկներս ալ :

Ա ամս որոյ Դանապանը անոր ձեռքէն բռնեց՝ ու ներս
առաւ , ու ըստ ևս : “ Օճանդ տուեք աղջոցը բնծի դալ ” .
ու ասիկայ ըսելով դուռը գոցեց : Ենկէ ետե փողահար
մը կանչեց վերէն՝ դրանը վրայէն , որ ուրախ ըլլալու հաւ
մար ցնծութեան ու փողի ձայնով ողջունէ Վրիստինէնին
գալուստը : Են ալ հնազանդելով սկսեց փողը հսչցը-
նել , ու իր քաղցրանուռագ եղանակովը օդը լեցուց :

Գանքը որ բոլոր աս միջոցին ողջորմելի Գլժութիւնը
դուրսը կայներ կը դողար ու կու լար , վախնալով որ ինք
մերժուեցաւ : Խայց երբոր Վրիստինէ իրեն և իր աղջոցը
համար ընդունելութիւն գտաւ , սկսեց Գլժութիւնին հաւ
մար ալ միջնորդութիւն ընել :

Վրիստինէ . Տէ՛ր իմ , ես ընկեր մըն ալ ունիմ դուրսը
կայնած՝ որ ան նոյն պատճառաւը հսու եկաւ , որով որ
ես եկայ : Են շատ տրտում է իր մորովը՝ որ առանց
կանչուելու կու գայ՝ ինչպէս ինք կը կարծէ , որ ատեն որ
ես իմ երկանս Ծառդառորին կանչելովն եկայ :

Եսկ նոյն ատենը Գլժութիւնին սիրան եփիլ սկսեց , ու
ամէն մէկ վոյրկեանը ժամ մը կը թուեք իրեն : Ուստի
Վրիստինէնին իրեն համար ըրած միջնորդութիւնը դեռ
չլինցած՝ ալ հարկ չըսողուց անոր , ինք անձամբ դուռը
զարնելով . ու այնպէս սաստիկ զարկաւ՝ որ Վրիստինէն
տեղէն ցաթեկցուց : Են ատենը Դանապանն ըստ : Ո՞վ
է ան . ու Վրիստինէ պատասխան տուաւ ու ըստ : Իմ
բարեկամն է :

* Եյսուպէս դուռը բացաւ՝ ու դուրս նայեցաւ . բայց

Վիթութիւնը դուրսը գետինն ինկած էք՝ ինչու որ իր սիրատը նուաղեր էք, որովհետև կը վախնար թէ դուռը պիտի չացուի իրեն :

Ան ատենը “Խռնապանն անոր ձեռքէն բռնեց” ու ըստ .
Աղջիկ քեզի կ’ըսեմ”, ելլ’ ը :

Աւ Տէր, իմ սիրատ նուաղած է . հաղիւ թէ կենաց նշոյր իմ վրաս մնացած է, ըստ “Վիթութիւնը : Խայց անիկայ պատասխան տուաւ թէ Ամենօք մեկը ըստ, “Երբոր հոգիս իմ վրաս մնացեցաւ, Տէրը մեւցի, ու իմ աղօթքս քեզի” քու սուրբ տաճարդ հասաւ” : Համա . ի . 7 : Այս վախնար, սուրի վրայ ելիք, ու ըստ’ ինձի թէ ինչու եկար հոս :

Գիթութիւն . Աժամս, բանի մը համար եկայ ես՝ որուն ընաւ հրաւերուած չէի իմ բարեկամին Կիրիստինէն պէս : Իր հրաւերը թաղաւորէն էք, ու իմն միայն իրմէն : Անոր համար կը վախնամ թէ ըրածս լոկ յանդղնութիւն է :

“Խռնապան : Ա՞ն ուզեց որ իր հետը աս տեղ դաս : Գիթութիւն . Այս . և ինչպէս որ կը տեսնեմ” Տէ՛ր իմ ահա եկայ : Ու թէ որ ուրիշներուն արուելէն ենա՛ շընորհը մը ու մեղքերու թաղութիւն մը կ’աւելնայ, կ’աւ զաշեմ որ քու խղճակի աղախինդ բաժանորդ ըրայ անոր :

Ան ատենը “Խռնապանը կրկին բռնեց անոր ձեռքէն” ու քաղցրութեամի մը ներս առաւ, և ըստ . Ես բոլոր ինձի հաւատացողներուն համար կ’աղօթեմ”, ինչ միջոցով որ անոնք ինձի դան : Ու հոն մատը կայնողներուն ըստ, բան մը բերեք ու տուեք Գիթութիւնին հոտուելու, ու բոլ իր նուաղիլը դադրի : Այսպէս անոնք ստաշի ծրար մը բերին . Երբ . ա . 13, ու ատենէ մը ետեւ Գիթութիւնը կրկին զօրացաւ :

Եւ հիմն Կիրիստինէն, իր տղաքն ու Գիթութիւնը ներս առնուեցան համբուն դլսուն Տէրովմէն, ու մարդասիրա-

կան խօսքեր լուցին իրմէն : Են առենը բայն ևս անոր , Աը ցաւինք մեր մեղացը համար , ու թողութիւն կը խնդրենք մեր Տէրոջմէն , ու կ'աղաւենք որ տեղեկացընէ մեզ թէ ի՞նչ պէար է ընենք :

Ես բանիւ և արդեսմէ թողութիւն կը չորչեմ՝ ըստ Տէրը + բանիւ ներդութիւն տալու խոստունքովը , արդեամէ՝ իմ ստացած արտօնութիւնով : Եռաջնը իմ բերնէս առեք համբոյրով մը , ու երկորդը քանի որ յայտնուի : Եշտ + ա + 2 : Հոգէ + ի + 20 :

Հիմա տեսայ երազիս մէջ որ շատ անուշ խօսքեր խօսեցաւ անոնց , որով անոնք մեծապէս ուրախացան : “Աան վեր դրանը վրայ հանեց զանոնք , ու ցուցոյ իրենց թէ ի՞նչ կերպով փրկուեցան , և ըստ ևս՝ թէ ձամբան երթալուն” իրենց միսիթարութեանը համար ան նոյն երկոյթը կը կիրակի պիտի տեսնեն :

Երազէս վարի յարկը՝ ամսուուան սրահի մը մէջ ձգեց զանոնք , ուր որ իրենք իրենց խօսակցելու սկսեցին + ու սյսպէս սկսեց Քրիստինէ : Արշափ ուրախ եմ՝ որ հոն ներս առնուեցանք մենք :

Գլուխիւն + Դրաւունք ունիս ուրախ ըլլալու + բայց ես ամենէն աւելի պատճառ ունիմ ուրախութենիս ցալթ կելու :

Քրիստինէ + Դրանը առնելը կայնած առենս որ կը զարդի ու մէկը պատասխան չէր տար , կարծեցի անդամ մը թէ մեր բոլոր աշխատառութիւնը ոչնչը դացած է + մասնաւանդ երբոր ան դարձելի շունը սյնպէս սաստիկ կը հաջէր մեր վրայ :

Գլուխիւն + Բայց իմ ամենէն գէլ վախս ան տանն էր՝ որ տեսայ թէ դուք անոր չորչացը ընդունելի եղաք , ու ես ես ձգուեցայ : Առածեցի թէ հիմա կատարեցաւ ան գրուածը , “Ճաէ որ երկու կնիկ մէկ աղօրիքի մէջ աշղալու վրայ գտնուին , մէկը պիտի առնուի՝ ու մէկալը

ձգուի՞ : Մատթ . ի՞դ . 41 : Մաղ մնաց որ պիսի կանչէի , թէ Առքուեցայ ևս : Դուռը զարնելու ալ կը վախնացի + բայց երբոր վեր նացեցայ դքանը վրայի գրուածքն , քաջալերութիւն առի : Մտածեցի ևս որ կմմ ուռուը կրկին զարնելու՝ և կամ մեռնելու եմ . ուստի զարկի դուռը , բայց չեմ գիտեր թէ ի՞նչպէս . ինչու որ իմ հոգիս աս ատենը կենաց ու մահուան մէջտեղը կը տաղաւապէր :

ՎՐԵԱՍՏԵՂԵԿԻ . Չե՞ս զիտեր ինչպէս զարնելոյ : Ալ հաւատարմացընեմ զքեզ՝ որ քու զարնուածքներդ այնպէս ուժզին էին , որ անոնց ձայնը տեղէս ցաթկեցուց զիս . կարծեցի որ բոլոր իմ կենացս մէջ այնպիսի զարնուածք լուած չէի : Կարծեցի որ զօրաւոր բազկաւ մը ներս պիտի մննես , ու թագաւորութիւնը ուժով պիտի յափշտակես : Մատթ . ժամ . 12 :

ԴՆԴՈՒՅՔՆ . Ավանս , ԹՎ՝ թէ որ իմ տեղս ըլլար , այնպէս պիտի չընէր : Տեսար դուն թէ դուռն իմ վրաս գոցուեցաւ , և թէ խիստ անողորմ շուն մը կար ան տեւ զուանքը : Դարձնաւ կ'ըսեմ , Ո՞Վ՝ թէ որ ինձ նման շշապէս սրտարեկած ըլլար , բոլոր իր զօրութիւնովը պիտի չըարնէր : Ի՞այց՝ կ'աղաւեմ , ի՞նչ ըստ իմ Տէրս իմ ըրած տմարդութեանս . արդեօք չըարկացմաւ ինծի :

ՎՐԵԱՍՏԵՂԵԿԻ . Խըրոր ան քու զարնուածքիդ սաստիկ ձայնը լսեց , խիստ անմեղ ժայիտ մը ցուցուց + կարծեմ թէ քու ըրածդ լսու հաճեցուց զինքը , ինչու որ ահաճութեան նշան մը չցուցուց * : Ի՞այց իմ սիրոս ապշտութեան մէջ

* Խըրոր մեղաւորը կորսուելու սաստիկ վախովը կ'աղօթէ , յասուկ չերմեռանդութիւնն մը կը ծնանի իր հոգւոյն մէջ . և որչափ որ չերմեռանդ ըլլան մեր աղօթքները , այնպափ ընդունելի կ'ըլլան Տէրոջը , թէ և մարդոց շատ հնկառակ երևոյ անոր եղանակը :

Եթէ ինչպէս այսպէս շուն մը կը պահէ ան . թէ որ անիւ կայ յառաջմանէ զիտնայի , պիտի չհամարձակէի հոս գաւլու : Իսայց հիմա որ ներան ենք՝ ներան ենք , և ուրախ եմ բոլորով սրախ :

Գլուխութեան . թէ որ կ'ուզես վար իջնելուն հարցընեմ ես իրեն թէ ինչպէս համար այսպէս զէլ շուն մը կը պահէ իր բակը . կը յուսամ որ ինք անպատշաճ պիտի չսեպէ առ հարցումը :

Այս հարցուր , ըսին տղաքը , ու համազէ զինքը որ անիկայ սպաննէ . ինը որ կը վախնանք թէ ասիէ երթաւ նուս պիտի խածնէ մեզ :

Աշուապէս Դամապանը կրկին վար իջաւ անոնց քով , ու Դիմութիւնը երեսին վայ զետինը խոնարհեցաւ անոր առ չնը ու երկրագութիւն ըստ և ըստ . Ընդունէ Տէր իմ , իմ զոհութեան զոհս , որն որ հիմա կը մատու ցանեմ քեզի իմ շրմտանքներուս պատարագովը :

Խոկ ան ըստ անոր . Խաղաղութիւն քեզի . ելք ի կանգնէ . բայց ան երեսին վայ զետինը խոնարհած մեաց , ու ըստ . Սրդար ես գուն ով Տէր , ու քու առ չնդու ցանենք պիտի ընեմ . բայց քու դատաստաներուդ վայ պիտի խօսիմ : Երիմ . ժիր . 1 : Խնչու համար քու բակիդ մէջ այսպէս զէլ շուն մը կը պահէս , որուն տեսքն մեզի պէս կնիկներն ու տղաքը վախնանուն խելոյն կը պատրաստուին փախչիլ քու դռնէդ :

Պատասխան տուաւ միւսն ու ըստ . Վա շունը ուրիշ տէր ունի . ու նաև ուրիշ մարդու մը կալւածքին մէջ կապուած է . իմ համբորդներս միայն անոր հաշելը կը լսեն . և ան ամրոցին շունն է որ հոնքիչ մը հեռուն կը տեսնէք , բայց մինչև աս տեղիս պատերուն քովը կը նայ զաւ : Ու շատ անգամ բարի համբորդները վախցընելով՝ աղեկի կը յառաջացընէ զանոնք՝ իր մենշլու մեծ ձայնով : Սպաքէն իր տէրը ինծի կամ իմբններուս աղեկու :

թիւն մը ընկելու կամքով շպահեր զանիկաց , հապա ան մարտով որ ճամբորդները ինծի գալէն արդիլէ , ու վախցընէ զանոնք գալու և աս դուռը զարնելու՝ ներս լնդունուելու համար : Եցրենին կատղելով դուրս ելեր ու իմ սիրելիներուս մէկ քանին փառատեր է ալ . բայց ևս առ այժմ բուըը համբերութեամի՞ կը տանիմ : Վասաց որ ևս ատենին իմ ճամբորդներուս օգնութեան կը հանիմ , այնպէս որ անոնք իր գօրութեանը չեն մասնուիր՝ որ իր գաղանացին բնութեանը թելադրածն ընէ անոնց : Բայց ովք իմ ծախու առածս , ևս կը կարծեմ որ եթէ դուն յառաջմանէ զիտցած ալ ըլլայիր աս զարհուրելի շունին հոս ըլլալը , տակաւին պիտի գայիր հոս : Վուրացիանները որ դռնէ դուռ կը պտըտին , աւելօք կ'ուզեն շան մը ոռնալուն՝ հաջելուն՝ ու խածնելուն ևս ննթակայ ըլլալ , քան թէ առնելը հաւանական երկցած ողորմութենէ մը ետ հրաժարիլ . և պէ՞տք է որ մէկ շուն մը՝ ուրիշ մարդու մը բակին շունը , և ան շունը , որուն հաջելը իմ ճամբորդներուս օգտին կը գարձենմ , արդիլէ մէկը ինծի գալէն : Ես անոնք կ'աղատեմ առխածներուն բերնէն , ու իմ սիրելին՝ շանը ձեռքէն : Առաջ + իր + 20 , 21 :

Են ատենը Գիթութիւնն ըստ . Աը խոստովանիմ իմ տղիսութիւնս . իմ չիմացածս խօսեցայ ևս . կ'ընդունիմ որ ամէն բաները աղէկ կ'ընեն դուն : Առաջ . է . 37 :

Հիմա Կրիստինէ սկսեց իրենց ճամբորդութեանը վրայ խօսիլ , ու ճանապարհին վրայով հարցուվորձ ընկել : Ուստի Կոնսապանը կերակրեց զանոնք՝ ու լուաց ուրքերնին , ու դրաւ զանոնք երթալու ճամբանուն մէջ , ինչ պէս որ առաջ իր երկանը ըլմեր էր : Վայսպէս տեսայ երազին մէջ որ անոնք իրենց ճամբուուն մէջ յառաջ կ'երթային , ու եղանակը շատ դուարձալի էր իրենց :

* Են ատենը Կրիստինէ սկսեց երգել ու ըսել .

Կ'նչ օրհնեալ օր էր ան օրը՝
Որ ևս ելայ ճամբռողութեան,
Կ'նչ օրհնեալ մարդ էր ան մարդը՝
Որ դիս փութով շարժեց առ այս :

Խրաւ շատ ուշ սկսած եմ՝
Ժնարուելու կեանքն անզրաւ,
Խայց կրցածիս չափ կը վաղեմ՝
Ուշ թող ըլլայ քան թէ բնաւ :

Ըրտասուքնիս ուրախութեան
Ա ախերնիս հաւատքի դարձան,
Ըստակէս ահա մեր սկիզբը
Ալ յայտնէ մեր բարի վերջը :

Արդ՝ Վրիստինելին ու իր ընկերներուն երթալու ճամբռուն
քովի պատին անդիի կողմը պարտեզ մը կար, ու ան պար-
տեզը հաջող չանը տիրոջն էր, որն որ առաջ յիշուեցաւ:
Ու ան պարտեզին մէջ բռւսած մրդարեր ծառերուն մէկ
քանիին ոստերը պատին վրայէն միւս կողմը կախուեր էին.
ու անուշահամ ըլլանուն՝ զանողները կը քաղէին, ու 'ի
վեսա իրենց անձանցը զանոնիք կ'ուտելին : Ըստակէս Վր-
իստինելին տղաքը տղոց սովորութեանը պէս՝ հաւանելով
ծառերուն ու անոնց վրայ կախուած պտույներուն, փրցու-
ցին զանոնիք ու սկսեցին ուտել : Իրենց մայրը ևս պատկէս
բան ընելնուն համար զիրենք կը չեխէր, բայց և այնպէս
տղաքը բաներնին կը նայէին * :

* Վ'նչ է աս պարտեզը, եթէ ոչ աս աշխարհս : Վ'նչ
ևս ան պտույները որ անոնիք հոս գտան : Եթէ ոչ մարմուց
ցանկութիւնը, աչաց ցանկութիւնը, ու աս կ'անցիս ամ-
բարտաւանութիւնը : մ՛ Համբաւ ք 16 : Վասնցմէ էին
որ տղաքը կերան : Վարերնին չեխեց զանոնիք որ իրենցը
չեղած բանն առին, բայց չէր զիսեր թէ Աստանային
պարտեզին մէջ կը բռւսելին անոնիք : Ո՛վ ծնողըներ :

Տղմբս՝ կ'ըսէք ինքը , մեղք կը գործէք , ինչու որ առ
պտուղները մերը չեն . բայց ինքը չէք զիտեք թէ թշնա-
մոցնն են : Աը վկացեմ ձեզի որ եթէ զիտցած ըլլար ,
վախէն խոկոյն պիտի մեռնէք : Բայց աս անցաւ՝ ու անոնք
իրենց ճամբան դացին : Գամեք որ ճամբուն զլուխէն եր-
կու նետաձիղի չափ յառաջ որ դացին , տեսան որ երկու
անշորհ անձինք վաղելով կ'իջնէլն դէպ ՚ի իրենց * : Ա-
սոր վրայ ՚Քրիստինէն ու ՚Կթութիւնը իրենք զիրենք իրենց
քողերով ծածկեցին , ու այնպէս իրենց ճամբան յառա-
ջացան : աղաքն ալ առջևուն կ'երթացին : և վերջապէս
ամենը իրարու հասան : Են ատենը անոնք որ դէպ ՚ի ա-
սոնց կ'իջնէին , շխտակ կնիկներուն դէմն եկան , որ կար-
ծես թէ պիտի զրկեին զանոնք + բայց ՚Քրիստինէ ըստ .
Ետ կայսեցեք , կամ խաղաղութեամբ ձեք ճամբան դա-
ցէք ինչպէս որ պէտք է : Եւ սակայն աս երկուքը խուլ-

աղեկ միտք առեք առիկայ : Ուսող մի՛ տաք ձեք զաւկընե-
րուն ամենատիորը չարիք մը գործել : Խրատեցէք զանոնք
խիստ պղտիկ յանցանքի մը համար : Անդքը խարեբայ
ալ է խստացուցիչ ալ : Ծռէ որ ամենէն պղտիկ յան-
ցանքը նկատուի , անիկայ բնականարար կը խստացընէ-
զանոնք , այնպէս որ մեծադոյնք կը գործեն : Վսկէ ետե-
նայէ դուն անոնց աս պտուղը ուտելնուն հետեւնիքը :

* Ո՞վ Են ան զարշատեսիլ անձերը : Խնոնք Են՝ որոնց
անշուշտ պիտի պատահիք ձեք ճամբորդութեամնը մէջ .
սյսինքն անարդ յանկութիւններ՝ կամ անիծեալ վատթա-
րութիւններ , որ ձեք մարմնաւոր ընութեամնը յարմարած
են : Խանոք ձեք վրայ պիտի յարձակին , ձեզի գէմը կենա-
լու՝ ու ձեզ յաղթելու պիտի ջանան : ՚Եսէ՛ ի՞նչպէս
վարուեցան աս ճամբորդները , ու հետեւ՝ անոնց օրինա-
կին : Ծռէ որ մէկը աս զարշատեսիլ անձերուն անուն
զնել ուզէք , մէկը պիտի կոչուէք ՚Անհաւատութիւն ու
միւսը ՚Անառակութիւն , որոնք կ'աշխատեին ՚Քրիստոսի
կոյսերը իրենց պարկելուութենէն մէրկացընել :

մարդոց պէս Կրիստինէնին խօսքերուն ականջ քորին • Հաւսպա սկսեցին բռնել զանոնք : Կրիստինէ սաստիկ տաքանալով ասոր վրայի իր ստուբներովը աքացի կը զարմէր աշնոնց . Գրժութիւնը ևս կրցածին չափ կ'աշխատէր անոնց ձեռքէն աղատելու : Կրիստինէ կրկին ըստ անոնց , Ե՞տ կայնեցէք , ու բաներնիդ գացէք : մենք ձեզի տալու ստակ չըւնինք • Բնչու որ՝ բնչպէս որ կը տեսնէք՝ ճամփորդ մարդիկ ենք . ու այնպիսի ճամփորդներ ալ ենք՝ որ մեր բարեկամներուն ողորմնաթիւնովը կ'ապրինք :

Են ատենը ան երկու մարդոց մէկն ըստ . Ո՞նք ստակի համար ձեր վրայ չենք դար . Համար եկանք ձեզի զբուցելու որ մէկ պլատիկ ինսդիբք մը տանինք ձենէ , ու թէ որ անիւ կայ կատարէք՝ ձեզի մշանչնեառոր աղեկութիւն մը պիտի ընենք :

Հիմա Կրիստինէ իմանալով թէ ի՞նչ կ'ուզեն ըսել , դարձեալ պատասխան տուաւ ու ըստ . Ո՞չ կը լսենք ձեզի՞ ոչ մտիկ կ'ընենք՝ և ոչ ձեր ինսդիբքը կ'ընդունինք . մենք կ'արտօրանք ու չենք կրնար կոյնիլ . մեր դործը կեշաց ու մահուան զործ մըն է : Այսուհետ Կրիստինէ ու իր բնիկը դարձեալ ջանացին անցնիլ երթալու , բայց անոնք իրենց ճամփուն դէմը կեցան ու արդիլեցին :

Եւ ըսին . Ո՞նք մէր կենացը վնասելու միաք չըւնինք . մէր ուղածը ուրիշ բան է :

Աէհ , ըստ Կրիստինէ , դուք մեր հողին ու մարմինը մէկտեղ կ'ուզէք . Բնչու որ դիտիմ ևս որ անոր համար եկած էք : Բայց աւելք աս տեղս կը մեռնինք՝ քան թէ մենք մէզ կը ձգենք այնպիսի որոպայթներու մէջ իյնալու , որ մէր հանդերձեալ բարելաւութեանը պիտի վնասէ : Աս խօսքին վրայ երկուքը մէկէն ճայներնին վերուցին ու աղաղակելով կանչութուեցին , Հոգի աղատող չկայ , և այսպէս իրենք զիրենք կանանց պաշտուանութեանը համաց արուած օրէնքին տակը որին : Ա Օքն . իր . 25-

27 : Բայց մարդիկը տակաւին իրենց վրայ կու գային յաղթելու իրենց . վասն որոյ անմիք կրկին սկսեցին կանչուըոտել * :

Սքո՞՝ ինչպէս որ ըստ իրենց եկած դռնեն չառ հեռուն ըլլալով , ձայներնին իրենց եզած տեղն հան ըստեր է . ուստի նոյն տօնենէն մեկը դուրս ելաւ , ու իմանալով որ միքատինեն ձայնն էր , արտորաց անոր ազատութեանը համելու . բայց մինչև որ կնիկները տեսնելու չափ մատեցաւ խղճալիները մեծ կուռոյ մեջ են . աղաքն ալ մեկ կողմը կայներ կու ըստին : Այս ատենը ան իրենց ազատութեանը համար եկողը ան անդամներուն կանչեց ըստ լով . Կ՞ոչ է ատ ձեր ըրածը . իմ Տէրոջս ժողովրդոցը մեղմնէ՛լ պիտի տաք : “Եակ ետենուն վաղեց որ բանէ զանոնք , բայց անոնք փախան” ու պատին վրոշէն ան մեծ շունին աերով պարակեզը անցան . ու շունը իրենց պաշտապան եղաւ : Ուստի աս Ազատիք կնիկներուն քովն եկաւ ու հարցոց թէ ինչպէս են : Անոնք ալ պատասխան տուին . Ընո՞հակալ ենք քու Տէրոջմեդ . աղէկ ենք , միայն քիչ մը վախցանք . չնորհակալ ենք քենէ ալ որ մեր օգնութեանը հասար , ապա թէ ոչ պիտի յաղթուելինք :

Աս Ազատիք քանի մը ուրիշ խորերէն եամ՝ ըստ առնց . Երրոր դուք դռնեն ներս ընդունուեցաք մեծ ապէս զարմացայ ես , որ դուք ձեր տկար կնիկներ ըլլալը զիտաւ լով Տէրոջը չաղաչեցիք որ ձեզի առաջնորդ մը տայ . ան ատենը աս նեղութիւններուն ու վասնդներուն պիտի չպա-

* Վս տեղը կը տեսնենք թէ ամենամեծ չարիք մը դործեւ իր իսիստ սաստիկ փորձութիւնը մեղք չէ թէ որ անոր դէմ կեցուի ու հաճութիւն չըրուի : Ո՞ր սիրելի Տէրը մեղին նման ամէն բաներու մեջ փորձուեցաւ , բայց առանց մեղքի մնաց :

առաջեկիք • քանզի ան պիտի տար ձեզի մէկ առաջնորդ մըլ *

Սիստո , ըստ Քրիստինէ , ան ներկայ բարութիւնովը միտքերնիս այնպէս յափշտակուեցաւ , որ գալու վասնղները մօնցանք : Ասկէ ՚ի գատ որո՞ւն մոքէն կ'անցնէր թէ քնառ զաւորին պալատին այսշափ մօտը այսպիսի անզգամմերը պիտի կարենան դարանակալ ըլլալ : Արդարն աղէկ եղած սիստի ըլլար մեզի թէ որ մեր Տէրոջմնն առաջնորդ մըլ խնդրած ըլլայնք • բայց որովհետեւ մեր Տէրը գիտէր թէ ողտակար էր մեզի ան , կը զարմանամ որ ինք հետեւնիս մէկը չխրիեց :

Առաջիւ . Ամեն առեն հարկաւոր չէ առանց ինորելու բան տալ , որ չըլլայ թէ առանկով ան բանին յարդութիւնը ցածնայ • բայց երբոր բանի մը հարկաւորութիւնը կը զգացուի , ան առենը անիկայ զգացողին աչքին անոր պատշաճաւոր յարգութիւնը կը ճանչցուի , և հետեւապէս անոր համեմատ կը գործածուի : Յօնէ որ իմ Տէրս ձեզի առաջնորդ մըլ տուած ըլլար , ձեր զանցառութեանը վրայ այսպէս պիտի չափասայիք մէկը չմնջրենուդ համար • ինչպէս որ հիմա ափառալու իրաւունք ունիք : Այսպէս՝ ամեն բան աղէկի պատճառ կ'ըլլայ , ու կ'օգնէ ձեզի առաւել ևս զգուշաւոր ըլլալու :

Քրիստինէ . Արդեօք դառնանք հ՞ա երթանք մեր Տէրութիւնը , ու մեր յիմարութիւնը խոստովաննենք ու մէկը ուղի՞նք :

Առաջիւ . Չեր յիմարութեանը վրայ ձեր ընելու խոստովանութիւնը ևս անոր կը ներկայացընեմ : Հարկ չէ ձեզի նորէն ևս երթաւ • քանզի բոլոր ան առջուանքը

* Ե՛ղբայր իմ՝ մի՛ ծուլանար աղօթքի մէջ , որ չըլլայ թէ քու վասդ առաքեալին ան աղջու խօսքը ճշմարտի , թէ “Չունիք , ինչու որ չէք ինորեր” : Յա՞ + դ + 2 :

որ որ դուք պիտի երթաք , ամեննեին պակառութիւն մը պիտի չքանէք . ինչու որ իմ Տէրոջս բոլոր իջևաններուն մ.ջ որ իր ճամբորդներն ընդունուելու համար ինքը պատրաստած է , ամեն կերպ յարձակմունքներուն գէմ ալ բաւական ճար կայ անոնց համար : Բայց՝ ինչպէս որ ըստ ուշաք է որ ինգրեն իրմէն որ ինքն ալ ան ճարն ընէ անոնց : Եւ ան՝ որ ինգրելու արժանաւոր չէ , անպիտան բան մը պիտի ըլլայ : Աս որ բառ՝ նոր դարձաւ իր ու ան գարցն :

Աս ատենը Գիմութիւնն ըստ . Խոչ յանկարծ մութ մը պատեց . ևս՝ կը համարէի որ բոլոր վտանգները անցուցինք , ու ալ բնաւ տրամութիւն պիտի չունենք :

Դիմք իմ , ըստ Քրիստինէ Գիմութիւնն , քու փորձառու չեղած մանկամարդութիւնդ շատ անմեղադիր կընայ ընել քեզ . բայց իմ վրայովմ՝ իմ յանցանքս աւելի մեծադոյն է , որ իմ գունէս զուրս չելած աս վտանգը տեսայ , և աւկայն անոր համար պատրաստութիւն քըրի՝ երբոր կընար նոյն պատրաստութիւնն ըլլուիլ* :

Գիտութիւն . Ինչը՞ն գիտէիր աս՝ քու բնակարանէդ չեւած . կ'աղաւնէմ մեխնէ ինծի աս խօսքը :

* Ահաւասիկ հշմարիս քրիստոնէական ողույն պայցը՝ որ կ'երեայ Քրիստինէնին յայսնի ու անխարդախ խոսառովանութեանը մէջ , բոլոր յանցանքը իր վրան առնելով՝ անկայ մեծցնելով՝ ու Գիմութիւնը անմեղադիր ընելով : Ասիկայ բնական չէ մեզի . ինչու որ մենք ամենս ալ դիւրապատրաստ ենք մենք մեզ արդարացընելու ու անձերնուս չատագով ըլլալու : Ասիկայ է մեր ամբարտաւան ողույն հշմարիս նշանը : Բայց Քրիստոսի նորհքը սիրաը կը խոնարհեցընէ ու լեզուն կը համբացընէ , որ անձերնիս արդարացընելու ջատագովութիւններու չհամարձակնիք : Ոչ թէ աս պատռական յնորհքը մեր վրայ աւելանոր :

Կամա աղջկե քեզի ըսեմ թէ ինչը՞ն : Ասքս դռնին դուրս դնելու առաջ դիշեր մը անկողինիս մ.ջ որ պատկած էին երազ մը տեսայ առար վրայ : Աւթուեր ինձի թէ կը տեսնէի երկու մարդիկ՝ նցյ և նման առնեց , որ իմ անկողինիս ոտքին տակը կայներ էին ու հնարք մը կը խորհնին թէ ինչպէս կրնան իմ փրկութիւնս խափանել : Տառն իսկ իրենց ըսած խօսքը քեզի զբուցեմ : Ըստն թէ՝ (Երրոր ես իմ նեղութիւններուս մ.ջն էի) Խոնչ ընենք աս կնոջը . քանզի ինքը թէ արթուն և թէ քուն եղած ատենը միշտ ողբշմութեան համար կ'աղաղակ էկ . թէ որ ձգենք որ իր սկսածին պէս յառաջ երթայ , պիտի կորսնցընենք զնոքը ինչպէս որ կորսնցուցինք իր էրիւ կը : Գիտե՛ս որ ասիկայ պէտք էր ոքուշացնել զիս , ու պատրաստութիւն տեսնել տաւ ինձի , երրոր կրնար պատրաստութիւն ըլլուիլ :

Երբոր ան Հովանաւոր տեղը եկան՝ շատ կը փափափէին նստիլ , ինչու որ բոլորն ալ արին քրտինք մտած էին : Ան ատենը Գրժութիւնն ըստ . Յոզնածներուն որչափ անուշ է հանդառութիւնը . Պատր . ժամ . 28 . ու որչափ բարերար է Համբորդներուն Խշանինը՝ որ անոնց համար սցսպիսի հանդստութեան տեղեր կը պատրաստէ : Ըստ անգամ լսեցի ես աս Հովանաւոր տեղն վրայով , բայց բնաւ տեսած չէի առաջ : Բայց հոս զցոյշ կենանք քնառնալն , ինչու որ՝ ինչպէս որ լսած եմ , Քրիստիանունին շատի նստաւ անիկայ :

Ան ատենը Քաջասիրտը աղօցն ըստ . Եկէք նայիմ , իմ դեղեցիկ տղաքս , ի՞նչպէս եք : Կ՞նչ կը խորհիք հիմն ճամբորդութիւն ընելու վրայով : Տէր իմ՝ ըստ պղտիկը , սեպէ թէ ես ճամբան մնալու եի . բայց շնորհակալ եմ քեզին որ իմ կարօտութեանս ատենը ձեռք տուիր ինձի . ու իմ միաքս կու դայ հիմա՝ ինչ որ իմ

* Ան որ անձնութացութեան խիստ գործ բլալը՝ ու մարմնոյն որչափ գժուար գալը իմացած չէ , չցիսեր թէ ի՞նչ կը նշանակէ աս ՚իժուարութեան Լեռը : Քանզի որչափ որ Յիսուսի հանդստարար Հովանաւոր տեղին մօտենանք , այնչափ ճամբուն վրայ աւելի գժուարութիւններ կը դանենք . բայց նոյնչափ ալ քաղցր կ'ըլլայ այն հանգիստը երբոր ստանանք :

մայրս ըստ ինձի + ոյսինքն՝ թէ Երկինքը երթալու համբան սանդուխի կը նմանի , ու Գմբիքը տանող համբան լիռնեն վար իջնելու : Խայց առաւել աղեկ է ինձի սանդուխեն վեր Անաց Երթալ , քան թէ լեռն 'ի վար Պահուան վաղել :

Ես առենք Գմբութիւնն ըստ + Խայց առակը կ'ըսէ : Լեռն 'ի վար իջնելը դիւրին է : Խակ Հակոբոս ըստ , Ծրանդի աս էր աղեկին անաւնը +) Ես օրը կու գայ՝ որ առեն իմ կարծեօքս լեռն 'ի վար իջնելը ամենէն զժուար պիտի բյաց : Խայցի ատղան՝ ըստ իր վարժապետ + շետակ պատասխան տուիր իրնեն : Ես առենք Գմբութիւնը Ժպտեցաւ + քայց փարբիկ աղեկը կարմիւցաւ * :

Երկեր՝ ըստա միքատինէ , քանի որ նաև իր էք տոքերնիդ հանգչցընելու , կառոր մը բան կ'ուտէ՞ք որ բերաննիդ քիչ մը անուշցընէ : Բնաւ որ նաև մը ունիմ ևս՝ որն որ պարտն Մեկնիւը իր դանէն դուրս ելած ատենա իմ ձեռքս ուրաւ + քիչ մը մեղքախորխան ու շիշ մըն ալ օշարակ տուաւ ինձի † : Ես կարծեցի որ Բնը բան մը տուաւ

* Վամիկաց օրինաւոր է + Երբոր ուրիշները մեզ զովարանեն՝ պէտք է կապալինը , աղեկ դիսնալով որ շատ բաներ ունիմը ամշնալու : Խայց ունինը այնպիսի մտադի յանձնաւ պատանութիւն մը՝ ու բարձր կարծիք մը ունին իրենց սեփական արդարութեանը՝ արժանաւորութեանն ու կատարելութեանը վաց , որ չեն ամշնար : Ե՛զ զբացր իմ՝ դուն քու ողորմելի մեղքաւոր մը բլբաղդ հանչնալով հանապազ առ Տեր կարգաւ որ քեզ հոգեւոր հագարաւութենէ պահէ , ու խոնարհ սիրտ մը տաց քեզի :

† Վամիկաց քաղցրիկ օրինակ մըն է Վասուծոյ իր ժողովուրդը կազզութելուն : Վասուծոյ խօսքն ու խոսամութերներն են՝ որով առարմնի հոգիները մտունոր կ'առանեն + մեջ պէս որ Դաւիթ կ'ըսէ : “ Ինձի հաղարաւոր ուկիէ ու արծաթէ առելի աղեկ է քու քերնիդ օրինքը ” : Ասով . ձժիժ . 72 : Ո՛վ բնթերցող՝ կը յաւառմ որ քու փարձա-

քեզի ըստ Գլուխթիմը . ինչու որ մեկդի կանչեց քեզ : Ես այդպէս ըստ , ըստ միւսը . բայց և այնպէս՝ նախ և առաջ մեր ընակարանէն ելլենուս ինչպէս որ պիտի ըլլայ ըսի՝ այնպէս պիտի ըլլայ . բոլոր իմ՝ ունեցած բարիքներուս բաժանորդ պիտի ըլլաս դօւն , որովհետեւ սցանափ յօժարութեամբ ընկեր եղար ինծի : Ենկեւ ետեւ տուաւ անոնց՝ ու անոնք թէ՞ Գլուխթիմը և թէ տղաքը կերան : Ու դան՝ տէ՞ թէ՞ իմ , ըստ Վրիստինէ Վաշտիրտին , դուն ալ կ'ուղե՞ս մեղի պէս ընել : Բայց ան պատասխան տուաւ ըսելով . Դուք ճամբայ կ'երթաք , ու ես շատ շանցած եմ պիտի դառնամ . անուշներ ըլլայ ձեզի + ես տունը ամեն օր ան նոյն բաները կ'ուտեմ : Հյուն երբոր կերան ու խմեցին՝ ու քիչ մըն ալ խօսակցեցան , իրենց առաջնորդը ըստ անոնց . Օքը իրիկուն կ'ըլլայ . թէ որ կ'ուղե՞ք՝ պատրաստունք ճամբայ ելլելու : Ուստի ճամբայ ելուն , ու փոքրիկ տղաքը առջնուն կ'երթային . բայց Վրիստինէ օշարակին շիշը մնացաւ իր հետը առնելու . վասն որոյ իր մղողը մէկը ես խրկեց անիկայ բերելու : Են առանք Գլուխթիմն ըստ . Կարծեմ թէ ասիկայ մոռացութեան տեղ մըն է . Հոս կորաբնցոց Վրիստիանուս իր թուղթը , ու հոս ձղեց Վրիստինէ իր շիշը . ի՞նչ է ասոր պատճառը՝ տէ՞ թէ՞ իմ : Պատասխան տուաւ իրենց առաջնորդն ու ըստ . Պատճառը քունը կամ մոռացութիւնն է . ունանք երբոր արթուն մնալու պարտական են :

ուութիւնդ ալ ասոր համեմատ է : Հյաւանի խօսքին արօտը՝ Յիսուս նիբն է . և թէ որ դիտես թէ ի՞նչ է իրմայլ մնանիլը , պիտի դիմանա ևս թէ իր ժողովրդոցը կարուտութեանը համար պէտք եղածը միշտ ունի ինք : Ու երբոր Առորը Հողին Յիսուսի բաներն է կ'առնէն անոր ժողովրդոցը յայտնի ընելու , մինչեւ անդամ՝ անոնց տըրամութիւններն ու անոնց արցունըները նոննուոց օշարակի կը դարձնէ :

կը քննանան , ու ոմանք երբոր մաքերնին պահելու պարուական ևն՝ կը մնանան . ու հանգստութեան տեղերը ձամբարորդներէն ոմանց սովորաբար մէյմէկ բան կորսընցընելուն զլսաւոր պատճառը աս է : Ճամբորդները պէտք է արթուն մնան ու մաքերնին պահեն իրենց արդէն ունեցածը իրենց ամենամեծ ուրախութեանը մէջ ալ . բայց ասիկոյ չընելուն համար շատ անդամ իրենց ուրախութիւնը արշունքներով կը վերջանայ , ու իրենց ցորեկը ամպով կը մըննայ . տեսէք Կրիստիանոսին պատճառթիւնը՝ ու իմացէք թէ ինչ պատահեցաւ անոր աս տեղը :

Երբոր եկան ան նոյն տեղը հասան՝ ուր որ Աստիածուն ու Ա ախկոտը Քրիստիանոսին պատահէր էին յօրդորելու զինքը որ առիւծներուն վախէն ևտ դատնայ , տեսան որ հողարլուր մը շնուռած էր հոն , ու անոր առջել գէալ 'ի ճամբուն վայցով լսյն տախտակ մը կար՝ տուն մը ոտանաւոր դրուած վրան . ու անոր տակը ան հողարլուրին շնուռելուն պատճառը նշանակուած էր : Տախտակին վրայի ու տանաւորը աս էր :

Աս հողարլուրը ո՛վ որ կը տեսնէ ,
Արտին ու լեզուին թնդղ զգուշնայ ,
Բայց թէ որ չընէ ինքն ալ անպատճառ
Աւրիշներուն պէս պատժապարտ կ'ըւայ :

Խոկ ոտանաւորին տակի խօսքն աս էր՝ “Աս հողարլուրը շնուռեցաւ որ վախկոտութեամբ կամ կասկածոտութեամբ ասկէ անդին ճամբորդութեան երթալու վախցողները ասսոր վրայ պատժուին : ” Կամ ասոր վրայ տարցուցած երկամբ խօթեցին Աստիածուն ու Ա ախկոտին լեզուներուն , Քրիստիանոսը իր ճամբէն խափանելու ջանալուն համար” :

Աս ասենը Գիթութիւնն ըստ . Ասիկայ շատ նմանութիւն ունի ան Աիրելոյն խօսքին , թէ՝ “Ո՛վ նենպատոր

լեզու ի՞նչ տրուի քեզի , ու ի՞նչ առելցուի : «Օօրաւոր մարդուն սուր նետերը ու զիհին կայծերը» * : Առաջ . ձի . 3 (լուսանցք) , 4 :

Այսպէս անոնք յառաջ զային մինչև որ առիւծներն սկսեցին երեալ : Պանք որ պարոն Հաճախիրութ զօրաւոր մարդ լըլալով՝ առիւծէ վախ չուներ ինք . Եւ ասկայն երբոր առիւծներուն եղած տեղն եկան , տղաքը որ առջեւն կ'երթային՝ հիմա սկսեցին ես մնալ , որովհետեւ կը վախ նային առիւծներէն . ուստի ես դարձան ու միւսներուն ետեւն կը քալէին : Վար վրայ իրենց առաջնորդը խընդաց ու ըստու . Վ՞նչըլէս եք հիմա արդարս , երբոր վը տանդ չըլայ առջեւն երթալ կը սիրեք՝ ու երբոր առիւծներ երեալ սկսին ետեւն գալ կը սիրեք համ :

Երդ՝ երբոր առաջ կ'երթային՝ Հաճախիրութ իր թուրը քաշեց որ առիւծներուն հակառակ՝ ճամբաց բանաց ճամբարորդներուն : Են ատենք մէկը երեւան ելսու , որ կը թուեր թէ առիւծները կը զրուեր անոնց դէմ , ու ըստ ճամբարդներուն առաջնորդին . Վ՞նչ է պատճառը որ դուն հոս եկար : Պանք որ մարդուն անունն էր՝ Խոժուռագէմ կամ Արիւնահեղ , ճամբարդները սպաննելուն պատճառաւը . ու ինք հսկաններուն ցեղէն էր † :

* Պատիթ անունը կը նշանակէ Աիրելի , Ըստ դպուշութիւն բանեցընելու ենք որ չըլայ թէ բան մը խօսինք՝ որ բարեպաշտութեան հակամիտութիւն ունեցողները լըլացընէ : Աս վիճակիս մէջ եղող անձանց առջեւը արժան չէ յայտնել մինչև անդամ՝ տկար և փորձութեան մէջ եւ դող՝ բրիստոնէից թերահաւատութեան երկիւղներն ու գանդառները :

† Պատւարին է խմանալ հեղինակին պիշտ միտքը խրաքանչիւր հսկաններուն վրայով՝ որոնք ճամբարդներուն վրայ կը յարձակին , և անոնց առաջնորդէն ու անոր ընկերներէն կը սպաննուին : Ումանք կարծեցին թէ աս տեղի խօսքը

Պատասխան տուաւ Համբորդներուն առաջնորդը . Աս կնիվներն ու տղաքը Համբորդութեան կ'երթան , ու իրենց երթալու համբան ասիկայ է . ու պիտի երթան առնե՛ ընդդէմ քեզի և առխւծներուն :

Խոժառարարէմ . Աս չէ անոնց համբան , ու պիտի չերթան ասիկէ : Այս եկայ որ արդիլեմ զանոնք , ու ան դիւտառութեամբ առխւծները կը գրգռում :

Հիմա՝ Հշմարխար խօսելով՝ առխւծներուն կատաղութենեն ու զանոնք դրգոռողին գաղանարարոյութենէն առենէ մը 'ի վեր առ համբան շատ պարապ մնացեր էր , ու դըրեթէ բոլըրովին խոտով ծածկուեր էր :

Ան առենը երդում բրաւ մարդը առխւծներուն վրայ թէ անկէ պիտի շանցնին . ու անոր համար հրամայեց որ մ.կդի դառնան , ինչու որ անկէ անցք չունենան պիտի :

Իսյց անոնց Վաճախիրտ առաջնորդը՝ առաջ Խոժոռար գէմին մօտեցաւ , ու այնպէս սաստիւթեամբ անոր վրայ

Կը նշանակէ թմերահաւատութիւն . բայց Արիւնահեղ՝ կը թուի թէ հակառակ անուն մըն է առ ներքին թշնամույն . ու չկարծուիր որ թմերահաւատութիւնը աւելի ուժգութեամբ գայ անոնց վրայ՝ որ առանձին համբորդութիւն կ'ընեն : Աւստի կը թուի թէ առ հական Անդղիոյ մ.ջ քանի մը զօրաւոր մարդոց օրինակի բերել բլաց հեղինակին դիտարութիւնը , որ միշտ զբաղած էին հալածումի հըրամնաներ հանել . և առ բանը աս դրքին զրուած ժամանակը աւելի զօրաւոր կերպով կը կատարուէր քան թէ անկէ առաջ : Բայց Աւելարանին քարոզութիւնը՝ որով Վարխատոսի պաշտօնեաները չողւոյն սուրբ շողացուցին , առ թշնամին յազթեց . քանզի այսպիսի քաջամարտիկ պատերազմներուն օրինակն ու յորդորմունքը մինչեւ անգամ տկար հաւատացեալները զօրացուցին իրենց վախերը յազթելու ու իրենց խղճմաներին համեմատ դործելու , անկէ յառաջ զալու դիպուածը Վասուծոյ ձգեւով :

յարձակեցաւ իր թըրովը , որ զանիկայ պարտաւորեց ևս քաշուելու :

Ան ատենը առիւծները գրգռողն ըստաւ . Դառն իմ երկրիս վրայ զիս պիտի սպաննեմ՞ս :

Քաղաքական ։ Աս մեր եղած ճամբանն թաղաւորին ճամբանն է , ու դուն անոր ճամբանն վրայ դրեր ևս առ առիւծները . բայց աս կնիկներն ու աս տղաքը՝ թէ և տկար ալ են , քու առիւծներդ հօս ըլլալովն ալ՝ իրենց ճամբանն պիտի յառաջ երթան : Ու աս խօսքովը դարձեալ մէկ ուժագին հարուած մը տալով անոր՝ իր ծնկուըններուն վրայ գետինը ձգեց զանիկայ : Աս նոյն հարուածովը նաև անոր սաղաւարտը կոտրեց , և ուրիշ հարուածով մը անոր մէկ թեր կտրեց : Ան ատենը Հական այնպէս զարհուրելի եղանակաւ մը կանչեց , որ իր ձայնը կնիկները վախցուց . բայց և այնպէս ուրախ էին որ գետնին վրայ անոր վառուած մնալը կը տեսնէին : Գանգը որ առիւծները շղթայով կապուած էին , այնպէս որ իրենցմէ բան մը չէին կրնար ընել : Ուստի երբոր անոնք գրգռողը՝ խօժոռադէմը ըստանուեցաւ , Քաջափառը ճամբորդներուն ըստաւ . Երկուք հիմա իմ ետևէս , ու վեսա մը պիտի չպատահի ձեզի առիւծներէն : Ուստի ամենը մէկէն յառաջ դացին , բայց կնիկները անոնց քովնն անցնելուն կը դողդըղացին . որպարը ևս կ'երեւար թէ պիտի մեռնէին , բայց առանց վեսաի մը ամենն ալ անցան * :

* Ճանապարհորդներուն խակոյն իրենց հանդսութենէն ետեւ . Հակառակութիւնն ու առիւծներէն քաշած վախը կը ցուցընեն հոգեւոր պատերազմի մէջ իրաց խառն վիճակին ու պատահմութըր : Ընթերցողը պէսք է միշտ միշտ ասիկայ , որովհետեւ Վասուծոյ շնորհացը ընթացքին մէջ միշտ այսպէս կը պատահի բարեպաշտ ճամբորդներուն : Երբոր Վասուծած սովորականէն աւելի հանգստութիւն կ'ընծայէ հոգւոյ մը , զիսցի որ անով

Եթո՛ երբոր 'Դունապանին ընակարանը երեալ սկսեց ,
շուտով և կան հասան հոն . բայց մինչև հոն երթալնին
շատ արտորացին , ինչու որ դիմեր առեն ան տեղը ճամշ-
բորդութիւն ընելը վտանգաւոր է : Ուստի երբոր դուռը
և կան՝ առաջնորդնին դարձաւ անիկայ , ու 'Դունապանը
ձայն տուաւ , թէ Ո՞վ է ան : Բայց առաջնորդը Ես
եմ ըսածին ալէս՝ անոր ձայնը ճանչցաւ , ու վար իջաւ .
ինչու որ ան առաջնորդը ճամբորդներուն ուղեցոյց ըլլալով
շատ անգամ հոն և կած էր : Երբոր վար իջաւ՝ դուռը
բացաւ , ու 'Քաջասիրտը շխտակ դրանը առջեւը կայնած-
տեսնելով՝ օրովհետեւ չանաւ կնիվները , որ անոր ետեւը
կայներ էին ,) ըսաւ անոր . Խնչպէս ես՝ Ավարոն Քաջա-
սիրտ + այսպէս ուշ ատեն ի՞նչ բան ունիս հոս աս զիշեր :
Ան ալ պատասխան տուաւ ու ըսաւ . 'Քանի մը ճամբորդ-
ներ քերի՝ որոնք իմ Տէրոջ հրամանաւը հոս պիտի մնան :
Ասնուին կընայի հաննիլ հոս թէ որ առխւծները զրդուել
ուզող և սկսյին հետ չծեծկուեի : Բայց անոր հետ մէկ
երկար ու տաղուկալի կոխ մը ընելիս էտեւ զինքն սպանեւ-
ցի , ու ճամբորդները անվետա հոս հասուցի :

Դամասորն . 'Եւրո չկ՞ս զար , ու մինչև առառ մնար :
Քաջասիրտ . Ձէ , աս իրիկուն իմ Տէրոջ պիտի դառ-
նամ' :

'Քրիստինէ . Տէ՛ր իմ , չեմ դիմեր թէ ի՞նչպէս ուղեմ-
քեղ ձգեւ մեր ճամբորդութեանը մէջ . դուն շատ հաւա-
տարիմ ու շատ սիրելի եղար մեղի : 'Դուն մեր տեղը այն-
պիտի քաջութեամբ կռուեցար , դուն զմեղ այնպէս սըր-
տանց խրատեցիր , որ բնաւ պիտի չմնանամ . քու մեղի ըրած-
երախտիքդ :

Խսկ Քթութիւնն ըսաւ . Երանի՛ թէ մինչև ճամբուն
շուտով դալու նոր փորձութեան մը կը պատրաստէ անի-
կայ :

վերջը՝ քեզ մեղի ընկեր ունենալու կարող ըլլայինք : «Աեւ դութիւններով լեցուն մեղի պէս ողորմելի կնիկները , այս պիսի ձամբու մը մէջ առանց բարեկամի ու առանց պաշտամնի մը ի՞շնչաղէս կրնան դիմանալ :

Եսկէ ետեւ տղոցը ամենէն փոքրիկը՝ Յակոբոսն ըստ . Ա'աղաքիմ' տէ՛ր , հաճէ մեր հետն երթալու ու օդնէ մեղի . որովհետեւ մնար այսափ տկար ենք , ու ձանապարհը այսպէս վտանգաւոր է :

Քանչառերու . Ես իմ Տէրոջ հրամանին կը նայիմ . թէ որ ինք մինչեւ ձամբուն վերջը ձեղի ուղեցոյց ըլլալու դիս կարդէ , յօժար կամքը պիտի սպասաւորեմ ձեղի : Իսյց առ մասին դուք պակասութիւն ըրած գանուեցաք առաջ . ինչու որ երբոր ինք հրաման ըրաւ ինծի մինչեւ հոս ձեր հետը դալու , ան ատենը իրմէն խնդրելու էիք դիս՝ որ բոլոր ձամբան ձեր հետը երթամ . ու ինք ձեր խնդրեքը ողիտի կատարելը * : Իսյց առ սյժմ պէտք է հրաժարիմ ձենէ . ուստի բարի Կրիստոնէն՝ Պէթութիւն՝ ու իմ քաջ տղարս , մնաք բարեւ :

Են ատենը՝ Կանապանը՝ որուն անունն էր Պահապան , հարցուց Կրիստոնէնին իր երկիրն ու իր ցեղը . ու ան ըստաւ . Ես Առծանման Կաղաքէն կու գամ . որբեարի կին մըն եմ՝ ես . իմ երիկս մեռած է . իր անունն էր Կրիստիանոս ձանապարհորդ : Խնչ , ըստ Կանապանը , անիկայ քու երիշկող էր : Այս , պատասխան տուաւ

* Պատշաճապէս կրկին և կրկին ապապրուած է մեղի որ մեր աղօթքներուն մէջ յատկապէս և որոշակի յիշենք մեր կարօտութիւնները , մանաւանդ մեր հոգեւոր օգտին վերաբերեալ ամեն բաները : Եւ երբոր հարկաւորութեան ժամանակ մէկ խիստ օգտակար օգնութենէ մը զուրկ մընանք , պէտք է միտքերնիս բերենք թէ ան մասին պակաս դանուած ենք մէնք , ու Կատուծմէ խնդրած լինք ան օդնութիւնը :

Վիրիստինեւ , ու ասոնք ալ իր զաւկըներն են + աս ալ Կիժութիւնը ցուցընելով՝ իմ քաղաքացի կոփկներէս մէկն է : Ան առենը Դունապանն իր զանգակը զարկաւ՝ ինչ ովէս որ սովորութիւն ունի ընել այսպիսի աստեններ , ու աղջիկներուն մէկը որ կ'ըսուեր Խոնարհամիտ , դուռն եւ կաւ + ու Դունապանը անոր ըստաւ . Դնա ներս զբոցէ թէ Վիրիստիանոսին կինը Վիրիստինէն ու իր զաւկըները ճամշ բորդութեամբ հոս եկած են : Ուստի աղջիկը գնաց ներս ու պատմեց անիկայ + բայց ահա ի՞նչ ցնծութեան աղաւ զակներ եղաւ ներսը երբոր աղջիկը ան խօսքը իր բերնէն հանեց :

Ա ան որոյ արտորալով՝ Դունապանին եկան , ինչու որ Վիրիստինէ տակաւին դրանն առջեւը կայնած էր : Ան աւ անենը դուռը եկողներուն մեծնըը ըսին անոր . Ան ըս եւ կոր՝ Վիրիստինէ , նե՛րս եկոր՝ ան բարի մարդուն կոփկը , նե՛րս եկոր բոլոր քու հետիններովիզ : Այսպէս ինք ներս մոտաւ , և իր տղաքն ու իր ընկերն իր ետևէն զացին + Արդ՝ երբոր ներս զացին՝ մէկ մեծ սենեակ մը տարուեցան , ու հրաման եղաւ իրենց որ նստին + ուստի նստան , ու անը պատուաւորները կանչուեցան որ ան հիւրերը տեսնեն ու անոնց դալուստը բարենն : Անոնք ալ ներս եկան՝ ու իմանալով ասոնց ովլ ըլլալը , ամեն մէկը համբուրեւ լով բարեւեցին՝ ու ըսին . Բարի եկիք՝ ովլ Աստուծոյ շնորհացը անօթները + բարի եկիք մեզի՝ ձեր բարեկամնեւ բուն * :

* Արեշտակները կ'ուրախանան մէկ մեղաւորի մը վրայ որ կ'ապաշխարէ : Եւ ամեն անոնք որ Ճշմարտապէս կը սիրեն Տէրը , ուրախութեամբ կ'ողջունեն բոլոր Ճշմարիտ հաւատացեալներուն իրենց խիստ պատուական ընկերութեանը խառնուիլը . և սակայն կան ոմանք որ մասնաւոր ուրախութիւնով մը ու հաճութիւնով մը կ'ընդուանինք , մեր սիրած բարեկամին աղջակամներն ու մեր ա-

Հիմնա ժամանակը քիչ մը ուշ ըլլալուն՝ ու իրենց ձամանորդութենէն յողնած ըլլալուն՝ ու նաև ան կռուցին ու սովորական առիւծներուն տեսութիւնովը նուաղած ըլլալուն ուղղին որ որչափ կարելի է շուտով երթան հանգստանաւլու : Չե՛, ըստն առնը մէջնները, առաջ պատառ մը մասվ սրտերնիդ հաստատեցէք . ինչու որ գառ մը մարթեր ու իր յատուկ համեմներովը պատրաստեր էին անոնց համար * : Ելք ժք . 21 : Յոհ . առ . 29 : որովհետեւ Դրսնապանը առաջ լսեր եր անոնց զալը, ու ներսիններուն զբուցեր եր : Այսակէս երբոր կերան՝ ու յետոյ իրենց աղջոմքն ու օրհնութիւնը կատարեցին, ուղղին որ հանգստանալու երթան : Բայց թէ որ ինծի ներելի է ընտրել ըստ Վրիստինէ, ան սենեակն ըլլանք՝ ուր որ իմ երիկս կեցաւ հոս եղած առնելը . ուստի վեր հանեցին զանոնիք ան սենեակը, ու ամենը մէկէն հռն էին : Երբոր հանգստացան, Վրիստինէ ու Վաթութիւն սկսեցին պատշաճաւոր նիւթերու վայոլ խօսակցութեան մը մանել :

Վրիստինէ . Ամենելին մորէս չեր անցներ իմ երկանն ետեւէն երթալ, երբոր ինք ճամփորդութեան ելաւ :

Գիտութիւն . * Ամանապէս մօքեղ չեր ալ անցներ անոր

զօթքներուն մէջ շատոնցմէ յիշտակուած ըլլալուն համար :

* Օշտկական դառը՝ Վրիստոսի չարչարանքներուն ու հաւատացելոյ զննը ընդունելուն նախադաղափարն եր : Աւ Տէրուական Ընթթիքը նոյն նշանակութիւնը ունեցող խորհուրդ մըն է՝ Վրիստոսի մահը յիշտակելու, որ իր մարմինը մեր մեղքերուն համար տուաւ, ու իր արխանը մեղի համար թափեց : “ Անկեղծութեան ու ճշմարտութեան անխմոր հացը ”, առ Արքան . Է . 8 , ու ճշմարտ զգ հման “ Լեզի խոտերը ”, Ելք ժք . 8 , մէղքը մեռցընելին ու խաչը առնելը, աս հոգեոր իմանցքիս համեմներն են, որնքը առաւել ևս բարեհամ կ'ընեն զանիկայ ճշմարտ հաւատացելին :

անկողինին վրաց պառկիլ ու անոր սենեակը հանգստանալ, ինչպէս որ հիմա կ'ընես :

«Բրիստինեւ . Ու ամենենին մորես չեր անցներ խաղաղութեամբ իր երեսը տեսնել ու իր հետը երկրպագութիւնընել Տէրոջն ու Յօազաւորին . և սակայն հիմա կը հաւատամութէ այսպէս պիտի ըլլայ :

Գրեստիւն . Ատիկ ըրեւ , ձայն մը չե՞ս լսեր :

«Բրիստինեւ . Այս , կարծեմ թէ նուազարաններու ձայն է ան , իրքն նշան մեր հոս ըլլալուն ուրախութեանը :

Գրեստիւն . Աքանէչելի՛ բան . նուազարան ըլլայ տանը մէջ նուազարան ըլլայ սրտի մէջ ու նուազարան նաև երկնաքը , իրքն նշան մեր հոս ըլլալուն ուրախութեանը : Այսպէս ատեն մըն աւ խօսելէն ետե քուներնին տարաւ :

Վոտուն երբոր արթընցան՝ «Բրիստինեւ ըստ Գրեստիւնին . Կօնչ էր պատմառը որ աս զիշեր քունիդ մէջ խնդացիր . կարծեմ թէ երազ կը տեսնէիր :

Գրեստիւն . Այս , ու անուշ երազ մըն էր ան . բայց վստահ ես որ խնդացի :

«Բրիստինեւ . Այս , բարձրաձայն կը խնդացիր . բայց՝ կ'աղաւեմ՝ Գրեթոււթիւն , պատմել ինծի երազդ :

Գրեստիւն . Երազիս մէջ կը տեսնէի թէ ամսյի անապատի մը մէջ առանձին նստած էի՞ ու իմ սրտիս կարծրութեանը վրայ կ'ողբայի : Երդ՝ հոն երկար շնատած՝ կը թուեր ինծի թէ շատ մարդիկ կը հաւաքուէին իմ՝ բոլորտիքս զիս տեսնելու , ու իմ ըստած լսելու : Այսպէս անոնք մորկ կ'ընեին , ու ես իմ սրտիս կարծրութեանը վրայ կ'ողբայի : Վսոր վրայ անոնցմէ մէկ քանիները իմ՝ վրաս կը խնդացին , ոմանք զիս յիմար կը կոչէին , և ուրիշները անդին ու առ զին զիս կը քաշքշէին : Վսոր վրայ կը թուեր ինծի թէ վիր նայեցայ ու տեսայ որ մէկը թռչէլով դէալ 'ի ինծի կու դար : Ուստի շիտակ ինծի եկաւ ան՝ ու ըստ . Գրեթոււթիւն , ի՞նչ ունիս . ու երբոր իմ՝ ըրած դանդաստ լսեց՝

ըստ + Խաղաղութիւն + քեզի : Ասկէ զատ իմ աչքերս
ալ իր թաշկինակովը սրբեց , ու արծաթով և ոսկով զիս
զարդարեց : Վասնակ մը դրաւ իմ պարանոցս՝ ու օղեր՝
իմ ականջներս , ու գեղեցիկ պասկ մը դրաւ դլուխս :
Եղիկ + ժիշ + 8-13 : Այսկէ ետեւ իմ ձեռէս բռնեց՝ ու ը-
ստ . Պաքթութիւն , իմ ետեւէս եկոր + այսպէս ինք վիր
ելաւ ու ես իր ետեւէն դացի , մինչեւ որ ոսկեղէն դրան մը
առջևն եկանք : Այս ատենը զարկաւ դուռը , ու ներսին-
ները երբոր բացին՝ մարդք ներս մաստ , ու ես ալ անոր
ետեւէն ելայ աթուուի մը առջևը՝ որուն վրոյ մէկը նստեր
էր , որ ըստ ինծի՝ Խարի եկիր աղջիկս : Գլուխառ տեղ
մըն էր ան , ու ատաղերու պէս՝ կամ առաւել ես արե-
դակի պէս կը փայլէր , ու թուեցաւ ինծի թէ հռն կը
տեմնէի քու երիկդ : Այսպէս երազէս արթնցայ + բացց
իրաւ ինուացի[○] :

ՔԸԾՄՈՒՅՆԵ + Ա, յո՞ ինուացիր + և իրաւունք ունէիր խըն-
դալու որ զուն քեզ այնպէս աղջիկ տեսար : Քանզի ներէ
որ քեզի զրուցեմ՝ թէ ես կը հաւատամ որ աղջիկ երազ մըն
էր ան + և թէ ինչպէս որ ոկասցիր տեմնէլ թէ անոր առջի
մասը ճշմարիտ էր , այնպէս պիտի տեմնես վերջապէս անոր
երկրորդ մասն ալ * : Աստուած մէկ անգամ՝ կամ երկու

* Ենոնք որ իրենց սրտերուն կարծրութիւնը կը զգան ու
անոր վրայ կ'ողըան , ու ջերմեռանդութեամի՛ կ'աղօթն որ
• խոնարհն՝ կակզանամ՝ ու Կըրիստոսի սիրովը լենան , կընան
հաստատ յցոյ մը ունենալ թէ իրենց սրտմութիւնը ուրա-
խութեան պիտի փոխուի , թէպէտ և պէտք է ակնունենան
որ իրենց սրտերը չհանցըողներէն ծաղը պիտի ըլլան : Գլուխ-
թիւնին երազին կատարուելուն ստուգութիւնը անոր սրր-
տին վրայ եղած ներդործութիւններուն վրայ հիմնուած է ,
ու մնապաշտութիւն չհամարուիր երբոր մեր տեսած երա-
զէն այնպիսի քաջալերութիւն մը կը քաղնք որ Առոր
Գրոց համեմատ կու դայ :

անդամ՝ կը խօսի , թէ և մարդը ուշադրութիւն քններ , երազի մէջ՝ զիշերուան տեսիլքի մէջ՝ երբոր խորունկ քուն մը կ'իյնաց մարդոց վրայ , ու անոնք իրենց անկողիններուն մէջ կը քննանան : Յո՞ւ • լիք • 14 , 15 : «Պառկած ատենանիս՝ հարկ չէ որ արթուն մնանք Վատուծոյ հետ խօսելու համար , հապա ան քննացած ատեննիս ալ կրնայ տես դալ մեզի , ու մեր հետը խօսիլ : Վենք որ կը քննանանք՝ որք առելնիս շատ անդամ՝ կ'արթ ըննայ , ու Վատուծոյ կամ խօսքերով՝ կամ առակներով՝ կամ նշաններով՝ ու օրինակներով՝ կրնայ խօսիլ անոր այնպէս՝ ինչպէս որ մարդ արթուն ըլլար :

«Դիտութիւն . Ուրախ եմ աս երազը տեսնելուս . ինչու որ կը յուսամ՝ թէ շատ չանցած անիկայ կատարուած պիտի տեսնեմ , որ այնպէս կրկին ուրախանամ :

«Քրիստինէ . Արձեմ՝ թէ ալ հիմա ատեն է՝ որ ելլենք ու նայինք թէ ի՞նչ պիտի ընենք :

«Դիտութիւն . Կը խնդրեմ քենէ , թէ որ մեզ հրաւիրեն որ ատեն մը հոս մնանք , յօժարութեամբ ընդունինք իրենց հրաւէքը : Ըատ կ'ուզեմ ես ատեն մը հոս մնալ աս օրիորդներուն հետ աղէկ մը ծանօթանալու համար . ինձի կը թուի որ խոհեմութիւնը՝ Բարեպաշտութիւնն ու Աէրը շատ վայելուչ ու ծանր դէմք ունին :

«Քրիստինէ . «Եայինք թէ ի՞նչ պիտի ընեն :

Ուստի երբոր ելան ու պատրաստուեցան՝ վար իջան , ու հանգստութիւննին ինչպէս ըլլալը մէկզմէկու հարցուցին :

Ըատ աղէկ ելնք՝ ըսաւ Դիթութիւնը . կենացս մէջ անցուցած խիստ աղէկ զիշերներուս մէկն եր աս :

Մն ատենը խոհեմութիւնն ու Բարեպաշտութիւնը ըսին . թէ որ քիչ մը ատեն հոս մնալ կը հաճէք , տանը բարութիւնները ձերն են :

Պանասանդ . թէ յօժարութեամբ կ'ուզենք ձեր մնալը , ըսաւ Աէրը : Ուստի միւսները հանութիւն տուին՝ ու

ամիսի մը շափ կամ քիչ մըն ալ առելի հոն մնացին , ու
մէկզմէկու խիստ օգտակար եղան : Եւ որովհետեւ Խոհեա-
մութիւնը կ'ուզէր խմանալ թէ Քրիստինէ Բնչպէս միծ-
ցուցեր եր իր զաւկըները , հրաման ուզեց անկէ որ 'ի մա-
սին քրիստոնէական վարդապետութեան քննէ զանոնը :
Քրիստինէ կամաւոր հաճութիւնն ցոյց տուաւ անոր * : ու
ան ոկաց ամենէն պղտիկէն , որուն անունը կը կոչուե-
Յակոբոս :

Եւ ըստ + Եկեղ նային՝ Յակոբոս , կրնան ըսեւ ինծի
թէ ով ստեղծեց զբեզ :

Յակոբոս + Հայր Սատուած՝ Որդին Սատուած՝ ու Հո-
գին Ոուրբ Սատուած :

Խոհեմութիւն + Ապրիս տղաս + և կրնան ըսեւ ինծի թէ
ով կը փրկէ զբեզ :

Յակոբոս + Հայր Սատուած՝ Որդին Սատուած՝ ու Հո-
գին Ոուրբ Սատուած :

Խոհեմութիւն + Ապրիս դարձեալ իմ տղաս + բայց
Հայր Սատուած ի՞նչպէս կը փրկէ զբեզ :

Յակոբոս + Եր շնորհըով † :

* Հեղինակը խիստ պատշաճաւոր կերպով մէջ կը բերէ
ասիկայ որ ցուցընէ թէ ոքափ հարկաւոր է ծնողքներուն
իրենց զաւկըները մեծցընեւ ¹¹ Տէրով վարժութիւնով ու
խրատով ¹² : Եփեռ + կ. + 4 : Թէ որ ընթերցովը զաւա-
կաց տէր է կը յուսանք որ աս տեղը զանուած խօսքը չպիտի
զանցառութեան ձգէ կամ անիկայ մնանայ :

† Ծնորհք՝ աս տեղը կը նշանակէ առանց արժանաւու-
րութեան ձրիսպէս Սատուածմէ ընդունուած դթութիւնը ,
ուսկից կը բղխեն փրկութեան բոլոր բարիքները : Հայրը
ձրիսպէս շնորհեց իր Որդին՝ մեր Փրկինը ըլլալու , ու հի-
մա Որդւոյն արժանաւորութիւնովն ու միջնորդութիւնովը
ձրիսպէս կու տայ իր Ոուրբ Հոգին՝ մեր Արքացուցինը
ըլլալու . և այսպէս Քրիստոսի հետ մէկտեղ ձրիսպէս կու

Խոհեմունիւն . Ուրդին Սատուած ի՞՞նչպէս կը փրկէ զքեղ :

Յատիբռու . Եր արդարութիւնովը՝ իր մահովն ու արխւնովը՝ և իր կեանքովը :

Խոհեմունիւն . Հոգին Առւրբ Սատուած ի՞՞նչպէս կը փրկէ զքեղ :

Յատիբռու . Եր լուսաւորելովը՝ իր նորոգելովը՝ ու իր սրբացընելովը * :

Վն ատենը Խոհեմութիւնն ըստաւ Կրիստինէին . Պատվութեան արժանաւոր ես դուն քու զաւկըներդ այսպէս մեծցընելուդ համար . կարծեմ թէ աս հարցմունքները միւմներուն ալ հարցընելու չեմ կարօտիր , որովհետեւ աշմենէն պզտիկը այսպէս աղէկ պատասխան տուաւ ասոնց :

Ուստի հիմա երկրորդը ձեռք առնեմ :

Խոհեմունիւն . Եւ ըստաւ . Եկոր նայիմ՝ Յավեկի , (քանդի ասիկայ էր անոր անունը ,) կը ներե՞ս որ քեզ ալ քննեմ :

Յավեկի . Բոլոր սրտովս :

Խոհեմունիւն . Վ՞նչ է մարդը :

Յավեկի . Բանական կինդանի՞ որն որ այնպէս ստեղծեց Սատուած , ինչպէս որ եղացըս ալ ըստաւ :

Խոհեմունիւն . Վ՞նչ կ'իմացուի աս Փրկեալ բառովը :

Յավեկի . Կ'իմացուի թէ մարդս մեզքով ինքզինքը գերութեան ու թշուառութեան վիճակի մը մէջ ձգեր էր :

տայ ամեն բաները անոնց՝ որ Տշմարտապէս կը հաւատան անոր :

* Հօր Սատունյ անհուն սէրը՝ ու երկրապագելի Փրկչին փրկարար շնորհըր որչափ մեծ ու փառաւոր ալ որ են , ամենենին մէկ հոգի մը երկինքը չեն հասցըներ առանց Առւրբ Հոգւոյն լուսաւորող՝ նորոգող՝ և սրբացուցանող գործքին :

Խոհմանաւթիւն . Խօնչ կ'իմացուի ան խօսքէն թէ Կըրութութիւնը կը փրկէ մարդը :

Յովսէփ . Ա'իմացուի թէ մեղքը այնպէս մեծ ու զօրաւոր բռնաւոր մըն է , որ մէկը չկընար մեզ անոր հանկերէն փրցընել բայց միայն Աստուած . և թէ Աստուած մարդուս այնպէս բարի է ու այնպէս սէր կը ցուցընէ , որ աս թշուառ վիճակէն ճշմարտապէս կը հանէ զանիկայ :

Խոհմանաւթիւն . Խօնչ է Աստուածոյ դիտաւորութիւնը որ ողբանելի մարդիկը կը փրկէ :

Յովսէփ . Եր անուանը՝ իր շնորհացը՝ ու իր արդարութեանը փառաւորութիւնը , ու իր արարածոյը յաւիտենական երջանկութիւնը :

Խոհմանաւթիւն . Որո՞նք պիտի փրկուին :

Յովսէփ . Անոնք որ իր փրկութիւնը կ'ընդունին :

Խոհմանաւթիւն . Ազրին Յովսէփ . աղէկ սորվեցուցեր է քեզի քու մոյրդ , ու անոր քեզի ըսածին աղէկ միարդը ես դուն :

Անկէ ետև խոհմանթիւնն ըստ Ասմուելին՝ որ ամենէն մեծ տղին վարն էր :

Խոհմանաւթիւն . Երկո՞ր նայիմ՝ Ամմուել , կ'ուղե՞ս որ քեզի ալ քանի մը բան հարցընեմ :

Ասմուել . Այն , անշուշտ , թէ որ կը կամիս :

Խոհմանաւթիւն . Խօնչ է երկինքը :

Ասմուել . Ամեներջանիկ տեղ մը ու վիճակ մը՝ որովհեան Աստուած կը բնակի հոն :

Խոհմանաւթիւն . Խօնչ է դժոխքը :

Ասմուել . Ամենասոսկալի տեղ՝ մը ու վիճակ մը՝ որովհեան մեղքին՝ Աստանացին՝ ու մահուան բնակարանն է :

Խոհմանաւթիւն . Խնչո՞ւ համար երկինքը երթալ կ'ուղես դուն :

Ասմուել . զԱստուած տեսնելու ու անդադար իրեն ծառ ուցելու համար . Վրիստոսը տեսնելու ու յաւիտեան զին-

քը սիրելու համար . Սուրբ Հոգոցն այնպիսի լիութիւնը
իմ ներսի դիս ունենալու համար որն որ մէկ կերպով մը
չեմ կրնար հռովարելու :

Խոհեմութիւն . Խոիկայ ալ շատ աղէկ տղայ է , ու շատ
աղէկ սորպիւր է :

Վոկէ եաւ խօսքը մնձ տղին ուղղեց՝ որուն անունը Պատա-
թէոս էր , ու բաւ անոր . Եկուր նայիմ՝ Պատթէոս ,
քեզի ալ քանի մը հարցմանը ընկմ :

Պատթէոս . Յօժար կամք պատրաստ եմ ձեզի :

Խոհեմութիւն . Ուրեմն կը հարցընեմ քեզի . Կատուծ-
մէ առաջ բնաւ երեք ուրիշ բան մը կար :

Պատթէոս . Ա՞յ , ինչու որ Կատուծ յախունական
է . ու մինչեւ առաջին օրուան՝ սկզբնաւորութիւնը չկար
մէկ բան մը որ դոյլթիւն ունենար , բայց միայն բնիք :
Դաշու որ Տէրը վեց օրուան մէջ ստեղծեց երկինքն ու եր-
կիրը՝ ծովին ու անսնց մէջի բոլոր եղածները :

Խոհեմութիւն . Կ՞ոչ կարծիք ունիս Կատուծաշունչ
դրբին վրայ :

Պատթէոս , Կատուծոյ սրբազնն խօսքն է ան :

Խոհեմութիւն . Վեսր մէջ այնպիսի բան մը չկա՞յ դրուած
որ դուն չես համելուար :

Պատթէոս . Այս , շատ բան կայ :

Խոհեմութիւն . Կ՞ոչես երբոր այսպէս քու չհաս-
կըցած բաներուդ պատահիս անոր մէջ :

Պատթէոս . Աը մոտածեմ որ Կատուծ ինծմէ խելացի
է : «Եաւ կ'աղօթեմ» որ ինք հանի խմացընել ինծի անոր
մէջի ամէն ան բաները՝ որոնք որ ինք գիտէ թէ օգտակար
են ինծի * :

* ԱՆԻՔ մեզի խորհելու չենք թէ Կատուծոյ յայտնու-
թեանը բոլոր խորհուրդները կրնանք խմանալ , կամ ա-
նսնց վայրով գիտնալու բոլոր բաներուն կրնանք տեղեկա-

Խոհեմութիւն . ի՞նչ է հաւատրդ մեռելներուն յարութեանը վրայով :

Ուստինս . Այ հաւատամ՝ թէ անոնք ինչպէս որ թաղուեցան՝ այնպէս պիտի յարութիւն առնեն , բնութեամբ նցյն , բայց ապականութեան մասին տարբեք : Եւ ասիւկայ երկու պատճառաւ կը հաւատամ , նախ որ Վատուած այնպէս խօստացաւ , և երկրորդ՝ որ ան կընայ կատարել * :

Հիմա Խոհեմութիւնն ըստ աղոսք . Ձեզի պէտք է որ տակաւին ձեր մօրը միտք գնեք , բնչու որ ան աւելի բաներ կընայ սորմեցընել ձեզի : Պէտք է նաև ժրութեամբ ականչ գնեք ուրիշներէն ձեր բած բարի խօսքերուն . ինչու որ անոնք ձեր օգտին համար բարի բաներ կը խօսին : Զգուշութեամբ նկատեցէք ևս թէ երկինքն ու երկիրը ի՞նչ կը սորմեցընեն ձեզի . բայց մանաւանդ յաճախ մը

նալ . և սակայն մեր տկարութիւնը պատճառ ընելու չենք դանցառութեան ձգելու Սուրբ Գրոց ան մասերը որոնք որ հիմա չենք հասկընար , հապա խոնարհ ժրութեամբ ու ջերմուանդ աղօթքով խողըելու ենք որ մեր օգտին վերաբերեալ բոլը բաներուն մէջ առաւել ըյօ և զիստութիւն ստանանք : Սուրբ Գրոց մէջ կրնան գտնուիլ շատ մասեր որոնք օգտակար ըստան մեզի թէ որ անոնք հասկընանք ալ , թէպէտ և ուրիշներուն օգտակար եղած էին կամ են և կամ պիտի ըստան . ու մեր ան մասերուն նշանակութիւնը խմանալու անկարող ըստանիս մեզի կը սորմեցընէ որ խոնարհ ըստանք , ու մեր անսխալ Ուսուցչն վՃիռներուն հնազանդինք :

* Սամիւայ է հաւատրին հիմն ու յօյսին յաղթութիւնը , Սստուծոյ իր խօստմունիքներուն հաւատարմութիւնն ու դանոնք կատարելու կարողութիւնը : Նու բաներուն որ միտք գնելու ըստանք՝ ի՞նչ բան պիտի շարժէ մեր հաւատրը՝ կամ նուանէ մեր յօյսը : Պէտք է ծաղը ընենք ամէն մարմանու որ ընդդիմութիւնները , ու ուրի տակ առնենք ամէն դէշ կարծիքները :

տածեցէք ան Գրքին վրայով՝ որ ձեր հօրը համբորդութեանը պատճառ եղաւ : Տը՝ գաքս, ևս իմ կողմանէս կըցածս կը սորվեցընեմ ձեզի քանի որ դուք հոս էք, և ուրախ պիտի ըլլամ թէ որ ինծի հոգեւոր շնութեան վերաբերեալ հարցմունքներ ընէք :

Հիմա աս հանսապարհորդները շարաթ մը որ կեցան աս ուղղը, «Կիմութիւնը ուղղող մը եղաւ՝ որ անոր վրայ յօշարութիւն ունենաւ կը ձեւացընէք, ու իր անունը Ճ'արպակիկ կը կոչուէք . ասիկայ քիչ մը աղնուական ցեղէ մարդ մըն էք՝ ու բարեպաշտ մէկը ըլլաւ կը ձեւնար, բայց աշխարհի բաներուն մէջ շատ ժրադան մէկն էք : Ուստի աս մարդը մէկ երկու անգամ կամ աւելի Կիմութիւնին եկաւ, ու շատ սէք կը ցուցընէք անոր : Գանդ որ Կիմութիւնը գեղեցիկ գէմիք մը ունէք, և անոր համար շատ հրապուրիչ էք :

Եր միտքը ևս անդադար դործով զբաղեալ էք . քանզի երբոր իրեն համար ընելու բան մը չունենար, ուրիշներուն համար դուլցաներ ու հանդերձներ կը չինէք, ու կարուեալներուն կու տար զանոնիք : Ու Պարոն Ճ'արպիկը չի խնալով թէ իր շնաները որու կու տար կամ բնչ կ'ընէք, մեծապէս յափշտակուած կ'երեւար որ բնաւ անիւ կայ ծոյլ չէք տեսներ : Աղէկ տանտիկին կնիկ մը կ'ըլլայ ասիկայ, կ'ըսէք ինքնիրենը * :

* Խորամննել անձինք շատ անգամ բարեպաշտութեան կերպարանը կ'առնեն վրանին՝ որ բարեպաշտ օրինրդներուն սէքը որան, որոնք որ քանի մը մասամբ հաճելի են իրենց . և ասանկով շատերը վանդաւոր որոդայթներու մէջ կ'իջնան : Ուստի վայելլապէս աս գէպքը հոս յառաջ բերուած է, ու շատ վարժութիւններ կը պարունակէ : Վիանդամայն հարկաւոր աղջարարութիւն մը տրուած է թէ անոնք որ տնական հոգւով զբաղած չեն, բնչ կերպով կրնան իրենց ժամանակը օդտակար դործով անցը

Ուստի Գրթութիւնը տանը մէջի օրիորդներուն բացաւ բանը՝ ու հարցուց անոնց՝ անոր վրայով, ինչու որ անոնք իրմէն աղէկ կը ճանշնային զանիկայ : Ուստի ըսին իրմէն թէ անիկայ խիստ գործունեաց երխասարդ մըն է՝ ու բարեգաշտ մէկը ըլլալ կը ձևանաց, բայց վախ ունինք որ Աշմարտութեան գորութիւնէն օսար մէկն է անիկայ :

Ուրեմն՝ ըստ Գրթութիւնը, ալ չեմ նայիր ևս անոր. ինչու որ ևս իմ հոգիս շղթայով կապելու ընաւ միար չունիմ * :

Նել, Վեհաբանին զարդ ըլլալու և ընկերութեան ու եկեղեցւոյն մէջ օդտակար ըլլալու : Լաւագիյն է նմաննիւ Տարիթային՝ որ հաւաքրով բարի համբաւ ստացաւ՝ աղքատներուն հանդերձ շնուելով, քան թէ ստակն ու ժամանակը ծախսել պարապ զրօսանիքներու ու անպիտան զարդերու և նորութիւններու :

* Վանասական վիճակի մէջ մանելու անձննք աս երեելի գործիս մէջ իրենց դասողութեանը հետեւելու չեն, այլ խելացի բարեկամներէ խրատ հարցընելու են : Եւ անոնք որ իրենց ծնողքէն չեն կրնար խրատուիլ, պէտք է այն պիսի բարեկամներու խորհուրդ հարցընեն որ աս տանը օրիորդներուն անուններուն նշանակած յատկութիւնն ունին : Աւ երբոր աս տեսակ բարեկամները կը կարծեն թէ երկնից ճամբռուն մէջ օդնականի մը տեղ խոչընդուռ մը պիտի ըլլայ մեր դիմացը ելլողը, բոլոր իրենց հոգինները սիրողները իսկոյն պիտի մերժեն ան առաջարկութիւնը ու բախ ալ հաճելի ըլլայ ան ուրիշ ամեն պարագաներու մէջ : Աս մասին բացարձակապէս հարկաւոր է ան առաքելական կանոնը, որ մեզի կու տայ ըսելով, “ Միայն թէ Տէրոջնով ” : Երդարեւ ամենէն շխակն ու զգուշաւորը կրնայ խարուիլ • բայց անոնք որ հարցուփորձ չեն բներ՝ ու խրատ առնել չեն ուղեր, անշուշտ իրենց յիմարութեանը համար պիտի ցաւին : Վերաբիշտ ամուսինը մշանչնեաւոր սրտմաշուք ու անհանգստութիւն մըն է . փուշ մըն է կողը մանելու՝ ու արգելք մը տանը բարեկապաշ-

Վա առենը խոհեմութիւնը պատասխան տուաւ թէ Անծրան մը չէ Շաբաղիկն սիրաը անկէ պաղեցընելը . Գլութութիւնը իր սկսածին պէս որ շարունակէ աղքասաներուն համար գործելը , ասիկոյ շուտով կը պաղեցընէ անոր եւ ուանդը :

Այսպէս հետեւեալ անդամին Շաբաղիկը որ եկաւ , Գլութութիւնը իր առջի գործին վրայ տեսաւ՝ որ աղքասաներուն համար բաներ կը շնէր . ու ըստ . Առ ի՞նչէ , միշտ գործի վրայ ես դուն : Այս պատասխան տուաւ աղջիկը . կամ ինծի համար կամ ուրիշներուն համար : Եւ ի՞նչէ կրնաս վաստըիլ մէկ օրը հարցուց երիտասարդը : Ես ասոնք կը շնեմ՝ ըստ միւսը՝ որ բարի գործքերով հարստանամ , բարի հիմն գանձելով իմ անձիս հանդերձնեալին համար , որ ճշնարիտ կեանքը ձեռք ձգեմ : ա Տի . դ . 17-19 : Ենչէ , կ'աղաւեմ ըսէ ինծի , ի՞նչէ կ'ընես դուն պտոնք , ըստ երիտասարդը : Անրկերը կը հազուեցընեմ , ըստ աղջիկը + ու ասոր վրայ երիտասարդը իր երեսը խոժողոցոց ու անկէ ետքը ալ անոր քովը չեկաւ : Ու երբոր պատաճառը հարցուեցաւ իրեն , պատասխան տուաւ՝ թէ Գլութիւնը գեղեցիկ օրիորդ մընէ , բայց դէւ գաղափարներով պաշարուած է :

Երիտասարդը երբոր ես կեցաւ անկէ խոհեմութիւնն ըստ . Չըսի՞ք քեզի ես . թէ Պարոն Շաբաղիկը շուտով երեսէ պիտի ձգէ քեզ . մնանաւանդ թէ դէւ համբաւ մըն ալ պիտի հանէ քու վրադ : «Բանզի թէ և ինք բարեսպաշտ ըլլաւ կը ձեւանայ՝ ու Գլութիւնին վրայ սէր ունեւ-

տութեանն ու զաւակաց քրիստոնէական վարժութեանը . քանզի անոնք ընդհանրապէս դէւ կողմի սովորութիւններուն ու օրինակներուն կը յարին : Իսան մը չկայ որ այն շափ վատթարութեան մէջ ձգէ կրօնքը՝ կամ առաւել յայտնի ցուցընէ անոր անյաջող վիճակի մէջ ըլլալը քան որչափ այսպիսի ամռանութիւնները :

նաւ կը ցուցընէ , բայց Գրթութիւնն ու ինք այնպիսի տարրեր բնաւորութիւններ ունին որ կարծեմ թէ բնաւ պիտի չմիաբանին :

Գլուխութեաւ . Ըատոնց կրնայի ես ամուսնանաւ , թէ արէտ և մէկու մը բան խօսած չեմ ասոր վրայ . բայց այն պէս մարդիկ էին անոնք որ իմ գաղափարներուն չէին հաւներ . թէ արէտ և անոնցմէ մէկն ալ ամենելին անձնական պակառութիւն մը չէր գտներ իմ վրաս : Ուստի անոնք ու ես չէինք կրնար միաբանիլ :

Խոճէմութեաւ . Մեր օրերը Գրթութիւնը միայն անունով յարդ ունի . իսկ այնպիսի զործքերը որ զթութեան գաղափարներէն կը ծագին՝ քիչ մարդիկ կրնան առնիլ :

Այդպէս թող ըլլայ . թէ որ մէկը չառնէ զիս՝ բառ Գրթութիւնը , մինչև 'ի մահ ամսարի կը մնամ , կամ իմ գաղափարներս ինծի ամուսնոյ տեղ պիտի ըլլան . ինչու որ չեմ կրնար ես իմ բնութիւնս փոխել : Ու աս մասին ինծի հակառակ մէկը առնելը կարծեմ թէ ամենելին պիտի չքնդունիմ քանի որ կ'ապրիմ : Կը ոյր մը ունեի ես՝ որ Առատաձնոն կը կոչուեր , որ աս անզգամներուն մէկին հետ կարգուեցաւ . բայց բնաւ չէին կրնար միաբանիլ իրարու . և որովհետեւ իմ քոյրս միարք հասասաներ էր իր սկսածին պէս յառաջ երթաւ , այսինքն աղքատներուն բարեբարութիւն ընել , անոր համար իր երիկը առաջ սկսեց զինքը բամբասել ու յետոյ դռնէն դուրս ըրաւ :

Խոճէմութեաւ . Այսու ամենայնիւ զուցէ ինք բարեպաշտ մարդ մը կը սեպուեր :

Գլուխութեաւ . Այս , եղածին չափ . ու այնպիսիներով հիմա լցուն է աշխարհ . բայց անոնց մէկուն համար ալ չեմ ես :

Աս միջոցին Մատթէոս՝ Քրիստինէին մեծ տղան հիւանդացաւ , ու հիւանդութիւնը շատ սաստիկ էր . ինչու որ շատ ցաւ կը զար իր ներսի դին , ու առեն առեն ոյսը

ոլոր կու դար : Ու տանը մօտերը վաղեմի ու համբաւաւոր բժիշկ մը կը բնակեր Շարտարամիտ անունով : Ուստի Քրիստինէ կ'ուղեր կանչել զնոքը , ու մարդ խրսկեցին իրեն և եկաւ : Եցրոր սենեակէն ներս մասաւ՝ ու քիչ մը նայեցաւ տղին , իմացաւ որ իր հիւանդութիւնը խթացաւութիւն էր : Են ատենը հարցուց մօրը՝ թէ Առօրերս Պատթէոս ի՞նչ կ'ուտէր : Ի՞նչ ուտէ , ըստ Քրիստինէ , միայն առողջաբար բաներ : Գլատասիսն տուաւ բժիշկն ու ըստաւ . Առ աղան բան մը կերած պիտի բըսյ՝ որ իր ստամբսին մէջ չմարսած մնացեր է , ու անիւ կայ պիտի դուրս չելլէ առանց բան մը ընելու : Քեզի բանմ որ տղան մաքրողական դեղ առնելու է , եթէ ոչ կը մեռնի * :

Են ատենը Սամուելն ըստաւ . Ամյոր իմ , ի՞նչ էր ան որ եղբայրս ժողվեց ու կերաւ՝ աս ճամփուն դլսու դռնէն ներս մտածնուն պէս : Գրիտես որ ձախ կողմը՝ պատին անդիի երեսը պարտեղ մը կար , ու քանի մը ծառեր պատին վրայէն ճամփուն վրայ կախուեր էին՝ որոնցմէ եղբայրս փրցուց ու կերաւ : †

* Քրիստինէ : Դրան ես՝ տղաս , անոնցմէ առաւ ու կերաւ .

* Եցրոր յուսապատար հաւատացեալները մեծապէս լրաքանին , խոհեմութիւն չէ անմիջապէս զօրացընել զանոնք : Հապա այնպէս հարցուփորձ պէտք է ըլլուել որ իրենց նեղութեանը գաղտնի պատճառը յայտնէ : Վանեկով շատ անգամ կը գտնուի որ արգիլուած պտուղ մը կերած են անոնք , և աս գտումը կը խոնարհեցընէ զիբենք :

† Ակատէ թէ աս ճանապարհորդները ո՛րչափ օդտակար կլնան ըլլալ հաւատարմութեամբ իրարու միար ձգելով իրենց վարմանքը : Առ մեշքը թէպէտ և ատեն մը առեած զործուած էր՝ ու ոչ Պատթէոսը և ոչ անոր մնացը յիշեցին անիկայ , սակայն պէտք է յայտնուի ան՝ ու զդ ջում ըլլուի անոր վրայ :

չեխցի ևս ան չար տղան , և սակայն ինք մտիկ չընելով
կերաւ անիէ :

Ճ'արդարաբանն . Խմացայ ես որ վնասակար բան մը կե-
րած է . ու աս կերածը՝ այսինքն աս պառուղը ամենէն
վնասակարն է : Ճէկզգերուղի պարտէղին պառուղն է ան :
Այս զարմանամ որ մէկը բան մը չըսաւ ձեզի անոր վրայով .
շատերը մեռան անիէ :

Վրիստինէ ան ատենը սկսեց լաւ * ու ըսեւ . Ո՞վ չար
տղայ . ու վայ ինծի անհոգ մօրս . ի՞նչ ըսեմ իմ տղիս
համար :

Ճ'արդարաբանն . Ըստ մի վշտանար . տղան կ'առող-
ջանայ , բայց պէտք է դեղ առնէ ու վախէ :

Վրիստինէ . Պարոն , կ'աղաւեմ քեզի քանիի կ'ըլլայ
թող ըլլայ , քու բոլոր վարդեառթիւնդ 'ի դործ դիր :

Ճ'արդարաբանն . Ա՞ն վախնար , շատ ստակ չեմ առներ :
Այսպէս դեղ մը շնուց անոր՝ բայց շատ տկար եկաւ ան :
Ա՛ըսուի թէ ան դեղը շնոււեր էր ցուլի մը արիւնովը՝ երին-
չի մը մնխիրովը՝ ու քիչ մը դոպայով . Եթ . Եթ . 13 ,
19 : Ֆ . 1-4 : Եւ երբոր Պարոն Ճ'արդարամիտը տեսաւ
թէ ան դեղը տկար էր , ուրիշ զօրաւոր դեղ մը շնուց :
Ասիկայ շնուած էր ex carne et sanguine Christi † .

* Ո՞վ ծնողքներ՝ որ Վրիստոսի սիրոյն ծանօթացած
էք , հսկեցէք ձեր զաւելըներուն վրայ , որ ըլլայ թէ անսնց
մեղքերուն համար ցաւիք :

† “ Ըսանց արխան թափուելու էք ըլլար մեղաց թողու-
թիւն ” , կամ խղճնուանքի հանդարտութիւն . “ նոխաղ-
ներուն ու ցուլերուն արխանը չէր կրնար մեղքը վերցնել ” .
վասն որոյ աս տղին հոգւոր հիւանդութեանը բան մը չէր
կրնար առողջութիւն ու բժշկութիւն ընծայել . բայց ex
carne et sanguine Christi Վրիստոսի նորմնն ու արիւնը , որ
մեր մեղքերուն համար տրուեցաւ ու թափուեցաւ : Եւ
սակայն մեր բնութեանը մէջ զարմանալի դժկամակութիւն

Համեմ + կ. • 54-58 : Եթբ . իջ . 14 . ինչպէս որ պիտեք
թէ բժիշկները տարօրինակ անուններով դեղեր կու տան
իրենց հիւանդներուն : Ասիկայ զեղահամ շնիք էր քա-
նի մը խոստմանքներով ու չափաւոր աղով խառնած :
Պարք . իջ . 49 : Արդ աս դեղահատերը ծոմ բերնով
և քրեական համ պիտի առներ տղան՝ գաւաթմ մը ապաշխա-
րութեան արցունքով : Օտար . ժիշ . 10 :

Երբոր աս դեղը պատրաստուեցաւ տղին բերուեցաւ չէր
ուղեր առնել անիկայ , թէպէտ և փորին ցաւը այնպէս կը
տանջէր զինքը որ կարծես թէ իր ներսի դին կը ջարդուէր :
Խնծի՛ նայէ՛ ըստ բժիշկը , պէտք է առնես ասիկայ : Ասու-
միրոս չվերցըներ , կ'ըսէր տղան : Ենոպատճառ խմելու ես ,
ըստ մնցրը : Բայց պիտի փախեմ , կ'ըսէր տղան : Հիմա
Քրիստինէ բժշկին դառնալով ըստ անոր . Պարոն ,
կ'աղաւէմ քեզի , ինչպէս է համը : Գեշ համ չունի՞
ըստ բժիշկը . ու ասոր վրայ Քրիստինէ իր լւզուին ծայրը
զեղահատերուն մէկին դպցուց : Ու ըստ . Ո՛հ , Ամա-
թէոս , աս դեղը մնդրէն ալ անուշ է : Յօնէ որ քու մայրդ
կը սիրես , թէ որ քու եղացըները կը սիրես , թէ որ
Գլթութիւնը կը սիրես , թէ որ քու կեանքդ կը սիրես ,
առ ասիկայ : Անքարէս շատ ջանքերէն ետե՛ ու Վասու-
ծոյ օրհնութիւնը ան դեղին վրայ դալու համար համառօտ
աղօթք մը ընելէն ետե՛ տղան առաւ անիկայ , ու շատ ա-
ղէկ եղաւ իրեն : Աղէկ ներդործութիւն մը ըրաւ իրեն .
Հանգարտ քուն մը ու հանդստութիւն մը պատճառոց ա-
նոր . աղէկ մը տարցուց ու քրանցուց անիկայ , ու ըուլ-
րովին բժշկեց զինքը իր փորի ցաւէն . Վայպէս քիշ ժա-
մանակին մէջ ուրք ելու՛ ու դաւադանով կը պարսէր . ու

մը կայ աս խորհուրդը ընդունելու , որ կը ծագի մեր սըր-
տերուն անհաւատութենէն : Վայպէս ըյլաւ դտաւ Վաս-
թէոս՝ Քրիստինէին հիւանդ որդին :

մէկ սենեակէն միւսը կ'երթար , ու խոհեմութիւնին՝ հաշրեպաշտութիւնին՝ ու Աէրին հետ իր հիւանդութեանն ու իր բժշկուելուն վրայ կը խօսէր :

Երբոր տղան բժշկուեցաւ՝ Կրիստինէ հարցուց զիարոն Ճարտարամիտին ու ըսաւ . Տէր իմ , ի՞նչ վճարեմ , որ իմ վրաս ու իմ զաւկիս վրայ քու քաշած աշխատութեանդ ու հոդողութեանդ վորսարէն ըլլայ : Ու ան ըսաւ . Իմի լիներուն գողրոցին Ամրակետին պիտի տաս քու տալիքու , անոր դրած կանոններուն համեմատ * : Ե՞ր . ԺՔ . 11-15 :

Իսոյց՝ տէր իմ , ըսաւ Կրիստինէ , աս դեղահատք ուրիշ ի՞նչ բանի աղէկ է :

Ճարտարամիտ . Միիկայ ընդհանուր դեղահատ մըն է . ճանապարհորդներուն պատահելու բոլոր հիւանդութիւններուն համար ալ աղէկ է ան . ու երբոր աղէկ շինուած ըլլայ , խիստ երկար ատեն աղէկ կը պահռի :

Կրիստինէ . Տէր իմ , կ'աղաւեմ քեզի՝ տասներկու տուփի բան շինէ ինծի ատէկ . ինչու որ թէ որ ասիկայ ու նենամ՝ ընաւ ուրիշ դեղ չեմ առներ :

Ճարտարամիտ . Աս դեղահատերը ոչ միայն հիւանդը առողջացընելու աղէկ են՝ հապա նաև հիւանդութիւնները արդիւլու : Մանաւանդ թէ կը համարձակիմ ըսել ու

* Աղէկ պէտք է որ միտք առնենք աս աղջարարութիւնը : Ըստերը կան՝ որ Կրիստոսի արդիւնքով ու փրկարուծութիւնով եղած ձրի փրկութեան վարդապետութիւնը չարաշը կը գործածեն , ու թողութիւն գտնելու կ'ապաւինին՝ երբոր Ճարտարիս զղջում չունին ու սրբութեան վարք մը չեն ցուցըներ : Իսոյց աս ամենազօրաւոր դեղը անոնց աս վիճակին մէջ օգուտ մը չըներ + այլ մանաւանդ անիկայ այնպիսի չարաշը կերպով գործածելը իրենց մեղքերը կ'աւելցընէ , ու իրենց սրտերը մեղաց մէջ կը խօստացընէ :

կը հաստատեմ ալ որ եթէ մեկ մարդ մը ըստ արժանայն
զործածէ աս դեղո , յաւիտեան կ'ապրի : Յաձն . դ .
59 : Բայց բարի՞ Քրիստինէ , ուրիշ կերպով տալու
չես աս դեղահատերք՝ բայց միայն ինչպէս որ առաջ տես
զեկացոցի քեզ . ինըու որ եթէ ուրիշ կերպով տաս՝ օ-
գուտ չըներ : Ուստի բժիշկը դեղ տուաւ Քրիստի-
նէին՝ իրեն համար , ու իր տղոցն ու Գիմուլժինին հա-
մար , ու Անտիւսին ալ ապապեց որ՝ ալ Հասած սա-
լոր չուտէ . և այսպէս մնաք բարով ըսելով իր բանը դը-
նաց :

Ա երը ըսումցաւ առաջ թէ՛ Խոհեմութիւնը տղոցն ըսեր
էր որ երբ որ ուզեն օդակակար հարցումներ ընեն իրեն , ու
միք անոնց վասպով բան խօսի իրենց : Ա ասն որոյ Անտ-
իւսուը՝ որ հիւանդացեր էր , հարցոց իրեն թէ ինչ
չընէ համար դեղու ըստ մեծի մասին մեր քմացը լեղի կու-
դայ :

Խոհեմութիւն . Ենոր համար որ ցուցընէ թէ Աստուծոյ
Խոսքն ու անոր զօրութիւնները ինչպէս անհանոյ են աշ-
խարհանէր սրաբն :

Անտիւսու . Խոչմէ համար դեղը՝ թէ որ օդուտ ընէ՝ կը
լուծէ՛ ու կը վախացընէ :

Խոհեմութիւն . Ենոր համար որ ցուցընէ թէ Աստուծոյ
Խոսքը երբոր աղէկ ներգործէ , սիրոն ու միտքը կը մարքէ :
Քանզի նոյէ՛ որ՝ ինչ որ մեկը մարմնոյն կ'ընէ , նոյնը կ'ը-
նէ միւսն ալ հոգւոյն :

Անտիւսու . Խոչմէ պիտի սորվինք երբոր կը տեսնանիք
թէ կրակին բոցը գեղ ՚ի վեր կ'ելլէ , ու արեղակին
քաղցրիկ զօրութիւններուն ճառագայթինները գեղ ՚ի վար
կ'ի ընեն :

Խոհեմութիւն . Բացին վեր ելլելով պիտի սորվինք եր-
կիսքը ելլե՛ չերմ ու եռանդուն վափաբներով . ու արե-
գակին իր ջերմութիւնը՝ ճառագայթիններն ու քաղցրիկ ներ-

գործութիւնները դէպ 'ի վար խրկելովը պիտի սորպինքը թէ
աշխարհի Փրկիչը թէպէտ և բարձրը կը բնակի , իր առ-
նորհքովն ու սիրովը վար մեղի կը համնի :

Ուստի Ամպերը Թւրկէ կ'առնեն իրենց ֆուրը :

Խոհեմութիւն . Շօնովէն .

Ուստի Առն կրնանք սորպինք ասկէ :

Խոհեմութիւն . Պիտի սորպինք թէք քարոզիները իրենց
վարդապետութիւնները Աստուծմէ առնելու են :

Ուստի Առն . Խնչո՞ւ համար ամպերը երկրիս վրայ կը
պարպուին :

Խոհեմութիւն . Անոր համար որ ցուցընեն թէք քարո-
զիները Աստուծոյ վայով ինչ որ գիտեն աշխարհի մա-
տուցանելու պարտական են :

Ուստի Առն . Խնչո՞ւ համար ծխածանը արևեն կը պատ-
ճառի :

Խոհեմութիւն . Անոր համար որ ցուցընեն թէ Աստուծոյ
շնորհքին ուխտը Կրիստոսի միջնորդութիւնովը մեր վրայ
կը հաստատուի :

Ուստի Առն . Խնչո՞ւ համար աղբիւրները ծովէն կու գան
մեղի գետնին տակէն :

Խոհեմութիւն . Անոր համար որ ցուցընեն թէ Աստու-
ծոյ շնորհքը Կրիստոսի մարմինին միջոցովը մեղի կու
դայ :

Ուստի Առն . Խնչո՞ւ համար աղբիւրներէն ոմանք բարձր
լեռներուն դլուխները կը բղինեն :

Խոհեմութիւն . Անոր համար որ ցուցընեն թէ շնորհաց
Հոգին ինչպէս որ շատ աղքատներուն ու խնարհներուն
մէջ կը փայլի , այնպէս ալ մեծամեծներէն ու զօրաւորնե-
րէն ոմանց մէջ ալ կը փայլի :

Ուստի Առն . Խնչո՞ւ համար բոցը Ճրագին պատրոյդին
կը փակչի :

Խոհեմութիւն . Անոր համար որ ցուցընեն թէ շնորհքը

մինչեւ որ սրտին վրայ շվառի՝ մեր ներսի դին կենաց ջղմա-
րիս լոյս պիտի չգտնուի :

Ուստին ։ Խնչո՞ւ համար պատրոյդը՝ ճարապն ու բոլո-
րը կը սպառի ճրագին լցուր վառ պահելու համար :

Խոհեմութիւնն . Ենոր համար որ ցուցընէ թէ հողին՝
մարմինը ու ամենը Սատուծոյ շնորհքին ծառայութեանը
մէջ ըլլալու են, ու ծախուելու են Սատուծոյ՝ մեր վրայ
եղած շնորհքը վառ պահելու համար :

Ուստին ։ Խնչո՞ւ համար հաւալուսը կտուցովը իր
կուրծքը կը ծակէ :

Խոհեմութիւնն . Եր ձագերը իր արիւնովը անուցանելու
համար, և անով ցուցընելու՝ թէ ամենօր հնեալ Տէրն մեր
Քրիստոս այնչափ սիրեց իր ձագերը՝ (իր ժողովուրդը,)
որ իր արիւնովը փրկեց զանոնք :

Ուստին ։ Խո՞նչ կրնայ սորվիլ մարդ՝ արադաղին խօ-
սելո լսելով :

Խոհեմութիւնն . Աը սորվի յիշել Պետրոսին մեղքը՝ ու
Պետրոսին ապաշխարութիւնը : Աքաղաղին խօսիլը կը
ցուցընէ ևս թէ գիշերը կ'անցնի ու օրը կամ ցորեկը կու-
գայ + ուրեմն անոր ձայնը քու միտքդ թող ձգէ դատաս-
տանի վերջին ու զարհուրելի օրը :

Դանք որ աս ատեններս՝ ալ անոնց ամիս մը ժամանակը
լրացաւ + ուստի տանը մէջիններուն իմացուցին թէ ալ
արժան է որ ելլեն ու երթան : Ուստի Հովսէփ իր մօլն
ըսաւ . Պէտք է որ չմոռնաս Պարոն Անկնիչին տունը
մարդ խրկել ու խնդրել իրմէն որ Պարոն Քաջասիրտը
մեզի խրկէ, որ մեր մնացած ճամբուն մէջը մեզի առաջնոր-
դութիւն ընէ : Սպրիս տղաս, ըսաւ մայրը + զրեթէ
մհոցեր էի ևս ատ : Ուստի աղերսագիր մը գրեց՝ և 'Եըու-
նապան Պարոն Արթուրին աղաւեց որ յարմար մարդու մը
ձեռքովը իր բարի բարեկամին Պարոն Անկնիչին խրկէ զա-
նիկայ : Խակ Անկնիչը երբոր աղերսագիրը առաւ՝ ու ա-

նոր մէջի պարունակուածը տեսաւ , թղթաբերին ըստ . զնամ զրուցէ անոնց թէ կը խրկեմ զանիկայ :

Վրիստինէն կեցած տանն ընտանիքը՝ երբոր տեսան թէ ասոնց ճամբաց ելելու միուր ունին , բոլոր տունը մէկտեղ ժողվուեցան նորհակալ ըլլալու իրենց օժագաւորին որ ասոնց նման աղէկ հիւրեր խրկեց : Ասիկայ լրացընելին եւ տե Վրիստինէն ըսին . Վեզի քանի մը բան չցուցընօնք , ինչպէս որ մենք սովորութիւն ունինք ճամբորդներուն ընելու , որ ճամբուն մէջ անոնց վրայով մտածութիւն ընես : Ուստի փոքրիկ մենևակ մը տարին Վրիստինէն անոր տղաքը՝ ու Գրթութիւնը , ու ցոյց տուին անոնց ան խնձորներուն մէկը՝ որ Եւա կերաւ ու իր էրկանը տուաւ , ու անիկայ ուտելուուն համար դրախտէն դուրս արտաքրուեցան . ու հարցուցին Վրիստինէն՝ թէ Ասիկայ ի՞նչ կը կարծես ըլլալ : Պատասխանն տուաւ Վրիստինէ ու ըստ . Ասիկայ կամ ուտելու բան մըն է և կամ թշոյն . չեմ գիտեր որն ըլլալը : Աշան որց միւնքները բանը բացին անոր , ու ան իր մեռքերը վեր բռնեց ու ափշած մընաց * : «Օննո՞ • զ • 6 : Հառակ . է . 24 :

Վսիէ եւու ուրիշ տեղ մը տարին զինքը ու ցոյց տուին անոր Հակոբին սանդուխը : «Օննո՞ • իշ . 12 : Պանք

* Հոգին Առւրբ ու միայն մեր առջի ճամբայ ելելուն մեր մեղքերը մեզի կը ճանչցընէ ու Վրիստոսի կարօտ ըլլալին մեզի կ'իմացընէ , հապա նաև միշտ յայտնի կ'ընէ մեզի մեղքին գէջութիւնը՝ թէ բնութեամբ և թէ զործադրութեամբ : Ասիկայ շատ անզամ կը զարմացընէ մեզ մեղքին վրայ՝ մեր անձին վրայ՝ ու Վրիստոսի սիրոյն վրայ , որ մեր մեղքերուն համար պատարադ եղաւ : Ասիկայ նաև կը խոնարհեցընէ մեզ , մեղքը աւելի ատել կուտայ մեզի , ու Վրիստոս՝ իր քաւութիւնն ու իր արդարութիւնը առաւել քան զառաւել պատուական կ'ընէ մեր աշքերուն ու յարդի՝ մեր սրտերուն :

որ հիմն հրեշտակներ վեր կ'ելլեին անկէ : Ուստի Կ'րիստինէ ամիշած կը նայեր հրեշտակներուն վեր ելլելը տեսնելու , ու միւսներն ալ նոյնը կ'ընէին : Ծեաց ուրիշ տեղ մը կ'երթացին ուրիշ բան մը ցուցընելու անոնց . բայց Յակոբոս բառ իր մօրը . Ա'աղաւեմ , ըսէ անոնց որ քիչ մըն ալ կենան հոս . ինչու որ ասիկայ պրանչելի տեսարան մըն է : Ուստի ետ դարձան , ու կայնեցան որ այսպիսի հանցական տեսարանով իրենց աչքերը յագեցընեն :

Վսկէ ետեւ տեղ մը տարին զանոնք՝ ուր որ ուկեղին խարխախ մը կախուած էր : Ու հրաման ըրին Կ'րիստինէին վար առնել դանիկայ . ինչու որ՝ ըսին իրեն թէ Եսիկայ խիստ հարկաւոր է որ քու հետդ առնես , որպէս զի վարապուրին ներսի կողմը եղածը ամուր բռնես , Ե՞՞՞ . չ . 19 , ու խոռվացոյզ եղանակի մը պատահելուդ հաստատ կենաս : Յովէլ + դ . 16 : Ուստի սկսեցին ուրախանաւ ասոր վրայ :

* Կ'րիստոս Տերն մեր Երկնից ու Երկրի Սատուծոյ ու մարդոց մէջ միջնորդ է . իրմով մեղաւորները Սատուծոյ կու դան և ընդունելի կ'ըլլան , ու Կատուած անոնց հետ կը ընակի ու կը փառաւորի . անոր միջնորդութիւնովը իրենց Երկրագութիւնն ու պաշտամունքը Սատուծոյ կը մատուցանեն ու Երկնային բարութիւնները կ'ընդունին , ու անոր պատճառաւը հրեշտակները վրկութեան ժառանգորդներուն կը սպասաւորեն : Սոիկայ կը նշանակուէր Յակոբին սանդուխովը :

+ Սոիկայ է Յօցին խարխախը : Սոիկայ հողին ապահովէլ ու Յիսուսի վրայ հաստատ կը պահէ , որ ինք միայն է մեր յօյսին նպատակը : Յօյսը հաւատքէն կը ծաղի , և է ակնկալութիւն ան բաներուն կատարմանը որ ամեն չնորհքներուն Սատուածը Տշմարտութեան խօսքին մէջ խոստացաւ : Հաւատքը կ'ընդունի զանոնք՝ կը հաւատայ անոնց՝ կ'ապաւինի անոնց , ու յօյսը կը սպասէ անոնց անթերի կատարմանն ու վայելելուն :

Ասկէ ետև առին տարին զանիկայ ան լեռանը վրայ ուր որ Արքահամ մեր հայրը իր որդին Խաչակը պատարագ մատուց , ու ցոյց տուբն անոնց՝ սեղանը , փայտը , կրակն ու սուրը . ինչու որ անոնք մինչեւ աս օրս հոն կը կենան տեսնուելու համար : Ծանր՝ իր . 9 : Երբոր տեսան անիկայ՝ ձեռքելնին վեր վերցուցին , ու երանի տուբն իրենք իրենց ու ըսին ալ . Ահ , ինչպէս մարդ էր Արքահամ իր Տէրոջը վրայ ունեցած սիրոյն ու իր անձը ուրանալուն կողմանէ :

Ամեն աս բաները անոնց ցոյց տալէն ետև խոշեմութիւնը սեղանատունը տարաւ զանոնք՝ ուր որ պատուական նուագարան մը կեցեր էր . ուստի սկսեց անոր վրայ նուագէլ ու անոնց ցոյց տրուած բաները տաղաւախութեան դարձընելով երգեց .

Խւային կերած խնձորը տեսար՝
Կայէ որ զայշ կենաս դուն անկէ .
Հակոբին տեսած սանդուխն ալ տեսար ,
Որ վեր կ'ելլէին հրեշտակներ անկէ :

Վո տեղս առիր նաև խարխսի մ'ալ՝
Սակայն բաւական ասոնք չեւսկիս .
Արքահամին արէս մինչեւ որ դուն ալ
Քու խիստ պատուական բանըդ զահ ընես :

Վո ատեններս մէկը զարկաւ դուռը . ուստի Շառնապաւնը բացաւ , ու տեսաւ որ Պարսն Վաշախիրան էր եկողը . բայց երբոր ներս զնաց՝ ի՛նչ ուրախութիւն եղաւ հոն : Դնչու որ հիմա նորէն իրենց միարը եկաւ թէ ինչպէս քիչ մը ատեն առաջ ինք սպաննեց ան խոժոռարէմը՝ Արքւնաւ հեղ և սկան , ու առիւծներէն աղատեց զիրենք :

Խոլ Վաշախիրտը Վրիստինէին ու Գաֆութիւնին բառաւ . Խամ Տէրս ձեր երկուորին մէյմէկ աման զինի խրկեց՝

ու քիչ մը խորոված մարացորեն՝ և քանի մը նուռ. • տղոյն
ալ քիչ մը թուղ ու չամիչ խրկեց, որ ձեր ճամշւուն մեջ
ձեզ կազդուրեն :

Սն ատենը ճամբայ ելլելու պատրաստուցան, և խոհեւ
մութիւնն ու խարեպաշտութիւնը անոնց հետ դացին :
Երրոր տանը դուռն եկան, Քրիստինէ հարցուց Դունաւ
պանին թէ ան օրերը արդեօք մէկը անցմւ անկէ : Պատ-
տասիսան տուաւ Դունապանը՝ թէ Չէ. միայն թէ ատեն
մը առաջ մէկը անցաւ, որ ըստ ինձի թէ մօտերս մեծ
առաջակութիւն մը եղաւ Յաւգաւորին ճամբուն վրայ,
ուր որ հիմն դուք պիտի երթար : Խայց դողեռը բռնուած
են՝ ու շատ չանցած անոնց մահուան վեխուը դատաստանաւ
պիտի կտրուի : Սն ատենը Քրիստինէն ու Գիթութիւնը
սկսեցին վախնաւ, բայց Առաջեօսն ըստ . Անցրիկ,
քանի որ Պարսն Քաջասիրտը մեր հետը պիտի երթայ ու
մեր առաջնորդն է, բանէ մը մի՛ վախնար :

Քրիստինէ ան ատենը Դունապանին ըստ . ՏԵ՛ր իմ,
մեծապէս շնորհակալ եմ քենէ քու բոլոր մարդասիրու-
թեանդ համար՝ որ քանի եկեր եմ ինձի ցոյց տուիր . ու
նաև անոր համար որ այնչափ սէր ու քաջրութիւն ցոյց
տուիր իմ զաւկըներուս : Չեմ գիտեր թէ ի՞նչպէս հա-
տուցում ընեմ՝ քու մարդասիրութեանդ . ուստի կ'աղա-
շեմ ընդունէ աս փոքրիկ լուման իրքն նշան իմ զքեղ յար-
գելուս : Աս ըսելով ոսկի մը դրաւ անոր ձեռքը . ու ան
խոնարհ յարգութիւն մը մատուցանելով ըստ . “ Հան-
գերձներդ ամեն ատեն ճերմակ ըլլան, ու դլաւոդ վր-
բայէն եղու պակաս չըլլաց ” : Ժառ. ի՛ . 8 : Գիթութիւնը
ապրի ու չմեռնի, ու իր զործը քիչ չըլլաց : Ու տղոյն
ըստ . Երիտասարդական ցանկութիւններէն վախիք, ու
աստուածապաշտութեան հետեւեցէք խոհեմ ու խելացի մար-
դոց հետ . ը ՏԵ՛ր . ի՛ . 22 . ասանկով ձեր մօրը սրտին
ուրախութիւն պիտի տաք, ու բոլոր առաքինի անձերէն

գովութիւն աղիտի առնելք : Ուստի ընորհակալ եղան
Դանապանին ու զատաւեցան :

Հիմա երազիս մէջ տեսաց որ ամենը մէկէն յառաջ կ'եր-
թային , մինչև որ բըսւրին դըսւխը եկան . հօն Խարե-
պաշտութիւնը ինք իրեն զալով կանչեց . Աժանու , բան
մը աղիտի տայի Քրիստոնէին ու իր ընկերներուն , ու մոռ-
ցայ անիկայ + դառնամ ըերեմ անիկայ : Ուստի վաղեց
զնաց անիկայ բերելու : Երրոր ինք զնաց՝ Քրիստոնէին
այնպէս կու զար թէ քիչ մը հեռուն աջ կողմին վայ
սրդակի անտառի մը մէջ խիտ դարձնանալի քաղցրանուադ
երգ մը կը լուէր այսպէս .

Ըոլոր կեանքիս մէջ քու անոյշ սէրըդ
Այնպէս մոտաղիւր ցոյց տուիր ինծի ,
Որ ես յաւիտեան քուկին տաճարըդ
Աղիտի բնակիմ , ու չելեմ անտի :

Ու աղէկ մը մօնիկ ընկելով կը թուէր իրեն որ մէկ ու բիշ
պատասխան կու տար անոր ըսելով՝

Քանոզի բարի է մէր Տէր Կոտուածը՝
Ծաւիտեան է իր ողորմութիւնը ,
Հաստատուն է իր հշմարտութիւնը
Ու դարէ ՚ի դար կը մնայ նոյնը :

Քրիստիանոս հարցուց Խոհեմութիւնին թէ ան դարմա-
նալի երգերը երգողն ով է : Ան ալ պատասխան տուաւ
ու ըստ . Անը երկրին թուչուններն են անոնք . քիչ անդամ
անոնք աս երգերը կ'երգեն , միայն դարեան՝ երրոր ծա-
ղիկները կը բացուին ու արեգակին հառագայթները կը
տարեան . և ան ատենը բոլոր օրը կը լսես որ կ'երգեն :
Երգ . Բ . 11 , 12 : Կատ անդամ դուրս կ'ելլեմ ես
անոնք մոտիկ ընելու , ու յաճախ մենք զանոնք կ'ընտանեցը-
նենք ու մէր տանը մէջ կը պահենք . Երրոր մենք տըստ-
մած ըլլանք՝ շատ աղէկ ընկերութիւն կ'ընեն մեզի , ու

նաև սնուառներն ու թաւուտները ու անմարդաբնակ տեղերը այնպէս կը զարդարեն որ մարդ կը փափաքի անոնց մէջ ըլլալու * :

Գանձր որ հիմա Բարեպաշտութիւնը կրկին եկաւ , ու Քրիստինէին ըստ . չ ու նայէ , մեր տունը տեսած բաներուդ բոլորին նկարագրութիւնը բերի քեզի , որ եթէ բան մը մոռնալու ըլլաս՝ կրնաս անոր վրայ նայիլ , ու կրկին քու միտրդ բերել ան բաները քու շնութեանդ և մսիթարութեանդ համար :

Հիմա սկսեցին լեռն 'ի վար իջնել Խոնարհութեան Զորը † : Ասիկայ բարձր լեռ մըն եր ու ճամբան ալ սաւ հուն եր . բայց իրենք խիստ ըդուշութիւն կ'ընէին , ու այնպէս անվեսս մինչև վար իջան ‡ : Երբոր վար հասան ձորին մէջ Բարեպաշտութիւնը ըստ Քրիստինէին . Ասի-

* Վեր երկրին թուշուները՝ կը նշանակէ ան կողմերէն անցնող ճանապարհորդները՝ որ Տէրոջը մօտ ըլլալուն ճանաչումնիք , ու անոր Ճշնարսութեանը և յաւխանական ողորմութեանը վրայ հաստատուն ապաւինութիւնով մը աս ուրախարար երգերը կ'երդեն : Երբոր Արդարութեան Ալքեգակը թերմանքը ծագէ հոգւոյն վրայ՝ ու պատճառէ անոր յայտնապէս տեսնել ասոնք , քաղցրանուագ երգել՝ ու արդարե խիստ խնդալից եղանակաւ ուրախանալ կուտայ ճանապարհորդներուն : Աս երգերը շատ մօտ կուդան փառաց սահմաններուն մէջի երկնաւոր երաժշտութիւններուն :

† Ճանապարհորդներն կենացը մէջ օդտակար ճամբաներն անոնք՝ որ հոգին կը խնարդէցընեն :

‡ Ճանապարհորդները երկնաւոր մլսիթարութիւններով՝ հաւատին տեսութիւններով՝ յոյսին սփոփութիւններով՝ այսչափ առաել շնորհքներու արժանաւորելուն ետեւ , ու ա իրենց առնելու հետեւալ քայլափոխը , որ է Դժուարութեան Լեռնէն վար Խոնարհութեան Զորը իջնել :

կայ ան տեղն է ուր որ Կրիստիանոս քռւ երիկդ ան չար
թշնամնոյն Ապողովոնին պատահեցաւ , և ուր որ անոնք
ան զարհուրելի կոխն ըրին . զիսեմ որ 'ի հարկէ լսած ևս
ան : Բայց սի՞րտ առ քանի որ Պարոն Քաջասիրտը ձեր
ուղեցոյն ու առաջնորդն է , կը յուսանք որ ձեր բանը լս-
ւագոյն վախճան կ'ունենայ : Այսպէս երբոր աս երկուրը՝
Ճանապարհորդները իրենց առաջնորդին պաշտպանու-
թեանը յանձնեցին՝ Կաջասիրտը առջնուն ճամփոյ ելաւ ,
և միւսները անոր ետևէն կ'երթացին :

Քաջասիրտ . Ո՞նդ աս ձորէս վախճալու բան մը չու-
նինք . ինչու որ աս տեղը մեղի վեսաելու բան մը չկայ ,
թէ որ վեսասակար բանը մենք մեղի չստանանք : Ճ՛շմարիտ
է թէ Կրիստիանոս աս տեղը պատահեցաւ Ապողովոնին ,
որուն հետ սաստիկ կոխւ մըն ալ ըրաւ . բայց ան կոխւը
լեռն 'ի վար իջած ատենը իր սահելուն պտուղն էր . քանզի
անոնք որ հոն կը սահին , հոս կոխի ակնկալութիւն պէտք
է ունենան : Աւ սակէ է որ աս ձորը այսպիսի դառն ա-
նուն մը ունի : Քանզի հասարակ մարդիկ երբոր լսեն
թէ այս ինչ տեղը այս ինչ մարդուն զարհուրելի բան մը
պատահէր է , կը կարծեն թէ ան տեղը անզգամ թշնամնոյ
մը կամ չար հոգւոյ մը բունն է . բայց ափանս , որ իրենց
ըրածներուն պատճառաւն է որ այսպիսի բաներ կը պատա-
հի իրենց հոն * : Աս խոնարհութեան Չորս ըստ ինքեան

* Ի՞նչ մեծ բարութիւն է խոնարհութեան ձորին մէջ
քաջ սիրտ ունենալը : Ի՞նչ թշուառութիւն է ճամփորդ-
ներուն իրենց մեղքովն ու յիմարութիւնովը իրենց իրենց
չարիքներ հնարելը : Ի՞նչպէս ինորութիւն է դիտնալ թէ
“ Ի՞նչպէս որ հայր մը կը զթայ իր որդւոցը վրայ , այնպէս
ալ Տէրը կը զթայ իրմէն վախցողներուն վրայ ” : Առաջ .
Ճ. 13 : Աւ սակայն թէ որ զլորինք՝ անշուշտ պիտի ցա-
ւինք : Յնէ որ ամուր չըռնենք հաւատրը՝ յոյսը՝ սէրն ու
հնազանդութիւնը , Աստանան վրանիս պիտի յարձակի՛

պաղարեր տեղ մըն է ու և իցէ ուրիշ բարերեր տեղի մը
պէս . ու կը վկացեմ՝ որ եթէ վնառելու ըլլանք , կը նանք
աս տեղուանքը բան մը զանել որ մեզ տեղեկացընէ թէ
Կրիստիանոս ինչը համար դժուարութիւն կրեց աս
տեղս :

Մն ատենը Յակոբոսն ըստ իր մօրը . Եհա հեռուն
արձան մը կայ , ու կը թուի թէ բան մը գրուած է անոր
վրայ : Երթանք տեսնենք թէ Բնէ պիտի ըլլայ ան .
ուստի գացին ու ասիկայ գրուած դասն հոն . “Կրիստի-
անոսին հոս զալէն առաջ սահիլը” ու անոր աս տեղս ըրած
կրիւը եւուէն եկողներուն խրատ մը թող ըլլան” : Տե-
սմիք , չըսի՞ ձեղի՞ ըստ իրենց առաջնորդը թէ աս տե-
ղուանքը բան մը պիտի ըլլայ որ հոս Կրիստիանոսին քա-
շած դժուարութեանը պիտի իմացընէ : Մնկէ
ետե Կրիստինէին դառնալով՝ ըստ . Բայց ասիկայ
աւելի ամօթ մը չեպուիր Կրիստիանոսին՝ քան որչափ
շատ ուրիշներուն որոնց կ'իյնայ ասկէ անցնիլ : Ինչու որ

մեզ նեղը պիտի ձգէ ու մեզի պիտի յաղթէ , և ան ատենը
չար համբաւ պիտի հանենք խոնարհութեան Չորին վրայ՝
որն որ ապահով ու պաղարեր տեղ մըն է : Երդեօք աս
ձորին մէջն ես դուն : Քու վրադ կը տեսնե՞ս ու կը զգա՞ս
միայն ան բաները որ քեզ կը խոնարհեցընեն ու քեզ հոն
կը պահէն : Օգոյշ կեցիր արտնջալէն ու քրթմնջնէն ,
թէ և երկար ատեն անոր մէջ մնաս , և մինչեւ անդամ քու
բոլը կենացդ մէջ . ինչու որ քու Յիսուսդ քեզ կը փոր-
ձէ որ քու ներադ եղածը ցուցընէ քեզի , որպէս զի տես-
նես որ բոլըրովին պարտաւոր ես իր բազուկին որ փրկու-
թիւն բերաւ քեզի ու բոլըրովին աղատեց քեզ . որպէս
զի իրմնիւ և իրեն վրայ պարծենաս միշտ ու բոլը փառքը
իրեն մատուցանես իր մարդասիրութեանն ու ողորմու-
թեանը համար՝ որ բարաւ քեզի այսպիսի թշուառ մեղաւո-
րիդ՝ ինչպէս որ ես , ու այսպիսի անպիտան ծառայիդ՝ ինչ-
պէս որ միշտ պիտի ըլլա :

դիւրագոյն է աս լեռնէն վըր ելլելը՝ քանի թէ վար իջնելը։ ու ասիկայ աշխարհիս աս կողմերը միայն քանի մը լեռներու համար կրնայ բառւիլ։ Բայց թող տանք ան բարի մարդը։ հիմա հանգչած է։ անիկայ զօրաւոր յազմութիւն մըն աւ գործեց իր թշնամոյն վրայ։ Երկինքը բնակողը չնորհէ մեզի որ մեր փորձուելու ատեննիս անկէ աւելի գէւ բանի չպատահինք։

Բայց դանիք նորին աս խոնարհութեան Չորիս վրայ խօսելու։ Խոլոր աս կողմերը ամենէն աղէկ ու սպողառու տեղն ասիկայ է։ Պարարտ երկիր է, ու ինչպէս որ կը տեսնես ըստ մեծի մասին մարդագետինով ծածկուած է։ ու թէ որ մէկ մարդ մը ամառը հոս գալու ըլլայ՝ ինչպէս որ մենք հիմա եկանիք, թէ որ յառաջմանէ բան մը իմացած չըլլայ աս ձորին վրայով՝ ու այնպիսի մեկն ըլլայ որ գեղեցիկ բաներ տեսնելու աչք ունենայ, խխատ բերկրալի բաներ պիտի տեսնէ հոս։ Վհա ի՞նչպէս կանանչ է աս ձորը։ ու նաև ի՞նչպէս գեղեցկացած է շուշաններով*։ Երբ ։ ի ։ 1 ։ Խս շատ աշխատաեր անձինք աւ զիսեմ՝ որոնք աս խոնարհութեան Չորիս մէջ աղէկ կալուածքներ սուսցան։ ինչու որ Աստուած ամրարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն չնորհք կու տայ։ Յա՛ ։ դ ։ 6 ։ ա ՊԵՄ ։ է ։ 5 ։ Արդարեւ արդաւանդ հող մը ունի, ու առասօրէն կը պարաբերէ։ Ամանիք կը փափաքին աւ որ իրենց ծօրը տունն երթալու ճամբան միւստ ասկէ ըլլար, որ աւ նեղութիւն չքաշէին ըլլուրներուն ու լիններուն վրայէն անցնելու։ բայց ճամբան ճամբար է, ու ձեռքերնէս ի՞նչ կու դայ։

Արդ՝ երբոր սցսպէս կ'երթային ու կը խօսէին, տղաց

* Ըստ շանները՝ Քրիստոսի անվիտաս և սուրբ աշխակերտաներն են, որ կենաց աղքատ ու անշուք վիճակը կը զարդարեն, ու կրօնին զարդն են՝ խոնարհութեամբ։ Հագուած ըլլալով։

մը տեսան՝ որ իր հօրը ոչխարները կ'արածէր : Տղան
շատ դժուծ լաթերու մեջ էր, բայց զուարթ ու բարեշնորհ
դէմք մը ունէր . ու առանձին որ նստեր էր՝ կ'երգէր :
Վարիկ ըրեւը հովիւ տղին ըսածք՝ ըստ Վահանիլուր . ա-
նոնք աւ մտիկ ըրին որ կ'երգէր ու կ'ըսէր .

Ա արն ըլլողը վախ չունի իյնալէն ,
Հեզը չվախնար հպարտութենէն .
Են որ խոնարհ է միշտ զԱստուած իրեն
Պահապան կ'ընէ , ամեն չարերէն :

Ունեցածով ես արդէն դոհ եմ
Յօնէ շատ ըլլայ ան և թէ քիչ ըստ մը .
Եր դեռ զոհ ըլլալ Տէ՛ր իմ կը խնդրեմ ,
Օք դուն կը փրկես միշտ այնպէսները :

Դ'ամբորդ եղողին ծանրութիւն մըն է
Եցրը հարստութեամբ բեռնաւորուած է .
Հոս քիչ թող ըլլայ՝ հնա երջանկութիւն ,
Արն որ յաւխեան ամենէն լաւն է :

Են առենը իրենց առաջնորդն ըստ . Աը լուշք անոր
ըսածք . կը համարձակիմ ես ըսելու թէ աս տղան շատ
ուրախ կեանք մը կը վարէ , ու մետարսով և թաւիլով
հաղուողէն աւելի իր սիրուը հանդիսան է * : Բայց դառնանք
մեր խօսքը յառաջ տանելու :

Անը Տէրը առաջմանէ իր ամսաբնոցը աս ձորիս մեջն
ընտրեր էր, ու շատ կը սիրէր հոս քնակիլ : Աը սիրէր
ես աս մարդագետիններուն վրայ պտըտիլ , ինչու որ օդը

* Հովիւ տղելը կը նշանակէ փոքրիկ եկեղեցիներու կամ ժողովուրդներու վրայ հովուութիւն ընող եկեղեցականներուն անշուք բայց հանդիսան վիճակը . որոնք զրեթէ անծանօթ են իրենց եղբայրներուն , բայց չափով մը օդաւակար են՝ ու խիստ զոհ :

աղեկ ըլլաւ գտեր էր : Պահաւանդ որ՝ աս տեղս մեկ մարդ մը աղաղակներէ ու աս կեանքիս աղմուկներէն ազատ կ'ըլլայ + բոլոր սահմանները աղաղակով ու աղմուկով լեցուն են . միայն Խոնարհութեան Չորսն է ան դատարկ ու առանձին տեղը : Աս տեղս մեկ մարդ մը արգելք պիսի շունենայ մասածութեան պարապած ատենը, ինչպէս որ ուրիշ տեղեր արգելքի ենթակայ է : Ասիկայ մեկ ձոր մըն է որուն մէջ մէկը չոփեր քայլէ բայց անոնք որ ճամբորդութեան կեանքը կը սիրեն : Եւ թէպէտ Կիրիստիանոս դժուարին վիճակի մը պատահեցաւ հոս Ապողղինն հետ ու սաստիկ կոխեի մը մասաւ անոր հետ, բայց ձեզի կ'ըսեմ թէ առաջմանէ մարդիկ աս տեղ հրեշտակներու կը պատահէին, Աջ + Ճի + 4, 5, հոս մարդարիտ կը գտնէին, Վատիլ + Ժկ + 46, ու աս տեղ կեանք կը գտնէին * : Առաջ + ը + 35 :

Չըսի՞ թէ մեր Տէրը առաջմանէ ամսաբանոցը հոս ունէր, ու կը սիրեր հոս պտըտիլ : Հիմա աս ալ ըսեմ որ աս սահմանները սիրող ու հօն պտըտող ժողովուրդին աս տեղ տարեկան թոշակի մը ձգած է ինք որ ատենին արդարութեամբ պիտի վճարուի անոնց, ճամբուն վրայ իրենց ապրուստին՝ ու ճամբորդութեանը մէջ յառաջանալու իրենց քաջալերութեանը համար :

Առո՞ երրոր այսպէս յառաջ կ'եթթային, Ամմուլլը

* Միարդ րեր միշտ մեր սիրելի Տէրոջը խօսքը, թէ Ուներիք է աշակերտին՝ որ իր վարդապետին պէտ ըլլայ' : Վատիլ + Ժ + 25 : Յօնէ որ քու Տէրդ աս Խոնարհութեան Չորսն մէջն ըլլալը իր գլխաւոր հաճութիւնն ըրաւ, սոր վէ անոր օրինակէն աս ձորը յարգել : Եւ թէպէտ հոս Ապողղինն կամ ուրիշ վեսասկար թշնամեց մը պատահական բարձրացնելու ամենալավը Տէրոջ կարողութիւնովն ու անոր բազուկներուն մէջ ապահով են . քանզի թէպէտ և Տէրը բարձր է, բայց խօսաբհը կը տեսնէ :



Պարոն Կիաջասիրտին ըստ . ՏԵ՛ր իմ , կ'իմանամ՝ որ իմ հայրս ու Վաղողինը աս ձորիս մեջ իրենց կոխմա ըրբին . բայց ուր տեղ էր ան . քանզի կը տեսնեմ՝ որ աս ձորը մեծ է :

«Քաջասիրտ . Վաղողինին հետ քու հօրդ ըրած կոխմա տեղը անդին մեր առջեն է՝ նեղ անցքի մը վրայ Դաւարի Մոռացութեան կոչուած տեղը անցածիդ պէս : Եւ արդարեւ աս կողմերը ամենէն վտանգաւոր տեղն անիկայ է : Կիանզի ճանապարհորդները թէ որ երբէք աղէտոքի մը պատահէլու ըլլան կը պատահին երբոր կը մոռնան իրենց ընդունած չնորհքները՝ ու ան չնորհքներուն իրենց անարժան ըլլալը : Աս տեղ ևս ուրիշներն ալ նեղութիւններ քաշեցին : Խայց աւելի կը տեղեկանանք ան տեղին վրայով՝ երբոր հոն համնիմք . ինչու որ կը վիայեմ թէ մինչեւ աս օրս ան տեղ կը մնայ ան կոխման կամ մեկ նշանը և կամ արձան մը՝ որ վիայէ թէ այնպիսի կոխմ մը եղած է հոն :

«Հայութիւն . Ես կը կարծեմ որ աս ձորիս մեջ այնչափ աղէկ եմ՝ որչափ որ բոլոր մեր ճամբորդութեանը մեջ որ և իցէ ուրիշ տեղ մը էի . ինձի կը թուի որ աս տեղը իմ հոգեցյա հետ կը միաբանի : Աը սիրեմ այսպիսի տեղէր ըլլալ ուր հէ կառքերու շնչիւն ու հէ անխներու շառաչիւն կայ : Ինձի կու գայ որ մարդ մը աս տեղս առանց նեղութիւն կրելու կրնայ աստիք մնածել այսինքն թէ ինք ի՞նչ է , ուրիշէ եկաւ , ի՞նչ ըրաս , ու օճակաւորը ի՞նչ ըանի կանչեց զինքը : Աս տեղս մարդ կրնայ մնածել ու իր սիրտը կոտրիլ ու իր հոգին հալիլ մինչեւ որ իր աշքերը լշերոնի աւազանին նմանին : Երբ . Է . 4 : Անոնք որ աս արտասուրի ձորէս կ'անցնին՝ աղբիւրի պէս կ'ընեն անիկայ . ասոր մեջ եղողներուն վրայ Վատուծոյ երկինքն խրկած անձքեն ալ օրհնութիւնով կը ծածկէ անիկայ : Ուսում . ձի . 5-7 : Ասիկայ ան ձորն է՝ ուրիշ ևս օճա-

դաւորը իրեններուն իրենց սյօդիները պիտի չորհել , ու անոր մէջէն անցնողները պիտի երդեն , Ուշ . լ . 15 , ինչպէս որ Կրիստոնոս երգեց Ապողղիոնին հետ բոլոր պատահած բաներուն համար :

ՎԻՊԱՌԱՒՔԻՔ • ՃՇմարխտ է ըստաւ իրենց առաջնորդը . շատ անդամ անցայ ես աս ձորին մէջէն , ու բնաւ ուրիշ տեղ մը հոս եղած ատենէս աղեկ եղած չեմ : Ըստ համբորդներու ալ առաջնորդութիւնը ըսի , ու անոնք ալ նոյնը կը վկայէին : Յժագաւորը կ'ըսէ թէ Արքէն վկայ կը հանդիմ ես , բայց եթէ հեղերուն վկայ , ու իմ խօսքէս դողացողին վկայ : Եսայ . կէ . 1 , 2 :

Աս միջոցին՝ եկան հասան ան նոյն տեղը՝ ուր որ վերը յիշուած կուիր պատահեր էր : Ան ատենը ուղեցոյցն ըստաւ Կրիստոնէինն իր տղոցն ու Գլուռութիւննին . Ասիկայ է ան տեղը : Հոս կայնեցաւ Կրիստոնոս , ու ան բարձր տեղէն Ապողղիոնը անոր դէմն եկաւ : Եւ նայէ՝ չըսի՞ ձեզի , ահա քու երկանդ քիչ մը արիւնն ալ մինչեւ աս օրս աս քարերուն վկայ է : Կայէ ես թէ Բնապէս Ապողղիոննին կոտրած նիզակներուն քանի մը կտորները ասղին անդին ցրաւած կ'երևան գետնին վկայ : ՏԵս նաև թէ Բնապէս կուռած ատեննին իրենց ոսքերը զարկեր են՝ մէկզմէկու դէմ հաստատուն կենալու համար . և Բնապէս պարագն անցած հարուածներովինն մինչև անդամ քարերը կտոր կտոր ըրեր են : Երդարև Կրիստոնոս աս տեղս մէծ քաջութիւն ըրաւ՝ ու ինքզինքը այնպիսի զօրեղ ցուցուց՝ որչափ որ՝ թէ որ ըուն իսկ չերակլէս ինք ըլլար , կրնար : Ապողղիոնը յաղթելէն ետեւ՝ ասկէ անդիի ձորին մէջ քաշուեցաւ՝ որ կը կոչուի Առհուան Ծուրին Զուրը , ուր որ շատ չանցած մէնք ալ պիտի մօնենիք * : Ահա

*Աստանան թէ որ մէկ յարձակմուկրով ետ քառի , պատրաստ կեցիր՝ ինչու որ երկրորդ անդամ պիտի յար-

առջևնիս արձան մըն ալ կայ՝ որուն վրայ քանդակուած է
աս կոխեն ու Քրիստիանոսին ըրած յաղթութիւնը , բու-
լոր դարերուն մէջ իր համբաւը հաշակելու համար * : Եւ
որովհետեւ ձիւս առջևնին՝ ճամբուն քովիկն էր արձանը ,
քովը դացին ու վրայի փորադրուածը կարդացին , որ բ-
առ բառ ասիկայ էր *

Այս աս տեղու էր որ եղաւ կոխու մը՝
Ըստ սրբանչելի՝ բաց չառ ճշմարիս .
Քրիստիանոսն ու Եպողոթիւնը
Երարու յաղթել կ'ուղելին ճշգրիտ :

Բաց Քրիստիանոս քաջութեամբ վառուած
Խայտառակեց ու փախցոց ան շարը ,
Որուն համար ես արձան եմ՝ կայնած
Ա խցել ձեղի ան եղած բանը :

Երրոր ան տեղին անցան՝ Պահուան Ըստին սահման-
ները մնան : Առ ձորը միւսուն երկար էր † . ու նաև այն-

ձակի : Ընորհակալ եղիք Եպությոյ քու սպառազինու-
թեանդ համար , և բնաւ մի հաներ անիկայ քու վրայեղի :

* Սրբի մաօք պէտք է որ կարդանկը ուրիշ հաւատացե-
լոց փորձութիւններուն՝ պատերազմներուն՝ հաւատաքին՝
համբերութեանն ու յաղթութեանը պատմութիւնը :
Եղեկ նկատելու ենք թէ ի՞նչ վերքեր ընդունեցին ու ի՞նչ
զէշ վարժութով ան վերքերուն պատահեցան , որպէս զի
հսկինք և ազօթենք որ ան կերպով մնիք ալ չիյնանք :
Զգուշութեամբ պէտք է քնններ թէ ի՞նչքեւ յաջողակու-
թեամբ մերժեցին փորձիչն զանազան յարձակմներները ,
որպէս զի սովորինք դէմ դնել անոր՝ հաւատրով հաստա-
տուած . և բնդհանրապէս անոնց ըրած յաղթութիւնները
մեզ պիտի կենդանացընեն և վրանիս առնելու Պատությ
սպառազինութիւնը , որ կարող ըլլանք չարութեան օքը
դէմ դնելու : Եփեն . դ . 13 :

† Պահուան Ըստին Զորը կ'երեւոյ թէ կը նշանակէ
ներըն երկիրով նեղութեան պատերազմի և շիոթու-

աղիսի անդ մըն էր ուր որ միշտ չար բաներ կը յաճախելին , ինչպէս որ շատերն աւ այսպէս ըլլալը կը նաև վկայել + բայց առ կնիկներն ու տղաքը աղեկ անցան անկէ , ինչու որ ժամանակը յորեկ էր՝ ու Վաջառիրուր իրենց առաջնորդն էր :

Նըրուր առ ձորը մասն՝ կը թռւեր իրենց թէ մեծ հեծութիւն մը կը լսեին , որ կը նմաներ մեռնելու մարդոց հեծութեանը : Այս կարծեին ևս թէ ողբալի խօսքեր կը լսեին որ իրքեւ թէ անշնարին տանջանաց մէջ եղողներէ կ'ելլին ան խօսքերը : Աս բաները տղաքը դողի սարսափի մէջ ձգեցին , ու կնիկներն աւ այլազունած մոխիր դարձած կ'երեացին + բայց իրենց առաջնորդն ըստ անոնց որ սիրատ առնեն :

Այսպէս քիչ մըն աւ յառաջ գացին , ու կը թռւեր իրենց թէ իրենց տակի դետինը կը սկսէր շարժիլ , իրքեւ թէ խոռոչաւոր անդ մը կար հոն : Այս լսեին ևս օձի ձայնի պէս սուլելու ձայն մը , բայց դեռ բան մը չը երևար իրենց : Աս առենը տղաքն ըստն . Տակաւին առ տրտմաղին անդիս ծայրը չհասանեք : Բայց առաջնորդը կրկին ըստ անոնց որ սիրտ առնեն՝ ու իրենց սաքերուն զգուշանան , որ չըլլայ թէ որովայթի մը մէջ իշխան :

Աս միջոցին Հակոբան սկսեց հիւանդանաւ , բայց կարծեմ թէ անոր պատմառը վախն էր + ուստի իր մայրը Անկնիշին տունը իրեն տրուած օշարակէն քիչ մը տուաւ անոր , ու Պարոն Շարտարամբատին շինած դեղահատերէն երեք հաստ , ու աղան սկսեց առողջանաւ : Այսպէս յա-

թեան վավովսութիւն մը , որ կը ծագի մոքին սաստիկ մթնալին՝ ու հոգեօր վասփարներուն պակսութենէն , որով մարդո քրիստոնէական պարտաւորութիւններուն կը գտի կամակի ու զանոնիք կստարելու սիրտ չունենար + ու ասիկայ բազմապատիկ վախներու վտանգներու ու նեղութիւններու համեայ կը բանայ :

ռազմ դացին մինչեւ որ ձորին զրեթէ կէս տեղը հասան + ու ան առենը Քրիստինէ ըստ . Խնծի կը թուի թէ դիմացը ճամբուն վրայ մեր առջեւը բան մը կը տեսնեմ . այնովսի ձեռվ բան մը որ բնաւ տեսած չեմ ես : Խոչ է ան մայրիկ , ըստ Յովսէփ : Գրաբչելմ բան մը տըզա՞ դարչ չելի բան մը , ըստ Քրիստինէ : Բայց ի՞նչ բանի կը նմանի մայրիկ , ըստ միւսը : Չեմ գիտեր ինչ բանի կը նմանի , ըստ մայրը + ու հիմա շատ քիչ հեռու է մեւնէ : Ենկէ ետե ըստ Պօտեցաւ մեզի * :

Մի հոգաք՝ ըստ Քրաջասիրտը + ով որ շատ կը վախաց թող իմ քովիկս զայ : Այսպէս թշնամին յառաջ կու գար ու ճամբորդներուն առաջնորդը անոր դէմը կ'ելլէր . բայց երբոր ճիշտ անոր գնաց հասաւ , բոլորովին կորուեցաւ անիկայ անոնց աչքին առջեւն : Են առենը մօդելնին բերին առենքը ըստած ան խօսքը , թէ “ Աստանային հակառակ կեցէք , և անիկայ ձեզմէ կը փախչի ” : Յաէ .

Դ + 7 :

Ա ամս որց քիչ մը ողի առնելով յառաջ դացին . բայց շատ չպացած Գիթութիւնն իր ետեր նայեցաւ ու կը թուէր իրեն թէ առիւծի նման բան մը կը տեսնէր , որ արագ ընթացքով մը ետենուն կու զար . ու խորունիւն մննչելու ճայն մը ունէր . ու ամեն մէկ մննչելուն բոլոր ձորը կը հնչեցընէր ու ճամբորդներուն սրտերը կը ցաւցընէր , բաց ՚ի անոր սրտէն՝ որ անոնց առաջնորդն էր : Այսպէս անիւ կայ կը մօտենար , ու Քրաջասիրտը ետ գնաց ու բոլոր ճամբորդները իր առջեն առաւ : Առիւնն ալ սկսեց արագ արագ յառաջ զալ , ու Քրաջասիրտը պատրաստուեցաւ

* Տնշնամնցն փորձութիւններէն յառաջ եկած մօքին զարհուրելի երկիրւզները պատշաճաւոր կերպով կը ցուցին աս նկարագրութեանը մէջ : Երբեմն կը թուի որ հոգին գործութիւն կ'առնէ , և երբեմն կը թուի որ չարը կը մօտենաց :

անոր հետ պատերազմելու : այ Պէտք . է . 8 , 9 : Բայց
առիւծը երբոր տեսաւ որ դէմ պիտի կեցուելը իրեն , ան
ալ ետ քաշուեցաւ ու ալ յառաջ չեկաւ * :

Ասկէ ետև նորին սկսեցին յառաջ երթալ , ու իրենց
առաջնորդը առջևուն կ'երթար , մինչեւ որ տեղ մը եկան
ուր որ ձամբուն բոլոր լանգը փոս մը փորուած էր . ու
մինչեւ որ կարող եղան պատրաստուիլ անոր վրային անց-
նելու , մեծ մշուշ մը ու մէժութիւն մը նեկաւ վրանին ,
սյնարես որ չեն կրնար տեմնել : Ան ատենը ձամբորդներն
ըստն . Եփսնո , ի՞նչ պիտի ընելք հիմ : Բայց իրենց
առաջնորդը պատասխան տուաւ ըսելով . Ո՞ի վախնաց ,
հանդարս կեցէք , ու տեսէք թէ ի՞նչպէս ասոր ալ վախ-
ճանը պիտի դայ + ուստի կայնեցան հօն՝ ինչու որ իրենց
ձամբան արդիլուած էր : Ան ատենը կարծեցին նաև՝ որ
առաւել ես յայտնապէս կը լսեին թշնամիներուն ձայնն ու-
ընթացքը . ու փոսին կրակին ու մուխն ալ շատ դիւրա-
դցն կ'որոշուեր † :

* Ամեն ատեն հարկաւոր է առաքեալիւ աս խրառը ,
“Երթաւն կեցէք , հսկեցէք” : այ Պէտք . է . 8 : Աս
ձանապարհորդները կը հսկէին : Աստանան յանկարծ չե-
կաւ անոնց վրայ . անոր մատենալը կը լսէին , անոր յար-
ձակմանը ատենը պատրաստ են , և աշա Աստանան ետ
քաշուեցաւ :

† Ամենամժշուառ ու անմինիթար ձամբայ մը կ'ունենանք
երբոր առջևնիս փոս մը ըլլայ՝ ու բոլորսիքնիս՝ և մանա-
ւանդ թէ ներսելնիս մշուշը մէժութիւնը պատէ . ու
դժոխը թուի թէ զետնին յատակէն շարժի մեր գէնն
ելլելու՝ և նոյն ատենը մենք ալ անոր խաւարին բնու-
թեանը , բոցակէզ օրէնքին վախերուն , մեղաց ձանաչ-
մանը , ու դժոխըն սարսափներուն Ենթակայ եղած ըլ-
լանք : Ո՞չ այսպիսի նեղութեան ատենը ի՞նչ անպատում
ուղղութիւն է ամենակարող վրկիչ մը ունենալը՝ անոր
հոյելու , և աղատութեան ու փրկութեան համար անոր

ուր + Հիմն կը տեսնեմ՝ ևս թէ իմ խղճալի երիկս ի՞նչ բաներէ անցաւ + շատ անգամ լսեցի ևս աս տեղին վրայակը, բայց հիմն հոս եկաց ու տեսաց ան։ Խեղճ մարդը զիշերով ինքնիրեն մինակ անցաւ առկէ + զրեթէ բոլոր աս ձամբայէն զիշերով անցաւ + ու աս թշնամիներն ալ իր չօրս կողմը առած էին, որ իրքն թէ կտոր կտոր պիտի պատըստեին զինքը։ Կատերը կը խօսին աս տեղին վրայով, բայց մեկը չոխտեր թէ ի՞նչ է Անհուան Կուքին Չորը, մինչև որ անձամբ անոր մէջ չմննէ։ Օարհուրելի բան մըն է հոս ըլլալը * :

Քրանչառերու + Ասիկայ կը նմննի նաւերով ծովը ի՞նչեւու ու մէջ ջուրերուն մէջ գործ գործելու։ Ասիկայ կը նմննի ծովուն խորութեանը մէջ մնալու կամ լեռներուն տակերը իջնելու։ Հիմն կը թուի որ զրեթէ երկիրը իր նիդերովը ջրս կողմերնիս շրջապատած է յաւիտեան։ Բայց անոնք “Որ մութի մէջ կը քալեն, ու բնաւ լոյս չունին + թող անոնք Տէրոջը անուանը ապաւինին, ու իրենց Աստուծոյն կոթընին” † . Խայ + Ֆ + 10 + Խմ կողմննէս՝ ինչպէս որ արդէն ըստ ևմ ձեզի, շատ անգամ ևս աս ձորէն անցաց, ու շատ աւելի դժուարութիւն քաշեցի հոս քան որչափ հիմնա, և սակայն կը տեսնէք որ ողջ ևմ։ Չեմ պարծիր՝ ինչու որ ևս իմ անձիս փրկողը չեմ, բայց կը յուսամ որ քարի ազատութիւն մը պիտի ստա-

կանչելու։ Քանզի ինք “Ոեր աղաղակը կը լոէ, ու կը փրկէ մեղ” :

* Ուրիշներուն հոգւոյն նեղութիւնները լսելո՛ ուրիշ բան է + բայց ան նեղութիւններուն անձամբ փորձառու ըլլալնիս՝ շատ տարբեր բան է :

† Ուրքը Գրքին աս պատուական խօսքը միժութեան ու նեղութեան ամուր խարխիս մըն է հոգւոյն, ու շատ տերուն ալ այնպէս եղած է ան։ Ամրդացող, խորհունի սորիվէ ասիկայ :

Նամեք : Աշկենք աղօթքը ընենք ու լոյս խնդրենք Վակե որ
մեր խառարը կրնայ լուսաւորել , ու ոչ միայն աս թքւ -
նամիները՝ այլ նաև գժոխքին բոլոր սատանաները կրնայ
զսպել :

Ուստի աղաղակեցին ու աղօթքը ըրին , և Վստուած լոյս
ու ապատութիւն խրկեց իրենց • քանզի հիմա ալ արդեւք
մը չկար իրենց ճամբուն վրայ , ոչ ալ ան տեղը՝ ուր որ
քիչ մը առաջ փոս մը կար : Երւ սակայն դեռ ձորին մէ-
ջլն երած չէին : Աւան որոյ տակաւին յառաջ կ'երթա-
յին • և ահա պատահեցան սաստիկ գարշահոտութիւննե-
րու ու զգուելի հոտերու , որ մեծապէս կը նեղացըներ զի-
րենք * : Ես ասենք Կիթութիւնն ըսաւ Կրիստինէին .
Վս տեղս ըլլալը այնչափ հաճելի չէ որչափ որ Կուռը
կամ Անկիշին տունը և կամ մեր վերջի կեցած տունն
ըլլալը :

Բայց պէտք է դիմանալ ըսաւ աղոցը մէկը , որ այնչափ
գէշ չէ ասկէ անցնիլը քան որչափ միշտ հոս մնալը . ու իմ
դիմացածիս նայելով՝ մնզի պատրաստուած տունը երթալը
համար աս ճամբէն անցնելու պարտաւորենուս մէկ պատ-
ճառը աս է որ մեր բնակարանը աւելի քաղցը ըլլայ մե-
զի † :

Աղէկ ըսիր՝ Ամմանէլ , ըսաւ առաջնորդը . կատարեալ

* Կեղութեան տաննեները մեր անարդ ցանկութիւննե-
րուն ու գարշելի վատթարութիւններուն զգուելի հոտերը
մեծապէս կը վշտացընեն ու կը նեղեն ճշմարիս ճամբորդ-
ները :

† Վնչ պատուական խորհրդածութիւն է աս + ասիկայ
մնածէ երբոր խխոտ գէշ ու աղետալի պարագաներու մէջ
ես : Վնոնց սկիզբը սէր է : Վնոնց անողութիւնը կարճ
է : Վնոնց վախճանը փառքով պիտի պակուի : Անը
խառային ու նեղութեան դիշերները աւելի պատուական
կ'ընեն մեզի մեր լուսաւոր և ուրախութեան օրերը :

մարդու պես խօսեցար դուն հիմն : Եթ թէ որ անդամ մը ասկէ դուրս ելեւու ըլլամ՝ ըստ տղան, լոյն ու աղջկ ճանապարհը լաւագոյն պիտի յարգեմ քան որչափ բռլոր իմ կենացս մեջ երբէք յարգած եմ : Են ատենը ըստ առաջնորդը՝ Ըստ շանցած կ'ելենք աս ճամբայէն :

Այսպէս յառաջ զայցին՝ ու Յովսէփ ըստ . Տակաւին չշնոր կընար տեսնել աս ձորին ծայրը : Են ատենը առաջնորդն ըստ . Ոտքերնուդ զգուշացէք, ինչու որ հիմն որոգայթներու մեջ պիտի մանենք ուստի անոնք ուղերժուն կը զգուշանցին , և այնպէս յառաջ զայցին . բայց շատ նեղութիւն կը կրեին որոգայթներէն : Գամք որ երբ որ որոգայթներուն մ.ջուղը եկան , մեկը տեսան՝ որ ճախ կողմին վրայ ինկած փոսը ձգուած էք, ու իր բոլոր մարմինը պատռած ու փառատած էք : Են ատենը առաջնորդն ըստ . Ասիկայ Ենզգոյւ անուն մեկն է՝ որ աս ճամբէն կ'անցնէք . ինք շատոնց հոս ձգուած է * : Ասիկայ բոնուած ու սպաննուած ատենը Օղուշաւոր անուն մեկն ալ կար իր հետը , բայց ան անոնց ձեռքէն փախաւ : Ձեք կընար երեւակացնել թէ որչափ անձինք կը սպաննուին աս տեղուանքը . և սակայն մարդիկ այնպէս անմուարար կը յանդինին որ՝ անխորհրդարար ճամբորդութեան կ'ելեն , ու առանց առաջնորդի կու զան : Ողորմելի՛ Կրիստիանոս . զարմանք է որ ինք աս տեղէս ազատեցաւ . բայց ան իր Եսաուծոյն սիրելին՝ ու արիստիրոտ մարդ էք . եթէ ոչ ամենելին չէք կընար ընել ան բանը :

Աս միջնոցին՝ աս ճամբուս ծայրին մօտեցան , ու ճիշտ ան տեղը՝ ուր որ Կրիստիանոս քարացը մը տեսաւ անկէ անց-

* Ենզգոյւ ընթերցող , մի ար առ : Հաւասարով՝ ձրի փրկուելու վարդապէտութիւնը ամենելին ան մոօքը չէ որ մեզ մարմնաւոր ապահովութեան մեջ քնացընէ : Յօնէ որ զուն անիկայ ան մոօքը կը գործածես , հաստատուն նշան մըն է թէ կեղծաւոր մեկն ես :

Նելուն՝ տեսան որ ան քարայրէն Հակայ մը դուրս կ'ելլէր ,
որուն անունը կը կոչուեր խոշտանգիւ : Աս Խոշտանցիւը
խմատակութիւնով՝ համբակ ճամբօրդները կը մոլորդը-
նէր . ու կանչեց Քաջասիրտը իր անունով՝ ու անոր ըստ .
Քանի՞ անդամ պատուիրուեցաւ քեզի առ բաները չընել :
Խակ Քաջասիրտը հարցուց ըսելով՝ Ո՞ր բաները : Ո՞ր
բաները համ , ըստ Հական . դուն դիտես ո՞ր բաները .
բայց ես քու արհեստից վերջը պիտի բերեմ :

Բայց կ'աղաւըմ՝ կոփեի չպատճ եկոր հասկընամեր թէ
ի՞նչ բանի համար պիտի կոռումնք , ըստ Քաջասիրտը :
Աս միջոցիս կնիկներն ու աղաքը կայսեր կը դողային ու ինչ
ըսելնին չեն դիտեր : Երկիրը կը մերկացընես , ու ա-
մենադէ աւագակութեամբ մը կը մերկացընես դուն անիւ-
կոյց , ըստ Հական : Ասոնք միայն ընդհանուր բաներ
են . մասնաւորներն են եկոր մարդ , ըստ Քաջասիրտը :

Են առենքը Հական ըստ Մարդագողութեան արհեստը
կը բանեցընես դուն . կնիկներ ու աղաքը կը ժողվես դուն՝ ու-
ստար երկիր կը տանիս զանոնք , իմ տէրոջս իշխանութիւ-
նը ակարայընելու : Բայց Քաջասիրտը հիմա պատաս-
խան տուաւ ու ըստ . Ես երկնից Կատուծոյն ծառան եմ .
իմ դործս՝ մեղաւորները ապաշխարութեան յորդորել է :
Խնձի հրամացուած է որ ջանամ երիկ մարդիկ՝ կնիկ մար-
դիկն ու աղաքը խառարէն ըցախ ու Աստանային գորութե-
նէն Կատուծոյ դարձընել . ու թէ որ իրօք աս է քու կը-
ուիլու պատճառը , եկոր շուտ մը ուղածիդ պէս սկսինք
անիկայ * :

* Աս Հական ան նոյն քարայրէն կ'ելլէր՝ ուր որ առաջ-
մանէ կը բնակէին ան երկու հակաները որ յիշուեցան առ
պատճութեանը առջի մասին մէջ 118 երեսը : Աս Հակա-
կան Աւետարանի Հղմարտութեան թշնամին է , ու իր ի-
մասակութիւնովը կ'ուզէ խափառել ու խափանել անիկայ :
Մարդագող կը կոչէ զանոնք՝ որոնք կը յորդորեն երիկ

Ուստի հական յառաջ եկաւ ու Քաջասկրտը անոր դէմն ելաւ . ու երբոր կ'երթար՝ իր թուրը քաշց , բայց հական իր ձեռքը բիր մը ուներ : Այսպէս առանց այլ ևս բան մը խօսելու սկսեցին կոռուիլ : ու հական առջի հարուածով Քաջասիրտը իր մէկ ծնկանը վրայ ձգեց : Կոտր վրայ կնիկներն ու տղաքը սկսեցին կանչուրուել . բայց Քաջասիրտը բնիքնիրեն գալով կորովի զօրութիւնով մը հնարը գտաւ ու հական իր թեևն վիրաւորեց : Այսպէս ժամի մը չափ այնպիսի ուժգնութեամբ կոռուեցան , որ հակացին շունչը կամսային ելած տաք շողին պէս կ'ելլէր իր ոռւնդերէն :

Եսկէ ետե վար նստան յոդնութիւն առնելու . բայց Քաջասիրտը աղօթքի պարապեցաւ : Խակ կնիկներն ու տղաքը բուըր կուիը քշած առենքը ուրիշ բան չէն ըներ՝ հապա կը հառաչէին ու կու լսյին * :

Երբոր հանդստացան ու շունչ առին՝ նորէն սկսեցին կոռուիլ . ու Քաջասիրտը մէկ հարուածով մը զետինը

մարդիկ կնիկ մարդիկն ու տղաքը որ փրկութեան համար ապաշխարութեան զառնան ու հաւատան , ու Երինային Քաղաքն երթալու համբորդներ ըլլան . ու ամբարտաւանութեամբ կը հարցընէ թէ ի՞նչ իշխանութիւնով կը սորվեցընեն ան բաները՝ որոնք նկըն ու իր կուսակիցները միշտ արգիլած են սորվեցընելու : Բայց Քաջասիրտը կը ծանուցանէ անոր՝ թէ իր իշխանութիւնը մարդիկ երկինքը առաջնորդելու երկնից Վասուծոյն կոչմանն ու հրամանին վրայ հիմնուած է , ու նոր անոր ծառան է : հակային ձեռքի բիրը կը նշանակէ աշխարհային զօրութիւնը կամ կառավարութեան ուժը՝ որն որ հալածանք յարուցանողները ձեռք կ'առնեն իրենց կարծիքները հաստատ պահելու համար :

* Վամենէնք քաջ սիրտը չկրնար քաջակիրթ ըլլաւ առանց աղօթքի , ոչ ալ կընայ յաղթել առանց Վասուծոյ ամեւնակարող զօրութեանը :

կործանեց Հսկան : Ուշ , թող տուր որ ելլեմ , կանչեց Հսկան + ուստի Վաջասիրտը ազատ թող տուաւ անիկայ որ ելլե , ու նորէն սկսեցին կռուիլ . ու քիչ մնաց որ Հսկան իր բիրովը պիտի ջախջախէր Վաջասիրտին դադաթը : Վաջասիրտը տեսնելով ասիկայ՝ իր բոլոր կարողութեամբը անոր վրայ վաղեց , ու կողերուն տակէն իր թուրը ազէկ մը խօժեց անոր : Ասոր վրայ Հսկան սկսեց մարիլ , ու ալ չէր կընար բոնիլ իր բիրը : Ան ատենը Վաջասիրտը երկրորդեց իր հարուածը , ու անոր զլուխը իր մարմինէն զատեց : Աս որ եղաւ՝ կնիկներն ու տղաքը ուրախացան , ու Վաջասիրտը փառք տուաւ Ասուծոյ իր յնորհած ազատութեանը համար :

Ասիկայ ըլլալն ետե իրենք արձան մը կանգնեցին ան տեղը , ու Հսկային զլուխը անոր վրայ անցուցին , ու անոր տակը խոշոր զբերով աս խօսքը փորագրեցին որ անցնողները կարդան :

Աս զլուուն տէրը ատենօք մէկն եր՝
Որ ճամբորդները միշտ կը չարչոկէր .
Ճամբան կը բռնէր՝ մէկուն չէր խնայեր ,
Հաղա ամէնն ալ կը բռնարարէր :

Մինչ ես վերջապէս Վաջասիրտս ելայ ,
Ու ճամբորդներուն առաջնորդ եղայ .
Եւ իրենց տեղը անոր դէմ ելայ ,
Յօշնամիներուն հետը կռուեցայ :

Հիմա տեսայ որ անոնք յառաջ կ'երթային՝ մինչև որ քիչ մը հեռուն բարձրկեկ տեղ մը եկան հասան , որն որ շնուռած էր որ ճամբորդները իրենց առջնւն եղածը տեսնեն : Ասիկայ ան տեղն էր՝ ուր որ Վարիստիանոս իր Հաւատարիմ եղբայրը առաջին անզամ տեսաւ : Ուստի աս տեղս նստան և հանգստացան . ու աս տեղս կերան ու խըմեցին և ուրախացան ալ , որ աս խիստ պատակար թշնաւ-

միեւս աղատեցան : Երբոր պյաղէս նստեր կ'ուտելին , Կը-
րիստինէ հարցուց առաջնորդին թէ արդեօք կոխին մէջ
մէկ վէրք մը ընդունեց : Ան ասենը Կահասիրաը պա-
տասխան տուաւ թէ , Չէ , միայն թէ մարմնոցս վրայ
պդոտիկ վէրք մը . և սակայն ան ալ բնծի վնաս մը ըլլալուն
տեղը , իմ Տէրոջո ու ձեր վրայ ունեցած սիրոյս մէկ նշան
մըն է հիմա , ու Վասունցոյ շնորհքովը իմ վարձքիս առել-
նալուն միջոցը պիտի ըլլայ վերջը :

Կը իստինէ . Իսյց չվախցար , բարի Կահասիրա , Եր-
բոր տեսար թէ իր բիրովը կու գար :

Կահասիրա . Իմ պարտաւորութիւնս ան է՝ որ իմ կա-
րողութեանս չապաւինիմ , որպէս զի իմ ապաւինութիւնս
Վասոր վրայ ըլլայ՝ որ ամեննեն զօրաւոր է :

Կը իստինէ . Իսյց ի՞նչ անցաւ մնցէդ երբոր տաջի հա-
րուածովը զետինը զարկաւ քեզ :

Կահասիրա . Կեզի ըսեմ . մատեցի որ իմ Տէրս ալ
սյապէս խոնարհեցաւ . և սակայն բնին էր որ վերչապէս
յաղթեց * : Բ Էտքնէ . Գ . 10 , 11 : Հառմէ . ը . 37 :

Վատնէսս . Երբոր դուք ամէնքդ ձեր ուզածը կը մտա-
ծէք , ես կը խորհիմ որ Վատուած զարմնալի բարու-
թիւն մը ըրաւ մեղի , մեղ աս ձորէն հանելովն ու աս
թշնամնոյն ձեռքէն աղատելովը : Իմ կողմանէս ես մէկ
պատճառ մը չեմ անմեր որ ալ ասկէ ետև թերահա-
ւատ ըլլանք , որովհետեւ Վատուած հիմա և սյապիսի մէկ
տեղ մը իր սիրոյն վկայութիւնը այսպէս յայտնի ըրաւ
մեղի : Վասոր վրայ ելան կայնեցան՝ ու սկսեցին յառաջ-
երթաւ :

Պանք որ քիչ մը յառաջ որ դացին կարնի մը տեսան .
ու երբոր քովը հասան՝ հնն անոր տակը ծերունի ճամբորդ

* Կահասիրա Տէրն մեր առաջ մահուան խոնարհեցաւ ,
ու սյապէս յաղթութիւն ըրաւ :

մը դասն որ խորունկ քունի մէջ էր : Վնոր ճամկորդը լըսալը կը ճանչնային՝ իր զգեստէն, իր դաւազմնէն ու իր զօսիկն * :

Ուստի պարո՞ն Վիաջասիրտ առաջնորդը արթընցուց զանիկայ + ու ծերունին աչքը որ բացաւ աղաղակեց ու ըստ + ի՞նչ է ան, միվ էք դուք, ու ի՞նչ բան ունիք հոս :

Վիաջասիրտ + Աեցիք մարդ, այսպէս մի՛ տաքնար + աս տեղ և զողովեցը ուրիշ մարդիկ չեն՝ բայց բարեկամներ : Եշ սակայն ծերունին ուրի վրայ և լիւլով ինքովնորդը պաշտամանելու նայեցաւ, և կ'ուզէր իմանալ թէ միվ են անոնք : Սն ատենը առաջնորդն ըստ + Խմ անունս Վիաջասիրտ է + ևս աս ճամկորդներուն առաջնորդն Խմ որ երկնային քաղաքը կ'երթան :

Սն ատենը ծերունին՝ որուն անունը Ողջախոհ էր, ըստ + Օմողութիւն կը նորհես + քունս զլուխս ըլլալուն վախցայ որ դուք անոնց ընկերութենէն էք՝ որոնք քիչ մը ատեն առաջ Օմերահաւատին ստակը իր քովէն առին + բայց հիմա կ'իմանամ որ դուք աղեկ մարդիկ էք :

Վիաջասիրտ + Բայց ի՞նչ պիտի ընէիք՝ ու ի՞նչ կը նայիր ընել դուն քու անձիդ, թէ որ մնաք իրաւ ան ընէ կերութենէն ըլլայինք :

Ուշափում + Ուշ, մինչև շունչը հասնելուն կը կոռւէք ու թէ որ այսպէս ընէի՛ աղեկ զիտեմ որ բնաւ պիտի չկը նայիք յաղթել զիս + ինչու որ հաւատացեալը բնաւ չյաղթուիր թէ որ ինք անձնատուր չըլլայ :

Վիաջասիրտ + Աղեկ խօսեցար՝ հայրիկ, ըստ առաջնորդ

* Վակէ կրնանք կարծել թէ կոյին տեղուանք ուր որ ճամկորդները ապահովութեամի կրնային քնանալ + ինչ պէս որ աս ծերունի քրիստոնեային քնանալը չերեար թէ յանցանք մը եղած ըլլայ իրեն :

դը և ասովլ զիտեմ թէ դուն ազնիս սերունդէ ես , ինչու որ շխտակը խօսեցար :

Ողջունիս . Ես ալ ասովլ կը ճանշամ թէ դուն ճշմարիս ճամփորդութեան ի՞նչ ըլլալը զիտես . քանդի ըոլոր ուրիշները ոյնպէս կը կարծեն թէ մենք բոլը ուրիշ մարդոցմէ աւելի շուտով կը յաղթունք :

ՃՐԱՎՈՒՆԻՔ . Ազէ կ . հիմա որ այսպէս բարերադդարբար իրարու հանդիպեցանք , կը խնդրեմ որ քու անունդ ու քու եկած աւեղիդ անունը ինձի ըսելու շնորհք ընես :

Ողջունիս . Ենունս չեմ կրնար զբուցել քեզի . բայց եկայ օժանձրամութեան քաղաքէն , որ Առքանման Քաղաքէն չորս ասաբիճանի չափ անդին կ'իշնայ :

ՃՐԱՎՈՒՆԻՔ . Ի՞նչ կ'ըսես , աս երկրէն ես դուն համ . ուրիմն կարծեմ թէ քիչ մը կը ճանշամ քեզ . քու անունդ ծերունի Ողջախոչութիւն է , այնպէս չե՞ :

Ողջունիս . (ԿՕՖԵԳՈՒՆԲՆ ասոր վրայ կարմնեցաւ ու բառ .) Ու Ողջախոչութիւն վերացեալ մոք՝ սյլ Ողջախոչ է իմ անունս . և կը բաղձամ որ իմ բնութիւնս իմ անունիս հետ համաձայնի : Բայց՝ տե՛ր իմ , ի՞նչոպէս կրոյար իմաւ նալ թէ ես որ այնպիսի տեղի մը կու զամ այսպիսի մարդ մըն եմ :

ՃՐԱՎՈՒՆԻՔ . Առաջմանէ լսեցի ես քու վրայովդ իմ Տերոջմս , ինչու որ ինք երկրիս վրայ եղած ամեն բաները զիտէ : Բայց միտս կը զարմանամ ես երբոր մեկը քու երկրէդ կու զայ . ինչու որ քու քաղաքդ բուն իսկ Առքանման Քաղաքէն ալ գեշ է :

Ողջունիս . Այս . մենք աւելի հեռու կ'իշնանք արեղակէն , և ան որատնառաւը աւելի ցուրտ ու անզգայ ենք : Բայց թէ որ մեկ մարդ մը սատնամանիքէ լեռուն մը մեջ ըլլար՝ և սակայն Արդարութեան Արեգակը անոր վրայ ծառ զէր , իր սառուցեալ սիրտը պիտի վերմանար . և ահա այսպէս եղաւ ինձի ալ :

ՎՐԱՀԱՅԱԿԻՐՊ : Աը հաւատամ՝ հմյր Ողջախոչ , կը հաւատամ . քանզի դիտեմ որ ճշմարիս է ատ բանը :

Են ատենը ծերունին սիրոյ սուրբ համբոյրով բոլոր ճամբորուները բարեկց , ու հարցուց իրենց անունները՝ ու ճամբորդութեան ելելնուն հետեւ ինչպէս կեանքերնին անցընելնին :

Են ատենը ըստ Վրիստինէ . իմ անունս կարծեմ թէ լսած ես դուն + բարի Վրիստիանոսը իմ երիկս էր , ու աս չորսը իր զաւկըներն են : Խոց չ'ո կընար երեակայժել թէ ծերունին բ'աչպէս յափշտակուեցաւ երբոր Վրիստինէ իր ով ըլլալը զբուցեց անոր : Աը ցաթկիր՝ կը խնդար՝ ու հազարումեկ բարեմաղթութիւններ ընկլով կ'օրհնէր զանոնք ու կ'ըսէր . Ըստ լսեցի ես քու երկանդ վրայով , ու ան նեղութիւններուն ու զատերազմներուն վրայով՝ որոնց ները իր օրերուն մէջ հանդիպեցաւ : Վրու միոիթարութեանդ համար կ'ըսէմ որ քու երկանդ անունը աշխարհի ամեն աս կողմները հռչակուած է : Իր հաւատաքը՝ իր արիութիւնը՝ իր համբերութիւնն ու ամեն բանի մէջ իր անկեղծութիւնը համբաւաւոր ըրբն իր անունը : Եսկէ եսեւ աղջը դարձաւ՝ ու անոնց անունները հարցուց , անոնք ալ զբուցեցին իրեն : Են ատենը ըստ անոնց . Վաստիսու , մաքսաւոր Վաստիսոսին նման եղիր դուն՝ ոչ մնլութեամբ , հապա առաքինութեամբ : Վաստի . 3 . 3 : Ամանեւէլ , Ամանէլ մարգարէին նման եղիր՝ հաւատացեալ ու աղօթամէր : Ատու . ոյթ . 6 : Յանկիփ , Յովէ սէփին՝ ներքինին տունը եղածին պէս եղիր՝ պարկեցաւ , ու փորձութենէ փախչող : Յօմադ . լթ : Եւ դուն Յակուրոս , արդար Յակուրոսին՝ ու Տեառն եղասյր Յակուրոսին նման եղիր : Գառծ . առ . 13 , 14 : Եսկէ եսեւ Գրեթութիւնին վրայով իրեն պատճեցին , և թէ լինչպէս ինքը իր երկիրն ու աղջականները ձգեց՝ Վրիստինէին ու իր աղջը հետ դալու համար : Ու Ողջախոչ ծերունին ը-

սաւ + Տիու անունով Գյշութիւն է + ու գյշութիւնով սլահի պահպանուխու ու տարրուխ ճամբռուղ վրայ քեզի պատահելու ըոլոր դժուարութիւններուն մեջն, մինչև որ երթաս հոն՝ ուր որ գյշութեան Ազքիւրը միսիթարութեամբ երես երեսի տեսնեա : Իուրը աս միջոցիս՝ Պատրին Քաջասիրտ առաջնորդը ինտում երեսով իր ընկերներուն կը ցուցըներ աս խօսքերուն վրայ ունեցած իր մեծ հաճութիւնը :

Երբոր սյոսէս ամենը մեկտեղ կը քալէն՝ առաջնորդը աղջուական ծերունուցն հարցուց՝ թէ արդեօք կը ճանչնանց Երկիւղած անուն մեկը որ իր տեղէն ճամբռորդութեան ելեր էր :

Այս, շատ աղէկ կը ճանչնամ՝ ըստ միւսը : Անիկայ մեկ մարդ մըն էր՝ որ Աստուծոյ շնորհը իր ներսն ուներ + բայց իմ բոլոր օրերուս մէջ անոր պէս խիստ ձանձրավէ ճանապարհորդի մը չպատահեցայ ևս * :

Քաջասիրդը + Վիմանամ՝ որ գուն աղէկ ծանօթ: ևս իւրին + ինչու որ իր ստոյդ նկարագրութիւնը յառաջ բերիր դուն :

Ողջակուն . Օչանօթ ըլլան ալ խօսք է + ևս անոր սերտ բարեկամն էի + սեղէ թէ միշտ անոր հետն էի ևս + Երբոր ինք նախ և առաջ սկսեց խորհիւ ասկէ ևտե. մեզի ինչ պատահելուն վրայ ևս իր հետն էի :

* Երկիւղած ճանապարհորդները թէ ապէտ և անձամբ նեղութեան մեջ են և ուրիշներուն ալ նեղութիւն են, բայց և այնպէս արժանի են սիրուելու ու քաջալերուելու, որով հետեւ իրենց ներսը ունին բանին արմատը . այսինքն՝ Յիւսուսի վրայ հաւաքք, Աստուծոյ վրայ սէր, անիկայ բարեկացնելու երկիւղ, ու անոր ճամբռաներուն մեջ քալէլու և անիկայ հաճեցընելու փափաք : Այսպիսիներուն նեղութեանները պէտք է որ կրենք, ու անանկ Քրիստոսի օրենքը կատարենք : Գյաղ. դ. 2 :

ՎՐԱՅՈՒԹԻՒԹ • Եմ Տերոջ առւնեն մինչև Երկնային քառակին դուռը ես իր առաջնորդն էի :

ՈՂՋՈՒԹԻՒՆ • Յօն որ այնպէս է դիտես որ ինք ձանձրալի մէկն էր :

ՎՐԱՅՈՒԹԻՒԹ • Այս դիտեմ, բայց շատ դիւրաւ կը համբարերէի իրեն • քանզի իմ պաշտօնս ունեցող մարդոց շատ անդամ անոր պէս կենցաղավարութիւն ունեցողները կը յանձնուին :

ՈՂՋՈՒԹԻՒՆ • Ուրեմն կը խնդրեմ որ քիչ մը բան պատճես մեղի անոր վրայովը, և թէ քու առաջնորդութեանդներքի լնչալիս կառավարեց ինքպինքը :

ՎՐԱՅՈՒԹԻՒԹ • Խնչալիս • միշտ կը վախճար որ իր երթաւլու բաղձացած տեղով պիտի չհասնի : Յօն որ մէկը խօսք ընկը բանի մը վրայ՝ որ իրեն քիչ մը հակառակ երեար, ըստին պէս կը զարհուրէր : Լսեցի որ լնան ամիսէ մը աւելի ԱՀատութեան Փոսին մօտերը մնացեր եր աղաղակ կելով : ոչ աւ իր առջեւն խել մը ուրիշներուն անցնիլը տեսնելուն վրայ համարձակեր եր ինքն աւ անցնիլ, թէ և անոնցեւ շատերը ձեռք տալ ուզեր են իրեն : Եւ տակաւնն ետ երթաւլ չը ուզեր : Արսէր թէ Պիտի մեռնիմ թէ որ Երկնային քաղաքը չհասնիմ : և սակայն ամեն մէկ գժուարութեան պատահելուն կը բանէր, ու իր համբուն վրայ ու ե իցէ մէկուն ձգած ամեն մէկ շիւրին կը դլորէր : Գանձք որ՝ լնչալիս որ քեզի բաի, ԱՀատութեան Փոսին քութը խել մը ատեն մնալին ետեւ մէկ պայծառ առտու մը չեմ զիսեր թէ լնչալիս համարձակեր ու միւս կողմը անցեր և բայց անցնելին ետեւ հազիւ թէ կը հաւատաց եղեր անոր : Ար կարծեմ որ ինքը իր մորին մէջ ուներ ԱՀատութեան Փոս մը • փոս մը՝ որ իր հետը ամեն տեղ կը տանէր • և թէ ոչ՝ այնպէս պիտի չըլսար լնչալիս որ եր : Այսպէս ինք դուռը հասեր է որ կը կենաց աս ձամբուն դլուխը, ու հոն աւ զարթնելու համարձակելին առաջ

իսել մը ատեն կայներ է . Դուռը բացուելուն ես կեցեր է , և ուրիշներուն թող տուեր է մտնել , ու ըսեր է թէ ինք արժանի չէ : Քանզի թէպէտ և մէկ քանիներէն առաջ դուռը հասեր է , բայց անոնցմէ շատերը իրմէն առաջ ներս մտեր են : Հան կայներ է խեղճ մարդը՝ դողալով ու սարսափելով . կրնամ ըսել որ զինքը հոն տեսնելը մէկուն սիրաը պիտի կոկծը լունէր : Այսու ամենայնիւ չէ ուղեր ետ երթալ : Այսրնապէս դրանը վրայ կախուած ուռը ձեռքը բռներ ու մէկ կամ երկու անգամ կամ մաց մը զարկեր է . ան ատենը մէկը բացեր է դուռը , բայց ինք առաջուան պէս դողալով ետ կեցեր է : Խակ դուռը բացողը իր ետեւն գուրա ելքը ու ըսեր է՝ Ո՛վ դողադրացող մարդ , ի՞նչ է քու ուզածդ : Ասոր վրայ ինք զետինն ինկեր է : Եր հետը խօսողը անոր այսպիսի մարդիլու տեսնելուն՝ զարմացեր է . ուստի ըսեր է իրեն . Խաղաղութիւն քեզի . ելիք կանոնէ , ինչու որ ահա ես դուռ բացի քեզի . ներս եկոր՝ ով օրհնեալ հոգի : Ասոր վրայ մարդը ոտք ելքը ու դողալով ներս մտեր է , ու երրոր ներս գացեր է՝ ամշցեր է իր երեսը ցույցընելու : Հան ատեն մը ան տեղի սովորութեանը պէս հիւրասիրութիւն քնդունելին ետեւ՝ հրամացուեր է իրեն իր ձամբան երթալ , ու նաև ըսուեր է իրեն իր բռնելու ձամբան : Այսպէս ինք յատաջ գացեր է՝ մինչև մեր տունը գալը . բայց ի՞նչ որ ձամբուն զիսու գուռը ըրեր է , նոյնը ըրեր է նաև իմ Տէրոջ Վեհիսէնն դուռը : Հան դուռը զարնելու համար ձակելին առաջ խել մը ատեն ցուրտուն վարաներ մնացեր է , և սակայն չէ ուղեր ետ երթալ . ու ան ատենը զիշերներն ալ երկան էին ու ցուրտ : Վանաւանդ որ՝ իր ծոցը յանձնարարական զիր մըն ալ ունի եղեր իմ Տէրոջս բերած՝ զինքը ընդունելու , ու իր տանը բարիքները իրեն չնորհելու , ու նաև քաջ ու դորաւոր առաջնորդ մը տարու իրեն՝ իր այսպէս երկւոտ ըստուն համար . և սակայն

բոլոր անոնց վրայ տակառին վախցեր է գուռը զարնելու : Եւյսպէս ան տեղուանքը վեր ու վար անտընացեր է , մինչեւ որ խեղճ մարդը դրեթէ սովամահ ըլլալու հասեր է . իրաւ որ այնպիսի մեծ երկիւղի մէջ է եղեր՝ որ թէպէտիլը տեսնէ եղեր որ շատ ուրիշները դուռը զարնելովիսին ներս կը մանեն , բայց ինք վախցեր է նոյն բանն ընելու համարձակիլ : Աշբջը՝ կարծեմ թէ պատուհանէն զուրս կը նայեի՛ ու մէկ մարդ . մը տեսնելով որ դրանն առջեր վեր ու վար կը պարակէր , դուրս զացի իր քովը , ու հարցուցեթէ մէջ է . բայց խեղճ մարդուն աչքերը արցունքով լիւցան . ուստի խմացայ թէ ինչ էր իր կարօտութիւնը : Աշան որոյ ներս զացի՝ ու տանը մէջ պատմեցի ան , ու մեր Տէրովը իմացուցինք բանը + ուստի ինք կրիին զուրս խրկից զիս անիմկայ ներս հրաւիրելու . բայց կարծեմ թէ շատ զժուարութիւն քաշեցի մինչեւ որ աս բանն ըրի : Աշերջապէս ներս եկաւ . ու քեզի ըսեմ որ իմ Տէրս զարմանալի մարդարիրութիւն ցցց տուաւ իրեն : Անզանին վրայ միայն քանի մը լու պատառներ կային , բայց անոնց շատը իր առջեր դրուեցան : Ենիէ ետև իր զիրը հանեց տուաւ , ու իմ Տէրս անիմկայ կարդաց ու ըսաւ թէ իր բաղձանքը պիտի կատարուի : Եւյսպէս երբոր ինք խել մը առեն հան կեցու՝ կ'երեւար թէ քիչ մը սրտոտեցաւ , ու քիչ մը առելի միսիթարուեցաւ : Խնչու որ պէտք է զիանաս որ իմ Տէրս խիստ զորովագութ մէկն է , մանաւանդ անոնց որ վախկոտ են . ուստի այնպէս վարուեցաւ իր հետը որ խիստ կը նպաստէր իր քաջալքրութեանը : Երդ՝ երբոր ան տեղի բաները ինք տեսաւ՝ ու քաջարը երթալու համար իր ձամբորդութիւնն ընելու պատրաստ էր , իմ Տէրս շիշ մը օշարակ տուաւ իրեն՝ և քանի մը զօրացուցիչ ուտելիքներ : Եւյսպէս ձամբայ ելանք իր հետը ու ես իր առջեւն կ'երթայի . բայց մարդը խիստ սակաւախօս մէկն էր + միայն բարձր ձայնով կը հառաւէր :

Նըրբոր եկանք ան տեղը՝ ուր որ երեք չարագործներ կախուած էին, ըստ թէ՛ կը վախնաց որ իր վերջն ալ այնպէս պիտի բլաց : Միայն ան ատենը ուրախ երեցաւ՝ Նըրբոր խաչն ու Գերեզմանը տեսաւ : Աը խռատվանիմ որ հոն ինք ուզեց քիչ մը կայնիլ նայիլ • ու անիկ ետեցիչ մը ատեն ուրախ կ'երեւար : Նըրբոր Դմուարութեան ընուը եկաւ՝ տարակուսութիւն մը չցուցուց անոր վրայ, ու առիւծներէն ալ շատ շվախցաւ • ինչու որ պէտք է զիանաս որ իր նեղութիւնները ասոնց պէս բաներու վրայ չեն : Ժկայն ան եր իր վախը թէ վերջապէս ընդունելի պիտի բլաց :

Գեղեցիկ կոչուած տունը երթայնուա՝ կարծեմ թէ ինք գեռ կամք չըրած ներս խօթեցի ևս զինքը : Ու երբոր ներս զնաց՝ ան տեղի օրիորդներուն ծանօթ ացուցի զինքը, բայց ան ինքդինքը ընկերութեան մէջ շատ խօթելու կ'ամըշնար : Ըստ կը փափաքէր մինակ մնաւ, բայց միշտ կը սիրէր աղէկ խօսքերը՝ ու շատ անդամ վարագուրին ետեւը կը մտնէր անոնք լսելու : Հին բաներ տեսնելը՝ ու իր մտացը մէջ անոնց վրաց որոճալը ևս կը սիրէր : Խը յետոյ ինձի զուուցեց՝ թէ կ'ուզէ եղեք իր վերջն եկած ան երկու տունները աւելի մնաւ, այսինքն՝ ճամբուռն զլբան զուռն ու Մեկնիչին տունը, բայց այնչափ չէ համարձակեր որ աս բանը խնդրէ :

Նըրբոր Գեղեցիկ տուննեն ելանք ու լեռն 'ի վար խոնարհութեան Զորը կ'իջնենիք, այնպիսի զուարձութեամբ կ'իջներ՝ որ կենացս մէջ մարդ մը չտեսայ այնպէս հոն իջնող : ինչու որ հողը չեր իր որչափ նուաստ ըլլալը՝ թէ որ վերջապէս երջանիկ պիտի բլաց : Խրաւ որ ինձի կը թուի որ ան ձորին ու իր մէջը մէկ կերպ համարձութեանը մը կար, քանզի իր բոլոր ճամբորդութեանը մէջ ընաւ տեղ մը աւելի աղէկ չտեսայ ոլինքը քան որչափ որ եր աս ձորին մէջ :

Աս տեղ ինք երեսի վրաց կը պառկէր՝ գետինը կը դըր-

կեր՝ ու աս ձորիս մէջ բռւսած ծաղկիները կը համբուրեր : Ո՞ք + դ + 27-29 : Աս տեղ հիմա ամեն առողու արշալու սին կ'արթըննար , ու ձորիս մէջ անդին ասդին կը քալէր ու կը պարտէր :

Խայց երբոր Պահուան Ըուրին Զորը մանելու եկաւ , կարծեցի թէ իմ մարդու պիտի կորանցընեմ , չէ թէ որ ետ դառնալու հակամիտութիւն մը տնէր՝ ինչու որ աս բանէն միւս կը գործէր + հապա որ վախնալուն զըեթէ կը մեռնէր : Ո՞չ՝ ուրուական հոգիները զիս պիտի բռնեն , ուրուական հոգիները զիս պիտի բռնեն կը կանչէր + ու չէի կրնար աս վախը իր վրայէն մէկդի ընել : Այսպիսի ձայն մը կը հանէր ու այնպէս կը գոչէր հոն + որ եթէ լսելու ըլլային՝ բաւական քաջալերութիւն պիտի ըլլար իրենց , ու աւ ու մեր վրայ յարձակիլ :

Խայց ասիկայ աղէկ նկատեցի որ աս ձորը այնչափ խաղաղ էր մեր անկէ անցած ատենը՝ որչափ որ երբէք անկէ առաջ կամ՝ մինչև հիմա տեսեր էի անիկայ : Կարծեմ թէ աս տեղի թշնամիները ան ատենը յատեկալէս սանձահարուած էին , ու Պարոն Երկիւղածին մինչև անկէ անցնելուն՝ հոն չերեալ հրամայուած էին :

Չափազանց ձանձրութիւն պիտի ըլլայ ամենը պատմելու + ուստի միայն մէկ երկու դիպուած ալ յիշատակենք : Երբոր Ունայնութեան Տօնամանուը եկաւ , ես կարծեցի որ տօնալաճառին մէջի բոլոր մարդոցը հետ պիտի կուտէր + վախցոց որ հոն երկուքիս ալ զլուխը պիտի ջախջախն : ինչու որ ինք սաստիկ տարցաւ անոնց յիմարութիւններուն վրայ : Կախարդեալ Երկրին վրայ շատ արթուն էր ինք + բացց երբոր ան առանց կամուրջի զետը եկաւ , հոն դարձեալ ծանր վիճակի մը մէջ ինկաւ : Արտէր թէ չի մահի ման յաւխտեան պիտի խեղղուխմ , ու միսիթ արութեամբ ընտ պիտի շտեսնեմ ան երեսը՝ որուն տեսութեանը համար այնչափ մղոն տեղ եկած էմ :

* Եակ մէկ խիստ նշանաւոր բան մը նկատեցի առ տեղս * զետին ջուրը առ անդամին առելի ցած էր քան որչափ երբեք տեսած էի ան՝ իմ բոլոր կենացս մէջ . այնպէս որ վերջապէս ջուրը կօշիներէն շատ վեր չելած անկէ անցաւ : Երբոր վեր կ'ելեք դէպ՚ի գուռը , սկսեցի ևս հրաժարական ողջյնս իրեն տալ , ու մազթել որ վերը բարի ընդունելութիւն գտնէ : Ու ինք բառա՞ պիտի գտնեմ : Ենիկ ետե իրարժէ զատուեցնիք , ու ալ չտեսայ զբարը † :

Ու ջանիս . Ու ըեմն կը թուի թէ վերջապէս բարի եղաւ իրեն :

*Բառջանիքը . Այս՝ այս , ամեննեին տարակոյս մը ունեցած չեմ ասոր վրայ : Ինք ընտիր ոգւոյ տէր մարդ մընէր + միայն թէ միշտ շատ խոնարհ կը կենար , ու ասիկայէ որ իր կեանքը այնչափ անտանելի կ'ընէր իրեն , ու այնչափ ձանձրալի ուրիշներուն : Սազմ + ձը : Ինք շատերէն առելի կը զգուշանար մեղքէն + այնպէս կը վախնար ուրիշներուն վեստ ընելէն՝ որ շատ անդամ օրինաւոր բաներէն ինքպինըը կը դրէլու , ինչու որ չէր ուղիք զայթակղութիւն տալ . Հառմ + Ժդ . 21 : ա Կորնի + լ . 13 :

Ու ջանիս . Բայց * ի՞նչ պատճառաւ այսպիսի աղեկ

* Ո՞վ ո՞րչափ բարեշնորհ է մեր Տէրը : Ճանապարհորդ եղայցը , Վու ուժդդ քու օրերուդ չափ պիտի ըլլայ : Ի Օքն . Լդ . 25 :

+ Մտադիր ընթերցողները ընդհանրապէս պրանչացած են Երկիրազածին նկարագրութեանն ու պատմութեանը վրայ : Օերահաւասոր՝ որ առաջին մասին մէջ յիշուեցաւ , վաստավիրտ ու կասկածուտ մէկն էր + ու ասանկով յանցանք ձգեց իր վրան՝ ու կորանցուց իր մխիթարութիւնը . բայց Երկիրազածը մարմնոյն բոլոր իրեն ընելիքէն առաւել կը վախնար մեղք զործելէն , ու Երկիրէն յետնեալ գտնուելէն :

մարդը բոլոր իր օրերուն մէջ այսչափ մշտովեան մէջ պիտի մնար :

Վաղարշիկով . Այստօնառն ան է որ ամենիմասսն Վասուած այնպէս կամքիր էր . ունանք պէտք է որ փող հնչեցընեն , ու ունանք պէտք է ողբ կարդան : Մատիլ + Ժան 16-18 : Սրդ՝ Պարոն Խրկիւզածը այնպիսի մէկն էր որ միշտ բամբ ձայնով կը նուագէր : Վարդն ու իր ընկերները եղեղնափող կը փէլին , որուն եղանակները ուրիշ նուագարաններուն եղանակներէն աւելի ողբաձայն են . թէպէտ և ունանք իրաւ կ'ըսնեն թէ բամբ ձայնը նուագարաններուն հիմն է : Ու թէ որ բնծի կը հարցընես , ոչինչ է ան դաւանութիւնը որ վախով ու տրտութիւնով տկիր : Քանդի երածիշտարը կ'ուղի կը ուղարկանին թէլերը ներդաշնակութեան դնել , սովորաբար նախ բամբաձայն լարին կը զարնէ : Վասուած ևս երրոր հոգին՝ իրեն համար ներդաշնակութեան դնէ , առաջ աս լարին կը զարինէ : Միայն թէ Պարոն Խրկիւզածին պակսութիւնը ան էր՝ որ մինչեւ իր կենացը վախճանին մօտենալուն միայն ան ողբաձայն եղեղնափողը դիտէր նուագէլ * :

Ալջնիոն . Շատ նախանձաւոր մարդ եղած պիտի ըլլայ ինք , ինչպէս որ իր վրայովը քու ըրած պատմութիւնեղ մարդ կընայ իմանալ : Դժուարութիւններէն առխւծներէն՝ կամ Ունայնութեան Տօնավաճառէն բնը ամենեին չէ վախցիր . միայն մեղքը՝ մահն ու դժոխը դողացուցիր եւ

* Հեղինակը հոս աս ծանօթութիւնը կը դնէ : Վս այլարանութիւնը ընել կը համարձակիմ համբակ ընթերցողներուն մասացը հասուննալուն համար , նաև որ Հայունութեան դրքին մէջ փրկեալները նմանցուած են երաւ ժիշտներու դասի մը՝ որ իրենց փողերն ու քնարները կը հնչեցընեն ու աթոռին առջւը իրենց երգերը կ'երգեն : Ըստու . Է . 8 , 9 : Ժղ . 2 , 3 :

դիմուրը, ինչու որ Երկնացին Քաղաքը համեմլուն վրայով քանի մը երկրացովթիւններ ունի եղեր ինք * :

Քաղաքականություն + Շմարիտ կը խօսիս . աս բաներն էին որ զինքը կը նեղէին . ու անոնք՝ ինչպէս որ աղէկ ըստր դուն իր մոտացը տկարութենէն յառաջ կու դային , ու չէ թէ համբորդութեան կեանք վարելու սիրտ շունենալն : Ես այնպէս կը հաւասարմ* որ ան առակիննաման թէ որ կրակի անձրւ ալ իջներ , պիտի երթար ինք . բայց բնաւ մարդ մը տակաւին կրցած չէ դիւրութեամբ իր վրայէն թօթուել ան կերպ բաները որով ինք նեղութիւն կը կրեր :

Դիմուրինե . (Վար վլայ Կրիստինէ ըստ .) Ես պատմութիւնը որ Պարսն Երկիւղանին վրայ ըրիք , ինձի օգուտ ըրաւ . ես կը կարծէի որ մեկը ինձի ովես եղած չէր : Վայց կը տեսնեմ որ աս բարի մարդուն ու իմ մէջս մէկ նմանութիւն մը կաց . միայն երկու բանով իրարմէ կը տարբերինք : Իր նեղութիւնները այնպէս մնջ էին որ յայտնի եղան , բայց ես իմիններս իմ ներսս կը պահեմ : Այս իրենները այնպէս ծանրացան իր վրայ՝ որ հիւրընկալութեան համար պատրաստուած տունները համեմլուն , թող չտուին իրեն անոնց դռները զարնելու . բայց իմ նեղութիւնս միշտ այնպէս եր որ աւելի ուժգնութեամբ զարնել կու տար ինձի :

Դիմուրինե . Յօնէ որ կարելի ըլլար որ ես ալ իմ սրտինս խօսեի , ովետք է զրուցեմ որ իր վրայի բաներուն մէկ քանին ալ իմ վրաս եր : Ինչու որ միշտ աւելի կը վախճայի թժորիքը երթարէն ու դրախտին մէջ իմ աւելի ուժգնութեամբ զարնել կու տար ինձի :

բան կ'ըսէք , ու միւսն ուրիշ բան մը : Ա երջը Պարոն Կաջասիրան ըստ : Ըստ անդամ՝ ևս ճամբորդներու առաջնորդութիւնը ըստ եմ՝ աս քաղաքին մէջն՝ ինչպէս որ կարծեմ լսած էք : Արդ՝ մէկը կը ճանշամ՝ ևս Վ՞նասոն անունով որ Ախորացի է ու առջի աշակերտներն մէկն է . կրնակը անոր քովը կենալ : Գարդ . իսա . 16 : Յօհէ որ աղէկ կը թուի ձեզի , հոն իջնենք :

Ըստ աղէկ՝ ըստ ծերունի Ողջախոհը . շնոր աղէկ՝ ըստ Կրիստինէ , շնոր աղէկ՝ ըստ Տկարամիտը . ու այսպէս ըստն ուրիշներն ալ : Հիմա պէտք է գիտնաք թէ մինչեւ որ անսնք քաղաքին դուռը հասան իրի կուան մուգը կոխնց + բայց Պարոն Կաջասիրաց ծերունի մարդուն տանը ճամբան դիտէք : Ուստի հոն եւ կան + ու Կաջասիրաց դրանն առջնը ձայն հանեց , ու ծերունին ներսէն լսածնն պէս անոր ձայնը ճանչցաւ . վասն որոյ դուռը բացաւ՝ ու ամէնը ներս մտան : Ան ատենը Վ՞նասոն՝ իրենց վանասուրն ըստ + Ո ըշափ ճամբայ քաւլցիք այսօր : Անոնք ալ ըստն . Վնոր բարեկամին Գայիուսին տունէն մինչեւ հոս : Խրաւ կ'ըսեմ ձեզի ըստ ծերունին , աղէկ ճամբայ առեր էք . խիստ յոդնած պիտի ըստք + նստեցէք : Անոնք ալ նստան * :

Ան ատենը իրենց առաջնորդն ըստ . Ակէք նսցինք Բնչպէս էք հիմա՝ հիւ պատուական ընկերներ . իմ բարեկամին կողմանէ ես ձեր գալուստը կը բարեւեմ :

Ես ալ կը բարեմ ձեր գալուստը ըստ Պարոն Վ՞նասոնը . ու ի՞նչ որ կ'ուզէք աղատաբար ըսէք , ու կրցածնիս պիտի ընենք ձեր ուղածը դանելու :

Ունախոն . Կիւշ մը առաջ մեր մեծ կարօտութիւնն էք :

* Վնչ մեծ բարիք մըն է Ունայնութեան Տօնալաճառին մէջ տուն մը գտնել՝ որուն տէրը ճանապարհորդներն ընդունի ու զանոնք պատուասիրէ :

իջեան մը ու աղէկ ընկեր + ու հիմա կը յուսամ՞ որ երակուքն ալ ունինք * :

Մասսան . Խջեանին ինչ ըլլալը կը տեսնէք + բայց աղէկ ընկերը փորձի մատուելուն պիտի երևայ :

Աղէկ ըստ Կահասիրտը + աս ճամբորդները իրենց տեղը կը տանի՞ս :

Եյ՞ ըստ Մասսան : Ուստի անոնց ամեն մէկն իր տեղը տարաւ , ու նաև գեղեցիկ սեղանատուն մը ցոյց տուաւ անոնց՝ ուր որ պիտի իրիկուան կերակուրը մէկտեղ ուտէին , և հոն նատէին մինչեւ որ պառկելու ատենը դար :

Երդ՝ երբոր իրենց տեղերը նատան՝ ու իրենց ճանապարհորդութենէն ետև քիւ մը յոդնութիւն առին , Պարոն Ողջախոնչը իր վանատուրին հարցուց թէ արդեօք քաղաքին մէջ բարեպաշտ մարդիկ կը գտնուի՞ն :

Մասսան . Կիւ անձինք ունինք + քանզի արդարեւ քիւ են անոնք՝ երբոր միւս կողմէն մարդոց հետ բաղդատուին :

Ոռջախոն . Կը նըլքէս ընենիք որ անոնց մէկ քանիները տեսնենք + քանզի ճամբորդութեան դացողներուն՝ աղէկ մարդոց երեցիթը , կը նմանին լուսինին ու աստղերուն երեցիթին՝ որ կ'երեւայ Ովելիանոսին վրայ նաւարկողներուն † :

Մասսան ան ատենը իր ոսքը գետինը զարկաւ՝ ու իր աղջիկը՝ Ընորհը վեր եկաւ : Ուստի ըստ անոր + Ընորհք , զնամ իմ բարեկամներուս Պարոն ինեկեալ

* Մեր ամեն պակսութիւններուն մէջ մեր հօրը Երբահամին հետ կընանք ըսել , Աստուած պիտի պատրաստէ : Ծանոթ + իր + 8 :

† Մինչեւ անգամ ան բաղմամարդ քաղաքներուն մէջ՝ ուր որ ունացնութիւնը շատ տիրապետած է և ուր որ հաւածումը երբեմն խիստ կը սաստկանաց , ընդհանրապէս ճշմարիտ քրիստոնէից մնացորդ մը կը գտնուի , ու հաւատացեալները ամեն տեղ այսպիսի անձերը պիտի վնասուն ու անոնց հետ ընկերանան :

Արքան՝ Պատրիարքակայցին՝ Պատրոն Արքասերին՝ Պա-
րոն Սուսակն Ա ախցողին ու Պատրոն Առաջխարողին, ըսէ
թէ մէկ երկու բարեկամ ունիմ իմ տունս՝ որոնք աս իրի-
կուն կ'ուզեն դիմենք տեսնել: Ուստի Ընորհքը զնաց
զանոնք կանչելու, ու անոնք եկան: ու իրար բարեկելէն
եաւ մէկտեղ նստան:

Ծետոյ Պատրոն Առաստոն՝ իրենց վանատուրն ըստաւ:
Դրացիներ, իմ տունս քանի մը հիւրեք ունիմ ևս ինչ-
պէս որ կը տեսնեք: ասոնք ձանապարհորդներ են: հեռու
տեղէ կու դան՝ ու Արքան ըստը կ'երթան: Բայց ով կը
կարծեք ըլլաւ աս՝ ըստ ինք, իր մատովը Վրիստինէն
ցուցընելով: Ասիկայ է Վրիստինէ ան հռչակաւոր ձա-
նապարհորդին Վրիստիանոսին կինը, որ իր եղբօրը գա-
ւատապիմին հետ մեր քաղաքին մէջ այնպիսի խայտառա-
կութիւն կրեց: Աս խօսքին վրայ զարմանալով ուսքի վրաց
եկան անոնք՝ ու ըսին: Նրբոր Ընորհքը եկաւ մեզ կան-
չելու, մարերնուս շանցաւթէ Վրիստինէն պիտի տեսնենք:
անոր համար ասիկայ անակնկալ միսիթարութիւն մըն է:
Վնիկ ետև անոր ինչպէս ըլլալը հարցուցին, ու նաև թէ
Արդեօք ան սպատանիները Վրիստիանոսին որդինելին են:
Ու երբոր ըստ անոնց թէ անոր որդիներն են, ըսին: Ժմա-
դաւորը՝ որն որ դուք կը սիրեք ու իրեն կը ծառայեք, ձեր
հօրը պէս ընէ ձեզ, ու խաղաղութեամբ անոր եղած տեղը
հասցընէ ձեզ *

Նրբոր նորէն նստան՝ Պատրոն Ողջախոհը հարցուց Պա-
րոն Խեկեալ Արքան ու միւսներուն թէ հիմն իրենց քա-
ղաքը ինչ զիհակի մէջ է:

Դեմու Արքուն: Անշուշտ պիտի զիտնաս որ տօնալանա-
ովն ատենը մեծ աղմուկի մէջ ենք մենք: Վրժուարին է

* Պատուական բարեմաղթութիւնն մըն է աս՝ ամենալաւ
բարութիւններու համար:

մեր սրտերն ու հոգիները բարեկարդութեան մէջ պահել՝ երբոք մենք շիտթաւթեան մէջ ենք : Այսպիսի տեղ ապրողը՝ ու այսպիսի մարդոց հետ կենցազավարողը խրատի կը կարուի՝ որ սորմեցընէ անոր ամեն մէկ բռակէ դժոյշ կենալ :

Ողջակուն . Իայց ձեր դրացիները ի՞նչպէս են հիմա . ձեզ խաղաղ կը թողմէն :

Նեթուալ Արք . Եւելի կակուղած են անոնք հիմա՝ քան որչափ առաջ են : Գիտես թէ Կրիստիանոսին ու Հաւատարիմին հետ ինչպէս կը վարուենին մեր քաղաքին մէջ . բայց աս կ'ըսեմ՝ որ մօտերս շատ աւելի կակուղած են անոնք † : Արծեմ թէ Հաւատարիմին արիւնը մինչև հիմա իրքեւ բեռ մը եղած է իրենց վրայ . վասն զի քանի որ զինքը այրեցին՝ կ'ամշնան ալ մէկ ուրիշ այրելու : Են օրերը փողոցները պարսելու կը վախճայինք մենք , բայց հիմա մենք մեղ կրնանք երեցնել : Ետելի էր ան ատենը քրիստոնէի մը անունը . հիմա բարեպաշտութիւնը յարգի կը սեպուի՝ մանաւանդ մեր քաղաքին քանի մը կողմերը ‡ :

* Ո՞ի ոք առ աս խրատը : Խրանի՛ թէ ասիկայ վտանգին երկիխը գորացընէ , և զցուշութիւն պատճառէ քեզի :

† Կրիստիանոսին ու իր ընկերին օրերէն 'ի վեր աս քաղաքին մէջ եղած փոփոխութիւնը՝ որ Ըեկեալ Արքունը հիմա կը պատմէ , կարծուելու չէ թէ անոր բնակիչները լսութեան դարձած ըլլայն է : Աւայնութեան քաղաքը միշտ նոյն է՝ ու նոյն պիտի ըլլայ : Իր սովորութիւնները կընայ փոխել՝ ու դրաւանց բարեկարդութեան կերպարանք մը կընայ վրան առնել , բայց իր ներսը միշտ վտած է :

‡ Ողորմութիւն մըն է երբոք Սատուծոյ խոսրին համար եղած հալածումը կը դադարի : Իայց՝ ամսանս , հաւատացեալները այսպիսի ատեններ ի՞նչպէս կը պաղին ու կը թուլնան , պազ ու աշխարհասէր կ'ըլլան : Աւայնութեան քաղաքին ծիծաղերն խնդալը անոր խոժոռապէմ նայուածքներէն աւելի վտանգաւոր է : Զգուշցի՛ ը գուն քեզի , ով հանապարհորդ :

որովհետեւ գիտես որ մեր քաղաքը մեծ է : Անոր վրայ պարոն Խեկեալ Արքան ըստ անոնց . Աղջ՝ ի՞նչպէս եիք ձեր ճամբռզութեանը մէջ . ձեր անցած երկիրները ձեզ ի՞նչպէս ընդունեցին :

Ողջախոճ . Ճամբռզութ մարդոց պատահածին աղէս կը պատահի մեզի ալ . երբեմն ճամբանիս մաքուր է երբեմն աղտոտ . երբեմն լեռն 'ի վեր՝ երբեմն լեռն 'ի վար . հազիւ երբէք միօրինակ ճամբայ ունինք : Հով միշտ մեր ետևէն չէ . ոչ ալ ճամբռուն վրայ մեզի հանդիպողներուն ամէն մէկը բարեկամ է : Ազդէն քանի մը դժուարութիւններու պատահէցանք , ու չենք դիտեր թէ տակաւին ի՞նչ կայ յետոյ . բայց ըստ մեծի մասին ճշմարիտ կը դանենք ան խօսքը որ կ'ըսուեր առաջ , թէ Աղջի մարդը պէտք է որ նեղութիւն քաշէ : Ի ՏՒ . դ . 12 :

Խեկեալ Արքու . Դժուարութիւններու վրայ կը խօսիս . ի՞նչ դժուարութիւններու պատահէցանք :

Ողջախոճ . Հարցուր մեր առաջնորդին՝ Պարոն Շահ Հասիրտին . քանզի ինք առոր խիստ աղէկը կը իրայ պատմել ձեզի :

Վհաջանելիք . Այնչեւ հիմն երեք չորս անդամ՝ նեղը ինւ կանք : Ամենէն առաջ երկու անզգամ անձինք եկան Վը բիստինէն ու իր դաւելըններուն վրայ , որոնք կը վախճացին թէ իրենց կեանքը պիտի առնեն անոնք : Անկէ ետև հսկոյ Արիւնահեղը՝ հսկոյ Խոշտանդիչն ու հսկոյ Արդարասպանը վրանիս յարձակեցան : Խրառ աւելքը մէնք յարձակեցանք վերջինն վրայ՝ քան թէ ինք մեր վրայ : Ու այսպէս եղաւ բանը . ատեն մը Գայցիոսին տունը կենանէս ետև՝ որ բոլը եկեղեցւոյն ու իմ վանատուրա է , մէկ օր մը մուածեցինք որ մեր զէնքերը առնենք՝ ու երթանք տեսնենք թէ արդեօք ճանապարհորդներուն թշնամիներէն մէկը կը նամաք բռնել . ինչու որ լսեր էինք թէ ան տեղուանքը նշանաւոր մէկը կար : Գանքը որ Գայցիոս ինէ աղէկ գիտէր անոր

քարայրը, ինչու որ ինք ան տեղուանքը կը բնակեր : Ուստի ասդին անդին նայելով վերջապէս անոր քարայրին բերանը տեսանք . ան ատենք ուրախացանք՝ ու մենք մեղ սրտապնդեցինք : Այսպէս գէտ ՚ի իր քարայրին մօտ եւ լանք . ու հոն որ եկանք՝ տեսանք որ բռնութիւնով աս խղճալի անձը՝ Պարոն Տկարամիտար իր որոպայթը ձգած էր, ու անիկոյ իր վախճանին հասցընելու վրայ էր : Բայց երրոր մեզ տեսաւ կարծելով թէ ուրիշ որս մը եկած է իրեն՝ ինչպէս որ մեզի թուեցաւ, աս խեղճ մարդը իր քարայրին մէջ ձգեց ու ինք դուրս ելաւ : Ուստի սկսեցինք սաստկութեամբ կռուիլ, ու ինք ամէն ջասրգները ՚ի գործ դրաւ . բայց վերջապէս գետինը կործանեցաւ՝ ու իր գլուխը կարուեցաւ ու ճամբուն վրայ անկուեցաւ, որ անկէ ետև այնպիսի ամրաբռութիւն դործողներուն երկիւղ մը ըլլայ : Եմ խօսքիս ճշմարիս ըլլալը ահա կը հաստատէ աս մարդը, որ գառնուկի մը նման առիւծին բերնեն առանուեցաւ :

Պատասխան տուաւ Տկարամիտն ու ըսաւ . Ես ասիկայ իմ անձիս տուժիւքը սորվեցայ, թէ նեղութիւն քաշելով՝ և թէ մսիթարուելով : Կեղութիւն քաշելով՝ երբոր չսկան ուկորներս կրծել կը սպանար ինծի ամէն ըսպէ . ու մսիթարուելով՝ երբոր Պարոն Քարախանակը ու իր բարեկամները իրենց զէնքերովը տեսայ որ կը մօտենացին իմ ազատութեանս համար :

Ասոր վրայ Պարոն Մարրակեացն ըսաւ + Երկու բան կայ որոնց ճամբորդութեան զացողները կարօտութիւն ունին . արխութիւն ու անարատ վարք : Ընէ որ արխութիւն չունենան՝ բնաւ չեն կրնար շարունակել իրենց ճամբան . ու թէ որ իրենց վարքը անարատ չէ՝ ճամբորդներուն անունը անդամ կ'արատաւորեն * :

* Ըստակ խօսք է ասիկայ : Ո՛վ Տէր՝ շնորհէ մեզի

Սակէ ետե Պարսոն Արքասէրն ըսաւ + Աը յուսամ՝ որ
ձեր մէջը հարկաւոր չէ աս խրատը + բայց ճշմարտապէս
շատերը կան ճամբռուն վրայ որ իրենք զիրենք առաւել ճամբ-
բորդութենէ օտար ըլլաւ կը յուցընեն , քան թէ օտար և
պանդուխտ ըլլաւ երկրի վրայ :

Յետոյ Պարսոն Արքատէն Ալախցորդն ըսաւ + Ճշմարիտ է .
անոնք ոչ ճանապարհորդի կերպարանք ունին՝ ոչ ճանա-
պարհորդի արիութիւն . շիտակ չեն երթար՝ հաղա իրենց
ոտքերը կը խոտորքն . մուշակներնուն մէկը ներս կը նայի
ու միւսը դուրս , և իրենց գուլպաները պատռած են .
մէկ կողմը կարկտան մը կայ՝ միւս կողմը պատռած մը . ու
այնպէս իրենց Տէրը կ'անարգուի * :

Ես բաներուն համար արժան է որ նեղութիւն կրեն ա-
նոնք , ըսաւ Պարսոն Ապաշխարողը + ու ո՛չ Ճշմարիտ ճա-
նապարհորդները և ոչ անոնց ճամբորդութիւնը մարդոց
առջեւը յարդի պիտի երեան՝ ինչպէս որ իրենք կ'ուղեն ,
մինչեւ որ ճամբան սցագիսի արաւաներն ու կեղաերեն չը-
մարդուի : Եյապէս նստեր էին՝ ու իրենց ժամանակը կ'ան-
ցընէին , մինչեւ որ կերպակուրը սեղանին վրայ դրուեցաւ .
ուստի կերպն՝ ու իրենց յոգնած մարմինները զօրացուցին ,
ու անկէ ետե հանդստանալու դացին :

Երդ՝ խել մը ատեն կեցան ատոնք տօնալաճառին մէջ՝
Պարսոն Արքասոնին տունը , որ ժամանակը գալուն իր
Ընորհք անուն աղջիկը Քրիստինէին որդւոյն Ամառէլին
կնութեան տուաւ , ու իր Ապարթա աղջիկը Յովսէփին :

Եսանց հոս մնացած ատենը երկար եղաւ՝ ինչպէս որ
ըսի . ինչու որ հիմա առջի ատեններուն պէս չէր : Անոր

քու անունդ դաւանողներուս , որ ազէկ զգուշութիւն ը-
նենք ասոր :

* Պատուական խօսք՝ և արդար՝ յանդիմանութիւն :
Խրանի՛ թէ ասիկայ տապառութիւն ընէ անոնց սրաերուն՝
որոնց որ աս խօսքը կը յարմարի :

համար հանապարհորդները քաղաքին մէջի աղեկ ժողովոց շատերուն հետ ծանօթացան , ու ի՞նչ բարերարութիւնն որ կընային , ըստն անոնց : Գլուխութիւնը՝ իր սուլորութեանը պէս՝ աղքատներուն համար շատ կ'աշխատէր . ուստի իրենց փորը կտանալով ու կռնակնին հազուստ ունենալով կ'օրէնքին զբնըք , ու ինք հոն իր դաւանութեանը զարդ մըն էր : Ու Հնորհքին , Ժիրէին ու Մարթային վրայօք ճշմարիտը խօսելով՝ ամենն ալ խիստ լաւ բնաւորութեան տէր անձինք էին , ու շատ բարիք ըրին իրենց տեղերը : Կաև բոլորն ալ շատ բեղմնաւոր էին . այնպէս որ՝ հաւանական է թէ Քրիստինէին անունը պիտի մնայ աշխարհի մէջ , ինչպէս որ առաջըսուեցաւ :

Երրոր ասոնք հոս էին՝ անտառներուն մէջէն ճիւաղ մը եկաւ՝ ու քաղաքին ժողովոդոցը շատերը կը սպաննէր : Կաև անոնց զուլըները կ'առնէր կը տանէր՝ ու կը սորովցընէր անոնց որ իրմէն ծնածներուն ստինքները ծծնն : Գանգ որ քաղաքին մէջէն մէկը իր երեսը ցուցընելու չափէր համարձակեր , հազար ամենն ալ կը փախէին՝ երբոր անոր գալու ձայնը լսէին :

Առ ճիւաղը երկրի վրայի զաղաններուն մէկն նման չէր : Խր մարմինը վիշապի նմանութիւն ունէր , ու ինք եօթը զլուխ ու տասը եղջիւր ունէր : Վեծ կոտորած կ'ընէր տղոց մէջ , և սակայն կնկան մը կտառավարութեանը տակն էր : Ըստ . ժէ . 3 : Առ ճիւաղը պայմաններ առաջարկեց մարդիկը ընդունեցին ան պայմանները . ու անանկով անոր իշխանութեան տակը մոտան * :

Արդ պարոն Քաջասիրու՛ Պարոն Մնասոնին տունը

* Աը թուի թէ հեղինակը աս ճիւաղով Պապականութեան բոնութիւնն ըստ կ'ուզէ ցուցընել :

ճամբորդները տեսնելու եկողներուն հետ խօսք ըրաւ որ եր-
թան ու աս գաղանին հետ պատերազմին , որ ըլլայ թէ
աս քաղաքին ժողովուրդը այսպիսի գիշատիչ վիշապին
ճանկերէն ու բերնէն աղատելու կարող ըլլան :

Ուստի Պարոն Վրաջափրտը՝ Պարոն Խեկեալ Ախատը՝
Պարոն Վաքրակեացը՝ Պարոն Առւաէն Ախացողն ու Պա-
րոն Վաղաշաբողը իրենց գէնքերովը դուրս ելան անոր դէնն
երթալու : Գանձ որ ճիւաղը առջի բերանը խիստ կատ-
ողած էր , ու տարապայման անարդութեամբ կը նայէր առ
թշնամիներուն վրայ : Խայց տառնք գէնքերնին բանեցնե-
լու վարպետ մարդիկ ըլլալով այնպէս վերաւորեցին զինքը ,
որ պարտաւորեցաւ փախչիլ . ուստի նորէն Վնասոնին
տունը՝ իրենց բնակարանը եկան :

Ճիմա պէտք է դիմանալ որ աս ճիւաղը յատուկ ատեն-
ներ ունէր դուրս ելեւու՝ ու քաղաքին ժողովորդոց զաւ-
կըներուն վրայ յարձակելու : Ուստի աս քաջամարտիկ
ընտրեալները աս ատենները իրեն կը տպառէին՝ ու շարու-
նակարար միշտ իր վրան կը յարձակէին . այնչափ որ ան՝
վերջապէս ոչ միայն վերաւորուեցաւ , հապա կաղ ալ ե-
ղաւ : Եսեւ ան իր առջի ըրածին պէս կոտորած չէր ըներ
քաղաքացւոց զաւկըներուն վրայ . ու ոմանք ճշմարտա-
պէս կը հաւատան թէ աս գաղանը իր վէրքերէն պիսի
սատկի :

Վասն որոյ ասիկայ մէծ համբաւի տէր ըրաւ Պարոն
Վրաջափրտն ու իր ընկերները աս քաղաքին մէջ . այն-
պէս որ՝ ժողովորդոց շատերը որ թէպէտ բոլորովին չէին
ընդուներ անոնց կարծիքը , բայց մէկ յարդական համա-
րում մը ու ակնածութիւն մը ունեին անոնց վրայով :
Ուստի աս պատճառաւ էր որ աս ճամբորդները շատ վր-
նաս չկրեցին հոս : Խրաւ կային քանի մը ստորին տե-
սակի մարդիկ՝ որ խլուրդէն աւելի չէին կրնար տեսնել՝ ու
անասունէ աւելի չէին կրնար խմանալ , որոնք աս մարդու-

ու վրայ համարում մը լուսեցան՝ ու անոնց արժանաւորութիւնն ու քաջութիւնը չնկատեցին :

Գանձր որ համբորդներուն համբայ ելլելու առենը եկաւ հասաւ . ուստի պատրաստուեցան իրենց համբորդութեանը : Իարեկամներնին կանչեցին , անոնց հետ խորհուրդը ըստին , ու ժամանակ մը որոշեցին որ ան ատենը իրենք զիւրենք իրենց Խշանին պաշտպանութեանը յանձնեն : Աւային ևս որ իրենց ունեցածէն անոնց այնպիսի բաներ ըերին՝ որ յարմար կու գային տեղաբներուն ալ ուժովներուն ալ , կնիք մարդոց ալ երիկ մարդոց ալ , ու այնպէս պէտք եւ զած բաներով լցուցին զանձր : Պարծ . իշ . 10 : Անկէ ետև համբայ ելան անոնք՝ ու իրենց յարեկամները մինչեւ որ որ երթալ կը վայըք , ընկերացան անոնց , ու հոն իրար դարձնալ իրենց թագաւորին պաշտպանութեանը յանձնեցին՝ ու իրարմէ դատուեցան :

Ուստի համբորդներուն ընկերութենէն եղողները յառաջ երթալ սկսեցին , ու Պարոն Վահանիրար անոնց առջեւն կ'երթար : Իսկ կնիքներն ու տղաքը տեղար ըլւալով պարտաւորեցան իրենց կրցածին չափ երթալ , ու առ միջոցով Պարոն Դիւրագայթն ու Պարոն Տկարամիւրը իրենց վիճակին վրայ առելի կարելցութիւն ընուներ ունեցան :

Խրբոր քաղաքին բնակիչներէն հեռացան՝ ու իրենց բարեկամները հրաժարական ողջոյնը մատուցին իրենց՝ շուտով Հաւատասարիմինն սպաննուած տեղն եկան : Ասսն որոյ հօն կանկ առին՝ ու գոհութիւնն մատուցին Ենոր՝ որ անոր կարողութիւն չորհեց իր խաչը այնպէս աղեկ կը ելու . և մանաւանդ անոր համար գոհացան՝ որ հիմա տեսան թէ անոր ան չարչարանքները այսպէս արիարար կը լովու օդուտ մը քաղեցին իրենք :

Արդ՝ ասկէ ետև խել մը համբայ յառաջ գացին անոնք՝ Վրիստիանոսին ու Հաւատասարիմինն վրայ խօսակցելով , և

թէ ի՞նչպէս Հաւատարիմին մահուանէն եռեւ Ծուսալիցը
Վրխաւիանոսին հետ ընկերացեր էր : Եւ եկան հասան ան-
բլուրը՝ որ կ'ըսուի Աւատակ , ուր որ ացնաթի հանք մը
կար , որ Դիմասը իր ճամբորդութենէն խոտորցուց ,
և ուր որ Կառուսիրացը ինկաւ ու կրօսուեցաւ՝ ինչպէս որ
ոմանք կը կարծն : Աւատի զգուշացան անկէ : Խոյց
երբոր եկան ան հին արձանին հասան՝ որ կ'իյնար Աւա-
տակ ըսուած բլուրին դիմացը , այսինքն՝ երբոր աղէ ար-
ձանին եկան , ուրկէ Ասոդու ու անոր գարշահոտ լիճը էր
տեսնուեր , Վրխաւիանոսին պէս իրենք ալ զնրմացան որ
անոնց չափ գիտութեան ու հասուն մարդի տէր եղող մար-
դիկ՝ այնչափ կուրացած ըլլան որ աս տեղս շիտակ ճամբէն
խոտորին : Վիայն թէ դարձեալ աս ալ մատածեցին՝ որ
մարդուս ընութիւնը ուրիշներուն վնասող դիսուածներէն
չարժիր + մանաւանդ՝ թէ որ ան բանը՝ որուն վրայ որ կը
նային , յիմարեալ աչքերը հրապութելու դորութիւն մը
ունենան :

Հիմա տեսայ որ անոնք այնչափ յառաջ գացեր էին
մինչեւ որ եկան ան զետը որ Ծուարձալի Լեռներուն առ-
գիփի կողմը կ'ինայ + ան զետը որուն եկու քովերը զեղե-
ցիկ ծառեր կը բուանին , ու անոնց տերեները թէ
որ ներակն առնուի որկրամնելութեան դէմ աղէկ դեղ
են + ուր որ մարդագետինները բոլոր տարեն կամանչ
են , և ուր որ աղահով կրնային պառկիլ + Ատով +
իդ + Զ :

* Ծուարձալի լեռներուն ու անոնց Հովուապետին
տերը մեծ օղուտ ու բերկրութիւն կ'ընծայէ մեզի , թէ
որ Ասորը Հողին մեր աչքերը ուղղէ յատակ տեսնել զա-
նոնք : Ես տեղս նշանակուած Ծիսուսի Տեառն մերց
քաղըր նկարադրութիւնը բերկրապատար մասնութեան
ընդարձակ նիւթ մը կ'ընծայէ մեզի : Ով ընթերցող՝ աս
նկարագրութիւնը ճշմարտապէս պիտի վայելս դուն , թէ

Աս դետիս քովը՝ մարդադետիններուն մէջ հիւղեր ու փարախներ կային, ու տուն մը շինուած էր որ դառնուկները՝ ձամբորգութեան գացող կնիկներուն մաստաղ դաւակըները, հոն մասնին ու մեծնան : “Եաւ մէկը կար հոն անոնց վրայ հոդ տանող՝ որ կրնար անոնց տեղաբութեանը կարելից ըլլալ, ու կրնար աս դառնուկները իր բազուկովը ժողովել ու զանոնք իր գրկացը մէջ կըել, և ծիծ տուողները կամաց քեւլ : Եթի՞ և 2 : Եսոյ և ն 11 : Ուստի Վրիստինէ իր տրս աղջիկները խրատեց՝ որ իրենց զաւկըները Ասոր հոդողութեանը յանձնեն որ անոնք աս ծուրերուն քովը բնակին՝ պատսպարին՝ դարմանին ու մասնին, ու յետոյ անոնցմէ մէկը չերտուիք * : Ընէ որ անոնցմէ մէկը մնըրին՝ կամ կորսուի, Ասիկայ կը գտնէ ան + նաև կուրած կը կատէ, ու հիւանդը կը բժշկէ : Եթի՞ և իդ 4 : Եթի՞ և լդ 11-16 : Աս տեղս ոչ հացի՛ ոչ ծուրի ու ոչ հանդերձի կը կարօտին անոնք + աս տեղս զողերէն ու աւազակներէն ազատ են անոնք + ինչու որ աս անձը իր կեանքը կու տայ՝ ու իրեն պաշտպանութեանը յանձնուածները

որ դուն զքեզ իր գաւիթէն ըլլալ՝ ու զինքը քու հովհոդ կը ճանչնաս :

* Աս օրինակովս կը սորիֆնը թէ մեր զաւկըները ֆերմեռանդ աղօթքով կանուխ Տէր Յիսուսի հաւատարիմ հոգողութեանը պէտք է յանձնենք, բոլոր աշխարհային շահերէն աւելի անոնց յաւիսենական բարելաւութեանը վասփարելով : Ասոր համար պէտք է որ հեռու պահենք զանոնք այնպիսի տեղերէն՝ զործքերէն՝ զբքերէն ու ընկերներէն, որոնք անոնց գաղափարներն ու բարոյականութիւնը կրնան աւրել . պէտք է որ անոնց ընդունակութեանը յարմար քրիստոնէական վարժութիւնները անոնց մեքերուն մէջ տպաւորնք, ու ամէն պատեհութիւնները ձեռք առնենք “Տէրոջը վարժութիւնովը ու խրատովը անոնք մեծցընելու” : Եթի՞ և կ 4 :

բուն մշկը չկորսնցըներ * : Վանաւանդ որ՝ աս տեղու անոնք անշուշտ աղջկի դաստիարակութիւն ու վարժութիւն պիտի ընդունեին , ու պիտի սորվին շիտակ ճամբաներուն մէջ քալել . ու դիսէք որ ասիկայ աղջարիկ բան սեպուելու շնորհք մը չէ : Հոս ևս՝ ինչպէս որ կը տեսնէք՝ բարեհամ ջուրեր՝ զուարձալի մարդագետներ՝ անուշահոս ծաղիկներ ու բազմատեսակ ծառեր կան . այնպիսի ծառեր՝ որ կը բերն առողջարար պտուղ՝ ոչ թէ Վատթէոսին կերած պառողին պէս՝ որ Խեղզերուղին պարտէղին պատէն կախուեր են , հապա այնպիսի պտուղ՝ որ առողջութիւն չունեցողին առողջութիւն կ'ընծայեն , և ունեցողինը կը յարատեն ու կ'աւելցընեն : Ա ան որոյ հաւանեցան իրենց մատաղ զաւկըները յանձնել անոր . ու այսպէս ընելու իրենց քաջաներութիւն ալ տուղը ան եր որ բոլոր առոնք թագաւորին ծախրութը պիտի ըլլային , ու այնպէս ան տունը մանր տղոց ու որբերուն համար հիւրանոցի պէս բան մըն եր :

Հիմա անոնք յառաջ դացին . ու երբոր եկան ՞օսուն ճամբու Վարդագետինն ու ան սանդուխը՝ ուրիշ՝ Քրիստի անոս իր ընկերն Յուսալիցին հետ անցաւ , ու երկուքը մէկն Հակայ Յուսահատութենէն բռնուեցան ու Երկրաց յութեան Նմրոցը գրուեցան , հոն վար նատան՝ ու մուծեցին թէ ինչ ընեն է լաւաղցին . այսինքն թէ հիմա որ

* Յաճախ կը գտնենք որ հեղինակը մեր Փրկիչ Առածուծոյն վրայով իրքեւ մարդու վրայով խօսելու պէս կը ձեւացընէ իր խօսքը : Եշւ արդարեւ բաղձալի եր որ հեղինակներն ու քարողիները աւելի զրեին ու խօսելին Յիսուսի մարդկութեանը վրայ , որ կատարեալ մարդ եր՝ ամէն բաներով մեզի նման բաց 'ի մեղաց : Եսիկայ մեծ քաջալերութիւն կ'ընծայէ մեր հաւատքին . քանզի մենք մեղաւոր ստեղծուածներս կը կարօտինք այնպիսի Վիշնորդի մը՝ որ միանդամացն Կառուած է և մարդ :

իրենք այնչափ գօրաւոր էին՝ ու Պարոն Վաջասիրախն պէս
մարդը որ իրենց առաջնորդն էր + աղեկ չէ՞ր ըլլար որ ա-
ւելի յառաջ չգայցած Հակոյին վրայ երթային՝ անոր ամ-
րոցը աւելուին՝ ու թէ որ անոր մէջ ճամբորդ կար, ազա-
տէին : Աւստի մէկը մէկ բան մը կ'ըսէր և ուրիշը անոր
հակառակը : Վէկը վիճէր թէ անսուրը երկրին վրայ ուր
կոխելը օրինաւոր չէ, մէկ ուրիշը կ'ըսէր որ կրնան՝ թէ որ
իրենց դիտաւորութիւնը բարի ըլլաց : Խակ Պարոն Վա-
ջասիրան ըստա + Ծակալէտ և աս վերջի ըստած խոսքը
մկնար ընդհանրապէս ճշմարիս ըլլալ, և սակայն ինձի
պատուիրուած է որ մեղքին դէմ դնեմ, չարը յաղթեմ,
ու հաւատրին լսաւ պատերազմը պատերազմիմ + և կ'աղա-
շեմ ըսէք ինձի որուն հետ աս լսաւ պատերազմը պատե-
րազմելու եմ, եթէ ոչ Հակոյ Յուսահատութիւնին
հետ : Աւստի ևս պիտի աշխատիմ՝ անոր կեանքը վերցը-
նելու, ու իր Երկրայութեան Կմրոցը քանդելու կործա-
նելու : Աւրեմն հով կ'երթայ իմ հետա՛ ըստա : Են ա-
ռենը ծերունի Աղջախով ըստա + Խս կ'երթամ : Վեճը
ալ կ'երթանը՝ ըսին Վրխատինէին չորս որդիքը՝ Վաս-
թէոսը Աամուելը՝ Յովսէին ու Յակորոսը + ինչու որ
անոնք երխատարդ էին ու ուժով : ա Յաճ + բ + 13,
14 : Աւստի կնիկները ճամբուն վրայ ճղեցին՝ ու անոնց
հետը դրին Պարոն Տկարամիտն ու Պարոն Դիւրադայթը
իր նեցուկներովը՝ որ պահպանն զանոնք, մինչև որ իրենք
ետ դանան : Վանդի ան ճամբուն մէջ մնալով մէկ
պղտիկ տղեկ մըն ալ կրնար առաջնորդել անոնց, թէ և
Հակոյ Յուսահատութիւնը այնչափ մօտ կը բնակէր :
Եսայ + ժամ + 6 :

Սայսպէս Պարոն Վաջասիրատը, ծերունի Աղջախով ու
չորս երխատարդները դացին Երկրայութեան Կմրոցն ել-
լուլու՝ Հակոյ Յուսահատութիւնը մնալու համար :
Երրոր ամրոցին դուռը եկան անսովոր ճոշնով մը զարկին

դուռը : Սաոր վրայ հին աւուրց Հական դուռը իջաւ ու իր կլնը Անվտահութիւնն աւ իր ետևէն եկաւ : Ու ըստ ։ Ո՞վ է ան որ կը յանդպնի աս կերպովս Հակայ Յուսահատութիւնը ձանձրացընել : Պատամասն տուաւ Քահանիրտը . Ես եմ՝ որ Քահանիրտ կը կոչուիմ, Ճամբարողները իրենց տեղը առնելու համար՝ Երկնային Քաղաքին Օրադաւորին կարգած առաջնորդներուն մէկը . ու կը հրամայեմ քեզի որ դուներդ բանաս որ ներս մննեմ . ու նաև դուն դքեզ պատերազմելու պատրաստեն . ինչու որ ես եկայ քու դլուխոդ առնելու , ու Երկբայութեան Ամբողջը կործանելու :

Գրանք որ՝ Հակայ Յուսահատութիւնը կը կարծէր որ ինք հսկայ ըլլալով մէկը չկրնար յաղթել իրեն . և դարձեալ կը մնանէր թէ Երովնեւու մինչև հիմա հրեշտակներուն անդամ՝ յաղթեցի ես , աւ Քահանիրտը պիտի վախցընէ՛ զիս : Ուստի ինքզինը ապառազնեց ու դուրս ելաւ : Գլուխը պողպատէ ասղաւարտ մը դրած էր , իր կուրծքը հրեղէն լանջանոց մը կարգած էր , ու դուրս եկաւ երկաթէ կօշիկներով՝ հաստ բիր մը բռնած իր ձեռքը : Ան ատենը աս վեցը անոր վրայ վագեցին՝ և առջևէն ու ետևէն զինքը պաշարեցին . ու երբոր Անվտահութիւնը Հակոցուհին եկաւ անոր օդնելու , ծերունի Պարոն Աղջախոհը մէկ զարնելուն գետինը ձգեց անիկայ : Ան ատենը ոգւով չափ կուեցան՝ ու Հակայ Յուսահատութիւնը յաղթուեցաւ զեաինն ինկաւ , բայց խիստ դժկամակ էր մեռնելու : Ըստ ատենը վագեցաւ , ու ինչպէս որ կ'ըսեն՝ կատուի պէս Խօթը հողի ունէր . բայց Քահանիրտը անոր մականի շտապեց . ինչու որ մինչև անոր դլուխը մարմինէն որ չիրցուց՝ ձգեց զանիկայ :

Անկէ ետև Երկբայութեան Ամբողջը վագեցնելու ձեռք զարկին , ու դիտես որ Հակայ Յուսահատութիւնը մեռածը ըլլալէն ետև ասիկայ դիւրութեամբ կընար կատարուիլ :

Երօմքը որ աշխատեցան անիկայ կործանելու , ու ձանապարհութիւններէն անոր մեջ գտան Յուսակտուր անուն մելիք գրեթէ սովամահ ևղած՝ ու իր դուստրը Աշհերտուր . որսնց երկուքն ալ ողջ ազատեցին : Բայց մեծապէս պիտի զարմանացիր թէ որ Վմբացին գտւիթը ասդին անդին ցրուած մեռեալ մարմինները տեսնէիր , ու մեռած մարդոց ուկորաները՝ որոնցնալ լցուն էր աղքանոցը :

Երրոր Պարոն Քաջասիրան ու իր ընկերները աս երեւելի քաջութիւնը կատարեցին , Պարոն Յուսակտուրն ու իր աղջիկը Աշհերտուր իրենց սպաշտպանութեանը տակին առնին . ինչու որ անոնք բարի անձնիք էին , թէ այլու և Երկրայութեան Վմբացին մեջ ևսկայ Յուսահատութիւննին զերի ինչած : Ուստի ևսկային դլուխը հետերնին առնին (քանզի անոր մարմինը քարակոյտի մը տակը թաղեցին ,) ու ինան վար շխտակ ճամբան իրենց ընկերներուն , և իրենց ըրածը եկան ցոյց տուխն անոնց : Երրոր Տկարամիան ու Կիւրագայթը տեսան որ սարց ևսկայ Յուսահատութիւննին գլուխն էր ան , ուրախութեամբ ու ցնծութեամբ լցան : Գյանք որ Քրիստինէ հարկ ևղած առնենը կրնար տաւիդ զարնել , ու իր հարսը Գիթութիւնն ալ վին :

Եր որովհետեւ պյապիսի մեծ ուրախութիւնն ունեին , ինքը իր տաւիդը զարկաւ անոնց ու Պարոն Կիւրագայթը ուզեց կարաւել : Ուստի Պարոն Յուսակտուրին աղջիանը Աշհերտուրին ձեռքէն բռնեց՝ ու ճամբուն վրայ կը կարաւելին : Կրաւ ինք ձեռքը զաւաղան մը լըռնած չէր կրնար խաղալ , բայց կը վկայեմ որ շատ աղէկ ոսք տուաւ . օրիորդը ևս գովութեան արժանաւոր էր , ինչու որ վայելւապէս յարմարցուց զինքը նուադարաննին :

Խակ Յուսակտուրին նկատմամբ խօսելով՝ նուադարանը բան մը չէր իրեն . ինք աւելի կարօն էր կերակրուելու քան թէ կարաւելու . ինչու որ զրեթէ սովամահ ևղած էր : Ուստի Քրիստինէ իր օշարակի անանեն քիչ մը բան

տուաւ անոր ան ժամանեն կաղցուքելու , ու յետոյ ուսելիք պատրաստեց . ու շատ չանցած ծերունի պարսնը ինքնիւրեն եկաւ , ու սկսեց աղեկ մը զօրանալ :

Երդ՝ երազիս մէջ աեսայ՝ որ երբ ամէն աս բաները կատարեցան , Պարսն Կաջասիրաը և սկսց Ծուսահատութիւնն զլուխը առաւ ու ձողի մը ծայրն անցընելով անիւկայ ճամբուն վրայ անիեց , Ճիշտ ան արձանին գէմը՝ որ Կրիստիանոս կանգնեցուցեր էր , որ ետեւն եկող ճամբորդները խմանալով զգուշանան անոր դետինը ուաք կուխելու :

Վակէ եռեւ անոր տակը մարմարին քարի վրայ աս հետեւալ ուսանաւորը փորազբեց :

Վհմ աս պատժեալ դլուխին տէրը ,
Ա'անուանէր և սկսց Հուսահատութիւն :
Որուն առաջուց միայն անունը ,
Ճ'ամբորդներուն ահ ու դող կ'ընծայէր :

Եր ամրակառոյց ամրոցն է քանդած ,
Ու իր կնիկը կեանքէն զրաւած .
Ծուսակառըն ու Ա եհերոտ դուստրը ,
Երին Կաջասիրս չնդեց կապուած :

Ո՛վ որ աս բանին կը տարակուսի
Եր աշքը թող վերցընէ նայի ,
Ու իր կասկածն ու տարակոյները
Ճիտի փարատին , միտքն ալ համազուի :

Եսան կը յայսնէ սոյն այս դլուխը
Յնէ երբ կը խաղայ կասկածու կաղը ,
Եմէն վախերէն ու երկիւղներէն
Աստարելսակէս աղաս է բնիքը :

Երբոր այսպէս արիարար Երկրայութեան Ամրոցին վրաց ելան՝ ու և սկսց Հուսահատութիւնն սպաննեցին , ալ յասակ դացին՝ մինչեւ որ եկան Օուսարձալի Լեռները ,

ուր որ Կիրիատիանոս ու Յուսալից ան տեղին բազմատեսակ բարիքներով իրենք զիրենք կազդուրեր էին : Ու զիրենք ճանչցուցին ան տեղի Հովհաներուն, որոնք բարեկցին առնց Զուարձալի Ենաները գալուստը, ինչոք որ առաջ Կիրիատիանոսին ըրած էին :

Հովհաները տեսնելով այսչափ բազմութիւնը որ կու պային Պարոն Կաթառիրտին ետևէն, որովհետեւ զինքը աղէկ կը ճանչնային,) հարցուցին անոր բաելով . Պատուական տէր, դուն մէկ ընտիր ժողով մը ունիս հետդ. աղէկ՝ ուր դատը ասոնց ամենը :

Պարոն Կաթառասիրան աւ իր ընկերներուն ով ըստը պատմեց անոնց :

Ես առենք Հովհաներն ըսին . Կոմիսոյ բարի ընկերութիւն մըն է : Խարի եկիք դուք մեզի . ինչու որ մէնք ինչպէս որ դօրաւորներուն այնպէս աւ տկարներուն համար հարկ եղած բանը ունինք : Մեր Կշխանը ասոնց պինս պղտիկներէն մէկուն աւ եղած օդնութիւնը կը տեսնէ . անոր համար տկարութիւնը պէտք չէ որ արդեք բայց մեր ընելու հիւրընկալութեանը : Մատթ . ին . 40 : Ես յսպէս պալատին դուռը տարին զանոնք ու ըսին անոնց . Ատիր նե՛րս՝ Պարոն Տկարամիտ, մոիր նե՛րս՝ Պարոն Կիւրադայիթ, մտէք նե՛րս՝ Պարոն Յուսակտուր՝ ու իր աղջիկը Ան հերոս : Պարոն Կաթառասիրա, ասոնք իրենց անուններով ներս կը կանչենք՝ ըսին Հովհաները առաջնորդին, ինչու որ անոնք ամենէն աւելի ետ մնալու հակամիտեալ են . բայց քեզ ու մնացեալները որ զօրաւոր էք, ձեր սովորական ազատութեանը կը ձգենք : Ես առենք Պարոն Կաթառասիրան ըստա . Ես այսօր կը տեսնեմ թէ ձեր դէմքերուն վրայ շնորհը կը ճառադայիթէ, և նաև թէ դուք Ճշմարտապէս իմ Տէրոջս հովհաներն էք : Կանզի աս տկարները ոչ ձեր կողովն ու ոչ աւ ուսովը հրեցիք, Երբէ . Լէ . 21, այլ յաւէտ պալատը երթալու անոնց

Համբան ծաղկացատակ յօրինեցիք՝ ինչպէս որ կը վայէր ձեզի :

Սյաստէս տկարներն ու անզօրները ներս մնան՝ ու գլարոն Կթաջասիրտը և միւսները անոնց ետևէն դացին : Եւ երրոր նատան՝ Հովհանները հարցուցին տկարներուն, թէ ի՞նչ կ'ուզէք ։ ինչու որ աս տեղս ամէն բանները պէտք է որ կարդի դրուին տկարներուն պահպանութեանը համար, ինչպէս որ նաև անզօրւսպներուն խըստ ըլլալու համար ալ : Ուստի ինչոյք մը ըրբն անոնց դիւրամարս բաններով, որոնք նաև բարեհամ ու մննդաբար էին : Երրոր կերան ու կըսացան, ամէն մէկը զատ զատ իրենց յառուկ տեղը դացին հանդատանալու :

Սուսուն որ ըլլացաւ, լեռները բարձր ու օդն ալ սրայծառ ըլլալուն համար, ու նաև որովհետեւ Հովհանները առփորւթիւն ալ ունեին Համբորդներուն մեկնելն առաջքանի մը հաղուազիւտ բաններ ցուցընել անոնց, աս պատճառներովը անոնց պատրաստուելն ու քիչ մը նախանաշիկ ընելն ետեւ Հովհանները դուրս արտերը հանեցին զանոնք, ու նախ ցոյց տուին անոնց ան բանները՝ որ առաջմանէ Կրիստիանոսին ցոյց տուեր էին * :

Ենիէ ետեւ քանի մը նոր տեղուանք տարին զանոնք, Առաջին տեղն էր Օարմանալի Լեռը ուր որ նայելով հեռուս մէկ մարդ մը տեսան որ խօսքով լեռները կը գլորեր : Են ատենը Հովհաններուն հարցուցին թէ ի՞նչ սիստի ըլլաց անոր նշանակութիւնը : Ուստի անոնք ըսին թէ ան մարդը Պարոն Վահանորհին որդին է . ան Վահանորհին՝ որուն վրայով Կրիստիանոսին Համբորդութեանը մէջ պատմուեցաւ + ու անիկայ հոս դրուած է՝ որ Համբորդներուն սորմեցընէ թէ ի՞նչպէս իրենց պատահած դըժուարութիւնները հաւասարով իրենց համբուն վրայէն սիկ-

* Տես երես 222 .

տի դուրս դլրեն : Այսոք + Ժամ + 23 , 24 : Ան ատենը գլարոն Քաջասիրուն ըստաւ . Գիտեմ ևս զինքը . անիկայ շատերուն մէջ հազուաղիւտ մէկ հատիկ մարդ մըն է :

Մնկէ եռեւ ուրիշ տեղ մը տարին զանոնք , որ կը կոչ չուեք Անարատովթեան Լեռ . ու հնու մարդ մը տեսան բոլորութիւն ճերմակ հաղած + ու Աւախապաշարմունք և Չառ բակամութիւն անունով երկու մարդիկ անդադար ցեխ կը նետէին անոր վրայ : Եւ ահա լ՛ուչ ցեխ որ կը նետէին անոր վրայ , քիչ ատենին մէջ նորէն կ'իշնար , ու անոր հանդերձը այնպէս մարդուր կ'երեւար որ կարծես թէ ցեխ նետուած չէր անոր վրայ . Ան ատենը ճամբորոներն ըստին . Կ՛ուչ կը նշանակէ աս : Պատասխան տուին Հովիւները , թէ Աս մարդը Աստուածապաշտ կ'անուանի , ու աս հանդերձը իր վարքին անարատովթիւնը կը ցուցընէ : Խակ անոնք որ իր վրայց ցեխ կը նետէն , իր բարի գործքնը ատորներն են . բայց ան որ կը տեսնես թէ ցեխը իր լաթերուն վրայ շիակէիր , այնպէս պիտի ըլլայ անոր աւ որ աշխարհի վրայ անարատովթեամբ կ'ապրի : Այսպիսի մարդիկը աղոստողները մվ որ ըլլան , ոչինչ տեղը կ'աւշ խատին . քանիզի Աստուած քիչ մը ատեն անցնելուն աշնոց անմեղութիւնը ըստի պէս պիտի երեցընէ , ու անոնց արդարութիւնը արեգակի պէս :

Մնկէ եռեւ առնի զանոնք ու տարին Ողորմութեան Լեռ որ , ուր որ ցոյց տուին առնոց մէկ մարդ մը՝ որուն առ չեր խել մը կտաւներ կար , որուցմէ իր բոլորիքը կայշնող աղքատներուն համար վերաբեռներ ու հանդերձներ կը կտրէր . բայց իր կտաւնին ծրարը բնաւ չէր սրակներ : Ան ատենը անոնք ըստն՝ Կ՛ուչ կը նշանակէ աս : Եսիկայ ձեզի կը ցուցընէ ըստն՝ Հովիւները՝ թէ ան որ իր աշխատութեամբ ստացած բանէն աղքատներուն տալու սիրտ ունի , ամեննելին ան բանին պիտի չեարօնի : Ան որ կ'ու ոսողէ լնիքն աւ պիտի ոսողուի . Առաջ + Ժամ + 25 + ու

որբեարին որ ողղտիկ հաց մը տուաւ մարդարեին , ան հացը իր սափորին մէջի ալիւրը չպակսեցուց : է օնակ . ժէ . 9-16 :

Յետոյ տեղ մըն ալ տարին դանոնք՝ ուր որ երկու հոգի տեսան . մէկը չիմար կոչուած՝ ու միւսը զիակասամիւտ , որ մէկ Եթէ եռվագցի մը կը լուսոյին՝ անիկայ Ճերմիցընելու մոր . բայց որչափ որ կը լուսոյին՝ այնչափ աւելի կը սենար մարդը : Ան ատենը հարցուցին Հովիւներուն թէ ասիկայ լ'ու պիտի նշանակէ : Անոնք ալ պատասխան տուին անոնց՝ ըսելով . Եւյալէս կ'ըսոյց գարշելի անձանց ալ . այսպիսի մէկու մը բարի անոնն մը հանելու համար գործածուած ըուլոր միջոցները վերջապէս առաւել ևս դաշնիկայ դարշելի ընելու կը ծառացին : Եւյալէս եղաւ փարիսեցիներուն , ու այսպէս ալ պիտի ըլլայ բոլոր կերծաւորներուն :

Ան ատենը Գիթութիւնը՝ Աատթէոսին կինը իր կեսրոջը Կրթատինէն ըստաւ . Անցրիկ՝ թէ որ կարելի ըլլար , կ'ուզէի տեսնել ըլուրին վրայի ան ծակը՝ կամ ան որ հասարակօրէն կը կոչուի դժոխքին կարճ ժամբան : Ուստի կեսուրը անոր միարը իմացուց Հովիւներուն : Ան ատենը զացին դուռը՝ որ բլուրի մը մէկ կողմին վրայ էր . ու բանալով զանիկայ Գիթութիւնն ըսին որ քիչ մը ատեն ականջ դնէ : Եւյալէս անիկայ ականջ դրաւ ու լսեց մէկը որ կ'ըսէր . Անիծեալ ըլլայ իմ հայրս , որ խաղաղութեան ու կենաց ճամբայքին դարձուց իմ ոտքս : Ուրիշ մէկը կ'ըսէր , լ'հ' լ'ու կ'ըսար որ յաւեւ պատառ պատառ ըլլայի , քան թէ իմ կեանքս ազատելու համար հոգիս կորմացընէի : Ու մէկ ուրիշը կ'ըսէր , թէ որ նորէն ապրելու ըլլայի ինչպէս յօժարութեամբ պիտի ուրանացի իմ անձս որ աս տեղու չըայի : Ան ատենը աս մանկամարդ կեռջը վախուն այնպէս թուեցաւ իրեն թէ բուն խկ երկիրը կը հեծէր ու կը դոգար իր ուրին տակը . ուստի իր դէմքը

սցլազունեցաւ, ու դողալով մէկդի եկաւ ըսելով . Երաւ-
նի ան անձին որ աս տեղէս ազատած է :

Երբոր Հովհանները ամեն առ բաները անոնց ցցյ
տուին, ան ատենը կրկին պալատը դարձուցին, ու տու-
նը գտնուած բարիքովը կերակրեցին զանոնք : Բայց
Գլթութիւնը մանկամարդ ու ծննդական ըլլալով սիրտը
բան մը ուզեց որ հոն տեսեր էր, բայց կ'ամշնար ուզե-
լու : Ըն ատենը իր կեսուրը հարցուց իրեն թէ ինչժե
կը նեղուի . ինչու որ հիւանդ կ'երևար : Պատասխան
տուաւ Գլթութիւնը : Աեղանատունը հայելի մը կա-
խուած է, որմէն իմ միտքս չեմ կրնար հեռացընել . ուս-
տի թէ որ անիկայ շտանամ, կը կարծեմ թէ սիրտի վի-
ճեմ : Խակ իր կեսուրն ըստաւ . Ես քու կարօտութիւնդ
Հովհաններուն կը յայտնեմ, ու անոնք քէնէ չեն խնայեր
անիկայ : Բայց Գլթութիւնն ըստաւ . Ա'ամշնամ ևս որ
աս մարդիկը զիտնան թէ իմ սիրտս բան մը ուզեց : ԶԵ
աղջիկն՝ ըստաւ Տրիտինէ . այսպիսի բանի մը վրայ սիրտ
ունենալը ամօթ չէ, հապա առաքինութիւն : Ուստի
Գլթութիւնն ըստաւ . Ուրեմն՝ մայրիկ, թէ որ կը կամրա
Հովհաններուն հարցուր թէ կ'ուզելո՞ն արդեօք ծախել աւ-
նիկայ :

Գանձք որ ան հայելին նման հարաբներէն մէկ չէր զըս-
նուեր : ԱՆկ կողմին ըստնելով՝ մարդուս գեմքը ճիշճ ցցյ
կու տար . ու միւս կողմին ըստնելով համբորդներուն Խշ-
խանին գեմքը ցցյ կու տար . Ծյու . ևս զիտցողներուն
հետ խօսեցայ, ու ըսին ինձի թէ աս հայելին մէջ նայե-
լով բուն խոկ Ծնոր զիտուն փուշէ պսակը տեսած են . նաև
տեսած ալ են անոր մէջ անոր ձեռքերուն՝ ուզերուն ու
կողին ծակերը : Անհաւանդ թէ այնպիսի գերազանցու-
թիւն մը ունէր աս հայելին՝ որ ուր որ ուզուէր տեսնել հոն
կը ցուցընէր զանիկայ, թէ կենդանի՝ թէ մեռած, թէ
երկրի վրայ թէ երկինքը, թէ անոր նուասութեան վի-

Ճակին մ.ջն ըլլայ և թէ վառաւորութեան , թէ չարքարուելու և թէ թաղաւորելու զալու ատենը * : Հօմք + ա . 23 : ա Ասդնէ . ժդ . 12 : բ Ասդնէ . դ . 18 :

Ուստի Կիրստինէ առանձին Հովհաններուն գնաց † : Գանք որ Հովհաններուն անուններն են՝ Գիտութիւն , Փորձառութիւն , Սրժնութիւն ու Վեկեղծութիւն , ու ըստ անոնց . Իմ հարսերուս մէկը՝ ճննդական ըլլալով բանի մը կը բաղաց , որն որ ինք աս տանը մէջ տեսած է . ու կը թուի իրեն որ եթէ իր սրտին ուղածը , իրմէն խնայէք , պիտի զիժէ :

Փորձնութիւն . Աանչէ կանչէ զինքը . ինք պիտի ստանաց ամեն ինչ որ մենք կրնանք տալ իրեն : Ուստի կանչցին զինքն ու ըսին իրեն . Գլոթութիւն՝ ի՞նչ է քու ուղածդ : Ան ատենը Գլոթութիւնը կարմիցաւ ու ըստ . Աեղանատունը կախուած ան մեծ հայելին : Ուստի Վեկեղծութիւնը վագեց ու բերաւ անիկայ , ու ինդալց հաճութեամբ մը անիկայ անոր մասուց : Ան ատենը Գլոթութիւնը իր դլուխը խոնարհեցուց , և շնորհակալ եղաւ ու ըստ . Խոսվ գիտեմ որ ձեր առջեր շնորհէ դուայ : Մնացած մանկամարդ կնիկներուն ևս այնպէս բաներ տուին որոնց որ կը բաղձային , ու անոնց երիկները մեծապէս զովիցին որ Պարսն Վաշասիրտին հետ միաբաներ են Հովհանները Ասկայ Յուսահատութիւնն սպաննելու , ու Երկրայութեան Ամրոցը կործաննելու :

* Աս օրինակով մեղի կը ցուցուի Արբազան Մատեանը՝ որ Սատուծոյ խորհուրդներն ու կատարելութիւնները մեղի կը յայտնէ , որ մեր Հշմարիս հանդամնուն ու վիճակը մեղի կը ցուցընէ , ու զ՛րդիսառս և իր փրկութիւնը մեր հողիներուն կը ծանուցանէ : Վմէն Հշմարիս հաւատացեալ կը փափաքի օր ըստ օրէ աւելի կատարելութեամբ ծանօթանալ աս Սատուծատառը Առոք Մատեանիս :

† Տե՛ս մասն Ա . երես 221 :

Վրիստինէին վիզը ապարանջանք դրին , ու նոյնպէս առաջ չըրս հարսերուն վիզը աւ դրին , նաև ականջնեցնուն օվլը՝ ու ձակատնին գոհարներ դրին :

Երբոր անկէ երթալու միաք ըրին՝ Հովհանները խաղաղութեամբ ճամփեցին զանոնք , բայց շոռովն անոնց ան մէկ քանի զգուշութիւնները՝ որոնք որ առաջ Վրիստիանոսին ու անոր ընկերին տուեր էին : Վասր պատճառը ան էր որ առոնք Վահաջասիրտը իրենց առաջնորդ ունեին , որ ամէն քանի աղէկ ծանօթութիւն ունէր , ու կրնար յարմար եւ զած ժամանակը զանոնք զգուշացընել . այսինքն՝ երբոր վասնոր մօտենալու վրայ ըլլար : Բայց Վրիստիանոս ու իր ընկերը ի՞նչ զգուշութիւն որ ընդուներ էին Հովհաններին , զանոնք ՚ի գործ զնելու հարկաւորութիւն ունեցած առաննին՝ կորնցուցին զանոնք : Ուստի առ ընկերութիւնը մշտներուն վրայ առ գերազանցութիւնը ունեին * :

Վոկէ սկսեցին յառաջ երթալ՝ երգելով ու ըսելով .

Խնչովէս զեղեցիկ զարդարուած են առ ինեանները ,
Խնչովէս յարմարած ճամփորդ եղողին հանգստութեանը .
Ու ի՞նչովէս զմեղ կ'ընդունին առանց ընդդիմութեան մը ,
Որ ըրինք մեզի հանդերձեալ կեանքը մեր նպատակը :

Խնչ չքնաղ բաներ որ իրենք ունին մեղի կ'ընծայեն ,
Որ մեզի նման խեղջ ճամփորդները ուրախ կեանք վարեն .

* Հեղինակը միշտ ըգատեհութիւն մեռք կ'առնէ հաւատարմաւթեամբ կատարուած առաջնորդութեան պաշտօնին զերադոյն օգուտաները ցուցընելու , որով կը նշանակէ եկեղեցոյ մը մէջ հաստատուած հովուին կանոնաւոր հողողութիւնը՝ որ պէտք է ունենայ իր ժողովորոցը վրայ , որոնք իր յատուկ հոգողութեանը յանձնուած են , իրենց ըոլըր զժուարութիւններուն մէջ իրմէն խորհուրդ կ'ուզեն , ու անոր մասնաւոր խրատները յարդութեամբ կ'ընդունին . զիսնալով որ ան անկեղծութեամբ իրենց հողեոր բարելաւութիւնը կ'ուզէ , ու կարող է անիկայ յառաջ տանիւլ :

Ու դարձեալ այսպիս պիտանի բաներ մեղ կը պարզեան ,
Ու ուր որ երթանք ճամփորդ բայց լինեան :

Երբոր գայցին Հովհաներուն քովեն՝ շատ չանցած ան նոյն
տեղը եկան՝ ուր որ Քրիստիանոս Աւացութեան քաղաքը
ընակող Խոլորեալ անուն մէկու մը պատահեր էր : Աւատի
իրենց առաջնորդը Պարոն Քաջաւիրտ հիմա մոքերնին
ձգեց անոր վրայով՝ ըսելով . Ասմեայ է ան տեղը՝ ուր որ
Քրիստիանոս Խոլորեալ բառած մէկու մը պատահեցաւ ,
որ իր ապատամեռութեան նշանը իր կոնսակը կը կրէր : Աւ
աս մարդուն վրայով ասիկայ ունիմ ըսելու . ամենենին առ
կանչ չէր գներ խրատի . հապա անդամ մը որ սկսէր իյնալ ,
ալ չար չէր յորդորելով զանիկայ կանոննեցընել : Երբոր
խաչն ու գերեզմանին Եղած տեղն եկաւ , մէկը տեսաւ որ
իրեն հրամացեց հոն նայիլ . բայց ինք իր ակռաները կը ճը-
տեց՝ ու ուրը դետինը զարկաւ , ու ըսաւ որ իր միտքը
հաստատած է ևս երթալ իր քաղաքը : Ճամբուն զլսու-
դուուր չեկած՝ պատահեցաւ Աւետարանիչն , որ ձեռնա-
տուութիւն ընել ուղեց իրեն՝ զինքը նորեն շխակ ճամբան
դարձնելու . բայց աս Խոլորեալը դէմ կեցաւ անոր , ու
շատ նախատինիր ընելով անոր՝ պատին վրայէն անցաւ , ու
անոր ձեռքէն փախաւ :

Ասկէ ևսև յառաջ զայցին՝ ու ճիշտ ան տեղը՝ ուր որ առ
ուաջուց Ձևերահաւատը հանուեցուցեր էին , տեսան որ
մարդ մը կայտեր էր թուրք քաշած , ու իր երեսները բո-
լորովին արիւով շաղախուած : Են ատենը Պարոն Քա-
ջասիրտը հարցուց . Ո՞վ ես դուն : Վարդը պատաման
տուաւ ըսելով . Ես մէկն եմ որ կը կոչուիմ՝ Ճշմարտու-
թեան համար Կահատակող . ես մէկ ճամփորդ մին եմ՝
ու Երկնացին Քաղաքը կ'երթամ : Գանք որ ես իմ ճամ-
փուս վրայ որ էի , երեք հոգի յարձակեցան իմ վրաս՝ ու
աս երեք բանը առաջարկեցին ինծի : առ . Ասմ իրենց

Հետը մեկ ըլլամ՝ է և կամ ես դառնամ իմ եկած տեղս
երթամ՝, ոչ և կամ ան նոյն տեղը սպաննուիմ։ Եռաւ
ջինին վրայով պատասխան տուի թէ Ես շատ առենէ ՚ի
վեր է որ շխտակ մարդ մը եղած եմ, ու ան պատճառաւը
կարելի չէ յուսաւ որ հիմա աւազակներու հետ միաբա-
նիմ։ Առաջ ա 10-19։ Ես ատենը հրամացեցին թէ
ի՞նչ պատասխան պիտի տամ երկրորդին։ Ուստի ըսի
իրենց։ Օժէ որ իմ եղած տեղու անհանգիստ չըլլայի, ա-
մանեին չէի ձղեր զանիկայ։ Բայց ինձի բոլորովին անյար-
մար ու խիստ անօդուտ զանելով զանիկայ, ձղեցի աս
համբան եկաց։ Եսկէ ետե հարցուցեն թէ ի՞նչ պիտի
ըսեմ երրորդին վրայով։ Ու պատասխան տուի իրենց։
Խմ կեանքս այնպէս թանկագին է որ դիւրութեամբ ձեռք
չեմ տար անիկայ։ Պանաւանդ որ դուք ամենենին իրա-
ւունք չունիք ինձի այսպիսի բաներ առաջարկելու որ ընտ-
րեմ։ ուստի թէ որ այսպիսի բանի մը ձեռնամնւին ըլլա-
լովիդ մեասուելու որ ըլլաք, յանցանքը ձերն է։ Ես
ատենը աս երեքը՝ այսինքն, Ասցրենամիտը՝ Ենիորհուրդն
ու Զեռներեցը իմ վրաս վաղեցին, ու ես անոնց վրաց վա-
ղեցի։ Եսապէս մեկը երեք հոգւոյ դէմ, երեք ժաման
շափ պատերազմեցանք։ Եսոնք իրենց քաջութեանը քանի
մը նշանները իմ վրաս ձղեցին ինչպէս որ կը տեսնէք, ու
իմինիս ալ մեկ քանիները իրենց հետ տարին։ Հիմա
նոր անոնք ասիկ գացին։ Կարծեմ թէ ձեր ոտքերուն ձայնը
առին ու ձղեցին փախան։

«Քաջատիրոյ։ Բայց մեծ անհամեմատութիւն էր երեքը
մեկին հետ կոռուիլը։

«Առաջապահու։ Երաւ է։ բայց քիչ եղեր շատ եղեր
քան մը չէ անոր քովէ՝ որուն կուսակից է ձմարտութիւնը։
Վաենոք մէկն ըսած է, «Օժէ որ վրաս զօրքի բանակ ելէ,
ո՛րսս պիտի չվախնաց։ թէ որ վրաս պատերազմի պատ-
րաստութիւն ըլլայ, անով ալ ես ապահով պիտի ըլլ-

լում” : Առաջ + իշ + Յ : Ամսաւանդ որ պատմովթիւններու մէջ կարդացի ևս թէ մէկ մարդ մը մէկ բանակի մը հետ պատերազմոցաւ + ու Ասմիան աւ իշու մը ծնօտովք քանի՛ հոգի սպաննեց * :

Ան ատենը առաջնորդն ըստ . Խնչու համար չկանչեցիր որ մէկը քեզի օգնութեան համեր :

“Եւահագախող . Ասնչեցի իմ թարգաւորիս” որ դիտե՛ք թէ կրնայ լսել ու անտեսանելի օգնութիւն մասուցանել բնծի + ու անիկայ բաւական էր բնծի † :

Ան ատենը “Բաջասիրութ Կահատակովին ըստ . Շառ արժանուցն դուն զքեզ կառավարեր ևս + նայիմ քու թուրդ : Այսպէս միւսը ցոյց տուաւ անոր իր թուրը : Երբոր իր ձեռքը առաւ անիկայ ու ատեն մը նայեցաւ զօրքան , ըստ . Խրաւ որ ասիկայ շատ աղեկ Կամակեան թուր է ‡ :

“Եւահագախող . Այդպէս է + թող մէկ մարդ մը աս երկաթներէն հատ մը , ու անիկայ վերցնելու ձեռք ու գործածելու ճարտարութիւն ունենայ , հրեշտակի դէմ կրնայ

* Ճշմարտութիւնը՝ Ճշմարտութեան համար “Կահատակ կ'ընէ մարդը . ու Ճշմարտութեան համար նահատակութիւնը՝ Ապարենամիտ , Անխորհուրդ և Չեռներէց հակառակորդներուն հետ պատերազմէլ կու ույ ճանապարհորդին : Վնոր այսպիսի պատերազմի մէջ թափած արիւնը իրեն պատիւ է , ընդունած վերքերը իրեն փառը են :

† Խրացընէ բաւական է : Ան որ Կատուծոյ Ճշմարտութեանը անձնատուր եղած է , Կատուծոյ օգնութիւնը ամեննին պիտի չպակսի իրմէն : Կատուծոյ համար պատերազմիլը՝ ու առ Կատուծն աղօթելու , քրիստոնէին փառքն է :

‡ “Բաջասիրութ շատ վարպետ է թուրերը ճանչնալու : Վուկ կը ճանչնայ ան թուրերը որ սիրոյ կողմէն մէջ դարրանձ են Ճշմարտութիւնով սրուած են , ու աս երկուքին թշնամիներուն աւ մնծ կոտորած կ'ընեն :

ելլել անով : Անոր դիմանալուն վրայ վախճախիք շռնի , միայն թէ պէտք է որ զիտնայ թէ բ'նչպէս զարնելու է : Անոր բերանը ամենենին չցուցար : Ախմա ու սկզբը՝ ու ողբն՝ ու շռնչը՝ ու բոլորը մեկէն կը կտրէ ան : Եցր :

«Բաջանիքը . Բայց երկար ատեն ծեծկուեր էք . կը զարմանամ որ չեմ յոդներ :

«Ետհագործիուլ . Այնչափ ծեծկուեցայ՝ մինչեւ որ թուրս մեռիս ժամկաւ . ու անկէ ետեւ այնպէս միացաւ իմ ձեռաքիս հետ՝ որ կարծես թէ իմ բաղըւկէս թուր մը բուսեր էր . ու երբոր իմ մասներէս արխմա կը վազէր , ան ատենիր խիստ աւելի արխութեամիւ ծեծկուեցայ * :

«Բաջանիքը . Աղեկ բրեր ես . արխմա թափելու չափ հաւկառակ կեցեր ես մեղքին : Ուստի մեր հետը պիտի կենաս , մեր հետը պիտի մանես ու ելես : Բնչու որ մենք քու ընկերներդ ենք : Ասոր վրայ առին զինքը՝ ու իր վերաքերը լուացին , ու ինչ որ ունեին տուին անոր որ զօրացընեն զինքը . և այսպէս սկսեցին մեկտեղ երթաւ :

Արդ՝ երբոր յառաջ կ'երթային՝ պարոն Կաջասիքտը որ շատ հաւեներ էր անոր , (ինչու որ մեծապէս սիրեց զանիկայ քաջարազուեկ մարդ մը բլլալուն համար ,) ու նաև ընկերութեան մէջ տկար ու անզօր անձինք կային , անոր համար սկսեց շատ բաներու վրայ հարցուփորձ ընել անոր . զոր օրինակ՝ առաջ հարցուց թէ ո՞ր երկիրէն էր :

«Ետհագործիուլ . Ո՞թութեան երկրէն եմ ես . ինչու

* Երջանիկ կոխ է ան՝ երբոր ձեռքն ու սիրտը միաբան են , ու թուրը միօրինակ երկուքն կը զործածուի : Ով գուք երկմիտ ու զաղը հաւատացեաներ՝ որ վատասրառութեամբ Հյանաբառութիւնը կը ձգէք , կամ անարդարար խաղաղութեան հետ կը փոխանակէք անիկայ . ասիկայ թող ամցուընէ ու խայտառակ ընէ ձեզ :

որ հոն ծնած եմ, ու իմ հայրս ու մայրս տակաւին հոն են :

ՎԻԱՀԱՊԱԿԻՐԴ + ԱՄԵՌՈՒԺԵԱՆ ԵՐՂԲԵՇՆ + ատիկայ Առօքանաման ՎԻԱՂՋԱՔԲՆ ԿՈՂՄԵՐԸ ՀՅՇՅԱՐ :

*Առաջապահութ + Այս, ան կողմերը կ'իյնայ : Աւստի ասիկայ էր որ ճամբորդութեան ելլելու պատճառ Եղանձի : Անկը եկաւ մեր կողմերը՝ որ կ'ըսուեր Պարոն ՇՎԵՅՉԱՐՍՏԱԽՈՍ, ու պատմեց ինչ որ ըսեր էր ՎՐԲԻՍՏԻԱՆՈՍ, որ Առօքանաման ՎԻԱՂՋԱՔԲՆ ելլեր էր . այսինքն՝ թէ ինչպէս իր կոմիկն ու զաւկլները ձգեր, ու ճամբորդութեան կեանք մը վարելու ձեռք զարկեր էր : *Աահ հաւաստեաւ կը պատմուեր թէ ինչպէս օձ մը սպաններ էր, որ Ելլեր էր իրեն դէմ դնելու իր ճամբորդութեանը մէջ : և թէ ինչպէս անցեր զայեր էր ան տեղը՝ ուր որ ինք միաք ըրեմ էր երթալու : Աը պատմուեր ևս թէ ինչպէս հիւրընկալութիւն ընդուներ էր իր Տէրոջը բոլոր իջևաններուն մէջ, մանաւանդ երբոր Խրկնային ՎԻԱՂՋԱՔԲՆ դուռը հասներ էր . քանզի ան տեղը Լուսաւորներուն բաղմութիւնը փողի ճայնով զինքը ընդունեցին՝ կ'ըսէր մարդը : Ըստ ևս թէ ինչպէս իր ներս ընդունուելուն՝ քաղաքին բոլոր զանգակները 'ի նշան ուրախութեան զարնուեր էին, ու ինք ինչ ոսկեթել հանդերձներով զարդարուեր էր . ասեց հետ շատ քաններ ալ զրուցեց՝ որոնք զանց կ'ընեմ պատմու հիմա : Անկ խօսքով աս մարդը ՎՐԲԻՍՏԻԱՆՈՍԻՆ ու իր ճամբորդութիւններուն պատմութիւնը այնպէս ճառեց, որ իմ սիրտս եռանդուն փափաք մը ինկաւ անոր ետեւն երթալու . և իմ հայրս ու մայրս ալ չկրցան վար դնել զիս : Այսպէս մեկնեցայ անոնցմէ, ու մինչեւ հոս յառաջացայ իմ ճամբուս մէջ :

ՎԻԱՀԱՊԱԿԻՐԴ + ՇԱՄԲՈՒՆ զլուու դռնէն ներս մնար դուն, այնպէս չէ :

*Առաջապահութ + Այս, այս + ինչու որ նոյն մարդը մեզի

զբուցեց որ Եթէ դռնեն չակալնք աս ճամբան մանելու , բու-
լորը ոչինչ պիտի ըլլայ * :

“Եայէ” ըստ առաջնորդը ՚Վրիստինէին , քու երկանդ-
ճամբորդութիւնն ու անով իր ստացած համբաւը դուքսե-
րը տարածուած է , թէ հեռուն և թէ մօտը :

“Եամագութիող . Ենչ կ'ըսես . ասիկայ ՚Վրիստիանոսին
կի՞նն է :

՚Վահանիքուրք . Այս այնպէս է . ու ասոնք ալ անոր չընս
որդիներն են :

“Եամագութիող . Երամ , ու ճամբորդութեան ալ կ'եր-
թան :

՚Վահանիքուրք . Այս անշուշտ + իրենք ալ անոր կը հե-
տելին :

“Եամագութիող . Ասիկայ իմ սիրսու կ'ուրախացընէ . բա-
րի մարդը ո՛րչափ պիտի ուրախանայ երբոր տեսնէ որ իր
հետը երթաւ չուզողները իրմէ ետեւ ՚Երինացին ՚Քաղաքին
դուներէն հոն մաննն :

՚Վահանիքուրք . Վատարակոյս մեծ սփոփութիւն պիտի ըլ-
լայ իրեն . քանզի զլսաւոր ուրախութիւնը ինքզնիքը հոն

* Ենչը համար է որ շատերը ճամբայ կ'ելլեն՝ ու առեն
մը յառաջ կ'երթան , բայց վերծապէս ետ կը մնան ու կը
կորառին . անոր համար որ ճանապարհորդին շաւիզը ՚Վր-
իստոսով չեն մոներ՝ որ է դուռը : Երենց բուլորովին
կորառած՝ կործանած՝ անյօս ու թշուառ ըլլարը չեն
տեսներ . իրենց մեղքին պատճառաւը սրտելնին կոտրած
չէ . անոր համար իրենց պէս թշուառական մեղաւորնե-
րուն մի միայն ՚Փրկիչը ՚Վրիստոս ըլլաւ ընդունելով չեն
սկսիր : Բայց բնութեան ուժովք ճամբայ կ'ելլեն , ու
շուտով կ'իյնան . նաև որ ճունարտապէս չեն ընդունիր
զ՛Յրիստոս ու անով չեն մնանիր : Աս պատճառաւս է
ան հարցումը , թէ ՚Պանէն ներս մոռք է : Աս հարցումը
միշտ մեր անձերուն ընելու ենք մենք :

տեսնելու էր , անոր ետևէն կու զայ իր կրթիկն ու իր զաւկը-
ները հռն տեսնելու ուրախութիւնը :

*Եահապագիու . Տայց հիմա որ աս մասին վրայ կը խօ-
սիս , ներէ ինծի որ ասոր վրայով քու կարծիքու խմանամ :
Ոմանք կը հարցընեն թէ արգեօք իրար պիտի ճանչնակք
երբոր հռն երթանք :

*Բաջանակիրա . Խօնէ կը կարծես , արդեօք անձնք ան ա-
տենը իրենք զիրենք պիտի ճանչնան , կամ իրենք զիրենք
ան երջանկութեանը մէջ տեսնելուն համար պիտի ուրա-
խանան . թէ որ անձնք իրենց անձները պիտի ճանչնան ու
պիտի ուրախանան , ինչո՞ւ համար ուրիշներն ալ չճանչ-
նան ու անոնց երջանկութեանը վրայ ալ չուրախանան :
Դարձեալ որովհետեւ մեզի մերձաւոր առնչութիւն ունե-
ցաղները մեր երկրորդ անձերն են , թէպէտ և ատ առնչու-
թիւնը պիտի չմնայ ան ատենը , սակայն ինչո՞ւ համար
իրաւամեր պիտի չհետեցընենք թէ աւելի ևս ուրախ պիտի
ըլլանք մենք անոնց հռն ըլլալը տեսնելուս , քան թէ ա-
նոնց հռն չըլլալը :

*Եահապագիու . Ազէ՛կ' կ' իմանամ թէ քու միտրդ լ'նէ
և աս մասին . իմ ճամբորդութեան սկսելուս վրայով ու-
րիւ բան ունի՞ս հարցընելու *

*Բաջանակիրա . Այս . քու հայրդ ու մայրդ կ'ուզէի՞ն որ
դուն ճամբորդ ըլլաս :

*Եահապագիու . Զէ . բոլոր մորէ անցնելու միջոցները
ի դործ զրին որ համոզին զիս տունը մնալու :

*Բաջանակիրա . Տայց լ'նէ կրցան ըսել անոր դէմ :

*Եահապագիու . Ըսին թէ ծուլութեան կեանք մըն է

* Հաստատուն քրիստոնեան չվախնար քննուելն ու
մանրամասնարար փորձուելէ , ինչու որ իր ներաը ունե-
ցած յշանն պատճառ մը կընայ տալ ինք : Դիտէ թէ
ինչո՞ւ և ինչ պատճառի համար սկսեց ճանապարհորդ ըլլ-
ալ :

ան . Եթէ ես ինքնո ծուլութեան ու դատարկութեան հակամիտած որ չըլսյի , ամենեն պաշտպան պիտի չըլսյի հանապարհորդի վիճակին * :

Քաղաքակրորդ . Ուրիշ ի՞՞նչ ըստի :

* Կամացաւութեան . Ըստին թէ վլաստիկար համըսյ մշն է ան . մանաւանուր . թէ ըստին աշխարհի մեջ ամենէն վլաստիկար համըսյ ան է , որ համըրորդները կ'երթան :

Քաղաքակրորդ . Քեզի ցոյց տուի՞ն թէ որ մասին այնպէս վլաստիկար է ան :

* Կամացաւութեան . Այսինք շատ մասերու մեջ :

Քաղաքակրորդ . Ըստ նայնոք անոնցմէ մեկ քանիները :

* Կամացաւութեան . Այսափութեան Փոստի վլայով խօսեցան

* Ամէն դարու մեջ բարեպաշտութիւնը առ նախատինարդի կողք : Փարաւան ըստ Առվաշտին ու Խարսյելսցիներուն . “ Կոյլ էք դուք՝ ծոյլ , անոր համար կ'ըսէք թէ Նըրթանք՝ Տէրո՞ք զոհ մատուցանե՞ք ” : Եղիշ է . 17 : Արդիկ ընականաբար կը մտածեն թէ , Սասուծոյ ան միջական ծառայութեանը դործածուած ժամանակը ոչինչ տեղը կը կորածի . ուստի թէ որ քրիստոնեայ մը ամեն շարաթ նոյնչափ ժամանակ ծախէ Առորդ . Գրքերը կարդալու , առանձնական ու հրապարակական արօթքի գանուելու , բարեպաշտական խօսակցութիւնները ընելու՝ և՛ , որ չափ ժամանակ որ իր ընկերը զօսանեքի ու զայյական հեշտութեան կու տայ , իսկոյն ձայն մը կ'ելլէ անոր վրայ թէ իր ժամանակը պարապը կ'անցընէ , ու իր ընտանիքը աղքատութեան հացընելու վրայ է : Եւ որովհետեւ աշխարհի մարդոցմէ առ նախատինարդը ընդունիլ կը յուսացուի , անոր համար բոլոր հաւատացեալներուն կը վայլէ որ ամեն չար երևոյթէ փախչին . ու իրենց սեփհական գործքին մեջ զովելի ժրութիւնով մը ժամանակ զանելու ջանք ընեն , խոհեմութեամբ իրենց ծախկերը չափաւորեն , ու բոլոր իրենց գործքերը աղէկ կերպով կառափարեն . որպէս զի լիմաններուն աղխառութեամբ բրած բամբասաները լուցընեն :

ինծի՝ ուր որ Վրիմանինսս մաղ մնացեր էր խեղդուելու : Ըսին թէ Խեղդեբռուղին աշտարակին վրայ պատրաստ աշղնաւորներ կայնած են որ Կեղ Դանէն մանելու համար գուռը դարձնողներուն վրայ նետեր նետեն : Կաև պատմեցին ինծի անտառներուն ու մութ լեռներուն վրայով , առիւծներուն վրայով , ու նաև ան երեք հականերուն՝ այս սինքն Արիւնահեղին՝ խոշոանդիշին ու Երդարասովանին վրայով : Դարձնալ ըսին թէ խոնարհութեան Զորին մէջ մէկ չար ողի մը կայ , որ զրեթէ Վրիմանինին կեանքը պիտի զբաւեր : Ասոնցմէ զատ՝ Մահուան Շուքին Զորին պիտի անցնիս ըսին , ուր կը կենան ուրուական ողիները . ուր անզի լցոյը մթութիւնն է . ուր որ ճամբան որոդայթներով՝ խորխորաաներով՝ մտակարթներով՝ ու ծուզակներով՝ լցուն է : Պատմեցին նաև Հակայ Յուսահատութիւնին ու Երկրացութեան Ամրոցին , ու ճամբորդներուն ան տեղը քաշան վնասին վրայով : Կաև ըսին որ Կախարդեալ Երկրէն պետք է որ անցնիմ՝ որ վնասակար է . ու թէ ամեն ասոնցմէ Եսե պիտի զանեմ մէկ զետ մը՝ որուն վրայ կամնարջ չկայ . և թէ ան զետը իմ՝ ու Երկնացին Վազուրին մէջտեղը կ'իմայ :

Վահանիք . Եմէնը ան էր :

Կառապատակու . Ջէ . աս ալ ըսին ինծի որ առ ճամբան խարեբաններով՝ լցուն է . ու հան բարի մարդիկը ճամբէն դարձնելու համար դարձնակալ անձեր կան :

Վահանիք . Բայց ի՞նչողիս կը հաստատէին ատիւկայ :

Կառապատակու . Ըսին թէ Աշխարհիկ Դմաստունը հան պահուըտած կը սպասէ խարելու համար : Ըսին ևս թէ Փարիսեցին ու Աեղծաւորը միշտ ան ճամբուն վրայ են : Դարձնալ ըսին թէ Կուռոսիրոը , Շատախօսն ու Դեմասը անշուշտ զիս պիտի բռնեն . թէ Շողորորդողն ալ իր որոդայթին մէջ պիտի ձղէ զիս . և թէ խակ Տղի-

տութիւնն հետ պիտի համարձակիմ՝ երթաւ ան դռւ-
որ՝ ուրեմն որ ինը ևս խրկուեցաւ բլուրին քովու եղած
ան ծակը, ու անկէ ալ կարճ համեռվ դժոխքը խրկու-
եցաւ :

*Քաջանիբոր + Խրաւ որ ասիկայ բաւական էր քեզ վախ-
ցընելու + բայց արդեօք այսքանով ըմբուցի՞ն :

*Առհագութիւն . ՁԵ՛, կեցիր : Խնծի պատմեցին ևս
շատ մը մարդոց վրայով՝ որոնք առաջմանէ աս համբորդու-
թեանը ձեռք զարկեր՝ ու անոր մէջ շատ մը յառաջ զացեր
են, ան փառքին նշոյը դանելու՝ որուն վրայով ատեն ա-
տեն շատերը խօսեր էին . բայց վերջը ևս դարձեր ու իրենք
զիրենք յիմարի կարդ որեր են՝ դոնէն դուքս ան համբուն
մէջ ուրք իրսինուն համար, որով՝ իրենց քաղաքը ուրա-
խացեր է : Ու այսպէս ընտղներուն մէկ քանիին անունը
տուին + ինչպէս Պիհատղլոււին ու Խօսքիպառկողը, Ասո-
կածունն ու Աւախունուր, Մոլորեալն ու ծերունի Ծառ-
տուածը, և մէկ քանի ուրիները + որոնցք ոմանք շատ
հեռու զացեր են որ նային թէ ինչ կընան դանել, բայց
որչափ որ դացեր են՝ մէկերնին ալ վետուրի մը ծանրու-
թեան չափ օդուտ մը չէ զտեր :

*Քաջանիբոր + Ալ ուրիշ բան բայ՞ն քեզ վախցնե-
լու :

*Առհագութիւն . Այսի, Պարոն Եցրկիւղած անուն մէկու-
մը վրայով պատմեցին՝ որ համբորդ է եղեր, ու իր համբան
այնպէս առանձին ու տիսուր զտեր է, որ ընաւ մէկ համա-
զիստ ժամ մը չէ ունեցեր անոր մէջ + ու թէ Պարոն Հու-
սակտուրը զրեթէ սովամահ պիտի մեռնի եղեր հոն + և մա-
նաւանդ՝ քիչ մնաց որ պիտի մռանցի, բուն ինքը՝ Քրիս-
տիանոս ալ՝ որուն վրայ այնչափ շուշնչ եղաւ, Եցրկնային
թեազ մը ստանալու համար բոլոր իր վտանգանոր ձեռնար-
կութիւններէն ետև թէ և որչափ ալ որ իր կողմինները
բանը կը ծածկեին՝ սակայն հմարտապէս ընկղմեր է Ալ

Գնետին մէջ , ու մէկ սոսք մըն ալ չէ կրցեր բնաւ յառաջ երթաւլ * :

*Քաղաքակրոր . Աս բաներուն մէկը չվախցո՞ւց քեզ :

*Եահապատիոն . Չէ՞ անոնց ամեն մէկը միայն մէյմէկ ոչչութիւն երևաց ինձի :

*Քաղաքակրոր . Խնչալէս եղաւ ատիկայ :

*Եահապատիոն . Խնչալէ՞ս + ես դեռ կը հաւատայի Պարսն Ճշմարտահասովն ըստին + ու աս իմ հաւատրա անոնց ամենն ալ յաղթել առաւ ինձի :

*Քաղաքակրոր . Ուրեմն աս եղաւ քու յաղթութիւնդ . այսինքն՝ քու հաւատրդ :

*Եահապատիոն . Այդպէս եղաւ + հաւատացի՞ ու հետեւապէս դուրս ելայ , ճամբան մնայ , ինձի գէմ կեցողներուն բոլորին հետ ծեծկուեցայ , ու հաւատալով՝ աս տեղս եկայ † :

* Խնչալէս բնական է աշխարհանէր մարդոց՝ Տէրոջ ճամբաները վաստահամբաւել , ու վախցլնել զանոնք որ նոր կ'ելլեն ճամբորդութեան՝ անոնց պատահելու վտանգներն ու գժուարութիւնները առջննին դնելով : Խնչալէս ահա հոս ալ մէկ խօսք մը չկայ Տէրոջ ճամբաներուն մէջի բերկորութիւններուն՝ մխիթարութիւններուն և ուրախութիւններուն վրայով : Պատճառը ան է որ ամեննեմն չեն հաւատար ան բաներուն . անոր համար չեն կրնար խօսիլ անոնց վրայ : Բայց և այնպէս մեր սրտերուն հաւատար մութեանն ու անկեղծութեանը փորձ մը կ'ըլլայ ասիկայ :

† Եհա հոս կը տեսնենք թէ Քրիստոսի քաջամարտիկ զինուորները՝ ամեն բան հաւատքին կ'ընծայեն : Հաւատքով ճամբայ կ'ելլեն , ու հաւատալով կը շարունակեն ու կը յարատեն : Ասանկով բոլոր փառքը կ'ընծայեն Քրիստոսի , որ հաւատքին առարկան հեղինակն ու կատարողն է : Աս տեղս իրենց հաւատարմութեանը վրայ պարծիւ չկայ . իրենց դործքերուն արժանաւորութեանը վրայ դովուիլ չկայ : Չէ՞ + ինչու որ Ճշմարտութեան համար

Ո՞վ որ կ'ուղէ հսոս զայ տեսնայ՝
 Երիութիւն ճշմարիս ,
 Եհա մէկը որ կը կենայ՝
 Եմէն ատեն հաստապինս ,
 Աշենք երկիւդ բնաւ զինքը
 Պիտի բերէ զզ ֆալու .
 Եր առաջն հաստաւ մարեն ,
 Ճանապարհորդ ըլլալու :

Ո՞վ որ զինքը շրջապատէ
 Օարհուրելի խօսքերով ,
 Եկըըզինքը կը խոռովէ ,
 Եսկ ան կ'աւելնայ ուժով .
 Եսիւծէն վասի չունի , կ'եղայ
 Ճոկային հետ կոռուելու ,
 Այս իրաւունք ինք ստանայ
 Ճանապարհորդ ըլլալու :

Ո՞ւ ուրուական՝ ո՞ւ չար հողիք
 Արնան դպչել իր հոգւոյն ,
 Գիրտէ թէ կեանք կը ժառանգէ
 Կա վերջապէս լաւագոյն .
 Ուրեմն իր միարը զերծ է
 Վարդոց խօսքէն վախնալու ,
 Եյլ կ'աշխատի զիշեր ցորեկ
 Ճանապարհորդ ըլլալու :

Աս միջոյիս անոնք Կախարդեալ Երկիրը հասան , ուր
 որ օդը բնականաբար թմրութիւն կը բերէր մարդուն
 փայ : Ու ան տեղը բոլըրովին փուշ ու տատասկ բուշ
 ասծ էր . միայն թէ տեղ տեղ զուարձալի հովանաւոր
 տեղեր կային՝ ուր՝ եթէ մէկ մարդ մը նստի կամ քնանայ ,
 տարակուալի է կ'ըսնն ոմանք՝ ալ անոր աս աշխարհիս

Դահատակող հոդիները ազատած են՝ ու կ'ատեն այնպիսի
 Առըրք Գրոց հակառակ մնապարծ շաղիաղիութիւնները :

մէջ ելլիւ կամ արթըննալը : Ուստի աս անապատէս կ'անցնէին անոնք՝ ու Պարոն ՀՅաջասիրոտը առջնուն կ'երթար, որովհետեւ իւքն էր անոնց առաջնորդը : Պարոն Շմարտութեան համար *Կահատակողն աւ իրքեւ վիրաջապահ ետևուն կ'երթար, վախնալով որ չըլայ թէ չարաճճի մը՝ կամ վիշտ մը՝ կամ հսկոյ մը՝ կամ աւազակ մը անոնց ետևներուն վրան յարձակի ու այնպէս վիսա մը ընէ : Աս տեղս անոնք յառաջ կ'երթային՝ իւրաքանչիւրը իր թուրը քաշած + որովհետեւ զիտէին որ վտանգաւոր տեղ մըն էր ան * : *Ասեւ կրցածնուն չափ իրար կը քաջալերէին : Պարոն Տկարամիտին հրաման ըրաւ Պարոն ՀՅաջասիրոտը որ իր ետևէն քալէ, ու Պարոն Յաւակակուրը Պարոն Կահատակողն հսկողութեանը տակն էր :

Իսպայ յառաջ չափանիք թանձը մօւշ մը ու մը թութիւն մը ինկաւ բոլորին վլոյ + այնպէս որ խել մը տանեն հազիւ թէ իրար կրնային տեսնել : Ուստի պարտաւորեցան առնեն մը խօսելով երթալ որ իրար չորսընցընեն, որովհետեւ առանց տեսնելու կը քալէին† : Հիմա յայտնի է որ անոնցմէ ամենէն լաւ աւ շիտկէ շիտակ

* Կոկրունին հանապարհորդներ՝ դուք որ աղէկ համրայ ելած էք՝ ու երկար առեն աղէկ յառաջացած էք, մոտածեցէք որ տակաւին աշխարհի մէջ էք, որն որ կախարդեալ երկիր է : Շանչցէք ձեր աս տեղը հանգատութիւն վնասնելու կամ ասոր կախարդիչ հովանաւոր տեղերուն մէկուն մէջ քնանալու վտանգը : Ծաէ և ձեր մարմինները յոզնած ըլլան՝ ձեր հոգիները նուազած ըլլան՝ ու հովանաւոր տեղերը հրապուրիչ, բայց և այնպէս զգուշացէք : Յառաջ քչեցէք դուք զձեղ՝ : Օօրաւորէն յուսացէք զօրութիւն գանել՝ ու Ակրելիէն հանգատութիւն, իր համբուն մէջ յառաջ երթալով :

† Ծաէ և զգացումները կորնչին լոյսը անցնի ու հանգստութիւնները ձգեն մեղ, բայց հաւատորը ամենուն տեղը կը լեցընէ :

ճամբան չեր կրնար երթալ . ալ որչափ ևս առաւել ինիկներն ու տղարը , որոնք՝ ուսորով ալ սրտով ալ փափուկ էին : Եւ սակայն իրենց առաջապահին ու վերջապահին քաջալերական խօսքերովը կամաց կամաց յառաջացացան :

Աս տեղիս ճամբան ալ մարդը շատ կը յոգնեցըներ՝ տղմատ ու ցեխոտ ըլլալով : Ու ըոյը աս տեղը ինւան մը կամ պանդոկ մըն ալ չեար՝ ուր տկարները կարենացին զօրանալ : Ուստի կը տղացին՝ կը հեծեին ու կը հառաշեին . ինչու որ մեկը կը զլորեր թուփի մը վրայ կ'իյնար , մեկ ուրիշ տղմին մեջ ամուր մը կ'ընկղմեր , ու աղոցմէն ումանք իրենց մուճակները ցեխին մեջ կը կորսնցընեին . մեկը կը կանչեր թէ՛ կ'ընկղմիմ , միւսը թէ՛ ուր եք . ու երրորդը թէ՛ թուփերուն մեջ այնպէս ամուր բռնուեցայ , որ չեմ կրնար աղատիլ անոնցմէ :

Վար վրայ դացին հովանաւոր տեղի մը հասան , որ տարուկ էր՝ ու կ'երևար թէ՛ ճամբորդներուն շատ հանգըստութիւն պիտի տար . քանզի դալարիներով գեղեցկացած , նատարաններով ու բազմոցներով դարդարուած , ու վրան վայելու կերպով շնուած էր : Փափուկ մահհիմ մըն ալ կար , որուն վրայ կրնար հանդչիլ յոգնողը : Վ.մն ասմաք մոտածելով հարկաւ պիտի խորհի մարդ՝ թէ խիստ հրապուրիւ տեղ մըն էր ան . որովհետեւ ճամբորդներն ալ ճամբուն գէշութենէն արդէն սկսեր էին տկարանալ : Բայց ՚ի վերայ այսր ամենայնի անոնցմէ մեկը աւմնինին հակամիտութիւն մը չուցուցուց հոն կանկ առնելու : Վանաւանդ թէ՛ իմ խմացածիս նայելով՝ շարունակարար այնպիսի լաւ զգուշութիւն կ'ընէին իրենց առաջնորդին տուած խրատներուն , ու ան ալ այնպէս հաւատարմաբար կ'իմացըներ անոնց վառանգները՝ ու վտանգներուն բնութիւնը՝ երբոր անոնց մօտենալու վրայ կ'ըլլային , որ սովորաբար անոնց խիստ մօտ ըլլալուն աւելի կը սրառա-

տեղն , ու աւելի զիրար կը քաջալերէին՝ մարմիննին ուրաշնալու : Աս հովանաւոր տեղը կը կուռեւէր շօսյլին հարեւկամը , ան դիտմամբը որ եթէ կարելի է՝ ճամբորդներէն ունալք հոն հրապուրէ հանդստանալու՝ երբոր յոդնած են անոնք :

Եւ երազիս մէջ տեսայ որ աս իրենց առանձին ճամբուն մէջ յառաջ գացլին՝ մինչեւ որ տեղ մը հասան՝ ուր որ մարդ մը գիւրութեամը կրնար կորսնցընեւ իր ճամբան : Գանձ որ թէսպէտ և ըսյա աշքով իրենց առաջնորդը աղեկ գիտէր սխալ ճամբաները շիտակէն որոշեւ , բայց մուժտեղը դժուարութեան մէջ մնայ : Ասկայն ինքը իր ծոցը ուղեցոյց մը ունէր , որուն մէջ նշանակուած էին բոլոր ան ճամբաները որ Խըկնային Քաղաքը կը տանին կամ անկէ կը բերեն : Ուստի ճրադ մը վառեց , որովհետեւ առանց աբեթանոցի տեղ մը չէր երթար ,) ու նայեցաւ իր թուղթին վրայ , որ կ'իմացընէր իրեն թէ ան տեղը զգուշնայ՝ որ աջ կողմի ճամբան դառնայ : Եւ թէ որ ինք աս տեղը զգուշութիւն չընէր իր թուղթին նայելու , հաւանականաբար բոլորը մէկէն ցեխին մէջ պիտի ընկղմելին . ինչու որ քիչ մը անդին իրենց առջևը՝ և ան ալ խիստ մաքուր ճամբուն ծայրը տղմալց փոս մը կար , ով զիտէ թէ ուշափ խորունկ՝ ճամբորդները անոր մէջ ձգելու կորսնցընելու համար հոն շնուռած :

Վն ատենը ևս ինձի մոտածեցի՝ թէ ան որ ճամբորդութեան երթալ կ'ուղէ , հարկաւորապէս աս ուղեցոյցին մէկ հատ մը իր քովն ունենալու է , որպէս զի երբոր դժուարութեան մը մէջ մնայ , նայի թէ որ ճամբան բռնելու լու է :

Վեկէ ետեւ աս Ասխարդեալ Խըկնային վրային գացլին մինչեւ որ ուրիշ հովանաւոր տեղի մը հասան , ու անիկայ շիտակ ճամբուն քովը շիտուած էր : Աս հովանաւոր տեղին մէջ երկու հողի կը քնանային , որոնց անուններն եին Վն-

հոդ ու Հանձնապատճենն : Ասմայ երկուքը համբորդու-
թեամբ մինչև առ տեղս ելեր էին , բայց հո՞ իրենց համ-
բորդութենէն յոդած ըլլալով հանգստանալու համար
նստեր ու խորունի քունի մը մէջ ինկեր էին : Ճ'ամբորդ-
ները առանք տեսնելնուն հանդարա կոյնեցան՝ ու գլուխնին
երեցուցին . ինչու որ դիտէին թէ ան քնացողները աղե-
տալի վիճակի մը մէջ էին : Ան ատենը սկսեցին մտածել
թէ ի՞նչ ընկն . արդեօք անոնք ան իրենց քունին մէջ
ձգելով անյնին երթան , թէ քովերնին երթալով աշ-
խատին զանոնք արթնցընելու + ուստի վճռեցին որ եր-
թան արթնցընեն զանոնք + այսինքն՝ թէ որ կրնան + բայց
առ զգուշութեամբը՝ որ իրենք ոչ հոն նստին՝ ու ոչ ալ
ան հովանաւոր տեղին մտառցած հանգստութիւնն ընդու-
նին :

Եյսպէս ներս մտան ու մարդոցը խօսեցան՝ և իւրաքան-
չեւը իր անունով կանչեցին . ինչու որ կ'երեսայ թէ առ-
ռաջնորդնին կը հանչնար զանոնք + բայց ոչ ձայն կար ու-
մչ պատասխան : Ան ատենը առաջնորդը ցնցեց զանոնք՝
ու ի՞նչ որ կրնար ըստա անհանդիստ ընելու զանոնք : Ան
ատենը անոնց մէկն ըստ . Ար վճարեմ քեզի երբոր իմ
ասակս առնեմ : Աս խօսքին՝ առաջնորդը իր դլուխը ե-
րեցուց : Որչափ ժամանակ որ կրնամ իմ թուրս ձեռքս
բռնել , պիտի կռուիմ , ըստ միւսը : Ասոր վրայ տը-
ղոցը մէկը խնդաց :

Ան ատենը Կրիստինէ ըստ . Կօնչ պիտի նշանակէ
ասիկայ : Առաջնորդն ըստ . Կռւներնուն մէջ կը խօ-
սին : Ոչէ որ զարնես անոնց՝ ծեծես զիրենք՝ կամ ուրիշ-
ի՞նչ որ ընես անոնց՝ աս կերպով պատասխան կու տան
քեզի + կամ ինչպէս որ ասոնցմէ մէկը ատենօք՝ երբոր
ծովին ալիքները զննքը կը ծեծեին ու նաւի մը սիւնին վայց
պառկուի պէս կը քնանար , կ'ըսէք՝ “ Արթընցած ատենա
զանիկայ նորէն պիտի վնատահմ ” : Առաջ . իդ . 34 , 35 :

Գիտես որ երբ մարդիկ քուներնուն մեջ խօսին , ի՞նչ որ բլոյ կ'ըսեն . ու իրենց խօսքը ոչ բանականութեամբ և ոչ հաւատորով կառավարեալ է : Երենց խօսքին մեջ անհամաձայնութիւն մը կայ հիմա , ինչպէս որ առաջ իրենց ճամբորդութեան երթալուն ու աս տեղունատելուն մեջ կար : Երդ՝ աս է դեշութիւնը . որ երբ անզգոյները ճամբորդութեան կ'երթան , քանին տասնուինը սցսպէս կը պատահի իրենց : Վանզի աս Կախարդեալ Երկիրը թշնամոյն՝ ճամբորդներուն վրայ յարձակմանը վերջին տեղոն է . անոր համար՝ ինչպէս որ կը տեսնէք , անիկայ զրեթէ ճամբուն վերջը հաստատուած է , ու անանկով աւելի վրատանզաւոր է մեզի : Վանզի Է՞րբ աս յիմարները պիտի փափաքին նստելու , եթէ ոչ երբոր յողնած ըլլան . ու Է՞րբ յողնած պիտի ըլլան , եթէ ոչ իրենց ճամբորդութեանը դրեթէ վախճանին , կ'ըսէ թշնամին : Կառը համար Ե՞րկում՝ որ Կախարդեալ Երկիրը այսաշի մօս է Շնելոցի Երկիրն , ու անոնց ճամբուն վախճանին : Ուստի ճամբորդները իրենց անձերուն թող զգուշանան , որ չըլոյ թէ սցնպէս պատահի անոնց ալ՝ ինչպէս որ կը տեսնէք թէ աս մարդոցը պատահեցաւ որ քնացեր Են , ու մեկը չկընար արթըցընել զիրենք :

Վառը վրայ ճամբորդները դողալով կը փափաքեն յառաջ երթալ . միայն թէ իրենց առաջնորդին աղաւեցին որ ճրադ մը վառէ , որ իրենց ճամբուն մնացածը ճրադի մը ըլլանին օգնութիւնովը կարենան երթալ : Ուստի ճրադ մը վառեցին՝ ու աս ճամբուն մնացածը անոր ըլլանով անցուցին թէսէտ և մութը շատ մեծ էր * : Բ Պիո . ար .

* Վեր ստացը քայլերուն առաջնորդ ըլլալու մի միայն ըլլաը Վառածոյ խօսքն է : Ան որ ասիկայ զանց կ'ընէ յիմար է : Ան որ ուրիշ մը կը ֆարէ , կամ ուրիշ ըստ մը կը փնտուէ իրեն առաջնորդելու , խելոցնոր է , ու ըստը չդիտել :

19 : Բայց տղաքն սկսեցին սաստիկ յոդնիլ , ու ճամարդարդները Արբողին աղաղակեցին որ իրենց ճամբան դիւրացընէ : Ուստի քիչ մըն ալ յառաջ երթալուն հով մը ելաւ որ մըուղը փարատեց ու օդը աւելի պայծառացաւ : Եւ սակայն տակաւին շատ ճամբայ ունեին Արխարդեալ Երկրէն դուրս ելուլու + միայն թէ հիմա կրնացին իրենց քաղելու ճամբան ու իրար տեսնել :

Երդ՝ Երբոր զրեթէ աս երկրին ծացը հասան՝ խմացան որ իրենցմէ քիչ մը առաջ մէկ ահաւոր ձայն մը կար՝ որ կը թուեր թէ մեծ նեղութեան մէջ եղող մէկէ մը կ'ելլեր ան : Այսպէս յառաջ կ'երթային ու իրենց առջևը կը նայէին + և ահա իրենց թուեցաւ թէ մէկը կը տեսնեն ծնկան վրայ Եկած՝ ձեռքերն ու աչքերը վեր վերցուցած՝ ու ջերմեռանդութեամբ իրը թէ վերը բնակող մէկու մը իր խօսքը ուղղած ըլլար : Աօտ զացին՝ բայց վերցան իւմանաւ թէ մնչ կ'ըսէր + ուստի կամաց կ'երթային որ միւսը լմոցընէ : Լմոցընելն եսեւ ելաւ կայնեցաւ , ու սկսեց դէպ 'ի Երկնային Քաղաքը վագել : Ան ատենը Պարոն Քաջասիրտը անոր ետեւէն կանչեց ըսելով՝ համբեկամ , բարեկամ , կեցիր քեզի ընկերանակը , թէ որ Երկնային Քաղաքը կ'երթաս , ինչպէս որ ինծի կը թուի : Ուստի մարդը կայնեցաւ , ու անոնք հասան անոր : Բայց Պարոն Ողջախոհը անիկայ տեսածին պէս ըստ . Ես աս մարդը կը ճանշամ : Պարոն *Կահաստակողն ալ հարցուց թէ , Աղէ՝ ովէ է : Պատասխան տուաւ թէ Անկա է որ իմ բնակած Երկրէս կու զայ + իր անունն է՝ Ամբակաց . ստուգիւ շատ աղեկ ճամբարդ մըն է :

Ուստի իրարու հասան , և ահա իսկոյն Ամբակացը ծեռունի Ողջախոհին ըստ . Բարեւ հայր Ողջախոհ , դժուն ալ հոս ես : Այս . ինչպէս որ քու հոս ըլլալդ յայտնի է : այնպէս ալ իմ : Անծապէս ուրախ եմ որ քեզ աս ճամբարուն վրայ դասյ՝ ըստ . Պարոն Ամբակացը : *Կմանապէս

ևս ալ ուրախ եմ որ քեզ ծնկան վրայ եկած դժոյ , ըստ
միւսը : Առ առենը Պարսն Ամրակացը կարմեցաւ ու ը-
ստ . Բայց ի՞նչ կ'ըսես , զիս տեսմար դուն : Այս՝ տե-
սայ , ու սրանց ուրախացայ տեսածիս վրայ , ըստ միւ-
սը : Խնչու . ի՞նչ անցաւ մորեգ , հարցուց Ամրակացը :
Ի՞նչ պիտի անցնի , պատասխանեց ծերունի Ողջախոհը .
մտածեցի թէ պարկեցաւ մարդ մը գտանք ճամբուն վրայ , ու
շատ շանցած իր ընկերութիւնը պիտի վայելենք : Յօնէ որ
սիսաւ չէ խօսածո՞ ի՞նչ երջանկութիւն է առ ինձի , ըստ
Ամրակացը . բայց թէ որ ևս այնպէս չեմ՝ ինչպէս որ
պէտք է ըլլամ , միայն ևս պիտի կըեմ պատիժը : Ճշմա-
րիտ է ըստ միւսը . բայց առ քու երկիւղու աւելի կը
հաստատէ զիս՝ թէ ճամբորդներուն Խշեանին ու քու հո-
գույդ մէջ ամեն բան աղէկ կարգաւորեաւ է : «Քանզի
ինք երանութիւն կու տայ երկիւղածին : Վատի . իլ . 14 :

«Եածոգակող . Բայց՝ Եղայր իմ , կ'աղավեմ պատմէ
մեզի թէ ի՞նչ պատճառաւ առ տեսնան ծնկան վրայ եկեր
եիր դուն . արդեօք մէկ յատուկ շնորհք մը ընդունելու
պարտաւորեց քեզ ան բանն ընելու , կամ թէ ուրիշ մէկ
բան մը :

Այսակաց . Աը տեսնէք որ մանք հիմա Աախարդեաւ
Երկրին վրայ ենք . ու երբոր ևս ինձի յառաջ կ'երթայի ,
կը մտածէի թէ առ տեղս ճամբան որչափ վտանգաւոր է .
ու որչափ անձննք՝ որ մինչև անդամ այսափ տեղ ճամ-
բորդութեան եկած էին՝ առ տեղս կեցան ու կործանեցան :
Աը մոռածէի ևս թէ ի՞նչ կերպ մահուամբ առ տեղս կը
կորսեցընէ մարդիկ : Աս տեղ մեռնողները ծանր հիւան-
դութիւնով մը չեն մեռնիր + այսպիսիներուն մեռած մահը
դժուարակիր չպար իրենց : «Քանզի քունի մէջ սկսուած
ճամբորդութիւնը հանդատութեամբ սկսուած ճամբորդու-
թիւն մըն է : Վանաւանդ թէ առ տեղին հիւանդութիւնը
կ'ամբով կ'ընդունի մարդու :

Հիմա Պարոն Ողջակոհը անոր խօսքը միջահատելով
ըստ Տեսան դուն ան երկու մարդիկը որ հովանաւոր
տեղին մեջ քնացեց էին :

Այսուհետեւ Այս այս ։ Անհոգն ու Յանձնապատճենը
տեսաց հոն ։ ու կարծես թէ հոն պիտի պառկին՝ մինչև որ
փախն ։ Առաջ ։ Ժ ։ Շ ։ Բայց ներեցէք ինծի որ իմ
պատմութիւնս ընեմ ։ Խնչպէս որ ըստ՝ երբոր այսպիսի
մասնութեան մեջ էի, պառաւ՝ բայց զեղեցիկ հանդերձ
ներով կին մը ելաւ իմ գեմա, ու երեք բան տուաւ ինծի ։
այսինքն իր անձը, իր քսակն ու իր անկողինը ։ Հիմա՝
շխտակը ան է որ ես յոգնած ալ էի քնչատ ալ ։ Նաև
առուր հացի կարօտ աղքատ ։ և գուցէ ան խորանանկը
զիանէր ասիկայ ։ Գանդ որ մէկ երկու անդամ մը զինքը
հերքեցի, բայց ան իմ ըրած հերքումներս չէր նկատէր
ու կը ժպտէր ։ Ան ատենը սկսեցի բարկանալ, բայց
ինք ամենեին բանի մը տեղ չըրաւ անիկայ ։ Յետոյ նու-
րէն առաջարկութիւններ ըրաւ ու ըստ՝ որ եթէ ես իր
կառավարութեանը տակ մօննեմ, ինք մեծութեան ու եր-
ջանկութեան պիտի հասցընէ զիս ։ Վանդի ես աշխար-
հի թագուհին եմ՝ ըստ, ու մարդիկ ինծմով կ'ըլլան
երջանիկ ։ Ան ատենը իր անունը հարցուցի, ու ըստ
ինծի թէ կը կոչուի Պղպջակ Խամթուն ։ Սոիկոյ հե-
ռացուց զիս իրմէն, բայց ինք քաղցրաբանութիւններով
տակաւին իմ ետևէս կու գար ։ Ան ատենը ծնկան վրաց
եկայ խնչպէս որ տեսաք, ու ձեռքերս համբառնալով և
աղաղակելով աղօթեցի Անոր՝ որ խոստացաւ օգնութիւն
ընել ։ Այսպէս ճիշտ ձեր եկած ատենը տիկինը իր ձամ-
բան զնաց ։ Յետոյ շարունակեցի գոհութիւն մատուցա-
նել աս իմ մեծ աղատութեանս համար ։ քանզի ճշմար-
տապէս կը հաւասար որ իմ վրաս աղէկ միտք չունէր,
հասկա աւելի կ'ուղէր որ զիս իմ ճամբորդութենէս վար
դնէր ։

Ողջունում + Անտարակոյս իր դիտաւորութիւնները գէշէին : Ըստց կեցիր . հիմա որ դուն անոր վրայով խօսեցար , ինծի կու դայ որ ես կամ զինքը տեսած եմ , կամ իր վրայովը պատմութիւն մը կարդացած եմ :

Մըրտիաց . Արեւին է որ երկուքն աւ ըրած ես :

Ողջունում . Պլղղջակ Խաթուն ըսթիր . բարձրահասակ վայելագեղ կին մը չէ՞ , քիւ մը թիւագոյն մարմնով :

Մըրտիաց . Այս , ճիշտ այդպիսի մէկն է :

Ողջունում . Ըստ հեղիկ կերպով չըխօսիր , ու ամեն խօսքն վերջը երեսիդ չըժապտիր :

Մըրտիաց . Աս աւ շխտակ գտար + ինչու որ իր բուն զործողութիւնները ասոնք են :

Ողջունում . Մեծ քասկ մը կախուած չէ՞ իր թեկն + ու շատ անգամ իր ձեռքը անոր մէջ չըխօթեր ու իր ստակը խառններ , որպէս թէ ան ըլլար իր սրտին բերկութիւնը :

Մըրտիաց . Ճիշտ այդպէս է . թէ որ բոլոր աս միջոցին հոս կայնած ըլլար , ատկէ աւելի կատարելարար չէիր կըրանար ցոյց տաւ զինքը ինծի , ու աւ ըստաղոյն կերպով կրնայիր ստորագրել իր կերպարանքը :

Ողջունում . Ուրեմն իր պատկերը քաշողը վարպետնկարի է եղեր , ու իր պատմութիւնը զբողը ճշմարիտ է ըսկը :

ՎԲՀՅԱՆԻՐՅ . Աս կինը վշուկ է . ու անոր կախարդութիւններուն զօրութիւնովն է որ աս երկիրը կախարդեաւէ : Ով որ իր զլուխը անոր զիրկը կը դնէ , զլսառման զործիքին վրայ դրածի պէս կ'ըլլայ + ու ով որ իր աչքը անոր գեղեցիկութեանը վրայ կը հաստատէ , Աստուծոյ թշամի կը համարուի : Յա՞ . դ . 4 : Ասիկայ ան է որ ձամբորդներուն բոլոր թշամինները իրենց փառաւորութեանը մէջ կը պահէ : * Աս մանաւանդ ան է որ շատ մարդիկ ձամբորդութեան կեանք վարելէն դարձուց : Տարապայման լեզուադար կին մըն է . ինքն ու իր աղջիկ-

Ները միշտ մէկ ճամբորդին կամ միւսին դէմը կ'ելցն , երբեմն գովելով ու երբեմն առաջարկելով աս կեանքիս հեշտութիւններուն մէկը կամ միւսը : Եիրբ ու անամօիչ կին մըն է , որն հետ որ ըլլայ կը խօսի : Աիշտ նախատելով . կը ծաղրարանէ ճամբորդները՝ աղքատա ըլլանուն համար , բայց մեծապէս կը գովարանէ հարուստները : Ունէ որ մէկը ճարտարամիտ ըլլայ՝ իր գործին մէջ ստակ շահէլու , տունէ տուն աղէկ կը խօսի անոր վրայ : Աերուխումը տարապայման կը սիրէ . մէկ հաշալից սեղանէն միւսը կ'երթայ միշտ բազմելու : Քանի մը տեղուանք իրեն համար հրատարակած է թէ ինք աստուածուհի է , ու ան պատճառաւը ոմնաք կը պաշտեն զինքը : Խարեւայութեան համար յատուկ իրեն ատեններ ու յայտնի տեղեր ունի . ու կ'ըսէ և կը հաստատէ թէ իր ունեցած բարութիւններուն համեմատը մէկը չկրնար ցուցընել : Աը խոստանայ յորդւոց յորդի անոնց հետ բնակիլ որոնք զինքը կը սիրեն ու կը պատուեն : Փոշոյ պէս կը ցրուէ ոսկին իր քսակէն քանի մը տեղուանք ու քանի մը անձերու : ԱՌուզէ որ զինքը վնասեն , զինքը գովարաննեն , ու մարդոց զրկացը մէջ բնակի : Վմենեին չձանձրանար զովելէն իր բարութիւնները , ու չափազանց կը սիրէ զանոնիք՝ որոնք զինքը շատ կը պատուեն : Յժագեր ու թագաւորութիւններ կը խոստանայ ունաց թէ որ միայն իր խրատը բռնեն , և սակայն անոնցմէ շատերը՝ մահապարտութեան հատուց , ու բիւրապատիկ անդամ աւելիններն ալ դժոխը :

Ով՛ ի՞նչ ողորմութիւն է որ իրեն դէմ կեցայ ես՝ ըստ Վմբակացը . քանզի ով զիտէ թէ ուր սիխտի քաշէր զիս :

Քանչառէքոք . Ո՞ւր . միայն Վստուած զիտէ թէ ուր սիխտի քաշէր : Բայց ընդհանրապէս շատ յիմարական և վնասակար ցանկութիւններու մէջ անշուշտ սիխտի ձգէր

քեզ՝ որոնք սատակումի ու կորստեան մէջ կ'ընկղմնն մարդիկը : ա ՏՄ : կ. 9 : Ե՞ս էր՝ որ Աքիսովամը իր հօրը դէմ՝ ու Հերոբավամը իր տէրոջը դէմ՝ հանեց : Ե՞ս էր որ յորդորեց Հուդան իր Տէրը ծախելու + ան էր որ Դեմասին խելքը պառկեցուց բարեպաշտ ճամբորդի կեանիքը ձգելու : Ամրդ չգիտեր իր դործած չարութիւններուն բազմութիւնը : Խնդն է որ անմիարանութիւն կը ձգէ իշխաններուն ու հպատակներու մէջ, ծնողքներու ու զաւելիներու մէջ, դրացիներու մէջ, էրկան ու կնկան մէջ, մարմնոց ու հոգեց մէջ : Աւատի՛ նվ պատուական Ամրակաց, քու անունիդ պէս եղիք, ու երբոր բոլորը կատարես, ամուր կեցիք :

Աս խօսակցութեանս ատենը ճամբորդներուն մէջ խառնութախութիւն մը ու սասանութիւն մը կար + բացց վերջը ամենը մէկէն ձայներնին թժող տուին ու սկսեցին երգել :

Ե՞նչ վտանգներու մէջ է ճամբորդը,
Ո՞րչափ շատ են իր թշնամիները.
Ո՞րչափ ճամբաներ կան մեղանչելու,
Չդիտեր ապրող մահկանացու մը :

Ոմանդք փոսերուն մէջ կը կորսուին,
Ոմանդք տիզմերու մէջ կը թշաւալին.
Ոմանդք տապակիէն փախչիլ ուզելով,
Արակին մէջը կը ցաթկին կ'այրին :

Վակէ ետե զանոնք կը դիտէի Ես՝ մինչև որ եկան Դեմայի երկիրը, ուր որ արեգակը դիշեր ցորեկ կը ճառագայթէ : Աս տեղու յոդնած բլանուն պատճառաւը իրենք զիրենք ատեն մը հանդստանալու տուին : Եւ որովհետեւ ճամբորդներուն համար առ երկիրը հասարակաց էր, ու առ տեղի պարտէցներն ու այդիները երկնաւոր քաղաքին օնաւագաւրինն էին, անոր համար ստոնք ազատութիւն ունեին

անոր բաները համարձակ զործածելու : Բայց ասոնք քիչ ժամանակին մէջ շուտով զօրացան հոն + քանդի զանգակաները այնպէս զարնուեցան՝ ու փողերը շարունակարար այնպէս քաղցրանուագ կը Շէէին՝ որ չերցան քնանաւ , բայց և այնպէս այնչափ զօրութիւն ստացած էին՝ որպէս թէ խորունկ քունով մը քնացած ըլլային : “Աաև աս տեղու փողոցներուն մէջ քաղցրդներուն բոլոր ձայնը աս էր թէ՝ Ուրիշ ճամբորդներ եկան քաղաքը : Ու մէկ ուրիշը կը պատասխանէր ըսելով : Եւ այսչափ ճամբորդներ անցան ջուրէն , ու ոսկեղին դռներէն ներս ընդունուեցան սյոր : Դարձեաւ կը զոչէին թէ՝ Ահա հիմն լուսաւորներու գունդ . մը մոտա քաղաքը , որով զիտենք թէ ճամբորուն վրայ ուրիշ ճամբորդներ կան : Քանդի անոնք հոսեկան անոնց սպասելու , ու անոնց ունեցած վիշտներուն համար զիրենք միսիթարելու : Ան ատենը ճամբորդները ելան ու անդին ասդին պարտեցան : Բայց հիմն իրենց ականջները ի՞նչպէս լցան երկնային ձայներով , ու իրենց աչքերը ի՞նչպէս զուարձացան երկնային տեսարաններով : Աս երկրիս մէջ բան մը չէին լուր՝ բան մը չէին տեսմուր՝ բան մը չէին շօշափեր՝ բան մը չէին հատուեր՝ բան մը չէին ճաշակեր որ իրենց ստամերսին կամ մոտացը վիսասակար ըլլար : Միայն թէ երբոր խմեցին ան գետին ջուրը՝ որուն մէջն պիտի անցնէին , իրենց թունեցաւ թէ քիչ մը լողի կու զար անիկայ քմացնուն , բայց բերանն ՚ի վար երթալէն ետև անուշ էր :

Աս տեղու հին ժամանակի ճամբորդներուն անուններուն յիշատակարանը կար՝ ու անոնց զործած բոլոր երեւելի քաջադործութիւններուն պատմութիւնը : “Աաև աս տեղու շատ կը խօսուեր թէ զետը ի՞նչպէս յորդեր է ոմանց անցնելուն՝ ու ի՞նչպէս նուազեր է ուրիշներուն անցնելուն աւտենը : Ոմանց համար զրեթէ չըրցեր է , և ուրիշներուն համար իր եղերքներէն բարձրացեր է :

Աս տեղու քաղաքին տղաբը Յօհագաւորին պարտէղը կ'երա-
թայիին՝ ու Ճամբորդներուն համար ծաղկի վունչնը կը հաւ-
աքէին , ու խանդակամթ սիրով անոնց կը բերէին : “Եաւ
աս մեղս կը բռունէին “ Հինա՝ Նարդոս և քրքում , եւ
դէղն և կինամնն , ամեն կնդրուկի ծառով , զնուսով ու
հալուեով , և բոլոր զլամաւոր խունկերով ” : Եթէ . պ .
13 , 14 : Վասնցմնվ կը ծխուեին Ճամբորդներուն սե-
նեակները քանի որ անոնք հոս կը նստէին , ու ասնցմնվ
կ'օժուեին անոնց մարմինները՝ զետէն անցնելու համար
զանոնք պատրաստելու , երբոր սահմանուած ժամանակը
դար :

Երդ՝ երբոր ասոնք հոս կը կենացին ու ան բարի ժամուն
կը սպաեին , քաղաքին մէջ շունչ մը ելաւ թէ Երկնաւ-
որ Կաղաքէն թղթաբեր մը եկեր է , որ Կրիստիանոս
Ճանապարհորդին կնոջը՝ Կրիստոնէ անուն մէկու մը հետ
խիստ հարկաւոր գործ մը ունի : Ուստի անոր վրայով
հարցուփորձ ըլլալով իր ընակած տունը զտնուեցաւ . ու
թղթաբերը նամակ մը տուաւ անոր : “Եամակին մէջ
պարունակուած խօսքն եր՝ Ողջոյն քեզ՝ տի՛ կին , աւետիս
կու տամ քեզի՝ թէ Տէրը քեզ կը կանչէ , ու կը նայի որ
տասը աւուր մէջ անմահութեան հանդերձներով իր առա-
ջեր ներկայանաս :

Երբոր թղթաբերը աս նամակը կարդաց անոր , մէկ
ստոյդ նշան մըն ալ տուաւ անոր՝ որ հաւատացընէ թէ
ինք ճշմարիտ պատղամաւոր մըն է , ու երթալու համար
զինքը արտորցընելու համար եկած է : Եւ ան նշանն եր՝
սիրով սրտած նետ մը՝ որ կամաց կամաց ներգործեց անոր
սիրուը մուաւ , որ սահմանուած ժամանակին զինքը ստիւ-
պեց երթալու . *

* Վաս պատղամաւորները կը թուի թէ սիրոյն զանաղան
հիւանդութիւններ՝ կամ ծերութեան հասակին տկարու-

Վիրիստինէ երբոր տեսաւ թէ իր ժամանակը եկած է ,
և աս ընկերութեանը մէջն առաջննն է որ գետը պիտի
անցնի , կանչեց իր առաջնորդը Պարոն Վաջասիրար , ու
պատմեց անոր բանին ի՞նչպէս ըլլար : Ուստի առաջնորդն
ըստ անոր թէ ՚Դ բոլոր սրտէ ուրախ եմ աս լուրին վրայ ,
ու պիտի ուրախանայի թէ որ թղթաքերը ինծի համար
եկած ըլլար : Անկէ ետև Վիրիստինէ խնդրեց անկէ որ
խրատէ զննը թէ իր ճամբորդութեանը համար ամէն բան
ի՞նչպէս պիտի պատրաստուի : Ա ասն որյ միւսն ըստ
իրեն թէ Այսպէս և այնպէս պիտի ըլլայ , ու մենք որ ետ
պիտի մնանք մինչեւ գետին քովին ընկերութիւն կ'ընենք
քեզի :

Յետոյ իր զաւկըները կանչեց՝ ու իր օրհնութիւնը
տուաւ անոնց , ու ըստ անոնց թէ Վիսիթարութեամբ
կարդացի ան նշանը որ ձեր ճակատին վրայ դըրոված է , և
ուրախ եմ ձեզ իմ հետո հոս տեսնելում ու ձեր հան-
դերձները այսպէս ճերմակ պահած ըլլանուդ : Ա երջը
իր սակաւ ինչ ունեցածը աղքատներուն ըաժնեց , ու իր
սրդուցը և աղջիկներուն պատուիրեց որ պատղամաւորը ի-
րենց համար դալուն պատրաստ կենան :

Երբոր աս խօսքերը իր առաջնորդին ու իր զաւկըներուն
խօսեցաւ , Պարոն Կահատակողը կանչեց ու ըստ անոր +

թիւնները կը նշանակին , որով Տէրը երկրաւոր շնուռած-
քին տուշը կը քակէ , երբոր ինք կը հաճի իր ժողովոդոցը
հողինները իր անմիջական ներկայութեանն ընդունելու :
Պարզ խօսքով՝ խմացուեր էր թէ Վիրիստինէ հիւանդացեր
ու մահուան մօտեցեր էր ու իր վիճակը ինք զգացեր էր :
Ա իրով որուած նետը կը նշանակէ թէ հաւատացեալին մա-
հուանը ժամանակը՝ կերպն ու պարագաները սահմանուած
են Անկէ որ մեզ սիրեց , ու ինքինքը մեզի համար
տուաւ : Խնդ իրբեւ թէ կ'ըսէ մեռնող սուրբին . Ես եմ՝
մի վահնար :

Պարոն, դուն գքեղ քաջ և ուզբող սիրտ ունեցող մը յուցուցիր ամէն տեղ . մինչեւ 'ի մահ հաւատարի մ եղիր, ու իմ օժադաւորս քեզի կինաց պատկը պիտի տայ : Յայդ . թ . 10 : Ա'աղաչեմ ևս քեզի որ աչքդ իմ զաւկըներուս վրայ ընես . ու թէ որ երեկք անոնց սրտին թռւլալը տեսնես, քաջալերէ զանոնք : Խակ իմ աղջիկներս՝ իմ որդւոց կնիկները, անոնք հաւատարիմ կեցան, ու իրենց վախճանը հասնելուն՝ խոսանուերը անոնց վրայ պիտի կատարուի : Խակ Պարոն Ամրակացին մատանի մը տուաւ :

Խոկէ ետե ծերունի Պարոն Ողջախոհը կանչեց՝ ու անոր վրայով ըստաւ . “Ահա իրաւցընէ Խարայէլացի մը, որուն ներսը նենդութիւն չկայ” : Յահն . աս . 47 : Խակ Պարոն Ողջախոհ ըստաւ . Կատուած տայ որ պայծառ օր մը ունենաս երբոր Աիօն Լեռը երթալու ճամբայ ելես . և Կատուած տայ որ ոտքերդ չթթած գետը անցնիս : Իսցց ան պատասխան տուաւ թէ Օձրջած ոտքով աւ ըլլայ՝ չթթած ոտքով աւ ըլլայ՝ կը փափաքիմ երթաւ . քանզի իմ ճամբառուս վրայ եղանակը Բ'նպէս որ ըլլայ, երբոր երթալու տեղու հասնիմ՝ բաւական ժամանակ պիտի ունենամ նստելու՝ ու զիս հանդչեցրնելու և վրաս չորցընելու :

Ա երջը այն պարկեշտ մարդը՝ ‘Դիմուրագայթը ներս մատագինքը տեսնելու : Ուստի Կըրխատինէ ըստա անոր . Վու ճամբորդութիւնդ մինչեւ հիմա դժուարութեամբ եր . բայց ատիկայ քու հանգստութիւնդ աւելի պիտի անուշընէ : Երթուն և պատրաստ կեցիր . քանզի ձեր չկարծած ժաման պատգամաւորը կու դայ :

Խոկէ ետե եկան Պարոն Յուսակտուրն ու իր աղջիկը Ա եհերոտը, որոնց Քրիստինէ ըստա . Դուք պէտք է յաւիտեան գոհութեամբ յիշէք ձեր աղաստութիւնը Հակայ Յուսահատութիւնին ձեռքէն ու Երկրայտութեան Ամրոցէն : Կա ողորմութեանը արդիւերն է որ դուք ապահովութեամբ հոս եկած էք : Երթուն կեցէք՝ ու վախը մեկդի

ձգեցէք . զգաստ եղիք , ու մինչև 'ի վախճան յօյսերնիդ հաստատ բռնեցէք :

Մնկե ետե . Պարոն Տկարամիտին ըստւ . Դառն հսկայ Արդարապանին բերնէն ազատեցար , որպէս զի կենդանեաց աշխարհը ապրիս , ու մլսիթարութեամբ քու թառադաւորդ տեսնես : Միայն թէ կը խրատեմ քեզ որ անոր բարութեանը վրայ տարակուսելու ու վախնալու հակամիտութիւն ունենալուդ վրայ զոհաս՝ ինք դեռ քեզ չըկանած . որ երբոր զայ , չըլայ թէ ատ քու յանցանիդիդ համար պարտաւորիս ամօմտով կայնելու իր առջելը :

Դանք որ Կրիստինէն երթալու օրը եկաւ հաստւ . ուստի ժողովուրդը խուռն բազմութեամբ ճամբռուն վրայ Եցեր էին իր ճամբորդութիւնը տեսնելու : Բայց ահա զետին միւս կողմի բոլոր եղերքը լցուն եր ձիմբով ու կառքերով , որոնք վերէն վար իջեր էին զինքը քաղաքին դուռը հանելու : Ուստի Կրիստինէ յառաջ եկաւ՝ ու մուտ զետը , իր ետեէն եկողներուն մնաք բարեաւի նշան մը ընելով : Եր վերջին ըսած խօսերը որ լսուեցաւ , ասոնք էին . Առ զամ' Տէր , քու հետդ ըլլալու , ու քեզ օրջելու : Եսկ իր զաւկըներն ու բարեկամները իրենց տեղը գարձան , ինչու որ Կրիստինէն սպասողները հեռացուցին զինքը անոնց տեսութիւնն : Այսպէս Կրիստինէ զնայ՝ ու զարկաւ դուռը , և ներս ընդունուեցաւ ուրախութեան ան ամէն արարողութիւններով՝ որոնցման Կրիստիանոս իր էրիկը իրմէն առաջ ընդունուեր էր : Եր մեկնելուն՝ տղաքը լացին : Բայց Պարոն Կահասիրտն ու Պարոն Կահատակողը քաղցրանուագ տաւիդ ու քնար զարկին ուրախութեան համար : Յետոյ ամէն մէկը իր յատուկ տեղը զնաց * :

* Կ'նչ երջանիկ մահ է արդարին մահը՝ որ 'ի Տէր կը ննջէ : Վինչե անդամ ամրարիչը մարզարէն իաղաամ

Վառենէ մը Ետև նորէն մէկ թղթաբեր մը Եկաւ քաղաքը , ու իր գործը Պարսն Դիւրագայթին հետ էր : Ուստի թղթաբերը հարցընելով զատաւ զինքը՝ ու ըստաւ . Ես Ենոր կողմանէ Եկած եմ՝ որն որ դուն կը սիրէիր , ու իր Ետևէն կ'երթացիր՝ թէպէտ և նեցուկներով . ու իմ պատղամաւորութիւնս աս է որ քեզի զրուցեմ թէ ինք կը սպասէ քեզի որ իր թագաւորութեանը մէջ իր սեղանին վլայ իր հետը ընթրիք ընես Զատկին երկրորդ օրը . ուստի դուն քեզ պատրաստէ աս ճամփորդութեանս համար : Ենկէ Ետև իր շշմարխա պատգամաւոր մը ըլլալուն համար նշան մը տուաւ անոր ըսելով , Կու արծաթէ թէլու կտրեցի , ու սակիէ բաժակրտ կոտեցի : Ճառ . Ժը . 6 :

Սակէ Ետև Պարսն Դիւրագայթը իր ճամփու ընկերները կանչեց ու ըստաւ անոնց թէ Ես կանչուեցայ , ու Ետուած անշուշտ ձեզի ալ այցելութիւն պիտի ընէ : Ուստի Պարսն Դահատակողին աղաչեց որ իր կտակը գրէ : Եւ ուրովհետեւ իրմէն Ետև մնացողներուն ձգելու որին մը չունէր՝ բայց եթէ իր նեցուկներն ու իր բարի իղձերը , վասն որոյ այսպէս ըստաւ ինք . Ես նեցուկները կը ձգեմ իմ որդւոցս որ պիտի հետևի իմ քալած ճամփուս , հարիւրաշ պատիկ ջրմածերմ իղձերով որ ինք ինէ լաւագոյն ըլլայ : Ենկէ Ետև շնորհակալ եղաւ Պարսն Դահատիրսին՝ իր կենցաղավարութեանն ու մարդասիրութեանը համար , ու այնպէս իր ճամփորդութիւնն ընելու ելաւ : Երրորդ գետին եզերքը Եկաւ , ըստաւ . Հիմա ալ կարօսութիւն պիտի չունենամ աս նեցուկներուն , որովհետեւ դիմացը

աս մահուանը ցանկացաւ : Բայց ասիկայ մէկու մը չնորհուիր՝ հազար անոնց որոնք Տէրովմով ապրեցան : Ե՛ղը բարք իմ , աղաղակենք առ Տէր որ մեզ աս երջանիկ կարգէն ընէ :

կառքեր ու ձինը կան ինծի՞ հեծնելու : Իր վերջին ըստ
խօսքերը որ ըսուեցան , են՝ Շարի՞ Եկիր կեանկը : Այս-
պէս դնաց իր համբան * :

Սոկէ ետև Պարոն Տկարամիտին լուր մը Եկաւ թէ
թղթաբերը իր եղջերափողը վշչը է անոր սենեակին դու-
ռը : Եւ ներս մատա ու ըսաւ իրեն թէ , Ես եկայ քեզի
ըսելու թէ քու Տէրդ քեզի պէտք ունի , ու շատ քիչ ա-
տենին մէջ տեսնելու ևս իր երեսը լուսափայլութեան մէջ :
Ու իմ պատգամանորութեանս ճշմարիտ ըլլալուն նշանը աս
թող ըլլայ . Պատուհաններէն նայողները թող մթննան :
Ժառաւ . Ժի՞ . Յ :

Են ատենը Պարոն Տկարամիտը իր բարեկամները կան-
չեց՝ ու ըսաւ անոնց իրեն եկած պատգամը , ու ան պատ-
գամին ճշմարտութեանը համար ընդունած նշանը : Հե-
տոյ ըսաւ . Արովհետև բան մը չունիմ մէկուն ձգելու ,
ի՞նչ հարկ կայ որ կտակ ընեմ : Խակ իմ տկարամատու-
թեանս վրայով՝ անիկայ ևս իմ ետես պիտի ձգեմ . քանդի
իմ գացած տեղու կարօտութիւն պիտի չունենամ ևս անոր ,
ու խիստ աղքատիկ ճամբեռդներուն տալու ալ արժանաւոր
բան մը չէ ան : Աւտոի երրոր ևս երթամ՝ կը խնդրեմ
քինէ ով Պարոն ‘Եահատակող’ , որ անիկայ աղքանոցի
մը մէջ թաղես : Վսիկայ լրանալուն՝ ու իր մեկնելու օրն
ալ եկած ըլլալուն միւսներուն պէս մատա դետը : Իր վեր-
ջին խօսքերն եին՝ Վմուր կեցիր . հաւատք ու համբերու-
թիւն . և այսպէս միւս կողմը անցաւ :

Խել մը օրեր անցնելն ետև Պարոն Հուսակատուըը
կանչուեցաւ . քանզի թղթաբեր մը Եկաւ՝ ու աս պատ-
գամը բերաւ անոր : ‘Կողդըղացնդ մարդ , քեզի կ’իմա-

* Տեսէք իր ամէն մէկ քայլափոխին պիւրադայիթ եղող
անձի մը խնդալից վախճանը : ‘Բաջալերեցնը ասկէ’ ով
կաղն ’ի կաղը գացող՝ դիւրադայիթ ճանապարհորդներ :

ցընեմ որ հետեւեալ Աիրակի օրը թագաւորին հետ պատրաստ ըլլաս ուրախութեամբ ցնծալու քուկին բոլոր տարակուսութիւններէդ աղատելուդ համար : Ու իմ պատգամաւորութեանս Ճշմարտութեանը համար քեզի նշան ասիկայ առ ըստ պատգամաւորը : ու այսպէս մարախ մը տուաւ անոր՝ իրեն ծանրութիւն ըլլալու : Ժառ + ժը + 5 :

Գանձք որ Պարոն Յուսակտուրին աղջիկը՝ որուն անունը Ահշերոտ էր, եղած ըանը ըեկլով ըստ թէ Խո ալ իմ հօրս հետ կ'երթամ : Կա ատենը Պարոն Յուսակտուրը իր բարեկամներուն ըստ : Դուք դիտէք՝ թէ ես ննինս ու իմ աղջիկս ի՞նչ էինք . ու ի՞նչպէս ամէն ընկերութեան մէջ նեղութիւն տալով կը վարուեինք : Խմ կտակս ու իմ աղջիանս կտակը աս է, որ մեր գացած օրէն ետե յաւտիտեան մէկ մարդ մը ընաւ չընդունի մեր վհատութիւններն ու ծառայական վախերը . քանզի դիտեմ որ իմ մահուանէս ետե անոնք իրենք զիրենք ուրիշներուն պիտի մասուցանեն : Ասսն զի յացանի խօսելով ձեզի, անոնք ուրուական ողիներ են՝ որոնց մենք հիւրնկալութիւն ըրենք երբոր առաջ սկսեցինք ճամբորդ ըլլալու, ու ամեննեին չերցանք յետոյ վրանուս թօթվել . ու պիտի պտըտին և ճամբորդներէն հիւրնկալութիւն վընտըլուն . բայց մեր սիրուն համար դռները գոցեցէք անոնց դէմ * : Երբոր իրենց մեկնելու ատենը եկաւ՝ գետին

* Եղէկ միտք առէք ստիկայ դուք՝ ով ճանապարհորդներ : Չեր պարտաւորութիւնն է մեղաց դէմ հակառակելու չափ՝ անարժան երկմատութիւններուն ու ծառայական վախերուն դէմ հակառակիլ Տէրոջը ուժովը : Վանաւանդոր միթէ անոնք իրենց ընութեամբը մեղքերուն խիստ գեշերը չե՞ն, որ կը ծագին թերահաւատութենէ Վասուծոյ պատուական Ճշմարտութիւնը, փառաւոր շորհքը, ու յաւիտենական փրկութիւնը բանի տեղ չդնելէ : Ու բեմն ընաւ ամեննեին տեղի մի՛ տալը անոնց . հազա հաւ

Եղերքը ելան . Գլարոն չյուսակտուրին վերջին խօսքերն էին՝ Մնաս բարեաւ՝ զի՞ չեր , բարի՛ եկիր՝ ցմրեկ : Եթ աղջիկը երդելով անցաւ գետէն . բայց մեկը չկրցաւ հասկընալ անոր ըսածք :

Ու եղաւ որ քիչ մը ատենէն ետև թղթարեր մը եկաւ քաղաքը որ կը փնտուեր Գլարոն Ողջախոհը : Ուստի անոր եղած տունը եկաւ՝ ու աս գիրը տոււաւ անոր ձեռքը : Վեզի հրամայուած է՝ որ աս օրէն մինչև շաբաթ՝ մը պատրաստուիս՝ դուն զբեզ քու Տէրոջը առջին ներկայացրնեւու , իր Հօրը տունը : Ու իմ պատղամառուորութեանս ճշմարխս ըլլալուն նշանը աս է : Երգեցող աղջիկները նկուն պիտի ըլլան : Ժառ . ժը . 4 :

Են ատենը Գլարոն Ողջախոհը իր բարեկամները կանչեց ու բաւ անոնց . Ես կը մեռնիմ՝ բայց կտակ մը պիտի չընեմ : Խոկ իմ Ողջախոհութեանս իմ հետո պիտի երթայ . ինէ ետև եկողին ասիկայ թող բառի : Երբոր իր Երթալու օրը եկաւ , ոտք ելաւ գետէն անցնելու : Կամք որ աս միջոցիս՝ զետք քանի մը տեղուանք յորդելով իր Եղերքը ծածկեր էր . բայց պարոն Ողջախոհը իր կենդանութեանը՝ Բարի Խոխջ անուն մէկու մը ապսպիրէր էր որ զինքը դանէ հան . ան ալ զտաւ ու ձեռնտու եղաւ անոր , և պապէս միւս կողմը անցուց զինքը : Գլարոն Ողջախոհին վերջին խօսքերն էին , Ընորհքը կը թագաւորէ : Այսպէս ձգեց աշխարհը զնաց :

Ենէ ետև ձայն մը ելաւ դուրսը՝ թէ Գլարոն Շնչառատութեան համար Կահատակողին հրաւերք մը եկեր է նոյն թղթարերին ձեռօքը , ու հրաւերքին ճշմարտութեանը համար աս նշանը ունի եղեր , թէ “ Իր սափորը աղթիւրին քովք փշեր է ” : Ժառ . ժը . 6 : Երբոր ինք իմացաւ

կտակեցէր , ու ձեր սրակրուն դռները անոնց դէմ գուցեցէր :

աս՝ իր բարեկամները կանչեց , ու ասոր վրայով պատմեց անոնց : Անկէ ետև ըստու . Եօս իմ գօրս տունը կ'երաժամ . և թէպէտ ես շատ դժուարութեամէն հոս եկայ , սակայն հիմա չեմ ցաւիր ան ամէն նեղութիւններուն վրայ՝ որոնց պատահեցայ աս իմ եղած տեղս համնելու : Իմ թուրս անոր կու տամ՝ որ իմ ճամբորդութեանս մէջ ինծի պիտի յաջորդէ , ու իմ արխութիւնս ու ճարտարութիւնս անոր՝ որ կրնայ ստանաւլ ան : Իմ վէրքերս՝ նշաններս ու սպիներս իմ հետս կը տանիմ՝ որ ինծի համար կը վկայեն թէ Անոր պատերազմը պատերազմեցայ ես , որ հիմա իմ վարձատրիւս պիտի ըլլայ : Երբոր իր ասկէ երթալու օրը եկաւ , շատերը իր հետը ընկերացան մինչեւ գետեղերքը , որոնց իր երթալուն՝ ըստու . “Ո՞ւր է ով մահ՝ քու խայթոցը” : Ու երբոր խորագոյն կ'ընկըզմէր , ըստու . “Ո՞ւր է ով գերեզման , քու յաղթութիւնդ” : առ Աստղն . ԺԷ . 55 : Այսպէս անցաւ՝ ու միւս կողմը եղած բոլոր փողերը իրեն համար չըչեցին * :

Ա հրէը Պարոն Ամրակացին հրաւէրք մը եկաւ : Աս Պարոն Ամրակացը ան էր՝ որն որ ճամբորդները ծնկան վրայ եկած դատն Ամրակացեալ Խրկին վրայ : Ու թըղթաբերը ան հրաւէրքին թուղթը բաց իր ձեռքը բռնած բերաւ անոր . որուն մէջ պարունակուածներն էին՝ թէ իր կեսանքը փոխելու պէտք է պատրաստուի , ինչու որ իր Տէրը ըուզեր որ ալ այսլափ հեռու ըլլայ իրմէն : Ասոր վրայ Պարոն Ամրակացը տարակուասութեան մը մէջ ինկաւ . բայց թղթաբերն ըստու թէ , Իմ պատգամաւորութեանս

* Ո՞հ՝ ինչ երժանկութիւն է փառաց թագաւորութեանը քաղցր զգացումնվը մեռնիլ : Այսպիսիները Յիսուսի արիւնովը իրենց խղճանակները մաքրեցին , ու անոր յարութեանը հաւատքովը զանոնք սրբացուցին : Ու անոր թագաւորութեանը մէջ իր հետը պիտի թագաւորին :

ՀՀմարտութեանը վրայ տարակուսելու շես կարօտիր դուն .
քանզի անոր հՀմարտութեանը նշանն աս է . ՞ Ք Հորին
վրայի անիւը կոտրած է : Ժառ . ժբ . 6 . Ան ատենը
կանչեց իրեն Պարոն Քաջասիրտը՝ որ իրենց առաջնորդն
էր , ու ըստ անոր . Տէ՛ր իմ , թէպէտ և իմ վիճակիս
չինկաւ որ իմ համբորդութեանս օրերուն մէջ ձեր պա-
տուական ընկերութիւնը երկար ատեն վայելէի , բայց
քանի որ քեզ հանչայ՝ օգտակար եղար դուն բնծի : Ես
իմ բնակարանէս ելոյ եկայ , իմ կինս ու հինգ փոքրիկ
զաւկըներ ձգեցի իմ ետես . ուստի կ'աղաջեմ քեզի՝ որ
քու ետ դառնալուք՝ (որովհետեւ զիտեմ՝ որ կը դառնաս
քու Տէրով տունը կ'երթաս , յուսալով՝ որ տակաւին ու-
րիշ սուրբ համբորդներու ալ առաջնորդութիւն ընես .)
մէկը խրիես իմ ընտանեացս ու թող իմանան անոնք բոլոր
բնծի պատահածներն ու պատահելիքները : Պատմէ ա-
նոնց նաև իմ հիմակուան բարերաստիկ վիճակիս՝ ու եր-
ջանկարար Խրիստային Քաղաքը համնելուս վրայ : Օքու-
ցէ ևս անոնց՝ Քրիստիանոսին ու անոր կնոջը Քրիստինէնին
վրայ , ու թէ ինչպէս Քրիստինէ իր զաւկըներուվը իր էր-
կանը ետեն եկաւ : Ըսէ անոնց ևս թէ ինչ երջանիկ
վախճանի մը հասաւ , և մւր գացած է ան : Ծան մը
չունիմ իմ ընտանեացս խրիելու , բայց եթէ իմ անոնց
համար ըրած աղօթքներս ու թափած արցունքներս . որոնց
վրայ բաւական է որ զիրենիք տեղեկացընես , որոնք թերեւա
կարենան զանոնք համնուելու : Խրբոր Պարոն Վմրակացը
այսպէս ամէն բան կարդի դրաւ , ու զինքը երթալու ար-
տորցընող իր ժամանակը որ եկաւ , ինքն ալ ելաւ դեմը
իջաւ : Գանք որ մեծ հանդարտութիւն ունէր զետը աս
ատենը . Ուստի Պարոն Վմրակացը երբոր գետին մէջ կէս
համբւան գնաց , ատեն մը կայնեցաւ ու իր հետը հոն եկող
իր ընկերներուն խօսեցաւ և ըստ . Ես զետը շատերուն
վախ մը եղած է , և մանաւանդ թէ անոր վրայ մատածելն

անդամ՝ զիս ալ շատ անդամ՝ վախցուցած է . բայց հիմա
կարծեմ թէ հանդիսատ կայներ եմ + իմ ուրս հաստա-
տուած է անոր վրայ՝ ուր որ տապանակը կրող քահանա-
ներուն ոտքերը կայնեցան որ առևն Խսրացէլ Հորդանանէն
կ'անցնէր : Յիշ + դ . 17 : Գուրը իրաւ լեզի է քը-
մաց , ու ցուրտ է ստամբուխն + սակայն իմ երթալու տե-
ղիս՝ ու դիմացի կողմը ինծի սպասող ընկերներուն վրայով
եղած մոտածութիւնները բոցավառ հուրի պէս իմ սիրոս
կը տարցընէն : Հիմա ևս զիս իմ ձամբորդութեանս
ծայրը հասած կը տեսնեմ + իմ բազմաշխատ օրերս վեր-
ջացան : Անգթամ տեսնելու ան գլուխը որ փուշով
պսակուեցաւ , ու ան երեսը՝ որ ինծի համար թուքով շա-
ղախեցաւ : Խս առաջմանէ ականջէ լսելով ու հաւատա-
լով կ'ապրէի , բայց հիմա հոն կ'երթամ՝ ուր.որ տեսնե-
լով պիտի ապրիմ , ու Ենոր հետ պիտի ըլլամ՝ որուն
ընկերութիւնը իմ երջանկութիւնն է : Աը սիրէի լսել
իմ Տէրոնչ վրայ եղած խօսակցութիւնները , ու երկրի
վրայ ուր որ իր կօժիկին կոխած տեղին նշանը տեսնէի , կը
ջանացի իմ ոսքս ալ հոն դնել : Իր անունը մուշիի
տուփ մը եղաւ ինծի , նա մանաւանդ բոլոր ծխանելիքնե-
րէն ալ անուշ : Իր ձայնը ամենաքաղցր էր ինծի , ու
առաւել կը բաղձայի իր երեսին քան որշափ անոնք որ
խիստ շատ կը բաղձան արեգական լրսին : Իր խօսքերը
ժողվեցի ինծի սնունդ՝ ու իմ մարելիքներուս դէմ դեղ-
թափ ըլլալու : Խնդ զիս բռնեց ու իմ անօրէնութիւն-
ներէս զիս պահեց + մանաւանդ թէ ինք իմ քայլերս իր
ձամբուն մէջ զօրացուց :

Խըրոր ինք այսպէս կը խօսէր , իր դէմքը փոխուեցաւ .
իր զօրութիւնը թուքաւ , ու երրոր ըաւ թէ Առ զիս ,
քանզի քեզի եկայ ես , ալ անկէ ետեւ դադրեցաւ անոնց
երեւալէն :

Բայց փառաւոր բան մըն էր տեսնել թէ ի՞՞նչպէս լեցէր

էին վերին ընդարձակ միջոցին մէջ ձիեր ու կառքեր , փող և սրբնեղ կազմներուն՝ երաժիշտներուն ու աղջյարմար նուազարաններ երգեցազներուն հետ , ճամփորդները բարեելու համար , երբոր անոնք վեր կ'ելլեին ու քաղաքին գեղեցիկ դռնեն իրարու ետեւէ ներս կը մտնէին * :

Խակ ՚Քրիստինէին զաւկըներուն վրայով՝ այսինքն ՚Քրիստինէին ծնած չորս որդւոյն ու անոնց կնիկներուն և զաւկըներուն վրայով՝ խմ եղած տեղս չեցայ ևս մինչև անոնց գետեն անցնիլը : “Եակ ետ դառնալէս ետեւ լսեցի մեկն

* Ընթերցով՝ աս պատուական զրքիս վերջանալուն , ներէ ինձի մեկ խօսք մը խօսիլ քու հոգւոյդ և միանդամայն իմինիս : Վօնչ կը խորհինք մենք ճանապարհորդին կենացն ու անոր մաշուանը վրայով : Եր կեանքը կը սկսէ ՚Քրիստոսի զիտութիւնովը , ու կը վերջանայ ՚Քրիստոսով մեռնելով , ու մշտնչնաւորապէս զ՚Քրիստոս վայելելով : Ու իր կենացը բոլոր ընթացքին մէջ ճանապարհորդը ՚Քրիստոսի կը նայի , ու իրմով կ'ապրի , Երջանիկ սկսուած , միսիթարական կեանք , խնդալից մահ :

Երդ՝ աս բանիս մէջ արդեօք մասն ու բաժին ունի՞նք մենք : ՚Քրիստոս մեր կեանքն է . մեր հոգիներուն կենացանութիւնն է : Ծաէ որ այսպէս է անոր վրայ հաւատք ունենալով պիտի ապրինք , անոր քաւութեանը պիտի ապախնինք , անոր արդարութիւնովը պիտի պարծինք , անոր փրկութիւնովը պիտի ուրախանանք , փափաքելով որ բոլոր մեղքերուն հետ բաներնիս կտրենք՝ ու մենք մեղ արդարացընելու բոլոր յանձնապաստանութիւններուն մեռած ըլլանք . ու սրտով՝ բերնով ու վարքով պիտի ջանանք փառաւորել զինքը , մենք մեզ իրեն նուիրելով , ինք մեզ ընդունելու համար իր գալստեանը սպասելով , որ ինք ուր որ է մենք ալ հոն ըլլանք :

Աս հաւատքով ապրուներուն ու աս կանոնովը գացողներուն բոլորին վրայ խաղաղութիւն ըլլայ օրջեալ և փառաւորեալ Սուրբ Երրորդութենէն . որուն փառք յաւիտեանս յաւիտենից . Ամէն :

որ ըստ թէ տակաւին կենդանի են անոնք, ու առեն
մըն ալ պիտի կենան իրենց եղած տեղը՝ եկեղեցւոյն աճ-
մանը համար :

Յաէ որ նորէն ան կողմը երթալ պատահի լնեի, կա-
րելի է որ տեղեկութիւն մը տամ ուզողներուն՝ ինչ բանի
վրայ որ աս տեղս կը լուեմ խօսելէն, միանդամայն իմ ըն-
թերցողիս ըսելով .

ԱՎՄԻ ՈՐԴԻ ԹԱԼԵԿԱՆ

6

685

2013

